



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Մ. Ե. ԱՄԱՏՐՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ  
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՉՈՐՐՈՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Շ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ.— Յուրաքանչյուր լեզու ունի նրա բաղադրիչ տարրեր՝ հնչյունական համակարգ, բառապաշար և քերականական կառուցվածք: Լեզվի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը զբաղվում է հնչյունաբանությունը, բառապաշարի ուսումնասիրությամբ՝ բառագիտությունը, իսկ քերականական կառուցվածքի ուսումնասիրությամբ՝ քերականությունը:

Քերականությունն ունի երկու բաժին՝ ձևաբանություն և շարահյուսություն: Ձևաբանությունն ուսումնասիրում է խոսքի մասերը և դրանց քերականական հատկանիշները, բառի ձևերն ու քերականական իմաստները: Շարահյուսությունն ուսումնասիրում է բառերի կապակցության և նախադասության կազմության օրենքները: Ձևաբանության ելակետը բառն է, իսկ շարահյուսության ելակետը՝ նախադասությունը:

Չնայած ձևաբանությունն ու շարահյուսությունը ունեն իրենց հետազոտության ինքնուրույն առարկաները, բայց իրարից կտրված չեն, փոխադարձաբար լրացնում են միմյանց՝ դառնալով միասնական ու ամբողջական ուսմունք լեզվի քերականական կառուցվածքի մասին: Շատ դեպքերում դրանք ուսումնասիրում են միևնույն լեզվական իրակությունները, բայց տարբեր մոտեցումներով: Այսպես, օրինակ՝ հոլովի կարգն ուսումնասիրվում է և՛ ձևաբանության, և՛ շարահյուսության մեջ, սակայն հոլովների ուսումնասիրության ձևաբանական և շարահյուսական ելակետերը տարբեր են: Այս հարցում ձևաբանության բուն խրնդիրը հոլովական ձևերի կազմության քննությունն է: Ըստ այդմ, ձևաբանական տեսակետից կարևոր է, որ տարբեր բառեր սեռական-տրականում տարբեր վերջավորություններ են ստանում, ինչպես՝ գիրք-գրքի, օսկի-օսկու, ֆույր-ֆուրջ, շարժում-շարժման, օր-օրվա և այլն, մինչդեռ շարահյուսական տեսակետից դա նշանակություն չունի, որովհետև այդ տարբեր ձևերը դրսևորում են միևնույն քերականական իմաստը և պայմանավորում են այլ բառերի հետ ունեցած միևնույն հարաբերությունը: Շարահյուսական տեսակետից կարևորություն է ստանում այն, թե սե-

Ասատրյան, Մ. Ե.

Ա 732 Ժամանակակից հայոց լեզու: Չնաբանություն: Ու. ձեռնարկ հայկ. բանասիր. ֆակ. համար /Երևանի պետ. համալս., 4-րդ հրատ.: Եր.: Երևանի համալս. հրատ., 2004, 432 էջ:

Չեռնարկն ընդգրկում է «Ժամանակակից հայոց լեզու» դասընթացի ձևաբանության բաժնի բոլոր հարցերը: Ավանդական հայերենագիտության և արդի լեզվաբանության նվաճումների հիման վրա քննվում և ներկայացվում են ձևաբանության տեսությունը և արևելահայ գրական լեզվի խոսքի մասերի համակարգը:

Ա 4602020100 2004 թ.  
704(02)

ԳՄԴ 81.2 Հ գ 73

աւական-տրականի ձևը (անկախ նրա կազմութունից) ի՛նչ իմաստներ կարող է արտահայտել և, ըստ այդմ, տարբեր բառերի հետ ունեցած ի՛նչ հարաբերութուններ կարող է պայմանավորել (պատկանելության, օրինակ՝ գյուղացու ձին, ենթակայական, օրինակ՝ քամու բերած-հողմի տարած, առարկայական, օրինակ՝ երեխայի խնամքը, որակական, օրինակ, սարի ծաղիկ, դաշտի ծաղիկ և այլն), որ ձևաբանական տեսակետից էական նշանակություն չունի:

Նույն ձևով՝ հոգնակի թվի կարգին անդրադառնում են և՛ ձևաբանությունը, և՛ շարահյուսությունը: Ձևաբանությունն արձանագրում է, որ ժամանակակից հայերենում գոյականների հոգնակի թիվը կազմվում է ԾՐ, ՆԾՐ, Ք, ԻԿ և այլ մասնիկներով, օրինակ՝ ծառեր, փողոցներ, գյուղացիներ, գյուղացիք, մարդիկ: Բայց շարահյուսությունը չի անդրադառնում ձևաբանական տեսակետից կարևոր՝ հոգնակիների այդ տարբեր կազմությանը, որովհետև նրանք բոլորն էլ, անկախ իրենց ձևերի տարբերությունից, նույն իմաստն ունեն և պայմանավորում են այլ բառերի հետ ունեցած նույն հարաբերությունը՝ պահանջելով հոգնակի ստորոգյալ: Շարահյուսական տեսակետից ոչ մի տարբերություն չկա «Գյուղացիները գնացին» և «Գյուղացիք գնացին» ձևերի միջև, իսկ ձևաբանական տեսակետից կա, քանի որ մի դեպքում գոյականի հոգնակի թիվը կազմված է ՆԾՐ, իսկ մյուս դեպքում՝ Ք մասնիկով:

Քերականական գիտության խնդիրը լեզվում գործող օրենքների ճշգրիտ բացահայտումն ու արտացոլումն է, և դա հաջողվում է այնքանով, որքանով այդ թույլ է տալիս գիտության, մասնավորապես լեզվաբանության զարգացման ավյալ մակարդակը: Հենց այս պատճառով էլ լեզվի օրենքների բացահայտումը յուրաքանչյուր տվյալ փուլում ունի ոչ թե բացարձակ, այլ հարաբերական ճշտություն միայն:

ՁեՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՅՔ ԲԱՌԻ ՄԱՍԻՆ.— Ձևաբանության ուսումնասիրության առարկան, նրա ելակետն ու վախճանակետը բառն է, նրա սահմանած օրենքներն ու օրինաչափությունները վերաբերում են բառին ու նրա ձևերին: Այս նշանակում է, որ ձևաբանությունը բերականական ուսմունք է բառի մասին:

Լեզվի բառերի ուսումնասիրությամբ զբաղվում է նաև բառագիտությունը: Սակայն ձևաբանությունը և բառագիտությունը լեզվի բառերի ուսումնասիրությանը մոտենում են բոլորովին տարբեր սկզբունքներով:

Քննելով լեզվի բառային կազմը՝ բառագիտությունը նպատակ ունի պարզելու, թե բառերի ի՛նչ պաշարով է օժտված լեզուն, բառերը ի՛նչ կոնկրետ իմաստներ են արտահայտում, լեզվի ո՞ր ոճերում են գործածվում, ի՛նչ աղբյուրներից են գալիս, բնի՞կ են, թե՞ փոխառյալ և այլն:

Ուսումնասիրելով լեզվի բառային կազմը՝ ձևաբանությունը նպատակ ունի պարզելու, թե ի՛նչ քերականական կառուցվածք ունի լեզուն, լեզվի բառապաշարը իմաստաբանական ինչպիսի՞ ընդհանուր խմբերի

է բաժանվում, խմբերից յուրաքանչյուրը ի՛նչ քերականական հատկանիշներով է օժտված, ինչպիսի՞ ձևեր է կազմում և այլն:

Որպես օրինակ վերցնենք սպիտակ բառը և դրա վրա ցույց տանք բառի ուսումնասիրության այդ երկու ելակետերի տարբերությունները:

Բառագիտության համար էական է այն, որ սպիտակ բառը կոնկրետ գույնի անվանում է, գործածվում է գրական լեզվի բոլոր ոճերում, ունի իր համապատասխան համանիշը՝ ներմակ և հականիշը՝ սև: Պատմական բառագիտության համար կարևոր է նաև այն, որ սպիտակ բառը ոչ թե բնիկ հայերեն, այլ պարսկական փոխառություն է, գործածվել է մեր լեզվի բոլոր փուլերում (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար) և այլն:

Ձևաբանական ուսումնասիրության համար թվարկված բոլոր հարցերը կարևորություն չեն ներկայացնում: Ձևաբանության համար կարևոր է այն, որ սպիտակ բառը հատկանիշ է արտահայտում, մտնում է որակական ածականների խմբի մեջ, ունի իր համեմատության աստիճանները՝ ավելի սպիտակ, ամենասպիտակ, կարող է դրվել առարկա ցույց տվող բառերի՝ գոյականների վրա և դառնալ որոշիչ՝ սպիտակ պատ, սպիտակ դուռ և այլն, կարող է հոդ ստանալ ու հոլովվել և այդ դեպքում կարտահայտի ոչ միայն հատկանիշի, այլև առարկայի գաղափար, օրինակ՝ սպիտակը, սպիտակի, սպիտակից և այլն:

Ամեն մի բառ եզակի, մասնավոր, միայն իրեն հատուկ իմաստի հետ միասին անպայմանորեն և անխուսափելիորեն արտահայտում է նաև ընդհանուր իմաստ (կամ իմաստներ), որ հատուկ է ոչ միայն տրվյալ բառին, այլև բառերի մի ամբողջ խմբի (սպիտակ, լին, հող, ծառ, գիրք, փողոց, սեղան բառերը օբյեկտիվ աշխարհի բոլորովին տարբեր առարկաներ են անվանում: Սա նշանակում է, որ այս բառերի արտահայտած եզակի, մասնավոր իմաստները միանգամայն տարբեր են: Սակայն առանձնանալով իրենց արտահայտած կոնկրետ իմաստներով՝ բերված բոլոր բառերը միավորվում են մի խմբի մեջ իրենց արտահայտած ընդհանուր իմաստների նույնությամբ, այն է՝ բոլորն էլ արտահայտում են առարկայական հատկացություն (ի տարբերություն այլ խմբի բառերի, որոնք, սանք, արտահայտում են հատկանիշի հատկացություն, օրինակ՝ մեծ, կարմիր և այլն), ուղղական հոլովով են դրված (որոնց հակադրվում են համապատասխան թեք հոլովաձևերը՝ լճի, հողի, ծառի լճից, հողից, ծառից և այլն), բոլորն էլ եզակի թիվ ունեն (որոնց հակադրվում են համապատասխան հոգնակիները՝ լճեր, հողեր, ծառեր և այլն), անորոշ առումով են գործածված (որոնց հակադրվում են համապատասխան որոշյալները՝ լիճը, հողը, ծառը և այլն):

Նույն ձևով էլ՝ գրեցին, կատարեցին, ջարդեցին, հավաքեցին բառերը բոլորովին տարբեր գործողություններ են անվանում, ուրեմն և այդ բառերի մասնավոր, եզակի իմաստները բոլորովին տարբեր են: Բայց

միաժամանակ նրանք ունեն ընդհանուր իմաստների նույնություն, այն է՝ ցույց են տալիս գործողություն, այսինքն բայեր են, ունեն ներգործական սեռ, գործածված են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի երրորդ դեմքով: Իրենց արտահայտած ընդհանուր իմաստների նույնությամբ էլ բերված բառերը միավորվում են մի խմբի մեջ:

Այսպես, ուրեմն՝ բառի մեջ միշտ առկա է երկու կողմ՝ մասնավոր, եզակի, որով նա տարբերվում է բառապաշարի մեջ մտնող մյուս բառերից և ընդհանուր, որով նա միավորվում է բառերի այս կամ այն խմբին:

Բառի մասնավոր, եզակի, միայն տվյալ բառին հատուկ իմաստը (կամ իմաստները) կոչվում է բառային իմաստ և ուսումնասիրվում է բառագիտության կողմից:

Բառի ընդհանուր իմաստը (կամ իմաստները), որ հատուկ է ոչ միայն տվյալ բառին, այլև բառերի մի ամբողջ խմբի ևս, կոչվում է բերականական իմաստ և ուսումնասիրվում է ձևաբանության կողմից:

Բառի քերականական իմաստները սովորաբար արտահայտվում են նույն բառի տարբեր ձևերի միջոցով: Այդ դեպքում բառի նյութական կոնկրետ նշանակությունը, բառիմաստը մնում է անփոփոխ, և նույն բառիմաստի սահմաններում արտահայտում են տարբեր քերականական իմաստներ, օրինակ՝ ֆար-ֆարի-ֆարից-ֆարով. գրեմ-գրես-գրի. գրեցի-գրեցիր-գրեց և այլն:

Այս տեսակետից էլ ձևաբանությունը, նեղ իմաստով վերցրած, ուսմունք է բառի ձևերի ու նրանց արտահայտած քերականական իմաստների մասին: Սակայն ձևաբանությունը չի սահմանափակվում սոսկ բառաձևերի և նրանց արտահայտած քերականական իմաստների ուսումնասիրությամբ: Ձևաբանության մեջ մտնում են նաև խոսքի մասերի ուսմունքը և առանձին խոսքի մասերի բառակազմական կաղապարների քննությունը, որովհետև կան բառակազմության որոշ տիպեր, որ հատուկ են միայն այս կամ այն խոսքի մասին, կան ածանցներ, որոնք որոշակի խոսքի մասեր են կազմում և այլն:

Այսպիսով՝ ձևաբանությունը ուսմունք է բառի, նրա ձևերի և այդ ձևերի արտահայտած բերականական իմաստների մասին, խոսքի մասերի և նրանց հատուկ բառակազմական օրինաչափությունների մասին:

Քերականական իմաստները սովորաբար արտահայտվում են եզակի, մասնավոր և ընդհանուր իմաստների հարաբերությունը ավելի ցայտուն ցույց տալու համար վերցնենք հետևյալ «նախադասությունը».

Լարգական դարգունները զաշուեն զանդեցին սիրացող սանգիչներին: Իհարկե, այսպիսի բառեր ո՛չ հայերենում, ո՛չ էլ որևէ այլ լեզվում չկան: Բայց և այնպես, այս «նախադասության» ընդհանուր իմաստը ամեն մի հայախոս մարդու համար պարզ է. ինչ-որ հատկանիշ ունեցող մեկից

ավելի իգական սեռի արարածներ ինչ-որ ձևով անցյալում ինչ-որ գործողություն են կատարել (ըստ որում, այդ գործողությանը խոսողը ականատես է եղել) ինչ-որ հատկանիշ ունեցող էակաների նկատմամբ: Այս «նախադասության» մեջ ոչ մի եզակի, մասնավոր, այսինքն՝ բառային իմաստ չի արտահայտված, այլ արտահայտված են ընդհանուր, այսինքն՝ քերականական իմաստներ, այն է՝ հատկանիշի (լարգական), գոյականի, իգական սեռի, ուղղական հոլովի, հոգնակի թվի, որոշյալ առման (դարգուհիները), բայի, անցյալ կատարյալ ժամանակի, հոգնակի թվի, երրորդ դեմքի (զանդեցին) և այլն: Մենք կարող ենք անգամ այս «նախադասությունը» ձևաբանական ու շարահյուսական վերլուծության ենթարկել, ինչպես՝ լարգական—հարաբերական ածական, որոշիչ. դարգունները—գոյական անուն, հոգնակի թիվ, ուղղական հոլով, որոշյալ առում, ենթակա. զաշուեն—ձևի մակբայ, ձևի պարագա. զանդեցին—բայ, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի թվի երրորդ դեմք, ստորոգյալ և այլն:

Քերականական իմաստները նույնքան անհրաժեշտ են լեզվին, ինչքան, ասենք, բառերը, որովհետև դրանց միջոցով է արտահայտվում կապը բառերի միջև: Մարդկային մտածողությունն իրականանում է նախադասությունների մեջ, որոնցում բառերն անխուսափելիորեն և անհրաժեշտորեն հանդես են գալիս որպես քերականական իմաստների կրողներ: Եթե վերցնենք «Որսորդներն սպանեցին արջին» նախադասությունը, ապա կտեսնենք, որ երեք բառից բաղկացած այս փոքրիկ նախադասության մեջ արտահայտված են բազմաթիվ քերականական նշանակություններ: Որսորդները ձևի մեջ արտահայտված են գոյական անվան, ուղղական հոլովի (ենթակայի), հոգնակի թվի, որոշյալ առման քերականական իմաստները. սպանեցին ձևի մեջ արտահայտված են բայի (ստորոգյալի), ներգործական սեռի, սահմանական եղանակի, անցյալ կատարյալ ժամանակի, հոգնակի թվի, երրորդ դեմքի քերականական իմաստները. արջին ձևի մեջ արտահայտված են գոյական անվան, տրական հոլովի (ուղիղ խնդրի), եզակի թվի, շնչավորի առման, որոշյալի քերականական իմաստները:

Ինչպես անմիջաբար նկատվում է, քերականական իմաստները, որպես կանոն, արտահայտվում են հատուկ մասնիկների միջոցով: Այսպես՝ որսորդները ձևի մեջ հոգնակի թիվն արտահայտված է նՅՄ, իսկ որոշյալ առումը՝ Ը մասնիկով. սպանեցին ձևի մեջ անցյալ կատարյալ ժամանակը, երրորդ դեմքն ու հոգնակի թիվն արտահայտված են ԵՑ և ԻՆ մասնիկներով. արջին ձևի մեջ տրական հոլովն ու շնչավորի առումն արտահայտված են Ի, իսկ որոշյալ առումը՝ ն մասնիկով: Այսպես և՛ գործիական հոլովի քերականական իմաստն արտահայտվում է ՈՎ կամ Բ մասնիկներով (կատարումով կատարմամբ), բացառականինը՝ ԻՑ կամ ՈՒՑ (գրքից, այգուց), ներգոյականինը՝ ՈՒՄ (սարում) մասնիկով և այլն: )

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ.— Քերականական իմաստները և դրանց արտահայտման ձևերը գտնվում են անխզելի կապերի մեջ, և առանց մեկի մյուսը չկա: Երբ խոսում ենք քերականական ձևի մասին, ապա այդ ձևին կառած է որոշակի քերականական իմաստ, իսկ երբ խոսում ենք քերականական իմաստի մասին, ապա այդ իմաստը արտահայտվում է որոշակի ձևով: Ահա քերականական իմաստների և ձևերի անխզելի կապը լեզվի մեջ պայմանավորել է քերականական կարգերի առաջացումը: Հանգես գալով որպես լեզվի ձևաբանական կառուցվածքի ամենաէական ու կարևոր առանձնահատկությունները որոշող ու արտացոլող միավորներն են (քերականական կարգերն ունեն իրենց որոշակի իմաստներն ու արտահայտությունն ձևերը):

(Իմաստային տեսակետից քերականական կարգը համազոր և հակադրության մեջ գտնվող քերականական իմաստների ամբողջությունն է, ինչպես՝ եզակի թիվ—հոգնակի թիվ, որոշյալ առում—անորոշ առում, ուղղական հոլով—սեռական-տրական հոլով, բացառական հոլով—գործիական հոլով, ներգոյական հոլով, ներկա ժամանակ—անցյալ ժամանակ—ապառնի ժամանակ, 1-ին դեմք—2-րդ դեմք—3-րդ դեմք և այլն):

(Ձևային տեսակետից քերականական կարգը համազոր և հակադրության մեջ գտնվող քերականական իմաստներ արտահայտող ձևերի ամբողջությունն է: Այսպես օրինակ՝ քար—քարծր, ծառ—ծառեր, ուսանող—ուսանողներ, աշակերտ—աշակերտներ ձևերի հակադրությամբ արտահայտվում է ժամանակակից հայերենի գոյականի թվի կարգը, քար—քարի—քարի՞ք—քարով—քարովի, ոսկի—ոսկով—ոսկովի—ոսկովի—ոսկովի և այլ ձևերի հակադրությամբ՝ հոլովի կարգը, զնացի—զնացի՞ր—զնաց—զնացի՞ք—զնացի՞ք—զնացի՞ն, բարձրացԱ—բարձրացԱ՞ր—բարձրացԱ՞վ—բարձրացԱ՞նք—բարձրացԱ՞ք—բարձրացԱ՞ն և այլ ձևերի հակադրությամբ՝ բայի դեմքի ու թվի կարգերը և այլն:)

Նշելով, որ քերականական կարգերը միշտ որոշվում են համազոր քերականական ձևերի իմաստային հակադրությունների ամբողջությամբ, Գ. Զահուկյանը տալիս է քերականական կարգի հետևյալ սահմանումը. «Քերականական կարգը ուրիշ կարգի չհանգեցվող, բովանդակության պլանում մեկ կամ ավելի հատկանիշներով հակադրվող և ձևաբանական կամ շարահյուսական միջոցներով արտահայտվող երկու կամ ավելի քերականությունների ամբողջությունն է»:

Քերականական կարգերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նրանք միշտ արտահայտում են ընդհանուր իմաստներ, որոնք տարածվում են բառերի որոշակի խմբերի վրա՝ անկախ նրանց բառային-նյութական նշանակությունից: Այսպես, օրինակ՝ թվի կարգը ընդհանուր է, տարածվում է համարյա բոլոր գոյականների վրա, և խոսքի մեջ յուրա-

բանչյուր գոյական գործածվում է կամ եզակի, կամ հոգնակի թվով, ինչպես՝ սար—սարեր, սեղան—սեղաններ, ծառ—ծառեր, փողոց—փողոցներ և այլն: Հոլովի կարգը համապարփակ է բոլոր գոյականների համաթ, և ամեն մի գոյական, անկախ իր բառային կոնկրետ իմաստից, կարող է ստանալ ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական հոլովների ձև՝ արտահայտելով այդ հոլովների իմաստը, օրինակ՝ ֆար—ֆարի—ֆարից—ֆարով, ուսանող—ուսանողի—ուսանողից—ուսանողով, ջութակ—ջութակի—ջութակից—ջութակով և այլն):

(Ժամանակի կարգն ընդգրկում է բոլոր բայերը. հազարավոր բայեր, անկախ բառիմաստից, կարող են գործածվել ներկա, անցյալ անկատար, վաղակատար, անցյալ կատարյալ և այլ ժամանակներով: Ամեն մի բայ կարող է գործածվել սահմանական, ըղձական, ենթադրական և այլ եղանակներով, առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքերով, եզակի կամ հոգնակի թվերով և այլն):

Ինչպես նշված է արդեն, Արևելանական կարգերը միշտ որոշվում են ձևերի հակադրությամբ. եթե չկա ձևերի հակադրություն, ուրեմն և չկա քերականական կարգ: Այսպես՝ հայերենում մենք խոսում ենք եզակի թվի մասին (գիրք), որովհետև կա դրա հակադրությունը՝ հոգնակի թվով (գրքեր). խոսում ենք անորոշ առման մասին (գիրք, գրքեր), որովհետև կա դրա հակադրությունը՝ որոշյալ առումը (գիրքը, գրքերը):

Եվ որովհետև քերականական կարգերը որոշվում են ձևերի հակադրությամբ, սրանից ինքնին բխում է, որ Արևելանական կարգի անդամները երկուսից պակաս լինել չեն կարող: Այսինքն՝ եթե մի լեզու ունի միայն մեկ հոլովական ձև, ուրեմն հոլով չունի ընդհանրապես. եթե ունի միայն մեկ ժամանակային ձև, նշանակում է ժամանակի քերականական կարգ չունի ընդհանրապես՝ և այլն:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԵՐԻ ՓՈՆԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԼՐԱՅՈՒՑԻՉ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՁԵՎԵՐ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ. — Քերականական իմաստների և նրանց արտահայտման ձևերի փոխհարաբերություններն ուսումնասիրելիս իր վրա ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նույն քերականական իմաստը կարող է տարբեր ձևերի միջոցով արտահայտվել: Այսպիսի ձևերը կոչվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևեր:

Այսպես՝ ժամանակակից հայոց լեզվում սեռական-տրականի իմաստն արտահայտվում է Ի, ՈՒ, ԱՆ, ՎԱ, ՈՋ և այլ մասնիկներով, օրինակ՝ ֆարի, մաբղա, ծագման, օրվա, ընկերոջ, գործիականի իմաստը՝ ՈՎ և Բ մասնիկներով, օրինակ՝ մատիտով, ծագմամբ, բացառականի իմաստը՝ ԻՅ և ՈՒՅ մասնիկներով՝ ֆարից, ոսկուց: Ուրեմն՝ սեռական-տրականի Ի, ՈՒ, ԱՆ, ՎԱ, ՈՋ և այլ մասնիկները, գործիականի ՈՎ և Բ մասնիկները, բացառականի ԻՅ և ՈՒՅ մասնիկները գտնվում են լրացու-

1 Г. Б. Джаукян, Общее и армянское языкознание, Ереван, 1978, стр 113.  
8

ցիչ բաշխման հարաբերության մեջ: Ի տարբերություն սրանց՝ ներգոյականի իմաստն, օրինակ, ձևաբանական մակարդակում լրացուցիչ բաշխում չունի և արտահայտվում է սոսկ ՈՒՄ մասնիկով՝ դաշտում, ծովում: Շարահյուսական մակարդակում դրանց հավասարագոր են սեռական-տրականի և մեջ կապով արտահայտված ձևերը, օրինակ՝ դաշտի մեջ, ծովի մեջ:

Նույն բառն էլ հաճախ տվյալ քերականական իմաստն արտահայտելու համար կարող է տարբեր ձևավորում ստանալ: Այսպես՝ ձյուն, սյուն, արյուն, կատարում, ցասում, ընկեր և բազմաթիվ այլ բառերի սեռական-արականի համար կան զույգ ձևեր՝ ձյան||ձյունի, սյան||սյունի, արյան||արյունի, կատարման||կատարումի, ցասման||ցասումի, ընկերոջ||ընկերի: Կամ՝ ՈՒՄ ածանցով կազմված գոյականների գործիական հոլովի համար կան զույգ ձևեր՝ Բ և ՈՎ մասնիկներով, օրինակ՝ կատարմամբ||կատարումով, ծագմամբ||ծագումով, ցասմամբ||ցասումով և այլն:

Այսպեսի զուգաձևեր կան նաև բայական համակարգում, ինչպես՝ բերի, բերիք, բերեց, բերիմ, բերիք, բերեցի, բերեցիք, բերեց, բերեցիմ, բերեցիք, բերեցին: Նույն ձևով նաև՝ դրի||դրեցի, տվի||տվեցի:

Լեզվի մեջ նկատվում է նաև հակառակ երևույթը, երբ նույն ձևն ունեցող մասնիկը տարբեր իմաստներ է արտահայտում և, այսպիսով, հանդես է գալիս որպես տարբեր քերականական կարգերի արտահայտիչ: Այսպիսի ձևերը կոչվում են ֆեռականական համաձայնություն: Այսպիսի կազմում է ներգոյական հոլովաձևեր, օրինակ՝ փողոցում, դաշտում, ֆաղաֆում, սարում, անկատար դերբայներ, օրինակ՝ գգում եմ, ասում եմ, խոսում եմ, մտածում եմ և միաժամանակ հանդես է գալիս որպես գոյականակերտ ածանց, ինչպես՝ ցասում, զարգացում, հեռացում, գոհացում և այլն:

Քերականական համանունությունը կարելի է ցույց տալ նաև ԵՂ մասնիկի օրինակով: Այս մասնիկն անորոշ դերբայներ է կազմում, ինչպես՝ ծիծաղել, կատարել, վազել, գրել, ասել, բայց միաժամանակ կազմում է նաև վաղակատար դերբայներ, ինչպես՝ ծիծաղել է, կատարել է, վազել է, գրել է, ասել է և այլն: Այսպիսով, առաջացել է համանուն ձևերի միամբողջ շարք. Ե խոնարհման պարզ բայերի անորոշ և վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված չեն: Սակայն Ե խոնարհման սոսկաձայնավոր ու պատճառական, ինչպես նաև Ա խոնարհման բոլոր բայերի անորոշ ու վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված են, օրինակ՝ անորոշ դերբայ—գտնել, փախչել, բարձրացնել, հավատալ, բարձրանալ, վաղակատար դերբայ—գտել, փախել, բարձրացրել, հավատացել, բարձրացել: Ուրեմն՝ անորոշ և վաղակատար դերբայները համանուններ են ոչ թե բոլոր, այլ որոշակի կազմության բայերի դեպքում միայն: Այսպիսի համանունները կոչվում են ֆեռականական մասնակի համաձայնություն:

Լեզվում, թեև ոչ հաճախ, հանդիպում են նաև քերականական լիակատար համաձայնություններ: Գրանք այն ձևերն են, որոնք քերականական և ոչ մի շարքում տարբերակված չեն: Այսպես են, օրինակ, ժամանակակից հայերենի անորոշ դերբայի սեռական հոլովաձևերը և ապառնի դերբայները, որոնք լիակատար նույն ձևն ունեն և բայաշարքերի և ոչ մի խումբում տարբերակված չեն, ինչպես՝ անորոշ դերբայների սեռական հոլովաձևեր—կատարելու, գտնելու, փախչելու, բարձրացնելու, հավատալու, բարձրանալու, ապառնի դերբայներ—կատարելու, գտնելու, փախչելու, բարձրացնելու, հավատալու, բարձրանալու: Ուրեմն՝ ժամանակակից հայերենի անորոշ դերբայի սեռական հոլովաձևեր և ապառնի դերբայը քերականական լիակատար համանուններ են:

Լեզվում քերականական համանուններն առաջանում են կամ այն բանի հետևանքով, որ տարբեր մասնիկները լեզվի պատմական զարգացման ընթացքում հնչյունափոխվելով նույն ձևն են ստանում, կամ այն պատճառով, որ նույն մասնիկը, պահպանելով իր նախնական իմաստը, ձևեր է բերում մի նոր, լրացուցիչ քերականական իմաստ:

Այս երևույթները կարելի է ցույց տալ վերևում բերված օրինակներով: Գրաբարում բայերի անցյալ դերբայը կազմվում էր ԵՂ մասնիկով, օրինակ՝ անորոշ դերբայ—գրել, կատարել, բարբոթել, շարժել, անցյալ դերբայ—գրեալ, կատարեալ, բարբոթեալ, շարժեալ: Այս նշանակում է, որ գրաբարում անորոշ և վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված էին: Բայց ԵՂ > Ե հնչյունափոխության հետևանքով գրաբարյան գրեալ, կատարեալ, բարբոթեալ, շարժեալ և այլ ձևերը դարձան գրել, կատարել, բարբոթել, շարժել, այսինքն՝ անցյալ դերբայի ԵՂ ձևը վերածվեց ԵՂ-ի՝ նույնանալով անորոշի ձևին:

Գոյականակերտ ՈՒՄ ածանցը ևս նույնացել է ներգոյականի և անկատար դերբայի ՈՒՄ մասնիկին հնչյունական փոփոխության պատճառով: Կատարում, շարժում, տապալում, ծագում և այլ գոյականների հին ձևերն են՝ կատարումն, շարժումն, տապալումն, ծագումն, այսինքն՝ հընում բայերից գոյականներ էին կազմվում ՈՒՄ՝ն ածանցով: Վերջահընչուն Ն-ի անկմամբ ՈՒՄ՝ն ածանցն ստացավ ՈՒՄ ձևը՝ այսպիսով նույնանալով ներգոյականի և անկատարի ձևին:

Համանունության առաջացման երկրորդ երևույթը, այսինքն՝ նույն ձևի իմաստային ծավալումը, կարելի է ցույց տալ քննարկված ՈՒՄ մասնիկի օրինակով: Գիտականորեն ապացուցված պետք է համարել, որ անկատար դերբայի ՈՒՄ մասնիկը ծագմամբ նույնանում է ներգոյական հոլովի ՈՒՄ վերջավորության հետ: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ ներգոյական հոլովի ՈՒՄ մասնիկը իմաստային ծավալման շնորհիվ ձևեր է բերել դերբայական իմաստ, ընթացքի մեջ գտնվող գործողության արտահայտման իմաստ:

Այս երևույթը կարելի է ցույց տալ նաև տրականի ձևի օրինակով:

Ժամանակակից հայերենում և արևելահայ բարբառներում տրականի ձևը իմաստի ընդարձակմամբ ստանձնել է անձի առման ուղիղ խնդրի պաշտոնն ևս, այսպիսով գոտնայով շարահյուսական երկու տարրեր կարգերի արտահայտիչ. ուսանողին, բժշկին, բանվորին, ուսուցչին և այլ ձևերի միջոցով արտահայտվում են և՛ հանգման առարկան, և՛ ներգործվող առարկան։

**ԲՄՅԱՍՍԱԿԱՆ ԿԱՄ ՉՐՈ ՉԵՎ.**— Քերականական իմաստները հաճախ կարող են արտահայտվել առանց ձևականորեն առկա որևէ մասնիկի։ Այսպես՝ գրեթե, ծառե, աշակերտներ, գյուղացիներ բառերի մեջ հոգնակի թվի իմաստն արտահայտված է հատուկ ձևերով՝ եր և ներ մասնիկների միջոցով, իսկ եզակի թվի իմաստը գիրք, ծառ, աշակերտ, գյուղացի բառերի մեջ արտահայտված է առանց հատուկ մասնիկների, առանց հատուկ ձևերի։ Կամ՝ սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներն արտահայտվում են հատուկ մասնիկներով, իսկ ուղղական հոլովը՝ առանց մասնիկների, ինչպես՝ փառ-փարի-փարից-փարով-փարում, ծով-ծովի-ծովից-ծովով-ծովում, փողոց-փողոցի-փողոցից-փողոցով-փողոցում և այլն։ Նույն ձևով նաև՝ որոշյալ առումն արտահայտվում է ը և ն մասնիկներով, օրինակ՝ ծառը, կինը, երեխան, ծերունին, իսկ անորոշ առումն արտահայտվում է առանց մասնիկների՝ ծառ, կին, երեխա, ծերունի։

Այսպես, ուրեմն՝ քերականական իմաստները երբեմն կարող են արտահայտվել նաև առանց հատուկ մասնիկների։ Այսպիսի դեպքերում սովորաբար ասում են, որ քերականական իմաստն արտահայտված է զրո կամ բացասական ձևով։

Բացասական կամ զրո ձևը ֆերականական իմաստի արտահայտիչ է դառնում միայն հարաբերակից ձևերի համակարգում։ Այսպիսի դեպքերում մասնիկի բացակայությունը յուրահատուկ մի ձև է և հակադրվում է մասնիկին։ ունեցող մյուս ձևերին։

Վերլուծություններից կարելի է եզրակացնել, որ զրո ձևը բազմիմաստ է. և ըստ այն բանի, թե ինչ ձևերի հետ է հարաբերակցություն մեջ մտնում, կարող է արտահայտել ամենատարբեր քերականական իմաստներ։ Այսպես՝ սառ-սարը հարաբերակցության մեջ զրո ձևն արտահայտում է անորոշ առման իմաստ, սառ-սառե հարաբերակցության մեջ՝ եզակի թվի իմաստ, սառ-սարի-սարից և այլ հարաբերակցության մեջ՝ ուղղական հոլովի իմաստ, իսկ, ասենք, գրեցի-գրեցիր-գրեց, կարդացի-կարդացիր-կարդաց և այլ հարաբերակցության մեջ՝ անցյալ կատարյալի եղակի երրորդ դեմքի իմաստ և այլն։

**ԿՅԱԿԱՆ ՈՒ ԹԵՔԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՉԵՎ.**— Բառի մեջ յուրաքանչյուր քերականական իմաստ կարող է արտահայտվել առանձին մասնիկի միջոցով, և, ընդհակառակն, մի քերականական ձևի մեջ կարող են խաչավորվել մի շարք քերականական նշանակու-

թյուններ, այսինքն՝ մի մասնիկը կարող է հանդես գալ որպես մի քանի քերականական իմաստների կրող։ Այսպես, օրինակ՝ դպրոցներին, շենքերին, կամուրջներին բառերի մեջ քերականական մասնիկներն են ԵՐ կամ ՆԵՐ, Ի և Ն։ Դրանցից առաջիններն արտահայտում են հոգնակի թվի, երկրորդը՝ տրական հոլովի, իսկ երրորդը՝ որոշյալ առման կարգը։ Ուսանողներիցս, բանվորներիցս, ուսուցիչներիցս բառերի մեջ ՆԵՐ մասնիկն արտահայտում է հոգնակի թվի, ԻՅ մասնիկը, բացառական հոլովի, իսկ Ս մասնիկը՝ ստացականությունից կարգը։ Այս օրինակների մեջ յուրաքանչյուր քերականական կարգ արտահայտվում է առանձին մասնիկի միջոցով. ամեն մի մասնիկ արտահայտում է մեկ և միայն մեկ քերականական իմաստ։

Քերականական իմաստների դրսևորման այսպիսի եղանակը, երբ բառը բաղադրվում է նրա վրա դրված մի շարք մասնիկներից, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես մի ֆերականական իմաստի կրող, լեզուների կցական տիպի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն է։

Ժամանակակից հայերենի հոլովական համակարգում, ինչպես օրինակներն են ցույց տալիս, բացարձակորեն գերիշխում է կցական տիպը։

Այժմ վերցնենք գրի՛ր, ծիծաղի՛ր, գործի՛ր, սիրի՛ր բառերը։ Այս բառերի մեջ ԻՐ մասնիկն արտահայտում է մի շարք քերականական իմաստներ, այն է՝ ա) բայական խոսքիմասային իմաստ, բ) հրամայական եղանակ, գ) եզակի թիվ, դ) երկրորդ դեմք։ Կամ՝ գրեմ, ծիծաղեմ, գործեմ, սիրեմ բառերի մեջ ՆՄ մասնիկը դրսևորում է բայական խոսքիմասային իմաստ, ըղձական եղանակ, ապառնի ժամանակ, եզակի թիվ, առաջին դեմք։

Այս օրինակներում բազմաթիվ քերականական իմաստները բառի մեջ արտահայտվում են մեկ մասնիկի միջոցով։

Քերականական իմաստների դրսևորման այսպիսի եղանակը, երբ բառի մեջ մեկ մասնիկը կարող է հանդես գալ որպես մի քանի ֆերականական իմաստների կրող, լեզուների թեմական տիպի բնորոշ առանձնահատկություններից մեկն է։

Քերականական իմաստների արտահայտման թեքական տիպը այս կամ այն չափով դրսևորվում է արդի հայերենի բայական համակարգում (անցյալ կատարյալ ժամանակ, ըղձական և հրամայական եղանակներ)։

Քննարկվող հարցի հետ կապված պետք է անդրադառնալ նաև՝ քերականական իմաստների արտահայտման համադրական (սինթետիկ) և վերլուծական (անալիտիկ) տիպերին։ >

Քերականական իմաստների արտահայտման համադրական միջոցները փոխում են բառի ձևաբանական կազմը։ Դրանք կարող են լինել արտաքին, երբ մասնիկներն ավելանում են առանց բառի արմատը փոխելու, ինչպես՝ փառ-փարի-փարից, սառ-սարի-սարից և այլն, և ներքին,



որն արտահայտվում է արմատի հնչյունական փոփոխության միջոցով՝  
ինչպես՝ տուն-տան, շուն-շան, հայր-հոր, մայր-մոր և այլն: Ժամանակակից հայերենի քերականական համակարգում բացարձակորեն գերիշխում է արտաքին թեքումը, իսկ ներքին թեքումը լայն տարածում չունի և էական դեր չի խաղում:

Համադրական ձևերում բառային ու քերականական նշանակությունները ձևավորված են մի բառի մեջ և միայն տարրալուծման միջոցով կարելի է անջատել այն մասերը, որոնք հանդես են գալիս որպես բառային կամ քերականական իմաստների արտահայտիչ: օրինակ՝ ֆար-եր-ից, գր-եց-ի, կարդ-ամ և այլն: Իսկ երբ քերականական իմաստն արտահայտված է ներքին թեքմամբ, այսպիսի տարրալուծումը հնարավոր չէ, օրինակ՝ եղբոր, հոր, ձյան, արշան, սյան և այլն:

Քերականական իմաստների արտահայտման վերլուծական միջոցները օժանդակ բառերն են, որոնք զրկված լինելով նյութական-բառային իմաստներից՝ հանդես են գալիս որպես քերականական իմաստների կրողներ: Այսպես, օրինակ՝ սահմանական եղանակի բոլոր ժամանակները, բացի անցյալ կատարյալից, կազմվում են վերլուծական ձևով՝ դեր-բայներով և օժանդակ բայով, ինչպես՝ հավատում եմ, հավատում էի, հավատալու եմ, հավատալու էի, հավատացել եմ, հավատացել էի: Այս ձևերի մեջ դերբայներն արտահայտում են բառի նյութական իմաստն ու գործողության կերպը (կատարվող, կատարելի, կատարված գործողություն), իսկ օժանդակ բայն արտահայտում է սոսկ քերականական իմաստներ՝ դեմք, թիվ և ժամանակ: Կամ՝ պիտի գնամ, պիտի գնայի, պիտի գրեմ, պիտի գրեի և այլ ձևերի մեջ պիտի օժանդակ բառն արտահայտում է սոսկ հարկադրական եղանակի քերականական իմաստ:

Վերլուծական ձևերում, ինչպես օրինակներն են ցույց տալիս, բառի բաղադրիչները ձևավորվում են առանձին. դեռ ավելին՝ նրանք կարող են իրարից անջատվել՝ ընդմիջվելով այլ բառերով, օրինակ՝ «Ծ՞ս եմ այդ մասին այսօր զեկուցելու», «Դ՞ո՞ւ պիտի նրանց առաջ ամեն ինչ խոստովանեիր» և այլն: Չնայած այսպիսի առանձնահատկություններին՝ վերլուծական կառուցվածքի մասերը տալիս են մի ձև՝ բառային ու քերականական միասնական նշանակությամբ:

Քերականական իմաստների արտահայտման վերլուծական եղանակը բավականին մեծ դեր ու կշիռ ունի արդի հայերենի բայական համակարգում: Վերլուծական ձևով են կազմվում սահմանական եղանակի բոլոր ժամանակները, բացի անցյալ կատարյալից (գնում եմ, գնում էի, գնացել եմ, գնացել էի և այլն), հարկադրական եղանակը (պիտի գնամ, պիտի գնայի), երկրորդական բաղադրյալ ժամանակները (գնալիս եմ լինում, գնացած եմ լինում, գնալիս եմ եղել, գնալիս եղա և այլն):

Վերլուծական ձևով կա նաև պատճառականի հատուկ կազմություն, ինչպես՝ գրել եմ տալիս, գրել եմ տալու, գրել եմ տվել, գրել եմ տվեցի,

գրել կտամ և այլն, որոնց մեջ բայն իր անորոշ դերբայի ձևով արտահայտում է բառային իմաստը, իսկ տալ օժանդակ բառը քերականական իմաստները՝ եղանակ, ժամանակ, դեմք, թիվ: 12

ՍԱՐԱՐՄԱՏ (SUPPLETIV) ՁեՎԵՐ.— Երբեմն նույն բառի քերականական տարբեր ձևերը կարող են տարբեր արմատներից կազմվել կամ տարբեր արմատներով արտահայտվել, օրինակ՝ գամ-եկա, լինեմ-եղա, ասեմ-կերա, ես-իմ-ինձ, դու-քո-քեզ, մենք-մեր-մեզ, դուք-ձեր-ձեզ: Սրանք կոչվում են տարարմատ ձևեր և, որպես կանոն, գալիս են լեզվի հնագույն շրջաններից: Տարարմատ կազմությունները համարվում են նույն բառի ձևեր, որովհետև ունեն նույն նյութական բառային նշանակությունը և իրարից տարբերվում են միայն քերականական իմաստով:

ԲԱՌԻ ՏԱՐՐԱԿՈՒԾՈՒՄԸ, ՁեՎՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԲԱՌԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՒ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ.— Քերականության խնդիրներից մեկը բառի ձևաբանական կառուցվածքի ուսումնասիրությունն է:

Բառը նշանակության կողմից հաճախ պարզ միավոր չէ: Շատ դեպքերում բառային իմաստի հետ մեկտեղ նա արտահայտում է մեկ կամ մի քանի լրացուցիչ նշանակություններ, և, այսպիսով, շատ բառեր վերածվում են մասերի, որոնք հանդես են գալիս որպես այս կամ այն իմաստի կրող:

Վերցնենք «Ձինվորները ազատվեցին պարապմունքից» նախադասությունը: Այս նախադասությունը կազմող բառերը ըստ նշանակության վերածվում են հետևյալ այլևս անբաժանելի մասերին. զին-վոր-ներ-ը, ազատ-վ-եց-ին, պարապ-մունք-ից: Ահա բառի՝ իմաստային տեսակետից այլևս անբաժանելի այսպիսի տարրերը, որոնք հանդես են գալիս որպես այս կամ այն նշանակության կրող, կազմում են ձևային: Ձևայինները բնորոշվում են ոչ միայն իմաստի, այլև ձևի տեսակետից, որովհետև յուրաքանչյուր իմաստ անպայմանորեն և անհրաժեշտորեն արտահայտվում է այս կամ այն ձևի միջոցով, այսինքն՝ հնչյունի կամ հնչյունախմբի միջոցով: Ձևայինները լեզվի ձևաիմաստային նվազագույն միավորներն են, ունեն իրենց ձևն ու բովանդակությունը, որոնք անխզելիորեն կապված են իրար, և առանց մեկի մյուսը չկա: Ձևային ձևը այն հնչյունն է կամ հնչյունախումբը, որ արտահայտում է այս կամ այն իմաստը, իսկ բովանդակությունը այն իմաստն է, որ դրսևորվում է այս կամ այն հնչյունի կամ հնչյունախմբի միջոցով:

Բառի՝ ձևայինների տարրալուծման հիմնական պայմանն այն է, որ լեզուն ունի միևնույն կազմության բառերի մի ամբողջ շարք, որոնց մեջ նույն ձևը, այսինքն՝ հնչյունը կամ հնչյունախումբը, հանդես է գալիս որպես որոշակի իմաստի կրող: Այսպես՝ նկարիչ բառի մեջ նկար և իչ ձևավորների անջատումը պայմանավորված է նրանով, որ մի կողմից ունենք նկար, նկար-ել, նկար-ող, նկար-ած, նկար-եց և այլ խումբը, իսկ մյուս կողմից՝ երգ-իչ, փրկ-իչ, մատն-իչ, քնն-իչ, գործ-իչ և այլ խումբ:

բը, որոնց մեջ նկար և իշ ձևերը հանդես են գալիս որպես որոշակի նշանակութունների արտահայտիչներ:

Վերևի նախադասության մեջ զին-վոր-ներ-ը ազատ-վ-եց-ին պարապ-մունք-ից ձևայինների անջատումը պայմանավորված է հարաբերակցութունների հետևյալ շարքերով.

ՁԻՆ	ՎՈՐ	ՆԵՐ	Ը
զին-վել	բան-վոր	այգի-ներ	բար-ը
զին-ված	կալ-վոր	փողոց-ներ	ծառ-ը
զին-ում	սայլ-վոր	սեղան-ներ	սար-ը
զին-եց	վիր-ա-վոր	բաղաբ-ներ	մարդ-ը
զին-իր ևն	աղեղն-ա-վոր ևն	աղջիկ-ներ ևն	աչք-ը ևն
ԱԶԱՏ	Վ	ԵՑ	ԻՆ
ազատ-ել	գր-վ-ել	կատար-եց-ի	բեր-ին
ազատ-ող	աս-վ-ել	վազ-եց	դր-ին
ազատ-եմ	հարգ-վ-եց	խար-եց-ին	սվ-ին
ազատ-իր	գր-վ-ած	ծիծաղ-եց-եք	աս-աց-ին
ազատ-եց ևն	բեր-վ-ող ևն	դատ-եց-իր ևն	սիր-եց-ին ևն

ՊԱՐԱՊ	ՄՈՒՆԲ	ԻՑ
պարապ-ել	մտած-մունք	սեղան-ից
պարապ-ող	սխալ-մունք	փողոց-ից
պարապ-եց	աւ-մունք	աշակերտ-ից
պարապ-եմ	հարց-մունք	դրբ-ից
պարապ-իր ևն	վար-մունք ևն	սար-ից ևն:

Ինչպես տեսնում ենք, անջատված ձևայինների համար լեզվում կան տարբեր բառերի շարքեր, որոնց մեջ անջատված ձևայինները հանդես են գալիս միևնույն իմաստով: Այսպես, վերևում բերված այգիներ, փողոցներ և այլ ձևերի մեջ ՆԵՐ ձևայինը նույն իմաստն ունի և արտահայտում է հոգնակիություն. ֆար, ծառ և այլ ձևերի մեջ Ը ձևայինը միևնույն իմաստն ունի և արտահայտում է բառերի որոշյալ առումը: Այսպես են նաև անջատված մյուս ձևայինները:

Բառերի վերլուծման հիմքը լեզվի բառային կազմն է: Նույն ձևայինների գործածությունը տարբեր բառերի մեջ հնարավորություն է տալիս բառը տարրալուծել բաղադրիչների և նույն կաղապարով կազմել նոր բառեր կամ բառաձևեր: Այսպես, օրինակ՝ լեզվում կա ֆար-անալ, ածխ-անալ, մեծ-անալ, սև-անալ և այլ կաղապարը: Դրա նմանակությամբ կարող ենք կազմել, ասենք, հողանալ, տախտականալ, վագրանալ և այլ բառերը: Դրանց իմաստն անմիջապես հասկացվում է, որովհետև բառի բաղադրիչ ձևայինների իմաստը պարզ է ու հասկանալի:

Այս վերլուծություններն ինքնին ցույց են տալիս, որ երբ գործ ունենք ձևայինների վերածվող բառի հետ, ապա հաստատ կարող ենք ասել, որ նրա ձևաբանական կազմը, նրա բաղադրիչները հատուկ են ոչ միայն տվյալ բառին, այլև մի շարք ուրիշ բառերի ևս:

Այս բանը ավելի ցայտուն կարելի է ցույց տալ լեզվում կազմվող նոր բառերի օրինակով: Վերջերս մեր լեզվում կազմվեց ու գործածության մեջ մտավ տիեզերանավ բառը: Բայց այս բառը լեզվի համար նոր է միայն իր բառային իմաստով: Այս բառը կազմող բաղադրիչները՝ տիեզեր, ա, նավ, լեզվում արդեն կային և հանդես էին գալիս բազմաթիվ այլ բառերի մեջ, օրինակ՝ տիեզեր-ք, տիեզեր-ական, տիեզեր-ակենտրոն և այլն, հեռ-ա-գիր, անձրև-ա-ջուր, զոր-ա-հանդես և այլն, ռազմ-ա-նավ, առագաստ-ա-նավ, զբոս-ա-նավ և այլն: Մյուս կողմից՝ տիեզերանավ բառի կազմության տիպը միայն իրեն հատուկ չէ: Բարդ բառերի կազմության զոյականական արմատ + ա (հողակապ) + զոյականական արմատ տիպը լեզվում սովորական է, օրինակ՝ անձրև-ա-ջուր, սեղան-ա-տուն, երկր-ա-գունդ և այլն: Սա նշանակում է, որ տիեզերանավ բառը կազմության իր ձևով միայնակ չի մտնում և մտնում է այս բառերի խմբի մեջ: Միաժամանակ տիեզերանավ բառը միայնակ չի մտնում իր քերականական նշանակությամբ: Արտահայտելով առարկայական իմաստ՝ տիեզերանավ բառը մտնում է ինքնաթիռ, գնացք, նավ, շոգեփարչ և հազարավոր այլ բառերի խմբի մեջ: Ահա այս է պատճառը, որ տիեզերանավ բառը կազմելուց հետո անմիջաբար կարող ենք հոլովել՝ տիեզերանավ-տիեզերանավի-տիեզերանավից-տիեզերանավով-տիեզերանավում, կազմել դրա հոգնակի թիվը՝ տիեզերանավեր և հոլովել նաև հոգնակի թիվով՝ տիեզերանավերի-տիեզերանավերից և այլն:

Այս նույն ձևով ահա լեզվի մեջ ոչ մի բառ առանձին չի մտնում և իր արտահայտած քերականական նշանակությամբ կամ կազմության տիպով մտնում է այս կամ այն խմբի մեջ: Այսպես, բոլոր գոյականների եզակի ձևերը՝ ֆար, սար, ծառ, գիրք, մի խումբ են կազմում, իսկ հոգնակիները՝ ֆարեր, սարեր, ծառեր, գրքեր, մի այլ խումբ. բոլոր բայերի անորոշ դերբայները՝ գրել, ասել, կատարել, մի խումբ են կազմում, իսկ հարակատար դերբայները՝ գրած, ասած, կատարած, մի այլ խումբ: Այսպես և՛ Վ ածանցով կազմված բայերը՝ սիրվել, հարգվել, ուղարկվել, կատարվել և այլն, մի խմբի մեջ են մտնում, իսկ Յն ածանցով կազմվածները՝ վազեցնել, մեծացնել, հեռացնել, հագցնել և այլն՝ մի այլ խմբի մեջ:

Այսպիսով, լեզուն իրենից ներկայացնում է ոչ թե ձևերի մի պատահական հավաքածու, այլ կուռ և ամբողջական համակարգ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՁԵՎՈՒԻՑՄՆԵՐ. «Ձինվորները ազատվեցին պարապմունքից» նախադասությունը կազմող բառերի մեջ, ել-

նելով այլ բառերի հետ ունեցած հարաբերակցություններից, անջատվեցին զին, վոր, ներ, ր, ազատ, վ, եց, ին, պարապ, մունք, ից ձևերից: Քննենք դրանք իրենց իմաստի և լեզվի մեջ ունեցած դերի ու գործածության տեսակետից:

Առաջին իսկ վերլուծությունից պարզ է դառնում, որ զին, ազատ, պարապ ձևերը նյութական նշանակություն են արտահայտում, իսկ մյուս ձևերը՝ վոր, ներ, ր, վ և այլն, զուրկ են նյութական իմաստից և հանդես են գալիս որպես վերացական իմաստների կրողներ: Այս հիմունքով էլ ձևերը ստորաբաժանվում են երկու խմբի. 1) նիմնական կամ նյութական իմաստ արտահայտող ձևեր և 2) երկրորդական կամ ֆերականական իմաստ արտահայտող ձևեր:

1) Հիմնական կամ նյութական ձևերն արտահայտում են օբյեկտիվ աշխարհի առարկաներն ու երևույթները, գործողություններն ու հատկանիշները, սակայն ընդհանուր կերպով, առանց կոնկրետացնելու: Այսպես է, օրինակ, զին ձևով, որ ցույց է տալիս զենք հասկացության հետ կապված ընդհանուր գաղափար, առանց մասնավորապես նշելու՝ դա առարկա՞ է, թե՞ գործողություն: Այս պատճառով էլ նա լեզվում ինքնուրույն բառային գործածություն չունի և բառ է դառնում միայն այլ ձևերի հետ միանալով, օրինակ՝ զինվոր, զինել, զինում, զինված և այլն: Ազատ և պարապ հիմնական ձևերը զին ձևից տարբերվում են նրանով, որ կոնկրետ իմաստ են արտահայտում, առանց այլ ձևերի հետ միանալու կարող են ինքնուրույն գործածություն ունենալ և այս պատճառով էլ սոսկ ձևեր չեն, այլ բառեր: **Ինֆեուրայն, անկախ գործածություն ունեցող նիմնական ձևերը** կոչվում է արմատական բառ: Ազատ և պարապ հիմնական ձևերն, ուրեմն, արմատական բառեր են:

2) Երկրորդական կամ ֆերականական ձևերը արտահայտում են ոչ թե նյութական, այլ վերացական նշանակություններ: Վերջին հիմնական ձևերից բառ են կազմում, ինչպես՝ զին ձևից զինվոր, կամ լեզվում արդեն եղած բառերից նոր բառեր են կազմում, ինչպես՝ պարապ բառից պարապմունք բառը, կամ էլ ցույց են տալիս բառերի հարաբերությունը նախադասության մեջ՝ կազմելով բառակերպ, ինչպես՝ պարապմունք-պարապմունքից:

Ըստ այդմ, երկրորդական ձևերն ստորաբաժանվում են երկու խմբի՝ ա) բառաստեղծական կամ բառակազմական ձևեր, որոնք հիմնական ձևերից բառ են կազմում կամ եղած բառերից նոր բառեր են կազմում (վոր, մունք). բ) ձևակազմական կամ բառահարաբերական ձևեր, որոնք կազմում են բառի ձևերը՝ ցույց տալով նրա հարաբերությունը այլ բառերի հետ (ներ, ր, եց, ից և այլն): Այլ կերպ ասած՝ երկրորդական ձևերի առաջին խմբի մեջ մտնում են ածանցները, իսկ երկրորդ խմբի մեջ՝ վերջավորությունները (թեքություններ):

Երկրորդական ձևերի երկրորդ խմբի մեջ են մտնում նաև կապերն ու շաղկապները, որովհետև դրանք ևս բառային նյութական նշանակությունից զուրկ են և կոչված են արտահայտելու բառերի և նախադասությունների հարաբերությունները, օրինակ՝ Գնաց դեպի այգին. հոսում էին պատերազմի մասին. Ծս և դու սասցինք. հոստացավ, բայց չկատարեց: Բերված օրինակներում դեպի և մասին կապերն արտահայտում են այգի, պատերազմ բառերի՝ ստորոգյալների նկատմամբ ունեցած հարաբերությունը. և շաղկապն արտահայտում է Ծս և դու բառերի միասնության, իսկ բայց շաղկապը՝ խոստացավ և չկատարեց բառերի հակադրական հարաբերությունը:

Վերջապես, կան ձևեր, որոնք «իմաստազուրկ» են և սոսկ ֆերականական կապի դեր են կատարում: Այսպես է Ա հողակապը իսկական բարդությունների մեջ, օրինակ՝ դասԱմատյան, ջրԱտար, սևԱսիտ և այլն, Ծ և Ա ձայնավորները անորոշ դերբայի, անցյալ կատարյալի, ըղձական եղանակի և այլ ձևերի մեջ, ինչպես՝ գրել, կարգԱլ, գրեց, կարգԱց, գրեմ, կարգԱմ և այլն: Սակայն որովհետև բայական ձևերում հանդես եկող Ծ և Ա ձևերը ինքնին իմաստ չեն արտահայտում, այդ պատճառով սովորաբար դրանք առանձին ձևեր չեն համարվում, և, ասենք, գրել, կարգալ, գրեմ, կարգամ բառերը տարրալուծվում են միայն գր-ել, կարգ-ալ, գր-եմ, կարգ-ամ ձևերի:

ԲԱՄ ԵՎ ԲԱՄԱՁԵՎ.— Ձևակազմական և բառակազմական ձևերը տարբերակվում են այն բանի հիման վրա, որ առաջինները սոսկ ֆերականական նշանակություն են արտահայտում՝ շփոխելով բառի կոնկրետ բառային իմաստը, իսկ երկրորդները փոխում են բառիմաստը (հաճախ նաև ֆերականական իմաստը)՝ արտահայտելով մտքի մի նոր առարկա, երևույթ, գործողություն և այլն: Վերցնենք երգ-երգիչ, գիր-գիրք զույգերը՝ մի կողմից և երգ-երգից, գիր-գրով զույգերը՝ մյուս կողմից: Երգ-երգիչ, գիր-գիրք համապատասխան զույգերի մեջ մտնող բառերից յուրաքանչյուրը իր բառիմաստով, կոնկրետ նյութական նշանակությամբ տարբերվում է մյուսից. երգ բառը մտքի մի առարկա է ցույց տալիս, իսկ երգիչ բառը՝ մի այլ առարկա: Նույն ձևով էլ՝ մի բառիմաստ ունի գիր ձևը, մի այլ բառիմաստ՝ գիրք ձևը: Հենց այսբանով էլ ԻՁ և Ք ձևերը բառակազմական ձևեր են, որովհետև կազմում են նոր իմաստ ունեցող նոր բառեր:

Այսպես չէ սակայն երգ-երգից, գիր-գրով ձևերի հարաբերակցությունը: Համապատասխան զույգերի մեջ մտնող ձևերը բառիմաստային տարբերություն ամենևին չունեն: Ե՛վ երգ, և՛ երգից ձևերը ցույց են տալիս մտքի և դատողության միևնույն առարկան: Այսպես են նաև գիր և գրով ձևերը: Համապատասխան զույգերի մեջ մտնող ձևերը շտաբերվելով բառիմաստով, նյութական նշանակությամբ, տարբերվում են միայն ֆերականական-վերաբերական իմաստով: Հենց այսբանով էլ ԻՅ և

Ով ձևույթները պատկանում են ձևակազմական, բառափոխական ձևույթների խմբին:

Ձևակազմական ձևույթների արտահայտած իմաստների այս յուրահատկության վրա է հիմնված բառի ձևեր հասկացությունների ըմբռնումը:

Բառի ձևեր են կոչվում այն ձևերը, որոնք միավորված լինելով նույն բառիմաստի տակ, շտաբերվելով կոնկրետ նյութական նշանակությամբ, իրարից տարբերվում են սուկ ֆերականական-վերաբերական իմաստով: Այսպես, օրինակ՝ ֆար-ֆարի-ֆարից-ֆարով-ֆարում-ֆարեր-ֆարերի-ֆարերից-ֆարերով-ֆարերում նույն ֆար բառի տարբեր ձևերն են, որովհետև ունեն բառիմաստի նույնությունն և տարբերվում են սուկ քերականական իմաստներով: Այսպես և՛ գրում եմ, գրում էի, գրելու եմ, գրելու էի, գրել եմ, գրել էի, գրեցի, գրեմ, գրեի և այլ ձևերը նույն գրել բառի տարբեր ձևերն են, քանի որ նույն բառիմաստն ունեն և տարբերվում են միայն քերականական նշանակությամբ:

Բայց բոլոր դեպքերում չէ, որ բառ ու բառույն հասկացությունները այսպես հստակորեն սահմանազատվում են իրարից: Առանձին դեպքերում շատ դժվար է որոշել տվյալ ձևերը քերականական, թե՛ բառային հարաբերակցությունների մեջ են գտնվում:

Այսպես՝ կարող է վիճարկվել գրել, գրած, գրող, գրելիս ձևերի, այսինքն՝ անորոշ, հարակատար, ենթակայական, անկատար II դերբայների բառ կամ բառաձև լինելու հարցը: Այս դերբայները, այսպես կոչված, անկախ դերբայներ են և մյուս դերբայական ձևերից տարբերվում են նրանով, որ ինքնուրույն բառային գործածություն ունեն, ինչպես՝ Գրել շի կարելի, գրած նամակ, գրող աշակերտ, Գրելիս տեսա և այլն: Մինչդեռ մյուս դերբայական ձևերը, այն է՝ անկատար—գրում, ապառնի—գրելու, վաղակատար—գրել (եմ), ժխտման—գրի, բառային անկախություն չունեն, միշտ հանդես են գալիս օժանդակ բայի հետ միասին՝ կազմելով բաղադրյալ ժամանակներ, ինչպես՝ գրում եմ, գրում էի, գրելու եմ, գրելու էի, գրել եմ, գրել էի, չեմ գրի, չեի գրի:

Ժամանակակից քերականությունների մեջ բոլոր դերբայները, անկախ իրենց գործածությունների տարբերությունից, համարվում են բայեր և դիտարկվում են որպես բառաձևեր: Սակայն Մ. Աբեղյանը անորոշ, հարակատար, ենթակայական և անկատար II դերբայները ոչ միայն տարբեր բառեր էր համարում, այլև տեղաբաշխում էր տարբեր խոսքի մասերի մեջ՝ անորոշ դերբայները (գրել, ասել, գնալ) համարելով գոյական, հարակատար և ենթակայական դերբայները (գրած, ասած, գնացած. գրող, ասող, գնացող)՝ ածական, իսկ ԻՄ-ով անկատար դերբայները (գրելիս, ասելիս, գնալիս)՝ մակբայ:

Հարցի այս տարբեր լուծումները, համենայն դեպս, խոսում են այն մասին, որ առանձին դեպքերում բառ և բառաձև հասկացությունները հստակորեն ու որոշակիորեն չեն սահմանազատվում:

Այս հարցը քննելիս պետք է նկատի ունենալ նաև այն, որ միևնույն ձևը կարող է զվտարկվել որպես անկախ ու ինքնուրույն բառ՝ մի հարաբերակցության մեջ և բառաձև՝ մի այլ հարաբերակցության մեջ: Այս, պես, գրել, սրել, հավատալ ձևերը անկախ ու ինքնուրույն բառեր են գիր, սուր, հավատ բառերի նկատմամբ ունեցած հարաբերության տեսակետից, սակայն բառաձևեր կարող են համարվել գրած, սրած, հավատացած, գրույ, սրող, հավատացույ և այլ ձևերի հետ ունեցած հարաբերակցության տեսակետից:

Բայց իր փոփոխված բոլոր ձևերով կազմում է մի բառույթ (лексема):) 4

ՁեՎՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՆԵՐԸ. ԿԵՆՍՈՒՆԱԿ (ԿԵՆԴԱՆԻ) ԵՎ ՈՉ ԿԵՆՍՈՒՆԱԿ (ՔԱՐԱՑԱԾ) ՁԵՎՈՒՅԹՆԵՐ.— Բառակազմական և ձևակազմական ձևույթներից յուրաքանչյուրը ունի իր կիրառության հատուկ ոլորտը, որի շրջանակներում գործածվում է՝ կազմելով նոր բառեր կամ բառաձևեր: Ընդհանրապես պետք է նկատել, որ բառափոխական ձևույթների ոլորտը սովորաբար շատ լայն է լինում: Այսպես՝ ժամանակակից հայերենում ամեն մի հոլովվող բառ գործիական հոլովում կարող է ստանալ ՈՎ վերջավորությունը, իսկ բացառականում ԻՑ կամ ՈՒՅ վերջավորությունները: Կամ՝ ԵՐ, ՆԵՐ հոգնակերտ մասնիկները տարածվում են գոյականների լրացարձակ մեծամասնության և բոլոր ածականների վրա, եթե նրանք գործածվում են գոյականաբար: Այսպես և՛ հայերենի համարյա բոլոր բայերը, բացառությամբ գալ, լալ, տալ բայերի, կարող են ստանալ ՈՒՄ մասնիկը և կազմել անկատար դերբայ, օրինակ՝ վազել—վազում, ասել—ասում, հավատալ—հավատում, զգալ—զգում և այլն: Իսկ ԻՄ մասնիկը՝ առանց բացառության, տարածվում է հայերենի բոլոր բայերի վրա: Ամեն մի բայ կարող է ստանալ այս մասնիկը և կազմել անկատար II-ը, ինչպես՝ ասել—ասելիս, հավատալ—հավատալիս, զգալ—զգալիս, հեռանալ—հեռանալիս և այլն:

Բառափոխական ձևույթների գործածության ոլորտների այսպիսի ընդարձակությունը բացատրվում է նրանով, որ քերականական իմաստները «մաքուր» վերացություններ են և կապված են բառերի ոչ թե նյութական, այլ, որպես կանոն, ընդհանուր (խոսքիմասային) նշանակության հետ:

Բառակազմական ձևույթների գործածության ոլորտները այս կամ այն շափով սահմանափակված են բառերի կոնկրետ նյութական նշանակությամբ: Այսպես՝ մեր լեզվում այնքան տարածված ՈՒԹՅՈՒՆ ածանցը, որը վերացական գոյականներ է կազմում գոյականներից, ածականներից, բայարմատներից, օրինակ՝ դաբնություն, իշխանություն, կարմրություն, բարմություն, սպանություն, օգնություն և այլն, բոլոր գոյականների, ածականների և բայարմատների վրա չէ, որ կարող է դրվել: Կամ՝ ժամանակակից հայերենում այնքան տարածված ԻՉ ածանցը, որ

ածականներ ու գոյականներ է կազմում բայարմատներից, օրինակ՝ կն-դեֆիշ, համոզիշ, հրապուրիշ, ճսկիշ, սրբիշ, ցրիշ և այլն, բոլոր բայարմատների հետ չէ, որ կարող է գործածվել:

Սակայն մի կողմ թողած այն, որ բառափոխական ձևույթների տարածման ոլորտը, բառակազմական ձևույթների հետ համեմատած, սովորաբար ավելի ընդարձակ է լինում, պետք է նշել, որ անկախ բառափոխական կամ բառակազմական լինելու հանգամանքից, կան ձևույթներ, որոնք լայն տարածում ունեն և գործածվում են բազմաթիվ բառերի մեջ, իսկ կան ձևույթներ էլ, որոնք լայնորեն տարածված չեն և հանդես են գալիս սակավաթիվ բառերի մեջ: Առաջին խմբի ձևույթները կոչվում են գործուն, կենսունակ (կամ կենդանի), իսկ երկրորդ խմբի ձևույթները՝ ոչ գործուն, ոչ կենսունակ (կամ քարացած, մեռած):

Որպես օրինակ վերջիններ սեռական-տրական հոլովի Ի և ՈՁ ձև-վույթները: Սեռական-տրականի Ի վերջավորությունը գործուն է ու կենսունակ, որովհետև այս վերջավորությունն են ստանում բազմաթիվ բառեր, դրանց թվում նաև նորակազմ բառեր, օրինակ՝ տիեզերագնաց-տիեզերագնացի, հեռուստացույց-հեռուստացույցի, գրասաշարիկ-գրասաշարիկի և այլն: Ընդհակառակն, սեռական-տրականի ՈՁ վերջավորությունը գործուն ու կենսունակ չէ, որովհետև գործածվում է մի քանի՝ ֆույր, կին, ընկեր, տեր և հաճախ նաև՝ տալ, սկեսուր, աներ բառերի մեջ: Կամ՝ հոգնակերտ ԵՐ և ՆԵՐ ձևույթները գործուն են, Ք-ն գործուն չէ, իսկ ԻՎ-ը բոլորովին գործուն չէ, քանի որ գործածվում է միայն մի բառի մեջ՝ մարդ-մարդիկ (նաև այն բառերում, որոնց վերջին բաղադրիչը մարդ բառն է, օրինակ՝ նախամարդիկ):

Այս երևույթը կարելի է ցույց տալ նաև բառակազմական ձևույթների օրինակով: Կան ածանցներ, որոնք գործածվում են բազմաթիվ բառերի մեջ, և այդ բառերը հնարավոր էլ չէ թվարկել, որովհետև կազմության տվյալ կաղապարը կենդանի է ու գործուն, և դրա օրինակով ըստ հարկի կարող են նորանոր բառեր կազմվել: Ժամանակակից հայերենի կենսունակ այսպիսի ածանցներից են՝ ԱԿԱՆ (բանվորական, երիտայական), ԱՆՔ (հարգանք, մեղադրանք), ՈՒԹՅՈՒՆ (երիտասարդություն, լավություն), ՈՒՂԻ (բանվորուհի, գեղեցկուհի), ՎՈՐ (թունավոր, վիրավոր), ԲԱՐ (ընկերաբար, հերոսաբար) և այլն: Սակայն կան ածանցներ էլ, որոնք գործածվում են մեկ կամ մի քանի բառերի մեջ: Այսպես են, օրինակ, ԱՆԴԻ (միայն վտարանդի բառի մեջ), ԱՍՏԻ (միայն նավաստի բառի մեջ), ԱՐԻՄ, ԵՐԻՄ (միայն հավատարիմ, ռիսերիմ, մտերիմ բառերի մեջ), ԻԼ (միայն տեսիլ և կաթիլ բառերի մեջ), ԻՍՏ (միայն հանգիստ բառի մեջ): Դրանք ոչ գործուն, քարացած ածանցներ են: Կան ածանցներ էլ, որոնք, ձիշտ է, համեմատաբար շատ բառերի մեջ են գործածվում, բայց որովհետև այդ բառերի նմանակությամբ աջևս նոր բառեր չեն կարող կազմվել, ուրեմն դրանք ևս ոչ գործուն, քարացած ա-

ծանցներ են: Այսպես են, օրինակ, անվանական ԵՍՏ (զովեստ, զգեստ, պահեստ և այլն), բայական Ն (գտնել, մտնել, տեսնել և այլն), Չ (փախչել, ուռչել, կաշնել և այլն), ԵՆ (մտտենալ, մեծենալ, գիտենալ և այլն) ածանցները, որոնցով նոր բառեր չեն կազմվում: Բերված բայական ածանցներին հակադրվում է ԱՆ ածանցը, որը կենդանի է ու գործուն, և ըստ հարկի դրանով կազմվել ու կազմվում են բազմաթիվ բայեր (էլեկտրականանալ, ակտիվանալ, պասսիվանալ, ռուսանալ և այլն):

Այն էլ պետք է նկատի ունենալ, որ ածանցը իր մի իմաստով կարող է կենդանի ու գործուն լինել, իսկ մի երկրորդ իմաստով՝ ոչ: Այսպես է, օրինակ, ԱՆԻ ածանցը, որ մի բան ունեցողի նշանակությամբ (եւեֆոնանի, շոբաշխանի, յոթղխանի և այլն) կենդանի է ու գործուն, իսկ հավաքական գոյականներ կազմելու նշանակությամբ (ավագանի, ընտրանի, նամականի)՝ ոչ:

ԱՐՄԱՏ ԵՎ ՉԵՎՈՒՅԹԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ.— Առաի նյութական իմաստն արտահայտող հիմնական ձևույթը կոչվում է արմատ: Օրինակ՝ նավակ, տնակ, դաշտային, պատմական, բարձրանալ, հավատալ, հիանալ, գրտնել բառերի նյութական, բառային իմաստն արտահայտող ձևույթներն են՝ նավ, տն-, դաշտ, պատմ-, բարձր, հավատ, հի-, գրտ- մասերը. դրանք էլ հենց այդ բառերի արմատներն են: Բառը կարող է բաղադրված լինել ոչ միայն մեկ, այլև մեկից ավելի արմատներից՝ Այսպես՝ հեռախոս, հեռագիր բառերը բաղադրված են երկու, իսկ հեռախոսավարձ, հեռագրատուն բառերը՝ երեք արմատից: (Դրանք բարդ բառեր են:)

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, արմատների մի մասը կոնկրետ, ավարտված-վերջավորված իմաստ է արտահայտում, որի հետեվանքով էլ ինքնուրույն բառային գործածություն ունի: Այսպես են, օրինակ, նավ, դաշտ, բարձր, հավատ արմատները: Արմատների մի մասն էլ միայն ընդհանուր նյութական իմաստ է արտահայտում, որի պատճառով էլ ինքնուրույն բառային գործածություն չունի և հանդես է գալիս միշտ ուրիշ ձևույթների հետ միասին: Այսպես են, օրինակ, տն-, պատմ-, հի-, գրտ-, հեռ-, խոս- արմատները:

Ինքնուրույն ու անկախ գործածություն ունեցող հիմնական ձևույթները կոչվում են արմատական բառեր: Նավ, հավատ, դաշտ, բարձր ձև-վույթներն, ուրեմն, արմատական բառեր են, իսկ տն-, պատմ-, հի-, գրտ-, հեռ-, խոս- ձևույթները սոսկ արմատներ են:»

Հայերենում մի շարք արմատներ բառերի մեջ կարող են հնչյունափոխության ենթարկվել, և, այսպիսով, նույն արմատի համար ունենում ենք զույգ ձևեր: Այսպես, օրինակ՝ անտուն, մեծատուն, վաճառատուն բառերի մեջ տուն արմատը հանդես է գալիս իր սովորական անհնչյունափոխ ձևով, իսկ տնային, տնական, տնվոր բառերի մեջ շեշտակորույս լինելով՝ վերածվում է տրն- ձևին (գրության մեջ Ը հնչյունը չի նշվում): Արմատական զուգաձևեր են հրեք՝ ջուր || ջր (լվացքաշուրջըրովոր), պատում ||

||պատմ (հրաշապատում||պատմել), սիրտ||սրտ (անսիրտ||սրտոտ), գետ||  
||գիտ (ամենագետ||գիտութուն), հույս||հուս (լիահույս||հուսատու) և այ-  
լրեւ։

Հնչյունափոխական տարբերակներ կարող են ունենալ նաև ածանց-  
ները, օրինակ՝ այլև||այն (շրթնային||շրթնայնանալ), իչ||չ (նկարիչ||նը-  
կարչական), ուկ||կ (գեղուկ||գեղչական), ուն||ն (զգայուն||զգայնու-  
թյուն), ունդ||(ը)նդ (ծնունդ||ծննդյան) և այլն։

(Հնչյունափոխության ենթարկված ձևայինները (արմատներն ու ա-  
ծանցները) կոչվում են ձևային տարբերակներ։) Այսպիսով, տն-, սրտ-,  
հուս- ձևերը տուն, սիրտ, հույս արմատների, իսկ այն, չ, և ձևերը այլև,  
իչ, ուն ածանցների տարբերակներն են։

Հայերենում սովորաբար տարբերակներ ունեն այն արմատներն ու  
ածանցները, որոնց վերջին վանկում կան Ի, ՌԻ, Ծ (հին՝ է) ձայնավոր-  
ները և ՌԻՅ (երբեմն նաև ՅԱ) երկհնչյունը։

Ձևայինների տարբերակների հարցը քննելիս պիտի հաշվի առնել  
նաև այն, որ արդի հայերենում կան մի շարք արմատներ, որոնք հան-  
դես են գալիս ն-ով և առանց ն-ի հարաբերակից ձևերով, ինչպես՝ գառ||  
գառն (գառնարած), կողմ||կողմն (կողմնացույց), մաս||մասն (մասնա-  
կից), հարս||հարսն (հարսնացու) և այլն։ Այս երևույթի պատճառն այն  
է, որ գրաբարյան բաղաձայնահաջորդ ն վերջնահնչյունը աշխարհաբար-  
րում ընկնում է, ինչպես՝ գառն-գառ, կողմ-կողմ, մասն-մաս, հարսն-  
հարս, ձուկն-ձուկ, մուկն-մուկ և այլն, բայց բաղադրությունների մեջ  
կրկին կարող է վերականգնվել, ինչպես՝ գառնարած, կողմնացույց, մաս-  
նակից, հարսնացու, ձկնորս, մկնդեղ։

Արմատական այս զույգ ձևերից յուրաքանչյուրն ունի իր գործածու-  
թյան հատուկ ոլորտը։ Հոլովման ժամանակ այս արմատները, որպես կա-  
նոն, հանդես են գալիս առանց ն-ի, ինչպես՝ բեռ-բեռից, գառ-գառից,  
եգ-եգից, թոռ-թոռից, ձուկ-ձկից և այլն, իսկ բառակազմության ժամա-  
նակ ն-ով, ինչպես՝ բեռնել, գառնարած, եգնարած, թոռնատեր, ձկնկույ  
և այլն։ Հոգնակիի կազմության ժամանակ արմատների մի մասը հան-  
դես է գալիս ն-ով, իսկ մի մասն էլ առանց ն-ի, ինչպես՝ բեռ-բեռներ,  
գառ-գառներ, եգ-եգներ, թոռ-թոռներ, լեռ-լեռներ և այլն, բայց՝ անծ  
(գրբ. անծն)-անծեր, կողմ (գրբ. կողմն)-կողմեր, մաս (գրբ. մասն)-  
մասեր, որդ (գրբ. որդն)-որդեր, սերմ (գրբ. սերմն)-սերմեր և այլն։

ԲԱՌԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՊԱՐՁ ՈՒ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԻՄՔԵՐ.— Հիմքը բառի  
այն մասն է, որին ավելանում են վերջավորությունները՝ տվյալ բառի-  
մաստի այս կամ այն քերականական նշանակությունն արտահայտելու  
համար։ Այսպես, օրինակ՝ «Աշակերտները եկան դպրոցից» նախադա-  
սությունը կազմող բառերի հիմքերն են՝ աշակերտ-, ել-, դպրոց-, իսկ  
վերջավորություններն են՝ ներ, ը, ան, ից։ Ուրեմն՝ ամեն անգամ բառից  
անջատելով վերջավորությունները՝ ստանում ենք նրա հիմքը։

Հիմքերը բաժանվում են երկու խմբի՝ ա) պարզ հիմքեր, բ) բաղա-  
դրյալ հիմքեր։ Պարզ են կոչվում այն հիմքերը, որոնք այլևս ձևայինների  
տարրալուծվել չեն կարող։ Այսպես են անջատված աշակերտ- և ել-  
հիմքերը։ Այս նշանակում է, որ պարզ հիմք և բառի արմատ հասկացու-  
թյունները նույնանում են։ Բաղադրյալ են կոչվում այն հիմքերը, որոնք  
ձևայինների են տարրալուծվում։ Այսպես է անջատված դպրոց հիմքը,  
որ տարրալուծվում է դպր և ոց ձևայինների։

Բառի բաղադրյալ հիմքն անպայմանորեն ենթադրում է համապա-  
տասխան պարզ հիմքի գոյությունը։ Եթե որևէ պատճառով համապա-  
տասխան պարզ հիմքը լեզվից դուրս է ընկնում, ապա պատմականորեն  
բաղադրյալ հիմքը վերածվում է պարզի։ Այսպես, հնաց ժամանակակից  
լեզվի տեսակետից պարզ հիմք է, որովհետև հն (անհնչյունափոխ ձևով  
հուն, որ գրաբարում նշանակում էր կրակ) մասը առանձին կամ այլ  
ձևայինների հետ միացած արդի հայերենում գոյություն չունի։

Բաղադրյալ հիմքերը կարող են բաղկացած լինել մի հիմնական և  
մեկ կամ մեկից ավելի երկրորդական ձևայիններից (ածանցներից), օրի-  
նակ՝ գնդակ, զինվոր, պատմիչ, նախապատմություն (սրանք պարզ ա-  
ծանցավոր բառեր են) և երկու (առանձին դեպքերում երկուսից ավելի)  
հիմնական ձևայիններից ու մեկ կամ մեկից ավելի երկրորդական ձևային-  
ներից, օրինակ՝ գրագետ, պատմագիր. մարդասպան, հեռախոսավար, ձ-  
գագիտություն, անգրագիտություն և այլն (սրանք բարդ կամ բարդ ա-  
ծանցավոր բառերն են)։

Նույն բառի տարբեր ձևեր կարող են տարբեր հիմքերից կազմվել։  
Այսպես, ընկեր բառի սեռական-տրական հոլովը կազմվում է ընկեր հիմ-  
քից՝ ընկերոջ, իսկ բացառական և գործիական հոլովները կազմվում են  
ընկերոջ հիմքից՝ ընկերոջից, ընկերոջով։ Այս նշանակում է, որ ընկեր  
բառի համար ունենում ենք երկու հիմք՝ ընկեր և ընկերոջ։ Նույն ձևով  
էլ՝ օր բառի սեռական-տրականը կազմվում է օր հիմքից՝ օրվա, իսկ բա-  
ցառականը կարող է կազմվել և այդ հիմքից՝ օրից, և օրվան հիմքից՝  
օրվանից։ Գործիականը սովորաբար կազմվում է առաջին հիմքից՝ օրով։  
Այսպես և՛ տարբեր հիմքերով ունենք՝ աշուն-աշնան-աշնանից, զարուն-  
զարնան-զարնանից։

Սակայն բոլոր բառերը չեն, որ հոլովման ժամանակ տարբեր հիմ-  
քեր են հանդես բերում։ Դեռ ավելին. բառերի բացարձակ մեծամասնու-  
թյունը հոլովական ձևերը կազմում է միևնույն հիմքից, օրինակ՝ ֆաղաֆ-  
ֆաղաֆի-ֆաղաֆից-ֆաղաֆով-ֆաղաֆում, գետակ-գետակի-գետակից-գե-  
տակով-գետակում, հարգանք-հարգանքի-հարգանքից-հարգանքով և այլն։

Միևնույն բառի տարբեր ձևերի տարահիմք կազմությունները ավել-  
ի շեշտված և հետևողականորեն դրսևորվում են հայերենի բայական  
համակարգում։ Այսպես՝ բարձրանալ բայի անորոշ, անկատար I ու  
ժխտման դերբայները և ըղձական եղանակի ձևերը կազմվում են բարձ-

րան հիմքից՝ բարձրան-ալ, բարձրան-ում, չեմ բարձրան-ա, բարձրան-ամ, բարձրան-ալի (այս հիմքը կոչվում է անկատարի հիմք)։ վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները և անցյալ կատարյալ ժամանակն ու հրամայականը կազմվում են բարձրաց հիմքից՝ բարձրաց-ել, բարձրաց-ած, բարձրաց-ող, բարձրաց-ա, բարձրաց-իր, բարձրաց-եք (այս հիմքը կոչվում է կատարյալի հիմք)։ ապառնի I ու II դերբայները և անկատար II-ը կազմվում են բարձրանալ հիմքից՝ բարձրանալ-ու, բարձրանալ-իք, բարձրանալ-իս (այս հիմքը կոչվում է դերբայական հիմք)։

Այս եռահիմք հակադրությունը դրսևորվում է հայերենի բոլոր բայերի մեջ, ինչպես՝ գր-ել, գրեց-ի, գրել-ու, փախչ-ել, փախ-ա, փախչել-ու, գտն-ել, գտ-ա, գտնել-ու, զգ-ալ, զգաց-ի, զգալ-ու, բարձրացն-ել, բարձրացր-ի, բարձրացնել-ու և այլն։

Պետք է նկատի ունենալ, որ հիմք հասկացությունը բացարձակ չէ և միշտ որոշվում է կոնկրետորեն, որովհետև միևնույն ձևում տարբեր բառաշարքերի հետ ունեցած հարաբերակցությունների մեջ տարբեր հիմքեր կարող են անջատվել։ Այսպես, գրել ձևում գում, գրած, գրող և այլ ձևերի հետ ունեցած հարաբերակցության մեջ անջատվում է գր հիմքը, իսկ գրելու-գրելուց-գրելով և այլ ձևերի հարաբերակցության մեջ՝ գրել հիմքը, որն էլ կարող է բաղադրությունների մեջ մտնել, օրինակ՝ գրել-լացավ։ Այսպես և՛ հոգնած, հոգնել, հոգնող և այլ հարաբերակցության մեջ հոգնած ձևում անջատվում է հոգն հիմքը, իսկ հոգնած, հոգնածի, հոգնածից և այլ հարաբերակցության մեջ՝ հոգնած հիմքը, որը և կարող է բաղադրությունների մեջ մտնել, օրինակ՝ հոգնածություն։) 6

## ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

«ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.— Լեզվի բառապաշարը ըստ նրա մեջ մտնող բառերի ամենաընդհանուր իմաստների և ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների բաժանվում է որոշակի խմբերի, որոնք կոչվում են խոսքի մասեր։

Խոսքիմասային իմաստը բառի ամենաընդհանուր քերականական իմաստն է և մյուս քերականական իմաստներից տարբերվում է իր մեծ ընդգրկումով և առավել ընդհանրականությամբ։

Տվյալ լեզվի խոսքի մասերը և կոնկրետ բառերի խոսքիմասային պատկանելությունը ճիշտ որոշելու համար պետք է հաշվի առնել՝ ա) բառի ընդհանուր իմաստը, բ) բառի ձևավորումն ու ձևաբանական առանձնահատկությունները, գ) բառի շարահյուսական կիրառությունները։

ա) Բառերի խոսքիմասային կարգերը որոշելիս առաջին հերթին պետք է հաշվի առնել նրանց ընդհանուր իմաստը։ Այսպես, տուն, գիւղ, քաղաք, լիճ, ծառ և այլ բառերը, չնայած բառիմաստային տարբերություններին, իրենց արտահայտած ընդհանուր իմաստով մի խումբ են կազմում և միավորվում են մի կարգի տակ՝ գոյական անվան կարգի տակ, որպես առարկայական հասկացություն արտահայտող բառեր, իսկ վազել, գնալ, սկսել, գտնել, մտնել և այլ բառերը, կրկին ըստ ընդհանուր իմաստի, մի խումբ են կազմում և միավորվում են մի ուրիշ կարգի՝ բայի կարգի տակ, որպես գործողություն ցույց տվող բառեր։ Կամ՝ կարմիր, մեծ, սպիտակ, լուրջ, խիզախ և այլ բառերը միավորվում են ածական անվան կարգի տակ որպես հատկանիշ ցույց տվող բառեր և այլն։

Խոսքի մասերի որոշման իմաստաբանական հիմունքը որպես գիտական տեսություն հայ քերականագիտության մեջ առաջ է քաշվել Գ. Սևակի կողմից։ Նա իր «Խոսքի մասերի ուսմունքը»<sup>2</sup> աշխատության մեջ հետևողականորեն այն միտքն է զարգացնում, որ խոսքի մասերը պետք է որոշել մի միասնական շարահյուսական ընդհանուր իմաստով, անտեսելով բառերի ձևաբանական, բառակազմական, շարահյուսական և այլ առանձնահատկությունները։ Իհարկե, խոսքի մասերի որոշման ժամա-

<sup>1</sup> Մեր քերականություններում տեղ գտած՝ հայերենի խոսքի մասերի դասակարգման սկզբունքների մասին ընդարձակ տե՛ս Գ. Ջախոնյանի «Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները» (Երևան, 1974 թ.) գրքում։

<sup>2</sup> Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», 1939, հ. 11։

նակ առաջին հերթին պետք է հաշվի առնել բառերի ընդհանուր իմաստը, բայց բառերի մյուս հատկանիշների անտեսումը ճիշտ համարվել չի կարող:

Յուրաքանչյուր խոսքի մասի մեջ կարող են միավորվել ամենատարբեր բառային իմաստ արտահայտող բառեր: Այսպես, օրինակ՝ գոյականի խոսքիմասային կարգի մեջ մտնում են ոչ միայն կոնկրետ իրերի ու անձերի անունները, ինչպես՝ գետ, ծառ, կամուրջ, ուսուցիչ, բանվոր, աշակերտ և այլն, այլև առարկայացված գործողութունների ու հատկանիշների անունները, օրինակ՝ ծագում, հանդիպում, ընթերցանություն, վազք, կարմուխություն, թարմություն և այլն: Կամ՝ ածականի խոսքիմասային կարգի մեջ մտնում են ոչ միայն հատկանիշների անունները, ինչպես՝ մեծ, սև, փառ, բարի և այլն, այլև այնպիսի բառեր, որոնք իրենց արմատային իմաստով ցույց են տալիս առարկա կամ գործողութուն, օրինակ՝ լեռնային, ծովային, փայտե, երկաթե, փոշոտ, բրդոտ, ազալական, հիացական և այլն: Ինչպես այս օրինակները, այնպես էլ հետևյալները՝ աղաչել (բայ)-աղաչանք (գոյական)-աղաչական (ածական), գիտենալ-գիտություն-գիտական, հիանալ-հիացք-հիացական և այլն կարող են այն սպավորութունն ստեղծել, թե խոսքիմասային իմաստները բառերի արմատային իմաստների հետ կապ չունեն, քանի որ նույն արմատներից տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր կարող են կազմվել: Սակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գոյական անվան կամ ածական անվան կարգերը լեզվում կազմավորվում են այն բանի շնորհիվ, որ դրանց մեջ մտնում են բառեր, որոնք իրենց հետ արմատային իմաստով ցույց են տալիս առարկաներ կամ հատկանիշներ, օրինակ՝ տուն, փառ, ծառ և այլն՝ մի կողմից և լավ, վատ, մեծ, փոքր և այլն՝ մյուս կողմից, ապա պարզ կդառնա, որ ինչպես բոլոր քերականական կարգերի, այնպես էլ խոսքի մասերի ռեալ հիմքը առարկայական իրականությունն է: Այն բանից հետո, երբ իրականության մեջ եղած առարկաների և հատկանիշների հողի վրա կազմավորվում են, ասենք, գոյականի և ածականի քերականական կարգերը, մարդկային ուղեղը ունենալով արդեն առարկայի և հատկանիշի գաղափարը՝ ամեն ինչ կարող է մտածել առարկայաբար, ինչպես՝ աշխատանք, տանջանք, ծագում, հանդիպում, սլացք, վազք, մեծություն, սևություն, դառնություն և այլն, կամ մտածել որպես հատկանիշ, ինչպես՝ լեռնային, հյուսիսային, փոշոտ, բրդոտ, զգայուն, մնայուն, վազան, կծան և այլն:

Իհարկե, բառի խոսքիմասային իմաստը ավելի որոշակի ու «մաքուր» ձևով է դրսևորվում, երբ համընկնում է արմատի խոսքիմասային իմաստի հետ:

«բ» Խոսքի մասերի դասակարգման ժամանակ պետք է հաշվի առնել նաև բառերի ձևավորումը և ձևաբանական հատկանիշները:»

Նախ բառերի ձևավորման մասին:

Շնորհանրապես պետք է նկատի ունենալ, որ հայերենում խոսքիմասային իմաստները հատուկ մասնիկների միջոցով չեն արտահայտվում, և բառերը, առանց հատուկ ձևավորման, ըստ իրենց ընդհանուր իմաստի և ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների, մտնում են այս կամ այն խոսքի մասի մեջ, օրինակ՝ երկիր (գոյական), կարմիր (ածական), կարագ (գոյական), արագ (մակբայ), որս (գոյական), շոք (թվական) և այլն: Դեռ ավելին. հաճախ նույն ածանցներով կազմվում են տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր Այսպես՝ ԱԿԱՆ, ԻԶ, ՈՒՆ, ՎՈՐ ածանցներով կազմվում են և՛ ածականներ, և՛ գոյականներ:

ԱՄԱԿԱՆ	ԳՈՅԱԿԱՆ
ԱԿԱՆ	
պատմական	ազգական
զգայական	գիտնական
հրատայական	ուրվական
հեգնական	վկայական
վերացական	շինական
ԻԶ	
կիզիչ	երգիչ
խորտակիչ	նկարիչ
թովիչ	գործիչ
գրավիչ	վարիչ
մխիթարիչ	գրիչ
ՈՒՆ	
շարժուն	թռչուն
խոսուն	սողուն
ՎՈՐ	
լուսավոր	զինվոր
հեռավոր	բանվոր
գունավոր	ձիավոր
հոշակավոր	ճգնավոր

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ այդ ածանցներով կազմված բառերը հաճախ կարող են իրենց մեջ համատեղել և՛ գոյականի, և՛ ածականի խոսքիմասային իմաստները Այսպես՝ գոյականի և ածականի նշանակությամբ ունենք՝ դպրոցական (Դպրոցականները եկան, դպրոցական կարգապահություն), առևտրական (Առևտրականը խիղճ չունի, առևտրական հարաբերություններ), հանրապետական (Հանրապետական-



ները հաղթեցին, հանրապետական կարգեր), իմաստուն (իմաստունների հետ սեղան նստեց, իմաստուն խոսքեր), աշխատավոր (Հողի աշխատավորը, աշխատավոր մարդկությունը) և այլն: Այսպես նաև՝ օրոշ ենթակայական դերբայների մեջ բայական իմաստին զուգահեռ զարգացել է նաև առարկայական նշանակություն, և, այսպիսով, կան ՈՂ ածանցով կազմված գոյականներ և ենթակայական դերբայներ, օրինակ՝ աշխատող, ընթերցող, ծնող, օւսանող, գրող, ծառայող, ընտրող և այլն:

Սակայն խոսքի մասերի ձևավորման հարցը քննելիս չպետք է անտեսել այն հանգամանքը, որ որոշ դեպքերում խոսքիմասային պատկանելությունը որոշվում է հենց բառի ձևով:

Նախ՝ հայերենում հատուկ ձևավորում ունի բայը: Բոլոր բայերի անորոշ դերբայները արդի հայերենում կազմվում են ԵՂ և ԱՂ մասնիկներով, օրինակ՝ կատարել, խօսել, զգալ, մնալ և այլն, ուրեմն և այդ մասնիկներն էլ անորոշ դերբայում հանդես են գալիս որպես բայի խոսքիմասային իմաստի կրողներ: Այլ ձևերում որպես բայական խոսքիմասային ցուցիչ հանդես են գալիս այլ մասնիկներ, օրինակ՝ ՈՒՄ (գրավ), ԱՄ, (գրած), ԵՅ (գրեց), ԻՐ (գրիք), ԵՄ (գրեմ) և այլն: Հատուկ ձևավորում ունեցող միակ խոսքի մասը հայերենում բայն է:

Մյուս կողմից՝ շնայած վերևում տեսանք, որ նույն ածանցներով կարող են կազմվել տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր, բայց պետք է նկատի ունենալ, որ կան ածանցներ, որոնք հատուկ են այս կամ այն խոսքի մասին, և միայն ածանցով արդեն որոշվում է այս կամ այն բառի խոսքիմասային պատկանելությունը: Որպես օրինակ վերցնենք հայերենում այնքան զործուն ՌԻՅՈՒՆ ածանցը: Սա կազմում է միայն ու միայն գոյականներ, օրինակ՝ դարբնություն, օւսուցչություն, մեծություն, լավություն, սպանություն, օգնություն և այլն: ՌԻՅՈՒՆ ածանցով կազմված բառերի հսկայական բազմության մեջ հնարավոր չէ գրտնել մի բառ, որ այլ խոսքիմասային իմաստ արտահայտի: Այսպես և՛ գոյականներ են կազմում ԱՆՔ (տանջանք), ՄՈՒՆՔ (բուրմունք), ՅՈՒՆ (գոփուն), ՊԱՆ (ղռնապան), ՍՏԱՆ (Հայաստան), ՈՒՆՔ (հիմունք), ՈՒՀԻ (բանվորուհի), ՈՒՄ (ծագում) և այլ ածանցները: Ածականներ են կազմում ԱՎԵՏ (ծաղկավետ), ԵՂ (համեղ), ՈՏ (կեղտոտ), ԵՂԱՄ (փայտեփայտյա), ԳՈՒՅՆ (լավագույն), ՎՈՒՆ (մեծավուն) և այլ ածանցները: Մակբայներ են կազմում ԲԱՐ (հայրաբար), ՊԵՍ (մեծապես), ՈՐԵՆ (մեծամտորեն), ՈՎԻՆ (հիմնովին) ածանցները և այլն:

Այնուհետև, բառերի տարբեր խմբեր տարբեր ձևաբանական առանձնահատկություններ են դրսևորում: Այսպես, օրինակ՝ գոյականի խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերը հորովվում են, բայերը խոնարհվում են, մակբայները և այլ խոսքի մասեր շունեն թեքման ձևեր և այլն:

Եթե լեզվում կան խոսքի մասեր, որոնք հատուկ ձևավորում ունեն, կան ածանցներ, որոնք հատուկ են որոշակի խոսքի մասերի, կան տար-

բեր ձևաբանական առանձնահատկություններ դրսևորող բառախմբեր, — նշանակում է խոսքի մասերի դասակարգման ու որոշման ժամանակ պետք է հաշվի առնել նաև բառերի ձևավորումն ու ձևաբանական առանձնահատկությունները:

գ) Վերջապես՝ բառերի խոսքիմասային կարգերը որոշելիս պետք է նկատի ունենալ նաև նրանց շարահյուսական հատկանիշները, քանի որ փաստերն ակնհայտորեն ցույց են տալիս, որ բառերի տարբեր խմբեր տարբեր կիրառական, շարահյուսական առանձնահատկություններ են երևան հանում: Այսպես՝ բայն իր խոնարհված ձևերով նախադասության մեջ, որպես կանոն, հանդես է գալիս որպես ստորոգյալ, գոյականը սովորաբար հանդես է գալիս ենթակայի ու խնդրի, ածականը՝ որոշչի, մակբայը՝ պարագայի պաշտոնով, իսկ կապերն ու շղկապները սոսկ կապակցական դեր են կատարում և նախադասության ինքնուրույն անդամ չեն կարող դառնալ և այլն: Չնայած անառարկելի ճշմարտություն է այն, որ բառը որպես լեզվական միավոր գոյություն ունի նաև խոսքից, նախադասությունից դուրս, բայց նույնքան անառարկելի ճշմարտություն է նաև այն, որ բառը լիարժեք կյանքով ապրում է միայն խոսքի ու նախադասության մեջ, և, հետևաբար, բառերի խոսքիմասային կարգերը որոշելիս դրանք չպետք է կտրել իրենց իրական հողից՝ խոսքի մեջ ունեցած կոնկրետ կիրառություններից:

Այն էլ պետք է նշել, որ բառի ընդհանուր իմաստն ու շարահյուսական կիրառությունները փաստորեն նույն երևույթի տարբեր կողմերն են և փոխադարձաբար պայմանավորված են իրարով: Այսպես՝ բառի շարահյուսական կիրառությունները, որպես կանոն, բխում են նրա ընդհանուր իմաստից, իսկ բառի ընդհանուր իմաստն իր հերթին մշակվում ու բյուրեղանում է նրա շարահյուսական կիրառությունների մեջ և շարահյուսական կիրառությունների միջոցով:

Ինչևիցե. քննելով մեր լեզվի իրական փաստերը՝ տեսնում ենք, որ հայերենում շատ ածականներ ու գոյականներ ձևով տարբերակված չեն: Հաճախ անկախ բառը իր ձևով ու իմաստով կարող է լինել և՛ ածական, և՛ գոյական, ինչպես՝ «Կարոցական կարգապահություն» և «Մի դպրոցական էր անցնում փողոցով»: Հասկանալի է, որ այս իմաստները որոշվում են շարահյուսորեն: Ածականի և գոյականի իմաստ արտահայտող մի շարք ածանցավոր բառերի օրինակներ բերված են վերևում: Կան նաև՝ այսպիսի պարզ բառեր, օրինակ՝ աղքատ, հարուստ, ժլատ, ցուրտ, մութ, խենթ և այլն:

Ուշադրություն պետք է դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ հայերենում ածականը հաճախ անփոփոխ ձևով իբրև մակբայ է կիրառվում, ինչպես՝ բարձր պատ, բարձր խոսել. երկար պատմություն, երկար պատմել. վստահ խոսք, վստահ խոսել. հիանալի գիրք, հիանալի գրել. նոր շուր, նոր գրել և այլն: Սա նշանակում է, որ հայերենում շատ զեպ-

քերու՛մ ածականը և մակբայը ձևաբանորեն տարբերակված չեն, և մի շարք բառերի խոսքիմասային պատկանելութունը կարող է որոշվել միայն շարահյուսական կապակցության մեջ:

Այսպես, որեմն, խոսքիմասային կարգերը որոշելիս բառերի ընդհանուր իմաստի և ձևավորման ու ձևաբանական առանձնահատկությունների հետ միաժամանակ պետք է հաշվի առնել նաև նրանց շարահյուսական կիրառությունները: Միայն այսպիսի բազմակողմանի մոտեցման դեպքում կարելի է ճշտորեն որոշել տվյալ լեզվում իրոք գոյություն ունեցող խոսքի մասերը՝ մի կողմից և կոնկրետ բառերի խոսքիմասային պատկանելութունը՝ մյուս կողմից:

**ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԸ ՀԱՅԵՐԾՆՈՒՄ.**— Հայ քերականագիտության մեջ ներկայումս ճանաչում գտած խոսքի մասերն են՝ գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, եղանակավորոզ բառեր և ձայնարկություն:

Մական լեզվաբանական գրականության մեջ վաղուց է նկատված, որ լեզվի համակարգում խոսքի մասերը նույն դերն ու կշիռը չունեն, ուստի և սահմանել, թե հայերենն ունի 10 խոսքի մաս և իրար հետևից թվարկել դրանք, նշանակում է դեռ շատ քիչ բան ասել խոսքի մասերի իսկական էության մասին: Ահա այդ է պատճառը, որ նոր և նորագույն լեզվաբանական աշխատություններում խոսքի մասերին մոտենալով նրանց իմաստի և խոսքի մեջ ունեցած գործածության ու դերի տեսակետից՝ խոսքի մասերի ներսում սովորաբար անջատում են հետևյալ ոչ հավասարազոր խմբերը:

Նյութական իմաստ արտահայտող կամ հիմնական խոսքի մասեր, որոնք են՝ գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ և մակբայ: Այս խոսքի մասերն արտահայտում են առարկայական աշխարհն իր իրերով ու երևույթներով, հատկանիշներով ու գործողություններով, այսինքն՝ ունեն անվանողական ֆունկցիա:

Գոյականը ցույց է տալիս առարկա կամ առարկայացված հասկացություն, օրինակ՝ ծառ, հող, մարդ, բանվոր, մեծություն, լավություն, ծագում, ընթացք և այլն:

Ածականը ցույց է տալիս առարկայի որակային հատկանիշ, օրինակ՝ մեծ, բարի, լեռնային, փայտե և այլն:

Թվականը ցույց է տալիս առարկայի թվային հատկանիշ, օրինակ՝ մեկ, երկու, երեք, չորս, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն:

Բայը ցույց է տալիս գործողություն, շարժում, օրինակ՝ գրել, գրելու, գրում եմ, գրեցի, գրեմ և այլն:

Մակբայը ցույց է տալիս գործողության հատկանիշ, օրինակ՝ արագ վազել, դանդաղ գրել, հեռաբար կովել, կամ հատկանիշի հատկանիշ, օրինակ՝ շատ կարմիր, խիստ տգեղ, միշտ երջանիկ, հավերժ պայծառ և այլն:

Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի մեջ յուրահատուկ դիրք է գլավում դերանունը, որն իրրև առանձին խոսքի մաս է անջատվում իր հատուկ իմաստի շնորհիվ:

Գերանունները ցույց են տալիս կամ առարկա՝ սա, դա, նա, կամ հատկանիշ՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի, կամ թիվ՝ այսքան, այդքան, այնքան, կամ հատկանիշի հատկանիշ՝ այսպես, այդպես, այնպես, բայց շտաբերակված, ընդհանուր ձևով՝ ի տարբերություն գոյականների, ածականների, թվականների և մակբայների, որոնք տարբերակված առարկաների ու հատկանիշների անվանումներ են: Ահա այս պատճառով էլ դերանունների իմաստը սովորաբար որոշակի է դառնում խոսքի մեջ, քանի որ, ասենք, սա դերանվամբ կարելի է նշել ամեն մի առարկա (գիրքը, ծառը, բանվորը և այլն), այսպիսի դերանվամբ՝ ամեն մի որակային հատկանիշ (լավ, մեծ, դաշտային, հասարակական և այլն): Սա ինքնին նշանակում է, որ դերանունները, ի տարբերություն մյուս խոսքի մասերի, փոփոխվող բառային իմաստ ունեն:

Հիմնական խոսքի մասերը, շնորհիվ իրենց անվանողական ֆունկցիայի, խոսքի մեջ կատարում են նախադասության անդամների պաշտոն:

Նյութական խոսքի մասերից գոյականը, դերանունը և բայը ձևաբանական տեսակետից բնորոշվում են նրանով, որ ունեն թեքման ձևեր, այն է՝ գոյականն ու դերանունը (առարկայական իմաստ արտահայտող դերանունները) հոլովվում են, իսկ բայը խոնարհվում է: Ժամանակակից հայերենում իրենց հիմնական գործածության ժամանակ թեքման ձևերից, զուրկ են ածականն ու թվականը, սակայն սրանք լեզվում հաճախ են հանդես գալիս գոյականական կիրառությամբ և այդ դեպքում հոլովվում են, օրինակ՝ մեծը-մեծի-մեծից, երեքը-երեքի-երեքից, երկրորդը-երկրորդի-երկրորդից և այլն: Մակբայն ընդհանրապես թեքման ձևեր չունի:

Ձևական, բերականական իմաստ արտահայտող կամ երկրորդական խոսքի մասեր, որոնք են կապերն ու շաղկապները: Դրանք անվանողական ֆունկցիա չունեն և կոշված են արտահայտելու բառերի և նախադասությունների հարաբերությունները:

Կապերն արտահայտում են կախման զանազան հարաբերություններ՝ ստորադասվող բառերը որպես խնդիր կամ պարագա կապելով գերադաս բառերի հետ, օրինակ՝ խոսում էին պատերազմի մասին. Կովեցին թշնամիների դեմ. Նստել էր ծառի տակ. Գնում էր դեպի տուն. Դասեցին ըստ օրենքի և այլն:

Շաղկապներն իրար հետ միացնում, կապում են նախադասության համազոր անդամները կամ նախադասությունները, օրինակ՝ Ծս և դու ենք աշխատում. Քամին դադարեց, և սկսվեց տեղատարափ անձրևը. Նա ուզում էր ասել ամեն ինչ, բայց ուժերը դավաճանում էին. Անիծվես, եթե վերջին կամքս չես կատարի և այլն:

Քանի որ կապերն ու շաղկապներն արտահայտում են ոչ թե նյութական, այլ քերականական իմաստ, այդ իսկ պատճառով էլ նրանք նախադասություն անդամ չեն դառնում:

Ձևաբանական տեսակետից կապերն ու շաղկապները բնորոշվում են նրանով, որ սովորաբար զուրկ են թեքման ձևից:

Վերաբերմունքային խոսքի մասեր, որոնք են եղանակավորող բառերը և ձայնարկությունները<sup>3</sup>:

Եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի դատողական վերաբերմունքը և մեծ մասամբ վերաբերելով ամբողջ նախադասությանը կամ նրա առանձին մի անդամին՝ զանազան երանգներ են հաղորդում գրանց, օրինակ՝ Տունը, հարկավ, սեփական էր. Որդիներն, անշուշտ, օգնում են նրան. Գուցե նա արդեն վերադարձել է. Կարծես այդ մարդուն մի անգամ արդեն տեսել եմ և այլն:

Սովորաբար նշում են, որ եղանակավորող բառերը նյութական իմաստ չունեն և նախադասության անդամ չեն դառնում: Եղանակավորող բառերը զուրկ են թեքման ձևերից:

Ձայնարկություններն արտահայտում են խոսողի զգացական վերաբերմունքը, օրինակ՝ Վա՞հ, քեզ հետ ինչ է պատահել. Ա՛խ, կվերադառնա՞նք նա օտար երկրներից. Վա՞յ, ի՞նչ պատասխան պիտի տանք նրան և այլն:

Ձայնարկությունները նյութական իմաստ չունեն, նախադասության անդամ չեն դառնում և զուրկ են թեքման ձևերից:

Խոսքի մասերի այսպիսի խմբավորումն օգնում է ավելի խորը թափանցելու նրանց էություն մեջ և հստակորեն պատկերացնելու տարբեր խոսքի մասերի դերն ու կշիռը լեզվում:

Այսուհանդերձ չի կարելի աչքաթող անել հետևյալ հանգամանքը: Նորագույն լեզվաբանական աշխատություններում իրավացիորեն նշվում է, որ ավանդական քերականության մեջ անշատովոր խոսքի մասերը հավասարազոր ու հարաբերակից կարգեր չեն, և այդ տեսակետից էլ, ասենք, բայն ու կապը, գոյականն ու շաղկապը կամ ածականն ու ձայնարկությունը և այլն չեն կարող հակադրվել որպես նույն քերականական կարգի, այն է՝ խոսքիմասային կարգի տարբեր անդամներ: Մի հարց է նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի, ասենք, բայի և գոյականի հարաբերակցությունը, մի այլ հարց է քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի՝ կապի և շաղկապի հարաբերակցությունը և բոլորովին մի այլ հարց՝ նյութական և քերականական խոսքի մասերի հարաբերակցությունն ընդհանրապես: Բոլորովին առանձին են մնում եղանակավորող բառերն ու ձայնարկությունները, որոնք ևս չեն կարող

հակադրվել իրար որպես նույն քերականական կարգի տարբեր անդամներ:

Սակայն ինչպես էլ որ մտտենանք այս հարցերի լուծմանը, մի բան պարզ է ու որոշակի. բոլոր խոսքի մասերին չի կարելի նույն շափանիչով մոտենալ, տարբեր խոսքիմասային խմբերի մեջ մտնող բառերը տարբեր, ոչ հարաբերակից առանձնահատկություններ են երևան հանում: Այս պատճառով, ահա, ավանդական քերականության խոսքի մասերի ուսմունքը նորագույն լեզվաբանական աշխատություններում խիստ քրննադատության է ենթարկվում այն բանի համար, որ շունի տրամաբանական հետևողականություն և շատ դեպքերում հակասական է:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ խոսքի մասերի հարցն ընդհանրապես և դրանց դասակարգման հարցը մասնավորապես եղել և մընում է լեզվաբանության ամենաբարդ պրոբլեմներից մեկը, որը մինչև այսօր էլ դեռևս իր բավարար լուսաբանությունն ու լուծումը չի ստացել: Նորագույն լեզվաբանությունը, քննադատելով դասական լեզվաբանության խոսքի մասերի ուսմունքը, ինքն ավելի ընդունելի ու տրամաբանական և հակասություններից զերծ համակարգ չի մշակել: Ելնելով սրանից՝ սույն աշխատության մեջ խոսքի մասերը ներկայացվում են հայերենի ավանդական քերականության մշակած սկզբունքներով:

« ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՓՈՒՆԱՆՑՈՒՄԸ.— Բառերն ըստ իրենց ընդհանուր իմաստի և ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների մտնում են այս կամ այն խոսքի մասի մեջ » Սակայն բառերի խոսքիմասային կարգերը մեկընդմիջ տրված և քարացած կարգեր չեն: Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը մի խոսքի մասից կարող է անցնել մյուսին: Այս երևույթը կոչվում է խոսքի մասերի փոխանցում:

Բառերի խոսքիմասային փոխանցումները տեղի են ունենում նրանց շարահյուսական կիրառության հիմքի վրա: Գործածվելով մի այլ խոսքի մասի կիրառությամբ՝ բառը աստիճանաբար ձեռք է բերում մի նոր ընդհանուր իմաստ, և, այսպիսով, բառի խոսքիմասային իմաստը երկփեղկվում է: Հետագա զարգացումը կարող է հասցնել նրան, որ բառն այլևս չգործածվի իր հին խոսքիմասային իմաստով. այս կնշանակի, որ խոսքիմասային անցումը լրիվ ու լիակատար է: Պետք է նկատի ունենալ, որ այսպիսի անցումը տեղի է ունենում ոչ թե միանգամից, այլ պատմական երկարատև զարգացման ընթացքում:

« Մի խոսքի մասից անցնելով մյուսին՝ բառը ձեռք է բերում տվյալ

<sup>3</sup> Հայերենի խոսքի մասերի ուսմունքի մասին մանրամասնորեն տե՛ս Հ. Բարսեղյանի «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» գրքում, իսկ խոսքի մասերի նորագույն դասակարգումների մասին մասնակիորեն տե՛ս Ս. Աբրահամյանի «Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառակազմ ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը մասնակապից հայերենում» գրքում:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառակազմ ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը մասնակապից հայերենում, Երևան, 1985:

խոսքի մասին հատուկ իմաստային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները:

Խոսքի մասերի փոխանցումները որոշակի ուղղութիւններով են գործում: Այսպէս, նկատվում է, օրինակ, դերբայների փոխանցում գոյականների կամ ածականների, բայց չի նկատվում հակառակ երևույթը՝ գոյականների ու ածականների փոխանցում դերբայների. կամ սովորական է գոյականների ու մակբայների փոխանցումը կապերի, իսկ հակառակ երևույթը անսովոր է և այլն:

Հայերենում սովորական են խոսքի մասերի հետևյալ փոխանցումները:

Ածական և գոյական.— Հայոց լեզվում ածականների գոյականական կիրառությունը հնագույն շրջաններից ի վեր սովորական երեւոյթ է: Բավական է, որ ածականը գործածվի անկախաբար, հոգ ստանա, հոլովվի կամ գործածվի հոգնակի թվով, այդ դեպքում նա արտահայտում է ոչ միայն հատկանիշի, այլև առարկայի գաղափար, օրինակ՝ մեծը (մեծ ծառը, փողոցը, երեխան), խելոքից (խելոք երեխայից, մարդուց և այլն), գեղեցիկները (գեղեցիկ երեխաները, աղջիկները և այլն): Այս ձևով հաճախակի գործածվելով գոյականաբար՝ որոշ ածականների մեջ զարգանում է նաև առարկայական նշանակություն: Մյուս կողմից՝ երբ գոյականները գործածվում են որոշի կամ ստորոգելիական վերադրի պաշտոններով, հաճախ նրանք կորցնում են իրենց առարկայական նշանակությունը և արտահայտում են հատկանիշի գաղափար: Այսպէս, երբ գործածում ենք «աղվես մարդ» կամ «նա աղվես է», «խոզ մարդ» կամ «նա խոզ է» կապակցությունները, այստեղ աղվես և խոզ գոյականների բուն առարկայական նշանակությունը նկատի չունենք, այլ դրանց միայն մի հատկանիշը (առաջին դեպքում խորամանկությունը, իսկ երկրորդ դեպքում կեղտոտությունը կամ անմարդամտությունը): Երբ այսպիսի գործածությունները շատ են կրկնվում ու հաճախակի դառնում, որոշ գոյականների մեջ զարգանում է նաև հատկանշային նշանակություն:

Օրինակներից կարելի է եզրակացնել, որ երբեմն ածականները և գոյականները իմաստային ու կիրառական շփման եզրեր են հանդես բերում, և, այսպիսով, նրանց հիմնական տարբերությունը վերանում է:

Ահա այս երևույթն է պատճառը, որ հնուց ավանդված կան մի շարք բառեր, որոնք հավասարապես դրսևորում են և՛ ածականի, և՛ գոյականի իմաստներ և ունեն այս խոսքի մասերին հատուկ ձևաբանական հատկանիշներն ու շարահյուսական կիրառությունները: Այսպէս են, օրինակ, աղբատ և հարուստ բառերը, որոնք, դիցուք, «Մի աղբատ ուսանող մի հարուստ մարդուց պարտք վերցրեց» նախադասության մեջ ածականներ են, իսկ «Մի աղբատ մի հարստից պարտք վերցրեց» նախադասության մեջ՝ գոյականներ:

Ածականի և գոյականի խոսքիմասային իմաստով կարող են հանդէս գալ և՛ պարզ, և՛ ածանցավոր, և՛ բարդ բառեր: Այսպիսի բառեր են. ա) աղբատ, աղբոր, ապստամբ, բարբառոս, գիծ, գերի, թշվառ, ժլատ, խավթը, խենթ, ուր, խոպան, խուլ, ծանոթ, ծուռ, փաշ, կույր, հերոս, հարուստ, հով, մութ, սխալ, սրիկա, սուտ, սուրբ, ցուրտ, երիտասարդ, կենդանի, համբ, ազապ, լիւր, ծակ, կաղ, հիվանդ, խոթք, սուր, փակ, բ) ազգայնական, առաջադիմական, առևտրական, բողոքական, զվարդիական, դպրոցական, զինվորական, նեղափոխական, հանրապետական, միապետական, պանպանդական, բանակային, երկաթուղային, հետևավային, շփվոր, վիրավոր, գ) հանցագործ, հրշեջ, շատախոս, շատակեր, պարզամիտ, բբամիտ, սուտասան և այլն:

Հարցը քննելով ծագման տեսակետից՝ պարզ բառերի մասին դժվար է ասել՝ դրանք նախապես ածականներ են եղել, որ գոյականաբար գործածվելով ձեռք են բերել նաև առարկայական նշանակություն, թե՛ գոյականներ, որ ածականաբար գործածվելով՝ ձեռք են բերել նաև հատկանշային նշանակություն: Յուրաքանչյուր բառի նկատմամբ պետք է կատարել կոնկրետ քննություն, սակայն որպես ընդհանուր դրույթ կարելի է ընդունել, որ բերված բառերի մեծ մասը ածականներ են եղել, որովհետև հայերենում սովորական է ածականների փոխանցումը գոյականների և ոչ թե ընդհակառակը: Ածանցավոր բառերի մասին կարելի է ասել, որ դրանք նախապես ածականներ են եղել, որովհետև ԱԿԱՆ, ԱՅԻՆ, ՎՈՐ ածանցները, որոնցով կազմված են այս բառերը, որպես կանոն, ածականակերտ ածանցներ են: Իսկ ինչ վերաբերում է բարդ բառերին, ապա դրանք որպես գործողի անուններ (սուտասան = սուտ ասող, շատակեր = շատ ուտող) հավասարապես իրենց մեջ համատեղում են և՛ հատկանիշի, և՛ առարկայի գաղափար, ինչպես ենթակայական դերբայները, որոնց և՛ ածականական, և՛ գոյականական կիրառությունը լեզվում սովորական երևույթ է:

Գեբբայնեբի փոխանցում ածականներ և գոյականներ.— Հայերենի դերբայների մի մասը առարկայի հատկանիշ, վիճակ է ցույց տալիս կամ իր մեջ ներառում է նաև առարկայական նշանակություն և այդ իսկ պատճառով էլ ազատ գործածվում է ածականաբար կամ գոյականաբար: Այսպիսի գործածությունը հասցնում է նրան, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում դերբայները վերածվում են ածականների կամ գոյականների: Այսպես՝ գրաբարյան Ի-ով վերջավորվող ապանի դերբայը ժամանակակից հայերենում վերածվել է ածականի, օրինակ՝ սիրելի, գովելի, ընդունելի, զարհուրելի, զարմանալի, զգալի, նկատելի, շոշափելի, տեսանելի, ուսանելի, խոտելի և այլն: Կան նաև այս ձևով կազմված որոշ գոյականներ՝ ածելի, բանալի, հայելի, ունելի, որոնք հենց գրաբարում էլ գոյականներ են եղել: Այսպես և՛ գրաբարյան ԻԶ-ով կազմված ենթակայական դերբայները,

որոնք գործողի անուն են ցույց տալիս, վերածվել են ածականների կամ գոյականների, օրինակ՝ կիզիչ, կեղեֆիչ, համոզիչ, ապակահիչ, բուծիչ, աւարիչ, կտավարիչ, երգիչ, գրիչ, քարզմանիչ, բնակիչ, ուսուցիչ, մատնիչ, փրկիչ) և այլն: Այս նույն ձևով գրաբարյան անցյալ դերբայը փոխանցվել է ածականի կամ գոյականի, ինչպես՝ սառուցյալ, մեռյալ, ուայալ, տվյալ, վերոհիշյալ, հանգուցյալ, բանտարկյալ, լիյալ, անցյալ, ննջեցյալ, դատապարտյալ, ամբաստանյալ, մեղադրյալ և այլն: Ուրեմն՝ զարգացումը հասցրել է նրան, որ երբեմնի դերբայական Ի, ԻՉ, ՅԱԼ (<ՅԱԼ) ածանցները վերածվել են անվանական ածանցների, որոնցով արդի լեզվում կազմվում են ածականներ և գոյականներ:

Այսպիսի երևույթներ գործում են նաև ժամանակակից հայերենում: Այսպես, շատ հարակատար դերբայների մեջ հատկանշային նշանակութունը փաստորեն գերիշխող է դարձել, որի հետևանքով էլ նրանք ազատորեն համեմատության աստիճաններ են կազմում, ինչպես՝ զարգացած-ավելի զարգացած-ամենազարգացած, կրթված-ավելի կրթված-ամենակրթված, կարդացած-ավելի կարդացած-ամենակարդացած, հոգնած-ավելի հոգնած-ամենահոգնած և այլն: Եթե ընդունենք, որ այսպիսի ձևերը նաև ածականներ են, ապա ԱՄ ձևով կազմված ածականները մի պատկանելի թիվ կկազմեն: Կան նաև ԱՄ ձևով կազմված գոյականներ: Այսպես են՝ նշանած «հարսնացու, կին», սիրած «սիրած կին կամ տղամարդ», խորոված «խորոված միս» և այլն: Իսկ ինչ վերաբերում է ենթակայական դերբային, ապա նրա փոխանցումը գոյականի սովորական է, օրինակ՝ ծնող, գրող, աշխատող, ուսանող, ընթերցող և այլն:

Փոյա կ ա ն ն ե ր ի փ ո խ ա ն ց ու մ կ ա պ ե ր ի .— Կապերը, որպես կանոն, առաջանում են նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից՝ վերջիններիս նյութական նշանակության լրիվ կամ մասնակի կորստի հիման վրա: Ժամանակակից հայերենի կապերի մի զգալի մասը առաջացել է գոյականներից: Կան մի շարք բառեր, որոնք արդի լեզվում գոյականներ ու կապեր են հավասարապես, օրինակ՝ ժամանակ, շափ, տակ, տեղ) և այլն: Մյուս կողմից՝ որոշ բառերի թեք հոլովական ձևեր առանձին կապակցությունների մեջ զրկվելով նյութական իմաստից՝ սոսկ կապակցական բառերի դեր են կատարում, օրինակ՝ միջոցին (Նա ներս մտավ այս խոսակցության միջոցին). երեսից (Նրա երեսից տուժեցի). կողմից (Այդ առաջարկությունը մտցվել էր մեր պատվիրակության կողմից). ձևովից (Նրա ձևովից ինչն'ը քաշեց). նպատակով (Սովորելու նպատակով մեկնեց քաղաք). պատճառով (Հիվանդության պատճառով աշխատանքի չէր եկել) և այլն: Արդի հայերենի կապերի մի զգալի մասն էլ ծագում է գրաբարյան քարացած հոլովաձևերից, օրինակ՝ առթիվ, դիտմամբ, նկատմամբ, շնորհիվ, վերաբերմամբ, դիմաց, հանձին, հանուն, մասին:

Առանձին դեպքերում նկատվում է նաև ածականների և դերբայների փոխանցում կապերի (նման, շնայած և այլն):

Մ ա կ բ ա յ և կ ա պ .— Հայերենում հարաբերակցություններ են նկատվում նաև մակբայների և կապերի միջև: Կան բառեր, որոնք ըստ գործածության մակբայներ և կապեր են հավասարապես, օրինակ՝ հետո (հետո կգնաս— մակբայ, գնալուց հետո— կապ), դուրս (դուրս գնաց և քաղաքից դուրս), մեջ (մեջ ընկնել և դաշտի մեջ), վրա (վրա տալ և սեղանի վրա), առաջ (առաջ գնալ և սեղանի առաջ) և այլն:

Հասկանալի է, որ այս բառերի կապային կիրառություններն առաջացել են մակբայական հիմքի վրա և ոչ թե ընդհակառակն:

Փ ո յ ա կ ա ն և մ ա կ բ ա յ .— Երբ գոյականների առարկայական նշանակությունն սկսում է խամբել կամ ուղղակի խամբում է, նրանք կարող են վերածվել մակբայների կամ հակվել դեպի մակբայները: Այսպիսի բառեր են՝ առաջ, վերև, ներքև, դուրս, երեկ, վաղը և այլն:

Ա ծ ա կ ա ն և մ ա կ բ ա յ .— Արդեն նշված է, որ շատ որակական ածականներ կարող են ունենալ նաև մակբայական կիրառություն, աչսինքն՝ դրվել գործողություն կամ հատկանիշ ցույց տվող բառերի վրա, օրինակ՝ լավ գրել, խոսել, պատմել. նիսանալի զգալ, սովորել, տեսնել և այլն: Ուրեմն՝ հայերենում ածականն ու մակբայը շատ դեպքերում ձևաբանորեն տարբերակված չեն:

Փ Ո Ւ Ն Ա Ն Ո Ւ Ն Ո Ւ Յ Ո Ւ Ն .— Խոսքի մասերի փոխանցումների մեջ առանձին դեր ու կշիռ ունի ոչ գոյական խոսքի մասերի գոյականի առում ստանալը և գոյականական կիրառությունը: Այս երևույթը քերականության մեջ կոչվում է փոխանունություն:

Փոխանունության քերականական էությունն այն է, որ «որոշիչ + որոշյալ» կապակցությունները խոսքի շղթայում կարող են արտահայտվել մի բառով, որն այս դեպքում արտահայտում է և՛ հատկանիշի, և՛ առարկայի գաղափար, օրինակ՝ սևը (սև մատիտը, գիրքը, թուղթը և աչլըն), սևից (սև մատիտից, գրքից, թղթից և այլն), երեքով (երեք զինվորով, աշակերտով), երկուրդը (երկուրդ աշակերտը, կրակոցը, դասարանը), բացվածները (բացված վարդերը, դռները, ծրարները և այլն):

Սովորաբան որպես փոխանուն են հանդես գալիս ածականը, թվականը, հարակատար ու ենթակայական դերբայները, այսինքն՝ այն բառերը, որոնք խոսքի մեջ կիրառվում են որոշիչ ֆունկցիայով: Ահա՛ համապատասխան օրինակներ նախադասությունների մեջ:

«Դու ինձ կարմիր ու սպիտակ վարդեր նվիրեցիր: Կարմիրներ դեռ թարմ են ու բուրում են, իսկ սպիտակները թառամել են».: «Այո՛, կան լավ և վատ մարդիկ: Պետք է հետևել լավերին և խուսափել վատերից».: «Այսօր քսան ուսանող է քննել: Չորսը գերազանց են ստացել, ութը՝ լավ, վեցը՝ բավարար, իսկ երկուսը՝ անբավարար».: «Մեր դպրոցի ութն-

րորդ դասարանում սովորում են քսանհինգ, իններորդում՝ երեսուն, իսկ տասներորդում՝ երեսունհինգ աշակերտներ»։ «Ձեր խմբում քանի՞ ուսանողներ են թոշակ ստանում. թոշակ ստացողներն են շատ, թե՛ չըստացողները»։ «Զինվորներից մեկը քնած էր, իսկ մյուս երկուսը թուղթ էին խաղում։ Արթնացրին նաև ֆեաժին և ետեֆով շարունակեցին խաղը»։

Բերված բառերի փոխանվանական կիրառություններից կարելի է եզրակացնել, որ փոխանունությունն ունի նաև ոճական արժեք. դրա միջոցով խոսողը կամ գրողը խուսափում է ավելորդ կրկնություններից ու երկարաբանությունից։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, որպես փոխանուն գործածված ածականը, թվականը, դերբայները հոդ են ստանում ու հոլովվում և կազմում են հոգնակի թիվ։ Այս հատկանիշները պայմանավորված են նրանով, որ փոխանվան մեջ առկա է առարկայի ընդհանուր գաղափար։

Երբ ասում ենք, որ փոխանվանաբար գործածված բառի մեջ կա առարկայի ընդհանուր գաղափար, ընդհանրապես նկատի ենք ունենում փոխանունը նախադասությունից, խոսքից դուրս, ինչպես մեծը (որևէ մեծ բան), լավը (որևէ լավ բան), տգեղը (որևէ տգեղ բան) և այլն։ Կապակցված խոսքի մեջ, ինչպես վերևի օրինակներն են ցույց տալիս, սովորաբար փոխանվանաբար գործածված բառի առարկայական նշանակությունը պարզ է և որոշակի։

Հաճախ ածականների փոխանվանական կիրառությունը հանգեցնում է նրան, որ ածականների մեջ զարգանում է նաև առարկայական նշանակություն, և փաստորեն որոշ ածականների հոդավոր ձևերը վերածվել են առանձի բառերի, որոնք ունեն հատկանիշի և առարկայական ընդհանուր նշանակություն։ Այսպիսի բառեր են՝ բարին, շարը (Ի՞նչ է բարին, ի՞նչ է շարը), վեհը, ծիծաղելին (Վեհից ծիծաղելին մի քայլ է միայն), գեղեցիկը (Գեղեցիկը կյանքն է), սղբերգականը, կոմիկականը (Այս ստեղծագործության մեջ սղբերգականը և կոմիկականը գերկրնդ-խառն են ընթանում) և այլն։

Որպես փոխանուն կարող է հանդես գալ նաև սեռական-տրական հոլովաձևը, որն այդ դեպքում բաղաձայնով վերջավորվելիս մի հոդ է ստանում, իսկ ձայնավորով վերջավորվելիս՝ երկու հոդ և իր մեջ ներառնում է նաև հատկացյալի գաղափարը։ Փոխանուն սեռական-տրականի քերականական էությունն այն է, ուրեմն, որ մի բառով կարող են արտահայտվել «հատկացուցիչ + հատկացյալ» կապակցությունները։ Դրանով ևս խուսափում ենք երկարաբանությունից ու կրկնությունից, և խոսքը այսպիսով դառնում է ավելի հակիրճ ու հավաք։ Փոխանակ ասելու կամ գրելու՝ «Իմ երեխան խելոք է, իսկ հարևանի երեխան շար», ուղղակի ասում կամ գրում ենք՝ «Իմ երեխան խելոք է, իսկ հարևանինը՝ շար», կամ եթե խոսքի նախորդ ընթացքից պարզ է, որ խոսքը երեխայի

մասին է, ուղղակի ասում կամ գրում ենք՝ «Իմը խելոք է, իսկ հարևանինը՝ շար»։

Այսպես կարող է հանդես գալ սեռական-տրական հոլովաձևով արտահայտված ամեն մի բառ, օրինակ՝ համալսարանի գրադարանը— համալսարանինը, շինարարի խոսքը— շինարարինը, երկրորդի ձայնը— երկրորդինը, պատվածի (գրքի) կազմը— պատվածինը, հավատացողի աղոթքը— հավատացողինը, իմ գիրքը— իմը, քո մայրը— քոնը, նրա հայացքը— նրանը, մեր ուրախությունը— մերը, ձեր տրամությունը— ձերը և այլն։

Փոխանուն սեռական-տրականները որպես բառի ուղիղ ձևեր կարող են կրկնակի հոլովման ենթարկվել, ինչպես՝ ուսանողինը—ուսանողինի—ուսանողինից, կազմել հոգնակի թիվը և հոլովվել նաև հոգնակի թիվով, ինչպես՝ ուսանողներինը—ուսանողներինի—ուսանողներինից—ուսանողներով և այլն։

Գոյականացման երևույթի կապակցությամբ պետք է նկատի ունենալ նաև հետևյալը։

Բառերը հանդես են գալիս որպես օբյեկտիվ իրականության առարկաների, երևույթների, հատկանիշների ու գործողությունների անուններ կամ նշանային փոխարինիչներ, ինչպես՝ ծառ, տուն, գարուն, գիշեր, մեծ, սև, գրել, վագել և այլն, այսինքն՝ բառերն անվանողական ֆունկցիա ունեն։

Սովորաբար ասում ենք, որ քերականական ու վերաբերմունքային խոսքի մասերը՝ կապն ու շաղկապը և եղանակավորող բառերն ու ձայնարկությունը, անվանողական ֆունկցիա չունեն։ Բայց այս դրույթը միայն վերապահությամբ կարելի է ընդունել, իսկ խիստ ասած՝ ուղղակի սխալ է։ Քերականական և վերաբերմունքային խոսքի մասերը, շանվանելով հանդերձ նյութական հասկացություններ, անվանողական ֆունկցիա ունեն այնքանով, որքանով որ քերականական խոսքի մասերը հարաբերություններ են անվանում, ինչպես՝ «Գնաց դեպի տուն», «Պատմում էր եղբոր մասին», «Հայրը և մայրը», «Եթե տեսնեմ, կասեմ» և այլն, իսկ վերաբերմունքային խոսքի մասերը վերաբերմունքներ են անվանում, ինչպես՝ «Փեղես գա», «Իրոք կգա», «Վա՛ն, դո՛ւ ես», «Ա՛խ, արդո՞ք նորից կտեսնե՞մ նրան» և այլն։ Այս առումով, ահա, բոլոր խոսքի մասերի մեջ մտնող բառերը անվանում են որևէ բան՝ առարկա, հատկանիշ, գործողություն, հարաբերություն, վերաբերմունք։

Բայց անվանողական ֆունկցիայից բացի, բոլոր բառերն ունեն նաև ինքնանվանողական ֆունկցիա, այսինքն՝ հանդես են գալիս որպես հենց իրենց անուն, օրինակ՝ «Գիրք՝ թանձրացական, իսկ ընթերցանություն՝ վերացական գոյական է»։ «Կարմիր՝ պարզ, իսկ կարմրավուն՝ բաղադրյալ ածական է»։ «Այս, այդ այն-ը ածականային և գոյականական կիրառություններ ունեն»։ «Հարգել-ը ներգործական, իսկ հարգվել-ը կրա-

վորական սեռ ունի»։ «Արագ, դանդաղ մակբայներ են, դեպի, մասին, համար՝ կապեր, և, ու, բայց, որովհետև՝ շաղկապներ»։ «Փուցե-ն, երևի-ն, քերև-ը երկբայական վերաբերմունք են արտահայտում» և այլն։

Ինչպես օրինակներից կարելի է եզրակացնել, այսպիսի գործածությունների ժամանակ բառերի իմաստը, այսինքն թե նրանք ինչ առարկաներ, գործողություններ և այլն են ցույց տալիս, բոլորովին նկատի չի առնվում, այլ նկատի են առնվում բառերը որպես այդպիսիք, որպես լեզվական միավորներ, որպես հենց իրենց անուններ։ Այս պատճառով, ահա, ինքնանվանողական ֆունկցիայի դեպքում բառերի խոսքիմասային տարբերությունները վերանում են, և բոլոր խոսքի մասերի մեջ մտնող բառերը, որպես իրենց անուն, փաստորեն գոյականներ են, որոնք ընդհանուր իմաստով, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով ոչնչով չեն տարբերվում իրարից, օրինակ՝ «Տուն-ը, մեկ-ը, մեծ-ը, սա-ն, տալ-ը, դեռ-ը միավանկ, իսկ փողոց-ը, կարմիր-ը, Երեմ-ը, սրանք-ը, վազել-ը, արագ-ը երկվանկ բառեր են»։ «Գրիր՝ տուն, մեծ, մեկ, սա, տալ, դեռ», «Տուն-ը բուժով անշատիք մեծ-ից, իսկ մեկ-ը՝ սա-ից»։ «Շեշտ գիր վազել-ի, արագ-ի վրա» և այլն։

Ինքնանվանողական ֆունկցիա ունեն ոչ միայն բառերը, այլև կարող են ունենալ լեզվական միավորներն ընդհանրապես, այն է՝ հնչյունները, վերջավորությունները, ածանցները, բառաձևերը, բառերի կապակցությունները, ամբողջական նախադասությունները, մի խոսքով ամեն ինչ, որ կարող է արտաբերել մարդկային լեզուն։ Ահա այսպիսի օրինակներ։

«Կե, գե, ֆե կապակցությունների մեջ քմային Կ, Գ, Ք արտասանելիս կարծես ձգտում ենք միաժամանակ Ի արտասանելու, բայց չենք արտասանում, այլ Ծ ձայնավորն ենք արտասանում»։ «Պես-ով, բար-ով կազմվում են ձևի մակբայներ»։ «Քարից-ը, գինուց-ը բացառականի, ֆարս-ը, գինով-ը գործիականի հոլովաձևեր են»։ «Հասնելով գետի փիս-ը անորոշի գործիականով կազմված դարձված է»։ «Մթնեց-ը, լուսացավ-ը, անձրևում է-ն անենթակա նախադասության ձևեր են»։ «КНИГА-ն ուսերենում իգական սեռի է, стол-ը՝ արական, իսկ озеро-ն չեզոք» և այլն։

Լեզվական միավորների գործածությունն ինքնանվանողական ֆունկցիայով տարածված է գիտական, մասնավորապես լեզվաբանական գրականության մեջ, որովհետև գիտության հենց այս ճյուղն է, որ զբաղվում է լեզվական միավորների՝ հնչյունների, ձևույթների, բառերի, բառաձևերի և այլնի ուսումնասիրությամբ, բայց հանդիպում է նաև խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ «Նա ուրեմն շատ է գործածում»։ «Քո եթեներից չպրծանք»։ «Նրա կաճեմը շարագույժ հնչեց»։ «Պատերազմ բառը բերանից բերան էր անց-

նում»։ «Ինձ հետ ոչ թե դուր-ով, այլ դու-ով է խոսում»։ «Բոպեն մեկ կգնամ, կգնամ ես ասում, դե գնա՛, էլի՛»։

Այս հատվածում շոշափված հարցերը կարելի է ամփոփել հետևյալ կետերում։

1. Փոխանունության քերականական էությունն այն է, որ «որոշիչ + որոշյալ» և «հատկացուցիչ + հատկացյալ» կապակցությունները կարող են արտահայտվել մի բառով, որն առաջին դեպքում կարտահայտի որոշիչ իմաստ և որոշյալի (առարկայի) ընդհանուր գաղափար, օրինակ՝ «սե մատիտը = սեը», իսկ երկրորդ դեպքում՝ հատկացուցչի իմաստ և հատկացյալի (առարկայի) ընդհանուր գաղափար, օրինակ՝ «աշակերտի գիրքը = աշակերտինը»։ Փոխանունները, արտահայտելով առարկայի ընդհանուր գաղափար, հոլովվում են, կազմում են հոգնակի թիվ և հոլովվում են նաև հոգնակի թվով, ինչպես՝ սեը-սեի-սեից, սեերը-սեերի-սեերից և այլն։

2. Բառերը, ինչպես և լեզվական միավորներն ընդհանրապես, բացի նրանից, որ նշանակում են առարկա, հատկանիշ, գործողություն, հարաբերություն և այլն, միևնույն ժամանակ հանդես են գալիս հենց որպես իրենց անուն, այսինքն՝ գործածվում են ինքնանվանողական ֆունկցիայով, և այս առումով ամեն ինչ, որ արտասանում է մարդկային լեզուն, որպես իր անուն, գոյական է։ >

## ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

**ԳՈՅԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ.**— Գոյական անվան խոսքիմասա-  
յին կարգի մեջ մտնող բառերը ցույց են տալիս առարկայի հասկացու-  
թյուն մաստային տեսակետից գոյական անունները շահագանցող բազ-  
մազան են, ինչպես՝ սեղան, լիճ, մարդ, զինվոր, կենդանի, առյուծ, գա-  
րուն, անձրե, մեծություն, ծագում, արհամարհանք, վազ և այլն: Բայց  
բոլորովին տարբեր իմաստ արտահայտող այս բառերը մեր գիտակցու-  
թյան մեջ միավորվում են մի կարգի տակ իրենց արտահայտած ընդ-  
հանուր, այն է՝ առարկայական նշանակությամբ:

Ըստ այդմ, գոյականների մեջ մտնում են անձ, կենդանի, իր ցույց  
տվող բառերը, որոնք գոյականների սկզբնական կորիզն են կազմում,  
օրինակ՝ մարդ, կին, կով, գառ, առյուծ, տուն, փայտ, կրակ, արծաթ,  
հող և այլն, բնության երևույթներ ցույց տվող բառերը՝ զարուն, աշուն,  
ամառ, ձմեռ, քամի, փոթորիկ, գիշեր, ցեղեկ, լույս, խավար և այլն, և  
զանազան վերացական հասկացությունների ցույց տվող բառերը, ինչ-  
պես՝ սեր, գութ, վախ, հավատ, զգացմունք, մեծություն, լավություն,  
սևություն, ուրախություն, ծագում, հուզում, տանջանք, ընթերցանու-  
թյուն, թռիչք, վազ և այլն:

Կարելի է ասել, որ վերջին կարգի բառերի մեջ՝ մեծություն, սևու-  
թյուն, ուրախություն, վազք, թռիչք, հիացում, ծագում, ընթերցանու-  
թյուն և այլն, գոյական անվան կարգը «մաքուր», «անխառն» ձևով չի  
դրսևորվում, քանի որ դրանք գոյական են միայն իրենց քերականական  
նշանակությամբ, իսկ արմատական իմաստներով ածական կամ բայ  
են: Բայց դա էական չէ, քանի որ քերականական նշանակությամբ լի-  
նելով գոյականներ, այսինքն՝ արտահայտելով առարկայական իմաստ՝  
մեծություն, ծագում, վազք և նման բառերը միավորվում են, ասենք,  
լիճ, անտառ, տուն և այլ բառերի, այսինքն՝ թանձրացական նշանակու-  
թյուն ունեցող գոյականների հետ, որոնք, ինչպես նշեցինք, գոյական-  
ների սկզբնական հիմքն են կազմում: Ե՛վ թանձրացական նշանակու-  
թյուն ունեցող գոյականները, օրինակ՝ լիճ, անտառ, դաշտ, գիրք և այլն, և՛  
վերացական նշանակու-  
թյուն ունեցող գոյականները, օրինակ՝ սևություն,  
ուրախություն, ծագում, ցասում, ընթերցանություն, արհամարհանք, թը-  
ռիչք, վազք և այլն, հավասարապես պատասխանելով ինչ հարցին, ըստ

իրենց առարկայական նշանակության հոլովվում են՝ նախադասության  
մեջ գլխավորապես հանդես գալով ենթակայի և խնդրի պաշտոններով:  
Եթե հաշվի առնենք նաև փոխանունությունը, այլև այն, որ յուրա-  
քանչյուր բառ, յուրաքանչյուր լեզվական միավոր, որպես իր անուն,  
փաստորեն գոյական է (այս երևույթների վերլուծությունը տե՛ս նա-  
խորդ հատվածում), ապա վստահ կարող ենք ասել, որ խոսքի մասե-  
րից և ոչ մեկի ընդգրկման ոլորտը չի կարող համեմատվել գոյականի  
ընդգրկման ոլորտների հետ:

Այսպես, ուրեմն՝ իմաստային տեսակետից գոյական անվան խոս-  
քիմասային կարգի մեջ մտնող բառերը բնորոշվում են նրանով, որ ար-  
տահայտում են առարկայական հասկացություն:

Որպես առարկայական հասկացություն արտահայտող բառերի կարգ՝  
գոյական անունը ձևաբանորեն բնորոշվում է թվի, հոլովի, որոշյալի ու  
անորոշի և անձի ու իրի (շնչավորի ու անշունչի) քերականական կար-  
գերով:

Ամեն մի գոյական խոսքի մեջ հանդես է գալիս կամ եզակի, կամ  
հոգնակի թվի ձևով, օրինակ՝ աշակերտ-աշակերտներ, բանվոր-բանվոր-  
ներ, ծառ-ծառեր, այգի-այգիներ, գիրք-գրքեր, սենյակ-սենյակներ և  
այլն:

Գոյականները գործածվում են այս կամ այն հոլովով, որոշյալ կամ  
անորոշ առումով, օրինակ՝ «Աշակերտը եկավ» — ուղղ. հոլով, որոշյալ  
առում. «Մի աշակերտ եկավ» — ուղղ. հոլով, անորոշ առում. «Օգնեցի  
իմ ուսանողին» — տր. հոլով, որոշյալ առում. «Օգնեցի մի ուսանողի» —  
տր. հոլով, անորոշ առում և այլն:

Եվ վերջապես՝ գոյականները խոսքի մեջ հանդես են գալիս կամ  
անձի, կամ իրի (շնչավորի կամ անշունչի) առումով, որն իր արտահայ-  
տությունն է ստանում ուղիղ խնդրի ձևավորման մեջ, օրինակ՝ «Նա սի-  
րում է իր ուսուցչին», բայց «Նա սիրում է իր աշխատանքը»:

Շարահյուսական տեսակետից գոյական անունը բնորոշվում է նը-  
րանով, որ, իր առարկայական նշանակության համեմատ, խոսքի մեջ  
մեծ մասամբ գործածվում է ենթակայի ու խնդրի և հատկացուցիչի  
պաշտոններով, օրինակ՝ «Արդեն լույսն սկսել էր բացվել, բայց լամ-  
պերը դեռ վառ էին: Պապաշան իջեցրեց լուսամուտների վարագույրները  
և սպասավորներին հրամայեց հեռանալ: Նրա առափնուրջան ու պար-  
կեշտության զգացումը վիրավորվում էր ծառաների ներկայությունից»  
(Շիրվանզադե):

Գոյական անունները խոսքի մեջ հաճախ հանդես են գալիս որոշչի  
պաշտոնում, օրինակ՝ «տուն օր», «գլուխացի մարկ», «բար սիրտ», «իշ-  
խան ձուկ» և այլն, և զանազան պարագաների պաշտոններում, ինչպես՝  
«Գնաց տուն». «Նստած է գեռնին». «Գլուխից է գալիս». «Սարեով ու  
զաշտեով է սլանում». «Գրադարանում է պարապում». «Աչնանը գոր-



ծը կվերջացնի»։ «Ամուսնից հիվանդ է»։ «Երկու շաբաթով տեղ է գնացել»։ «Աշխատանքը մի ամսում հազիվ ավարտի»։ «Գնաց շրթ»։ «Անփութունից աչքերը կարմրել էին»։ «Ընկերներով եկավ մեր տուն»։ «Համբերությամբ լսում էր մեզ» և այլն։ Ճիշտ է, որոշիչ և պարագաների պաշտոններում ևս, ինչպես օրինակներն են ցույց տալիս, գոյական անունների առարկայական նշանակությունը չի մարում, բայց, համենայն դեպս, վառ կերպով չի դրսևորվում, այս կամ այն շափով թուլանում է ու խամրում։ Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ որոշիչ ու պարագայական ֆունկցիաները գոյականի համար հիմնական ու բնորոշիչ չեն։ Դրանից առաջինը բնորոշիչ է ածականի, իսկ երկրորդը՝ մակբայի համար։

Գոյականի համար հիմնականն ու բնորոշիչը, ինչպես նշված է արդեն, ենթակայի ու խնդրի (նաև հատկացուցչի) ֆունկցիաներն են։ Մյուս խոսքի մասերը այդ պաշտոնները կարող են կատարել միայն գոյականի առում ստանալուց հետո, օրինակ՝ «Մեծը քնել է, փոքրը խաղում է»։ «Կանգնածները հազիվ էին ոտքի վրա մնում, իսկ նստածները իրենց լավ էին զգում»։ Բացառություն են կազմում առարկայական իմաստ արտահայտող դերանունները (ես, դու, նա, սա, դա և այլն) և անորոշ ու ենթակայական դերբայները, որոնք ենթակայի ու խնդրի պաշտոն կարող են կատարել հենց ինքնին, օրինակ՝ «Գու մոռացել ես նրան»։ «Գոռոզանյալը և մեծամտանյալը լավ հատկություններ չեն»։ «Մեր գործին հավատացողը դժվարություններից չպետք է վախենա» և այլն։ Բայց սա նշանակում է միայն մի բան, այն է՝ առարկայական իմաստ արտահայտող դերանունները և անորոշ ու ենթակայական դերբայները իմաստային տեսակետից շփման եզրեր ունեն գոյականների հետ։

Գոյականի ցայտուն դրսևորված շարահյուսական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ անկախ նրանից, թե նախադասության ի՛նչ անդամների պաշտոններով է հանդես գալիս, գոյական անունները կարող են ածականներով, թվականներով, դերանուններով և դերբայներով արտահայտված որոշիչներ ունենալ, օրինակ՝ ուժեղ տղամարդ, երկու զինվոր, առաջին լսառանբ, այսպիսի համարձակություն, հոգեւած բանվորը, ծաղկած ծառերը, գրեհող ջուկատը և այլն։ Որպես կանոն, մյուս խոսքի մասերի մեջ մտնող բառերը որոշիչ լրացում ունենալ չեն կարող։

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՄԱԲԵՐԸ.— Ըստ իմաստային այս կամ այն ընդհանրության՝ գոյական անունները կարելի է բաժանել բազմաթիվ խմբերի։ Իմաստային հիմունքով կարող ենք անջատել, օրինակ, գործիքի անուններ (դանակ, մկրատ, խարտոց, մուրճ, ունելի և այլն), մեզերի անուններ (տանձ, խնձոր, ծիրան, դեղձ և այլն), տեղի անուններ (քաղաք, գյուղ, սենյակ, բնակարան) և այլն։ Բայց գոյականների՝ սոսկ իմաստի վրա հիմնված նման խմբավորումը քերականական արժեք չունի այնքանով, որքանով որ առանձնացված խմբերը չեն կարող բնորոշվել քերականական հատկանիշների յուրահատկությամբ։

Քերականական տեսակետից արժեք կարող է ունենալ գոյականների իմաստային այնպիսի խմբավորումը, որի կազմի մեջ մտնող անդամները այս կամ այն քերականական հատկանիշներով կամ հատկանիշների յուրահատկությամբ տարբերվում են իրարից։

Ըստ բառիմաստային ընդհանրությունների և քերականական յուրահատկությունների՝ գոյականները բաժանվում են հետևյալ խմբերի. ա) հասարակ և հատուկ գոյականներ, բ) քանձացական և վերացական գոյականներ, գ) անձ և ոչ անձ ցույց տվող գոյականներ, դ) շնչավոր և անշունչ գոյականներ, ե) նյութ ցույց տվող գոյականներ, զ) հավաքական գոյականներ, է) գերդաստան, տոհմ, խմբակցություն ցույց տվող գոյականներ։

Ստորև տրվում են այս խմբերի վերլուծությունները։  
Հ ա ս ա ր ա կ և Ե ա տ ու կ գ ո յ ա կ ա ն ն Ե ր .— Իմաստային տեսակետից գոյականները նախ և առաջ լինում են հասարակ և հատուկ։ Հասարակ գոյականներն արտահայտում են միատեսակ առարկաների ընդհանրացված հասկացություններ, ինչպես՝ մարդ, ուսուցիչ, բանվոր, ախլոժ, ծիծեռնակ, լեռ, գետ, ֆաղաֆ, երկիր, գիրք և այլն։ Հատուկ գոյականներն անվանում են եզակի առարկաներ՝ դրանք տարբերելով նույն տեսակի այլ առարկաներից, ինչպես՝ Արամ, Գուրգեն, Ռուզան, Աշխեն, Արագած, Մասիս, Հրազդան, Երևան և այլն։ Կարող ենք ասել, որ հասարակ գոյականները ցույց են տալիս ընդհանուրը, իսկ հատուկները՝ եզակին։

Տարբերվելով իմաստաբանորեն՝ հասարակ և հատուկ գոյականները մասնակիորեն տարբերվում են նաև քերականորեն։ Հասարակ գոյականների հսկայական մեծամասնությունը ազատ գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով, ինչպես՝ ֆաղաֆ-ֆաղաֆներ, գետ-գետեր, աշակերտ-աշակերտներ, ուսուցիչ-ուսուցիչներ և այլն։ Հատուկ գոյականները, որպես կանոն, ունեն միայն եզակի թվի ձև և սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում, ինչպես՝ Երևան, էշմիաժին, Սևան, Վանաձոր, Սուրեն, Գուրգեն, Մովսես Խորենացի, Հրաչյա Անադյան և այլն։

Չնայած հասարակ ու հատուկ գոյականների իմաստային տարբերությանը, պետք է նկատի ունենալ, որ գոյականների այդ խմբերը ոչ միայն անջրպետված չեն իրարից, այլև դրանց սահմանները շարժուն են ու խաչաձևվում են՝ հատուկ անունները դառնալով հասարակ, իսկ հասարակ անունները՝ հատուկ։ Հայերենում հատկապես տարածված է հասարակ անունների անցումը հատուկներին։

Գործածվելով որպես եզակի առարկաների անուններ՝ հասարակ գոյականները վերածվում են հատուկների։ Այսպես են, օրինակ, Մարտիկ,

Հրաչյա, Նվեր, Վրեժ, Անդրանիկ, Նորայր, Կորյուն, Անբառամ, Հաս-  
միկ, Վարդ, Մաղիկ, Քննուշ, Համեստ, Քազուհի, Գոհար, Աղավճի, Սի-  
րուն, Արշալույս, Լուսերես և այլն, որոնք անձնանուններ են, Սարալանջ,  
Մաղիածուր, Գետափ, Նորաշեն, Գետաշեն, Աչաջուր, Զրառատ, Ցամա-  
ֆաբերդ, Վարդարուր, Ուռուտ, Խնձորուտ և այլն, որոնք աշխարհա-  
գրական անուններ են:

Այս ձևով լեզվում առաջացել և առաջանում են բազմաթիվ համա-  
նուններ, օրինակ՝ ժողիկ-Մաղիկ, մանիշակ-Մանիշակ, շուշան-Շուշան,  
մարտիկ-Մարտիկ, նվեր-Նվեր, ավագ-Ավագ, ավետիք-Ավետիք, գյուտ-  
Գյուտ, թոռնիկ-թոռնիկ, իշխան-Իշխան, հարություն-Հարություն, մա-  
նուկ-Մանուկ, գալուստ-Գալուստ, չրառատ-Ջրառատ, գետափ-Գետափ,  
արգավանդ-Արգավանդ, չրվեժ-Ջրվեժ, ավան-Ավան և այլն, և այլն:

Այն հատուկ անունները, որոնք հայերենով չեն ստուգաբանվում,  
որպես կանոն գալիս են օտար լեզուներից և այնտեղ ունեն իրենց բա-  
ցատրությունը: Այսպես են, օրինակ, Անահիտ (պարս. անարատ), Ա-  
նաստաս (հուն. հարություն), Արշակ (պարս. արջուկ), Արսեն (հուն.  
այր), Քարսեղ (հուն. թագավոր), Գևորգ (հուն. երկրագործ), Գուրգեն  
(պարս. գայլ), Գրիգոր (հուն. արթուն), Գավիթ (եբր. սիրելի), Իվա  
(եբր. կյանք), Եվգինե (հուն. բարեծնունդ), Քամամ (արաբ. կատար-  
յալ), Անն (հուն. առյուծ), Կիրակոս (հուն. տիրունի), Մարիամ (եբր.  
լուսավորյալ), Մարտիրոս (հուն. նահատակ), Մուրադ (արաբ. փափագ),  
Հովհաննես (հուն. աստվածաշնորհ), Շահեն (պարս. բազե), Պետրոս  
(հուն. քար), Պողոս (լատ. փոքրիկ), Ստեփանոս (հուն. պսակ), Փիլի-  
պոս (հուն. ձիասեր) և այլն<sup>1</sup>:

Նկատվում է նաև հակառակ երևույթը՝ հատուկ անունների անցում  
հասարակ անվան: Գործածվելով որպես միատեսակ առարկաների ան-  
վանում և հետևաբար արտահայտելով ընդհանուր նշանակություն՝ հա-  
տուկ գոյականները վերածվում են հասարակ անվան: Հատուկ անուն-  
ներից առաջացած հասարակ անուններ են՝ կայսր, օգոստոս, մեկեճաս,  
մաուգեր, ռենտգեն, վոլտ, ամպեր, բոստոն, օհմ, խեբես և այլն:

Այսպես և՛ պատմական նշանավոր անձերի, գեղարվեստական նշա-  
նավոր երկերի հերոսների անունները նրանց համար բնորոշ այս կամ  
այն հատկանիշի ընդհանրացմամբ կարող են գործածվել որպես հասա-  
րակ անուններ, օրինակ՝ «Հայ ժողովուրդն՝ այժմ էլ Վարդանեեր ունի»  
(այսինքն՝ հայրենիքին նվիրված, անձնուրաց, քաջ զավակներ ունի).  
«Զիմզիմովների (=խարդախների, խաբեբանների) դարը դեռ չի վերջա-  
ցել»։ «Նա մի նոր Չարեհն է» (=մեծ, հուժկու բանաստեղծ է):

Հասարակ և հատուկ անունների իմաստային-բերականական տար-  
բերությունը գրավոր լեզվում ամրապնդված է նրանով, որ հատուկ գո-

յականները հայերենում (ինչպես և մի քանի այլ լեզուներում՝ ռուսե-  
րեն, ֆրանսերեն, անգլերեն և այլն) գրվում են մեծատառով, իսկ հա-  
սարակները՝ փոքրատառով:

Ք ա ն ձ ռ ա ց ա կ ա ն և վ ե ռ ա ց ա կ ա ն գ ո յ ա կ ա ն ն ե ռ.— Բո-  
լոր գոյականները, ըստ այն բանի, ցույց են տալիս իրական առարկա-  
նե՞ր, թե՞ վերացական հասկացություններ, բաժանվում են երկու խմբի՝  
թանձրացական (կոնկրետ) և վերացական:

Թանձրացական գոյականները մարդկանց, կենդանիների, իրերի,  
նյութերի, բույսերի, բնության երևույթների և այլն, այսինքն՝ իրական  
առարկաների անվանումներն են, ինչպես՝ մարդ, աչակերտ, բանվոր,  
գյուղացի, տղա, աղջիկ, վագր, գայլ, ձուկ, արագիլ, գիրք, սեղան, գրիչ,  
դուռ, լուսամուտ, ջուր, գինի, երկաթ, ոսկի, թանաֆ, ծառ, վարդ, ուռե-  
նի, ձյուն, անձրև, կարկուտ և այլն: Թանձրացականները գոյականների  
ամենաբնորոշ խումբն են կազմում:

Վերացական գոյականները ցույց են տալիս ոչ նյութական հասկա-  
ցություններ, այն է՝ հատկություն, գործողություն, դրույթուն, մարդու  
հոգեկան կամ մտավոր գործունեություն, որոնք ընկալվում կամ ըմբռն-  
վում են առարկայաբար, օրինակ՝ ազահություն, ազատություն, աղիա-  
տություն, արագություն, դատարկություն, զվարթություն, տխրություն,  
խիզախություն, փառություն, հանդիմանություն, ծագում, շարժում, ժըխ-  
տում, սերում, ֆամահաճ, գրկաճ, սլացք, ընթացք, փախուստ, կո-  
րուստ, գալուստ, վախ, սեր, մահ, խանդ, գուք և այլն: Վերացական գո-  
յականները, ինչպես օրինակներն են ցույց տալիս, մեծ մասամբ կազմը-  
վում են հատուկ ածանցների միջոցով (ՈՒԹՅՈՒՆ, ՈՒՄ, Ք և այլն) և  
շատ մեծ թիվ են կազմում՝ թանձրացականների նման անընդհատ հա-  
մարվելով նորանոր բառերով:

Վերացական գոյականների բերականական տարբերությունը թանձ-  
րացականներից ընդհանրապես այն է, որ վերացականները, իրենց ար-  
տահայտած իմաստի համեմատ, սովորաբար չեն կարող քանակական  
թվականներով լրացվել և գործածվել հոգնակի թվով: Այսպես՝ չենք ա-  
սում մեկ աղիատություն, երկու աղիատություն, երեք աղիատություն  
կամ աղիատություններ, մեկ ծագում, երկու ծագում, երեք ծագում կամ  
ծագումներ, հինգ տխրություն, չորս զվարթություն և այլն:

Սակայն շատ վերացական գոյականների մեջ կենդանի լեզվագոր-  
ծածության ընթացքում զարգանում է նաև թանձրացական նշանակու-  
թյուն, որ աստիճանաբար կարող է գերիշխող դառնալ: Այսպիսի դեպ-  
քերում վերանում է թանձրացականների ու վերացականների տարբե-  
րությունը, և վերջիններս, առաջինների նման, կարող են քանակական  
թվականներով լրացվել ու գործածվել հոգնակի թվով: Այսպես, շար-  
ժում, որպես վերացական գոյական, զուրկ է հոգնակի թվի կարգից,  
ինչպես, սաենք, ծագում գոյականը: Սակայն շարժում բառը ձեռք է բե-

<sup>1</sup> Տե՛ս Լ. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, ԲՑ. 1—5:

րել նաև թանձրացական նշանակություն և այդ իմաստով կարող է գործածվել հոգնակի թվով, օրինակ՝ «Նրա ձեռքի շարժումից ամեն ինչ հասկացա» և «Նրա ձեռքի շարժումներից ամեն ինչ հասկացա», «Շոգենավի թափանիվի շարժումները դանդաղեցին» և այլն: Մագում գոյականը այսպիսի թանձրացական նշանակություն չունի, որի պատճառով էլ, որպես կանոն, հոգնակի թվով գործածվել չի կարող:

Թանձրացական նշանակությամբ կարող են գործածվել շատ վերացական գոյականներ, օրինակ՝ «Նրա ձգտումները չիրականացան»։ «Շիրվանզադեն իր հիշողություններում մեծ սիրով է խոսել Բաֆֆու մասին»։ «Արդեն մի զգուշացում ու երկու նկատողություն է ստացել»։ «Մի՞թե քեզ չեն գրավում բնության գեղեցկությունները»։ «Մեր տառապանքներն ու տանջանքները վերջ ունենալու են, թե՛ ոչ»։ «Նրա աշխատանքը բարձր գնահատականի արժանացավ»։ «Մահեր եմ տեսել»։ «Թող օրհնե՞վի ջուրը, բոլոր կյանքերին կյանք տվող այս աստվածային հեղուկը» և այլն: Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ հոգնակի թվում վերացականները թանձրացական նշանակություն են ստանում:

Ա ն ձ և ո շ ա ն ձ և ց ու յ ց տ վ ո ղ գ ո յ ա կ ա ն ն ե ր . — Բոլոր գոյականները՝ ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ, բաժանվում են երկու խմբի՝ անձ ցույց տվող և ոչ անձ ցույց տվող գոյականների: Հայերենում այս տարբերակումն արտահայտվում է ոչ միայն իմաստաբանորեն, այլև որոշ շփուվ քերականորեն՝ ըստ հարցական դերանունների հետ ունեցած հարաբերակցության, այն է՝ անձ ցույց տվող գոյականները պատասխանում են ով հարցին, օրինակ՝ ո՞վ—մաքը, ուսուցիչը, տղան, աղջիկը, բանվորը, զինվորը, ուսանողը և այլն, իսկ ոչ անձ ցույց տվող գոյականները, այդ թվում նաև կենդանիների անունները, պատասխանում են ինչ հարցին, օրինակ՝ ի՞նչը—եզր, առյուծը, աղվեսը, գայլը, կռուկը, ֆամին, տունը, հողը, ծառը, սարը, գի՛ւ՛ր և այլն:

Անձի և ոչ անձի՝ հարցական դերանունների միջոցով դրսևորվող այս տարբերությունը արտահայտվում է նաև թեք հոլովներում, ինչպես՝ ո՞ւմ—մաքում, ուսուցչին, տղային, աղջկան, ինչի՞ն—աղվեսին, առյուծին, ծառին, գրքին, ումի՞ց—մաքուց, ուսուցչից, տղայից, աղջկանից, ինչի՞ց—աղվեսից, առյուծից, ծառից, գրքից, ում՞ով—մաքով, ուսուցչով, տղայով, աղջկանով, ինչո՞ւ—աղվեսով, առյուծով, ծառով, գրքով:

Այսպիսի տարբերությունը որոշ իմաստով քերականական կարելի է համարել՝ նկատի ունենալով դերանունների կարգային (կատեգորիալ) արժեքը:

Շ ն շ ա վ ո ռ և ա ն շ ու ն չ գ ո յ ա կ ա ն ն ե ր . — Ժամանակակից հայերենում տարբերակվում են նաև շնշավոր և անշունչ գոյականները: Շնշավոր գոյականները մարդկանց և կենդանիների հասարակ ու հա-

տուկ անուններն են (բժիշկ, բանաստեղծ, Հասմիկ, Գուրգեն, կենդանի, աղավնի, արծիվ, ձի և այլն): Անշունչներին են պատկանում մյուս բոլոր գոյականները, որոնք արտահայտում են անշունչ առարկաների, երևույթների հասկացություններ (տուն, լիճ, գետ, անտառ, աշխատանք, Երևան, Սևան և այլն):

Հասկանալի է, որ շնշավոր և անշունչ առարկաների տարբերությունը ամենից առաջ իմաստային տարբերություն է: Սակայն հայոց լեզուն շնշավոր և անշունչ առարկաները տարբերում է նաև քերականորեն, որը երևում է ուղիղ խնդրի ձևավորման մեջ: Շնշավոր առարկաների ուղիղ խնդիրը, որպես կանոն, կարող է ունենալ երկու ձև՝ տրականի և ուղղականի ձև, օրինակ՝ «Ոչ մի ուսանողի չեմ տեսել» և «Ոչ մի ուսանող չեմ տեսել», «Որսորդն սպանեց այդ արջին» և «Որսորդը արջ սպանեց», իսկ անշունչ առարկաների ուղիղ խնդիրը սովորաբար ունենում է մեկ ձև՝ ուղղականի ձև, ինչպես՝ «Ոչ մի ծով չեմ տեսել»: Ճիշտ է, առանձին դեպքերում իրերը կարող են շնշավորվել և այդ դեպքում կարող են գործածվել տրականաձև, ինչպես՝ «Նա իր նվազով փառե՛րին էր լացացնում», սակայն այդ տեղի է ունենում բանաստեղծական լեզվում և ոճական հատուկ նպատակներով:

Շնշավորի ու անշունչի կարգի դրսևորումները բարդանում են ջր միայն նվաճով, այլև որոշյալ և անորոշ անձան միջամտությամբ

Ն յ ու թ ց ու յ ց տ վ ո ղ գ ո յ ա կ ա ն ն ե ր . — Թանձրացական գոյականների միջ առանձին խումբ են կազմում նյութ, զանգված ցույց տվող գոյականները, օրինակ՝ պողպատ, ոսկի, արծաթ, արհի՛ն, պղինձ, ծծումբ, ալյուր, օդ, ջրածին, թթվածին, ազոտ, ջուր, գինի, թանաֆ, մեղր, կաթ, մածուն և այլն:

Նյութ ցույց տվող գոյականները թվարկվել, հատերի բաժանվել չեն կարող. նրանք կարող են բաժանվել մասերի, և մասը կրկին կունենա ամբողջի հատկությունը:

Իրենց իմաստին համապատասխան՝ նյութ, զանգված ցույց տվող գոյականները կարող են ստանալ շատ և քիչ որոշիչները (շատ ալյուր, քիչ ալյուր), բայց քանակական թվականների հետ կապակցվել և հոգնակի թիվ կազմել սովորաբար չեն կարող: Եթե առանձին դեպքերում դրանք գործածվում են հոգնակի թվով, ապա, որպես կանոն, ցույց են տալիս նույն նյութի տարբեր տեսակները, օրինակ՝ գինիներ (սպիտակ, վարդազույն, քաղցր, կիսաքաղցր, սեղանի և այլն), թանաֆներ (կապույտ, կանաչ, մանիշակազույն, քիմիական, ինքնահոսի և այլն), երջիկներ (բժշկական, ուկրաինական, որսորդական և այլն):

Հասկանալի է, որ նյութ ցույց տվող գոյականները որոշ չափերով չափվում են. դրանք արդեն կապակցվում են քանակական թվականների հետ, օրինակ՝ երկու լիտր կաթ, հինգ շիշ օդի, երեք տակառ գինի,

երկու բեռ ցորեն, հինգ պարկ ալյուր, քսան տոննա պողպատ, չորս կիլոգրամ արհիմ, տասը կիլոգրամ մեղր և այլն։

**Հ ա վ ա ֆ ա կ ա ն գ ո յ ա կ ա ն Ե ր և Յ Ե ր .**— Սովորաբար հավաքական են կոչվում այն գոյականները, որոնք ցույց են տալիս միատեսակ առարկաների անբաժանելի ամբողջություն, օրինակ՝ վաշտ, գունդ, բառարկաների անբաժանելի ամբողջություն, օրինակ՝ վաշտ, գունդ, բանակ, ազգ, ժողովուրդ, հոտ, երամակ, նախիր, վտառ և այլն։ Սակայն նաև, ազգ, ժողովուրդ, հոտ, երամակ, նախիր, վտառ և այլն։ Սակայն այսպիսի բառերը քերականական տարբերակիչ առանձնահատկություններ չունեն, սովորական բառերի նման հոգնակի թիվ են կազմում, ինչպես՝ վաշտ-վաշտեր, բանակ-բանակներ, ազգ-ազգեր, ժողովուրդ-ժողովուրդներ և այլն, և, հետևաբար, դրանց առանձնացումը քերականական արժեք չունի։

Բուն հավաքական գոյականները նրանք են, որոնք եզակի ձևով արտահայտում են հոգնակի թվի իմաստ և հենց հոգնակի ձևով էլ կարող են փոխարինվել։ Այսպես են, օրինակ, ուսանողություն||ուսանողներ (ուսանողությունը հուշված էր||ուսանողները հուշված էին), գյուղացիություն||գյուղացիներ (Գյուղացիությունը տառապում էր||Գյուղացիները տառապում էին), բանվորություն||բանվորներ, ուսուցչություն||ուսուցիչներ, աշակերտություն||աշակերտներ, ազնվականություն||ազնվականներ, մտավորականություն||մտավորականներ. երիտասարդություն||երիտասարդներ, հոգևորականություն||հոգևորականներ և այլն։

Չուգահեռ ձևերից անմիջաբար պարզ է դառնում, որ հավաքական գոյականները եզակի ձևով հոգնակիության գաղափար են արտահայտում։ Սակայն հավաքականների հոգնակիությունը և բուն հոգնակիությունը նույնանիշներ չեն, և դրանց միջև հավասարության նշան դնել չի կարելի։

Հոգնակի գոյականները ցույց են տալիս հոգնակիության մեջ մտնող առարկաներն առանձին, անջատ, ինչպես՝ ուսանողներ, գյուղացիներ, բանվորներ, իսկ հավաքական գոյականներն արտահայտում են հոգնակիության մեջ մտնող առարկաները որպես մի միասնություն, ամբողջություն, ինչպես՝ ուսանողություն, գյուղացիություն, բանվորություն։ Իմաստային այս տարբերությունն արտահայտվում է նաև բայ-ստորոգյալի հետ ունեցած համաձայնության մեջ։ Հոգնակի գոյականները հոգնակի, իսկ հավաքական գոյականները եզակի թվով արտահայտված ստորոգյալներ են պահանջում, օրինակ՝ «ուսանողները հանձնեցին ընդունությունները», «ուսանողությունը հանձնեց ընդունությունները». «բանվորներն անցան հնգօրյա աշխատանքային շաբաթի», «բանվորությունն անցավ հնգօրյա աշխատանքային շաբաթի» և այլն։

Եթե հավաքականության հարցին մոտենում ենք բացատրված տեսանկյունից, ապա պարզ է դառնում, որ ժամանակակից հայերենի բուն հավաքական գոյականները ՈՒԹՅՈՒՆ ածանցով կազմված այն բառերն են, որոնք հավասարազոր են հոգնակի թվի ձևերին։

Հավաքական իմաստ են արտահայտում նաև ԵՂԵՆ ածանցով կազմված գոյականները, օրինակ՝ ոսկեղեն, երկաթեղեն, կարենեղեն, բանջարեղեն, խմորեղեն և այլն, սակայն դրանց մեջ հավաքականությունը անխառն չի դրսևորվում և ուղեկցվում է այլ նշանակություններով։ Այսպես, օրինակ՝ ոսկեղեն ոչ թե նշանակում է «ոսկիներ», այլ «ոսկուց պատրաստած իրեր»։ Ուրեմն՝ սրանք բուն հավաքական գոյականների շարքը դասվել չեն կարող։

Հավաքական նշանակություն են արտահայտում նաև որոշակի ածանցներով կազմված մի բանի այլ բառեր, օրինակ՝ ավազԱՆԻ, ընտրԱՆԻ, նամակԱՆԻ, առածԱՆԻ, դեղՈՐԱՅՔ, արտՈՐԱՅՔ, փորՈՏԻՔ և այլն։ Բայց այս բառերի մեջ ևս, բացի հավաքականությունից, դրսևորվում են նաև այլ իմաստներ։

**Գ Ե ր դ ա ս տ ա ն, տ ո հ մ, խ մ բ ա կ ց ու թ յ ու ն ց ու յ ց տ վ ո ղ գ ո յ ա կ ա ն Ե ր և Յ Ե ր .**— Անձի անունների մեջ հատուկ խումբ են կազմում տոհմ, գերդաստան, խմբակցություն ցույց տվող գոյականները, որոնք, որպես կանոն, կազմվում են ԵՆՔ, առանձին դեպքերում ՈՆՔ, սակավադեպ նաև ՈՒՆՔ, ԱՆՔ ածանցներով, ինչպես՝ Գրիգորեմ, Արմենեմ, Արամեմ, Գուրգենեմ, Սուրենեմ, Գուգեմ, պապեմ, տատեմ, Վարդանեմ, Վաճրոմ և այլն։ Այս և նման բոլոր բառերը ժողովրդական-խոսակցական երանգ ունեն և գրական լեզվին են անցել բարբառներից, որտեղ նրանք լայն տարածում ունեն։

Միավորված լինելով նույն իմաստի տակ՝ այս բառերը միաժամանակ ունեն ընդհանուր քերականական առանձնահատկություններ։

1. Հոգնակի իմաստ ու ձև ունեն և եզակի թվով գործածվել չեն կարող, այսինքն՝ անեզական են։
2. Ուղղական հոլովում ունեն հատուկ վերջավորություն՝ Ք։
3. Սեռական-տրական հոլովը կազմում են Ք/Յ հերթագայությամբ (Գրիգորեմ-Գրիգորենց, Արամեմ-Արամենց)։

Կան նաև ՈՆՔ ձևով կազմված բառեր դերանունների սեռական հոլովաձևերից, օրինակ՝ մեռեմ, ձերեմ։ Ժողովրդական-բարբառային են իմոմ, բոնոմ և այլ ձևերը։

#### ԳՈՅԱԿԱՆ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ .**— Գոյական անուններն ունեն երկու թիվ՝ եզակի և հոգնակի։

Եզակի թիվը ցույց է տալիս եզակի, մասնավոր առարկա կամ տրվյալ տեսակի առարկան ընդհանրապես։ Այսպես՝ ծառ, տուն, աշակերտ, ուսանող ասելով կարող ենք հասկանալ տվյալ մասնավոր ծառը, տունը, աշակերտը, ուսանողը և առարկաների տվյալ տեսակներն ընդհանրապես։

Հոգնակի թիվը ցույց է տալիս նույն տեսակի մեկից ավելի առարկաներ (երկուսից սկսած մինչև անսահմանություն), օրինակ՝ ծառեր, տներ, աշակերտներ, ուսանողներ:

Թվի տեսակետից բոլոր գոյականները կարելի է բաժանել երեք խմբի.

ա) Գոյականներ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թվի ձևեր:

բ) Գոյականներ, որոնք ունեն միայն եզակի թվի ձև և հոգնակի թվով սովորաբար չեն գործածվում: Դրանք կոչվում են անհոգնակաճ բառեր (լատ. singularia tantum).

գ) Գոյականներ, որոնք ունեն միայն հոգնակի թվի ձև և, որպես կանոն, եզակի թվով գործածվել չեն կարող: Դրանք կոչվում են անեզակաճ բառեր (լատ. pluralia tantum):

Սակայն շնայած այսպիսի բաժանմանը՝ այս երեք խմբերը հավասարազոր չեն: Դրանցից հիմնականը առաջին խումբն է, և, ինչպես ստորև կտեսնենք, անհոգնակաճ ու անեզակաճ բառերի կարգերը արդի հայերենի համար բնորոշ չեն:

Հոգնակի Թվի ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ. — Արդի հայերենում գոյականների հոգնակի թիվը կազմվում է ծՐ, նԾՐ, Ք և ԻԿ մասնիկներով: Դրանցից ամենագործածականը ծՐ և նԾՐ մասնիկներն են:

ԾՐ և նԾՐ մասնիկների բաշխումը, որպես կանոն, պայմանավորված է բառերի վանկերի քանակով: Հոգնակիի կազմության ժամանակ ծՐ մասնիկն են ստանում միավանկ բառերը, օրինակ՝ սառ-սառեր, լառ-լառեր, ծառ-ծառեր, գիրք-գրքեր, միտք-մտքեր և այլն: նԾՐ մասնիկն են ստանում բազմավանկ բառերը, օրինակ՝ զինվոր-զինվորներ, ուսանող-ուսանողներ, ուսուցիչ-ուսուցիչներ, երիտասարդ-երիտասարդներ և այլն:

Հոգնակիի կազմության այս ընդհանուր օրինաչափության հետ պետք է հաշվի առնել հետևյալները:

ա) Գրաբարյան բաղաձայնահաջորդ ն վերջնահնչյունը աշխարհաբարում ընկել է, ինչպես՝ գրք. գառն, մուկն, ձուկն — աշխ. գառ, մուկ, ձուկ: Այսպիսի բառերի մի մասը հոգնակիի կազմության ժամանակ գրաբարյան կորած ն վերջնահնչյունը վերականգնում է, ինչպես՝ աղ-աղներ, բեռ-բեռներ, գառ-գառներ, դուռ-դուռներ, եզ-եզներ, բոռ-բոռներ, ծառ-ծառներ, լեռ-լեռներ, ձուկ-ձուկներ, կուռ-կուռներ, հարս-հարսներ, ձուկ-ձուկներ, մատ-մատներ, մուկ-մուկներ, նուռ-նուռներ, ձեռ-ձեռներ, քառաձեռներ: Վերջին ձևերը ավելի հատուկ են ժողովրդական լեզվին: Գրականում գործածվում են ձեռք, ոտք, որոնց հոգնակին կանոնավոր է՝ ձեռքեր, ոտքեր:

Մի քանի բառեր հոգնակիի կազմության ժամանակ գրաբարյան ն վերջնահնչյունը չեն վերականգնում, իսկ բառակազմության ժամանակ

վերականգնում են, ինչպես՝ մաս-մասեր (բայց՝ մասնակից), կողմ-կողմեր (բայց՝ կողմացույց), սերմ-սերմեր (բայց՝ սերմնացան) և այլն:

բ) Առանձին պետք է խոսել գաղտնավանկ ունեցող բառերի մասին, ինչպես՝ բծիշկ, գրող, ազդր, արկղ: Այսպիսի բառերը բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում բծիշկ, գրող և նման բառերը, որտեղ գաղտնավանկը նախորդում է լիարժեք վանկին, իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում ազդր, արկղ և նման բառերը, որտեղ գաղտնավանկը հաջորդում է լիարժեք վանկին:

Նախորդող գաղտնավանկ ունեցող բառերը հոգնակի են կազմում բազմավանկ բառերի նման, նԾՐ մասնիկով, ինչպես՝ բծիշկ-բծիշկներ, գրող-գրողներ, դպրոց-դպրոցներ, սրբիչ-սրբիչներ, ժպիտ-ժպիտներ, խրճիթ-խրճիթներ, կղզի-կղզիներ, կոիվ-կոիվներ, շրջան-շրջաններ, սկյուռ-սկյուռներ, ստինք-ստինքներ, ստոր-ստորներ, վրձին-վրձիններ, վրան-վրաններ և այլն, և այլն: Բացառություն չկա: Այս նշանակում է, որ բծիշկ, գրող, դպրոց և այլ բառերը, այսինքն՝ նախորդող գաղտնավանկ ունեցող բառերը լիարժեք երկվանկ բառեր են:

Հաջորդող գաղտնավանկ ունեցող բառերը ավելի հակված են հոգնակի կազմելու միավանկ բառերի նման, այսինքն՝ ծՐ մասնիկով, ինչպես՝ ազդր-ազդրեր, արկղ-արկղեր, դուստր-դուստրեր, եզր-եզրեր, սառ-սառեր, կայսր-կայսրեր, ոսկր-ոսկրեր, վագր-վագրեր, տետր-տետրեր, գամփռ-գամփռեր (Մտերիմ գամփռերը կրծում են կապանք) — Հ. Հովհաննիսյան) և այլն: Այս ձևով կազմված հոգնակիները երկվանկ արտասանություն ունեն, որովհետև վերջին բաղաձայնը վանկ է կազմում ծՐ մասնիկի հետ, օրինակ՝ ազդ-րեր, դուստ-րեր, արկ-ղեր, սառ-րեր և այլն:

Սակայն հաջորդ գաղտնավանկ ունեցող բառերի գոնե մի մասը ազատ կերպով հոգնակի կարող է կազմել նաև նԾՐ մասնիկով, ինչպես՝ անզղ-անզղներ (ՀՇՔ2, 113), արկղ-արկղներ (ԱԲԾ, 189), գամփռ-գամփռներ (ՍԽՔ, 48), ոսկր-ոսկրեր և այլն: Այս ձևով կազմված հոգնակիները եռավանկ արտասանություն ունեն, ինչպես՝ ար-կղ-ներ, գամփռ-ներ, ան-զղ-ներ:

Այս նշանակում է, որ անզղ, արկղ, կայսր և այլ բառերը, այսինքն՝ հաջորդող գաղտնավանկ ունեցող բառերը ո՛չ լիարժեք միավանկ են, ո՛չ լիարժեք երկվանկ, և դրանց «մեկ ու կես վանկանի» անվանումը պայմանականորեն ճիշտ կարելի է համարել:

գ) Հոգնակիի կազմության հատուկ օրինաչափության են ենթարկվում այն բարդ բառերը, որոնց վերջին բաղաձայնը միավանկ է, օրինակ՝ սարալանջ, անձրևաջուր, ունկնդիր, բանասեր: Այսպիսի բարդ բառերի հոգնակին կարող է կազմվել և՛ ծՐ, և՛ նԾՐ մասնիկներով:

Բարդ բառերը ծՐ մասնիկն են ստանում այն դեպքում, երբ բառի երկրորդ միավանկ բաղաձայնը պահպանում է իր հիմնական նշանակու-

թյունը, օրինակ՝ սարալանջ նշանակում է սարի լանջ, անձեակառու՝ անձեակի ջուր, այս իսկ պատճառով էլ այս բառերը հոգնակի են կազմում ԵՐ մասնիկով՝ սարալանջեր, անձեակառու: Այսպես էլ՝ անձեակառու-անձեակառուներ, անձեակառու-անձեակառուներ, աղբակույտ-աղբակույտներ, ավազաքմբեր, ավտոդոդեր, արևելահայեր, արտավայրեր, բանավեներ, բանաձևեր, բեռնանավեր, գինետներ, մեծատաներ, դաշտավայրեր, դասագրքեր, գորագնդեր, գորամասեր, խաղաթղթեր, խոզարներ, ծովախորշեր, հողատերեր, հորափայրեր, ձեռնափայտեր, մեղրանաններ, ճշանաձողեր, շաքարաթերթեր, շիրմաբարեր, պայմանագրեր, սրբավայրեր, վարելահողեր, տեղաշարեր, փաստաթղթեր և այլն:

Իսկ երբ վերջին բաղադրիչը իր բուն հիմնական իմաստը չի պահպանում, և, այսպիսով, նոր նշանակություն է ստանում մի նոր բառ է կազմվում՝ ամբողջ բարդությունը դիտվում է իբրև բազմավանկ և հոգնակի կազմություն ժամանակ ստանում է ԵՐ մասնիկը: Այսպես՝ ազգասեր, պատմագիր բառերի մեջ սեր նշանակում է սիրող, իսկ գիր նշանակում է գրող, այս իսկ պատճառով էլ այս բառերն ստանում են ԵՐ մասնիկը՝ ազգասերներ, պատմագիրներ: Այս նույն ձևով նաև՝ ունկնդիրներ, ակնատեսներ, բանասերներ, բանբերներ, բանտապահներ, բարեկամներ, բեռնակիրներ, բքամիտներ, գեղագետներ, գնդացիներ, գրագիրներ, դասալիներ, եսասերներ, խաչակիրներ, կաթնակերներ, կաթնասուններ, հայասերներ, հաշվապահներ, հիմնագիրներ, հրացաններ, հրքիտներ, հրջեղներ, ձրիակերներ, մանկավարժներ, մեղալիներ, նյութապաշտներ, նորածիններ, շատախոսներ, շատակերներ, ումնադիրներ, շարամիտներ, ջրկիրներ, ջրմուղներ, ստախոսներ, փայտահատներ և այլն:

Բացի վերոհիշյալից՝ կարելի է սահմանել նաև հետևյալ ընդհանուր կանոնը. երբ բառի վերջին միավանկ բաղադրիչը բայական արմատ է կամ ընկալվում է որպես այդպիսին, և բարդ բառն արտահայտում է մի բան անողի կամ մի բան ունեցողի նշանակություն, ապա հոգնակի կազմության ժամանակ ստանում է ԵՐ մասնիկը, իսկ երբ անվանական արմատ է կամ ընկալվում է որպես այդպիսին, և բարդ բառը չի արտահայտում մի բան ունեցողի կամ մի բան անողի նշանակություն, ապա հոգնակի կազմության ժամանակ ստանում է ԵՐ մասնիկը:

Այս բանը ցայտուն կարելի է ցույց տալ նույնարմատ բաղադրիչ ունեցող բարդ բառերի օրինակով: Այսպես՝ մեծատուն նշանակում է մեծ տուն ունեցող (հարուստ) և այդ իսկ պատճառով էլ հոգնակի կազմության ժամանակ ստանում է ԵՐ մասնիկը՝ մեծատուններ, իսկ վերնատուն նշանակում է վերին տուն և այդ իսկ պատճառով էլ ստանում է ԵՐ մասնիկը՝ վերնատներ: Պատմագիր նշանակում է պատմություն գրող և հոգնակի է կազմում ԵՐ մասնիկով՝ պատմագիրներ, իսկ հեռագիր նշանակում է հեռվից եկած գիր և հոգնակի է կազմում ԵՐ մասնիկով՝ հեռագիրներ:

գրեր: Այսպես և՛ մարգարտահատ բառը եթե նշանակի մարգարտահատ անող, հոգնակի կկազմի ԵՐ-ով՝ մարգարտահատներ, իսկ եթե նշանակի մարգարտի հատ, հոգնակի կկազմի ԵՐ-ով՝ մարգարտահատեր:

Ժամանակակից հայերենում գոյականների հոգնակի թիվը կազմվում է նաև Ք մասնիկով: Ք-ով հոգնակի կարող են կազմել ՅԻ (ԱՅԻ, ԵՅԻ) ածանցով վերջավորվող բառերը, օրինակ՝ գյուղացի-գյուղացիք, ֆաղաֆացի-ֆաղաֆացիք, գերմանացի-գերմանացիք, լոնցի-լոնցիք, մեղրեցի-մեղրեցիք, երևացի-երևացիք, թիֆլիցի-թիֆլիցիք և այլն: Սրանք ունեն զուգահեռ ԵՐ-ով կազմված հոգնակիներ՝ գյուղացիներ, ֆաղաֆացիներ, գերմանացիներ, որոնք գրական լեզվի համար ավելի կանոնական են: Առաջինները հատուկ են ժողովրդական խոսքին:

Հայ դասական և ժամանակակից գրականության մեջ հանդիպում ենք նաև Ի-ով վերջավորվող բառերից Ք մասնիկով հոգնակի կազմությունների, ինչպես՝ ոսկի-ոսկիք, գին-գինիք, որդի-որդիք, պատանգի-պատանգիք և այլն. որոնք բարբառային կամ գրաբարյան երանգ ունեն: Լրիվ բարբառային ու մերժելի են Ք-ով կազմված հոգնակիները Ա-ով վերջավորվող բառերից, օրինակ՝ ճամփա-ճամփիք (<ճամփայք), փեսա-փեսիք, բալա-բալիք, սատանա-սատանիք և այլն: Ժողովրդական-բարբառային երանգ ունեն տղերք, աղջիկք ևնրը, որտեղ հանդես է գալիս ԵՐ-ով հոգնակիները:

ԻԿ մասնիկով հոգնակի է կազմում միայն մարդ բառը և այն, բաղադրյալ բառերը, որոնց վերջին բաղադրիչը մարդ բառն է, ինչպես՝ մարդ-մարդիկ, տղամարդ-տղամարդիկ, նախամարդ-նախամարդիկ և այլն:

Կին բառի հոգնակին գրաբարաձև է՝ կանայք: ԱՅՔ ձևով կարող է կազմվել նաև տիկին բառի հոգնակին՝ տիկինայք, սակայն ավելի գործածական է այս բառի ԵՐ-ով կազմվող հոգնակին՝ տիկիններ: Բարձր ոճում ԱՅՔ ձևով է կազմվում պարոն բառի հոգնակին՝ պարոնայք: Այս բառի սովորական հոգնակին ԵՐ-ով է՝ պարոններ:

ԱՆՀՈԳՆԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ.— Հոգնակի կազմության տեսակետից արդի հայերենում գոյականները ձևային սահմանափակումներ չունեն, և ձևականորեն ամեն մի բառ կարող է ստանալ ԵՐ կամ ԵՐ մասնիկները ու կազմել հոգնակի թիվ: Բայց հոգնակի թվի կազմության մեջ զգալի դեր է խաղում նաև բառերի իմաստային կողմը: (Կան բառերի մի շարք խմբեր, որոնք իրենց արտահայտած հատուկ իմաստների պատճառով սովորաբար կամ միշտ գործածվում են եղակի թվով, որպես կանոն հոգնակի թվի ձևեր չեն ունենում կամ հոգնակի են կազմում միայն հավաքեպ: Այսպիսի բառերը սովորաբար կոչվում են անհոգնականներ: Արդի հայերենում սովորաբար միայն եղակի թվով են գործածվում.

ա) ՈՒԹՅՈՒՆ ածանցով կազմված հավաքական գոյականները՝ աշակերտություն, ուսանողություն, երիտասարդություն, ուսուցչություն, գյուղացիություն, ոստիկանություն և այլն:

Որպես կանոն, հոգնակի թվով չեն գործածվում նաև ԵՂԵՆ ածանցով կազմված հավաքականները՝ կանաչեղեն, բանջարեղեն, երկաթեղեն, ոսկեղեն և այլն:

բ) Գործողութիւնների, հատկութիւնների անունների մի մասը, որ գործածվում է միայն վերացական նշանակութամբ, օրինակ՝ ծագում, տապալում, ուսում, մանկություն, խոնարհություն, ծերություն, աղբատապալում, ուսում, մանկություն, խոնարհություն, ծերություն, աղբատապալում, գերություն, ստեղծություն, հպարտություն, պանդխտություն, տուրք, գերություն, ստեղծություն, հպարտություն, պանդխտություն, նիմարություններ, լավություններ, հիշողություններ, նարպություններ, սրբություններ, ցանկություններ և այլն:

գ) Ուսմունք, ուղղություն, հասարակական կառուցվածքի ձև ցույց տվող բառերը, որոնք կազմվում են հայերեն ՈՒԹՅՈՒՆ կամ օտար իջՄ ածացներով, օրինակ՝ ֆրիստոնեություն, մահմեդականություն, բուդդայականություն, պլատոնականություն, կանտականություն, մարքսիզմ, լենինիզմ, դարվիզմ, ռուսներիզմ, ավատականություն, ֆեոդալիզմ, կապիտալիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ և այլն:

դ) Հատուկ անունները, որոնք եթե հազվադեպ գործածվում են հոգնակի թվով, ապա արտահայտում են առանձնահատուկ նշանակություններ՝ ցույց տալով՝ 1. տարբեր անձեր կամ տեղանուններ, որոնք նույն անունն ունեն, օրինակ՝ «Համալսարանում բազմաթիվ Արմեններ, Արամներ, Կարիններ, Ռուզաններ կան», «Հայաստանում շատ Արգամաններ, Նորաշեններ, Մասիսներ, Արագածներ կան»։ 2. նույն ընտանիքի կամ գերդաստանի անդամներ, ամուսիններ, ընտանիք, օրինակ՝ «Ալիմյանները վշտի մեջ էին», «Արամյանները վերադարձան ճանապարհորդությունից»։ 3. տվյալ հատուկ անվանը բնորոշ ընդհանուր տիպական նշանակություն՝ ինչպես բացասական, այնպես էլ դրական իմաստով, օրինակ՝ «ՄԼԻ հասարակության մեջ Զիմզիմովներ և Զամբախովներ չեն կարող գոյություն ունենալ», «Հայ ժողովուրդը Վարդան Մամիկոնյաններ շատ է ծնել» և այլն:

զ) Նյութերի անունները՝ կաթ, մածուց, երկաթ, պողպատ, գինի, օղի, օղ, առնիճ, պղինձ, սեր, մեղր և այլն, որոնք հոգնակի թվով կարող են գործածվել միայն այն ժամանակ, երբ ցույց են տալիս նույն նյութի տարբեր տեսակները:

ԱՆԵԶԱԿԱՆ ԲԱՌԻՆ.— Անեզական են կոչվում այն բառերը, որոնք սովորաբար կամ միշտ գործածվում են հոգնակի թվով և եզակի թվի ձև չունեն։ Անեզական բառերը չափազանց շատ էին գրաբարում, Մեր հին լեզվում Ք ածանցով կազմված բառերը, որոնք հսկայական թիվ էին կազմում, անեզական էին, օրինակ՝ աչք, խելք, հոնք, միտք, կառք, մեղադրանք, տանջանք, անարգանք, Հայք, Վիրք, Ռշտունիք և այլն: Այս բառերը արդի հայերենում ըմբռնվում են որպեսզի եզակի, և սրանց հոգնակին կազմվում է սովորական ԵՐ և ՆԵՐ մասնիկներով, օրինակ՝ աչք-

աչքեր, միտք-մտքեր, մեղադրանք-մեղադրանքներ, տանջանք-տանջանքներ և այլն: Սա էլ իր հերթին նշանակում է, թե անեզականության կարգը ժամանակակից հայերենին հատուկ կարգ չէ:

Սակայն կան բառերի երկու խմբեր, որոնք գործածվում են միայն հոգնակի թվով: Դրանք են.

ա) ԵՆՔ, ԱՆՔ, ՈՆՔ, ՈՒՆՔ ածանցներով կազմված բառերը, որոնք, ինչպես նշված է արդեն, ցույց են տալիս գերդաստան, ընտանիք, խրմբակցություն, օրինակ՝ Արամենք, Գրիգորենք, Վարդանենք, Գոգոնք, Վանդանք:

բ) ԵՐ, ՆԵՐ մասնիկներն ունեցող աշխարհագրական հատուկ անունները, որոնք համապատասխանում են օտար լեզուների անեզական աշխարհագրական անուններին, ինչպես՝ Ալպեր, Կարպատներ, Արդեններ, Ապալաչներ, Պամպասներ և այլն:

### ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈՒՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

#### ՀՈՒՈՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

( ՀԱՐՅԻ ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆԻՅ.— Արևելահայ աշխարհաբարի քերականության հիմնադիր Ս. Պալասանյանը 7 հոլով է ընդունում՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական: Այս համակարգը մնում է մինչև դարասկիզբը, մինչև Մ. Աբեղյանի քերականությունները՝ Վերջինս իր «Աշխարհաբարի քերականություն» և «Աշխարհաբարի հոլովները» աշխատություններում 5 հոլով է ընդունում՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական:

«Աշխարհաբարի հոլովները» գրքում Մ. Աբեղյանը իրավացիորեն գրում է, որ աշխարհաբարի հայցական ասածը իր առանձին ձևը չունի, նա միշտ հանդես է գալիս կամ ուղղականի, կամ տրականի ձևով և, հետևաբար, առանձին հոլով կոչվելու իրավունք չունի:

Նա տեսական այն ճիշտ դրույթն է զարգացնում, որ առանց հատուկ ձևի առանձին հոլով լինել չի կարող: Ըստ այդմ, նա գտնում է, որ ինչպես գրաբարի այսպես կոչված պատմական, պարառական, կոչական հոլովները աստիճանաբար դուրս ձգվեցին քերականություններից, այնպես էլ պետք է հրաժարվել հայցական հոլովից, որովհետև դա աշխարհաբարում հատուկ ձև չունի:

Ելնելով հոլովների որոշման նույն ձևաբանական սկզբունքից՝ Մ. Աբեղյանը մերժում է սեռական և տրական հոլովների անկախ գոյությունը: Լեզվի պատմական զարգացման ընթացքում սեռական և տրա-

<sup>2</sup> Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզուի, Տիփսիս, 1894:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վարդաշապատ, 1908: Աշխարհաբարի հոլովները, Վարդաշապատ, 1908:

կան հոլովների ձևային տարբերակումը վերացել է, և ստեղծվել է մի ընդհանուր ձև, ուստի և այդ ընդհանուր ձևի համար պետք է դնել մի հոլով՝ հատկապես տրական հոլով, իսկ սեռականը նրա գործածություններից մեկը համարել:

Մ. Արեղյանը ճիշտ կերպով նշում է, որ սեռական և տրական հոլովների ձևային նույնացումը, որ առկա էր արդեն գրաբարում, աշխարհաբարում փաստորեն կատարյալ է դարձել: Միայն անձնական դերահարարում փաստորեն կատարյալ է դարձել: Միայն անձնական դերահարարում և մի քանի ցուցական դերանուններ (ընդամենը ութ բառ) սեռականի ու տրականի համար առանձին ձևեր ունեն: Դրանք են՝ ես-իմ-ինձ, դու-քո-քեզ, ինքը-իր-իրեն, մենք-մեր-մեզ, դուք-ձեր-ձեզ, սուրա-սուռն, դա-դրա-դրան, ես-երս-երան: Սրանցից էլ անձնական դերանունների սեռականները ըստ Մ. Արեղյանի ոչ թե հոլովական ձևեր են, այլ ստացական դերանուններ:

Մ. Արեղյանի տեսության դեմ և ի պաշտպանություն հայցական հոլովի՝ հանդես եկավ Ստ. Մալխասյանցը<sup>4</sup>, Հնդունելով հանդերձ, որ «արևելահայոց գրական լեզուն շունի հատուկ ձև հայցականի համար», Ստ. Մալխասյանցը քննադատում է Արեղյանին այն բանի համար, որ վերջինս հոլովները որոշում է սոսկ ձևով՝ անտես առնելով հոլովական ձևերի նշանակությունները, մինչդեռ քանի որ հոլովական ձևից անբաժան է նրա նշանակությունը, ուստի և հոլովները սոսկ ձևով որոշվել չեն կարող: Եվ եթե հոլովական ձևը և նշանակությունը վերցվել են անխզելի միասնության մեջ, ապա «Արեղյանը պետք է ընդուներ և հայցական հոլով, որովհետև հայցական հոլովը որքան էլ ձևով նման լինի ուղղականին կամ տրականին, ունի բոլորովին տարբեր ֆունկցիա, և ոչ միայն բոլորովին տարբեր, այլ ուղղակի հակադիր ֆունկցիա, օրինակ՝ Մի արտադր սպանեց մի աղվես. Երեխան գնաց պարտեզը»:

Սակայն զգալով, որ միայն նշանակությամբ առանձին հոլով ընդունել հնարավոր չէ, Մալխասյանցը կրկին անդրադառնում է հայցականի ձևին և գտնում, որ հայցականը աշխարհաբարում թեպետ շունի սեփական ձև, բայց ունի կիրառության հատուկ ձև, որով զանազանվում է թե՛ ուղղականից, թե՛ տրականից: Ստ. Մալխասյանցը ի վերջո գալիս է այն եզրակացության, որ, իբր թե, «Հայցականը ձևով ո՛չ ուղղական է, ո՛չ տրական, այլ առանձին տեսակ խառնուրդ երկու ձևերի, ուստի և այս առանձնահատկության շնորհիվ պետք է առանձնապես հիշվի քերականության մեջ»:

Ստ. Մալխասյանցի հոգվածին Մ. Արեղյանը պատասխանեց մի գրքուկով՝ «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (Վաղարշապատ, 1908), որտեղ նա կրկին գալիս է այն անժխտելի եզրակացությանը, որ աշխարհաբարում առանձին հայցական հոլով չկա, որովհետև դրա հա-

մար հատուկ ձև չկա: Մեր հին լեզվի՝ գրաբարի հայցական հոլովը մեռել է, և աշխարհաբարում նրա տեղ անցել են ուղղականն ու տրականը, ուստի այդպես էլ պետք է ներկայացնել քերականության մեջ:

Իր հետագա աշխատություններում ևս Մ. Արեղյանը այն տեսակետն էր զարգացնում, որ արևելյան աշխարհաբարը ձևականորեն (= ձևավորանորեն) միայն 5 հոլով ունի: Նա իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ գրում է. «Արևելյան աշխարհաբարը ձևականորեն միայն հինգ հոլով է զանազանում՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական»<sup>5</sup>, Բայց նա միաժամանակ գտնում է, որ բոս նշանակության առանձին հոլով պետք է համարել նաև կոչական, հայցական ու սեռական հոլովները: Հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ Մ. Արեղյանը կոչական, հայցական ու սեռական բառերը պահում է իբրև շարահյուսական տերմիններ: Նա գրում է. «Թեպետ և մեր աշխարհաբարն իսկապես շունի կոչական, հայցական և սեռական հոլովներ, այսինքն այդ հոլովներն այլևս ոչ թե բառի առանձին ձևերով են որոշվում, այլ միայն գրության կամ կիրառության մեջ, բայց և այնպես՝ կոչական, հայցական և սեռական անունները իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ ոչ միայն ընդունելի, այլև նույնիսկ անհրաժեշտ են, ի նկատի ունենալով, որ մեր քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ»<sup>6</sup>:

Նույնը նա գրել է մոտ 20 տարի անց «Հայոց լեզվի տեսություն» գրքում. «Հայցականի հոլովական ձևը լեզվից դուրս է ընկնում, նրա նշանակությունները մասամբ ուղղականին են անցնում, մասամբ՝ տրականին»<sup>7</sup>: «Սեռական և տրական հոլովների ձևական տարբերությունը, որ դեռ կա հին լեզվի մեջ որոշ թվով բառերի համար, աշխարհաբարում բոլորովին վերացել է, և առաջ է եկել մի ընդհանուր հոլով՝ սեռական-տրական, իսկապես մի տրական հոլով, որի կիրառությունն ընդարձակված է սեռականի ֆունկցիայով, այսինքն՝ գործածվում է առանց հոգի նաև իբրև սեռական վերադիր, ինչպես որ մյուս հոլովներն էլ (գործիական, բացառական) անհոգ իբրև վերադիր են գործածվում»<sup>8</sup>:

Մ. Արեղյանի՝ հինգ հոլովի տեսության երկրորդ ֆենադատությանն սկսվեց երեսնական թվականներին Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի կողմից: Այդ քննադատությունն ամփոփված է Գ. Սևակի «Հայոց լեզվի տեսություն» (գիրք Ա, 1939) աշխատության մեջ, որը երկրորդ հրատարակության մեջ 1955 թվին «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» վերնագրով:

<sup>5</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 399:

<sup>6</sup> Աճդ:

<sup>7</sup> Աճդ, էջ 338:

<sup>8</sup> Աճդ, էջ 340:

<sup>4</sup> Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ (արտատպություն «Նոր դպրոց» ամսագրից, Թիֆլիս, 1910):



Գ. Սևակը չի ընդունում հոլովների որոշման ձևային կամ ձևաբանական սկզբունքը: Ենթերկում այն դրույթից, որ հոլովական ձևը և իմաստը հակադրամիասնություն են կազմում, և այդ հակադրամիասնության մեջ առաջնությունը պատկանում է բովանդակությանը, այսինքն՝ հոլովի իմաստին, Գ. Սևակը գտնում է, որ սեռականը և հայցականը անկախ հոլովներ են, և, հետևաբար, ժամանակակից հայերենը, ինչպես ընդունում է ավանդական բերականությունը, ունի յոթ հոլով<sup>9</sup>:

Իհարկե, ձևի և բովանդակության փոխհարաբերության մեջ ընդհանրապես առաջնությունը պատկանում է բովանդակությանը, բայց դրանից բոլորովին էլ չի բխում, թե որևէ լեզվի հոլովները որոշելիս պետք է առաջնությունը տալ հոլովական իմաստին, բառահարաբերությանը, որովհետև լեզվաբանները վաղուց են նկատել, որ հարաբերությունները շատ-շատ են, բազմազան ու բազմապիսի, և եթե հոլովները որոշելիս ելնենք դրանցից, ապա կունենայինք ոչ թե մի քանի, այլ բազում հոլովներ: Իսկ ինչ վերաբերում է հոլովները որոշելիս ձևի և իմաստի հակադրամիասնության մեջ առաջնությունը իմաստին տալու դրույթին, ապա դա հետևողականորեն չի կիրառվում անգամ ? հոլով ընդունող լեզվաբանների կողմից: Այսպես՝ բացառական, գործիական և ներգոյական հոլովները որոշելիս ձևի ու իմաստի հակադրամիասնության մեջ իմաստի առաջնության մասին խոսք լինել չի կարող, որովհետև այդ հոլովները որոշվում են ձևով, և ԻՅ (ծովից), ՈՎ (ծովով), ՈՒՄ (ծովում) վերջավորություն ունեցող բառաձևերը, անկախ նրանց բազմաթիվ ու բազմապիսի հարաբերություններից, համարվում են բացառական, գործիական ու ներգոյական հոլով: Իսկ երբ հարկավոր է որոշել ՁՐՈ (ծով) և Ի (ծովի) վերջավորություն ունեցող բառաձևերի հոլովները, ձևը մղում են երկրորդական գծի վրա, առաջնակարգ են դարձնում ձևի ցույց տված հարաբերությունը և մի միասնություն կազմող ՁՐՈ և Ի ձևերից յուրաքանչյուրը բաժանում են երկուական ձևի, այսպիսով երկու ձևից, երկու հոլովից ստանալով շորսը: Բայց բոլորովին էլ պարզ չէ, թե ինչու ՁՐՈ և Ի ձևերից յուրաքանչյուրը հատկապես բաժանվում է երկու ձևի, երկու հոլովի: Ի՞նչ որ այս ձևերից յուրաքանչյուրը արտահայտում է ոչ թե երկու, այլ, համենայն դեպս, երկուսից ավելի հարաբերություն: Ինչևիցե, հասկանալի է, որ այսպիսի բաժանումը հակասում է գիտական դասակարգման սկզբունքներին: Հոլովները որոշելիս պետք է էլնել մի միասնական սկզբունքից՝ կամ իմաստից, որ գործնականորեն աննպատակահարմար ու անգործադրելի է, կամ ձևից, որ և կիրառվում է մեզ ծանոթ բոլոր լեզուների բերականությունների մեջ:

Չնայած որ յոթ հոլովի տեսությունը ներթնապես հակասական էր,

<sup>9</sup> Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 256:

որովհետև կենդանի լեզվի օրինաչափությունները մի զգալի շափով վերաձևվում էին գրաբարի բերականության կաղապարներով, այնուամենայնիվ, երեսնական թվականներին այն արմատավորվեց միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում և մինչև վաթսուներկան թվականների սկզբները միակ իշխող տեսակետն էր: Սակայն վերջին տարիներս մոտիկ անցյալի հայ բերականագիտական ժառանգության գնահատման և առանձնապես լեզվաբանական նորագույն դպրոցների ու հասանքների առաջ քաշած հարցերի ու դրույթների հետ կապված՝ կրկին առաջացավ այն խնդիրը, թե արդյոք ժամանակակից հայերենի հոլովների հարցը ճիշտ է լուծված: Այսպիսով սկսվեց վեճերի ու տարակարծությունների երեռեղ շրջանը, որ շարունակվում է մինչև այսօր:

Այժմ այս հարցի մասին եղած կարծիքներն ու դրույթները բաժանվում են երեք խմբի: Լեզվաբանների մի մասը պաշտպանում է յոթ հոլովի ավանդական տեսությունը, մի ավելի ստվար մասը գտնում է, թե ժամանակակից հայերենում կա միայն հինգ հոլով, իսկ մի քանի լեզվաբաններ էլ բռնելով միջին դիրք և ժխտելով հայցականը՝ գտնում են, որ սեռականը անկախ հոլով է, և, հետևաբար, հոլովների թիվը վեց է:

Այս երեք տեսակետներն արտացոլված են վերջին տարիներս լույս տեսած լեզվաբանական մի շարք աշխատությունների ու հոդվածների մեջ<sup>10</sup>:

ՀՈՒՈՎԱԿԱՆ ՁԵՎ, ԻՄԱՍՍ ԵՎ ՊԱՇՏՈՆ.— Ժամանակակից հայերենի բերականություններում հիշատակվող հայցական հոլովը չունի ուղղականից ու տրականից տարբեր, իսկ սեռականն էլ տրականից տարբեր բավարար ձևաբանական հատկանիշ, և, հետևաբար՝ ժամանակակից հայերենն ունի հինգ հոլով՝ ուղղական, սեռական-տրական (կամ ուղղակի տրական), բացառական, գործիական և ներգոյական: Սեռական և տրական հոլովները, ինչպես նշված է արդեն, ձևաբանորեն տարբերակված են միայն ութ դերանունների մեջ՝ ես-իմ-ինձ, դու-քո-քեզ, ինք-իր-իրեն, մենք-մեր-մեզ, դուք-ձեր-ձեզ, սա-սրա-սրան, դա-դրա-

<sup>10</sup> Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, Մ. Ասատրյան, Հին և նոր բանավեճեր ժամանակակից հայերենի հոլովական համակարգի շուրջը («Բանբեր Երևանի համալսարանի», 1969, 2), Հ. Բարսեղյան, Մ. Արեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր ինքնատուությունները, Երևան, 1968, Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության ավանդույթային հարցերի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1967, 1), Պ. Ծարաբխանյան, Է. Պիվազյան, Արդի հայերենի հոլովների մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1967, 4), Պ. Պողոսյան, Սեռական հոլովը ժամանակակից հայերենում («Պատմա-բանասիրական հանդես», 1968, 3), Գ. Զահրուկյան, Ժամանակակից հայերենի հոլովական համակարգը, Երևան, 1967, Ա. Պապոյան, Տեղաշարժեր հայերենի հոլովական հարաբերությունում («Պատմա-բանասիրական հանդես», 1968, 4), Ռ. Իշխանյան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1972 և այլն:

դրան և նա-նրա-նրան: Հայերենի մյուս բոլոր բառերը սեռական և տրական հոլովների համար ունեն մի ընդհանուր ձև, որ կարելի է կոչել սեռական-տրական կամ ուղղակի տրական. դա արդեն տերմինաբանություն հարց է:

Այդ հինգ հոլովներից յուրաքանչյուրը ունի իր հատուկ ձևը կամ ձևերը, որոնց բնորոշ պատկերը հետևյալն է. ուղղական—0 (բաղաբ+0), սեռական-տրական—ի (բաղաբ+ի), բացառական—իՅ (բաղաբ+ից), գործիական—ՈՎ (բաղաբ+ով), ներգոյական—ՈՒՄ (բաղաբ+ՈՒՄ): Արդ, ինչպե՞ս կարելի է բնորոշել հայերենի հոլովական ձևերի արտահայտած իմաստները:

Ավանդական քերականությունը սովորաբար հոլովներին շարահյուսական բնորոշում է տալիս, ինչպես՝ ուղղականը ցույց է տալիս նախադասության ենթական, բացառականը՝ անջատման, գործիականը՝ միջոցի խնդիրը. նույն ձևով նաև՝ սեռականը հատկացուցչի հոլովն է, հայցականը՝ ուղիղ խնդրի և այլն: Այսպիսով, հոլովների բնորոշումը տրվում է ըստ այն բանի, թե տվյալ հոլովի համար շարահյուսական ո՞ր պաշտոնն է գլխավոր համարվում: >

Հոլովների շարահյուսական բնորոշումն ու բնորոշումը նորագույն քերականական աշխատություններում իրավացիորեն քննադատության է ենթարկվում և չի ընդունվում<sup>11</sup>:

Եվ իրոք, յուրաքանչյուր հոլով արտահայտում է ոչ թե մեկ, այլ մի քանի, երբեմն և շատ շարահյուսական հարաբերություններ, և առանձին դեպքերում անհնար է որոշել, թե այդ հարաբերություններից հատկապես որը պետք է գլխավոր համարել: Սրանից ինքնին բխում է, որ հոլովական իմաստը չի կարելի նույնացնել հոլովի արտահայտած կոնկրետ հարաբերության, շարահյուսական պաշտոնի, ֆունկցիայի հետ: Այսպես՝ «Աշակերտը պարզևատրվեց դիրեկտորից». «Նա գլուզից է եկել». «Բարկությունից կասկարմիր էր կտրել». «Աշնանից հիվանդ է» նախադասությունների մեջ բացառական հոլովով դրված բառաձևերը տարբեր շարահյուսական հարաբերություններ են արտահայտում՝ հանդես գալով ներգործող խնդրի և տեղի, պատճառի ու ժամանակի պարագաների պաշտոններով: Նույն հոլովի գործածությունը շարահյուսական տարբեր պաշտոններով պայմանավորված է երկու հանգամանքով՝ տվյալ հոլովի հետ հարաբերության մեջ մտնող բառերով և տվյալ հոլովով գործածված բառի իմաստով: Թե ինչու վերևի նախադասության մեջ դիրեկտորից բառաձևը հատկապես ցույց է տալիս ներգործող խնդիրը, պայմանավորված է ոչ թե սոսկ այդ բառաձևով, այլև պարզեվատրվեց բայի սեռով, և եթե այդ բայը փոխարինենք մի ուրիշով, ասենք հետացավ բայով՝ «Աշակերտը հետացավ դիրեկտորից», ապա դի-

<sup>11</sup> Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը:

րեկտորից բառաձևը, այդ բայի բառիմաստով պայմանավորված, մի նոր հարաբերություն կարտահայտի (անջատման խնդիր): Մյուս կողմից՝ թե ինչու գլուզից բառաձևը սովորաբար հանդես կգա տեղի, իսկ աշնանից բառաձևը ժամանակի պարագայի պաշտոնով, պայմանավորված է նրանով, որ գլուզ տեղի իմաստ է արտահայտում, տեղ ցույց տվող գոյական է, իսկ աշնան ժամանակի իմաստ է արտահայտում, ժամանակ ցույց տվող գոյական է:

Ինչքան էլ -որ վերևում բերված դիրեկտորից, գլուզից, աշնանից, բարկությունից բառաձևերը տարբեր շարահյուսական հարաբերություններ են արտահայտում, բայց և այնպես նրանց մեջ կա իմաստային ընդհանրություն, որ պայմանավորված է իՅ ձևույթի իմաստով, Այսպես և՛ մուրհավ, կամուրջով, ընկերացով, ամսով և նման բառաձևերը ինչպիսի տարբեր շարահյուսական հարաբերություններ էլ որ արտահայտեն, համեմայն դեպս դրանց մեջ կա մի ընդհանրություն, որ բխում է ՈՎ ձևույթի իմաստից: Այսպիսով, պարզ է դառնում, որ բնութաշել հոլովների իմաստները՝ նշանակում է բնորոշել հոլովները կազմող ձևայինների իմաստները: Սակայն պետք է նկատել, որ հոլովական ձևերը այնքան վերացական ու ընդհանուր իմաստներ են արտահայտում, որ հնարավոր չէ դրանց տալ մասթեմատիկական ճշգրտություն ունեցող բնորոշումներ:

Մյուս կողմից՝ յուրաքանչյուր հոլովի ընդհանուր իմաստը բնորոշելուց առաջ գոնև պետք է ներկայացնել տվյալ հոլովի գլխավոր նշանակություններն ու շարահյուսական կիրառությունները, որոնց մասնավոր հատկանիշներն անտեսելով և միայն ընդհանրությունները հաշվի առնելով՝ կստանանք տվյալ հոլովի ձևարանական իմաստը:

Ուղղակի և ն ու Վ (գ ր ո ձ և).— Ուղղականը ձևով հակադրվում է մյուս բոլոր հոլովներին նրանով, որ հատուկ վերջավորություն չունի. սա ելակետային ձև է և կոչվում է ուղիղ հոլով՝ ի հակադրություն մյուս հոլովների, որոնք կոչվում են թե՛ հոլովներ: Մի շարք լեզուներում (օրինակ՝ ռուսերեն, գերմաներեն) ուղղականը շարահյուսական պաշտոններով հակադրվում է մյուս հոլովներին նրանով, որ եթե սրբանք արտահայտում են գոյականի կախյալ դրությունը, ապա ուղղականն արտահայտում է գոյականի անկախ դրությունը: Սակայն արդի հայերենում ուղղականի և թե՛ք հոլովների միջև այսպիսի հակադրություն չկա, և ուղղականն արտահայտում է գոյականի ինչպես անկախ դրությունը (օրինակ՝ ուղղականը որպես ենթակա՝ «Մի աշակերտ եկավ»), այնպես էլ կախյալ դրությունը (օրինակ՝ ուղղականը որպես ուղիղ խնդիր՝ «Մի աշակերտ տեսա»):

Ժամանակակից հայերենում ուղղականի հակադրությունը մյուս հոլովներին և գերիշխող դիրքը նրանց նկատմամբ արտահայտվում է նրբանով, որ ուղղականի ձևով են անվանվում առարկաներն ու երևույթ-

ները, ինչպես՝ ծառ, տուն, մարդ, ուսանող, աշխատանք, գրասեղան և այլն:

Ուղղական հոլովով արտահայտվում են. ենթական, օրինակ՝ «Եվ ահա այսօր մեռնում է անվանի ֆաղսֆացին, խելացի մարդը, տոկոս վաճառականը» (Շիրվ.). անվանական անդեմ նախադասության գլխավոր անդամը, օրինակ՝ «Գալուկ դաշտեր, մերկ անտառ... — Մահացողի տխուր կյանք... Անձրև, ֆամի, սև կամար... — Սրտակտուր հեկեկանք» (Տեր.). ստորագելիական վերագիրք, օրինակ՝ «Առաջին ձիավորը ճագետ էր, իսկ երկրորդը՝ նկարիչ» (Բակ.). գոյական որոշիչը, օրինակ՝ «Առանց հոգսերի ու առանց վշտի հաղում էինք մենք էն երազ հովտում» (Թում.). կոչականը, օրինակ՝ «Հրաշք-աղբիկ, գիշերների քաղաքի, Ճառագայթող քո աչքերով դու եկար» (Տեր.). իրերի կամ իրի առում ունեցող բաների ուղիղ խնդիրը, օրինակ՝ «Երբ ամպերը ծածկում են ֆար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին»։ «Բացուսներում միհավ էր որսում, արտերի մոտ կախավ ու լուր» (Բակ.). գործողության վախճանակետի տեղի պարագան, օրինակ՝ «Եկավ տուն, պանկեց անկողին ու այլևս չկարողացավ վեր կենալ» (Շիրվ.). ժամանակի պարագան՝ գործողության կատարման ժամանակի կամ ժամանակի տևողության շափ ու քանակի իմաստով, օրինակ՝ «Հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր» (Բակ.). շափ ու քանակի պարագան, օրինակ՝ «Երեք օրում գրոսաշրջիկներն անցան 700 կիրովետր»:

Բացի նշվածներից, ուղղականն արտահայտում է նաև այլ մասնակի նշանակություններ:

Առաջին հայացքից անբացատրելի է թվում, որ իրարից այնքան տարբեր կամ իրար «հակասող» այնպիսի նշանակություններ, ինչպիսիք են, առենք, ենթակայի և ուղիղ խնդրի ու վախճանակետի տեղի պարագայի նշանակությունները, օրինակ՝ «Տունը գեղեցիկ է»։ «Տունը նրանք են կառուցել»։ «Գնացինք այդ հյուրընկալ տունը», արտահայտվում են միևնույն ձևի միջոցով: Սակայն այդ բանը հնարավոր է դառնում միայն այն պատճառով, որ ուղղականը հատուկ վերջավորություն չունի: Բերականոնեմ ազատ, շահմանափակված, բացարձակ ձև է: Իսկ հայտնի է, որ վերջավորության առկայությունը այս կամ այն շափով սահմանափակում է բառաձևերի գործածության ոլորտները:

Ինչևիդ քերականական ազատ ձև՝ ուղղական հոլովը ցույց է տալիս բառիմաստն իր ամբողջ ծավալով, բացարձակ ձևով, առանց լրացուցիչ նշանակությունների: Լրացուցիչ նշանակություններ նա ստանում է միայն բառակապակցությունների մեջ՝ արտահայտելով զանազան իմաստներ և հանդես գալով նախադասության ամենատարբեր անդամների պաշտոններով: Սակայն ինչպիսի նշանակություններ ու շարահյուսական հարաբերություններ էլ որ արտահայտեն ուղղական հոլովով

դրված բառաձևերը, նրանք բոլորը միավորվում են մի հոլովական իմաստի տակ նրանով, որ ցույց են տալիս բառիմաստն իր ամբողջ ծավալով, առանց որևէ սահմանափակման, ինչպես՝ «Քաղաքը զարթնեց գիշերային քնից»։ «Սիրելի՛ ֆաղաֆ, նորից քո մայրական գրկում եմ»։ «Երևանը նորակառույց ֆաղաֆ է»։ «Նա տեսել է այդ հեթաթային ֆաղաֆը»։ «Կրկին գնաց իր սիրելի ֆաղաֆը» և այլն:

Սեռական-տրական կապ (Ի, ՈՒ, Ան, ՎԱ և այլ ձևեր)։— Սեռական-տրական հոլովի համար պետք է տարբերել երկու հիմնական կիրառություն՝ սեռական-տրականը որպես գոյականի կամ գոյականաբար գործածված բառի վերագիր (սեռական) և սեռական-տրականը որպես բայի, բայանվան կամ անվանի խնդիր (տրական):

Մ. Աբեղյանը սահմանելով սեռականը, այսինքն՝ իբրև վերագիր կիրառվող տրական հոլովը, գրում է. «Սեռականը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է մի ուրիշ առարկա, իսկ թե ինչ տեսակի է այս վերաբերությունն ամեն առանձին դեպքում, պետք է խոսքի կապակցությունից հասկացվի. օրինակ՝ Տիգրանի պատկերը կարող է հասկացվել՝ Տիգրանին պատկանած պատկերը (որ Տիգրանն ունի իբրև սեփականություն, ստացվածք), Տիգրանին ներկայացնող պատկերը (որ պատկերահանը Տիգրանից է քաշել), Տիգրանի նկարած պատկերը (որ Տիգրանն իբրև պատկերահան ուրիշից է քաշել), Տիգրանի ձեռքին բռնած պատկերը, Տիգրանի ուղարկած պատկերը և այլն»<sup>12</sup>:

Բառակապակցությունների մեջ արտահայտված կոնկրետ իմաստները որոշ խմբավորման ու մասնակի ընդհանրացման ենթարկելով՝ Մ. Աբեղյանը տարբերում է ստացական (գյուղացու ձին), ծագման (կատվի ձագը), ենթակայական (ամպի գոռալը), առարկայական (շենքի կառուցումը), մասնական (թշնամիների մի խումբ), նյութի (ծաղիկների փունջ), պարունակության (պատերազմի դաշտ), տեղի և ժամանակի (նրա մատի մատանին. այսօրվա գործը), գնի և արժեքի (հինգ ռուբլու ապրանք), որակական (գործի մարդ, որսի շուն), բացահայտող (Հրեաստանի աշխարհ՝ փի. Հրեաստան աշխարհ) սեռականներ<sup>13</sup>: Վ. Առաքելյանը այդ խմբերի վրա ավելացնում է նորերը՝ գերադրության (քաշերի քաշը), պատմական (աշխատանքի երգ = երգ աշխատանքի մասին), միջոցի (քամու ջրաղաց) սեռականներ<sup>14</sup>:

Իհարկե, հաշվի առնելով բառակապակցությունների ավելի մասնակի խմբերը՝ նորանոր ավելի մասնակի նշանակություններ կարելի էր անջատել, բայց դա հարցի էությունը չէր փոխի, և ընդհանուր սահմանումը կմնար նույնը՝ (սեռական-տրականը վերագրի ֆունկցիայով

<sup>12</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 419—420:

<sup>13</sup> Անդ, էջ 420—428:

<sup>14</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջք 80, 85, 89:

ցույց է տալիս առարկան, որի հետ վերաբերություն ունի մի այլ առարկա, իսկ այդ վերաբերության կոնկրետ նշանակությունները որոշվում են միայն բառակապակցություններով:

Սեռական-տրականը որպես բայից, բայառուներից կամ ածականից կախված ձև ցույց է տալիս. հանգման կամ մատուցման խնդիրը, օրինակ՝ «Հարսը փափուկ քայլերով մոտեցավ հեծանին» (Բակ.). «Արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի մեջ զգաց անսովոր ցուրտ» (Շիրվ.). անձերի կամ անձի առում ունեցող բառերի ուղիղ խնդիրը, օրինակ՝ «Գոփեի ու կողոպտել է խեղճներին, նա նույնիսկ թունավորել է իր մի բնկերոջը (Շիրվ.). «Հասոն ֆարերին էր դողացնում... գեփյուտին ողբացնում» (Փափ.). նպատակի պարագան, օրինակ՝ «Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի» (Թում.). տեղի պարագան, օրինակ՝ «Փերիները սարի գլխին Հավաքվեցին գիշերով» (Թում.). ժամանակի պարագան, օրինակ՝ «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան» (Տեր.):

Սեռական-տրական հոլովն արտահայտում է նաև այլ մասնակի նշանակություններ:

Այսբանից հետո ինչպե՞ս կարելի է բնորոշել սեռական-տրական հոլովը:

Եթե ամենաընդհանուր ձևով սահմանվի սեռական-տրականի իմաստը, ապա դա պետք է համարվի հանգման իմաստը, որը սեռական-տրականի՝ վերադրի պաշտոնում հանդես է գալիս որպես առարկայական հանգում (վերաբերություն, ստացականություն), իսկ ոչ վերադրի պաշտոնում՝ որպես գործողության հանգում (սովորվածություն դեպի առարկան), իր այս նշանակությամբ սեռական-տրական հոլովը անմիջաբար հակադրվում է բացառականին, որը ցույց է տալիս գործողության ելակետը կամ սկզբնակետը, օրինակ՝ «մոտենալ, տալ, միանալ մեկին, մի բանի», բայց՝ «հեռանալ, վերցնել, անջատվել մեկից, մի բանից»:

Բացառական հոլով (ԻՑ և ՈՒՑ ձևեր). — Բացառական հոլովը խոսքի մեջ արտահայտում է զանազան շարահյուսական հարաբերություններ՝ հանդես գալով տարբեր խնդիրների ու պարագաների պաշտոններով:

Բացառական հոլովով արտահայտվում են. անջատման խնդիրը, օրինակ՝ «Կայծակից ու որոտից էիր փախցնում ինձ՝ քո վերջին զավակին» (Անան.). ներգործող խնդիրը (կրավորական սեռի բայերի հետ), օրինակ՝ «Սամվելը շատ սիրված էր ժողովրդից» (Րաֆֆի). վերաբերության խնդիրը, օրինակ՝ «Ինչպե՞ս եք ապրում, դու ձեզնից պատմի, Չեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից» (Թում.). մասնական խնդիրը, օրինակ՝ «Յարս էլ խմե՞ց էդ ջրից» (Թում.). ելման տեղի պարագան, օրինակ՝ «Հետո թևը շարժված հավքի պես Սոնան դուրս թռավ հեծա-

նից» (Բակ.). սկզբնակետի ժամանակի պարագան, օրինակ՝ «Մենք ամենքս հյուր ենք կյանքում Մեր ծննդյան փուլ օրից» (Թում.). պատճառի պարագան, օրինակ՝ «Յավից նրա դեմքը կծկվում էր» (Բակ.). համեմատության խնդիրը, օրինակ՝ «Մա՛յր, քո սիրտը Ալագյազիցն էլ է բարձր, Արտուից էլ ու Տիգրիսի ձորից էլ խորն է ու անտակ» (Անան.).

Բացառականն արտահայտում է նաև այլ մասնակի իմաստներ:

Բացառականի ընդհանուր հոլովական իմաստը ելակետի կամ սկզբնակետի, հեռացման կամ անջատման ձևաբանական իմաստն է, որը շարահյուսական տարբեր կապակցությունների մեջ տարբեր մասնակի դրսեւորումներ ու իմաստային երանգներ է ունենում:

Գ ո Ր Ծ Ի ա կ ա ն հ ո լ ո Վ (ՈՎ և Բ ձևեր). — Գործիական հոլովով արտահայտվում են. միջոցի խնդիրը, օրինակ՝ «Քո արյունով կհանգրենեմ» (Րաֆֆի). տեղի պարագան՝ պատասխանելով որտեղով հարցին, օրինակ՝ «Խորն աշունքին լոռու սարերով անց կենալիս մի գյուղում մութը վրա հասավ» (Թում.). ժամանակի պարագան, օրինակ՝ «Փերիները սարի գլխին հավաքվեցին գիշերով» (Թում.). ձևի պարագան, օրինակ՝ «Ամբողջ կյանքն անց է կացրել անդուլ գործունեությամբ» (Շիրվ.). միասնության պարագան, օրինակ՝ «Սամվելը դուրս եկավ Ողական ամրոցից 300 ձիավառով» (Րաֆֆի). պատճառի և հիմունքի պարագան, օրինակ՝ «Ներսես Մեծը նույն կայսրի հրամանով արքայված էր Պատմոս անբնակ կղզին» (Րաֆֆի):

Գործիական հոլովն արտահայտում է նաև հատկանշային, սահմանափակման և այլ հարաբերություններ:

Բերված բոլոր կապակցությունների մեջ գործիականը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով, օգնությամբ կամ միասնությամբ ու ուղեկցությամբ կատարվում է գործողությունը<sup>15</sup>, ուրեմն հենց դա էլ գործիականի ամենաընդհանուր հոլովական իմաստն է:

Ն ե Ր Գ ո յ ա կ ա ն հ ո լ ո Վ (ՈՒՄ ձև). — Ներգոյական հոլովը ցույց է տալիս տեղը, որի մեջ կամ սահմաններում կատարվում է գործողությունը՝ հանդես գալով տեղի պարագայի պաշտոնով, օրինակ՝ «Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ ֆաղափում» (Շիրվ.). ժամանակը, որի մեջ կամ ընթացքում կատարվում է գործողությունը՝ հանդես գալով ժամանակի պարագայի պաշտոնով, օրինակ՝ «Քառասուն տարում «ախ» չէր քաշել դեռ նա իրեն օրում» (Թում.):

Ներգոյականը առանձին դեպքերում գործածվում է նաև սահմանափակման նշանակությամբ, օրինակ՝ «Ամեն բանում հմուտ», «Ուտել-խմելում հավասարը շունեցող» և այլն: Սրանք սովորաբար արտահայտվում են մեջ կապով:

<sup>15</sup> Հմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Գ. Զանգուկյան, Ժամանակակից հայոց լեզվի հոլովման համակարգը:

Ներգոյականը ժամանակակից հայերենի միակ հոլովն է, որ գործածվում է միայն պարագայական նշանակութամբ՝ ցույց տալով, ինչպես նշեցինք, տեղը, որի մեջ կամ սահմաններում կա կամ լինում է մի բան, և ժամանակը, որի մեջ կամ ընթացքում կա կամ լինում է մի բան:

Ուրեմն՝ ներգոյականի ընդհանուր հոլովական իմաստը կարելի է համարել պարունակման իմաստը, որը տեղի իմաստ ունեցող բաների հետ հանդես է գալիս որպես տեղային պարունակություն, իսկ ժամանակի իմաստ ունեցող բաների հետ՝ ժամանակային պարունակություն:

Ներգոյականը մյուս հոլովներից տարբերվում է ոչ միայն իմաստային, այլև կիրառական-ծավալային սահմանափակությամբ: Ժամանակակից հայոց լեզուն ընդհանրապես չհոլովվող բաներ չճանաչելով հանդերձ՝ ունի բառերի մի շարք խմբեր, որոնք ներգոյական հոլով չեն կազմում կամ որոնց ներգոյականը սովորական չէ: Այսպես են, օրինակ, մարդկանց ու կենդանիների հատուկ ու հասարակ անունները և բազմաթիվ սովորական բառեր:

Բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում արտահայտել այսպիսի բառերի ներգոյականի իմաստը, կիրառվում է սեռական-տրականը մեջ կապի հետ, օրինակ՝ Գուրգենի մեջ, բանվորի մեջ, իմացության մեջ, զարեան մեջ և այլն: Մեջ կապը դրվում է նաև բուն ներգոյական ունեցող բառերի վրա, օրինակ՝ Բաղամուսի փողով, Բաղամուսի մեջ, ամուսնավորված մեջ, տարում տարվա մեջ և այլն: Մրանք համանիշներ են՝ իմաստային և ոճական կիրառության տարբերություններով:

## ՀՈԼՈՎՈՒՄ

### ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԼՈՎԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՒՄ.— Բոլոր բառերը միատեսակ չեն հոլովվում: Բառերի տարբեր խմբեր, կապված դրանց ձևային, իմաստային և պատմական առանձնահատկությունների հետ, հոլովական ձևերի կազմության ինչ-ինչ առանձնահատկություններ են երևան բերում: Այդ տարբերությունները ցայտուն հանդես են գալիս սեռական-տրական հոլովում, օրինակ՝ հաց-հացի, զարի-զարու, տուն-տուն, ձուկ-ձկան, օր-օրվա, ֆույր-գրու, հայր-հոր, Գրիգորենի-Գրիգորենի: Ըստ սեռական-տրական հոլովի ձևավորման էլ ժամանակակից հայերենում տարբերում են Ի, ՈՒ, Ա, ԱՆ, ՎԱ, ՈՋ, Ո, Յ հոլովումները: Կան նաև մասնակի այլ հոլովումներ, որոնք հնացած են կամ գործածվում են խիստ սակավաթիվ բառերի մեջ, օրինակ՝ դուստր-դուստր, հանգիստ-հանգստՅԱՆ և այլն: Սեռական-տրականի այդ տարբերակիչ

նշանները կոչվում են հոլովիչներ: Դրանք երբեմն պահպանվում են նաև մյուս թեք հոլովների մեջ, բայց ավելի հաճախ չեն պահպանվում:

Հայերենի հոլովական ձևերը կազմվում են երեք կերպով<sup>6</sup>.

ա) Բառի վրա հոլովական վերջավորությունների ավելացմամբ, օրինակ՝ ֆար-ֆար + Ի, երգել-երգել + ՈՒ, օր-օր + ՎԱ, ընկեր-ընկեր + ՈՋ:

բ) Բառի վերջնահնչյուն ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ, օրինակ՝ ոսկի-ոսկու, (Ի/ՈՒ), Գրիգորենի-Գրիգորենի (Ք/Յ):

Այս երկու տիպերը միասին կոչվում են արտափն բեկում:

գ) Բառամիջի ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ, օրինակ՝ տՈՒՆ-տԱՆ (ՈՒ/Ա), հԱՅՐ-հՈՐ, (ԱՅ/Ո): Այս տիպը կոչվում է ներփն բեկում:

Հոլովման ժամանակ ձայնավորների, երկհնչյունների և բաղաձայնների փոփոխությունները, որոնք ունեն ձևաբանական արժեք, կոչվում են հերթազույրություններ:

Հայերենում բացարձակորեն գերակշռում է արտաքին թեքումը, իսկ ներքին թեքումը քիչ թե շատ լայն տարածում չունի: Մյուս կողմից՝ հայերենում մաքուր ներքին թեքում գոյություն չունի, քանի որ սեռական-տրականում ներքին թեքում ունեցող բառերը մյուս թեք հոլովներում ստանում են արտաքին թեքման սովորական ԻՅ, ՈՎ, ՈՒՄ վերջավորությունները, օրինակ՝ մԱՅՐ-մՈՐ-մՈՐԻՅ-մՈՐՈՎ, հԱՅՐ-հՈՐ-հՈՐԻՅ-հՈՐՈՎ՝ այսպիսով ենթարկվելով արտաքին թեքման:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ արտաքին ու ներքին թեքում հասկացությունները հաճախ խառնվում են և կարող են որոշվել լեզվի պատմական տվյալները հաշվի առնելով: Այսպես՝ լեռ-լեռան, մուկ-մկան, ծագում-ծագման, ցասում-ցասման և այլ տիպի դեպքում ժամանակակից լեզվի տեսակետից գործ ունենք արտաքին թեքման հետ, բայց երբ հաշվի ենք առնում, որ այս բառերը զրաբարում ունեցել են ն վերջնահնչյունը, որը ժամանակակից լեզվում վերականգնվում է հոգնակի և բառակազմության ժամանակ (լեռ-լեռներ-լեռնապար, մուկ-մկներ, մկնդեղ, ծագում-ծագումնաբանական, ցասում-ցասումնալից), կարող ենք խոսել այս բառերի ներքին թեքման մասին:

Նպատակահարմար է ժամանակակից հայերենի հոլովների կազմությունը ներկայացնել ըստ եզակի և հոգնակի հոլովումների:

ԵԶԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՄ.— Ժամանակակից հայերենում բառերի հոլովման տարբերությունները փաստորեն հանդես են գալիս միայն եզակիում, իսկ հոգնակի թվում, ինչպես ստորև կտեսնենք, լեզուն հասել է հոլովական ձևերի կազմության միօրինակության:

ՈՒՂՂԱԿԱՆ ԵՆՈՂՈՎ.— Հայերենում եզակի ուղղականը որևէ վերջավորություն չի ստանում կամ որ նույնն է՝ ունի զրո վերջավորություն:

<sup>6</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը:

ինչպես բանվոր+0, մարդ+0, ծան+0, տուն+0, հայր+0 և այլն: Սակայն կա այն տեսակետը, թե ուղղականի ի վերջնահնչյունը, ինչպես՝ ոսկի, գարի, այգի, տաբի և այլն, պետք է դիտել որպես վերջավորութուն<sup>17</sup>: Այս դրույթը պատճառաբանվում է նրանով, որ ուղղականի ի վերջնահնչյունը թեք հոլովներում փոխարինվում է կամ կարող է փոխարինվել հարացույցային վերջավորութուններով, ինչպես՝ ոսկի-ոսկով, գարի-գարով, այգի-այգով, տաբի-տաբով: Բայց բառավերջի որևէ հնչույթ կամ հնչույթախումբ վերջավորութուն համարվելու համար բավական չէ, որ տվյալ հնչույթը կամ հնչույթախումբը փոխարինվի հարացույցային վերջավորութուններով: Դրա համար անհրաժեշտ է նաև երկրորդ պայմանը, այն, որ տվյալ հնչույթը կամ հնչույթախումբը ձևաբանական իմաստ արտահայտի և այսպիսով հնարավորություն ստեղծի բառը տարբալուծելու հիմքի և վերջավորության: Այս տեսակետից գինի, այրի, տաբի, գարի, ազավնի և այլ բառերի մեջ ի հնչույթը ձևաբանական իմաստ չունի, որի պատճառով էլ այս բառերը չեն կարող տարբալուծվել գին+ի, այր+ի, տաբ+ի և այլն մասերի: Սրանից էլ ինքնին բխում է, որ ի հնչույթը ուղղականի վերջավորություն համարվել չի կարող: Մեր գիտակցության մեջ ի-ով վերջավորվող արմատական բառերը, ինչպես՝ գինի, այգի, գարի, տաբի և այլն, իրենց կազմության մեջ ունենում են տարբերվում մյուս ձայնավորներով վերջացող արմատական բառերից, ինչպես՝ երեխա, աբա, շրթա, բոպ, բագ, առու, կատու և այլն:

Այսպես, ուրեմն՝ եզակի ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է, հոլովական հատուկ վերջավորություն չունի կամ, այլ կերպ ասած, նրա վերջավորությունը գրո է բոլոր բառերի համար:

Ս ե ո ա կ ա ն-տ ր ա կ ա ն հ ո լ ո Վ .— Սեռական-տրական հոլովը, ինչպես նշել ենք արդեն, կազմվում է երկու կերպ՝ արտաքին և ներքին թեքմամբ: Վերլուծենք դրանք առանձին-առանձին:

Արտաքին թեքման հոլովումներ

Ի հ ո լ ո Վ ո Վ .— Սեռական-տրականում ի վերջավորությունն են ստանում հայերենի գոյականների ճնշող մեծամասնությունը, այլև գոյականաբար գործածվող բառերը: Ի հոլովումը հայերենի մյուս բոլոր հոլովումներից տարբերվում է նրանով, որ այս հոլովման ենթարկվող բառերը ո՛չ ձևաբանորեն, ո՛չ էլ իմաստաբանորեն տարբերակված չեն: Ահա այս է պատճառը, որ տրվում է այս հոլովման գործածության ուղորտի ոչ թե դրական, այլ բացասական բնորոշում. «Ի հոլովման ենթարկվում են այն բոլոր բառերը, որոնք չեն մտնում որևէ այլ հոլով-

<sup>17</sup> Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 234:

ման կատեգորիայի մեջ»<sup>18</sup>: Բայց այսքան ընդարձակ այս բնորոշումը ևս թերի է, որովհետև մյուս հոլովումների մեջ մտնող բառերի մի ըզգալի մասը կարող է հոլովվել նաև ի հոլովմամբ, ինչպես՝ ծագում-ծագմանե||ծագումի (այս ձևով նաև ՈՒՄ ածանցով կազմված բոլոր գոյականները), ձյուն-ձյանե||ձյունի, ամիս-ամսվա||ամսի, ընկեր-ընկերոջ||ընկերի, Գուրկի-Գուրկու||Գուրկիի և այլն:

Ի հոլովումը ժամանակակից հայերենի ամենակենսունակ հոլովումն է և կոչվում է ընդհանրական կամ հասարակ հոլովում:

ՈՒ հ ո լ ո Վ ո Վ .— Ու հոլովումն ունի երկու տարբերակ՝ Ի/ՈՒ-ոսկի-ոսկով, այսինքն՝ սեռական-տրականի կազմություն Ի/ՈՒ հերթագայության և Օ/ՈՒ-գրել-գրելով, այսինքն՝ սեռական-տրականի կազմություն սոսկ վերջավորության կցումով:

ա) Ի/ՈՒ հերթագայության սեռական-տրական հոլով են կազմում ի-ով վերջավորվող բառերը (լինեն պարզ, թե բաղադրյալ), ինչպես՝ հոգի, որդի, ապակի, գինի, գարի, թշնամի, պատանի, ոսկի, աղավնի, մորթի, գոտի, բանվորուհի, ուսուցչուհի, ուսանողուհի, ֆաղաֆացի, դաշտեցի, երևանցի, ուռենի, տանձենի, խնձորենի, հայելի և այլն: Այսպես և՛ ի-ով վերջավորվող հայ և օտարազգի հատուկ անունները, օրինակ՝ Լոդի-Լոու, Մեդրի-Մեդրու, Շամախի-Շամախու, Ռչտունի-Ռչտունու, Բաֆֆի-Բաֆֆու, Գուրկի-Գուրկու, Օստրովսկի-Օստրովսկու, Գարիբալդի-Գարիբալդու, Տոլյատի-Տոլյատու և այլն:

Սակայն ի-ով վերջավորվող օտարազգի հատուկ անունները կարող են հոլովվել նաև ի հոլովմամբ՝ միտում ունենալով պահելու բառի ուղիղ ձևի պատկերը: Ինչպես՝ Գուրի-Գուրիի, Սոչի-Սոչիի, Քենեդի-Քենեդիի, Տոլյատի-Տոլյատիի: Չի բացառված նաև ի-ով վերջավորվող հայերեն բառերի ի հոլովումը, օրինակ՝ Մեդրի-Մեդրիի, Անի-Անիի, այրի-այրիի և այլն:

բ) ՈՒ վերջավորության կցումով սեռական-տրական հոլով են կազմում:

I. Բոլոր բայերի անորոշ դերբայները, ինչպես՝ գրել-գրելու, վագել-վագելու, խաղալ-խաղալու, դողալ-դողալու, զգալ-զգալու, բարձրանալ-բարձրանալու և այլն:

II. Ամուսին (ամուսնու), անկողին (անկողնու), մարդ (մարդու), աստված (աստծու), երբեմն նաև դառ (դարու) բառը:

III. Ի վերջնահնչյուն ունեցող միավանկ ձի բառը:

Ա ն հ ո լ ո Վ ո Վ .— Սեռական-տրականում Ան վերջավորությունն են ստանում:

I. ՈՒՄ (զրբ. ՈՒՄՆ) ածանցով կազմված բայանունները՝ կատարում-

<sup>18</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 265:

կատարման, ծագում-ծագման, արձան, բորբոսում, շարժում, հեռացում գզացում, հիացում և այլն, որոնք շատ մեծ թիվ են կազմում:

II. Գրաբարում ն վերջնահանջուն ունեցող հետևյալ միավանկ բա-  
սերբ. բեռ-բեռն, (բեռի), գառ-գառն, դուռ-դուն, եզ-եզն, բոռ-  
բոռն (բոռի), հուռ-հուն, ձուկ-ձկն, մուկ-մկն, լեռ-լեռն, կուռ-  
կուն, ծունկ-ծնկ (ծնկի), ծոռ-ծոռն (ծոռի):

III. Գարուն, աշուն, ամառ, ձմեռ բառերը: Ամառ և ձմեռ բառերը,   
ինչպես և գարուն ու աշուն բառերի ժողովրդական գարունք և աշունք   
ձևերը, որպես ժամանակ ցույց տվող բառեր, հոլովվում են նաև ՎԱ   
հոլովմամբ:

IV. Մանուկ հասարակ գոյականն՝ մանկԱն: Մանուկ հատուկ ա-  
նունը ենթարկվում է Ի հոլովման՝ Մանուկի:

ՎԱ հոլովում. — Սեռական-տրականում ՎԱ վերջավորությունն   
են ստանում ժամանակային իմաստ արտահայտող մոտավորապես հե-  
տևյալ բառերը. աշունք-աշունքՎԱ, ամառ-ամառՎԱ, այսօր-այսօրՎԱ,   
առավոտ-առավոտՎԱ, առաջ-առաջՎԱ, այժմ-այժմՎԱ, գարունք-գա-  
րունքՎԱ, գիշեր-գիշերՎԱ, երեկ-երեկՎԱ, էգուց-էգուցՎԱ, ժամ-ժամՎԱ,   
ժամանակ-ժամանակՎԱ, իրիկուն-իրիկՎԱ, կեսօր-կեսօրՎԱ, հիմա-հի-  
միկ-հիմիկՎԱ, հերու-հերՎԱ, ձմեռ-ձմեռՎԱ, շուտ-շուտՎԱ, վաղուց-  
վաղուցՎԱ, տարի-տարՎԱ, ցերեկ-ցերեկՎԱ, օր-օրՎԱ: ՎԱ ձևով կարող   
են հոլովվել նաև ժամանակային իմաստով գործածվող այլ բառեր, օ-  
րինակ՝ գատիկ-գատկՎԱ, պաս-պասՎԱ, հաշ-հաշՎԱ և այլն:

ՎԱ ձևով հոլովվող բառերի մի մասը, ինչպես օրինակներն են ցույց   
տալիս, մակբայական իմաստ ունի կամ հակվում է դեպի մակբայները:

Ժողովրդական բարբառներում և արևմտյան գրականում այս հոլովումը ՎԱն   
ձևն ունի, և այսպես էլ գործածված ենք գտնում, օրինակ, Հ. Թումանյանի ստեղ-  
ծագործություններում, ինչպես՝ «Թրվան մի օր մտիկ գյուղից». «Գիշերվան անքուն   
հավթերն են տխուր Ծվում, ծկթուն իսկարի միջում», «Նստած է շահը. հրա ստա-  
ջին Ահա իրիկվան քեֆի սեղանը»:

Արևելահայ գրական լեզվի ՎԱ ձևն առաջացել է ՎԱն ձևից, որի վերջնահան-  
ջուն Ն-ն ընկել է՝ ընթանալով որպես որոշյալ հոդ: Բայց այդ Ն-ն կրկին հանդես է   
գալիս մյուս թեք հոլովներում, ինչպես՝ օրՎԱնից, տարՎԱնից և այլն:

Պետք է նշել, որ ՎԱ հոլովումը չի ընդգրկում ժամանակ ցույց տը-  
վող բոլոր բառերը: Այսպիսի որոշ բառեր ենթարկվում են Ի հոլովման,   
ինչպես՝ դար-դարի (դարու), բապե-բոպեի, վայրկյան- վայրկյանի, այս-  
պես և բոլոր ամսանունները՝ հունվար-հունվարի, մարտ-մարտի, մա-  
յիս-մայիսի, բայց օրերի անուններն արդեն ենթարկվում են ՎԱ հոլով-  
ման՝ երկուշաբթի-երկուշաբթվա, չորեքշաբթի-չորեքշաբթվա, ուրբաթ-  
ուրբաթվա և այլն: Մյուսն էլ ավելի հաճախ գործածվում են երկուշաբթի   
օրվա, չորեքշաբթի օրվա, ուրբաթ օրվա և այլն ձևով:

Մյուս կողմից՝ հենց ՎԱ հոլովման ենթարկվող բառերը որոշ կա-  
պակցություններում ՎԱ հոլովմամբ չեն գործածվում: Այսպես, ասում

ենք՝ «Նա կեսգիշերին եկավ». «Կեսօրին տեղ հասավ». «Նշանակված   
ժամին դպրոցում էր». «Գործը վերջացրեց ժամանակին» և այլն: Բայց   
գործածական չեն՝ «Նա կեսգիշերվանը եկավ». «Կեսօրվանը տեղ հա-  
սավ» և այլն:

Այս բոլորը ցույց են տալիս, որ ՎԱ հոլովումն ունի գործածության   
ուրարի որոշակի սահմանափակումներ, շնայած որ ժամանակի իմաս-  
տը նրա մեջ շատ ուժեղ է դրևստրված և այլ իմաստ ունեցող գոյական-  
ներին կարող է տալ ժամանակային իմաստ:

ՈՋ հոլովում. — Այս հոլովման սեռական-տրականը կազմվում   
է ՈՋ վերջավորությամբ, օրինակ՝ կին-կնՈՋ: ՈՋ հոլովման են պատկա-  
նում սակավաթիվ բառեր՝ ֆույր, կին, ընկեր, տեր, այլ և այլ բաղադր-  
յալ բառերը, որոնց վերջին բաղադրիչները սրանք են, օրինակ՝ մորա-  
ֆույր, աիկին, տանալկին, դասընկեր, հոդատեր և այլն:

Հաճախ ՈՋ հոլովման են ենթարկվում նաև աներ (աներոջ), սկե-  
տուր||կեսուր (սկեսուր||կեսուրոջ), տեգր (տեգրոջ) և տալ (տալոջ) բա-  
ռերը:

Ս ե ն ա կ ա ն-տ ր ա կ ա ն ի ա ր տ ա ֆ ի ն թ ֆ մ ա ն ա յ լ ձ և ե ր. —   
Արտաքին թեքման Ո հոլովման է ենթարկվում սեր բառը՝ սիրՈ: Մրա   
հողավոր ձևը լինում է սիրույն կամ սիրուն (այս ձևերն առաջացել են   
հնչյունափոխությամբ՝ գրք. սէր-սիրոյ-սիրույն, աշխ. սիրու-սիրույն-սի-  
րուն): Երբեմն, սեռական-տրականում Ո վերջավորությունն են ստա-  
նում հույս-հուսո, լույս-լուսո, սուգ-սագ, պատիվ-պատվո- հուր-հուր բա-  
ռերը, բայց այս ձևերը սոսկ հնաբանությունների արժեք ունեն, և դը-  
րանց կենդանի ու կանոնավոր հոլովական ձևերն են՝ հույսի, լույսի,   
սգի, պատվի, հրի:

ՎԱն հոլովման է ենթարկվում մահ բառը՝ մահՎԱն:

Արտաքին Ա հոլովման է ենթարկվում աղջիկ բառը՝ աղջկԱ: Մրա   
բացառական հոլովը լինում է աղջկանից, իսկ գործիականը՝ աղջկանով:

Ա ձևով կարող է արտահայտվել նաև առանձին տեղանունների սեռական-տրա-  
կան հոլովը, ինչպես՝ ՄանԱ (ինձ), ՎանԱ (ծով), և այլն: Սակայն դրանք ժամա-  
նակակից հայերենում կենդանի հոլովական ձևեր չեն և գալիս են գրաբարից: Ժողո-  
վրդական բարբառներում սեռական-տրականի կազմությունը Ա վերջավորությամբ,   
որպես գրաբարյան Ա հոլովման շարունակություն, օրինաչափական է, օրինակ՝ Երե-  
վան-Երևան (խաղողը), Էջմիածին-Էջմիածնա (շոքը), Աշտարակ-Աշտարակա (ջու-  
րը), Թիֆլիս-Թիֆլիսա (աղջիկները) և այլն: Մյուսն փառամանակ արտահայտում   
են նաև բացառականի իմաստ: Տեղանունների՝ Ա վերջավորությամբ կազմված սե-  
ռական-տրականի ձևերը արդի հայերենում հնաբանություններ կամ բարբառաբանու-  
թյուններ են, ուստի գրանց այլև չենք անդրադառնալու:

Ժամանակակից հայերենում սեռական-տրական հոլովը կարող է   
կազմվել նաև ՅԱն վերջավորությամբ, ինչպես՝ գալուստ-գալուստՅԱն,   
փախուստ-փախուստՅԱն, ծնունդ-ծննդՅԱն, կորուստ-կորուստՅԱն, հան-

գիտ-հանգստՅԱՆ) Այսպիսի հոլովումը փոխառություն է գրաբարից, և արդի հայերենի համար այս բառերի կենդանի հոլովական ձևերը ի-նով կազմվածներն են (գալստի||գալուստի, փախստի||փախուստի, ժը-նընդի||ծնունդի, կորստի||կորուստի, հանգստի):

**Ներքին թեքման հոլովումներ**

ՈՒ/Ա հոլովում.— Ներքին թեքման ՈՒ/Ա հոլովման են պատ-կանում.

I. ՈՒԹՅՈՒՆ ածանցով կազմված գոյականները՝ լավություն-լավու-թյուն, սևություն-սևություն, պետություն, մեծություն, գիտություն, բան-վորություն, միություն և այլն, որոնք շատ մեծ թիվ են կազմում:

II. ՈՒՆ վերջնահնչյունն ունեցող շուն-շուն, տուն-տուն, սյուն-սյուն, ձյուն-ձյուն, անկյուն-անկյուն, արյուն-արյուն բառերը, որոնք, բացի ա-ռաջին երկուսից, հոլովվում են նաև ի-ով:

Անուն բառը ևս ենթարկվում է Ա ներքին հոլովման՝ անուն-անուն ձևով: Ձայնավորից առաջ ՈՒ>Վ հնչյունափոխությամբ այս բառի սե-ռական-տրականի համար առաջացել է անվան ձևը: Այս բառի մեջ առ-կա է ոչ թե ՈՒ/Ա, այլ Օ/Ա հերթագայությունը:

ԱՅ/Ո հոլովում.— Այս հերթագայությամբ սեռական-տրական են կազմում միայն ԵԱՅՐ-ԵՈՐ, մԱՅՐ-մՈՐ, եղբԱՅՐ-եղբՈՐ քառերը, այլև այն բաղադրյալ բառերը, որոնց վերջին բաղադրիչները սրանք են, ինչ-պես՝ նախահայր, վանահայր, կնիքահայր, նախամայր, ճորեղբայր, մոր-եղբայր և այլն:

Ս եռական-տրականի ներքին թեքման այլ ձևեր.— Խոսակցական լեզվում երբեմն ներքին թեքման Ո հոլովմամբ ունենում ենք աներ-աներ, սկեսուր||կեսուր—սկեսուր||կեսուր, տեգր-տեգր ձևերը: Առաջին դեպքում հանդես է գալիս Ե/Ո, երկրորդ դեպքում՝ ՈՒ/Ո, իսկ երրորդ դեպքում Ը/Ո հերթագայությունը: Սակայն ավելի տարածված են այս բառերի արտաքին ՈՋ և ի հոլովումները:

Գրաբարի ձևով Ը/Ն հերթագայությամբ սեռական-տրական կարող են կազմել դուստր-դուտր և կայսր-կայսր բառերը, սակայն դրանց համար տարածվածը ի հոլովումն է՝ դուստրի, կայսրի:

Բացառական հոլով.— Բացառական հոլովը կազմվում է իՅ և ՈՒՅ վերջավորություններով, ըստ որում ՈՒՅ են ստանում ՈՒ հոլով-ման բառերը՝ աղավնի-աղավնի-աղավնի, գրել-գրել-գրել, գրել-գրել-գրել և սեր բառը՝ սիրաց, իսկ իՅ են ստանում մյուս հոլովումներին՝ պատկա-նող բառերը, օրինակ՝ բանվոր-բանվոր-բանվոր, ծագում-ծագում-ծագում, պետություն-պետություն-պետություն և այլն:

Բացառական հոլովը կազմվում է ուղղականից կամ սեռական-տը-րականից, օրինակ՝ բանվոր-բանվոր, ընկեր-ընկեր-ընկեր:

Բացառական ուղղականից է կազմվում ի, Ան, ՈՒ/Ա, ՈՒ և ի/ՈՒ հոլովումների ժամանակ, միայն վերջին դեպքում ուղղականի ի վերջ-նահնչյունն ընկնում է: Օրինակներ. բանվոր-բանվոր, ծագում-ծագում-միՅ, պետություն-պետություն, գրել-գրել-գրել, գրել-գրել-գրել:

Ան հոլովման միավանկներից դուր բառը գրաբարյան Ն վերջնա-հնչյունը վերականգնում է, և, այսպիսով, ստացվում է դոնից ձևը: Ան հոլովման պատկանող մյուս միավանկ բառերի Ն-ով ձևերը՝ բոնիՅ, ձկնիՅ, մկնիՅ և այլն, որ երբեմն հանդիպում են առավելագույն նախա-խորհրդային շրջանի գրականության մեջ, հնարանություններ են:

Բացառականը սեռական-տրականից է կազմվում ՈՋ և ԱՅ/Ո հոլ-ովումների ժամանակ, օրինակ՝ ընկեր-ընկեր-ընկեր, փուր-փուր-փուր, հայր-հոր-հոր, մայր-մոր-մոր և այլն: Գարուն, աշուն, ա-մառ, ձմեռ բառերի բացառականը ևս կազմվում է տրականից, երբ դը-րանք հոլովվում են Ան ձևով, ինչպես՝ գարուն-գարուն-գարուն, ա-շուն-աշուն-աշուն, ամառ-ամառ-ամառ, ձմեռ-ձմեռ-ձմեռ: Սեռական-տրականի ձևից է կազմվում նաև աղջիկ բառի բացառականը՝ աղջիկ-աղջկա(ն)-աղջկան(ն):

Ժամանակ ցույց տվող բառերը բացառական կարող են կազմել և՛ ուղղականից, և՛ սեռական-տրականից, օրինակ՝ օր-օրիՅ||օրվԱնիՅ, ժա-մանակ-ժամանակիՅ||ժամանակվԱնիՅ, ամիս-ամսիՅ||ամսվԱնիՅ, Հիմ-քերի այս զանազանությունը բացատրվում է նրանով, որ ժամանակ ցույց տվող բառերի մի մասը կարող է հոլովվել նաև ի հոլովմամբ: Ելնելով սրանից՝ կարելի է ասել, որ երբ ժամանակ ցույց տվող բառերի բացառականը կազմվում է ուղղականի ձևից, ուրեմն գործ ունենք ի հոլովման հետ, իսկ երբ կազմվում է տրականի ձևից, ուրեմն գործ ու-նենք ՎԱ(Ն) հոլովման հետ: Արա լավագույն ապացույցն այն է, որ ժա-մանակ ցույց տվող այն բառերը, որոնք սեռական-տրական հոլովը կազ-մում են միայն ՎԱ(Ն) ձևով և ի վերջավորություն ունենալ չեն կարող, բացառականը կազմում են միայն սեռական-տրականից, ինչպես՝ ա-մառ-ամառվԱ(ն)-ամառվԱնիՅ, այսօր-այսօրվԱ(ն)-այսօրվԱնիՅ, երեկ-երեկվԱ(ն)-երեկվԱնիՅ և այլն:

Գործիական հոլովը կազմվում է ՈՎ և Բ վերջավորություններով: Գործիականը Բ վերջավորությամբ են կազ-մում Ա ներքին հոլովման ՈՒԹՅՈՒՆ ածանցով կազմված և Ան արտա-քին հոլովման ՈՒՄ ածանցով կազմված բառերը, ինչպես՝ լավություն-լավությամբ, պետություն-պետությամբ, ծագում-ծագմամբ, ցասում-ցասմամբ: Բայց ՈՒԹՅՈՒՆ ածանց ունեցող բառերը երբեմն ժողովրդա-կան-խոսակցական լեզվում, իսկ ՈՒՄ ածանց ունեցող բառերը գրական լեզվի բոլոր ոճերում օրինաչափ կերպով գործիական հոլով են կազմում նաև ՈՎ վերջավորությամբ, ինչպես՝ լավությունով, վատությունով, ծագումով, ցասումով, կատարումով, եռացումով և այլն: Գեռ ավե-



լին. վերջին խմբի բառերի ՈՎ վերջավորութեամբ գործիականը գնալով ավելի ու ավելի գերիշխող է դառնում:

Արշուն բառի գործիականը ևս կարող է կազմվել Բ-ով՝ արշամբ, բայց ավելի գործածականը այս բառի ՈՎ վերջավորութեամբ կազմվող գործիականն է՝ արշունով:

Բացի նշվածներից, գործիական հոլովը մյուս բոլոր դեպքերում կազմվում է ՈՎ վերջավորութեամբ, ինչպես՝ բանվոր-բանվորով, այգի-այգով, գիշեր-գիշերով, հայր-հորով և այլն:

Գործիական հոլովը ևս կազմվում է ուղղականի կամ սեռական-տրականի ձևից:

Գործիականը սեռական-տրականից է կազմվում ՈՋ արտաքին, Ո ներքին թեքման, ինչպես և բոլոր այն բառերից, որոնք ստանում են Բ վերջավորությունը, ըստ որում, Բ-ից առաջ ն-ն վերածվում է Մ-ի. Օրի-նակներ՝ ֆուր-ֆուրով, հայր-հոր-հորով, լավություն-լավության-լավության-Բ > լավությամբ, ծագում-ծագման-ծագման-Բ > ծագմամբ և այլն: Սեռական-տրականի ձևից է կազմվում նաև աղջիկ բառի գործիականը՝ աղջկանով:

Մյուս բոլոր դեպքերում գործիականը կազմվում է ուղղականի ձև-վից, օրինակ՝ բանվոր-բանվորով, ծագում-ծագումով, լավություն-լավությունով, գրել-գրելով և այլն: Միայն պետք է նկատի ունենալ, որ Ի/ՈՒ հոլովման դեպքում ուղղականի Ի վերջնահնչյունը կարող է մնալ կամ ընկնել, օրինակ՝ ուղի-ուղիով, պատանի-պատանիով, մատանի-մատանիով, մատանով, այգի-այգով, գինի-գինով, ապակի-ապակով և այլն:

Ա ներքին հոլովման միավանկ դուռ բառը գործիական է կազմում գրաբարյան կորած ն վերջնահնչյունի վերականգնմամբ՝ դռնով: Նույն հոլովման մյուս միավանկ բառերի ն-ով ձևերը՝ թռնով, լեռնով, ձրկ-նով և այլն, այժմ անգործածական հնաբանություններ են:

Ն ե ր գ ո յ ա կ ա ն ո յ ո Վ. — Ներգոյական հոլովը կազմվում է ՈՒՄ վերջավորութեամբ, որը, որպես կանոն, դրվում է ուղղականի ձևի վրա, օրինակ՝ սար-սարՈՒՄ, օր-օրՈՒՄ, ձեռնարկություն-ձեռնարկությունՈՒՄ և այլն: Ներգոյականը ժողովրդական ռճով սեռական-տրականից կարող է կազմվել ՈՋ և ԱՅ/Ո հոլովման բառերից՝ ֆուրՈՒՄ, մուրՈՒՄ, բայց այս ձևերն էլ գրականում գործածական չեն:

Ինչպես նշված է արդեն, ներգոյական հոլովն ունի զգալի ծավալային սահմանափակումներ, և կան բառերի մի շարք խմբեր, որոնք ներգոյական հոլով չեն կազմում կամ որոնց ներգոյականը անգործածական է:

ՀՈԳՆԱԿԻ ՀՈՂՈՎՈՒՄ. — Հայերենի գոյականների մեծամասնությունը, այլև գոյականաբար գործածված բոլոր բառերը հոգնակի թվում ստանալով ՆՐ կամ ՆԾՐ մասնիկները, ինչպես՝ ծառ-ծառն, լավ-լա-

վն, անտառ-անտառն, այգի-այգին, կարմիր-կարմիրն և այլն, միավորվում են ոչ միայն իմաստով, այլև ձևով: Հոգնակի բառաձևերի իմաստային ու ձևային ընդհանրությունը իր հերթին պայմանավորում է հոլովական ձևերի կազմության միօրինակություն: ՆՐ և ՆԾՐ հոգնակերտ մասնիկներն ունեցող բոլոր բառերը հոլովվում են միակերպ՝ սեռական-տրականում ստանալով Ի, բացառականում՝ ԻՑ, գործիականում՝ ՈՎ, իսկ ներգոյականում ՈՒՄ վերջավորությունը: Հոլովման ընդհանուր հարացույցը հետևյալն է.

Ուղղ.	սարեր + Օ	տարիներ + Օ
Սեռ.-տր.	սարեր + Ի	տարիներ + Ի
Բաց.	սարեր + ԻՑ	տարիներ + ԻՑ
Գործ.	սարեր + ՈՎ	տարիներ + ՈՎ
Ներգ.	սարեր + ՈՒՄ	տարիներ + ՈՒՄ

Նշված է, որ հատուկ խումբ են կազմում ՆՆՔ, ԱՆՔ, ՈՆՔ, ՈՒՆՔ ածանցներով կազմված հավաքական անեզականները՝ Գրիգորենք, Վարդանենք և այլն: Հավաքական անեզականների իմաստային ու ձևային ընդհանրությունը պայմանավորում է հոգնակի հոլովման մի այլ տիպ իր յուրահատուկ առանձնահատկություններով, որոնք հետևյալներն են. ա) բառի ուղիղ ձևում հանդես եկող Ք մասնիկը արտահայտում է և՛ հոգնակի թվի, և՛ ուղղական հոլովի իմաստ. բ) սեռական-տրական հոլովը կազմվում է Ք/Ց հերթագայությունով, որտեղ Ց մասնիկն արտահայտում է և՛ հոգնակի թվի, և՛ սեռական-տրական հոլովի իմաստ. գ) բացառական և գործիական հոլովները կազմվում են սեռական-տրականի ձևից՝ Ի հոլովման սովորական ԻՑ և ՈՎ վերջավորություններով:

Ըստ այդմ, հավաքական անեզականների հոլովման ընդհանուր հարացույցը հետևյալն է.

Ուղղ.	Գրիգորեն + Ք	Վարդանան + Ք
Սեռ.-տր.	Գրիգորեն + Ց	Վարդանան + Ց
Բաց.	Գրիգորենց + ԻՑ	Վարդանանց + ԻՑ
Գործ.	Գրիգորենց + ՈՎ	Վարդանանց + ՈՎ
Ներգ.	—	—

Բացի հոգնակի հոլովման այս երկու տիպերից, արդի հայերենում կան նաև այսպես կոչված անկանոն հոլովումներ: Դրանց առանձնահատկությունը հանդես է գալիս միայն սեռական-տրական հոլովում: Մյուս թեք հոլովները կազմվում են Ի հոլովման սովորական վերջավորություններով:

Անկանոն հոլովում ունեն մարդ բառի հոգնակին՝ մարդիկ և կին բառի հոգնակին՝ կանայք: Այս բառերի հոլովման պատկերը հետևյալն է

Ուղղ.	Վարդիկ	Կանայք
Սեռ.-տր.	Վարդկանց	Կանանց
Բաց.	Վարդկանցից	Կանանցից
Կործ.	Վարդկանցով	Կանանցով
Ներգ.	—	—

Ժողովրդական-խոսակցական լեզվում հանդիպում են նաև հոգևակի հոլովման այլ տիպեր, որոնք են. ա) տղերք-տղերանց (տղերքի), աղջկերք-աղջկերանց (աղջկերքի) և բ) ՅԻ անանցն ունեցող բառերի Բ-ով կազմված հոգևակի հոլովումը՝ գլուղացիԲ-գլուղացՈՅ||գլուղացՈՆՅ, քաղաքացիԲ-քաղաքացՈՅ||քաղաքացՈՆՅ, գերմանացիԲ-գերմանացՈՅ||գերմանացՈՆՅ և այլն: Դրանք գրական լեզվի տեսակետից արժեք չեն ներկայացնում և հանդիպում են միայն ժողովրդական-բարբառային ոճի տեքստերում:

ԸՆԴՀԱՆՐԱՒԱԿԱՆ, ՁԵՎԱՅԻՆ, ԻՄԱՍՏԱՅԻՆ, ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ  
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՂՎՈՒՄՆԵՐ

ՍԵՌԱԿԱՆ-ՏՐԱԿԱՆԻ ՀՈՂՎԱԿԱՆ ԹԵՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՒԱԿԱՆ, ՁԵՎԱՅԻՆ, ԻՄԱՍՏԱՅԻՆ, ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ (ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԲՆՈՐՈՇՎՈՂ) ՀՈՂՎՈՒՄՆԵՐ.— Սեռական-տրականի թեքույթները համարժեք են ու գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ մեկի հնարավոր փոխարինումը մյուսով հոլովական իմաստի փոփոխություն չի առաջացնում<sup>19</sup>, օրինակ՝ կատարում-կատարման||կատարումի, թող-թողան||թողի, ժամ-ժամվա||ժամի, աներ-աներոջ||աների, սյուն-սյան||սյունի, տարի-տարվա||տարու և այլն: Թեքույթների հնարավոր փոխարինում ենք ասում, որովհետև բոլոր դեպքերում չէ, որ սեռական-տրականի թեքույթները ազատ կարող են փոխարինել միմյանց: Այսպես՝ բանվոր-բանվորի, աշակերտ-աշակերտի ձևերի Ի թեքույթը, հայր-հմուր, մայր-մուր ձևերի Ո թեքույթը, Գրիգորենե-ԳրիգորենեՅ, Արմենենե-ԱրմենենեՅ ձևերի Յ թեքույթը ուրիշ ոչ մի թեքույթով փոխարինել հնարավոր չէ: Ուրեմն՝ փոխարինումները բացարձակ չեն և ինչ-ինչ սահմանափակումներ ունեն:

Մյուս կողմից՝ վերևում բերված փոխարինումները անմիջաբար երևան են հանում Ի թեքույթի գերիշխող դիրքը սեռական-տրականի մըյուս թեքույթների նկատմամբ այն իմաստով, որ դրանցից մի մասը ազատ կարող է փոխարինվել Ի-ով: Ահա թե ինչու սեռական-տրականի թեքույթների ամբողջությունը երբեմն կոչում են Ի-ի խումբ:

Իննելով ժամանակակից հայերենի ամենատարածված և զանգվածային հոլովումը, այլև ընդունակ լինելով փոխարինելու մյուս հոլովումների գոնե մի մասին՝ Ի հոլովման ոլորտները չեն կարող բնորոշվել ո՛չ ձևային, ո՛չ իմաստային և ո՛չ էլ մի որևէ այլ հատկանիշով: Այս իսկ

պատճառով էլ Ի հոլովումը կոչվում է ընդհանրական կամ հասարակ հոլովում:

Սեռական-տրականի մյուս թեքույթների գործածության ոլորտները պայմանավորված են բառերի ձևային, իմաստային, ձևաիմաստային ու պատմական (պատմականորեն որոշվող) առանձնահատկություններով, և, ըստ այդմ էլ, ընդհանրական կամ հասարակ հոլովումից բացի, տարբերակվում են ձևային, իմաստային, ձևաիմաստային և պատմական հոլովումներ:

Սույլ ձևային հիմք ունի Ի/ՈՒ հերթագայությամբ կազմվող հոլովումը: Ի-ով վերջավորվող ամեն մի բազմավանկ բառ՝ անկախ իմաստից (անձ, կենդանի, իր) և կազմությունից (պարզ, ժամանցավոր, բարդ) սեռական-տրական հոլով է կազմում Ի/ՈՒ հերթագայությամբ, օրինակ՝ պատանի-պատանու, աղավնի-աղավնու, աշակերտունի-աշակերտունու, գյուղացի-գյուղացու և այլն: Իսկ ինչ վերաբերում է Օ/ՈՒ հոլովմանը՝ գրեյ-գրելու, կարդալ-կարդալու, դրա մասին կխոսվի ստորև:

Սույլ իմաստային հիմք ունի ՎԱ հոլովումը, որով հոլովվող բառերը ժամանակի անուններ են և, հետևաբար, իմաստային մի խումբ են կազմում, օրինակ՝ օր-օրվա, ժամ-ժամվա, ամիս-ամսվա և այլն: ՎԱ հոլովումն այնքան ուժեղ է ժամանակի իմաստաբանական իր կողմով, որ նույնիսկ տեղի անուններին կարող է տալ ժամանակի իմաստ, ինչպես՝ «Նա իմ Դիլիջանվա ժանոթն է» (օրինակը Գ. Ղափանցյանին է) նախադասության մեջ Դիլիջանվա նշանակում է «Դիլիջանի ժամանակվա»: Այսպես են նաև անգամ-անգամվա, ճաշ-ճաշվա, պաս-պասվա, գատիկ-գատիկվա և այլն, որոնք ՎԱ թեքույթն ստանալով՝ ցայտուն դրսևորված ժամանակային իմաստ են արտահայտում: Սակավադեպ միայն ՎԱ թեքույթի ժամանակի իմաստային կողմը չի դրսևորվում, ինչպես՝ Լոռի-Լոռվա (Լոռվա սարերը), Շուշի-Շուշվա (Շուշվա բնությունը):

Իմաստային խումբ են կազմում նաև ՈՁ հոլովման ենթարկվող բառերը՝ բույր, կին, տալ, սկեսուր, որոնք ցույց են տալիս ազգակցություն իրական սեռի գծով: Իմաստային այս խմբից դուրս են մնում ընկեր և տեր բառերը, որոնք ևս անձի անուններ են:

Իմաստային է համարվում նաև ԱՅ/Ո հոլովումը, որին ենթարկվում են հայր-հոր, մայր-մոր և եղբայր-եղբոր բառերը: Ճիշտ է, այս բառերն իմաստային ընդհանրություն ունեն, բայց դրա հետ մեկտեղ ունեն նաև ձևային ընդհանրություն: Չպետք է անտեսել նաև այն, որ այս բառերի հոլովումը որոշվում է նաև պատմական գործոններով (գրբ. հայր-հաւր, իսկ աշխարհաբարում բաղաձայնից առաջ ԱԻ > Ո փոփոխությամբ ստացվում է հոր ձևը): Ուրեմն՝ հոլովման մեջ դեր են խաղում այս բառերի իմաստային ու ձևային առանձնահատկությունները և պատմական գործոնը:

<sup>19</sup> Հմտ. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, էջ 60:

Այսպես է նաև ՅԱՆ Հոլովումը, որով Հոլովվում են ՌԻՆԴ, ՌԻՍ, ԻՍՏ ածանցներով կազմված բայանունները՝ փախուստ-փախստյան, գալուստ-գալստյան, ծնունդ-ծննդյան, քաֆուստ-քաֆստյան, հանգիստ-հանգստյան: Այս բառերի Հոլովման մեջ ևս դեր են խաղում իմաստային, ձևային ու պատմական գործոնները:

Այսպիսով, ժամանակակից հայերենի մաքուր իմաստային Հոլովումներն են ՎԱ և ՈՋ Հոլովումները:

Գ. Սևակը, որ հայ քերականության մեջ առաջինն է տարբերակել ձևային ու իմաստային Հոլովումներ հասկացությունները, ձևային Հոլովումների մեջ, բացի ՌԻ-ից, մտցրել է նաև ԱՆ (ծագում-ծագման), ՅԱՆ (Ա) (պետություն-պետության) և Յ (Գրիգորենք-Գրիգորենց) Հոլովումները<sup>20</sup>, Սակայն սրանք սոսկ ձևային Հոլովում համարելը ճիշտ չէ, և ահա թե ինչու:

Ի հակադրություն Ի/ՌԻ Հոլովման բառերի (ոսկի-ոսկու), որոնք սոսկ ձևային խումբ են կազմում, ԱՆ Հոլովման ենթարկվող ՌԻՄ ածանցն ունեցող բայանունները, օրինակ՝ ծագում-ծագման, ցասում-ցասման, կատարում-կատարման և այլն, ՌԻ/Ա Հոլովման ենթարկվող ՌԻԹՅՈՒՆ ածանցն ունեցող վերացական ու հավաքական գոյականները, օրինակ՝ լավություն-լավության, պետություն-պետության, ուսանողություն-ուսանողության և այլն, Ք/Յ Հոլովման ենթարկվող հավաքական անեզականները, օրինակ՝ Գրիգորենք-Գրիգորենց, Վարդանանք-Վարդանանց և այլն, առանձին ձևաիմաստային խմբեր են կազմում: Ձևային ընդհանրությունը տվյալ դեպքում պայմանավորում է նաև իմաստային ընդհանրություն:

Որպես օրինակ վերցնենք ՌԻՄ ածանցով կազմված բայանունները՝ ծագում, կատարում, ցասում, որոշում, կանավորում, բարձրացում, հեռացում և այլն: Ինչքան էլ որ այս բառերը իրարից տարբեր բառային իմաստներ արտահայտեն, համենայն դեպս նրանց մեջ կա մի ընդհանուր իմաստ, որ պայմանավորված է ՌԻՄ ձևույթի իմաստով: Իսկ եթե այս կամ այն բառի մեջ այս ձևույթի իմաստը լրիվ մարած է, տվյալ բառն արդեն չի կարող մտնել այս ձևաիմաստային խմբի մեջ և դրա հետևանքով էլ չի կարող ԱՆ ձևով Հոլովվել: Դրա լավագույն օրինակը դիմում բառն է, որը բացի բայանվան իմաստից («դիմել»), ձեռք է բերել նաև թանձրացական նշանակություն, ինչպես՝ «Ծրկու դիմում եմ գրել, բայց ոչ մեկին դեռ չեն պատասխանել», «Դիմումս մերժեցին» և այլն, և այս իմաստով ափելի շատ է գործածվում, քան բայանվան: Թանձրացական դիմում գոյականը դուրս է եկել ՌԻՄ ածանցով կազմված բայանունների ձևաիմաստային խմբից և ԱՆ թեթույթով Հոլովվել չի կարող: «Իմ դիմման («դիմումի») ձեռագիր օրինակը կորել է» նա-

խաղասույթյան դիմման ձևը հնարավոր չէ: Այսպես է և ապրում գոյականը, որն ունենալով ՌԻՄ ածանցը, ԱՆ ձևով Հոլովվել չի կարող, որովհետև իմաստով հեռացել է ՌԻՄ ածանցն ունեցող բառերի խմբից և ապրում չի նշանակում «ապրել»:

Հատկանշական են նաև հետևյալ օրինակները: Համբարձում բառը որպես բայանուն մտնում է ՌԻՄ ածանցով կազմված բայանունների ձևաիմաստային խմբի մեջ և Հոլովվում է ԱՆ ձևով, օրինակ՝ «Համբարձման գիշեր, էն դուրբիչ դիշեր Կա հրաշալի, երջանիկ վայրկյան» (Քում.): Բայց համբարձում հասարակ գոյականից առաջացած Համբարձում հատուկ անունը կարող է Հոլովվել միայն Ի ձևով՝ Համբարձումի: Իսկ ինչու, չէ՞ որ կազմված է ՌԻՄ ածանցով: Դրան կարող է լինել միայն ու միայն մեկ պատասխան. Համբարձում հատուկ անունը ՌԻՄ ածանցով կազմված բառերի իմաստային խմբի մեջ չի մտնում:

Որքան էլ տարօրինակ լինի, կա նաև Ծարժում հատուկ անունը, որը ևս նույն պատճառով միայն Ի-ով կարող է Հոլովվել՝ Ծարժումի:

Այսպես և՛ կարելի է ցույց տալ բառեր, որոնք ՌԻԹՅՈՒՆ ածանցն ունեն, բայց ՌԻ/Ա ձևով Հոլովվել չեն կարող: Լավագույն օրինակն է հարություն բառը, որը որպես վերացական գոյական Հոլովվում է ՌԻ/Ա ձևով՝ հարության, իսկ որպես հատուկ անուն միայն Ի ձևով՝ Հարությունի: Եթե մի նորածինի անուն դնեն Ազատություն, ապա այդ հատուկ անունը կՀոլովվի միայն Ի ձևով՝ Ազատությունի: Իհարկե, այս երևույթը չի կարելի բացատրել նրանով, թե ընդհանրապես հատուկ անուններն Ի ձևով են Հոլովվում: Այսպես, Ի-ով վերջավորվող հատուկ անուններն, օրինակ, Հոլովվում են Ի/ՌԻ հերթագայություններ, ինչպես՝ Ոսկի-Ոսկու, Քաղունի-Քաղունու, Մաքունի-Մաքունու և այլն: Իսկ ինչու. որովհետև Ի/ՌԻ Հոլովումը մաքուր ձևային Հոլովում է, և դրա դեպքում բառիմաստը ոչ մի դեր չի խաղում:

Այսպես, ուրեմն՝ ԱՆ (ծագում-ծագման), ՌԻ/Ա (պետություն-պետության), Ք/Յ (Գրիգորենք-Գրիգորենց) Հոլովումները ձևաիմաստային Հոլովումներ են, այսինքն՝ այս բառերի Հոլովական առանձնահատուկությունները պայմանավորված են դրանց ձևի և իմաստի միասնությամբ, և այս առումով էլ կարելի է ասել, որ դրանք առանձին քերականական խմբեր են կազմում:

Ձևաիմաստային է նաև Օ/ՈՒ Հոլովումը անորոշ դերբայների դեպքում, ինչպես՝ գրել-գրելու, կարդալ-կարդալու և այլն: Ճիշտ է, սրանք ևս ունեն ձևային ընդհանրություն, բայց սրանց Հոլովումը ևս այս բառերի սոսկ ձևով չի պայմանավորված: Դրա լավագույն ապացույցն այն է, որ ել վերջավորվող ձևերը, որոնք անորոշ դերբայներ չեն, Օ/ՈՒ ձևով Հոլովվել չեն կարող, օրինակ, մեռել-մեռելի, Առաֆել-Առաֆելի, բայց առաֆել որպես անորոշ դերբայ ենթարկվում է ՌԻ Հոլովման՝ առաֆել-

<sup>20</sup> Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 272:

առաքելու (առաքելու ժամանակ): Այսբանով էլ անորոշ դերբայները  
ևս առանձին քերականական խումբ են կազմում:

Օ/ՈՒ ձևով են հոլովվում նաև ամուսին-ամուսնու, անկողին-անկող-  
նու, մարդ-մարդու, աստված-աստծու, դար-դարու, մահ-մահու բառե-  
րը: Մրանք շունեն ո՛չ ձևային, ո՛չ էլ իմաստային ընդհանրություն, և  
սրանց ՈՒ հոլովման պատկանելը բացատրվում է սոսկ պատմական  
գործոններով:

Բացի սրանից, պատմական (պատմականորեն բնորոշվող) են նաև  
հետևյալ հոլովումները.

ա) Ան հոլովումը՝ գրաբարում ն վերջնահնչյուն ունեցող գառ-գա-  
ռան, դուռ-դուռն, մուկ-մկան, մուկ-մկան և այլն, գարուն, աշուն, ա-  
մառ, ձմեռ բառերի, այլև մանուկ բառի դեպքում:

Ժիշտ է, ծագում-ծագման, կատարում-կատարման, ցասում-ցաս-  
ման և այլն հոլովումը ևս գալիս է գրաբարից, բայց դա կարող է բնո-  
րոշվել հենց ժամանակակից լեզվի տեսակետից, առանց լեզվի պատ-  
մությունը նկատի ունենալու՝ հետևյալ ձևով. ՈՒՄ ածանցով կազմված  
բայանունները սեռական-տրականում ստանում են Ան վերջավորությու-  
նը: Իսկ դուռ-դուռն, լեռ-լեռան, մուկ-մկան, գառ-գառան հոլովումը ժա-  
մանակակից լեզվի տեսակետից ոչ մի հատկանիշով բնորոշվել չի կա-  
րող: Միայն կարող ենք ասել, որ դրանք միավանկ բառեր են: Հասկա-  
նալի է, սակայն, որ դրանց հոլովման յուրահատկությունը միավանկու-  
թյամբ չի պայմանավորված:

բ) ՈՒ/Ա հոլովումը շուն-շան, տուն-տան, սյուն-սյան, ձյուն-ձյան,  
արյուն-արյան, անկյուն-անկյան բառերի դեպքում: Ժիշտ է, սրանք բո-  
լորեն էլ վերջավորվում են ՈՒն ձևով, և դա էլ կարող է այն տպավորու-  
թյունն ստեղծել, թե դրանց հոլովումը պայմանավորված է սոսկ ձևով  
(դրանք իմաստային ընդհանրություն չունեն), բայց կան ՈՒն-ով վեր-  
ջավորվող բառեր, որոնք ՈՒ/Ա ձևով հոլովվել չեն կարող, օրինակ՝ բուն,  
հուն, բուն, գարուն, աշուն և այլն, իսկ սա էլ իր հերթին նշանակում է,  
որ վերևում բերված բառերի դեպքում գործ ունենք սոսկ պատմականոր-  
են որոշվող հոլովման հետ:

գ) Արտաքին Ո հոլովումը սուգ-սագ, հույս-հուսա, լույս-լուսո, պա-  
տիվ-պատվո, հուր-հրա բառերի դեպքում:

Պատմական են նաև մահ-մահվան, դուստր-դուստեր, կայսր-կայսեր  
հոլովումները:

Ձևերի՝ պատմականորեն որոշվող խմբերը կոչվում են նաև թվարկ-  
վող կամ ցուցակային՝ ելնելով նրանից, որ այսպիսի խմբերը, որպես  
կանոն, քիչ բառեր են ընդգրկում և կարող են ուղղակի թվարկվել:

Ամփոփելով բոլոր ասվածները՝ կատանանք հետևյալը:

Ժամանակակից հայերենում կարելի է տարբերակել ընդհանրական  
կամ ճասարակ՝ Ի (բանվոր-բանվորի, բանվորներ-բանվորների), ձևա-

յին՝ Ի/ՈՒ (ոսկի-ոսկու, գյուղացի-գյուղացու), իմաստային՝ ՎԱ (օր-օր-  
վա, ամիս-ամսվա), ՈԶ (քույր-քրոջ, կին-կնոջ), ձևաիմաստային՝ Ան  
(ծագում-ծագման, կատարում-կատարման), ՈՒ/Ա (պետություն-պետու-  
թյան, ուրախություն-ուրախության), Ք/Յ (Գրիգորենք-Գրիգորենց, Վար-  
դանանք-Վարդանանց), Օ/ՈՒ (գրել-գրելու, կարդալ-կարդալու) և պատ-  
մական (պատմականորեն բնորոշվող)՝ Օ/ՈՒ (մարդ-մարդու, դար-դա-  
րու), Ան (դուռ-դուռն, մուկ-մկան), ՈՒ/Ա (շուն-շան, տուն-տան), Ո  
(սուգ-սագ, հույս-հուսո), Ը/Ծ (դուստր-դուստեր, կայսր-կայսեր) հոլովում-  
ներ: Իսկ ԱՅ/Ո (հայր-հոր) և ՅԱն (ծնունդ-ծննդյան, փախուստ-փա-  
խըստյան) հոլովումների ժամանակ դեր են կատարում իմաստային,  
ձևային և պատմական գործոնները միաժամանակ:

Ինչպես այս թվարկումից է արդեն երևում, նույն հոլովումները բա-  
ռերի տարբեր խմբերի դեպքում տարբեր կերպով կարող են բնորոշվել:  
Այսպես՝ ՈՒ հոլովումը ոսկի-ոսկու տիպի դեպքում բնորոշվում է սոսկ  
ձևային հատկանիշով, գրել-գրելու տիպի դեպքում՝ ձևային և իմաստա-  
յին հատկանիշներով միաժամանակ, իսկ մարդ-մարդու, դար-դարու և  
այլ բառերի դեպքում բնորոշվում է սոսկ պատմական հատկանիշով:  
Այսպես և՛ Ան հոլովումը ծագում-ծագման տիպի դեպքում բնորոշվում  
է ձևային ու իմաստային հատկանիշներով միաժամանակ, իսկ գառ-  
գառան տիպի դեպքում՝ սոսկ պատմական հատկանիշով:

#### ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՒՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՈՒՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ.— Հոլովման համակարգի նկարագրու-  
թյունից պարզ դարձավ, որ նույն բառի հոլովական այս կամ այն ի-  
մաստը տարբեր ձևերի միջոցով ևս կարող է արտահայտվել, և, այս-  
պիսով, ժամանակակից հայերենում առաջանում են հոլովական զուգա-  
ձևություններ, որոնք հատկապես շատ են սեռական-տրական հոլովում:

Զուգաձևությունների առկայությունը բացատրվում է՝ ա) ժամանա-  
կակից հայերենի ընդհանրական հոլովման՝ Ի հոլովման գերիշխող դիր-  
քով, նրա՝ մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու կարո-  
ղությամբ, բ) ձևային, իմաստային և ձևաիմաստային հոլովումների  
փոխներգործություններով, գ) ժամանակակից հայերենի հոլովական ձե-  
վերին զուգահեռ գրաբարյան հոլովական ձևերի առկայությամբ, այ-  
սինքն՝ պատմական գործոններով (պատմական հոլովումների առկայու-  
թյամբ): Սակայն դրանցից հիմնականը առաջինն է, այսինքն՝ Ի հոլով-  
ման գերիշխող դիրքը:

Հոլովական համակարգում առկա զուգաձևությունները ամփոփվում  
են հետևյալ ձևով:

Ան/ի— 1. ծագում-ծագման||ծագումի, կատարում-կատարման||կատարումի, ցասում-ցասման||ցասումի և այս ձևով նաև ՈՒՄ ածանցն ունեցող բոլոր բայանունները:

2. Բեռ-բեռան||բեռի, գառ-գառան||գառի, եզ-եզան||եզի, թոռ-թոռան||թոռի, լեռ-լեռան||լեռի, ծունկ-ծնկան||ծնկի, ծոռ-ծոռան||ծոռի: Ուրեմն՝ գրաբարում ն վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերը, բացի մի երկուսից (մուկ-մկան, դուռ-դռան), կարող են հոլովվել նաև Ի-ով, որը այս բառերի մի մասի համար փաստորեն կանոնական է:

ի/ՈՒի||ի— այրի-այրու||այրիի, Մեղրի-Մեղրու||Մեղրիի, Անի-Անու||Անիի, Քենեղի-Քենեղու||Քենեղիի, Գարիբալդի-Գարիբալդու||Գարիբալդիի, Գորի-Գորու||Գորիի, Սոչի-Սոչու||Սոչիի և այլն: Ընդհանրապես Ի-ով վերջավորվող օտարազգի հատուկ անունների Ի հոլովումը օրինաչափական է:

ի/ՈՒի||վԱ— տարի-տարու||տարվա:

ՈՒի||ի— անկողին-անկողնու||անկողնի, դար-դարու||դարի:

ՈՒ/Ա||ի— սյուն-սյան||սյունի, ձյուն-ձյան||ձյունի, անկյուն-անկյան||անկյունի, արյուն-արյան||արյունի:

Անուն բառը անվան ձևին զուգահեռ ունի նաև անունի ձևը:

վԱ||ի— օր-օրվա||օրի, ժամ-ժամվա||ժամի, ամիս-ամսվա||ամսի, գիշեր-գիշերվա||գիշերի և ժամանակային իմաստ ունեցող այլ բառեր:

ՅԱն||ի— փախուստ-փախստյան||փախուստի, թաքուստ-թաքստյան||թաքուստի, գալուստ-գալստյան||գալուստի, հանգիստ-հանգստյան||հանգիստի:

Ո/ի— սուգ-սգո||սգի, հույս-հուսո||հույսի, լույս-լուսո||լույսի, հուր-հրո||հրի, պատիվ-պատվո||պատվի (Ո-ով ձևերը բոլորն էլ հնաբանություններ են և կարող են գործածվել միայն ոճավորված տեքստերում):

ՈԶ||ի||Ո (վերջինս հերթագայություն) — ընկեր-ընկերոջ||ընկերի, տալ-տալոջ||տալի, աներ-աներոջ||աների||անոր, սկեսուր-կեսուր-սկեսուրոջ||սկեսուրի-կեսուրի||սկեսոր-կեսոր, տեգր-տեգրոջ||տեգրի||տեգոր:

վԱն||ՈՒ||ի— մահ-մահվան||մահու||մահի:

ի||ՈՒ||վԱ— դար-դարի||դարու||դարվա:

Բացառական հոլով

ՈՒՅ||իՅ.— Ընդհանրապես ՈՒ հոլովման բառերի բացառականը կազմվում է ՈՒՅ վերջավորությամբ, բայց դրանցից սեռական-տրականը Ի/ՈՒ հերթագայությամբ կազմող բառերն առանձին դեպքերում, իսկ

օտարազգի հատուկ անուններն ընդհանրապես կարող են ենթարկվել նաև Ի հոլովման և այդ դեպքում նրանք բացառական են կազմում ԻՅ ձևով: Այսպիսով, որոշակի դեպքերում բացառականի համար ստացվում են ՈՒՅ||իՅ զուգաձևությունները, ինչպես՝ այրի-այրուց||այրիից, մատանի-մատանուց||մատանիից, պատանի-պատանուց||պատանիից, Մեղրի-Մեղրուց||Մեղրիից, Անի-Անուց||Անիից, լոռի-լոռուց||լոռիից, Քենեղի-Քենեղուց||Քենեղիից, Գորկի-Գորկուց||Գորկիից, Տոլլատի-Տոլլատուց||Տոլլատիից և այլն:

ԻՅ||նիՅ.— Բացառականում զուգաձևություններ կարող են ստացվել նաև ըստ այն բանի, թե գրաբարյան ն վերջնահնչյունն ունեցող միավանկ բառերը բացառականում վերականգնում են կորած ն հընչյունը, թե՞ ոչ: Ըստ այդմ ստացվում են ԻՅ և ՆիՅ ձևերը, ինչպես՝ եզ-եզից||եզնից, թոռ-թոռից||թոռնից, ձուկ-ձկից||ձկնից, մուկ-մկից||մկնից, լեռ-լեռից||լեռնից և մի քանի ուրիշները: Սակայն պետք է նշել, որ ՆիՅ ձևերը ժամանակակից լեզվում արդեն անգործածական հնաբանություններ են:

Բացառականում զուգաձևություններ են առաջանում նաև ըստ տարահիմք կազմությունների, այն է՝ նույն բառերի բացառականի կազմություն սեռական-տրականի ձևից, զուգահեռաբար նաև ուղղականի ձևվից: Դրան միանում է նաև այն, որ երբեմն զուգաձևություններն առկա են հենց սեռական-տրականում, որով պայմանավորված ևս բացառականում զուգաձևություններ են առաջանում: Այսպիսի զուգաձևեր են, օրինակ՝ հետևյալները. օր-օրվանից||օրից, գիշեր-գիշերվանից||գիշերից, առավոտ-առավոտվանից||առավոտից, ժամանակ-ժամանակվանից||ժամանակից (հասկանալի է, որ զուգահեռ ձևերից առաջիններում գործունենք վԱ, իսկ երկրորդներում՝ Ի հոլովման հետ). ընկեր-ընկերոջից||ընկերից, աներ-աներոջից||աներից||անորից, տեգր-տեգրոջից||տեգրից |տեգորից, շուն-շնից||շանից:

Այս օրինակներից կարելի է եզրակացնել, որ բացառականի տրվյալ զուգաձևությունների մեծ մասն արդյունք է նրա, որ նույն բառը կարող է ենթարկվել տարբեր հոլովումների և բացառական կազմել ըստ այդ հոլովումների, ինչպես՝ ընկեր-ընկերոջ||ընկերի՝ համապատասխանաբար՝ ընկերոջից||ընկերից, ժամանակ-ժամանակվա(ն)||ժամանակի՝ համապատասխանաբար՝ ժամանակվանից||ժամանակից: Այսպես են նաև՝ աներ-աներոջ||աների||անոր-աներոջից||աներից||անորից, ամառ-ամռան||ամառվա(ն)-ամռանից||ամառվանից, ձմեռ-ձմռան||ձմեռվա(ն)-ձմռանից||ձմեռվանից և այլն:

Գործիական հոլով

ի||ՈՒ||վ.— ծագում-ծագմամբ||ծագումով, շարժում-շարժմամբ||շարժումով, կատարում-կատարմամբ||կատարումով և ընդհանրապես ՈՒՄ

ածանցով կազմված բոլոր բայանունները: Մագմամբ||ծագումով, շարժ-  
մամբ||շարժումով և այլ ձևերը իրարից տարբերվում են և՛ վերջավորու-  
թյամբ՝ Բ, ՈՎ, և՛ հիմքով. առաջինները կազմված են ուղղականի, իսկ  
երկրորդները՝ սեռական-տրականի ձևից:

Լավութուն - լավությամբ||լավութունով, մեծութուն - մեծությամբ||  
մեծութունով, պետութուն-պետությամբ||պետութունով և այլն ձևերից  
երկրորդները խոսակցական-ժողովրդական են և գրական լեզվում դեռևս  
կանոնական աստիճանի շին բարձրացել:

Գործիականում զուգաձևություններ են առաջանում նաև այն պատ-  
ճառով, որ Ի/ՈՒ հոլովման բառերի գոնե մի զգալի մասը ուղղականի  
Ի վերջնահնչյունը գործիական հոլովում կարող է և՛ պահպանել, և՛  
չպահպանել, օրինակ՝ ուղի-ուղով||ուղիով, ապակի-ապակով||ապակիով,  
մատանի-մատանով||մատանիով և այլն: Երբեմն դժվար է ասել, թե  
գրական լեզվում որոնք են ավելի ընդունելի՝ սղված, թե՛ շարված ձե-  
վերը: Թվում է, թե սղված ձևերը, օրինակ՝ գինով, այգով, ոսկով: Բայց  
առանձին դեպքերում ավելի գործածական են ոչ սղված ձևերը, օրինակ՝  
պատանիով, ուղիով (հիշենք, օրինակ, «Լենինյան ուղիով» ամսագիրը)  
և այլն:

#### Ներգոյական հոլով

Ներգոյական հոլովն ունի միայն մեկ վերջավորություն՝ ՈՒՄ, ու-  
րեմն և այս հոլովում ըստ վերջավորությունների զուգաձևություններ  
լինել շին կարող: Ներգոյական հոլովում զուգաձևություններ չկան նաև  
ըստ տարահիմք կազմությունների, որովհետև հոլովումների մեծ մասի  
դեպքում ներգոյականի ՈՒՄ վերջավորությունը հաստատուն կերպով  
դրվում է ուղղականի ձևի վրա, օրինակ՝ դաշտ-դաշտում, գիշեր-գիշե-  
րում, հանրապետություն-հանրապետությունում և այլն, իսկ ՈՋ և ԱՅ/Ո  
հոլովումների դեպքում կրկին հաստատուն կերպով դրվում է սեռական-  
տրականի ձևի վրա, օրինակ՝ մորում, քոչում, բայց դրանք էլ, ինչպես  
նշված է, գրական լեզվում անգործածական ժողովրդական-խոսակցա-  
կան ձևեր են: Չպետք է մոռանալ նաև այն, որ բառերի մի շարք խրմ-  
բեր ընդհանրապես ներգոյական հոլով չեն կազմում:

Ներգոյականում զուգաձևություններ են առաջանում միայն այն  
պատճառով, որ Ի/ՈՒ հոլովման բառերը ներգոյական հոլովում ևս, ինչ-  
պես գործիականում է, վերջնահնչյուն Ի-ն կարող են և՛ պահպանել, և՛  
չպահպանել, օրինակ՝ ապակի-ապակում||ապակիում, մատանի-մատա-  
նում||մատանիում, լոռի-լոռում||լոռիում, Շուշի-Շուշում||Շուշիում, Շա-  
մախի-Շամախում||Շամախում և այլն: Բայց մի շարք բառերի դեպ-  
քում ընդունված են սղված ձևերը, օրինակ՝ այգում, գինում, ոսկում,  
թեպետև դրանց Ի-ով ձևերը ևս հնարավոր են:

Սակայն կարելի է ասել, որ ապակում||ապակիում, մատանում||մա-  
տանիում, ինչպես և ապակով||ապակիով, մատանով||մատանիով և այլ  
զուգաձևերը ավելի հնչյունական, քան ձևաբանական զուգաձևեր են:

Բացի նշվածներից, ժամանակակից հայերենի հոլովական համակար-  
գում առկա են «մաքոր» հնչյունական զուգաձևեր, ինչպես՝ կամուրջ-  
կամուրջի||կամուրջի-կամուրջից||կամուրջից-կամուրջով||կամուրջով||կամուրջում||  
||կամուրջում, գրիչ-գրչի||գրիչի-գրչից||գրիչից-գրչով||գրիչով-գրչում||գրի-  
չում և այլն:

#### ԱՌԿԱՅԱՑՄԱՆ (ՈՐՈՇՅԱԼԻ ԵՎ ԱՆՈՐՈՇԻ) ՔԵՐԿԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԴԵՐԻ ՏՈՒՑԱԿԱՆ, ՄՍԱՑԱԿԱՆ ԵՎ ԴԻՄՈՐՈՇ ՖՈՒՆԿ-  
ՑԻՆՆԵՐԸ.— Առկայացման քերականական կարգը առաջացել ու զար-  
գացել է բառի ընդհանուր և մասնավոր իմաստների փոխհարաբերության  
հիմքի վրա: Գոյականը (ինչպես և ամեն մի բառ) ունի և՛ ընդհանուր,  
և՛ մասնավոր նշանակություն, որը բխում է հենց լեզվի էությունից: Այս-  
պես, շուն ասելով կարող ենք հասկանալ տվյալ տեսակն ընդհանրա-  
պես, այսինքն՝ բառը որպես հասկացության անվանում, օրինակ՝ «Շունը  
հավատարիմ է մարդուն» և տվյալ տեսակի մեջ մտնող ամեն մի շուն  
առանձին-առանձին, այսինքն՝ բառը որպես թանձրացական, մասնակի  
առարկայի անվանում, օրինակ՝ «Մեր շունը սպիտակ է»:

Հասկանալի է, որ լեզվի հենց բուն կոչումից՝ հաղորդակցման դե-  
րից ելնելով՝ ամեն անգամ պետք է պարզ լինի՝ խոսքն ինչի՞ մասին է՝  
տվյալ տեսակի՞՝ մասին ընդհանրապես, տվյալ տեսակի մեջ մտնող  
մասնակի՞՝ առարկայի մասին, իսկ եթե մասնակի առարկայի մասին,  
ապա որի՞՝ մասին հատկապես: Ըստ այդմ, լեզվի մեջ անպայմանորեն  
կան բառիմաստի կոնկրետացման միջոցներ: Դրանք ամենից առաջ բա-  
ռային միջոցներն են, Այսպես՝ մի վերացական և ընդհանուր գաղափար,  
ասենք, ծառ, զանազան որոշիչների միջոցով թանձրացական բովան-  
դակություն է ստանում, օրինակ՝ «այս, այդ, այն ծառը», «ամենամեծ  
ծառը», «ամենափոքր ծառը», «մեր բակի ծառը», «ներա տնկած ծառը»,  
«առաջին ծառը», «երկրորդ ծառը» և այլն:

Բառիմաստի կոնկրետացման, բառիմաստն առարկայական վերա-  
բերությամբ օժտող միջոցներից մեկը հոդերն են, որոնք, ի տարբերու-  
թյուն վերևում բերվածների, քերականական միջոցներ են:

Մեր հին լեզվում՝ գրաբարում, արդեն կազմավորված ենք տեսնում  
առկայացման քերականական կարգի, ըստ որում, եթե բառը որոշ-  
յալ է, ստանում է Ս, Դ, ն հոդերից որևէ մեկը, իսկ եթե անորոշ է, հոդ  
չի ստանում կամ առանձին դեպքերում կարող է ստանալ մի հոդը, որը  
փաստորեն մի թվականն է՝ իմաստային առանձնահատուկ զարգացում  
ստացած:

Գրաբարյան Ս, Դ, ն հոգերն առաջանում են այս, այդ, այն ցուցական դերանուններից և շփման եզրեր ունեն այդ դերանունների իմաստային ու կիրառական առանձնահատկությունների հետ: Որոշելով, որոշյալ դարձնելով առարկան՝ գրաբարի հոգերը միաժամանակ նշում են, թե տվյալ որոշակի առարկան ի՞նչ տարածական հարաբերություն ունի առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի հետ, ըստ որում, Ս հոգը ցույց է տալիս, որ առարկան առաջին դեմքի մոտ է կամ մտածվում է առաջին դեմքին մոտ, Դ հոգը ցույց է տալիս, որ առարկան երկրորդ դեմքի մոտ է կամ մտածվում է նրան մոտ, իսկ ն հոգը ցույց է տալիս, որ առարկան մոտ է երրորդ դեմքին կամ նրան մոտ է մտածվում. օրինակ՝ «Մատենա գեղեցիկ է» (մատյանը, որ ինձ մոտ է), «Մատենա գեղեցիկ է» (մատյանը, որ քեզ մոտ է), «Մատենա գեղեցիկ է» (մատյանը, որ նրա մոտ է): Նույն ձևով էլ՝ պատանիՍ—(այս) պատանին, պատանիԴ—(այդ) պատանին, պատանիՆ—(այն) պատանին. ամբոխՍ—(այս) ամբոխը, ամբոխԴ—(այդ) ամբոխը, ամբոխՆ—(այն) ամբոխը:

Հայերենի հետագա պատմական զարգացման ընթացքում հոգերի դերը փոխվել է, և նրանք ձևեր են բերել հիմնականում ստացական իմաստ: Եթե գրաբարում աղջիկՍ, աղջիկԴ, աղջիկՆ նշանակել են (այս) աղջիկը, (այդ) աղջիկը, (այն) աղջիկը, ապա ժամանակակից հայերենում համապատասխանաբար նշանակում են՝ իմ աղջիկը, քո աղջիկը, իսկ աղջիկն աղջիկը ձևն էլ նշանակում է մի որոշակի աղջիկ կամ տրվյալ տեսակն ընդհանրապես, այսինքն՝ գրաբարյան ն հոգը դարձել է որոշյալի քերականական կարգի արտահայտման միջոց:

Ս, Դ, ն հոգերից սկզբնական՝ ցուցական ֆունկցիայով ժամանակակից լեզվում գործածվում է միայն Ս-ն, այն էլ որոշակի բառերի հետ և որոշակի կապակցություններում: Այսպիսի օրինակներ են. «Վերջերս (= այս վերջերս) հիվանդ էր». «Օրերս հանդիպեցի նրան». «Ներկայումս նրա գործերը լավ են գնում». «Բարբառս ունի տասը ձայնավոր». «Առաջիններս հոգնակի թիվ են կազմում եր, իսկ վերջիններս՝ ներ մասնիկով». «Աշխարհս կարդացողիցն է շինվել, կարդացողիցն էլ պիտի քանդվի». «Փիշերս անձրև է եկել». «Վերջին ժամանակներս առաջվա թափով չի աշխատում». «Վերջին տարիներս ներամփոփվել է իր մեջ» և այլն: Հնաբան ձևով կան նաև ամուլյս (քսանին), դարուլյս (մեջ):

Ս, Դ, հոգերը ժամանակակից հայերենում ունեն նաև դիմորոշ ֆունկցիա և բառերին տալիս են առաջին կամ երկրորդ դեմքի իմաստ՝ արտահայտելով ես, դու, իսկ հոգնակի թվով գործածված բառերի հետ՝ մենք, դուք անձնական դերանունների իմաստը, օրինակ՝ ես՝ ուսանողս, դու՝ ուսանողդ, մենք՝ ուսանողներս, դուք՝ ուսանողներդ. ես՝ հաղթողս, դու՝ հաղթողդ, մենք՝ հաղթողներս, դուք՝ հաղթողներդ և այլն: Ը (ն) հոգը գործածվում է երրորդ դեմքի բառերի հետ, օրինակ՝ նա՝ ուսանողը, նրանք՝ ուսանողները, նա՝ հաղթողը, նրանք՝ հաղթողները և այլն:

Բայց՝ այստեղ Ը հոգը չէ, որ բառերին տալիս է երրորդ դեմքի իմաստ: Առանց Ը հոգի էլ գոյականներն ընդհանրապես երրորդ դեմքի են: Տրվյալ դեպքում Ը հոգն արտահայտում է բառերի որոշյալ առումը:

Որովհետև կոշականը ցույց է տալիս առարկան, որին դիմում է խոսողը, ուրեմն և ունի երկրորդ դեմքի իմաստ, այդ պատճառով ոճավորված տեքստերում գրաբարյան ձևով նրա որոշիչը կարող է ստանալ երկրորդ դեմքի Դ հոգը, ինչպես՝ «Օ՛, բյուրաստիք... Օ՛, ոսկեմայրդ Անահիտ... Մի՛թե արդար է այս, ո՛վ անաչառդ պարզեիչ» (Զարյան):

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ Ս և Դ հոգերի մեջ դիմորոշ իմաստը ցայտուն չի դրսևորված, և դրանք ես, դու, մենք, դուք անձնական դերանունների իմաստ են արտահայտում սովորաբար դրանց հետ միասին: Այսպես՝ կապակցությունից դուրս ուսանողս, ուսանողդ, աղակերտս, աղակերտդ և այլ ձևերում Ս, Դ հոգերն ըմբռնվում են ստացական իմաստով՝ իմ ուսանողը, քո ուսանողը, իմ աղակերտը, քո աղակերտը և ոչ թե դիմորոշ իմաստով՝ ես՝ ուսանողս, դու՝ ուսանողդ, ես՝ աղակերտս, դու՝ աղակերտդ: Միայն որոշ դերանունների և թվականների հետ այդ իմաստը, այսինքն՝ դիմորոշ իմաստը, բացարձակ է, ինչպես՝ ինքս, ինքդ, ինքը, ամենքս, ամենքդ, ամենքը, բոլորս, բոլորդ, բոլորը, յուրաքանչյուրս, յուրաքանչյուրդ, յուրաքանչյուրը, երկուսս, երկուսդ, երկուսը, երեքս, երեքդ, երեքը և այլն:

Ս, Դ, ն (ը) հոգերը, ինչպես նշված է արդեն, արտահայտում են նաև ստացական իմաստ և դրվելով գոյականների վրա՝ ցույց են տալիս, թե ում է պատկանում առարկան՝ արտահայտելով իմ, քո, նրա (իր), մեր, ձեր, նրանց (իրենց) անձնական դերանունների իմաստը, ինչպես՝ շուս (իմ շորը), շորդ (քո շորը), շորը (նրա շորը), շորերս (իմ շորերը), շորերդ (քո շորերը), շորերը (նրա շորերը), տունս, տունդ, տունը, տներս, տներդ, տները և այլն: Մեր, ձեր, նրանց (իրենց) իմաստն արտահայտելու համար բառն ստանում է ն+ԵՐ վերջավորությունը (կրկնակի հոգնակի), որի վրա դրվում են հոգերը, օրինակ՝ շորներս (մեր շորերը), շորներդ (ձեր շորերը), շորները (նրանց շորերը), տղաներս, տղաներդ, տղաները և այլն:

Մի օրինակ էլ բերենք գեղարվեստական գրականությունից.

Քնքուշ երագով պաճուճի հոգիՍ,  
 Նստիր մահճիՍ մոտ ու տխուր երգիր,  
 ՄագերԴ փոքր հոգնատանց կրծքիՍ  
 Ու մեղմ փայլալիք սիրտՍ տարագիր:

Ինչպես վերևի օրինակներից կարելի է եզրակացնել, ն՞Ը հոգը ըստացական իմաստ շատ թույլ է դրսևորում: Հենց բերված օրինակներում նա ավելի բառերի որոշյալությունն է արտահայտում, քան ստացականության կարգը:

Վերջին շրջանում հրատարակված քերականական աշխատություններում հայերենի հոդերի արտահայտած ցուցական, ստացական և դիմորոշ իմաստները բնութագրվում են որպես առկայացման քերականական կարգի ցուցա-ստացական ենթակարգ: Գ. Զահուկյանը գրում է. «Ցուցա-ստացական ենթակարգը արտահայտության պլանում բնորոշվում է Ս, Դ, երբեմն էլ Ը, ն մասնիկների (հոդերի) առկայությամբ, որոնք բովանդակության պլանում արտահայտում են ցուցա-ստացական, բուն ցուցական և դիմորոշ իմաստներ: Այս բոլոր դեպքերում հիմնականը և ծագմամբ առաջնայինը ցուցական իմաստն է. Ս, Դ հոդերը ծագմամբ նույնն են այս, այդ (և սա, դա) որոշիչ դերանունների բուն արմատական մասերի հետ: Երկրորդաբար ցուցական իմաստի վրա աճել է ստացական իմաստը, իսկ դիմորոշ իմաստը արդյունք է անձնական (անձնանիշ) դերանունների հետ անունների համաձայնվելու (ես ուսուցիչս)»<sup>21</sup>:

**ՈՐՈՇՅԱԼԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐՇԵՅ ՀՈԳԻ ՖՈՒՆԿՑԻՆԱՆԸ.**  
**ՐԸ.**— Որոշյալի կարգը ժամանակակից հայերենում արտահայտվում է ն կամ Ը հոդերի միջոցով, որոնց հակադրվում են Օ և ՄԻ ձևերը, որոնք արտահայտում են անորոշի կարգը:

Ն||Ը հոդը ժամանակակից հայոց լեզվում, որպես կանոն, դրվում է միայն ուղղական և սեռական-տրական հոլովների վրա: Որոշյալ հոդի այսպիսի սահմանափակ կիրառությունն արևելահայ գրական լեզվի վերջին շրջանի զարգացման արդյունք է: Արևելահայ գրական լեզվի ձևավորման շրջաններից սկսած մինչև 19-րդ դարի վերջերը որոշիչ հոդի կիրառության այսպիսի սահմանափակում չի եղել, և Ն||Ը հոդը ղերվել է բոլոր հոլովների վրա: Ստ. Պալասանյանն արձանագրելով այս դրությունը՝ գրում է, որ սեռական հոլովը երբեք որոշյալ հոդ չի ընդունում, բայց մյուս հոլովները առանց բացառության կարող են հոդ առնել: Ըստ այդմ, նա պարտեզ բառի որոշյալ առումը բերում է հետևյալ ձևով. ուղղ.-հայց.— պարտեզը, սեռ.— պարտեզի, տր.— պարտեզին, բաց.— պարտեզիցը, գործ.— պարտեզովը, ներգ.— պարտեզումը: Բայց միաժամանակ Ստ. Պալասանյանը նշում է հետևյալը. «Գրավոր լեզվի մեջ բացառական, գործիական և ներգոյական հոլովները ավելի անհոդ են վարվում, քան թե հոդով, զորօրինակ՝ իմ բարեկամը մարդասիրական ընկերությունից օգնություն ստացավ. Հողագործները կերակրվում են դաշտի բերեռով և ծառերի պտուղներով. Աշակերտները խաղում են ուսումնարանի բակում»<sup>22</sup>:

Բացառական, գործիական, ներգոյական հոլովների որոշիչ հոդ չընդունելու այդ ընթացքը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին

վերածվում է որոշակի օրինաչափության, ժամանակակից գրական լեզվի նորման այն է. որ բացառական, գործիական և ներգոյական հոլովները գործածվում են առանց որոշիչ հոդի: Բայց որովհետև ՈՒՄ ճյուղի բարբառներում այդ հոլովները ևս հոդ են ստանում, դրանց ազդեցությամբ ժողովրդական ոճի ստեղծագործություններում բացառական, գործիական և ներգոյական հոլովների վրա ևս կարող է որոշիչ հոդ դրվել:

Այսպիսի բազմաթիվ օրինակների հանդիպում ենք Հ. Թումանյանի ստեղծագործության մեջ, օրինակ՝ «Մրեց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում»։ «Սա վեր թուավ, դուրս ընկավ, ետ գետնովը դիպավ»։ «Թե ասե՞նք անձրևիցն էր, որ երդիկովը մերս էր թափվում»։ «Հնքան տարածությունը ինչպես մի երկու րոպեումը կտրեցին ու հասան»։ «Մտակի մթնումը կորան, գնացին»:

Նման ձևերի հանդիպում ենք նաև խորհրդային շրջանի գրողների գործերում:

Եթե ժողովրդական-խոսակցական լեզվին հատուկ այս ձևերը հաշվի չառնենք, ապա գրական լեզվում որոշյալ առման դեպքում հոդ են ստանում միայն ուղղական և սեռական-տրական հոլովները՝ հակադրվելով համապատասխան հոդ չունեցող կամ մի անորոշ հոդն ունեցող ձևերին: Այսպիսով ունենում ենք հետևյալ հակադրությունը.

Եզակի		
Հ ո լ ո վ ը	Ո Ր Ո Շ Յ Ա Լ	Ա ն ո Ր Ո Շ
Ուղղական	Ն  Ը	Օ ՄԻ
Տրական	Ն  Ը	Օ ՄԻ

Այսինքն՝ ուղղ.— երեխան-երեխա||մի երեխա տրակ.— երեխային-երեխայի||մի երեխայի:

ՄԻ անորոշ հոդը իր յուրահատուկ իմաստի պատճառով սովորաբար հոգնակի բառաձևերի վրա դրվել չի կարող, ուստի և հոգնակի վրում ունենում ենք Ն||Ը—Օ հակադրությունը:

Հոգնակի		
Հ ո լ ո վ ը	Ո Ր Ո Շ Յ Ա Լ	Ա ն ո Ր Ո Շ
Ուղղական	Ն  Ը	Օ
Տրական	Ն  Ը	Օ

Այսինքն՝ ուղղ.— երեխաները-երեխաներ տրակ.— երեխաներին-երեխաների:

Գրաբարում Ը հոդը չի եղել: Երրորդ դեմքի համար կիրառվել է միայն. Ն հոդը և՛ ձայնավորահանգ, և՛ բաղաձայնահանգ բառերի հա-

<sup>21</sup> Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 212:  
<sup>22</sup> Ստ. Պալասանյան, Բերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1908, էջ 120:



մար, օրինակ՝ ձի-ձին, պատանի-պատանին, թագունի-թագունին, կատու-կատուն, առու-առուն, տուն-տունն, բուն-բունն, թագաուր-թագաուրն, ծառ-ծառն, ազգ-ազգն և այլն: Բաղաձայնահանգ բառերում ն հոգից առաջ գաղտնավանկ ը է եղել, և վերևի բառերն արտասանվել են՝ տունըն, բանըն, թագաուրըն, ծառըն, ազգըն: Աշխարհաբարում գրաբարյան ըն վերջավորվող բառերի ն հնչյունն ընկնում է, օրինակ՝ դունն > դուր > դուռ, ձուկն > ձուկը > ձուկ, մուկն > մուկը > մուկ և այլն: Սրա համեմատ գրաբարյան տունն, ծառն, ազգն և այլ ձևերը դարձել են տունը, ծառը, ազգը և այլն: Այս ձևով գաղտնավանկ կազմող ը հընչյունը վերածվել է լիարժեք ձայնավորի և ստանձնել է որոշիչ հոգի պաշտոն:

Ն և ը հոգերը իմաստային տարբերություն ամենևին չունեն. նը-րանք ունեն միայն գործածության կամ դիրքային ոլորտի տարբերություն, այն է՝ ձայնավորով վերջացող բառերն ստանում են ն հոգը, իսկ բաղաձայնով վերջացողները՝ ը հոգը, ինչպես՝ աբա-աբան, երեկո-երեկոն, բագե-բագեն, այգի-այգին, առու-առուն, տուն-տունը, սար-սարը, ուսանող-ուսանողը, բանվոր-բանվորը, բժիշկ-բժիշկը և այլն: Սակայն կապակցված խոսքում բաղաձայնահանգ բառերի ը հոգը կարող է փոխարինվել ն-ի, եթե հաջորդ բառն սկսվում է ձայնավորով: Այդ դեպքում ն հնչյունն անցնում է հաջորդ բառին, երկու բառերն արտասանվում են միասին, առանց դադարի, որի հետևանքով տրամաբանական շեշտն ընկնում է հաջորդ բառի վրա, օրինակ՝ «Զինվորն ընկավ», «Արամն ասաց», «Գնացքն ուղացավ», «Ամառն անցավ» և այլն: Նույնն է նաև չգրվող ը-ով սկսվող բառերի դեպքում, օրինակ՝ «Զինվորն շտապեց», «Արամն սպասեց», «Աղջիկն զգաց» և այլն:

Սակայն ձայնավորով սկսվող բառերից առաջ բաղաձայնահանգ բառերի ը հոգը կարող է և մնալ, շփոխվել ն-ի: Այդ դեպքում հանդիպադրվում են երկու ձայնավորներ, որոնք միասին առանց դադարի արտասանվել չեն կարող, և, այսպիսով, առաջին բառից հետո արտասանական փոքրիկ դադար է առաջանում, որի հետևանքով էլ տրամաբանական շեշտն ընկնում է առաջին, այսինքն՝ հոգ ունեցող բառի վրա, օրինակ՝ «Զինվորը ընկավ», «Արամը ասաց», «Գնացքը ուղացավ», «Ամառը անցավ»:

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ ն հոգի ոլորտն ավելի լայն է, քան ը հոգի ոլորտը, քանի որ ն-ն գրվում է ձայնավորահանգ բոլոր բառերի վրա, այլև ը-ի փոխարեն կարող է գրվել նաև բաղաձայնահանգ բառերի վրա՝ հնչյունական հատուկ միջավայրում, այն է՝ ձայնավորով սկսվող բառերից առաջ:

Ը և ն հոգերի հիմնական ֆունկցիան այն է, որ գրվելով գոյականների վրա՝ ցույց են տալիս, որ խոսքը գնում է խոսողի և խոսակցի համար որոշակի, ծանոթ, հայտնի առարկայի մասին, որը խոսքի մեջ ար-

դեն մի անգամ հիշատակված է և այսպիսով գրված է կոնկրետ իրադրության մեջ, օրինակ՝ «Կինը նրա բարձի տակից դուրս բերեց մի մեծ ծրար, Մեռնողն ապակյա աչքերով նշան արավ դեպի Սմբատը, և մայրը ծրարը տվեց որդուն» (Շիրվ.): «Մի մարդաբոյ արջ էր կանգնել մի քիչ հեռու: Երբ արջը թքոտելով դեն գցեց ուսի փայտը, շորքոտանի դարձավ, բերդանը որոտաց» (Բակ.): «Մի անգամ մի պախրա ա վիրավորում: Պախրան փախչում ա, սա ընկնում ա ետևիցը» (Թում.):

Սակայն որոշիչ հոգերով կարող են գործածվել նաև խոսքի մեջ առաջին անգամ հիշատակվող գոյականները: Դա նշանակում է, որ տրվելով գոյականներով արտահայտված առարկաները արդեն հայտնի, ծանոթ են խոսողին ու խոսակցին և որոշակի են ըստ իրադրության:

Այսպես, մի դպրոցի ուսուցիչների կամ աշակերտների համար «Գիրեկտորը եկել է», «Ուսմասվաթը դաս է լսում», «Ուսուցչանոցը փակ է», մի ընտանիքի անդամների համար «Բազմոցը մաշվել է», «Գրասեղանը լավ մաքրիր», «Արդուկը բե՛ր» և այլ նախադասությունների ընդգծված բառերով արտահայտված հասկացությունները թանձրացական են ու որոշակի, ընկալվում են որպես միակ հնարավորը, ընտրությունը բացառված է, որի հետևանքով էլ կիրառվում են որոշիչ հոգով:

Քննարկված դեպքերում որոշիչ հոգը մասնավորեցնող, առանձնացնող դեր է կատարում, բայց դա որոշիչ հոգի միակ ֆունկցիան չէ:

Որոշիչ հոգն ունի ոչ միայն մասնավորեցնող ու առանձնացնող, այլև ընդհանրացնող նշանակություն՝ ցույց տալով հասկացությունը որպես այդպիսին, հասկացությունն ընդհանրապես: Այսպես, «Ուսանողը հանձնեց բնությունը» նախադասության մեջ խոսքը գնում է որոշակի, խոսողին ու լսողին ծանոթ, հայտնի ուսանողի մասին, իսկ «Ուսանողը պետք է աշխատասեր լինի» նախադասության մեջ՝ ուսանողի մասին ընդհանրապես: Այսպիսի օրինակներ են նաև՝ «Մարդը վերափոխում է բնությունը, իսկ կենդանին հարմարվում է բնությանը». «Վարդը ծաղիկ է». «Առյուծը գիշատիչ կենդանի է». «Գիրքը մարդու հավատարիմ բարեկամն է». «Շունը հավատարիմ է մարդուն». «Հավը թռչուն է», «Արծիվը թռչունների արքան է». «Աղվեսը խորամանկ է». «Բույսը շերտություն ու լույս է սիրում» և այլն:

Որոշիչ հոգերի ֆունկցիաներից մեկն էլ այն է, որ նրանք արտահայտում են ծավալային ամբողջություն:

Որոշիչ հոգերի այս ֆունկցիան շատ ցայտուն ու վառ ձևով դրսևավորվում է նյութ ցույց տվող գոյականների վրա գրվելիս: Այսպես, ենթադրենք, թե սեղանի վրա գրված է մեկ շիշ գինի: Երբ ասում ենք՝ «Գինին տո՛ւր», հասկանալի է, որ խոսքը գնում է ամբողջ շիշի մասին, իսկ երբ ասում ենք՝ «Գինի՛ տուր», հասկանալի է, որ խոսքը գնում է ոչ թե ամբողջի, այլ մասի վերաբերյալ: Այսպես է նաև հետևյալ նախադասությունների մեջ, որտեղ որոշյալ ձևերն արտահայտում են ամ-

բողջը, իսկ անորոշ ձևերը՝ մասը. «Այլաւր բե՛ր», «Այլա՛ւր բեր». «Յա-  
րենը վաճառեցին», «Յուրեն վաճառեցին». «Թանա՛քը թափվեց հատա-  
կին», «Թանա՛լ թափվեց հատակին». «Մի՛րգը տո՛ւր երևխային», «Մի՛րգ  
տուր երեխային»:

Որոշիչ հոգի այս նշանակութունը տարածվում է նաև հոգնակի թը-  
վով գործածված գոյականների վրա ընդհանրապես: Այսպես, որոշիչ  
հոգը հոգնակի թվով գործածված գոյականների հետ արտահայտում է  
ոչ միայն որոշյալ առումը, այլև ծավալային ամբողջութուն, իսկ հոգ-  
նակի անհոգ ձևերն արտահայտում են ոչ միայն անորոշ առումը, այլև  
ծավալային մասնակիություն, օրինակ՝ «Ուսանողները դուրս էին եկել  
շաբաթօրյակի», «Ուսանողներ էին դուրս եկել շաբաթօրյակի». «Մա-  
տիաները բեր», «Մատիտներ բեր», «Միջանցքում վազվզում էին աշա-  
կեւտները», «Միջանցքում աշակերտներ էին վազվզում» և այլն:

Դրան համապատասխան էլ՝ բոլոր բառի հետ, որը ծավալային ամ-  
բողջութուն է ցույց տալիս, գոյականները կգործածվեն որոշիչ հոգով,  
իսկ, ասենք, որոշ, մի ֆանի բառերի հետ, որոնք մասնական նշանա-  
կութուն ունեն, գոյականները կգործածվեն առանց որոշիչ հոգի, օրի-  
նակ՝ «Բոլոր ուսանողները հաջողությամբ հանձնեցին քննութունները»,  
«Որոշ ուսանողներ կամ մի ֆանի ուսանողներ հաջողությամբ հանձնե-  
ցին քննութունները». «Ներկա էին բոլոր ուսուցիչները», «Ներկա էին  
որոշ կամ մի ֆանի ուսուցիչներ» և այլն:

Եվ վերջապես՝ որոշիչ հոգն ունի մի կարևոր ֆունկցիա ևս: Որոշիչ  
հոգը ոչ գոյական խոսքի մասերին տալիս է գոյականակցուն, առարկա-  
յական նշանակություն, ինչպես՝ լավը, վատը, հեռավորը, զգայունը,  
հոգնածը, զբաղը, շատը, քիչը, նորը, հինը, գեղեցիկը, երկրորդը և այլն:

Որպես ընդհանրացում կարելի է ասել, որ եթե մի բառ գործածված  
է որոշիչ հոգով, ուրեմն կամ գոյական է, կամ գոյականաբար է կի-  
րառված:

ԱՆՈՐՈՇԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ (ԶՐՈ ՁԵՎ).— Գոյականի անորոշ  
առումը ժամանակակից հայերենում, ինչպես նշված է արդեն, արտա-  
հայտվում է կամ առանց հոգի՝ ուսանող, կամ ՄԻ անորոշ հոգով՝ մի  
ուսանող: Նախ առաջինի, այսինքն՝ անհոգ կամ, որ նույնն է, զրո հոգ  
ունեցող ձևի մասին:

Գոյականն առանց որոշիչ հոգի, ինչպես՝ տուն, մարդ, ծառ, ար-  
համարհանք, լավություն, ծագում և այլն, արտահայտում է բառիմաս-  
տըն ամենաընդհանուր և վերացական ձևով, առանց որևէ կոնկրետաց-  
ման ու սահմանափակման: Թանձրացական առարկաների անվանում-  
ներն անգամ, ինչպես են վերևում բերվածները՝ տուն, մարդ, ծառ, ա-  
ռանց հոգերի այնքան վերացական-ընդհանուր նշանակություն են ար-  
տահայտում, որ փաստորեն հավասարվում են վերացականներին՝ ար-  
համարհանք, լավություն, ծագում:

Գոյականն առանց հոգի և անորոշ է մնում սովորաբար հետևյալ  
գեպքերում<sup>29</sup>:

1. Երբ խոսվում է անծանոթ առարկայի մասին, որը խոսքի մեջ  
հիշատակվում է առաջին անգամ և որը հենց հաղորդման նպատակն է.  
եթե անհոգ գործածված բառը եզակի է, ապա թվի վրա սովորաբար  
ուշադրություն չի դարձվում, օրինակ՝ «Գնաց, մի կորկում լուր էր սպա-  
նում, նեղուկ էր զարկում» (Թում.). «Բացուտներում միհեալ էր որ-  
սում, արտերի մոտ կախավ ու լուր» (Բակ.). «Գեյ ու աղվես եկան հան-  
զից, Ագահ սիրտը լափեցին, Յին ու ագռավ իշան ամպից, Սև աչքերը  
հանեցին» (Թում.). «Հագած էր երկայնափեշ սև ռեզինկոտ, մոխրագույն  
անդրավարտի և սև մետաքսե խոշորագույն փողկապ» (Շիրվ.):

2. Երբ բառը սոսկ իր անվանողական ֆունկցիայով է գործածվում,  
օրինակ.

— Ասա՛ անձի մի քանի հատուկ անուններ:

— Սուրեն, Գուրգեն, Արամ, Աշոտ, Հասմիկ, Մաղիկ, Ռուզան, Գե-  
հար:

— Այժմ ասա՛ անձի մի քանի հասարակ անուններ:

— Բծիշկ, ուսուցիչ, ուսանող, աշակերտ, բանվոր, զինվոր, տղա:  
«Սարգիսը կրծոտում էր Դավթի ձեռքերը, գլուխն ուժգին զարնում  
էր հատակին, գոռալով.

— Անաստվա՛ծ, սվագա՛կ, մարդասպա՛ն, դահի՛ն և այլն, և այլն»  
(Շիրվ.):

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ որոշյալ առումով գոր-  
ծածված բառը հաճախ է գալիս որպես խոսքի ելակետը, իսկ անորոշ  
առումով բառը՝ այն նորը, որ հաղորդվում է: Այսպես, «Կինը նամակ  
բերեց» նախադասության մեջ խոսքի ելակետը կինն է, իսկ նամակը հա-  
ղորդվող նորն է: «Նամակը (մի) կին բերեց» նախադասության մեջ խոս-  
քի ելակետը նամակն է, իսկ կին հաղորդվող նորն է: Եթե խոսքը շա-  
րունակենք հետևյալ ձևով՝ «Կինը հագել էր սպիտակ շրջազգեստ», ապա  
այս նախադասության մեջ կինը հաղորդման ելակետն է, իսկ շրջա-  
զգեստը այն նորը, որը հաղորդվում է:

3. Երբ բառը գործածվում է մասնական նշանակությամբ՝ ցույց  
տալով առարկայի, հատկապես նյութի մասը և ոչ թե ամբողջութունը,  
օրինակ՝ «Աղբյուրի մոտ հաց կերանք, մի կուշտ ջուր խմեցինք» (Անան.).  
«Ձեզանից ո՞վ այլուր կծախի, մի շափ այլուր տա՛ գնամ» (Թում.). «Հաց  
չենք ուզում ձեզանից, Հող տվեք մեզ ձեր տանից» (Թում.). «Նադիր  
շահը զորք հավաքեց, Զորք հավաքեց անհամար» (Թում.) և այլն:

4. Մի խումբ որոշիչներ ըստ իրենց իմաստի անորոշ առումով գոր-

<sup>29</sup> Հմմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 325—328, Յ. Туманян,  
Артикли в современном армянском языке, էջ 132—182:

ծածուծ գոյական որոշյալ են պահանջում: Այսպես են հատկապես անորոշ դերանունները՝ ինչ-որ, ինչ-ինչ, ինչ, ուրիշ, այլ, ուրե՛, որևիցե, մի քանի, որոշ, ոմն և մի քանի այլ դերանուններ՝ ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ոչ մի, քանի, օրինակ՝ «Բժիշկը սրսկում էր ինչ-որ սթափեցուցիչ հեղուկ» (Շիրվ.): «Հիմի ուրիշ երեխաներ են խաղում իմ մանկության ընկեր գետակի ափին» (Անան.): «էլ ի՞նչ թագավոր կամ էլ ի՞նչ իշխան, Որ կո՛րվ շանի, ուրիշին շտիրի» (Թում.): «Շամմուրամա՛տ, ամեն բան որևէ սահման ունի» (Զար.): «Արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին» (Բակ.): «Քանի-քանի մարդ կորավ իր տանից, Քանի-քանի մարդ դառավ մարդասպան» (Թում.): «Ոչ մի գրիչ երա գեղանկությունը չի կարող նկարագրել» (Անան.) և այլն:

5. Որպես կանոն որոշիչ հոդ չեն ստանում և անհոդ են գործածվում գրաբարաձև հոգնակները՝ մարդիկ, կանայք, պարոնայք, այլև Ք-ով կազմված հոգնակները Յի ածանց ունեցող բառերից, ինչպես՝ «Բայց մարդիկ գիտեին ինչպես զովացնել իրենց նախանձավառ սըրտերը» (Շիրվ.): «Մար կանայք հեռվից տեսան, Հեռվից տեսան, ուրախացան» (Թում.): «էս մասին գյուղացիք մի քանի պատմություն արին» (Թում.): «Սարեցիք պատրաստվում էին վարդավառի տոնին» (Անան.): «Ուրախացիք հանկարծ որոտաձայն ընկան փղերի մեջ» (Զար.) և այլն:

Նույնն է նաև, երբ գրաբարյան հոգնակի ձևերը գործածվում են ոճավորման նպատակով, օրինակ՝ «Յրված միաբանն ևս եկան նորից» (Թում.): «Ահա մեր իմաստուն զուսանք ժամանեցին» (Զար.):

Սովորաբար անհոդ են գործածվում նաև բերված բառերի տրական հոլովաձևերը, ինչպես՝ «Հանդիպեցի այս մարդկանց, կանանց». «Տեսա այս մարդկանց, կանանց». «Բայց սե նախանձը կուրացրել էր մարդկանց» (Շիրվ.): «Պահանջներն շտապեցնում էին գյուղացոց» (Բակ.): «Նայում էր բժշկին, կովերին, գյուղացոց» (Բակ.): Վերջին ձևը բարբառային է:

Այսպես և՛ անհոդ են գործածվում ԵՆՔ, ԱՆՔ, ՈՒՆՔ ձևով կազմված անեզականները, օրինակ՝ «Վարդանանք բաջաբար ընկան պատերազմում». «Արմենենք այսօր հյուրերի են սպասում» և այլն:

6. Բացառական, գործիական և ներգոյական հոլովները, լինեն որոշյալ թե անորոշ, որպես կանոն արդի հայերենում որոշիչ հոդ չեն ընդունում և գործածվում են անորոշ ձևով:

Որոշիչ հոդի գործածությունը սահմանափակված է նաև շարահյուսության, և մի շարք նախադասությունների առավելագույն կամ միշտ գործածվում են անորոշ ձևով՝ առանց որոշիչ հոդի:

Որպես կանոն, որոշիչ հոդ չեն ստանում և անորոշ ձևով են գործածվում կոչականը, գոյական որոշիչը, հատկացուցիչը և այլն:

Մի ԱՆՈՐՈՇ ՀՈՂԸ.— Եթե լեզուներում որոշիչ հոդը, որպես կա-

նոն, առաջանում է ցուցական դերանուններից, ապա անորոշ հոդը ծագում է մի թվականից:

Վերցնենք հետևյալ օրինակները. «Ուշիկ բայերով ներս մտավ մի պատանի» (Ռաֆ.). «Ղուսամուտներից մեկի առջև կանգնած էր մի կին և ծպտալով նայում էր» (Շիրվ.). «Նստած եմ մի օր ու միտք եմ անում, Միտք եմ անում, միտք ու շեմ կարենում Մի ճնար գտնեմ՝ ցավերս հոգամ» (Թում.): «Զմուռն մի գիշեր կար մի ճարտանիք» (Թում.):

Ընդգծված կապակցությունների մեջ խամբած է մի բառի թվականական, թվարկման նշանակությունը, բացարձակորեն գերակշռում է ընդհանուր տարտամ իմաստը, և նա փաստորեն անորոշ հոդի դեր է կատարում: Այսպես, «Մի պատանի տեսավ մի կնոջ» մոտավորապես նշանակում է «Ինչ-որ պատանի տեսավ ինչ-որ կնոջ»: «Մի տարում նա փականագործ դարձավ մի մեծ գործարանում» (Խանդ.) նախադասության մեջ մի-ն առաջին դեպքում արտահայտում է թվարկման գաղափար և միայն ու միայն թվարկման գաղափար, այսինքն՝ թվական է, իսկ երկրորդ դեպքում թվարկման գաղափարը իրեն զգացնել չի տալիս կամ համարյա զգացնել չի տալիս, մի-ն արտահայտում է անորոշության ընդհանուր իմաստ՝ անորոշ հոդի նշանակությամբ:

Մի թվականը և մի անորոշ հոդը արդի հայերենում տարբերակված չլինելով ձևով և դիրքով՝ տարբերակվում են շեշտով: Սովորաբար մի-ն որպես թվական շեշտ է կրում, իսկ որպես անորոշ հոդ շեշտ չի կրում կամ արտասանվում է շատ թույլ շեշտով, օրինակ՝ «Նա մի՛ կով ունի» և «Նա մի կով ունի». «Մի՛ անգամ հանդիպեցի նրան» և «Մի անգամ հանդիպեցի նրան». «Մի՛ մարդ տեսա» և «Մի մարդ տեսա»:

Մի հոդի հիմնական նշանակությունն այն է, որ գոյականի ընդհանուր իմաստը կոնկրետացնում, մասնավորում է եզակի, անհատ առարկայի շուրջը, ինչպես՝ տուն—մի տուն, գիրք—մի գիրք, մարդ—մի մարդ, կին—մի կին և այլն: Սա նշանակում է, որ մի հոդն ունի կոնկրետացնող, առանձնացնող իմաստ: Մի հոդի այս իմաստն ուղղակիորեն բխում է մի թվականի իմաստից:

Գիտենք, որ կոնկրետացնող, մասնավորող նշանակություն ունի նաև որոշիչ հոդը: Այդ դեպքում ո՞րն է որոշիչ և անորոշ հոդի տարբերությունը:

Այս տարբերությունը հատկապես այն է, որ որոշիչ հոդով գործածված գոյականը ցույց է տալիս տվյալ տեսակի մի որոշակի առարկա, և այլ առարկայի ընտրությունը բացառված է, ինչպես «Քիրքը տո՛ւր», «Աթոռը վերցրու և նստի՛ր», իսկ մի անորոշ հոդով գործածված գոյականը ցույց է տալիս պատահած առարկան՝ որպես տվյալ տեսակի մեջ մտնող առարկաներից մեկը, ինչպես՝ «Մի գիրք տո՛ւր», «Մի արձակվեցրու և նստի՛ր»:

Լեզվաբանական գրականության մեջ ճիշտ կերպով նշված է, որ

անորոշ հոգով գործածված գոյականը ցույց է տալիս եզակի, մասնավոր առարկա նույն տեսակի այլ առարկաների ֆոնի վրա, ինչպես՝ «Մի գիրք տա՛ւր», իսկ որոշյալ հոգով գործածված գոյականը այսպիսի ֆոն չի ենթադրում, ինչպես՝ «Գիրքը տա՛ւր»:

Սովորաբար ստում ենք, որ ժամանակակից հայերենում անորոշ առումն արտահայտվում է Օ հոգով՝ մառդ, խնձոր և մի անորոշ հոգով՝ մի մառդ, մի խնձոր, այսպիսով հավասարության նշան դնելով այդ ձևերի միջև: Սակայն սրանք հավասարաթեք չեն և երևան են հանում իմաստային տարբերություններ: Նախ՝ կապակցությունից դուրս անհոգ ձևերը նշանակում են տվյալ հասկացությունը, ինչպես՝ մառդ, խրճճոր, իսկ մի հոգով ձևերը՝ տվյալ հասկացության մեջ մտնող եզակի առարկան, որն անձանոթ է, ինչպես՝ մի մառդ, մի խնձոր: Մյուս կողմից՝ անհոգ գոյականը, երբ եզակի է, շատ դեպքերում անտարբեր է թվի քերականական կարգի նկատմամբ և հոգնակի իմաստով ևս կարող է ըմբռնվել, օրինակ՝ «Դուրս եկա փողոց»՝ մառդ տեսա». «Խնձոր գնեց». «Ձուկ բռնեց» և այլն: Մի հոգով գործածված գոյականը եզակի և միշտ եզակի է ըմբռնվում, և դա բխում է մի թվականի բառային նշանակությունից, որից զարգացել է անորոշ հոգը, ինչպես՝ «Դուրս եկա փողոց» մի մառդ տեսա». «Մի խնձոր գնեց». «Մի ձուկ բռնեց»:

Ըստ իր նշանակության՝ ժամանակակից հայոց լեզվում մի անորոշ հոգը, որպես կանոն, հոգնակի թվով գործածված գոյականների հետ կիրառվել չի կարող, թեև ժողովրդական-խոսակցական լեզվում անհրեար չի նաև այդ կիրառությունը, օրինակ՝ «Մի խոսքեր ասաց, որ մի փութ մեղրով չէին ուտվի». «Մի այնպիսի սիրուն աղջիկներ էին, որ շուտես, չխմես, նրանց մտիկ անես». «Մի ձայներ էին հանում, որ մարդու սիրտ մղկտում էր». «Մի տներ տեսա, որ կյանքումս չեմ մոռանա» և այլն:

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ Մի հոգի հիմնական կիրառությունն այն է, որ դրվելով գոյականի վրա՝ ցույց է տալիս առարկաներից մեկը, որն անձանոթ է և խոսքի մեջ հիշատակվում է առաջին անգամ, ինչպես՝ «Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ» (Թում.). «Գնաց ու գնաց, բարձրացավ մի սառ, Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար բառ» (Թում.). «Փովում է դեմս իսկույն մի փողոց խաղաղ, Ու փողոցի անկյունում— մի վտիտ տղա» (Չար.). «Բայց ճշում էր մեր սրտերում կարկամ Մի անհուն կսկիծ ու մի հսկա ցավ» (Չար.). «Մի ջահել կին դուրս եկավ սիմիդրի խիտ արտից» (Բակ.). «Գուցե ճամփի մեջտեղը մի կխտառ պատահեց» (Անան.):

Նշենք նաև այն, որ անորոշ հոգով գործածված գոյականները խիստ առանձնանում են, առարկաները մեր ուշադրության կենտրոնն են դառնում, և, այսպիսով, մենք սպասում ենք հետագա տեղեկությունների այդ առանձնացված առարկաների մասին, ինչպես՝ «Օտար երկնքի կա-

մարների տակ Երազիս տեսա մի շքնաղ աղջիկ» (Տեր.). «Դեմից մի րոշուն անցավ սրբեթաց» (Չար.). «Դուրս թուով մի զինվոր՝ ձեռին դաշույն» (Չար.). «Ափից մոտիկ պտտում էր մի կանաչ նավակ» (Թում.) և այլն:

Այս պատճառով էլ սովորաբար այսպիսի նախադասություններին հաջորդում են այլ նախադասություններ, որտեղ տեղեկություններ են տրվում մի հոգով առանձնացված գոյականների մասին, օրինակ՝ «Մեռավ իր հետ տանելով մի ծանր վիշտ: Եվ այդ վիշտը նրա զավակներն էին» (Շիրվ.). «Դարձավ նա մի տղամաքդու, որ քայլ առ քայլ հետևում էր նրան: Դա հանգուցյալի փեսան էր» (Շիրվ.). «Ձյունների վրա ընկած էր մի կին: Մեռնում էր անմիտ մի ծախտ դեմքին» (Չար.):

Քննարկված օրինակներում Մի հոգն ունի առանձնացնող, մասնավորեցնող նշանակություն: Մի հոգը կարող է արտահայտել նաև ընդհանուր հասկացություն: Այսպես, «Լեզուն հաղորդակցության միջոց է» միտքը կարելի է արտահայտել նաև «Լեզուն հաղորդակցության մի միջոց է» ձևով:

Ուրեմն՝ ընդհանուր հասկացությունները կարող են արտահայտվել ն է հոգով, Օ ձևությամբ և մի անորոշ հոգով: Այս դեպքում մի հոգը ցույց է տալիս, որ ընդհանուր հասկացության բնութագրման համար վերջված է նույն տեսակի առարկաներից մեկը, իսկ որոշիչ հոգով և անհոգ ձևերը սոսկ արտահայտում են ընդհանուր հասկացությունը:

Ահա համապատասխան այլ օրինակներ, որտեղ մի հոգով գործածված գոյականները ընդհանուր հասկացություններ են արտահայտում. «Մի մառդ, որ արհամարհում է իր ժողովրդին, ստոր է ու դավաճան». «Մի ազգ, որ մոռանում է իր լեզուն, պատմության ասպարեզից դուրս է գալիս». «Իշխանությունը տիրող դասակարգի ձեռքին մի զենք է». «Ազատությունը մի աստվածային բարիք է» և այլն:

Մի բանն ունի նաև այլ կիրառություններ, որոնք որոշյալի ու անորոշի կարգի հետ անմիջական կապ չունեն:

1. Մի բառով կազմված են մի բանի կայուն բառակապակցություններ՝ մի ֆանի, մի ֆիշ, մի փոֆ, մի գլուխ (ժողովրդական՝ «շարունակ, անվերջ»— «Մի գլուխ նրա մասին է խոսում»):

2. Դրվելով թվականների վրա՝ ցույց է տալիս տվյալ թվով արտահայտված մոտավոր քանակություն, օրինակ՝ «Մի տասը հոգի կլինեին». «Մի բան մարդ էին հավաքվել». «Այս դեպքը պատահել է մի հիսնգ տարի առաջ» և այլն:

3. Ժողովրդական-խոսակցական լեզվում դրվում է նաև բայերի դրական հրամայականի և րզձական եղանակի ձևերի վրա, օրինակ՝ «Մի գնա տես՝ ինչպես են». «Մի ասա՝ իմանամ». «Մի գրեմ վերջացնեմ». «Մի տե՛ս, մի տե՛ս, Թե լրբի պես Գլուխը բաց, Ազատ նստած՝ Ո՛նց է կանչում, Չի ամաչում» (Թում.): Հասկանալի է, որ քերականական ձևերի մի

մասնիկը կապ չունի արգելական հրամայականի մի մասնիկի հետ: Ամենայն հավանականությամբ վերևի կիրառություններն առաջանում են «Մի անգամ գնա տես» կամ «Մի հատ գնա տես» ձևերից (վերջին գործածությունը ևս խոսակցական լեզվում կա՝ «Մի հատ արի ինձ մոտ»): «Մի հատ մոտեցիր տեսնեմ» և այլն)՝ անգամ կամ հատ բառերի սղուծով:

## ԱՆՁԻ ԵՎ ՈՉ ԱՆՁԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Անձի և ոչ անձի քերականական կարգը ժամանակակից հայերենի ամենահետաքրքրական երևույթներից մեկն է: Այն չի եղել զրաբարում ու միջին հայերենում, հատուկ չէ նաև արևմտյան (ԿԸ ճյուղի) բարբառների մեծ մասին և նրանց հիմքի վրա բարձրացած արևմտահայ գրական լեզվին: Քերականական այս կարգն առաջացել ու ձևավորվել է արևելյան (ՈՒՄ ճյուղի) բարբառներում և նրանց հիմքի վրա բարձրացած արևելահայ գրական լեզվում: Նրա առաջացումը պայմանավորված է արևելյան աշխարհայարի առանձնահատուկ զարգացմամբ և սերտորեն կապված է ներգործողի (ենթակայի) և կրողի (ուղիղ խնդրի) ձևային տարրերակիման հարցի հետ: Մեր հին լեզվում՝ զրաբարում և՛ անձերի, և՛ իրերի անունները ուղիղ խնդրի հայցականում միևնույն ձևավորումն էին ստանում, օրինակ՝ «Յորժամ դուստր զվայր անարգից, և նու զկեսուր իւր, և կին գայր, և ծառայ զտէր, և եղբայր զեղբայր...» (Եղիկ): «Ահաւաղիկ քակեցի զմիաբանութիւն ուխտին Հայոց և ընդ երիս կողմանս զգունդն քակեալ բաժանեցի» (Եղիշէ):

Չնայած սրան՝ զրաբարում ներգործողի և կրողի ֆունկցիաների շփոթություն առաջանալ չէր կարող, որովհետև ուղղական և հայցական հոլովները ձևաբանորեն տարբերակված էին: Եզակի հայցականը ուղղականից տարբերվում էր նրանով, որ կարող էր ստանալ 2 նախդիրը (ուղղ.— աշակերտ, հայց.— զաշակերտ), իսկ հոգնակի ուղղականն ու հայցականը առանց 2 նախդրի էլ տարբերակված էին հաստատուն ձևով՝ առաջինն ունենում էր Ք, իսկ վերջինը՝ Ս վերջավորություն (ուղղ.— աշակերտք, հայց.— աշակերտս): Հենց այսբանով էլ զրաբարում և՛ «Ուսուցիչ սիրէ զաշակերտ», և՛ «Ուսուցիչք սիրեն զաշակերտս» ձևերի մեջ ուղղական և հայցական հոլովները պարզորոշ կերպով տարբերակված են, իսկ սա էլ ինքնին նշանակում է, որ ենթակայի (ներգործողի) ու ուղիղ խնդրի (կրողի) քերականական կարգերը ստացել են իրենց համապատասխան լեզվական ձևավորումը և իրար հետ շփոթվել չեն կարող:

Մեր լեզվի հետագա պատմական զարգացման ընթացքում 2 նախդրի և ուղղականի Ք ու հայցականի Ս վերջավորությունների կորստի

պատճառով ուղղականի ու հայցականի ձևաբանական տարբերակումը վերանում է, և, այսպիսով, առաջանում է ներգործողի ու կրողի ֆունկցիաների շփոթության վտանգ: Բառերի ազատ շարադասության պայմաններում «Ուսուցիչը սիրում է աշակերտը» նախադասությունը երկիմաստ է, որովհետև պարզ չէ՝ սիրողն ուսուցիչն է, թե՞ աշակերտը: Բայց ներգործողի և կրողի ֆունկցիաներն այնպիսի հակադիր ֆունկցիաներ են, որոնք լեզվում անպայմանորեն պարզորոշ կերպով պետք է դրսևորվեն:

Այս ուղղությամբ մեր լեզվի արևմտյան և արևելյան հատվածները զարգացման տարբեր ընթացք ունեցան:

Արևմտյան բարբառները երկդիմությունից խուսափելու համար դիմում են շարահյուսական միջոցի՝ բառերի հաստատուն դասավորությամբ: ԿԸ ճյուղի բարբառների մեծ մասում և արևմտահայ գրական լեզվում ենթական և ուղիղ խնդիրը ձևաբանորեն տարբերակված չեն և որոշվում են բառերի շարադասությամբ՝ ենթական նախորդում է ուղիղ խնդրին, օրինակ՝ «Տիկիներ ճրագով երկրորդ հարկը սենյակ մը առաջնորդեց հյուրն» (Պար.)։ «Ժամագործը կը վնասե Քարոս աղան» (Պար.)։ Ըստ այդմ՝ արևմտահայերենում «Ուսուցիչը կը սիրե աշակերտը» նախադասության մեջ ենթական ուսուցիչն է, իսկ «Աշակերտը կը սիրե ուսուցիչը» նախադասության մեջ՝ աշակերտը:

Արևելյան բարբառները, նույնպես երկդիմությունից խուսափելու նպատակով, դիմում են մի ուրիշ՝ ձևաբանական միջոցի՝ շնչավոր առարկաների ուղիղ խնդիրն սկսում է արտահայտվել տրականի ձևով, օրինակ՝ «Ուսուցիչը սիրում է աշակերտին»: Թե ինչու հատկապես շնչավորների ուղիղ խնդիրն է ձևավորվում տրականով, բացատրվում է նրանով, որ, որպես կանոն, միայն այդ դեպքում կարող է ներգործողի և կրողի ֆունկցիաների շփոթության վտանգ առաջանալ: Բառերի ազատ շարադասության պայմաններում «Ուսուցիչը սիրում է աշակերտը» նախադասությունը երկիմաստ է, իսկ «Ուսուցիչը սիրում է գիրքը» նախադասությունը պարզորոշ է, որովհետև ներգործողի և կրողի ֆունկցիաները խոսքի բովանդակությունից հասկացվում են: Իրականության մեջ էլ շնչավորների և անշունչների փոխհարաբերության պայմաններում որպես ներգործող սովորաբար հանդես են գալիս շնչավոր առարկաները, և, ասենք, «Երեսան կտրեց բաժակը», «Ուսանողը բերեց գիրքը», «Զինվորը մաքրեց հրացանը», «Աղբիկը զարգարեց սենյակը» և նման տիպի նախադասությունների միտքը որոշակիորեն դրսևորված է և անմիջաբար հասկացվում է: Անգամ եթե գործ ունենք ոչ թե շնչավոր ու անշունչ, այլ միայն անշունչ առարկաների փոխհարաբերության հետ, այդ դեպքում ևս ներգործողի և կրողի ֆունկցիաները սովորաբար խոսքի բովանդակությունից հասկացվում են, օրինակ՝ «Արևը լուսավորեց

երկիրը», «Քամին քշեց ամպերը», «Կայծակը պատռեց երկինքը», «Մեքենան մաքրեց փողոցը», «Կրակն այրեց թուղթը» և այլն<sup>24</sup>։

Այս թուուցիկ վերլուծություններից պարզ է դառնում, որ մեր լեզվի պատմական զարգացման որոշակի շրջանում երկդիմութունից խույս տալու համար անհրաժեշտություն և կարիք է զգացվել շնչավոր առարկաների ուղիղ խնդիրը ձևաբանորեն տարբերակելու ենթակայից։ Այս հիմքի վրա էլ ահա ձևավորվել է արդի հայերենի շնչավորի և անշունչի քերականական կարգը։

ԱնՁի ՈՒ ՈՉ ԱնՁԻ՞, Թե՞ ՇնջԱվՈՐԻ ՈՒ ԱնՇՈՒՆՉԻ ԿԱՐԳ.— Այս կարգը հայ քերականները կոչում են կամ անձի ու իրի, կամ շնչավորի ու անշունչի կարգ։ Ամենից առաջ պետք է պատասխան տալ այն հարցին, թե արդի հայերենում ունենք անձի ու իրի՞, թե՞ շնչավորի ու անշունչի քերականական հակադրություն։ Հենց սկզբից նկատենք, որ առաջին հայացքից պարզ թվացող այս հարցի այնքան էլ հեշտ չէ պատասխանել, և լեզվական փաստերն այնպիսին են, որ առիթ են տալիս լուրջ խորհրդածությունների։

Արդի հայերենում հավասարապես կարելի է խոսել և՛ շնչավորի ու անշունչի, և՛ անձի ու ոչ անձի (իրի) հակադրության մասին։

Կենդանիների անունները որոշյալ ուղիղ խնդրի պաշտոնում ազատ գործածվելով տրականով՝ միավորվում են անձերի անուններին և դրանց հետ կազմելով շնչավորի խումբը՝ հակադրվում են անշունչ առարկաների խմբին, որոնք սովորաբար գործածվում են ուղղականով, իսկ տրականով կարող են կիրառվել սակավաթիվ դեպքերում, երբ իրերի անունները ոչ թե իսկական ֆիզիկական նշանակությամբ են ըմբռնվում, այլ փոխաբերությամբ որպես շնչավորված են մտածվում։ Այսբանով հայերենում կարելի է խոսել շնչավորի և անշունչի քերականական կարգի մասին։

Մյուս կողմից՝ առայժմ մի կողմ թողնելով ուղիղ խնդրի հարցը, պետք է նշել, որ արդի հայերենում եթե ոչ ձևաբանորեն, ապա հարցական դերանունների հետ ունեցած հարաբերակցության տեսակետից դրսևորվում է անձի և ոչ անձի առում այնքանով, որքանով որ անձ ցույց տվող գոյականները ուղղականում պատասխանում են ՈՎ հարցին, ինչպես՝ Ո՞վ—բանվորը, աշակերտը, գյուղացին, բժիշկը, երեխան, ուսուցիչը և այլն, իսկ ոչ անձ (իր և կենդանի) ցույց տվողները պա-

տասխանում են ինչը հարցին, ինչպես՝ Ի՞նչը— գետը, ծառը, փողոցը, ձիւն, աղյուծը, աղվեսը և այլն։ Անձի և ոչ անձի՝ հարցական դերանունների միջոցով դրսևորվող այս հակադրությունը արտահայտվում է նաև մյուս հոլովներում, օրինակ՝ Ումի՞ց—ուսանողից, բանվորից, երեխայից, բայց՝ Ինչի՞ց—գետից, փողոցից, աղյուծից, աղվեսից. Ումո՞վ—ուսանողով, բանվորով, երեխայով, բայց՝ Ինչո՞վ—գետով, փողոցով, աղվեսով, աղյուծով։

Սակայն ամբողջ հարցն այն է, թե ինչպես է արտահայտվում այս հակադրությունը ուղիղ խնդրի պաշտոնում։ Հայ քերականները գտնում են, որ երբ ոչ անձի (իրերի և կենդանիների) անունները որպես ուղիղ խնդիր արտահայտվում են տրականով, ինչպես՝ «Նա իր նվազով սաւրերին էր լացացնում, զեփյուռին ողբացնում», «Որսորդն սպանեց այդ արջին և աղվեսին», ապա այդ հակադրությունը վերանում է, և իրերի ու կենդանիների անունները ստանալով անձի առում՝ պատասխանում են ՈՒՄ հարցին։

Որքան էլ այս բացատրությունը տարածված լինի, ընդունել չի կարելի։ Գործածվելով տրականով՝ իրերի և կենդանիների անունները անձի առում չեն ստանում և չեն էլ կարող ստանալ, որովհետև նրանք ՈՒՄ հարցին չեն պատասխանում, իսկ այս հարցը անձի առման միակ շափանիչն է։

Տրականաձև կամ տրականով արտահայտված, ուղիղ խնդիրը պատասխանում է երկու հարցի՝ ՈՒՄ և ԻՆՉԻՆ, օրինակ՝ Արջը Ո՞ր՞ի՞ խեղդեց—երեխային, գյուղացուն, փայտահատին, անտառապետին, հնձվարին և այլն, բայց՝ Արջը ԻՆՉԻՆ խեղդեց—կովիւն, գայլին, վարազին, աղվեսին և այլն։ Ո՞ր՞ի՞ տեսար հարցի պատասխանը կարող է լինել միայն անձի անուն՝ Արամին, գյուղացուն, բժշկին, ուսանողին, հանգրստացողին, վարպետին, աղջկան, փեսային և այլն։ Եթե դրա պատասխանը լինի կենդանու կամ իրի անուն, նշանակում է այդ անունը անձի անվան փոխարեն է գործածվում, օրինակ՝ Ճանապարհին Ո՞ր՞ի՞ տեսար—Սոխակին (մարդ, որի անունը կամ մականունը Սոխակ է), Եզին (մարդ, որի մականունը Եզ է, որին Եզ են կոչում), Աղվեսին, Խոզին, Վարդին (մարդ, որի անունը Վարդ է) և այլն։

Եզրականությունը պարզ է. միայն անձի անուններն են, որ անձի առում են ունենում։ Գործածվելով տրականով՝ կենդանիների անունները անձի առում չեն ստանում, նրանք գտնվում են իրենց բնական դրության մեջ և արտահայտում են շնչավորի առումը, օրինակ՝ «Մեր հորքին եմ ման գալիս»։ Կիրառվելով տրականով՝ իրերի անունները մտածվում են ոչ թե որպես անձ, այլ մտածվում են որպես շնչավոր, այսպիսով դրսևորելով անշունչ առարկաների շնչավոր առումը, օրինակ՝ «Սոխակը սիրում է վարդին»։

<sup>24</sup> Միայն առանձին դեպքերում նախադասությունը մնում է երկիմաստ, օրինակ՝ «Փայտը ջարդեց քարը», «Կեցությունը որոշում է գիտակցությունը», «Մահը հաստատում է կյանքը», «Նպատակն արդարացնում է միջոցը» և այլն։ Եիշտ է, կարելի է ասել, որ այսպիսի նախադասություններում ենթական և ուղիղ խնդիրը որոշվում են շարադասությամբ, և, ասելով, առաջին նախադասության մեջ սովորաբար որպես ենթակա կըմբռնվի փայտ բառը, բայց չի ժխտվում և այն, որ որպես ենթակա կարող է ըմբռնվել նաև քար բառը։

Մյուս կողմից՝ և՛ անձերի, և՛ կենդանիների, և՛ իրերի անունները (վերջիններս համարյա միշտ) գործածվելով ուղղականով՝ միավորվում են մի խմբի մեջ և հավասարապես պատասխանելով ԻՆՉ հարցին՝ արտահայտում են անշունչի առում (իրի առում): Այսպես, ԻՆՉ տեսար հարցի պատասխանը հավասարապես կարող է լինել և՛ իրի, և՛ կենդանու, և՛ անձի անուն, ինչպես՝ Տեսա ֆաղաֆ, ծով, նավ, փիղ, առջ, առյուծ, նեգր, նավապաի, զինվոր և այլն:

Վերլուծություններից պարզ է դառնում, որ արդի հայերենում մեկ հակադրվում են անձերն ու ոչ անձերը (իրերը և կենդանիները), մեկ էլ՝ շնչավորները (անձերն ու կենդանիները) և ոչ շնչավորները (իրերը): Այսօրվում էլ մեզ հետաքրքրող կարգը անձի ու ոչ անձի և շնչավորի ու անշունչի կարգ է հավասարապես, քանի որ այս հակադրությունները լեզվում այս կամ այն ձևով դրսևորվում են:

Ամփոփելով կատանանք հետևյալ ընդհանուր պատկերը:

Ժամանակակից հայերենում դրսևորվում են անձի, շնչավորի և անշունչի առումներ:

ա) Անձի անունների տրական եղյովով արտահայտված ուղիղ խընդիրը դրսևորում է անձի առում և պատասխանում է ՈՒՄ հարցին:

բ) Կենդանիների և իրերի անունների տրականով արտահայտված ուղիղ խընդիրը արտահայտում է շնչավորի առում՝ պատասխանելով ԻՆՉ հարցին:

գ) Իրերի, կենդանիների և անձերի անունների ուղղակիանով արտահայտված ուղիղ խընդիրը արտահայտում է անշունչի (իրի) առում՝ պատասխանելով ԻՆՉ հարցին:

Այժմ այս քերականական կարգի սուբյեկտիվ կողմի մասին: Խոսելով տրականով և ուղղականով արտահայտված ուղիղ խընդիրների գործածություն մասին՝ հայ քերականները հատկապես շեշտում են խոսողի անձնական վերաբերմունքի հարցը, այսինքն՝ խոսողի կողմից իրերի կամ անշունչների անձնավորումը կամ շնչավորումը և ընդհակառակը: Իհարկե, այս քերականական կարգի մեջ խոսողի անձնական վերաբերմունքը նշանակություն ունի, բայց վճռական ու էական համարվել չի կարող: Վերջինք «Վերջապես նա տեսավ իր սիրելի հորը» նախադասությունը: Ընդգծված հորը ձևը անձի անուն է և գործածված է տրական հոլովով, այսինքն՝ ունի անձի առում: Արտահայտված է դրա մեջ խոսողի անձնական վերաբերմունքը. մենք կասեինք՝ ո՛չ, որովհետև այդ բառը վերջին նախադասության մեջ այլ ձևավորում ունենալ չի կարող, ուղղականով գործածվել չի կարող: Այժմ վերջինք «Ճանապարհին նա մի մաքուր տեսավ» նախադասությունը: Ընդգծված մաքուր ձևը ևս անձի անուն է և գործածված է տրականով, այսինքն՝ ունի անձի առում: Արտահայտված է դրա մեջ խոսողի անձնական վերաբերմունքը. մենք կասեինք՝ այո՛, որովհետև այդ բառը բերված նախադաս-

սության մեջ կարող է ունենալ նաև այլ ձևավորում, կարող է գործածվել ուղղականով՝ արտահայտելով անշունչի առում, ինչպես՝ «Ճանապարհին նա մի մաքուր տեսավ» (ի միջի այլոց, այս գործածությունն արվելի սովորական է ու տարածված): Նույն ձևով էլ՝ «Նա շալակից իջեցրեց գոմշի ձագը» նախադասության ձագը ձևի մեջ խոսողի անձնական վերաբերմունքը արտահայտված է այնքանով, որքանով որ այս բառը որոշյալ առման դեպքում կարող է գործածվել նաև տրականով և արտահայտել շնչավորի առում, ինչպես՝ «Նա շալակից իջեցրեց գոմշի ձագին»: Իսկ, ընդհակառակն, «Նա գիր է կարդում» նախադասության գիր է ձևի մեջ չի կարելի տեսնել անձնական վերաբերմունքի և ոչ մի արտահայտություն, որովհետև այս բառը բերված նախադասության մեջ այլ ձևավորում ունենալ չի կարող, տրականով գործածվել չի կարող:

Վերլուծություններից կարելի է եզրակացնել, որ մեզ հետաքրքրող քերականական կարգի դրսևորման մեջ խոսողի անձնական վերաբերմունքի մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ անմիջաբար իրար են հակադրվում տրականով և ուղղականով արտահայտված ուղիղ խընդիր հնարավոր ձևերը, օրինակ, Տեսա մի մաքուր, ուսանողի, աղջկա, կնոջ, զինվորի և Տեսա մի մաքուր, ուսանող, աղջիկ, կին, զինվոր: Եթե ձևերի այսպիսի հակադրություն չկա, ուրեմն և խոսողի անձնական վերաբերմունքի մասին խոսք լինել չի կարող:

Պետք է նկատի ունենալ նաև, որ այն հարցը, թե տվյալ բառը որպես ուղիղ խընդիր տրականով, թե՞ ուղղականով պետք է գործածվի, շատ դեպքերում պայմանավորված է տվյալ բառի որոշյալ կամ անորոշ առումով, այսինքն՝ ձևաբանական-իմաստաբանական գործոններով: Այսպես, օրինակ՝ անձի անունները, եթե որոշյալ են, համարյա միշտ տրականով, այսինքն՝ անձի առումով են գործածվում, իսկ եթե անորոշ են, առավելապես ուղղականով, այսինքն՝ իրի առումով են գործածվում:

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ անձի և ոչ անձի—շնչավորի և անշունչի քերականական կարգը սուբյեկտիվ կարգ չէ: Ճիշտ է՝ նրա դրսևորման մեջ խոսողի անձնական վերաբերմունքը նշանակություն ունի, բայց վճռական ու էական դեր չի խաղում և ունի զգալի սահմանափակումներ:

ՏՐԱԿԱՆՈՎ ԵՎ ՈՒՂՂԱԿԱՆՈՎ ԱՐՏԱՀԱՅՏԱՎԱԾ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.— Անձի հատուկ ու հասարակ անունները որոշյալ առման դեպքում համարյա միշտ գործածվում են տրականով: Այսպիսի օրինակներ են. «Մարոն սիրեց Կարոյին, Կարոն շիրեց Մարոյին» (ասացվածք). «Շապուհ արքան Արշակ քաղաքին և ձեր հորեղբոր հրավիրեց Տիգրան» (Րաֆֆի). «Նա գոփել ու կողոպտել է խեղճերին, նույնիսկ թունավորել է իր մի ընկերոջը» (Շիրվ.). «Զինվորները մանուկներին ու նրանց ծնողներին կապոտեցին թոկերով» (Խանգ.). «Ու զբը-

կեց շահը իր թովիչ երգչին, Գնա տե՛ս, ասավ, Քրմկա տիրուհուն» (Թում.):

Որոշյալ անձի անունների ուղղակիանաձև գործածությունը, որ առանձին դեպքերում հանդիպում ենք առավելապես միջխորհրդային շրջանի գեղարվեստական գրականության մեջ՝ Ռաֆֆու, Պոռչյանի, Շիրվանզադեի, Մուրացանի և այլոց ստեղծագործություններում, մեր լեզվի արդի վիճակի տեսակետից անընդունելի է<sup>25</sup>։ Այսպիսի օրինակներ են. «Ուղիները գողացել էին նրա տղան և փոխարենը մի դև էին դրել» (Ռաֆֆի). «Այժմ արդեն պարում եմ նախկին մարդն ու նրա անխարդախ բնկերակ-ցությունը» (Մուր.). «Տեսնել շուրջը միայն գլուղացին ու նրա միօրինակ կյանքը» (Մուր.). «Շատ անգամ էր դատապարտել տնտեսական աշխարհի այն տարրերը, որոնք ոչ աշխատավորներ են, ոչ արդյունաբերողներ» (Շիրվ.). «... բայց ձգել իր զավակները՝ երբեք» (Շիրվ.):

Անձերի անունները անորոշ անվան դեպքում կարող են գործածվել և՛ ուղղակիանով, և՛ տրակիանով, բայց ավելի գերակշռում են ուղղակիանով կիրառությունները։ Ահա համապատասխան օրինակներ։

Անձերի անունը առում ուղղակիանով. «Մամիկոնյանը ծնում է դավանաներ... Մամիկոնյանը ծնում է և հերոսներ (Ռաֆֆի). «Օ՛, շատ եմ տեսել քեզ պես հերոսներ» (Շիրվ.). «Շատ զինվոր պիտի հավաքեն» (Բակ.). «Այժմ մենք բարեկամներ ու կողմնակիցներ պիտի հավաքենք» (Խանգ.):

Անձերի անունը առում տրակիանով. «Վզզալով մտնում է անկյունները, աղբատի ու տկուրի է ման գալի» (Թում.). «Կոլխուզի նախագահը աշխատանքից հեռացրել է մի ծուլը, անբարեխիղճ գումապանի և մի գող պանակի» (Զոր.). «Ճշում է ձայնով փոքրիկ գազանի Եվ արթնացնում մի փոքրիկ սանի» (Սևակ). «Նա ավելի զարմացավ, երբ տեսավ իր առջև մի սեպուռի» (Դեմ.). «Եվ այդ ծովը ափ էր շարտում մերթ սև թավշե գլխարկով մի գլուխ, մերթ երկարազգեստ մի կնոջ» (Բակ.):

Ինքզինական փաստերը ցույց են տալիս, որ անձի անորոշ անունների և՛ ուղղակիանով, և՛ տրակիանով գործածությունը արդի հայերենում օրինաչափական է։ «Տեսա մի մարդ, մի կին, մի զինվոր, մի երեխա» և «Տեսա մի մարդու, մի կնոջ, մի զինվորի, մի երեխայի» ձևերից երկուսն էլ ազատ կիրառվում են, թեև պետք է նշել, որ առաջինները շատ ավելի հաճախ են հանդիպում, քան երկրորդները։

Իրերի անունները, իննեն որոշյալ թե անորոշ, գործածվում են ուղղակիանով, ինչպես՝ «Երիտասարդը ձեռքով փայփայեց նրա սիրուն գլուխը, երկար ախանջները, նուրբ դուռնը» (Ռաֆֆի). «Նա նկարագրեց իր տառապանքները, ամուսնու տանջանքները, ազգական-բարեկամներ

դառը կշտամբանքները, ծանոթների պարզ ու խոլ ատելությունները, արհամարհանքները, ազգի ու եկեղեցու անեծքները» (Շիրվ.). «Արջը գետե վարազի ծանրի թափը, նախահարձակ չի լինում։ Եթե տկար մի խոլ ետ մնա մյուսներից, արջը թաթի մի հարվածով ճեղքում է փափուկ վիզը, մի երկու պատառ լափում, լեշը ծածկում շոր ցախով ու տերևներով, քար դնում վրան» (Բակ.): Իրերի անունների ուղիղ խնդրի ուղղակիանով գործածությունը այնքան սովորական է ու զանգվածային, որ նոր օրինակների կարիք չի գազցվում։

Սակավաթիվ դեպքերում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ, իրերի անունների փոխաբերական գործածության՝ շնչավորման հետ կապված՝ կրող խնդիրը կարող է արտահայտվել նաև տրակիան հոլովով։ Այսպիսի օրինակներ են. «Հասնե քարերին էր դողացնում, Սև շրի ալիքները հուզում, բնությունն էր քարացնում, գեփյուռին ողբացնում» (Փափ.). «Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը նրազին, սոխակը վարդին, աշխարհն արևին և բույսը հողին» (Փափ.). «Նրա այս վառ տեսքն ու բույրը նսեմացրել էին մյուս բոլոր ծաղիկներին» (Զոր.). «Ես սիրում եմ, վկա հոգիս, Քեզ, մայրիկիս, հայրենիքիս» (Շիրազ). «Հետո խուժում էր, մեղեղուն խեղդում վայրի աղմուկը վայրի բուշանաց» (Սևակ). «Գարնանը կանաչում է թումբը, մոլախոտերը խեղդում են վաղահաս ծաղիկներին» (Բակ.):

Իրերի անունների ուղիղ խնդիրը տրակիանով հազվադեպ է արտահայտվում. հարյուրավոր էջեր գեղարվեստական գրականություն պիտի թերթել այսպիսի մեկ կամ երկու օրինակ գտնելու համար։ Այդ էլ մեծ մասամբ լինում է այն դեպքում, երբ ներգործական բայը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ սովորաբար կարող է ունենալ անձ կրող խնդիր։ Այսպես, հմայել, դյուրեկ, թովել, գրավել, ողբացնել, լացացնել և այլ բայերի խնդիրը սովորաբար անձ կարող է լինել։ Բայց երբ այս և նման բայերի խնդիրները լինում են իրի անուններ, նմանակություններ դրանք ևս ձևավորվում են տրակիանով՝ այսպիսով դրսևորելով իրերի շնչավոր առումը, ինչպես՝ «Նա իր նվագով հմայում ու դյուրում էր անգամ ծաղիկներին ու ծառերին, աղբյուրներին ու ջրերին, գեփյուռին ու հովին»։ «Նրա ողբը քարերին ու սարերին էր լացացնում» և այլն։

Այլ հարց է, երբ իրերի անունները գեղարվեստական գրականության մեջ հատուկ նպատակադրմանով հանդես են գալիս որպես անձի անունների փոխարինիչներ։ Այսպես, Զաննի Ռոդարիի «Զիպուլինոյի արկածները» (Երևան, 1957) գիրքը ամբողջապես կառուցված է այդ սկզբունքով, և այդ իսկ պատճառով իրերի անունները, որպես անձերի անունների փոխարինիչներ, ազատ գործածվում են տրակիան հոլովով, օրինակ՝ «Առանց երկար-բարակ խոսելու սրանք քավոր Դրամին գուրս անանիքին տանիք»։ «Պոմիդորը մարդ ուղարկեց ձորահասավաք Լոբուն կան-

<sup>25</sup> Առանձին ասացվածքներում ու դարձվածքներում անձերի անունների որոշյալ ուղիղ խնդիրը կարող է և ուղղակիանով արտահայտվել, օրինակ՝ «Շունը տերը չի ճանաչում», «Նա իր աստվածը մոռացել է»։



շելում»։ «Պրոֆեսոր տանձին էլ ձերբակալեցին»։ «Կոմսուհիներն ուզում էին ասել, թե Սոխ Պրասին և սինյոր Սիսեռիկին ձերբակալելն այնքան էլ մեծ խիզախություն չէ, բայց սպաներն սպառնացին» և այլն։

Կենդանիների անունները ուղիղ խնդրի գործածության տեսակետից միջին տեղն են բռնում անձերի և իրերի անունների միջև։

Կենդանիների անունները, երբ որոշյալ են, ազատ կիրառվում են և՛ տրականով (այսֆանով հակվելով դեպի անձի անունները), և՛ ուղղականով (այսֆանով էլ հակվելով դեպի իրի անունները)։ Մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ օրինակներից բերենք միայն հետևյալները։

Կենդանիների անունների որոշյալ տրականով. «Հենց գեղն էլ էդ Լրկուսին—եշին ու Ելյարին—ամենից շատ է սիրում» (Թում.)։ «Մարդիկ վայրի անասուններին ու զագաններին բռնում բերում են, տանու անում» (Թում.)։ «Պանինի շները անտառի բացուտում... հալածում էին խրտնած պախրային» (Բակ.)։ «Աղվեսին փնտրելու ժամանակ Անտոնը մի մողահավ էլ սպանեց» (Բակ.)։ «Այդպես, ես ու Բողարը պահպանեցինք ձկներին» (Անան.)։ «Սպանված աղբերին թաղեցի ձյան մեջ» (Անան.)։

Կենդանիների անունների որոշյալ ուղղականով. «Նա ինքն էր ծախել տալիս մեր կովը, մեր եզը և մեր գոմեշը» (Բաֆֆի)։ «Հորքերը բռնում էի, մինչև երեցիկներ կովերը կթում էր» (Բաֆֆի)։ «Սուրբ Ժեռիցը գալիս է շեմքից շուն է տանում լափում։ Մուկն է որսում։ Մառի փթռակ է ուտում, իր լախոն է ուտում» (Թում.)։ «Մրցի շրբանները ոչխարն ու տավարը քշել են ձորի կողմը» (Բակ.)։ «Պապիս ժպիտը կորչում էր, մոռանում էր մեզ էլ, տունն էլ, եզն ու կովն էլ» (Բակ.)։

Կենդանիների անունները անորոշ անուն ժամանակ առավելապես գործածվում են ուղղականաձև, օրինակ՝ «Մենք էլ ուրախացել ենք, թե ինչ ա, մի պախրա կսպանենք, կուտենք» (Թում.)։ «Շտապ բացում են գոմի դռները, ու մեկը մի կով, մեկը մի զուլգ մոզի, մեկը մի նիհար երինջ, մյուսը իր միակ էշը քշած բերում են, խառնում մեր անասուններին» (Անան.)։ «Մի անգամ ոչխար մորթեցին ու նրան փաթաթեցին տաք-տաք մորթու մեջ» (Անան.)։ «Գալիս է զորքը՝ ավարով բռնված ուղտեր ու ջրիներ քշելով» (Խանգ.)։

Կենդանիների անունները անորոշ անուն դեպքում գործածվում են նաև տրականով, օրինակ՝ «Ծտ մտիկ տամ, որ մի անտեր գել էլ մի ոչխարի բռնել է» (Թում.)։ «Բծիշկը քննում էր մի հիվանդ կովի» (Զար.)։ «Նա հալածում էր մեր բակը եկող ամեն մի կատվի» (Զոր.)։

Ամփոփելով ու ի մի բերելով ասվածները՝ կունենանք հետևյալ ընդհանուր պատկերը։

Անձի անունները որոշյալ անուն դեպքում համարյա միշտ գործածվում են տրականով, իսկ անորոշ անուն դեպքում՝ և՛ ուղղականով, և՛ տրականով։

Իրի անունները, լինեն որոշյալ, թե անորոշ, գործածվում են ուղղականով, սակայն սակավաթիվ դեպքերում, իրերի անունների շնչավորման հետ կապված, կարող են կիրառվել նաև տրականով։

Կենդանիների անունները որոշյալ անուն դեպքում ազատ գործածվում են և՛ տրականով, և՛ ուղղականով, իսկ անորոշ անուն դեպքում՝ առավելապես ուղղականով։

#### Գոյականների կազմությունը

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.— Ժամանակակից հայոց լեզվում գոյականներ են կազմվում բառակազմական բոլոր միջոցներով՝ ածանցմամբ, բարդութամբ և հապավմամբ, ըստ որում, ածանցումը և բարդությունը հավասարապես տարածված են ու գործուն, իսկ հապավումը խաղում է միայն երկրորդական-երրորդական դեր, ընայած որ հապավման միջոցով միայն և միայն գոյականներ են կազմվում։

#### Ածանցում

ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ՎԵՐՋԱՍՆՆԵՐԸ.— Ժամանակակից հայերենում կան մի շարք վերջածանցներ, որոնք գոյականներ են կազմում կամ մասնակցում են գոյականների կազմությունը։ Ստորև այբուբենական կարգով բերվում են ժամանակակից հայերենի գործուն կամ այս կամ այն լափով գործուն վերջածանցները և բացատրվում են նրանց հիմնական նշանակությունները<sup>26</sup>։

ԱՄՈ.— Հիմնականում կազմում է ածականներ, որոնցից մի մասը վերածվել է գոյականների կամ ձեռք է բերել նաև գոյականական նշանակություն, օրինակ՝ բրածո, դրածո, գտածո «գտած իր», հաճածո, շափածո, պահածո, ձուլածո։

ԱՄՈՒ.— Կազմում է սակավաթիվ գոյականներ գործողի անվան կամ գործողության արդյունքի նշանակությամբ, օրինակ՝ ծաղրածու, կատարածու, ձեռնածու, եվագածու, ժողովածու, հավաքածու։

ԱԿ.— ա) Գոյական անվանը տալիս է փոքրացուցիչ-փաղաքշական, հազվադեպ նաև նվաստական նշանակություն, օրինակ՝ բլրակ, գյուղակ, բոլնակ, լեզվակ, լեակ, հյուղակ, ձորակ, նավակ, տաշտակ, գրչակ։

բ) Բայահիմքերից կազմում է գոյականներ գործողի, գործիքի և այլ նշանակություններով, օրինակ՝ բուժակ, գիտակ, իմաստակ, նեծե-

<sup>26</sup> Գոյականակերտ ածանցներին նվիրված այս հատվածը շարադրում ենք հիմնականում հետևելով Մ. Արեւյանին (տե՛ս «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 237—282), թեև մենք բնում ենք նաև մի քանի նոր ածանցներ, որոնք այս գրքում որպես ածանց չեն հիշատակվում։

լակ, հրասակ, ողբերգակ, նվիրակ, պանակ, պատվիրակ, հենակ, երկ-  
շակ, պատուակ և այլն:

ԱԿԱՆ.— Հիմնականում ածականակերտ ածանց է: Սակայն ԱԿԱՆ  
ածանցով կազմված մի շարք բառեր ձեռք բերելով առարկայական նը-  
շանակություն՝ վերածվել են գոյականի կամ գործածվում են նաև որ-  
պես գոյական՝ ցույց տալով անձի անուններ մի ուսմունքի, գաղափարի  
հետևողի, մի դասի, խմբի պատկանողի, մի կողմ, դիրք ունեցողի և  
այլ նշանակություններով, օրինակ՝ դարվիհական, հեգելական, մեծա-  
մասնական, փոքրամասնական, հեղափոխական, մտավորական, վեճա-  
կան, զինվորական, դպրոցական, գիտնական, գաղթական և այլն: Կան  
նաև ԱԿԱՆ ածանցով կազմված ոչ անձ ցույց տվող գոյականներ, օրի-  
նակ՝ գոյական, ածական, թվական, գնահատական, գրավական, դամ-  
բանական, վկայական:

ԱՆ.— Մեծ մասամբ բայահիմքերից կազմում է.

ա) Գործողի անուն՝ գոյականական կամ ածականական նշանակու-  
թյամբ, օրինակ՝ իշխան, սուտասան, վիպասան, ճարտասան, դերասան,  
կշիշան, վազան և այլն:

բ) Գործիքի անուն կամ իր, օրինակ՝ գարկան, խրսն, կովան, ձը-  
գան, փարաբան, եղան, օրորան, զլան, տափան, խցան, ծծան, կրպ-  
չան և այլն:

ԱՆԱԿ.— Քիչ գործածական ածանց է: Կազմում է գոյականներ  
տարբեր նշանակություններով, ինչպես՝ գանձանակ, հաղթանակ, ճոճա-  
նակ, մրցանակ, ուժանակ, խոզանակ, շրջանակ, եղանակ, ըմպանակ,  
ցուցանակ:

ԱՆՈՅ.— ա) Գլխավորապես գոյականներից կազմում է տեղի ա-  
նուններ, ինչպես՝ հիվանդանոց, արհեստանոց, արվեստանոց, մեղվա-  
նոց, ամառանոց, կուսանոց, հյուրանոց, ծերանոց, բանջարանոց, վա-  
րսավորանոց: Աշխատանոց, արգելանոց ձևերը կազմված են բայահիմ-  
քերից:

բ) Թվականներից և արժեքի ու չափի անուններից կազմում է գո-  
յականներ տվյալ քանակությունը, արժեքն ու չափը ունեցողի նշանա-  
կությամբ, օրինակ՝ երեֆանոց, հեզանոց, տասանոց, ռուբլիանոց, կա-  
պիկանոց, լիտանոց և այլն:

ԱՆՔ.— Բայահիմքերից կազմում է գործողության առարկայացված  
անուններ՝ բայանուններ, որոնք իրենց մեջ համատեղում են նաև գոր-  
ծողության հետևանքի ու արդյունքի նշանակությունը կամ գործածվում  
են միայն վերջին նշանակությամբ, օրինակ՝ աշխատանք (աշխատելու  
գործողությունը և աշխատածը), երգանք, աղչանք, արհամարհանք,  
բամբասանք, գովասանք, գուրգուրանք, զրկանք, հարգանք, հերյուրանք,  
մեղադրանք, վիրավորանք, տանջանք, փրկանք, ֆամահանք:

ԱՐԱՆ.— Կազմում է գոյականներ մեծ մասամբ բայերից:

ա) Տեղի նշանակությամբ, օրինակ՝ բնակարան, բուժարան, գոր-  
ծարան, դատարան, ընդունարան, լողարան, հանդերձարան, ձուլարան,  
ճաշարան, ներարան, մարգարան, տպարան, դասարան և այլն:

բ) Տեղի հետ նաև անոթի, գործիքի և այլնի նշանակությամբ, օրի-  
նակ՝ լվացարան, կախարան, կրակարան, հենարան, մատուցարան, պա-  
հարան, վառարան և այլն:

գ) Գրքի նշանակությամբ, օրինակ՝ այբբենարան, ավետարան, բա-  
նարան, սաղմոսարան, երգարան, տաղարան:

ԱՐԱՆ ածանցը համանիշ է ԱՆՈՅ ածանցին:

ԱՐԱՐ — Դրաբարյան առնել բայի անցյալ կատարյալի հիմքն է,  
որ արդի հայերենում ըմբռնվում է որպես ածանց: Կազմում է գոյա-  
կաններ մի բան անողի՝ ենթակայական դերբայի նշանակությամբ, ինչ-  
պես՝ աղվարաբ, բարեբար, գաղութարաբ, գյուտարաբ, խոզարաբ,  
հավաքարաբ, հուշարաբ, շինարաբ և այլն:

ԲԱՆ.— Կազմում է անձի անուններ հատկապես մի գիտության  
մասնագետի, մի գիտությամբ զբաղվողի նշանակությամբ, օրինակ՝ բու-  
սաբան, թռչնաբան, պատմաբան, լեզվաբան, կենսաբան, հնէաբան, հո-  
գեբան, ձկնաբան, մարդաբան և այլն: Կան նաև՝ երգիծաբան, մեկնա-  
բան, ճոռմաբան և այլն:

ԵՂԵՆ.— Ցույց է տալիս նյութը, որից կազմված է առարկան, և  
այդ նշանակությամբ կազմում է ածականներ, օրինակ՝ հողեղեն էակ-  
ձյունեղեն կատարներ, ժայռեղեն բարձունքներ և այլն: Բայց ԵՂԵՆ ա-  
ծանցը միաժամանակ ցույց է տալիս նույն բանից պատրաստված, միա-  
տեսակ կամ նույն ծագումն ունեցող առարկաներ՝ հավաքական նշա-  
նակությամբ: Այս իմաստով կազմվում են բազմաթիվ գոյականներ,  
օրինակ՝ ամանեղեն, բանջարեղեն, գոհարեղեն, երկաթեղեն, խմորեղեն,  
կանաչեղեն, հրուշակեղեն, հագուստեղեն, սպիտակեղեն և այլն:

ԵՆԻՄԻ.— Կազմում են ծառ, բույս, տունկ, թուփ ցույց տվող բա-  
ռեր, օրինակ՝ անարեների, դամբուլների, դեղձների, խորդների, ընկուզների,  
թզների, թթների, կեռասների, հացների, մասրեների, մշկների, մորեների, ճա-  
րընջների, նշարների, նոնների, շագանակների, սպյուրների, վարդների, բոխի,  
թեղի, կաղնի, կեչի, մորի, սոսի, սոնի, ծիրանի:

ԵՆՔ, ԱՆՔ, ՈՆՔ, ՈՒՆՔ.— Կազմում են հավաքական գոյականներ,  
որոնք ցույց են տալիս մի ընտանիքի, գերդաստանի, տոհմի, խմբակ-  
ցությունից պատկանող անձանց, օրինակ՝ Գրիգորենք, Արամենք, Վա-  
րդանենք, Վասականք, Գոգոնք, տատոնք, պապոնք, ֆեռոնք, Վանդոնք,  
Սայունք և այլն:

ԵՍՍ, ԻՍՍ, ՈՒՍՍ.— Քիչ գործածական ածանցներ են: Մի քանի  
բայերից կազմում են գոյականներ գործողության անվան կամ մի այլ  
նշանակությամբ, օրինակ՝ զովեստ, պահեստ, ուտեստ, շահեստ, հան-  
գիստ, ապրուստ, գալուստ, ելուստ, կորուստ, պահուստ, քաֆուստ, փա-  
խուստ, հագուստ, հագուստ-կապուստ:

ԵՐԵՆ.— Յույց է տալիս լեզու, օրիակ՝ հայերեն, ուսերեն, գերմաներեն, վրացերեն, հունարեն, լատիներեն, բուրբերեն, շինարեն, լեներեն, անգլերեն, իսպաներեն, իտալերեն:

ԵՔ.— Գրվում է բաղադրությունների վերջում՝ կազմելով գործողության անուններ, որոնք ցույց են տալիս ծիսակատարություն, հանգես, օրինակ՝ նշանդրեմ, ջրօրհնեմ, շնորհավորեմ, դոբրացեմ, շորձեմ, բերանբացեմ, երեսբացեմ, տնօրհնեմ և այլն:

ԻԿ.— ա) Գոյական անուններին տալիս է փոքրացուցիչ-փաղաքշահան նշանակություն, օրինակ՝ աղկղիկ, բաղիկ, թիթեռնիկ, թռնիկ, ձկնիկ, ճուտիկ, մանկիկ, ուլիկ, փուլիկ և այլ բազմաթիվ բառեր: Գրվում է նաև հատուկ անունների վրա, ինչպես՝ Արամիկ, Վահանիկ, Հրաչիկ, Աշոտիկ և այլն: ԻԿ-ը արդի հայերեն ամենագործուն փոքրացուցիչ-փաղաքշահան ածանցն է:

բ) Մի քանի բայրմատներից կազմում է գործողի կամ գործիքի անուններ՝ հատկապես ավելանալով բաղադրությունների վերջում, օրինակ՝ գորակոչիկ, շրջմոլիկ, թափառաշրջիկ, մուրացիկ, մարգիկ, մարտիկ, ալյուրմաղիկ, փլավիմիկ, ճանճիկ:

գ) ԻԿ-ը միաժամանակ կազմում է ածականներ բայրմատներից (ընթացիկ, ազդեցիկ, սլացիկ և նմանները), իսկ գրվելով ածականների վրա՝ նրանց տալիս է սաստկական-նվազական կամ փաղաքշահան նշանակություն (փորրիկ, սիրունիկ, քաղցրիկ, մեղմիկ, հեզիկ, անուշիկ և նմանները):

ԻԶ.— Բայահիմքերից կազմում է գործողի անուններ անձի կամ գործիքի նշանակությամբ, օրինակ՝ արարիչ, բնակիչ, գործիչ, թարգմանիչ, նկարիչ, պատմիչ, փրկիչ, սրբագրիչ, ֆենիչ, գրիչ, համբիչ, հաշվիչ, հենձիչ, շարժիչ, սրբիչ, սրիչ, սուլիչ, ֆամիչ և այլն:

ԻԶ ածանցով կազմվում են նաև բազմաթիվ ածականներ՝ համոզիչ, ֆայֆալիչ, սպառիչ, գրավիչ, հմայիչ և այլն:

ՄՈՒՆՔ.— Բայերից կազմում է գոյականներ, որոնք ցույց են տալիս գործողության արդյունքը, հետևանքը, օրինակ՝ բաժանմունք, զբաղմունք, ուսմունք, հիացմունք, համոզմունք, մտածմունք, պարապմունք, վարմունք, վրդովմունք, ցուցմունք, բուրմունք, վերաբերմունք և այլն:

ՅԱԿ.— Թվականներին կազմում է գոյականներ միասնության, ամբողջության նշանակությամբ, օրինակ՝ երկյակ, եռյակ, ֆառյակ, հրնգյակ, ությակ, իննյակ, տասնյակ, հարյուրյակ, հազարյակ: Հատկապես ավելանում է թվականով և ժամանակի միավոր ցույց տվող որևէ բառով կազմված բաղադրությունների վերջում, ինչպես՝ շաբաթօրյակ, միամսյակ, երկամսյակ, եռամսյակ, ֆառամսյակ, ֆառամյակ, հնգամյակ, տասնամյակ, հիսունամյակ, հարյուրամյակ, հազարամյակ, երկուհարյուրամյակ և այլն:

ՅԱՆ.— ա) Կազմում է ազգանուններ, ինչպես՝ Ազատյան, Բագրատյան, Գեղամյան, Մարգարյան, Հակոբյան, Իշխանյան և այլն: Հայոց ազգանունների բացարձակ մեծամասնությունը կազմվում է ՅԱՆ ձևով: բ) Կազմում է ածականներ մի բան ունեցողի և սեռական հոլովի նշանակություններով, օրինակ՝ գունյան, երկթևյան, հանգստյան, միջնադարյան, երևանյան, մոսկովյան և այլն:

ՅԱՆՅ.— Կազմում է ազգանուններ, օրինակ՝ Մալխասյանց, Մսերյանց, Տեր-Ղազարյանց, Մինասյանց, Արամյանց և այլն: 19-րդ դարում ազգանունների բացարձակ մեծամասնությունը կազմվում էր ՅԱՆՅ ձևով, իսկ այժմ դա վերածում ենք ՅԱՆ-ի, ինչպես՝ Արովյանց—Արովյան, Նալբանդյանց—Նալբանդյան, Նազարյանց—Նազարյան և այլն:

ՅՈՒՆ.— Հատկապես բնաձայնական բայերից կազմում է գործողության առարկայացված անուն ցույց տվող գոյականներ՝ բայանուններ, ինչպես՝ գոչյուն (գոչել բայից), դրդյուն (դրդալ բայից), դոփյուն, թնդյուն, խոխոջյուն, կոնչյուն, կրնտյուն, հնչյուն, ճարտարյուն, ճոնչյուն, մոնչյուն, սոսափյուն և այլն: Համանիշ է ՈՅ ածանցին և շատ դեպքերում կարող է նրանով փոխարինվել, օրինակ՝ մոնչյուն||մոնչոց, ճոնչյուն||ճոնչոց, ճայթյուն||ճայթոց և այլն:

ՆՈՅ.— Կազմում է իր, հագուստ, գործիք ցույց տվող գոյականներ, օրինակ՝ վզնոց, գոգնոց, ուսնոց, մատնոց, ակնոց, թիկնոց (վերջին երեք բառերում ն հնչյունը պատկանում է գրաբարյան հիմքին):

ՈՅ.— Կազմում է՝ ա) Գործիք, իր ցույց տվող բառեր, օրինակ՝ խարոց, էտոց, սղոց, ջնջոց, ֆերոց:

բ) Գործողության անուններ՝ բայանուններ հատկապես բնաձայնական բայերից, օրինակ՝ շվշվոց, խշխշոց, գոգոց, սվսվոց, ծվծոց, դոդոց, կշկշոց, փսփսոց, շրխկոց, շարոց և այլն: Այս իմաստով համանիշ է ՅՈՒՆ ածանցին:

գ) Տեղի անուններ սակավաթիվ գոյականներից՝ դարբնոց, դպրոց, ծաղկոց, թափսոց, հնոց (հու նշանակում էր կրակ):

ՈՐԴ.— Գոյականներից, ածականներից ու բայրմատներից կազմում է բառեր մի արհեստ, գործ, մասնագիտություն, զբաղմունք, մասնակցություն ունեցողի, այլև գործողի անվան նշանակությամբ, օրինակ՝ նավոր, նախարար, սայլոր, օրսոր, սավառնոր, վարորդ, հեծանվոր, զնոր, լողոր, հանախոր, նամփոր, ճանապարհոր, առաջնոր, բաժանոր, ծառագոր, կցոր:

ՊԱՆ.— ա) Կազմում է զբաղմունք, արհեստ, պաշտոն ցույց տվող բառեր, ինչպես՝ այգեպան, պարտիզպան, դոնապան, հեղացպան, սայլապան, ջրաղացպան, կառապան, ձիապան, ախոռապան, խանութպան, պանդոկապան:

բ) Առարկա, գործիք ցույց տվող բառեր՝ պահողի նշանակությամբ: Վերջում կարող է ավելանալ նաև ԱԿ ածանցը, օրինակ՝ տնապան (սը-

րունքը պահպանող զգեստ), լանջապան(ակ) (լանջը պահպանող զգեստ), ծայրապանակ, թղրապանակ, տետրապանակ, գրչապանակ և այլն:

ՄՏԱՆ.— ա) Յույց է տալիս երկիր, օրինակ՝ Հայաստան, Վրաստան, Պարսկաստան, Տանկաստան, Ասորեստան, Հնդկաստան, Հունաստան, Ռուսաստան և այլն:

բ) Մի բանի տեղ, մի բանով առատ վայր, օրինակ՝ լեռնաստան (լեռնոտ երկիր), մրգաստան (մրգով հարուստ տեղ), ծառաստան, այգեստան, անդաստան, բուրաստան, մենաստան:

ՎԱԾՎԱԾՔ.— Բայաճիմքերից կազմում են գոյականներ, որոնք ցույց են տալիս գործողության արդյունքը, հետևանքը, ինչպես՝ ասացված, զանգված, ընթերցված, կաթված, հերձված, հողված, հավելված, հատված, դարձված: Բայց արդի հայերենում գործողության արդյունքի, հետևանքի նշանակությամբ գոյականներ են կազմվում ավելի ՎԱԾՔ ձևով, օրինակ՝ գործվածք, գրվածք, խոսվածք, կառուցվածք, կերտվածք, հյուսվածք, մանկվածք, նստվածք, վիժվածք, վնասվածք, ֆերծվածք, հորինվածք և այլն:

Որոշ կազմություններում ավելի շեշտվում է գործողության ձևի իմաստը, օրինակ՝ նայվածք, ֆայլվածք, սանրվածք:

(Ա)ՎՈՐ.— Կազմում է բառեր մի բան ունեցողի, վրան կրողի, գործողի, մի բանով զբաղվողի նշանակություններով: Հիմնականում ածականակերտ ածանց է: Բայց (Ա)ՎՈՐ ածանցով կազմված շատ բառեր իրենց մեջ համատեղում են նաև գոյական անվան նշանակություն կամ ուղղակի գոյական են: Այսպիսի բառեր են. արևոտ, աղանդավոր, աշխատավոր, աստիճանավոր, ավտոմատավոր, գործավոր, եկվոր, զինվոր, ընկնավոր, թագավոր, կալվոր, կամավոր, կեղծավոր, հանցավոր, ձիավոր, ճգնավոր, մասնավոր, սեղանավոր, վիրավոր, ուզվոր, ուղևոր և այլն:

ՅԻՎԱՅԻՆՆԵՐ.— ա) Տեղի նշանակություն ունեցող գոյականներից կազմում են անձի անուններ մի տեղի բնակիչ լինելու նշանակությամբ, օրինակ՝ արևելցի, հարավցի, գավառացի, ֆաղաֆացի, գյուղացի, դաշտեցի, լեռնցի, երևանցի, լոռեցի, խոյեցի, դարաբաղցի և այլն: ՅԻ ածանցով կազմված մի շարք բառեր ստացել են նաև հատուկ անվան նշանակություն, օրինակ՝ Խորենացի, Փարսեցի, Նարեկացի, Կեչառեցի, Ազրամարցի, Մակեդոնացի և այլն:

բ) Կազմում են բառեր մի տեղում սովորող, աշխատող լինելու և այլ նշանակությամբ, օրինակ՝ դասաբանցի, կուրսեցի, համալսարանցի, հեմարանցի, ֆիզմաթցի, կիրովցի (Կիրովի անվան գործարանում աշխատող) և այլն:

գ) Երկրների անուններից կազմում է ազգի և այդ ազգին պատկանող անձի անուններ, օրինակ՝ անգլիացի, գերմանացի, եգիպտացի, ֆուպոնացի, իտալացի, ճապոնացի, շինացի, վրացի և այլն:

ՈՒ.— Դրվում է հատկապես բաղադրությունների վերջում և կազմում է գործողի անուն ցույց տվող գոյականներ, օրինակ՝ այցելու, բանասերլու, թռչակառու, կապալառու, կատակերգու, ռեբերգու, վիպերգու, վիթմառու, տաղերգու, ֆնարերգու, երկրպագու և այլն:

ՈՒԹՅՈՒՆ.— Կազմում է գոյականներ վերացական նշանակությամբ:

ա) Ածականներից և մի շարք գոյականներից կազմում է հատկապիշ վերացարկված իմաստ արտահայտող բազմաթիվ բառեր, ինչպես. 1. ազահուրյուն, դաժանուրյուն, դեղնուրյուն, լայնուրյուն, հեզուրյուն, մեղմուրյուն, մաքրուրյուն, նորուրյուն, շֆեղուրյուն, սովորուրյուն, տիրուրյուն և այլն. 2. բարեկամուրյուն, գյուղացիուրյուն, դարբնուրյուն, ընկերուրյուն, սրբուրյուն, ուսուցչուրյուն, աղվեսուրյուն, խոզուրյուն, հիմարուրյուն և այլն:

բ) Բայաճիմքերից կազմում է գործողության առարկայացված անուններ, օրինակ՝ ախտահանություն (ախտահանել՝ բայից), ազատագրություն (ազատագրել՝ բայից), ազդեցություն, գովաբանություն, հաղթություն, մեկնություն, պաշտպանություն, սպանություն, փառաբանություն, փրկություն, օգնություն և այլն: Այս իմաստով ՈՒԹՅՈՒՆ ածանցը համանիշ է ՈՒՄ ածանցին, ինչպես՝ ախտահանություն||ախտահասում, ազատագրություն||ազատագրում և այլն: Սակայն գործողության անվան նշանակությամբ ավելի գործուն է ՈՒՄ ածանցը:

գ) Որոշ գոյականներից կազմում է հավաքական հոգնակի իմաստ արտահայտող բառեր, ինչպես՝ աշխատավորություն (աշխատավորներ), ազնվականություն (ազնվականներ), արհեստավորություն, գաղթականություն, բանվորություն, գյուղացիություն, աշակերտություն, երիտասարդություն, ուսուցչություն, մարդկություն:

ՈՒԿ.— ա) Գոյական անվանը տալիս է փոքրացուցիչ-փաղաքշական, սակավադեպ նաև նվաստական նշանակություն, օրինակ՝ արջուկ, գառուկ, գոմշուկ, դիվուկ, իշուկ:

բ) Կազմում է գոյականների զանազան նշանակություններով, օրինակ՝ ավելցուկ, ծեռուկ, կապուկ, կիտուկ, կուծկուտուկ, հանելուկ, հեղուկ, նոսրուկ, ֆաշֆուկ, գլուխկուտուկ, կարմուկ, խոզուկ, գորտուկ, ջրջուկ, կոշտուկ (վերջին հինգը հիվանդության անուններ են): ՈՒԿ-ը միաժամանակ ածականակերտ ածանց է (բանուկ, կտրուկ, տաքուկ, գիրուկ և այլն):

ՈՒՀԻ.— Կազմում է անձի անուններ իգական սեռի նշանակությամբ, օրինակ՝ աշակերտուհի, բժշկուհի, բանաստեղծուհի, գեղջկուհի, երգչուհի, ընկերուհի, թագուհի, իշխանուհի, կայսրուհի, ուսանողուհի, ուսուցչուհի, վրացուհի և այլն:

Կան ՈՒՀԻ ածանցով կազմված կանացի մի շարք հատուկ անուններ, ինչպես՝ Մրբուհի, Վանուհի, Երանուհի, Մաքրուհի, Գեղուհի, Հրբաղուհի, Նաիրուհի, Քաղուհի:

**ՌԻՄ (Հին՝ Ռիմն).**— Բայերի անկատարի կամ կատարյալի հիմ-  
քերից կազմում է գործողության առարկայացված անուններ՝ բայանուն-  
ներ, օրինակ՝ ավարտում (ավարտել բայից), արգելում (արգելել բա-  
յից), ժխտում, խափանում, ծագում, կատարում, նվաճում, շարժում,  
ավելացում, ամրացում, բարձրացում, ընտելացում, հեռացում, ոչըն-  
չացում, պայթեցում և այլն:

**ՌԻՅԹ.**— Բայերից, երբեմն նաև գոյականներից կազմում է բառեր  
զանազան նշանակություններով, օրինակ՝ ասույթ, բնույթ, դրույթ, ե-  
լույթ, երևույթ, հասույթ, հավաքույթ, հաշկերույթ, շահույթ, ձանձրույթ,  
մշակույթ, սովորույթ, երեկույթ, ցերեկույթ, ավանդույթ, նորույթ:

**ՌԻՅԹ** ածանցով կազմվել և կազմվում են լեզվաբանական տերմին-  
ներ, օրինակ՝ հնչույթ, ձևույթ, բառույթ, շարույթ, ասույթ, շարահյու-  
սույթ, արժույթ, բաղադրույթ, իմաստույթ, հատույթ, մեկույթ, նշույթ<sup>27</sup>:

**ՌԻՆՔ.**— Կազմում է գոյականներ զանազան նշանակություններով,  
օրինակ՝ ակունք, արբունք, բարձունք, դրունք, իրավունք, լորձունք, հի-  
մունք, մասունք, շրթունք, սկզբունք, ցցունք, ուլունք, համեմունք, ման-  
րունք, պաշտամունք, ծաղկունք: Որոշ բառերի մեջ ունի հավաքական  
նշանակություն:

**ՌԻՏ.**— Ցույց է տալիս մի բանով առատ վայր, տեղ, օրինակ՝ թա-  
վուտ, կեչուտ, սոճուտ, ճահճուտ, եղեգճուտ, խնճուրուտ, մուրուտ, շամ-  
բուտ, տղմուտ, ավազուտ, ծանծաղուտ, խավարուտ, խավարչուտ և այ-  
լրն:

**ՌԻՐԴ.**— Կազմում է մի բանի գոյականներ բայահիմքերից, ինչպես՝  
արձակուրդ, ժողովուրդ, խառնուրդ, կցուրդ, հագուրդ, պարապուրդ, ա-  
ճուրդ:

**ՌԻՔ, ՌԻՅՔ.**— Կազմում են գոյականներ մի բանի բայերից՝ հիմ-  
նականում ցույց տալով գործողության արդյունքը, հետևանքը, առան-  
ձին դեպքերում նաև գործողություն, օրինակ՝ այրույթ, այրուց, գինար-  
բույթ, խառնույթ, ֆույթ, կտրույթ, մանրույթ (մանրունք), մոլուցք, սե-  
րուցք, ուռուցք, փաշկոտույթ, ծեծկոտույթ, փերուցք, փամույթ:

**Ք.**— Գրաբարում կազմում էր գոյականների հոգնակի թիվը (բան-  
բանք, գետ-գետք, զարդ-զարդք և այլն):

ա) Ժամանակակից հայերենում կան Ք ածանցով կազմված մի  
շարք բառեր, որոնց մեջ Ք-ն սոսկ ձևական նշանակություն ունի և այդ  
խոսքի պատճառով էլ զրանք երբեմն ունենում են հարաբերակից առանց  
Ք-ի ձևեր: Այսպիսի բառեր են. աչք (աչ), աղիք, դժոխք, գեներ, գորք,  
երկինք, խելք, կաշառք, կառք, հոնք, հրաչք, ձեռք (ձեռ), մեղք, միտք  
(միտ), շեմք (շեմ), հնարք (հնար), հավատք (հավատ), ոտք (ոտ),  
պարտք (պարտ), պետք, վանք, ուշք (ուշ), փառք, քիմք, հիմք: Այս

<sup>27</sup> Վերջին տերմինները տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը  
և խոնարհումը, Երևան, 1967:

բառերի նմանակությամբ ժողովրդական լեզվում առանձին բառերի վեր-  
ջում ավելացել է Ք մասնիկը, օրինակ՝ աշխատանք, զարունք, աշունք,  
գետինք, տեսիլ-տեսիլք, նշխար-նշխարք և այլն:

բ) Գոյականներից կազմում է նոր իմաստ կամ իմաստային նոր  
երանգ ունեցող գոյականներ, օրինակ՝ բաժին-բաժինք, գիր-գիրք, քե-  
քեք, խաղ-խաղք, խնդիր-խնդիրք, ծալ-ծալք, կաթիլ-կաթիլք, կող-կողք,  
հավ-հավք, շար-շարք, շնորհ-շնորհք, փաշ-փաշք, տարի-տարիք, փող-  
փողք և այլն:

գ) Ածականներից կազմում է գոյականներ, օրինակ՝ արժանի-ար-  
ժանիք, բարի-բարիք (դրա նմանակությամբ՝ շար-շարիք), գաղտնի-  
գաղտնիք, ընտանի-ընտանիք, լայն-լայնք, խոր-խորք, հայրենի-հայրե-  
նիք, հավաստի-հավաստիք, հում-հումք, շար-շարք և այլն:

դ) Բայահիմքերից կազմում է գործողության անուններ, որոնցից  
շատերն ստացել են թանձրացական նշանակություն կամ իրենց մեջ  
համատեղում նն և՛ գործողության, և՛ առարկայական նշանակություն,  
օրինակ՝ աղոթք, գնացք, գովք, էլք, խոսք, հայացք, հանք, հմայք, մուտք,  
նզովք, պահք, ջանք, սլացք, սպասք, վաճառք, վայելք, տեսք, տուրք,  
ցնորք, վազք և այլն:

ե) Կազմում է երկրների և գավառների անուններ, օրինակ՝ Հայք,  
Մեծ Հայք, Փոքր Հայք, Վիրք, Ասորիք, Աղվանք, Գուգարք, Աղձնիք,  
Գամիք, Մոփս, Ռշտունիք, Սյունիք, Տաշիրք, Ուտիք և այլն:

**ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՆԵԱՌՅԱԼ ՎԵՐՋԱՄԱՆՑՆԵՐ.**— Նորագույն շրջանում  
հայերենը բազմաթիվ փոխառություններ է կատարել ուսուցիչից և գլու-  
խավորապես ուսուցիչի միջոցով նաև եվրոպական լեզուներից (գեր-  
մաներեն, անգլերեն, ֆրանսերեն): Այս ձևով այսպես կոչված «միջ-  
ազգային բառերը» թափանցում են հայերենի մեջ: Բառերի փոխառու-  
թյունը իր հետ բերում է նաև բառակազմական մասնիկների՝ ածանց-  
ների փոխառություն: Այսպես, օրինակ՝ ժամանակակից հայերենում փո-  
խառյալ մի շարք բառերի մեջ ածանցական նշանակություններ են ըզ-  
գացվում, ինչպես՝ ազիտացիա, կոոպերացիա, օպերացիա, օկուպանտ,  
կուրսանտ, ասպիրանտ, քիմիկոս, ակադեմիկոս, մաթեմատիկոս:

Սակայն օտար այս ածանցները հայերենի բառակազմական հա-  
մակարգի մեջ տեղ չունեն, որովհետև գործածվում են միայն սահմա-  
նափակ փոխառյալ բառերի մեջ և բնիկ հայերեն բառերի վրա դրվել  
չեն կարող:

Հայերենում կենդանի բառակազմական նշանակություն ունեն մի-  
այն նորագույն փոխառյալ ԻԱ, ԻՁՄ, ԻՍՍ ածանցները:

**ԻԱ.**— Համանիշ է ՍՍԱն ածանցին և կազմում է երկրների անուն-  
ներ, ինչպես՝ Բյուզանդիա, Բուլղարիա, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա,  
Հունգարիա, Ճապոնիա, Հոլանդիա և այլն:

**ԻԶՄ.**— Կազմում է բազմաթիվ գոյականներ, որոնք ցույց են տալիս ուսմունք, հասարակական-քաղաքական ուղղութիւն, հասարակարգ, գեղագիտական ուղղութիւն և այլն, օրինակ՝ դարվինիզմ, մարքսիզմ, լենինիզմ, հումանիզմ, մատերիալիզմ, նացիոնալիզմ, իդեալիզմ, սոցիալիզմ, կապիտալիզմ, ռեալիզմ, ռամանտիզմ, կլասիցիզմ և այլն: **ԻԶՄ** ածանցով կազմված բառերը, որպես կանոն, ունեն հարաբերակից **ԻՍՍ** ածանցով կազմված ձևեր:

**ԻՍՍ.**— Կազմում է անձի անուններ մի ուսմունքի, հասարակական-քաղաքական ուղղութիւն, գեղագիտական հայացքների հետևողի և այլ նշանակութիւններով, օրինակ՝ դարվինիստ, մարքսիստ, հումանիստ, մատերիալիստ, նացիոնալիստ, իդեալիստ, ռեալիստ, սոցիալիստ և այլն:

**ԻՍՍ** ածանցի իմաստն արտահայտում է հայերեն ԱԿԱՆ և ՅԱՆ ածանցներով, օրինակ՝ դարվինիստ||դարվինական, մարքսիստ||մարքսական, լենինիստ||լենինյան և այլն:

**ՆԱԿԱՍՏԱՆՅԱՎՈՐ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ.**— Վերջածանցների հետ համեմատած՝ շնչին է նախածանցների խաղացած դերը հայերենի բառակազմութիւն մեջ ընդհանրապես և գոյականների կազմութիւն մեջ մասնավորապես: Ծիշտ է, հայերենում կան նախածանցներ ունեցող մի շարք գոյականներ, բայց դրանք մեծ մասամբ բայանուններ են՝ կազմված նախածանցներ ունեցող բայերից, ինչպես՝ բացատրություն (բացատրել բայից), գերակատարում (գերակատարել), գերազնահատում (գերազնահատել), թերազնահատում (թերազնահատել), թերակատարում (թերակատարել), հարադրություն (հարադրել), հեղափոխություն (հեղափոխել), ներշնչում (ներշնչել), ներգործություն (ներգործել), ստորագրություն (ստորագրել), վերաբաժանում (վերաբաժանել), վերագում (վերագրել), վերազինում (վերազինել), վերաբնություն (վերաբննել) և այլն:

Սակայն կան նաև նախածանցավոր բուն անվանական կազմութիւններ, օրինակ՝ Կովկաս-Անդրկովկաս, գաղթ-արտագաղթ, սանձաւարտասահման, գիծ-տրամագիծ, չափ-տրամաչափ և այլն:

Բուն անվանական կազմութիւններում գործածվող և արդի հայերենում այս կամ այն չափով բառակազմական նշանակութիւն ունեցող նախածանցները հետևյալներն են:

**ԳԵՐ** (= վեր)— գերածախս, գերաշխարհ, գերիշխան, գերիշխանություն, գերմարդ, գերիմաստուն, գերհնչույթ, գերձնույթ և այլն:

**ԳԵՐ** (= փոխարեն)— դերանուն, դերբայ, դեր-ատենապետ, դերկոմս, դեր-նախագահ և այլն:

**ՀԱԿ** (= հակառակ)— հակագրոհ, հակառաջակ, հակաթույն, հակահոսանք, հակահարձակում, հականեխում, հակաֆաշիստ, հակամարքսիստ:

**ՀԱՄ** (= բոլոր, ընդհանուր, նույն)— համաբարբառ, համագումար,

համագարկ, համագգեստ, համարժեք, համաժողով, համալսարան, համակարգ, համաճում, համաբաղաժայի, համերգ և այլն:

**ՄԱԿ** (= վրա)— մականուն, մակբայ, մակալեզու, մակածական, մակերես, մակերևույթ, մակընթացություն:

**ՆԱԽ** (= սկզբի, առաջին)— նախատիպ, նախաբան, նախամտաբ, նախաւենյակ, նախահաշ, նախապատեառ, նախալեզու, նախահիմք, նախամայր, նախահայր, նախամարդ և այլն:

**ՓՈՒ** (= փոխարեն)— փոխարեա, փոխանուն, փոխգնդապետ, փոխնախագահ, փոխծովակալ:

Որոշ գոյականներ կան նաև ԱՆ ժխտական նախածանցով, օրինակ՝ անիշխանություն, անմիաբանություն:

### Բարդություն

**ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՈՎ.**— Գոյականների կազմութիւն մեջ մեծ դեր ու կշիռ ունի նաև բարդութիւնը, ըստ որում, բարդ գոյականներ են կազմվում և՛ համադրական, և՛ վերլուծական բարդութիւններ<sup>28</sup>, բայց դրանցից ավելի գործուն ու տարածված է առաջինը՝ համադրական բարդութիւնը:

### Համադրական բարդություն

**ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ.**— Պետք է տարբերել համադրական բարդ գոյականների կազմութիւն հետևյալ հիմնական տիպերը:

ա) **ԳՈՅԱԿԱՆ + ԳՈՅԱԿԱՆ.**— Առաջին բաղադրիչն այս կամ այն տեսակետից լրացնում է երկրորդին՝ արտահայտելով սեռական հոլովի ձևային նշանակութիւնը, օրինակ՝ գետափ, լեռնալանջ, ձեռնափայտ, մսաջուր, ջրահաւս, սարալանջ, ծաղկաման, ծոցատետր, ակաճացալ և այլն: Այս ձևով կազմվում են նաև ածականներ մի բան ունեցողի նշանակութիւնով, օրինակ՝ առյուծասիրտ, արծվափիթ, աղյուսագույն և այլն:

Գոյական + գոյական ձևով համադրական բարդ գոյականներ են կազմվում նաև բաղճուսական հարադրութիւններից: Մտտ նշանակութիւն ունեցող կամ այս կամ այն իմաստով իրար հետ կապված բա-

<sup>28</sup> Վերջին շրջանում հրատարակված քերականական աշխատություններում համադրական բարդության անվանման տակ ներառվում են իսկական և կցական բարդությունները, իսկ վերլուծական բարդության տակ՝ կրկնավոր և հարադրական բարդությունները: Համադրական և վերլուծական բարդությունների մասին մանրամասն և ընդարձակ տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980:

ոնքը միավորվում են ՈՒ, երբմն նաև ԵՎ շաղկապով, այսպիսով կազմելով մի բաղադրյալ գոյական, որ ընդհանրացած ձևով կրում է իր բաղադրիչների իմաստը, օրինակ՝ ազգատակ, անցուղարձ, աղունաց, այբուրեն, այբուձի, առևտուր, ելևէջ, լացուկոծ, նիստուկաց, կարուձե, որբեայրի և այլն: Ինչպես կարելի է նկատել, այս տիպի դեպքում բաղադրիչները գտնվում են համադասական հարաբերության մեջ:

բ) ԳՈՅԱԿԱՆ + ԲԱՅԱՐՄԱՏ.— 1. Կազմվում են գործող անձի, քիչ դեպքում նաև գործիքի անուններ ենթակայական դերբայի նշանակությամբ, օրինակ՝ բանասեր, պատմագիր, բեռնակիր, գրագող, դասախոս, դավադիր, երախտամոռ, զորավար, թուրս, հայասեր, ժամացույց, ականանետ, հարթաչափ և այլն:

Յույց տալով գործողի անուն՝ այս կազմությունները գործածվում են նաև որպես ածականներ կամ ունեն նաև ածականական նշանակություն (հայրենասեր, խնամատար, դավադիր և այլն):

2. «Գոյական + բայարմատ» բաղադրություններն արտահայտում են նաև գործողության անվան՝ բայանվան նշանակություն: Սակայն այսպիսի կազմությունները լայն տարածում չունեն: Գործողության անվան նշանակություն ունեն, օրինակ, հետևյալները. գլխավորություն (գլխի պետություն), բերեհավաք (բերքը հավաքելը), հարսնատես, գործադուլ, հացադուլ, զինադադար, զինակոչ, զորակոչ, զորահավաք, արևածագ, խոտհունձ, ծառատունկ, բանբող, մարդահամար, օրհաս և այլն:

գ) ԱՄԱԿԱՆ ԿԱՄ ՄԱԿԱՐԱՅ + ԲԱՅԱՐՄԱՏ.— Նախորդ տիպի նման (1) կազմվում են բառեր գործողի նշանակությամբ և մեծ մասամբ ունենում են ածականական գործածություն ու կիրառություն, օրինակ՝ արագընթաց, ծանրակշիռ, դժվարաշարժ, դյուրահավատ: Բայց այսպիսի բառերը հաճախ իրենց մեջ համատեղում են նաև առարկայական նշանակություն և ունենում են գոյականական կիրառություն, օրինակ՝ արագավազ, բարձրախոս, զագրախոս, լավատես, ձրիակեր, մենակատար, ստախոս, շատախոս, շատակեր, շարական, ուղղաթիռ և այլն:

դ) ԱՄԱԿԱՆ + ԳՈՅԱԿԱՆ.— Կազմվում են գոյականներ, որոնք մի իմաստային միություն չեն ներկայացնում, որովհետև երկրորդ բաղադրիչը գործածվում է իր բուն իմաստով, իսկ առաջինն այս կամ այն կողմից որպես որոշիչ լրացնում է նրան, օրինակ՝ դեղնախոտ, խառնածոզով, բնագիր, բնաշխարհ, թթվասեր, լիպուսին, սևահող, հարթավայր, սառնաշաբար, վերնագիր, վերնագրեստ, վերնատուն, միջնախաղ, վերջնահաշիվ, մանրադրամ, մանրանկար, մեծատառ, նորալուսին, նորահարս, նորափեսա և այլն:

Սակայն «ածական + գոյական» բաղադրությունների ավելի մեծ մասը մի բան ունեցողի իմաստ է արտահայտում և ունի ածականական նշանակություն, ինչպես՝ ամրակազմ, բարակավիզ, քավահոն, թուլակազմ և այլն, թեև այսպիսի բառերի մեջ հաճախ առկա է նաև գոյա-

կանական նշանակություն, և նրանք ազատ կարող են կիրառվել այս վերջին նշանակությամբ, օրինակ՝ մեծատուն, կարնատես, կարմրախայտ, բրամիտ, գանգրահեր, թեթևամիտ, թուլամորթ, թուլակամ, ծածկամիտ, ծակաչի, հաստազուլիս և այլն:

ե) ԲԱՅԱԶԻՄՔ + ԳՈՅԱԿԱՆ.— Առաջին բաղադրիչը, որ բայական արմատ է, լրացնում է երկրորդին՝ արտահայտելով սեռական հոլովի ձևական նշանակությունը, օրինակ՝ աշխատասենյակ (աշխատելու սենյակ կամ աշխատանքի սենյակ), բնակավայր, բուժավայր, դարձակետ, ելակետ, գրոսայգի, զսպատուն, թիկնաբոս, լսափող, ծխախոտ, ընթերցատեղ, ննջասենյակ, մրցահրավեր, սահաղաշտ, սողանցք, վանաստեղան, փրկագին և այլն:

զ) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ + ԳՈՅԱԿԱՆ.— Որոշ թվով գոյականներ են կազմվում նաև «անորոշ դերբայ + գոյական» կաղապարով, օրինակ՝ գործելակերպ (գործելու կերպ), գրելածե, մտածելակերպ, մտածելածե, վարվելակերպ, գրելացավ, վառելափայտ, վառելանյութ, պատմելառն, պատմելածե:

Վերլուծական բարդություն

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ.— Ժամանակակից հայոց լեզվում գոյականներ են կազմվում նաև վերլուծական բարդությամբ, որոնք լինում են հարադրություններ, օրինակ՝ թե ու թիկունք, հայր ու մայր, մայր ու աղջիկ, օր ու գիշեր (շաղկապական հարադրություններ), գիշեր-ցերեկ, թիկնոց-վրան, խրճիթ-ընթերցարան, ցուցահանդես-վանառք, հարավ-արևելք, հյուսիս-արևմուտք, ընկեր-բարեկամ (հարակցական հարադրություններ) և կրկնավորներ, օրինակ՝ մարդ-մուրդ, գոռու-գոչում, սարք-սուրք, աման-չաման, բան-ման, թուղթ-մուղթ, շիր-միր և այլն:

Չափազանց մեծ թիվ են կազմում կայուն բառակապակցությունների ձևով հանդես եկող բաղադրյալ գոյականները, օրինակ՝ կարմիր անկյուն, պատի թերթ, ուղիղ խնդիր, խոսքի մաս, Երևանի պետական համալսարան, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, Միավորված ազգերի կազմակերպություն և այլն:

Հ ա պ ա վ ու մ

ՀԱՊԱՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ.— Հապավումներն առաջանում են բառերի կրճատ գրության հիմքի վրա և մեր լեզվի մեջ լայնորեն տարածվել են

խորհրդային շրջանում<sup>29</sup>, Սովորաբար հապավում են պետությունների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկությունների և այլն բաղադրյալ անունները, և ըստ այդմ հապավման միջոցով միայն գոյականներ են կազմվում: Այլ հարց է, երբ հապավումներից ածանցման միջոցով կազմվում են այլ խոսքի մասեր, ասեներ, ածականներ, օրինակ՝ բանգյուղթղթակից-բանգյուղթղթակցական, բուն-բունական և այլն:

Հապավումները լինում են.

Տառային, երբ հապավումը կազմվում է բաղադրյալ անվան առաջին տառերից, ինչպես՝ ՄԱԿ (Միավորված ազգերի կազմակերպություն), ԱՄՆ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), ՍՍՀՄ (Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն), ՀԼԿԵՄ (Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միություն), ՀՀԳ (Հայկական հեռագրական գործակալություն) և այլն:

Վանկային, երբ հապավումը կազմվում է բաղադրյալ անվան առաջին վանկերից, օրինակ՝ կենտկոմ (կենտրոնական կոմիտե), կոմկոս (կոմունիստական կուսակցություն), հայլաեմհրատ (Հայաստանի պետական հրատարակչություն), ֆաղգործկոմ (քաղաքային գործադիր կոմիտե): Առանձին դեպքերում որպես հապավման մասեր կարող են հանդես գալ բաղադրիչների երկու վանկերը, օրինակ՝ պետհրատ, խնայդամարկը:

Վանկա-բառային, երբ հապավումը կազմվում է վանկերից և ամբողջական բառերից, օրինակ՝ հրամկազմ (հրամանատարական կազմ), կուսկազմակերպիչ (կուսակցական կազմակերպիչ), ֆաղբաթին (քաղաքական բաթին), շրջողկրթբաթին (շրջանային ժողովրդական կրթության բաթին), ժողդատարան (ժողովրդական դատարան) և այլն:

Տառա-վանկային՝ ՀամԿԵՄ (Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն), ՊԱՋԸ (Սյաշտպանության աշակցող ընկերություն):

Տառա-բառային՝ Հայկական ՍՍՀ (Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն), Ուկրաինական ՍՍՀ և այլն:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ հասարակական սովորական բառեր փոխանում են որոշակի հապավումները, ինչպես՝ զազս (запись актов гражданского состояния), ՏՍՍՍ (Телеграфное агентство Советского Союза, հայերեն հապավմամբ՝ ՄՄԶԳ), սովխոզ (советское хозяйство) և այլն:

<sup>29</sup> Հապավման նախն սովորական մանրամասն տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայերեն լեզվի դասընթաց, էջ 182—198: Գ. Բ. Ջահուկյան, Լ. Բ. Աղալյան և ուրիշ Հայերեն լեզու, էջ 455—472:

## Ա Շ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Ն

ԱՇԱԿԱՆ ԱՆՎԱՆ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ -

Ածական անվան խոսքի մասային կարգի մեջ մտնող բառերը արտահայտում են առարկայի հատկանիշի հասկացությունը, ինչպես՝ դեղին (ոսկի, տերև), սև (մատիտ, գրատախտակ), գարնանային (անձրև, ծաղիկ), աշակերտական (տետր, համազգեստ), փայտե (տնակ, գրիչ), երկաթե (գուռ, կամուրջ), բարի (մարդ, կին), հին (շոր, գիրք) և այլն: Ինչպես օրինակներից էլ կարելի է եզրակացնել, հատկանիշի հասկացությունն իր մեջ ներառնում է ամենատարբեր ու բազմազան նշանակություններ՝ գ ու յ ն՝ սև, սպիտակ, կարմիր, մեծ ու փոքր, մեծ, փոքր, տաք և սառնակ, ու ժամանակային և անժամանակային, փայտե, երկաթե, մարմարե, ներքին և արտաքին և անհատական և խելոք, բարի, հպարտ, հաստ, հին, նոր և այլն: Բայց այս ամենատարբեր ու ամենաբազմազան իմաստ արտահայտող բառերը միավորվում են մի կարգի՝ ածական անվան կարգի տակ իրենց ամենաբնութագրիչ նշանակությամբ, հատկանշային նշանակությամբ, որով և պայմանավորված են այդ բառերի նույն շարահյուսական կիրառությունները:

Սակայն ածականի նման հատկանիշի գաղափար են արտահայտում հարակատար, ենթակայական և ապառնի դերբայները, ինչպես՝ այրված թուղթ||այրվող թուղթ||այրվելիք թուղթ, կառուցված շենք||կառուցվող շենք||կառուցվելիք շենք և այլն: Ածականի և բայի (դերբայների) տարբերությունն այդ դեպքում այն է, որ ածականի արտահայտած հատկանիշն անկախ է ժամանակի գաղափարից, իսկ բայի արտահայտած հատկանիշին ներհատուկ է ժամանակային գաղափար:

Որպես հատկանշային հասկացություն արտահայտող բառերի կարգ ածական անունը ժամանակակից հայոց լեզվում ձևաբանորեն բնորոշվում է նրանով, որ իր հիմնական կիրառության դեպքում զուրկ է թեքվման ձևերից, միշտ գոյականի վրա է դրվում իր ուղիղ, անփոփոխ ձևով՝ շհասածայնելով նրա հետ ո՛չ հոլովով, ո՛չ էլ թվով, օրինակ՝ կանաչ ծառ—կանաչ ծառի—կանաչ ծառից—կանաչ ծառեր—կանաչ ծառերի—կանաչ ծառերից և այլն: /



Ածականների այսպիսի գործածութեամբ աշխարհաբարը տարբերվում է մեր հին լեզվից՝ գրաբարից, որտեղ ածականի և գոյականի կապակցութիւնն այսպես ազատ չէր, և որոշակի դեպքերում ածականը թվով և հոլովով համաձայնում էր գոյականին: Գրաբարի բերականութիւններում այս հարցի վերաբերյալ սովորաբար տրվում է հետևյալ ընդհանուր կանոնը. գրաբարում միավանկ ածականները և՛ նախադաս, և՛ ետադաս կիրառութեամբ թվով և հոլովով համաձայնում են գոյականին, օրինակ՝ մեծ տուն—մեծի տան—մեծք տուն—մեծաց տանց. տուն մեծ—տան մեծի—տունք մեծք—տանց մեծաց և այլն, իսկ բազմավանկ ածականները նախադաս գործածութեամբ որպես կանոն չեն համաձայնում, օրինակ՝ իմաստուն այր—իմաստուն առն—իմաստուն արք—իմաստուն արանց և այլն, իսկ ետադաս գործածութեամբ համաձայնում են, ինչպես՝ այր իմաստուն—առն իմաստուն—արք արանց իմաստունց և այլն: Բայց այս կանոնն էլ գրաբարի համար մի պարտադիր օրինաչափութիւն չէր և ունեւր իր բազմաթիվ շեղումներն ու բացառութիւնները<sup>1</sup>: Մեր լեզվի հետագա պատմական զարգացման ընթացքում ածականի և գոյականի (իմա՝ որոշիչ և որոշյալի) համաձայնութեան բերականական օրինաչափութիւնը վերանում է, և ածականի գործածութեան տեսակետից ժամանակակից հայերենը, ինչպես և աշխարհաբարն ընդհանրապես, հասել է մի չափազանց պարզ դրութեան:

Երբ խոսվում է ածականի անթեքականութեան մասին, նկատի է առնվում նրա հիմնական, որոշչային կիրառութիւնը (գեղեցիկ աղջիկ—գեղեցիկ աղջկա—գեղեցիկ աղջկանից և այլն): Բայց (ածականները լայնորեն կիրառվում են նաև փոխանվանաբար, գոյականաբար: Փոխանվանական կիրառութեան դեպքում ածականը հոգ է ստանում, հոլովվում է և կազմում հոգնակի թիվ, ինչպես՝ մեծը—մեծի—մեծից, մեծերը—մեծերի—մեծերից, սեր—սերի, սերից, սերեր—սերերի—սերերից և այլն: Հասկանալի է, որ այս և նման ձևերը բուն ածականի թեքման ձևեր համարվել չեն կարող, որովհետև դրանք ոչ թե բուն ածականներ են, այլ գոյականի պաշտոն կատարող, գոյականացած ածականներ:

Ածականի շարահյուսական կիրառութիւնները բխում են նրա իմաստային առանձնահատկութիւններից:

Արտահայտելով հատկանշային նշանակութիւն՝ ածական անունը խոսքի մեջ հիմնականում հանդես է գալիս որպես գոյականի լրացում՝ այս կամ այն կողմից որոշելով նրան, ցույց տալով նրա այս կամ այն հատկանիշը և, ըստ այդմ, հանդես գալով որոշիչ շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ «Փշում էր մեղմ հովիկը, ծաղիկները ծպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խազաղ

տարածութիւնը օրորվում էր սփանշելի ալեկոծութեամբ» (Րաֆֆի). «Եվ ահա այսօր մեռնում է անվանի քաղաքացին, խելացի մարդը, տոկուն վաճառականը, որ ամբողջ կյանքն անց է կացրել անդուլ գործունեութեամբ» (Շիրվ.): «Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում, երբ խիստը գգվանքով արեգակը մեռնող Սարբրի արծաթե կատարներն է վառում» (Տեր.): Որոշչային կիրառութիւնը ածականի ամենասովորական ու դանգալածային, ամենատարածված կիրառութիւնն է, ուստի և ավելի օրինակներ բերելու կարիք չի զգացվում:

Ածական անունը լայնորեն կիրառվում է նաև որպես ստորոգելական վերագիր՝ ցույց տալով այն հատկանիշը, որ վերագրվում է ենթակային, օրինակ՝ «Գեղեցիկ էր այդ առավոտը» (Րաֆֆի). «Երկու սուրհանդակներից մեկի ձին սևագույն էր, մյուսինը՝ կապուտակ» (Րաֆֆի). «Նա ժլատ է, նրա ձեռները դողում են գրպանից դրամ դուրս բերելիս» (Շիրվ.): «Հիվանդ գլուխդ կդնես կրծքիս, կլինես քնքուշ, մտիկ, հարազատ» (Տեր.): «Զգույշ է միրհավը, դժվար է նրան խփել» (Բակ.): «Օղը մաքուր էր, արցունքի պես ջինջ» (Բակ.):

Ածականի շարահյուսական կիրառութիւնները քննելիս իր վրա հատուկ ուշադրութիւն է գրավում հայերենին հատուկ մի առանձնահատկութիւն, որ գալիս է դեռևս մեր հին լեզվից՝ գրաբարից: Այդ առանձնահատկութիւնն այն է, որ հայերենի որակական ածականների մի զգալի մասը գործածվում է ոչ միայն գոյականների հետ՝ ցույց տալով առարկայի հատկանիշ և հանդես գալով որոշիչ պաշտոնով, այլև գործածվում է բայերի հետ՝ ցույց տալով գործողութեան հատկանիշ և հանդես գալով ձևի պարագայի պաշտոնով: Սա նշանակում է, որ ածականը հայերենում կարող է ունենալ նաև մակբայական կիրառութիւն: Այսպես, հայերենում լայնորեն գործածական են ոչ միայն լավ մարդ, գիրք, պատմութիւն, բարձր շենք, ծառ, սար, հիանալի խոտ, միտք, ուսանող և նման այլ կապակցութիւններ, այլև լավ խոսել, գրել, պատմել, բարձր խոսել, պատմել, ճշտել, հիանալի կատարել, վերլուծել, աշխատել և նման այլ կապակցութիւններ:

Հարց է առաջանում՝ որպես պարագա կիրառվող այսպիսի բառերը տվյալ կապակցութեան մեջ ածականներ, թե՞ մակբայներ պետք է համարվեն: Որոշ բերականներ (օրինակ՝ Մ. Աբեղյան) գտնում են, որ երբ ածականները գործածվում են որպես պարագա, առնվում են իբրև առանձին տեսակի բառեր՝ մակբայներ, իսկ որոշ բերականներ էլ (օրինակ՝ Գ. Սևակ) գտնում են, որ ածականը, անկախ այն բանից՝ գոյականի, թե բայի հետ է գործածվում, մնում է որպես ածական և մակբայ համարվել չի կարող: Հարցի այս տարբեր լուծումները պայմանավորված են նրանով, թե խոսքի մասերի դասակարգման ժամանակ էական, թե՞ երկրորդական դեր է հատկացվում բառերի կիրառութիւններին, այսինքն՝ խոսքի մասերի որոշման շարահյուսական հիմունքին:

<sup>1</sup> Ածականի և գոյականի համաձայնութեան մասին ընդարձակ տե՛ս Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցութիւնը գրաբարում, Երևան, 1972:

Ինչպես նշված է արդեն, խոսքի մասերի դասակարգման ժամանակ անպայմանորեն պետք է հաշվի առնվեն նաև բառերի շարահյուսական կիրառությունները: Ելնելով սրանից՝ կարծում ենք, որ ճիշտ պետք է համարել առաջին տեսակետը: Լեզվական փաստերն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայերենում ածականն ու մակբայը շատ դեպքերում ձևաբանորեն տարբերակված չեն և պետք է որոշվեն ըստ շարահյուսական կիրառության: Անժխտելի է, որ ինչքան սովորական, տարածված ու զանգվածային է, ասենք, լավ, զգայլ, հիանալի բառերի որոշային կիրառությունը, նույնքան սովորական, տարածված ու զանգվածային է դրանց պարագայական կիրառությունը: Այս երկու կիրառություններն էլ բխում են վերոհիշյալ բառերի հենց բուն էությունից, հետևաբար դրաք ինչքանով ածականներ են, նույնքանով էլ մակբայներ են, և դա, ինչպես նշվեց, որոշվում է ըստ բառերի շարահյուսական կիրառության:

#### ԱՄԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԱՄԱԿԱՆԻ՝ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ.— Հայ, ինչպես նաև օտար լեզուների քերականությունների մեջ (ածականներն ըստ իրենց արտահայտած իմաստի բաժանվում են երկու գլխավոր խմբերի՝ որակական և հարաբերական ածականների: Այս երկու խմբերի իմաստային գլխավոր տարբերությունը հանգում է հետևյալին: Որակական ածականներն արտահայտում են առարկաների որակական հատկանիշներն անմիջականորեն, ուղղակի կերպով, առանց առարկայական միջնորդվածության, օրինակ՝ լավ, վատ, մեծ, փոքր, երկար, կարճ, կանաչ, դեղին, պայծառ, դատարկ, ամուր, բույլ և այլն: Հարաբերական ածականներն առարկաների հատկանիշներն արտահայտում են ոչ թե անմիջականորեն և ուղղակի կերպով, այլ ուրիշ առարկաների միջնորդությամբ, օրինակ՝ փայտյա, երկաթյա, աշակերտական, հայրական, լեռնային, ծովային, հրեղեն, լուսեղեն և այլն:)

Ստորև տրվում են ածականների այս երկու խմբերի բնութագրումները:

ՈՐԱԿԱԿԱՆ ԱՄԱԿԱՆՆԵՐ.— (Որակական ածականները հատկանիշների այնպիսի անվանումներ են, որոնք իրոք կամ ըստ երևույթին կան առարկաների մեջ և ընկալվում ու մտածվում են որպես առարկաների էությունից բխող անմիջական հատկանիշներ:

Որակական ածականներն արտահայտում են առարկաների արտաբին ու ներքին հատկանիշները՝ ամուր, բարակ, բարձր, բուր, գեղ, երկար, քանձ, բեթև, բույլ, բունդ, լայն, խոշոր, խոր, ծանր, կարծր, կարճ, կոշտ, կոր, հաստ, հարթ, մանր, մաքուր, մեծ, նեղ, նիհար, նոր, նուրբ, ուղիղ, չոր, պինդ, պղտոր, սառն, սուր, տափ, փոքր, փայլը և այլն, մարդկանց ու կենդանիների բարոյական ու հոգեկան հատկանիշ-

ներ՝ սգամ, սգնիվ, աշխույժ, արդար, արի, բարի, բիրտ, գոռուգ, դաժան, զվարթ, ծանւտ, լիրբ, լկտի, լուրջ, խիստ, խնձարի, ծույլ, համառ, մոայլ, հանդուգն, նենգ, շվայտ, շոայլ, ուրախ, պարկեշտ, տխուր, տրտում, ֆաչ. Լեկուշ, շար, հեզ, խորամանկ, հպարտ և այլն, գույներ՝ դեղին, դեղնան, լուրթ, խաժ, կանաչ, կապույտ, կարմիր, ներմակ, սև, սպիտակ և այլն: Հենց այս տիպի արմատական բառերն են, որ ածականների սկզբնական կորիզն են կազմում:)

Լեզվաբանական գրականության մեջ ճիշտ կերպով նշվում է, որ «որակական և հարաբերական ածականների քերականական սահմանը շատ շարժուն է և հարաբերական»<sup>2</sup>: Սակայն, համենայն դեպս, պետք է ընդունել, որ որակական և հարաբերական ածականների բառիմաստային տարբերությունները ուղեկցվում են քերականական և բառակազմական բնույթի մի շարք տարբերություններով: Ե՛վ ուս, և՛ հայ քերականությունների մեջ իրավացիորեն այն միտքն է զարգացվում, որ որակական ածականները իրենց հիմնական զանգվածով մի շարք հատկանիշներով տարբերվում են հարաբերական ածականներից<sup>3</sup>:

Այս տարբերություններն ամփոփվում են հետևյալ ձևով:

⟨ ա ⟩ Որպես կանոն, որակական ածականները ունենում են համեմատության աստիճաններ, օրինակ՝ լավ—ավելի լավ—ամենալավ, բարձր—ավելի բարձր—ամենաբարձր և այլն: Հարաբերական ածականներից համեմատության աստիճաններ կազմվել չեն կարող, որովհետև դրանցով արտահայտվող հատկանիշը, օրինակ՝ բրդե, կաշվե, դասաբանական, ուսուցչական, ծովային, տնային և այլն, իր իմաստի պատճառով քանակական փոփոխություններ կրել չի կարող: Այս հատկանիշն այնքան բնորոշ է, որ սովորաբար որակական և հարաբերական ածականները տարբերակում են ըստ համեմատության աստիճանների առկայության կամ բացակայության. եթե ածականը համեմատության աստիճաններ կազմում է, ուրեմն որակական է, եթե ոչ՝ ուրեմն հարաբերական է:)

Համեմատության աստիճանների կազմության հետ կապված՝ որակական ածականները կարող են կապակցվել չափի և աստիճանի մակբայների հետ, որոնք տվյալ դեպքում ցույց են տալիս հատկանիշի դրսևորման չափն ու աստիճանը, օրինակ՝ ծանր—շատ ծանր—մի քիչ ծանր—արտակարգ ծանր—չափազանց ծանր և այլն: Հարաբերական ա-

<sup>2</sup> Տե՛ս В. В. Виноградов, Русский язык, М.-Л., 1947, էջ 24:

<sup>3</sup> Ռուս քերականության մեջ այս հարցի մասին տե՛ս В. В. Виноградов, Русский язык, էջ 104. Е. М. Галкина-Федорчук и др., Современный русский язык, М., 1958, էջ 285. А. М. Финкель, Н. М. Баженов, Курс современного русского литературного языка, Киев, 1965, էջ 314: Հայ քերականության մեջ՝ Լ. Օհանյան, Ածական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 20—21. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 87—88:

ծականները իրենց յուրահատուկ իմաստի պատճառով, որպես կանոն, շափի և աստիճանի մակրայնների հետ կապակցվել չեն կարող:

բ) Որակական ածականների մի մասից զանազան ածանցների միջոցով կազմվում են փոքրացուցիչ-փաղաքշական և սաստկական իմաստ արտահայտող ձևեր, օրինակ՝ անուշ-անուշիկ, բարձր-բարձրիկ, դժվար-դժվարին, երկար-երկարուկ, թուխ-թխիկ, լավ-լավիկ, լուռ-լռին, խոր-խորին, կարճ-կարճիկ, կարմիր-կարմրիկ, հաստ-հաստիկ, մանր-մանրիկ, մեղմ-մեղմիկ, նեղ-նեղիկ, շեկ-շեկիկ, սև-սևիկ, տափ-տափուկ, ցած-ցածիկ, փոքր-փոքրիկ, ֆաղցր-ֆաղցրիկ և այլն:

Մյուս կողմից՝ շատ որակական ածականներից կազմվում են կրկնավոր բարդություններ, որոնք ընդհանրապես ունեն հատկանիշի սաստկության գաղափար, օրինակ՝ անուշ-անուշ, բարձր-բարձր, դառը-դառը, երկար-երկար, թեթև-թեթև, թույլ-թույլ, լայն-լայն, լավ-լավ, խեղճ-խեղճ, հին-հին, մեծ-մեծ, նեղ-նեղ և այլն: Հարաբերական ածականներից ընդհանրապես փոքրացուցիչ-փաղաքշական կամ սաստկական իմաստ արտահայտող ձևեր կազմվել չեն կարող:

գ) Որակական ածականներից ՈՒԹՅՈՒՆ ածանցով կազմվում են վերացական գոյականներ, որոնք ցույց են տալիս հատկանիշը որպես վերացական հասկացություն, օրինակ՝ ազնիվ-ազնվություն, ամուր-ամուրություն, դառն-դառնություն, դժվար-դժվարություն, լավ-լավություն, բարձր-բարձրություն և այլն: Հարաբերական ածականներից, որպես կանոն, վերացական գոյականներ չեն կազմվում:

դ) Որակական ածականները սովորաբար ունենում են հականիշներ, օրինակ՝ բարակ-հաստ, բարի-չար, դառն-փաղցր, դժվար-հեշտ, քանկ-էծան, թեթև-ծանր, կարճ-երկար, համեստ-գոռոզ, մեծ-փոքր, նիհար-զեռ, ուղիղ-ծուռ, սառ-տափ, սխալ-ճիշտ, լավ-վատ, ուրախ-տրտուր, փակ-բաց և այլն:

Հարաբերական ածականները սովորաբար հականիշներ ունենալ չեն կարող: Իհարկե, կարելի է ասել, որ, օրինակ, երկնային և երկրային, գիշերային և ցերեկային հականիշ հարաբերական ածականներ են: Բայց դրանք հականիշ են այն պատճառով, որ երկինք և երկիր, գիշեր և ցերեկ բառերը, որոնցից նրանք կազմված են, հականիշ են: Այնպիսի հարաբերական ածականներ, ինչպիսիք են, ասենք, փայտե, բրդե, բժշկական, ուսանողական, գերմանական, անգլիական և այլն, հատկանիշներ ունենալ չեն կարող:

ե) Եվ վերջապես, որակական և հարաբերական ածականները որոշ շափով տարբերվում են նաև շարահյուսական կիրառությամբ: Դա դրսևորվում է նրանում, որ որակական ածականների մի զգալի մասը կարող է գործածվել բայերի հետ, այսինքն՝ կիրառվել մակրայաբար (լավ սովորել, բարձր խոսել, հիանալի պատմել): Հարաբերական ածական-

ներն ընդհանրապես բայերի հետ գործածվել, այսինքն մակրայաբար կիրառվել չեն կարող:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՇԱԿԱՆՆԵՐ.— (Հարաբերական ածականները) ինչպես նշված է արդեն (արտահայտում են ոչ թե անմիջական, այլ միջնորդավորված հատկանիշ, օրինակ՝ բանվորական, մանկական, գիշերային, զազանային, ոսկե, արծաթե, հերկուլեսյան, մայիսյան և այլն: Այս ածականների մեջ հատկանիշն արտահայտվում է առարկայական հարաբերությամբ) Մի շարք ածականների մեջ հատկանիշն արտահայտվում է գործողության հետ ունեցած հարաբերությամբ, օրինակ՝ գրգռիչ, դյաբոլիչ, երեւուն, զգայուն, թովուուն, խշխշան, ատելի, զովելի, սիրելի և այլն: Ինչպես օրինակներն են ցույց տալիս, այս տիպի ածականների մեջ ևս հարաբերություն է արտահայտվում, միայն գործողության հետ ունեցած հարաբերությամբ: Բայց այն բանի շնորհիվ, որ գործողությունն ինքը հատկանիշի դրսևորումներից մեկն է, բայակազմ ածականների մեջ, որպես կանոն, հարաբերության նշանակությունը գերիշխող ու հիմնական չէ, և վերջիններս մոտենում են սովորական որակական ածականներին: Ուստի և, ըստ երևույթին, հարաբերական պիտի համարել միայն այն ածականները, որոնց մեջ հատկանիշն արտահայտվում է առարկայական հարաբերությամբ (աշակերտական, լեռնային, փայտյա):

Մխալված չենք լինի, եթե ասենք, որ հարաբերական ածականների մեջ դրսևորվում է երկու իմաստ՝ առարկայական հարաբերության իմաստ և հատկանշային-որակական իմաստ, որովհետև, ասենք, մայրական սեր, լեռնային լճակ, բրդյա կտոր կապակցությունների մեջ մայրական, լեռնային, բրդյա ածականները նախ և առաջ ցույց են տալիս հարաբերություն մոր, լեռան, բրդի նկատմամբ, մյուս կողմից էլ այդ ածականները բնորոշում են սեր, լճակ, կտոր գոյականները որակային տեսակետից:

Եթե ընդհանուր ձևով սահմանենք հարաբերական ածականների նշանակությունը, ապա կարող ենք ասել, որ նրանք արտահայտում են հարաբերություններ ածականի նյութական բովանդակությունը դրսևորող առարկաների (գոյականների) նկատմամբ:

Հարաբերական ածականներն արտահայտում են առարկաների ՏԵՂԱՅԻՆ-ՏԱՐԱՄԱԿԱՆ՝ լեռնային, դաշտային, գյուղական, զավառական, գետափնյա, ծովափնյա, ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ՝ գիշերային, ցերեկային, գարնանային, ամառային, մայիսյան, հնադարյան, հնգամյա, ֆառամյա, ԾԱԳՄԱՆ, ՊԱՏԿԱՆՆԻՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՏԿԱՅՄԱՆ՝ աշակերտական, հայրական, մայրական, որդիական, ուսանողական, հայկական, գերմանական, իտալական, մարդկային, զազանային, ԿԱԶՄՈՒԹՅԱՆ՝ երկաթե, արծաթե, ոսկյա, բրդյա, ձյունեղեն, սառցեղեն, ՌԻՆՆԱՆՈՒ ԵՎ ՉՌԻՆՆ-

նԱՂՈՒ՝ ակնոցավոր, միտու՛ավոր, հրացանավոր, աղեղնավոր, անգուրխ, անտուն, անխելք, անհոգի և բազմաթիվ այլ հարաբերությունները)

Հարաբերական ածականների մեջ հատկանիշը դուրս է բերվում առարկայից, հատկանիշի գաղափարն արտահայտվում է առարկայական հարաբերությամբ: Հարաբերական ածականների հետ համեմատած շատ քիչ են այն որակականները, որոնց մեջ հատկանիշն արտահայտվում է ածականի հենց բառային նշանակությամբ՝ առանց առարկայի հետ ունեցած հարաբերության: Եվ դա ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում: Այս տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում գույների անվանումները: Հայտնի է, որ բուն, արմատական գույների անունները շատ քիչ են, օրինակ՝ սև, սպիտակ, կարմիր, դեղին, կապույտ, կանաչ և այլն: Եվ ահա, բնության մեջ եղած գույների բազմադան երանգներն արտահայտելու համար օգտագործվում են որոշ առարկաների անուններ, որոնք բաղադրվելով ԳՈՒՅՆ բառի հետ՝ կազմում են հարաբերական ածականներ, օրինակ՝ աղյուսագույն, նարնջագույն, ծիրանագույն, շագանկագույն, վառդագույն, մանուշակագույն, դարչնագույն, ցորենագույն, երկնագույն, մարմնագույն, ոսկեգույն, արծաթագույն, բրնձագույն, ծիածանագույն և այլն: Հասկանալի է, որ այս ձևով լեզուն հնարավորություն է ստեղծել արտահայտելու գույների ամենանուրբ երանգներն ու նրբերանգները: Հետաքրքրական է նշել, որ վերևում բերված բառերի նմանակությամբ գույն բառը անցել է նաև բուն գույների անուններին, օրինակ՝ սևագույն, կապույտագույն, գորշագույն, դեղնագույն և այլն:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՇԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՅՈՒՄԸ ՈՐԱԿԱՆԱՆՆԵՐԻ.— Յուրաքանչյուր հարաբերական ածականի մեջ այս կամ այն չափով առկա է նաև հատկանշային-որակական իմաստ, ուստի և հարաբերական ածականների իմաստային զարգացումը հաճախ հասցնում է նրան. որ գերիշխող, էական է դառնում հարաբերական ածականի հատկանշային-որակական նշանակությունը, իսկ առարկայական հարաբերության նշանակությունը խամրում, մթափանում ու երկրորդական է դառնում: Հենց դրանով էլ վերանում է հարաբերական ու որակական ածականների հիմնական տարբերությունը, և, այսպիսով, հարաբերական ածականները վերածվում են որակականների: Որպես օրինակ վերցնենք մարդկային ածականը: Հասկանալի է, որ մարդկային մարմին կապակցության մեջ այս բառը հարաբերական ածական է, հատկանիշն արտահայտում է առարկայական հարաբերությամբ, և մարդկային մարմին մտապորտապես նշանակում է «մարդու մարմին»: Այժմ վերցնենք մարդկային վերաբերմունք կապակցությունը: Հասկանալի է, որ այս կապակցության մեջ մարդկային ածականի առարկայական հարաբերության նշանակությունը հիմնական ու էական է, մարդկային բառը այստեղ մտապորտապես համանիշ է լավ բառին և այդ իսկ պատճառով էլ կարող է համեմատու-

թյան աստիճաններ ունենալ՝ մարդկային վերաբերմունք—ավելի մարդկային վերաբերմունք—ամենամարդկային վերաբերմունք:

Այսպես և՛ ներվային հիվանդություններ կապակցության մեջ ներվային հարաբերական ածական է և նշանակում է «ներվերին հատուկ», իսկ ներվային մարդ կապակցության մեջ այս նույն բառը որակական ածական է և նշանակում է «շուտ գրգռվող»: Այս իմաստով ներվային բառը կարող է համեմատության աստիճաններ կազմել՝ ներվային մարդ—ավելի ներվային մարդ—ամենաներվային մարդ:

Փաստերը ցույց են տալիս, որ ԱԿԱՆ, ԱՅԻՆ, ՎՈՐ ածանցներով կազմված մի շարք ածականներ համատեղում են հարաբերականների և որակականների իմաստները կամ ուղղակի վերածվել են որակականների՝ ձեռք բերելով վերջիններիս հատուկ քերականական հատկանիշները: Այսպիսի բառեր են՝ բանական, բարեկամական, բարոյական, գործնական, դեմոկրատական, դյուրական, զավեշտական, էական, ժողովրդական, նվիրական, դժոխային, դիվային, գազանային, ականավոր, ահավոր, արատավոր, լուսավոր, խորհրդավոր, հիմնավոր, հրեշավոր, տաղանդավոր, գլխավոր, վտանգավոր, հեղինակավոր և այլն:

Բերված քիչըր ածականները ազատ կերպով կարող են համեմատության աստիճաններ կազմել, ինչպես՝ բանական—ավելի բանական—ամենաբանական, դիվային—ավելի դիվային—ամենադիվային, ականավոր—ավելի ականավոր—ամենաականավոր և այլն:

Մյուս կողմից՝ առանձին դեպքերում որակական ածականները կարող են զրկվել համեմատության աստիճաններ կազմելու հատկությունից: Այս երևույթը նկատվում է բաղադրյալ անունների և տերմինների մեջ, օրինակ՝ Ան ծով, Կարմիր ծով, Գեղին ծով, Թեթև արդյունաբերություն, ծանր արդյունաբերություն, սև մետալուրգիա և այլն:

Կեզվական փաստերը ցույց են տալիս, որ որակական ու հարաբերական ածականների միջև չկան անանցանելի սահմաններ. գլխավորը որակական ածականների խումբն է, բազմաթիվ հարաբերական ածականների մեջ ժամանակի ընթացքում զարգանում է որակային հատկանիշի նշանակություն, և նրանք վերածվում են որակականների:

#### ԱՇԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՇԱՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ածականի համեմատության աստիճանների կազմության իրական հիմքն այն է, որ նույն հատկանիշը տարբեր առարկաների մեջ կարող է տարբեր քանակային դրսևորումներ ունենալ: Դրան համապատասխան՝ լեզվի մեջ կան առանձին միջոցներ, որոնցով արտահայտվում են նույն հատկանիշի որակային աստիճանավորումները: Դրանք ամենից առաջ բառային միջոցներ են: Այսպես, որակական ածականները չափ ու աստիճանի զանազան մակրայների մի-

չոցով կարող են ցույց տալ տվյալ հատկանիշի այս կամ այն աստիճանավորումը, օրինակ՝ մեծ, մի քիչ մեծ, շատ մեծ, շափազանց մեծ, արտակարգ մեծ, խիստ մեծ. գեղեցիկ, մի քիչ գեղեցիկ, մի փոքր գեղեցիկ, շափազանց գեղեցիկ, վերին աստիճանի գեղեցիկ, արտակարգ գեղեցիկ և այլն:

Կան նաև հատկանիշի տարբեր աստիճանավորումների արտահայտման այլ միջոցներ ևս, ինչպես՝ ածականի կրկնությունը, որով արտահայտվում է սաստկական իմաստ՝ մեծ-մեծ, խոշոր-խոշոր, երկար-երկար, սուր-սուր, նեղ-նեղ և այլն, սաստկական և նվազական իմաստ արտահայտող ածանցները, որոնցով սաստկացվում կամ նվազեցվում է ածականների արտահայտած հատկանիշը, օրինակ՝ մեծ-մեծագույն, լավ-լավագույն, խոր-խորին, մութ-մթին, սև-սևավուն, կապույտ-կապտավուն և այլն:

Ածականի արտահայտած հատկանիշի տարբեր աստիճանավորումներն արտահայտող միջոցների մեջ առանձին դեր ու կշիռ ունեն ածականի համեմատության աստիճանները, որոնք ցույց են տալիս, թե ինչ շափով է դրսևորվում տվյալ հատկանիշը առարկայի մեջ՝ այլ առարկայի նույն հատկանիշի համեմատությամբ կամ հարաբերությամբ:

Հայ և օտար լեզուների քերականությունների մեջ սովորաբար ընդունվում է ածականի համեմատության երեք աստիճան՝ դրական—մեծ, բաղդատական (համեմատական)—ավելի մեծ, գերադրական—ամենամեծ: Սրանցից դրական աստիճանը սկզբունքորեն տարբերվում է բաղդատական և գերադրական աստիճաններից նրանով, որ դրականի դեպքում արտահայտվում է բացարձակ հատկանիշ, հատկանիշ առանց համեմատության, օրինակ՝ մեծ ֆաղաֆ, իսկ բաղդատականի և գերադրականի դեպքում, որպես կանոն, արտահայտվում է հարաբերական հատկանիշ, որը համեմատվում է այլ առարկաների նույն հատկանիշի հետ, օրինակ՝ ավելի մեծ ֆաղաֆ, ամենամեծ ֆաղաֆ: Ահա ելնելով սրանից՝ որոշ քերականական աշխատություններում դրականը համեմատության աստիճան չի համարվում, և ընդունվում է համեմատության երկու աստիճան՝ բաղդատական և գերադրական<sup>4</sup>: Սակայն քանի որ դրականը ածականի ուղիղ, անփոփոխ, ելակետային ձևն է, և բաղդատականն ու գերադրականը արտահայտում են հարաբերական հատկանիշ սրա համեմատությամբ ու հակադրությամբ, ուստի և դրականը համեմատության աստիճանների մեջ կարող է մտնել որպես հակադրության մի եզր, որպես զրո եզր:

ՔԱՂԳԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ.— Սկզբից նկատենք, որ հայերենը հնուց անտի աղբատիկ է եղել համեմատու-

թյան աստիճանների արտահայտման ձևաբանական միջոցներից: Ժամանակակից լեզվում ևս, ինչպես ստորև կտեսնենք, համեմատական աստիճանների արտահայտման «մաքուր» քերականական միջոցներ, որոնք տարածվեին բոլոր որակական ածականների վրա, փաստորեն չըկան:

Ածականի բաղդատական աստիճանը ցույց է տալիս հատկանիշի առավել դրսևորումը առարկայի կամ առարկաների մեջ՝ այլ առարկայի կամ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ, օրինակ՝ Վագրըն ուժեղ է. Առյուծն ավելի ուժեղ է. Երևանը մեծ քաղաք է. Թբիլիսին ավելի մեծ քաղաք է. Երեկ լավ եղանակ էր. Այսօր ավելի լավ եղանակ է և այլն:

Ինչպես արդեն օրինակներն են ցույց տալիս, արդի հայերենում բաղդատական աստիճանը կազմվում է վերլուծական ձևով՝ ածականի դրական աստիճանի վրա սկզբից ավելացնելով ավելի բառը: Համեմատական աստիճան կազմելու իմաստով ավելի բառը շափազանց գործուն է և կարող է դրվել համարյա բոլոր որակական ածականների վրա: Այսքանով էլ նա մոտենում է բուն քերականական մասնիկներին, բայց բուն քերականական մասնիկ համարվել չի կարող, որովհետև այս կամ այն շափով պահպանում է իր բառային ձևական անկախությունն ու իմաստը և, բացի դրանից, բաղդատական աստիճան կազմելուց զատ, կարող է դրվել բայերի վրա, ինչպես՝ ավելի գրգովեց, ավելի մտերմացավ, ավելի ոգևորվեց, ավելի տխրեց, ավելի սիրեց, ավելի թշնամացավ և այլն:

Ածականի բաղդատական աստիճանի դեպքում համեմատվող առարկան արտահայտվում է բացառական հօլովով կամ ֆառ (ֆառ թե) + ուղղական կապակցությամբ, ինչպես՝ Երևանը ավելի մեծ է Լեհիեականից կամ Երևանը ավելի մեծ է, ֆառ (ֆառ թե) Լեհիեականը. Եղբայրն ավելի գեղեցիկ է քրոջից կամ Եղբայրն ավելի գեղեցիկ է, ֆառ՝ քույրը. Մասին ավելի բարձր է Արագածից կամ Մասին ավելի բարձր է, ֆառ Արագածը:

Հաճախ բաղդատական աստիճանի իմաստն արտահայտվում է ածականի ուղղակի պարզ դրական ձևի և համեմատելի առարկայի բացառական հոլովի կամ ֆառ + ուղղական կապակցության միջոցով, օրինակ՝ Երևանը մեծ է Լեհիեականից կամ Երևանը մեծ է, ֆառ Լեհիեականը. Մասիսը բարձր է Արագածից կամ Մասիսը բարձր է, ֆառ Արագածը:

Բացի այս առավելակա՞ն բաղդատականից, հայ առանձին քերականներ ընդունում են նաև հավասարակա՞ն և նվազակա՞ն բաղդատականներ, օրինակ՝ Մեր այգին այնքան մեծ է, որքան ձերը. Եղբայրը քրոջից մի քիչ սև էր:

Ինչպես ածականի դրական ձևը կարող է գործածվել բայերի հետ՝ արտահայտելով մակբայական իմաստ, այնպես էլ բայերի հետ կարող

<sup>4</sup> Տե՛ս А. Финкель, Н. Баженов, Курс сов. русского литератур. языка. էջ 323: Հ. Օհանյան, Ածական անունը ժամանակակից հայերենում, էջ 31—34: 134

է գործածվել բաղդատական ձևը, օրինակ՝ «Ես ավելի պիտո՞ւ փաթաթ-վեցի նրա մեջքին»։ «Ավելի սուր զգացվում էր սուսամբարի և արդեն շորացող դաղձի կծու հոտը»։ «Լեռների սև ստվերները ավելի վառ էին ցուլացնում ամպերի կարմիրը»։

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ.— Ածա-կանի գերադրական աստիճանը ցույց է տալիս, որ տվյալ առարկայի կամ առարկաների մեջ հատկանիշը դրսևորվում է ամենաբարձր չափով։ Ժամանակակից հայոց լեզվում կա գերադրական աստիճանի կազմու-թյան երկու հիմնական եղանակ։

ա) Ածականի գերադրական աստիճան է կազմվում ԱՄԵՆԱ + ԱԾԱ-ԿԱՆԻ ԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ բաղադրությամբ, օրինակ՝ լավ-ամենալավ, մեծ-ամենամեծ, սև-ամենասև, զվարթ-ամենազվարթ, բնդունակ-ամե-նաբնդունակ, զգայուն-ամենազգայուն և այլն։ Գերադրականի կազմու-թյան այս ձևը ժամանակակից հայերենում չափազանց կենսունակ է ու գործուն և հատուկ է համարյա բոլոր որակական ածականներին։ Բե-րենք այս ձևով կազմված գերադրականների կիրառության մի քանի օ-րինակներ գեղարվեստական գրականությունից։

«Կհրամայես ախոռապետին, որ ամենաճին և ամենաքունդ գինին բաց անե հյուրերի համար, իսկ ինձ համար ամենաքույլը» (Րաֆֆի)։ «Տասնհինգ օր էր ընգամենը բաժանվել էր իր սրտի ամենաուրբ ու ամենազգայուն թելերից. հոգու ամենաքրքրուն շղթերից» (Շիրվ.)։ «Ա-մենափոփո տատանումը կարող էր նրանց գլորել դեպի ահարկու ան-դունդը» (Մուր.)։ «Մի՞թե լեգենդ չէ կապուտչիդ լեռը՝ ամենաբարձր գա-գաթն այս լեռնաշխարհի» (Խանգ.)։

բ) Ածականի գերադրական աստիճան կարող է կազմվել նաև ԳՈՒՅՑ փերջածանցով, բայց գերադրականի կազմության այս եղանակը գոր-ծուն ու տարածված չէ, և ԳՈՒՅՑ փերջածանցը դրվում է քիչ թվով ա-ծականների վրա։ Դրանցից են. ամուր-ամբագույն, առատ-առատագույն, ավագ-ավագագույն, ամբագույն, բարդագույն, բարձրագույն, դժվարա-գույն, լավագույն, ներագույն, խստագույն, խոշորագույն, ծանրագույն, կարևորագույն, հնագույն, մանրագույն, մեծագույն, նորագույն, նվա-զագույն, պարզագույն, վատագույն, վատբարագույն, խիմարագույն, փոքրագույն) Ահա այս ձևով կազմված գերադրականների գործածության մի քանի օրինակներ գեղարվեստական գրականությունից։

«Վերջն ընտրեց երկու հարվածներից փոքրագույնը» (Րաֆֆի)։ «Գու կրթվելիս ես լավագույն ուսուցիչների ձեռքի տակ» (Շիրվ.)։ «Նրանց նշա-նակն էր «աղվակատի» աղյուսագույն պարանոցի խոշորագույն խուլին-ըը» (Շիրվ.)։ «Թող իր գավակներին կերակրե բարձրագույն թեորիանե-րով» (Շիրվ.)։ «Եվ այդ օրից ներագույն բեղիկներն սկսեցին ավելի ըզ-բաղեցնել նրան» (Շիրվ.)։ «Այս կինը ինձ հանդիպող հանելուկներից

մեծագույնն է» (Մուր.)։ «Նա իմ կարծիքով հայ կնոջ լավագույն տի-պար է» (Դար-Դոս)։

Երբեմն ԳՈՒՅՑ փերջածանցը կարծես թե չի արտահայտում գերա-դրականի նշանակություն։ Այս է պատճառը, որ ԳՈՒՅՑ փերջածանց ու-նեցող ածականները ևս կարող են բաղադրվել ԱՄԵՆԱ ձևի հետ, ինչպես՝ «Նա իմ ամենալավագույն ընկերն է»։ «Վերլուծությունը կատարված է ամենաուրագույն մեթոդներով»։

Ինչպես արդեն բերված օրինակներից կարելի է եզրակացնել, ԳՈՒՅՑ ձևով բաղադրված ածականներն արտահայտում են նաև հատկանիշի բարձրագույն աստիճան առանց համեմատության, օրինակ՝ «Նա լավա-գույն ընկեր է, ազնվագույն մարդ է, ներագույն ճաշակ ունի» և այլն։ Այսպիսի գերադրականը կոչվում է բացարձակ գերադրական՝ ի տար-բերություն համեմատական գերադրականի։

«Ածականի գերադրական աստիճանը հաճախ արտահայտվում է նաև շարահյուսական միջոցներով, հատկապես դրական աստիճանի կապակ-ցությամբ բոլոր, ամեն բաների բացառական հոլովածների հետ, ինչ-պես՝ լավ—բոլորից լավ կամ ամենից լավ, գեղեցիկ—բոլորից գեղեցիկ կամ ամենից գեղեցիկ և այլն։

Կան գերադրականի արտահայտման այլ շարահյուսական միջոց-ներ ևս, օրինակ՝ ածականի կրկնություն հոգնակի սեռականի կամ բա-ցառականի ձևով, ինչպես՝ գեղեցիկների գեղեցիկը|գեղեցիկներից գե-ղեցիկը, լավերի լավը|լավերից լավը, մեծերի մեծը|մեծերից մեծը և այլն։ >

#### ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ

ՓՈՒՍՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՄԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ.— Ինչպես նըշ-ված է արդեն, աշխարհաբարում իր հիմնական կիրառության դեպքում ածականը գոյականի վրա է դրվում իր ուղիղ, անփոփոխ ձևով՝ նրա հետ չհամաձայնելով ո՛չ հոլովով, ո՛չ թվով (մեծ քաղաք-մեծ քաղաքի-մեծ քաղաքից-մեծ քաղաքներ-մեծ քաղաքների-մեծ քաղաքներից)։ Սա-կայն ածականը շատ հաճախ հանդես է գալիս փոխանվանական, գոյա-կանական կիրառությամբ։ Այդ դեպքում նա ձեռք է բերում գոյականի բերականական հատկանիշները, այսինքն՝ հող է ստանում, հոլովվում է ու կազմում է հոգնակի թիվ։ Որպես փոխանուն հանդես եկող ածա-կանը արտահայտում է հատկանիշի և առարկայի գաղափար, որը կա-րող է հանդես գալ հենց որպես առարկայական ընդհանուր գաղափար կամ, ըստ խոսքային իրադրության, ստանալ այս կամ այն թանձրա-ցական բովանդակությունը։ Ստորև բերվում են ածականների փոխան-վանական կիրառության օրինակներ։

«Ժողովուրդը հինը կորցրեց և նորի մեջ ոչինչ չգտավ» (Րաֆֆի)։

«— Ես կպատվիրեմ՝ կարմիր ձին պատրաստեն:— Ինչո՞ւ կարմիրը, Արբա՛կ, դու գիտես, որ ես ներմակն եմ սիրում:— Ճերմակը դեռ նըստեցու չէ» (Րաֆֆի). «Կարելի է խղճալ ստորիներին, գրչով համակրել նըրան, բայց գրավիչը վերինն է» (Շիրվ). «Ինքը քսանհինգ տարի շարունակ շուայլել է իրենից մեծերին ու զորավորներին» (Շիրվ.). «Առանց առողջութեան մարդն անկարող է նույնիսկ բարին ու գեղեցիկը տեսնել կամ սիրել» (Մուր.). «Հազար մեծ ու փոքրի դուրս ընկած ոսկոր է տեղը գցել» (Խանգ.):

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, որպես փոխանուն հանդես եկող ածականը իր շարահյուսական և ձևաբանական հատկանիշներով ամենևին չի տարբերվում գոյականից: Նա ստանում է գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններ և ձևաբանական հատկանիշներ:

Փոխանվանաբար գործածված ածականները հոլովվում են ի հոլովման սովորական հարացույցով, առանց բացառության հոգնակի թիվ են կազմում եր կամ ներ մասնիկներով, որից բխում է, որ հոգնակի թվում ևս հոլովվում են ի հոլովմամբ:

**Փոխանուն ածականների հոլովումը**

	Ե գ ա կ ի		Հ ա գ ն ա կ ի	
Ուղղ.	մեծը	սպիտակը	մեծերը	սպիտակները
Սեռ. տր.	մեծի	սպիտակի	մեծերի	սպիտակների
Բաց.	մեծից	սպիտակից	մեծերից	սպիտակներից
Փորձ.	մեծով	սպիտակով	մեծերով	սպիտակներով
Ներգ.	մեծում	սպիտակում	մեծերում	սպիտակներում

Թեև ընդհանրապես ի-ով վերջավորվող ածականները ևս հոլովվում են ի հոլովմամբ, օրինակ՝ հաճելի-հաճելի-հաճելիից, արժանի-արժանիի-արժանիից, հավաստի-հավաստի-հավաստիից, բայց դրանց ՈՒ հոլովումը ևս անհնար չէ, ինչպես ցույց է տալիս բառի բառի հոլովումը՝ բարի-բարու-բարուց:

**Ածականների կազմությունը**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ըստ կազմության ածականները բաժանվում են երկու խմբի՝ պարզ կամ արմատական, օրինակ՝ լավ, մեծ, կարմիր, ազատ, դատարկ, թեթև, թույլ, ամուր և այլն, և բաղադրյալ (ածանցավոր ու բարդ), օրինակ՝ լեռնային, վճռակալ, գլխավոր, զգայուն, կենսատու, հարցասեր, թեթևամիտ, զանգրահեր և այլն: Հայերենում (ինչպես և այլ լեզուներում) արմատական ածականները համեմատաբար մեծ թիվ չեն կազմում: Ըստ Հ. Աճառյանի տվյալների՝ հայերենի արմատական ածականների թիվը 700-ի էլ չի հասնում (ճիշտ՝

697)<sup>5</sup>, Հասկանալի է, որ արմատական ածականների այսպիսի աղբատիկ պաշարով հնարավոր չէ արտահայտել առարկաների ու երևույթների բազմաթիվ ու բազմապիսի հատկանիշները: Պարզ կամ արմատական ածականների քանակը լեզվի պատմական զարգացման ընթացքում անընդհատ համարվել և այժմ էլ համարվում է ածանցավոր և բարդ ածականներով, որոնք թվով բազում անգամ գերազանցում են պարզ ածականներին: Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ ածականները, գոյականների և բայերի նման, կազմում են լեզվի բառապաշարի ամենամեծ և անընդհատ լրացվող խմբերից մեկը:

Հայոց լեզվում ածականները կազմվում են ածանցման և բարդության միջոցով, ըստ որում ածականների կազմության այդ երկու տիպերն էլ ժամանակակից հայերենում հավասարապես գործուն են ու տարածված:

**Ածանցում**

ԱՄԱԿԱՆԱԿԵՐՏ ՆԱԽԱՄԱՆՑՆԵՐ ԵՎ ՎԵՐՋԱՄԱՆՑՆԵՐ.— Հայերենի ածանցները բաժանվում են երկու խմբի՝ նախածանցներ և վերջածանցներ: Ինչպես հայերենի բառակազմության մեջ ընդհանրապես, այնպես էլ ածականների կազմության մեջ մասնավորապես, նախածանցները մեծ դեր ու կշիռ չունեն:

Ստորև տրվում է ժամանակակից հայերենի ածականակերտ ածանցների վերլուծությունը՝ սկսելով նախածանցներից:

ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱՄԱՆՑՆԵՐ.— Հայերենի բուն նախածանցներն են ԱՆ, ԱՊ, ԴԺ, Տ, Չ: Սրանք բոլորն էլ ժխտական նշանակություն են արտահայտում՝ բացասելով բառի նշանակությունը կամ ցույց տալով մի բան չունենալը, մի բանից զուրկ լինելը:

Ժխտական նախածանցներից գործուն և կենսունակ է միայն ԱՆ-ը: Մյուսները գործածվում են սակավաթիվ բառերի մեջ:

ԱՆ.— Կազմում է բացասական, ժխտական իմաստ արտահայտող ածականներ գոյականներից՝ անգործ, անամոթ, անտուն, անհույս, անսանձ, աներկյուղ, անխելք, ածականներից՝ անազնիվ, անզգույշ, անկայուն, անհամարձակ, անսովոր, անթերի, անխոհեմ, անկեղծ, անհավանական, բայահիմքերից՝ անհաղթ, անվախտ, անաշխատ, անգետ, անսփոփ, աներեք, անվարժ, անլուր, անհամբեր, անկոչ, անխճա, անխախտ և այլն:

<sup>5</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1952, էջ 26—32: Ըստ մեր կազմած քառացանկի՝ ժամանակակից հայերենում գործածական կամ այս կամ այն չափով գործածական արմատական ածականների քանակը, չճաշված ուսական փոխառությունները, հասնում է մոտ 600-ի (տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ, Երևան, 1973, էջ 59—67):

ԱՊ.— Դրվելով մի քանի գոյականների վրա՝ կազմում է բացասական իմաստ արտահայտող ածականներ, ինչպես՝ ապարիտ, ապաշնորհ, ապարդյուն, ապերախտ, ապերասան, ապերջանիկ, ապուշ, ապիկար, ապօրինի: ԱՊ նախածանցը դրվում է նաև ԱԿԱՆ, ԱՅԻՆ ածանցներիով կազմված մի քանի ածականների վրա՝ ժխտելով նրանց նշանակությունը, օրինակ՝ ապադասակարգային, ապազգային, ապաբաղախական:

ԴԺ.— Գործածվում է սակավաթիվ բառերի մեջ, օրինակ՝ դժբախտ, դժգոհ, դժգույն, դժկամ:

Տ.— Կազմում է սակավաթիվ բառեր՝ տգեղ, տգետ, տկար, տհաճ, տհաս, տձև, տմարդի:

Չ.— Կազմում է մի քանի բառեր՝ շքեհ, շհաս, շկամ, շխուկան, շունևոր:

ՆԱԽԱԾԱՆՅԱՎՈՐ ԱՅԼ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ածականների կազմության մեջ որոշ դեր են կատարում նաև հունաբան դպրոցի ստեղծած նախածանցները: Այսպիսի նախածանցներով կազմված ածականներ են՝ արտակարգ, արտահերթ, արտասովոր, գերադաս, գերիմաստուն, գերեզուր, գերբնական, հակադիր, հակազգային, հակաժողովրդական, համազուր, համախառն, համամիտ, համապետական, ստորգետնյա, ստորերկրյա, տարօրինակ և այլն:

ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ ՎԵՐՋԱՄԱՆՅՆԵՐ.— Ինչպես նշված է արդեն, ածականների կազմության և ընդհանրապես հայերենի բառակազմության մեջ շատ խոշոր է վերջածանցների դերը: Արդի հայերենում կան մոտ երեք տասնյակ վերջածանցներ, որոնք տարբեր խոսքի մասերից (զըլխավորապես գոյականներից ու բայերից) ածականներ են կազմում կամ էլ դրվելով ածականների վրա՝ ձևափոխում են նրանց նշանակությունը՝ նրանց տալով այս կամ այն երանգը: Ստորև այբուբենական կարգով բերվում են արդի հայերենի ածականակերտ վերջածանցները և բացատրվում են նրանց հիմնական նշանակությունները:

ԱԾՈ.— Կազմում է մի քանի ածականներ հարակատար դերբայի նշանակությամբ, օրինակ՝ կոփածո, կոածո, հանածո, ձուլածո, տաշածո, ծեփածո: Այս ձևով կազմված բառերի մի մասն ունի նաև գոյականական նշանակություն:

ԱԿԱՆ.— Արդի հայերենի ամենագործուն ածանցներից մեկն է: Այս ածանցի հիմնական նշանակությունն է «մի քանի հատուկ, մի քանի վերաբերյալ»:

ԱԿԱՆ ածանցը ածականներ է կազմում գոյականներից, օրինակ՝ պլատոնական, աշակերտական, հայրական, բանվորական, բժշկա-

կան, քազավորական, թշնամական, ֆաղափական, հոգեկան, մարմնական, ռազմական և այլն, բայաբանական, արվեստական, օրինակ՝ բացատրական, դրվատական, զառանցական, զենական, ժխտական, կիրառական, կրթական, հավաքական, շարժական և այլն, բովանդակներից՝ մեկական, երկուական, երեքական, չորսական, հրսանական և այլն, որոնք բաշխական նշանակություն են արտահայտում և համարվում են բաշխական թվականներ:

ԱԿԱՆ ածանցով կազմված շատ բառեր ունեն ածականի ու գոյականի իմաստ միաժամանակ կամ վերածվել են գոյականների, օրինակ՝ առևտրական, զինվորական, մանմեղական, գաղթական, օգնական, քափառական և այլն:

ԱՅԻՆ.— Արդի հայերենի ամենագործուն ածականակերտ ածանցներից մեկն է և համանիշ է ԱԿԱՆ ածանցին: Ածականներ է կազմում գոյականներից՝ արտահայտելով որևէ առարկայական հարաբերություն, օրինակ՝ գարնանային, ձմեռային, ծովային, լեռնային, բևեռային, գազանային, գիշերային, գրասենյակային, միջուկային, դաշտային, դիվային, երկնային, եզրային, ունային և այլն:

Հաճախ նույն հիմքերից բառեր են կազմվում ԱԿԱՆ և ԱՅԻՆ ածանցներով՝ սարբերակված նշանակությամբ, օրինակ՝ խորհրդական—խորհրդային, իրական—իրային, լեռնական—լեռնային, գրական—գրային, ազգական—ազգային, դասական—դասային, ձևական—ձևային, ժողովրդական—ժողովրդային և այլն:

Բայց շատ դեպքերում ԱԿԱՆ և ԱՅԻՆ ածանցները հանդես են գալիս որպես նույնանիշներ, ինչպես՝ բառական—բառային, լրագրական—լրագրային, հեռագրական—հեռագրային, լեզվական—լեզվային, հնչյունական—հնչյունային և այլն:

ԱՆ.— Հատկապես բնածայնական բայերից կազմում է գործողի անուններ ենթակայական դերբայի նշանակությամբ, օրինակ՝ ածան, խածան, կծան, փշան, թովան, խլվան, ծլվան, նդնդան, նոնոան, նվնրվան, նկնկան, պլպլան և այլն: Ան ածանցով կազմված այսպիսի ածականներն ունեն ժողովրդական-բարբառային երանգ:

ԱՆԻ.— Հատկապես դրվում է մի ածականից ու թվականից և գոյականից կազմված բառակապակցությունների վերջում՝ կազմելով ածականներ մի քանի ունեցողի նշանակությամբ, օրինակ՝ գեղանի, լեզվանի, պիտանի, մեծաշխանի, սուրգլխանի, երեքդոնանի, յոթգլխանի, չորստանի, ութհարկանի, հինգվանկանի և այլն:

ԱՏ.— Կազմում է ածականներ մի քանից զուրկ լինելու, մի բան չունենալու նշանակությամբ, օրինակ՝ թևատ, պոչատ, կոնատ, գունատ, կիսատ, ֆնատ:

ԱՅԻ.— Կազմում է ածականներ գործիական հոլովի, պատշաճ լինելու, համապատասխանության կամ մի այլ նշանակությամբ, օրինակ՝

<sup>6</sup> Ածականակերտ ածանցներին նվիրված այս հատվածում հիմնականում հետևելով ենք Մ. Արեղյանին (տե՛ս Հայոց լեզվի տեսություն, էջ 237—282):



փատացի, առնացի, արդարացի, բառացի, բերանացի, դիմացի, իրավացի, խելացի, հարեանցի, ճշմարտացի, տառացի, տողացի և այլն:

ԳԻՆ.— Կազմում է սաստկական նշանակություն ունեցող ածականներ և մակբայներ, օրինակ՝ անագին, զայրագին, լալագին, կարթոզին, մոլեգին, առամագին, սրտագին, հիվանդագին, բախժագին, կսկծագին:

ԳՈՒՅՆ.— Կազմում է ածականներ գերադրական աստիճանի նշանակությամբ՝ լավագույն, բարձրագույն, խոշորագույն, ազնվագույն, նրվագույն, նորագույն և այլն: ԳՈՒՅՆ ձևն արմատի արժեք ունի դարչնագույն, աղյուսագույն, հողագույն, ծիրանագույն և նման բաղադրությունների մեջ:

Ե՛ՅԱ.— Ցույց են տալիս նյութը, որից կազմված է առարկան: Տարբերակված չլինելով իմաստաբանորեն՝ երկուսն էլ կարող են դրվել նույն գոյականների վրա, այսպիսով կազմելով նույնանիշ բառեր, ինչպես՝ երկաթե՝ երկաթյա, մարմարե՝ մարմարյա, ոսկե՝ ոսկյա, արծաթե՝ արծաթյա, պղնձե՝ պղնձյա, փայտե՝ փայտյա, զմրուխտե՝ զմրուխտյա և այլն: Այս ձևերից առաջիններն ավելի հատուկ են ժողովրդական-խոսակցական, իսկ երկրորդները՝ գրավոր-գրական լեզվին:

ԵՒԻ, ԱԼԻ.— Ցույց են տալիս ինչ որ կարելի է, պետք է կամ արժանի է անել, օրինակ՝ տանելի, գարհուրելի, խղճալի, ատելի, բնակելի, գովելի, դատապարտելի, գարմանալի, զգալի, նավարկելի, հասկանալի, ուսանելի, պատժելի և այլն: Այսպիսի կազմությունները հատկապես շատ-շատ են Ան նախածանցով ձևերի հետ՝ անանջատելի, անանցանելի, անբացատրելի, անբուժելի անդառնալի, անընթեռնելի, անլուելի, անբեղունելի, անիմանալի և այլն:

ԵՂ.— Կազմում է ածականներ մի բանով հարուստ, առատ լինելու նշանակությամբ, օրինակ՝ անեղ, աչեղ, գունեղ, գորեղ, թիկնեղ, համեղ, հյութեղ, հնչեղ, հոսեղ, լուսեղ, մարմնեղ, ուժեղ, հանճարեղ և այլն:

ԵՂԵՆ.— Ցույց է տալիս նյութը, որից կազմված է առարկան, այլն նույն նյութից կազմված առարկաներ հավաքական նշանակությամբ, Այս իմաստով պայմանավորված՝ ԵՂԵՆ ածանցով կազմված բառերի մի մասը հավասարապես ունի ածականի և գոյականի նշանակություն, մի մասի մեջ էլ ավելի ուժեղ է գոյականական նշանակությունը, ինչպես՝ լուսեղեն, բոցեղեն, ֆարեղեն, ճրեղեն, ձյունեղեն, իրեղեն, հագեղեն, ոսկեղեն, արծաթեղեն, երկաթեղեն և այլն:

Վերջերս այս ածանցով ավելի գոյականներ են կազմվում, օրինակ՝ կանաչեղեն, կոշկեղեն, կաթնեղեն, երշիկեղեն, խմիչֆեղեն, ձկնեղեն և այլն:

Բ.— ա) Նյութի անուններից կազմում է ածականներ, որոնք ցույց են տալիս առարկայի նյութեղեն հիմքը, ինչից կազմված լինելը, օրինակ՝ ֆարի, երկաթի, փայտի, կավի, պղնձի:

բ) Կազմում է ածականներ որևէ հատկություն ունենալու, որևէ հատկությամբ օժտված լինելու նշանակությամբ, օրինակ՝ ծարավի, կենդանի, կատաղի, կոռովի, արժանի, հավաստի, հարգի, տմարդի, օտարագրի, վայրի, երկդիմի, միադիմի, երկսայրի և այլն:

ԻԿ.— ա) Դրվում է մի քանի ածականների վրա՝ նրանց տալով սաստկական կամ փաղաքշական նշանակություն, օրինակ՝ աղբատիկ, կուգիկ, մանրիկ, սիրունիկ, մեղմիկ, լավիկ, կլորիկ, նախշունիկ, մաերմիկ:

բ) Որոշ բայահիմքերից կազմում է ածականներ ենթակայական դերբայի նշանակությամբ, օրինակ՝ ազդեցիկ, բացառիկ, խաբուսիկ, դարակազմիկ, երգեցիկ, ուռուցիկ, վաղամեռիկ, վաղանցիկ, պայթուցիկ:

Մակայն ԻԿ ածանցն ավելի շատ կազմում է գոյականներ փոքրացուցիչ-փաղաքշական նշանակությամբ, օրինակ՝ քաթիկ, շնիկ, ոսկիկ, նուտիկ, մանկիկ և այլն:

ԻՆ.— ա) Դրվելով մի քանի ածականների վրա՝ նրանց տալիս է սաստկական նշանակություն, օրինակ՝ դժվար-դժվարիկ, դյուր-դյուրիկ, խոր-խորիկ, նուր-նուրիկ, լուռ-լուռիկ, մութ-մութիկ, հեշտ-հեշտիկ:

բ) Մի քանի բառերից կազմում է ածականներ՝ վերին, ներքին, միջին, արտաքին, առաջին, վերջին, տեղին:

ԻԶ.— Բայահիմքերից կազմում է ածականներ գործողի անվան՝ ենթակայական դերբայի նշանակությամբ, օրինակ՝ այրիչ, ավերիչ, բուծիչ, գրավիչ, դյուրիչ, թովիչ, խանգարիչ, խորտակիչ, կիզիչ, կախարհիչ, հմայիչ, շախախիչ, սպանիչ, տպավորիչ, ֆայֆայիչ և այլն:

ԻԶ ածանցով կազմված բառերի մի մասը գոյական է կամ ունի գոյականի և ածականի նշանակություն միաժամանակ, ինչպես՝ ուսուցիչ, ֆենիչ, գրիչ, սրբիչ, զրպարտիչ, բաշխիչ, կեղեֆիչ, հարստահարիչ:

ԻԿ.— Իկ ածանցի լ ածականով ձևն է, որ վերածվել է ինքնուրույն ածանցի: Դրվելով ածականների վրա՝ նրանց տալիս է սաստկական-փաղաքշական նշանակություն, օրինակ՝ թխիկ, շաղիկ, հաստիկ, կարելիկ, ցածիկ, նեղիկ, սոթիկ, սուտիկ, բարալիկ, պստիկ, կաղիկ, քմրիկ:

ԿԱՆ.— Կազմում է ածականներ բայարմատներից մի գործողության տրամադիր լինելու կամ ենթակայական դերբայի նշանակությամբ, օրինակ՝ ամաչկոտ, ալարկոտ, բարկացկոտ, երագգոտ, վախկոտ, զայրացկոտ, ծիծաղկոտ, մոռացկոտ, մտածկոտ, պահանջկոտ, պարծենկոտ, ցասկոտ, փութկոտ:

ՅԱ.— ա) Կազմում է ածականներ հատկապես տեղի ու ժամանակի անուններից՝ զխավորապես դրվելով բաղադրությունների վերջում և արտահայտելով տվյալ տեղում ու ժամանակում կատարված լինելու, տվյալ տեղն ու ժամանակն ընդգրկելու և այլ նշանակություններ, ինչ-

պես՝ ծովափնյա, գետափնյա, ստորերկրյա, վերերկրյա, երկօրյա, եռօրյա, երկամյա, եռամյա, հնգամյա, ութամյա, վեցամյա և այլն:

բ) Այլ գոյականներից՝ մի բան ունեցողի նշանակութամբ՝ եռու-նյա, հնգուսնյա, սևաշյա, կապուտաշյա, հրաշյա, յոթնադյա:

ՅԱԼ.— Գրաբարյան անցյալի դերբայի եԱԼ մասնիկն է, որ անցել է աշխարհաբարին և գիտակցվում է որպես ածականակերտ ածանց: Բացի գրաբարից փոխառյալ բառերից, կազմում է նաև նոր բառեր, օրինակ՝ անիծյալ, երգվյալ, կայսյալ, կատարյալ, կարոտյալ, հավելյալ, հիշյալ, մեռյալ, պաշտպանյալ, դատապարտյալ, ուսյալ, որոշյալ, հանգուցյալ և այլն: Ինչպես օրինակներից կարելի է նկատել, ՅԱԼ ձևով կազմված բառերի մի մասը վերածվել է գոյականների:

ՅԱՆ.— Արդի հայերենի ազգանուններ կազմող հիմնական ածանցն է, օրինակ՝ Գրիգորյան, Արամյան, Սուրենյան և այլն:

ՅԱՆ ածանցը կազմում է նաև ածականների անձերի հատուկ (առանձին դեպքերում և հասարակ) անուններից, տեղի ու ժամանակի և այլ անուններից՝ արտահայտելով տվյալ անձին, տեղին ու ժամանակին հատուկ լինելու կամ մի բան ունեցողի նշանակություն, ինչպես՝ ախլ-լեսյան, ալեխանդրյան, հերկոպեսյան, մենշեկիկյան, հնչակյան, արա-րատյան, երևանյան, արտասահմանյան, հունվարյան, միջնադարյան, երեքթևյան, բազմալեզվյան, բուրյան (բուրավետ) և այլն:

ՈՎԻ.— Բայահիմքերից կազմում է ածականներ կրավորական հարակատար կամ ենթակայական դերբայների նշանակություններով, օրինակ՝ առնովի, բացովի, ծալովի, թխովի, լաբովի, կախովի, վարձովի, վճարովի և այլն:

ՈՏ.— Յուրք է տալիս մի բան ունենալը, վրան, մեջը կրելը, այլև մի բանով առատ, հարուստ լինելը, օրինակ՝ աղմկոտ, արևոտ, բրդոտ, դարդոտ, հիվանդոտ, նարպոտ, մոխրոտ, ստվերոտ, վեհերոտ, վշտոտ, ցեխոտ, փոշոտ, ֆարոտ, փոքորկոտ, նախանձկոտ և այլն:

(Ա)ՎԾՏ.— Կազմում է ածականներ մի բանով հարուստ, առատ լինելու նշանակությամբ, օրինակ՝ բուրավետ, երանավետ, թիկնավետ, խոտավետ, սիգավետ, ծաղկավետ, կանաչավետ, հոտավետ, շանավետ, օգտավետ:

(Ա)ՎՈՐ.— Հայերենի ամենագործուն ածանցներից մեկն է: Կազմում է ածականներ մի բան ունեցողի, կրողի, այլև մի բանով զբաղվողի, պարապողի և նման նշանակություններով, օրինակ՝ ալեհացավոր, ահավոր, գմբեթավոր, գրավոր, դիմավոր, եղջերավոր, թևավոր, թու-նավոր, հոշակավոր, հրեշավոր, նշանավոր, տաղանդավոր, փառավոր, կեղծավոր և այլն: Այսպիսի իմաստ արտահայտող ածականների թիվը շատ շատ է:

ՎՈՐ ածանցով կազմված բառերի մի մասը ունի նաև գոյականա-

կան նշանակություն կամ ուղղակի վեր է ածվել գոյականի, օրինակ՝ աղանդավոր, արհեստավոր, գանգատավոր, զինվոր, ջրվոր և այլն:

(Ա)ՎՈՒՆ.— Ածականի արտահայտած հատկանիշին տալիս է նվազական նշանակություն, օրինակ՝ գորշավուն, դառնավուն, թխավուն, կանաչավուն, կապտավուն, կարմրավուն, սևավուն, նեղավուն, սպիտակավուն, դեղնավուն և այլն:

ՈՒ.— Կազմում է գործողի անուն բայահիմքերից՝ հատկապես դրբավելով բաղադրությունների վերջում, օրինակ՝ ազդու, ծախու, հատու, ահարկու, ստնտու, բերհատու, արյունարբու, զանցառու, հաշվետու, ողբերգու, փորձառու: Դրանց մի մասը վերածվել է գոյականների:

ՈՒԿ.— ա) Մի քանի ածականների տալիս է սաստկական-փաղաքշական նշանակություն, օրինակ՝ տաֆ-տաֆուկ, խեղճ-խղճուկ, գեր-գիրուկ, սև-սևուկ, երկար-երկարուկ:

բ) Մի քանի բայերից կազմում է ածականներ ենթակայական դերբայի նշանակությամբ, օրինակ՝ բաճուկ, դիպուկ, խեղդուկ, կտրուկ, նեղ-հեղուկ, նորելուկ, վախուկ (վերջինս լՈՒԿ ձևով):

ՈՒԿ ածանցը միաժամանակ կազմում է գոյականներ փոքրացուցիչ-փաղաքշական և այլ նշանակություններով՝ արջուկ, գառուկ, հանելուկ և այլն:

ՈՒՆ.— ա) Կազմում է ածականներ գործողի անվան՝ ենթակայական դերբայի նշանակությամբ, օրինակ՝ բարբախուն (բարբախող), խեղուն, խոհուն, խոսուն, հեշուն, ճկուն, շողջողուն, ոլորուն, սահուն, տոկուն, փայլուն և այլն:

բ) Կազմում է որոշ ածականներ հարակատար դերբայի նշանակությամբ, օրինակ՝ զարդարուն (զարդարված), լեցուն, ծավալուն, կանգուն, հաստատուն, հասուն, փուուն:

#### Բարդություն

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՈՎ.— Ածանցման հետ հավասարաչափ՝ ածականների կազմության մեջ մեծ դեր է խաղում նաև բարդությունը, ըստ որում ածականներ են կազմվում համադրական և վերլուծական բարդությամբ: Ինչպես հայերենի բառակազմության մեջ ընդհանրապես, այնպես էլ ածականների կազմության մեջ ավելի տարածված է և մեծ դեր ու կշիռ ունի համադրական (իսկական) բարդությունը:

#### Համադրական բարդություն

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴ ԱԾՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՊԱՏԿԱՆՆԵԼՈՒԹՅԱՆ.— Պետք է տարբերել համադրական բարդ ածականների կազմության հետևյալ հիմնական կաղապարները:

ա) ԱՄԱԿԱՆ (ՆԱԾՎ ԹՎԱԿԱՆ) + ԳՈՅԱԿԱՆ.— Կազմվում են ածականներ մի բան ունեցողի նշանակությամբ: Ածականների կազմության ամենահիմնական կաղապարներից մեկն է, և հայերենում կան այս ձևով բաղադրված բազմաթիվ բառեր, ինչպես՝ ազատամիտ, ամրակազմ, բազմազավակ, բարակավիզ, ֆառագազաթ, հնգաթև, դատարկագուլիս, թխաղեմ, խստասիրտ, կարճահասակ, մեծագուլիս, շիկահեր, սրածայր, տափաբյուն և այլն:

բ) ԳՈՅԱԿԱՆ + ԳՈՅԱԿԱՆ.— Նախորդ կաղապարի նման կազմվում են ածականներ մի բան ունեցողի նշանակությամբ, օրինակ՝ առյուծաբաշ (առյուծի բաշ ունեցող), ալիֆաձև, աղահամ, աղեղնաձև, աղյուսագույն, երկնագույն, առյուծասիրտ, արծվափիթ, գմբեթաձև, ծնկաձև, նաբեղագույն, վարդագույն և այլն:

Ածականների կազմության այս կաղապարը, ինչպես արդեն բերված բառերի միօրինակությունից է երևում, այնքան էլ տարածված չէ, և «գոյական + գոյական» կաղապարով գերազանցապես գոյականներ են կազմվում, օրինակ՝ անձրեաշուր, երկրագունդ, աղահանձ, սառալանջ և այլն:

գ) ԳՈՅԱԿԱՆ + ԲԱՅԱԿԱՆ (ԿԱՄ ԱՄԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՄԱՏ).— Այս ձևով կազմված ածականների մի զգալի մասը գործողի անվան նշանակություն է արտահայտում, օրինակ՝ բերփառու, գործիմաց, իմաստասեր, ծծկեր, կաթնատու, մարդատյաց, շանթաբեր, պատվասեր, սահմանապահ, վճարեկ, վշտակիր, ֆնաբեր, ազգուրաց, աշխարհացունց և այլն:

Այս ձևով կազմված բառերի մի մասն ունի նաև գոյականի իմաստ, օրինակ՝ բանասեր, գրագող, իրապաշտ, պատմագետ, հանցագործ:

«Գոյական + բայահիմք» ձևով կազմված ածականների մի մասն էլ սովորաբար արտահայտում է կրավորական հարակատար դերբայի նըշանակություն, ինչպես՝ բնավեր, հուսահատ, ճյուղակոտոր, սրտանախ, արևակեզ, հողածին, կավակերտ, սովատանջ, սրտաբուխ, պաշտոնակ, փառագուրկ, ականագարդ, գորգապատ, կավախառն, ձեռնատուն և այլն:

դ) ԱՄԱԿԱՆ ԿԱՄ ՄԱԿԱՆԱՅ + ԲԱՅԱԿԱՆ.— Նախորդ տիպի նման կազմվում են ածականներ գործողի անվան՝ ենթակայական դերբայի և հարակատար դերբայի նշանակություններով, բայց կազմության այս կաղապարը նախորդից քիչ բառերով է ներկայացված: Այսպիսի բաղադրություններ են. արագընթաց, արդարադատ, բարձրախոս, դանդաղաշարժ, երկարակյաց, դյուրագրգիռ, թեթևաշարժ, խորիմաց, խստապահանջ, կարճատև, սրբեթաց, վաղահաս, վաղամեռ, ուղղածից և այլն:

ե) ԱՄԱԿԱՆ + ԱՄԱԿԱՆ.— Թեև ոչ այնքան շատ, բայց կան ածականներ, որոնք կազմված են երկու ածականների բաղադրությամբ: Այսպիսի բաղադրությունների առանձնահատկությունն այն է, որ բաղադրիչները գտնվում են համադասական հարաբերության մեջ, օրինակ՝ հոր-

դառատ (հորը և առատ), ամրապինդ, լիառատ, լայնաբճակ, հեզահեզ, մեղմանուշ, վեհանուշ: Բաղադրություններ կան նաև նույն ածականի կրկնությամբ՝ մեծամեծ, խոբախոբ, շարաշար:

Վերլուծական բարդություն

ԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՈՎ.— Վերլուծական բարդությամբ ածականներ են կազմվում սովորաբար հատվածական և կրկնավոր բարդությունների միջոցով:

Հատվածական բարդություններ.— Վերջերս հայերենում լայն տարածում ստացավ ածականների կազմության մի նոր կաղապար: Հաճախ ԱԿԱՆ և ԱՅԻՆ ածանցներով կազմված ածականները, երբ իմաստային սերտ կամ մոտիկ ընդհանրություն ունեն կամ ընդհանրապես իրար հետ կապված են այս կամ այն կողմով, որպես մի միասնություն ներկայացնող բառեր, գրության մեջ միավորվում են միության գծիկով, օրինակ՝ գաղափարական-ֆաղափական (աշխատանք), ազգային-ազատագրական (շարժումներ), հասարակական-ֆաղափական (հոսանքներ) և այլն: Եվ որովհետև ԱԿԱՆ և ԱՅԻՆ ածանցները համանիշներ են, այդ իսկ պատճառով էլ այսպիսի բաղադրությունների առաջին բաղադրիչի ԱԿԱՆ կամ ԱՅԻՆ ածանցները մի տեսակ ավելորդություն են դառնում, բաց են թողնվում, և երկու բաղադրիչները միանում են իրար Ա հոդակապով, իսկ առանձին դեպքերում էլ՝ առանց դրա: Ա հոդակապից հետո գրության մեջ երբեմն գծիկ է դրվում, իսկ ավելի հաճախ չի դրվում, իսկ երբ բարդությունն առանց հոդակապի է, միության գծիկն անպայման դրվում է: Այսպիսի բաղադրյալ ածականներ են. բարոյաֆաղափական, ժողովրդատնտեսական, գիտաուսումնական, պատմահամեմատական, կրթադաստիարակչական, դրամավարկային, ուսումնատաղրական, բուրժուանացիոնալիստական, սոցիալ-տնտեսական, սոցիալֆաղափական, կուլուր-կենցաղային, կուլուր-դաստիարակչական և այլն: Նույն բնույթի են նաև՝ սովետա-լեհական, սովետա-ֆրանսիական, հունգարա-գերմանական, հունա-հռոմեական, ֆրանս-իտալական, ֆրանս-գերմանական, օտար Օ հոդակապով՝ անգլո-ամերիկյան, իտալո-գերմանական և այլն: Այսպիսի բարդությունները կոչվում են հատվածական:

Ինչպես բերված օրինակներից կարելի է եզրակացնել, հատվածական վերլուծական բաղադրությունները վերածվում են համադրական բարդությունների:

Կրկնավոր բարդություններ.— Վերլուծական բարդությամբ ածա-

կաններ են կազմվում նաև կրկնության միջոցով՝ հատկապես ածականների և գոյականների կրկնության միջոցով<sup>8</sup>։

ա) Ածականների կրկնությամբ սաստկական և բազմակիության իմաստ է տրվում ածականներին, արտահայտվում է հատկանիշի բարձր աստիճան։ Սովորաբար կրկնվում են կարճ՝ միավանկ և երկվանկ ածականները։ Այսպիսի կրկնավորներ են. անուշ-անուշ, առատ-առատ, բարդ-բարդ, բարձր-բարձր, դառը-դառը, երկար-երկար, թանկ-թանկ, թեթև-թեթև, թունդ-թունդ, լայն-լայն, լավ-լավ, խոր-խոր, ծանր-ծանր, կարճ-կարճ, հաստ-հաստ, հին-հին, մանր-մանր, մեծ-մեծ, նեղ-նեղ, չոր-չոր, պինդ-պինդ, սև-սև, սիրուն-սիրուն, սուր-սուր, սուտ-սուտ, վառ-վառ, վատ-վատ, տախ-տախ, փոքր-փոքր և այլն։

Այսպիսի կրկնավոր ածականները, իրենց սաստկական իմաստին համապատասխան, հաճախ արտասանվում են հատուկ հնչերանգով, որը գրության մեջ արտահայտվում է երկարացման նշանով՝ գրված վերջին կամ առաջին ու վերջին բաղադրիչների վրա, օրինակ՝ մե՛ծ-մե՛ծ տներ, երկա՛ր-երկա՛ր փողոցներ, դա՛ռը-դա՛ռը վշտեր։

Կրկնավորներից առաջինը հնչյունական զանազան փոփոխությունների կարող է ենթարկվել, օրինակ՝ սեփ-սև, նեփ-նեմակ, լեփ-լեցուն, կափ-կանաչ, կաս-կարմիր, մեն-մենակ կամ միս-մենակ, շիփ-շիտակ։ Այս ձևով արտահայտվում է հատկանիշի բարձրագույն աստիճան (հմտ. սև-սև և սեփ-սև, կարմիր-կարմիր և կաս-կարմիր և այլն)։

բ) Ածականներ են կազմվում նաև գոյականների կրկնությամբ, օրինակ՝ փունջ-փունջ, խումբ-խումբ, տեսակ-տեսակ, երամ-երամ, թել-թել, գունդ-գունդ, ծով-ծով և այլն։

Քանի որ կրկնավոր ածականներն ընդհանրապես բազմապատկության իմաստ ունեն, այդ իսկ պատճառով էլ նրանք, որպես կանոն, հոգնակի որոշյալ են սլահանջում, օրինակ՝ սև-սև աչքեր, մեծ-մեծ մարդիկ, գունդ-գունդ գոբեր, տեսակ-տեսակ ծալիկներ և այլն։

<sup>8</sup> Կրկնավոր բարդություններ մասին տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 180—182, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 160—161, Ա. Մորվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, էջ 147—162, Գ. Ջահուկյան, Է. Ազալյան և ուրիշ, Հայոց լեզու, էջ 392—398։

## ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ԹՎԱԿԱՆՆԵ ԻՐՐԻՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ.— Հայ քերականագիտության մեջ երկար ժամանակ թվականն առանձին խոսքի մաս չի համարվել։ Ելնելով խոսքի մասերի որոշման շարահյուսական հիմունքից՝ թվականը համարվել է ածականի մի տեսակ, որովհետև բուն ածականների նման գործածվում է գոյականների հետ որպես որոշիչ և ածականից տարբերվում է միայն իր ընդհանուր իմաստով. եթե ածականը ցույց է տալիս առարկայի որակային հատկանիշ, ապա թվականը ցույց է տալիս առարկայի քանակային հատկանիշ (հմտ. գեղեցիկ աղջիկ և երկու աղջիկ)։ Սակայն բառերի խոսքիմասային կարգերը որոշելիս, ինչպես նըշված է արդեն, կարևոր նշանակություն ունի նրանց բառային ընդհանուր իմաստի հաշվառումը։ Եվ ելնելով հենց դրանից էլ, ինչպես նաև ձևաբանական, շարահյուսական ու առանձնապես բառակազմական որոշ առանձնահատկություններից՝ թվականը Հայ քերականության վերջին շրջանում առանձնացվում է որպես առանձին խոսքի մաս։

Թվական անունը որպես խոսքի մաս իմաստաբանորեն բնորոշվում է նրանով, որ ցույց է տալիս առարկաների թիվ, քանակ կամ թվային կարգ։

Սակայն պետք է նկատի ունենալ, որ թվականներ են ոչ թե քանակի անվանումներն ընդհանրապես, այլ քանակի այնպիսի անվանումները, որոնք ցույց են տալիս կոնկրետ թիվ և կարող են թվանշանով արտահայտվել։ Վերցնենք շատ և քիչ բառերը։ Սրանք ևս առարկաների քանակ են ցույց տալիս, բայց թվականներ չեն կարող համարվել, որովհետև նրանցից տարբերվում են իմաստաբանորեն (արտահայտում են ոչ թե կոնկրետ, այլ անորոշ քանակ), ձևաբանորեն (կարող են համեմատության աստիճաններ կազմել՝ շատ—ավելի շատ—ամենաշատ, քիչ—ավելի քիչ—ամենաքիչ) և շարահյուսորեն (կարող են գործածվել ոչ միայն գոյականների, այլև բայերի հետ՝ «Շատ խոսեց, քիչ գրեց»)։ Նույն ձևով թվականներ չեն նաև այսֆան, այդֆան, այնֆան, այսչափ, այդչափ, այնչափ բառերը, որովհետև կոնկրետ թիվ չեն ցույց տալիս և ըստ գործածության կարող են հանդես գալ որպես կոնկրետ թիվով արտահայտվող ամեն մի քանակային մեծության արտահայտիչներ, օրինակ՝ հինգ աշակերտ—այսֆան աշակերտ, քսան մարդ—այսֆան մարդ և այլն։

Այս տեսակետից ավելի ցայտուն է բյուր բառի օրինակը, որը գրաբարում թվական էր, որովհետև նշանակում էր կոնկրետ թիվ՝ տասը հազար, իսկ արդի հայերենում թվական չէ, որովհետև նշանակում է շատ ընդհանրապես:

Հասկանալի է, որ թվականներ չեն կարող համարվել նաև հետևյալ ընդգծված բառերը. «Հարյուրավոր ուսանողներ էին դուրս եկել ցույցի»։ «Արդեն հազարավոր զինվորներ են զոհվել այս կեղտոտ պատերազմում»։ «Միլիոնավոր մարդիկ տառապում են քաղցի ու հիվանդությունների ճիրաններում»։ Հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր բառերը ևս կոնկրետ, որոշակի թվեր չեն ցույց տալիս: Հարյուրավոր նշանակում է մի քանի հարյուր, հազարավոր՝ մի քանի հազար, իսկ միլիոնավոր՝ մի քանի միլիոն: Դրանք պետք է համարել ածականներ:

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ թվական կարելի է կոչել միայն այն բառերը, որոնք ցույց են տալիս որոշակի թվային քանակ: Բայց դա էլ դեռ բավարար պայման չէ: Որպեսզի բառը թվական համարվի, նա պետք է որոշակի թվային քանակ արտահայտի մաքուր, անխառն ձևով, առանց լրացուցիչ նշանակությունների: Այնպիսի բառեր, ինչպիսիք են եռյակ, քառյակ, տասնյակ, հարյուրյակ, հնգանոց, տասանոց, հարյուրանոց և այլն, թվականներ չեն, որովհետև դրանց մեջ թվի գաղափարը անխառն չի դրսևորվում, և նրան ուղեկցում են այլ նշանակություններ:

Ձևաբանորեն թվական անունը բնորոշվում է նրանով, որ ածականի նման իր հիմնական գործածության ժամանակ զուրկ է թեման ձևերից և դրվում է գոյականի վրա ուղիղ, անփոփոխ ձևով, օրինակ՝ երեք մարդ, երեք մարդու, երեք մարդուց, երեք մարդիկ, երեք մարդկանց, երեք մարդկանցից և այլն: Սակայն թվական անունը ածականի նման լայն հնարավորություն ունի հանդես գալու որպես փոխանուն և այդ դեպքում հոլովվում է, ինչպես՝ երեքը— երեքի—երեքից—երեքով, երկուորդը—երկուորդի—երկուորդից—երկուորդով և այլն: >

Բառակազմորեն թվական անունը բնորոշվում է իր կազմության հատուկ օրինաչափությամբ: Դա արտահայտվում է նրանում, որ սակավաթիվ արմատական թվականների ամենատարբեր զուգորդումներով լեզուն հնարավորություն ունի արտահայտելու թվերի անահաման բազմությունը, օրինակ՝ քսանհինգ, երկու հարյուր երեսունվեց, հինգ հազար չորս հարյուր հիսունուր և այլն: Հենց դրանով էլ պայմանավորված՝ թվականների բաղադրիչները կարող են կրկնվել տեսականորեն առանց սահմանափակման, օրինակ՝ ութ միլիոն ութ հարյուր ութսունուր հազար ութ հարյուր ութսունուր: Կազմության այսպիսի տիպ ուրիշ ոչ մի խոսքի մասի հատուկ չէ:

Շարահյուսորեն թվականը բնորոշվում է նրանով, որ ածականի նման սովորաբար գործածվում է գոյականի հետ որպես որոշիչ, օրինակ՝

հինգ աշակերտ, քսան զինվոր, երկուորդ դասարան, հինգերորդ հանդիպում և այլն: Սակայն ի տարբերություն որակական ածականների, որոնք կարող են գործածվել նաև բայերի հետ («բարձր խոսել», «հիանալի զեկուցել» և այլն), թվականները բայերի հետ գործածվել չեն կարող:

### ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ.— Հաշվարկման տարբեր ձևերից ելնելով՝ թվականները ժամանակակից հայերենում ըստ իմաստի լինում են՝ ա) քանակական, բ) կոտորակային (որոնք կարելի է համարել քանակականների մի տեսակը), գ) դասական, դ) բաշխական:

### Քանակական թվականներ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Քանակական թվականները, որոնք կոչվում են նաև բացարձակ, ցույց են տալիս առարկաների կոնկրետ թիվը, քանակը:

Բացարձակ թվականների մեջ մտնող արմատական բառերի քանակը խիստ սահմանափակ է. դրանք են՝ մի||մեկ, երկու (երկուս), երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինն||ինը, տաս||տասը, հարյուր, հազար և եվրոպական լեզուներից փոխառյալ միլիոն, միլիարդ: >

Թվականները լեզվի բառապաշարի ամենահին շերտերից մեկն են կազմում: Բավական է նշել, որ հայերենի մեկից տասը բոլոր թվականները հնդեվրոպական ծագում ունեն, հարյուր բառի ծագումն անհայտ է, իսկ հազար բառը փոխառություն է պահպանել: Վերջինից է փոխառյալ նաև բեր>բյուր բառը, որ գրաբարում նշանակում էր տասը հազար:

Տասնյակների անվանումները ևս՝ քսան, երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն (գրք. երթանասուն), ութսուն և իննսուն՝ կապվում են հնդեվրոպական հիմնալեզվի ձևերի հետ: Այս թվականների զանազան կապակցություններով կազմվում են անասնամասիակ թվով բացարձակ թվականներ:

Ժամանակակից հայոց լեզվում տասնավորների և միավորների միացումը կատարվում է հետևյալ ձևով. սկզբում դրվում է տասնավորը, որին կցվում է միավորը: Տաս||տասը բառը վերականգնում է գրաբարյան ն վերջնահնչյունը և բաղադրությունների մեջ է մտնում տասն ձևով: Ըստ այդմ՝ տասնավորներից և միավորներից բաղկացած թվականները ունենում են հետևյալ պատկերը. տասնմեկ, տասներկու, տասներեք,

<sup>1</sup> Հայերենի թվականների ծագման մանրամասն բացատրությունը տես Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, Երևան 1952, էջ 244—246:

Բանաճար, Երեսուցիներ, Բառասունվեց, հիսուցուս, վաթսուցուս, յոթանասուցին (ինը) և այլն<sup>2</sup>:

Նախախորհրդային շրջանի գրականության մեջ հանդիպում ենք ձևերի, որտեղ տասնավորն ու միավորը կապակցված են ու կամ և շաղկապներով, օրինակ՝ տասնուհինգ, տասնուվեց, երեսուցիներ, տասնուհինգ, քսանուհինգ, երեսուցուս և այլն: Այսպիսի ձևերը հնացած են և գործածությունից դուրս են եկել:

Նույնն է նաև հարյուրավորների և տասնավորների կապակցության սկզբունքը, այսինքն՝ սկզբում դրվում են հարյուրավորները և ապա տասնավորները, օրինակ՝ հարյուր քսան, հարյուր երեսուցուս և այլն: Ուրեմն մեծ թվերը միշտ նախորդում են փոքրերին:

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.** — Քանակական թվականներն ըստ կազմության լինում են պարզ, ածանցավոր և բարդ:

ա) Հայերենի պարզ կամ արմատական թվականներն են միավորների անունները՝ մի||մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը||ինը, տասնավորներից՝ տաս||տասը, քսան և ապա՝ հարյուր, հազար, հայերենի համար նաև՝ միլիոն, միլիարդ:

բ) Ածանցավոր են համարվում տասնյակների անվանումները՝ սկզբած 30-ից՝ երեսուցուս, քսանուցուս, հիսուցուս, վաթսուցուս, յոթանասուցուս, ութսուցուս, իննսուցուս: Այս ձևերի մեջ հանդես եկող սուն մասը սկզբնապես նշանակել է տաս, բայց հետագայում կորցրել է իր իմաստը և վերածվել տասնավորների կազմող մասնիկի: Սակայն մասամբ այն պատճառով, որ սուն մասնիկը գործածվում է միայն այդ բառերի մեջ և այլ բառեր կազմել չի կարող, մասամբ էլ այն պատճառով, որ վերևում բերված բառերի մեջ որոշ արմատներ հնչյունական փոփոխության հետևանքով հեռացել են իրենց սկզբնաձևերից և փաստորեն առանձին վերջրած իմաստ չեն արտահայտում, ինչպես՝ հի—հինգ, վաթ—վեց, ուստի և այդ բառերը ածանցավոր համարելը խիստ պայմանական է:

գ) Բարդ են հայերենի մյուս բոլոր թվականները, ըստ որում տասնավորներից և միավորներից բաղկացած թվականները (11-ից 99) կրկնական բարդություններ են և գրվում են միասին, ինչպես՝ տասնուհինգ, քսանուցուս, քսանուցուս, վաթսուցուս և այլն, իսկ

<sup>2</sup> Գրքարարում, ժամանակակից ուսերեցի ցման, մինչև 20-ը միավորը դրվում էր տասնավորից առաջ, ընդ որում 11-ից մինչև 16-ը տասն բառն էլ դրվում էր տասն ձևով, իսկ 17—19 թվերի դեպքում միավորն ու տասնավորը միանում էին և շաղկապով: Այսպիսով ունենում էինք՝ մետասան, երկոտասան, երեքտասան, չորքտասան, հնգտասան, վեքտասան, երեստասան, ութտասան, իննտասան ձևերը: Զբաղմունքի սկզբում սկզբում դրվում էին տասնավորները և ապա միավորները, ըստ որում վերջիններս առաջիններին էին միանում և շաղկապով: Ըստ այդմ էլ ունենում էինք՝ քսան և մի, քսան և երկու, երեսուցուս և երեք, հիսուցուս և երեք, իննսուցուս և ինը և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Է. Բ. Աղայան, Է. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, Երևան, 1965, էջ 158, Մ. Գյուլբերդյան, Թվական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1964, էջ 40:

հարյուրից բարձր բոլոր թվականները հարադրական բարդություններ են, և երանց բաղադրիչները գրվում են առանձին, օրինակ՝ հարյուր երկու, երկու հարյուր տասնուհինգ, չորս հազար հինգ հարյուր երեսուցուս և այլն:

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ.** — Քանակական թվականները գրավոր լեզվում, բացի բառերով արտահայտվելուց (օրինակ՝ երեք հազար հինգ հարյուր քսանվեց), արտահայտվում են հատուկ նշանների՝ թվանշանների միջոցով:

Հայերը երկար ժամանակ՝ սկսած գրերի գյուտից մինչև 16-րդ դարի սկզբները, որպես թվանշաններ են օգտագործել հայերենի այբուբենի տառերը:

Ա — 1	Ժ — 10	Ճ — 100	Ռ — 1000
Բ — 2	Ի — 20	Մ — 200	Ս — 2000
Գ — 3	Լ — 30	Յ — 300	Վ — 3000
Դ — 4	Խ — 40	Ն — 400	Տ — 4000
Ե — 5	Ս — 50	Շ — 500	Ր — 5000
Զ — 6	Կ — 60	Ո — 600	Յ — 6000
Է — 7	Հ — 70	Չ — 700	Ի — 7000
Ը — 8	Ձ — 80	Պ — 800	Փ — 8000
Թ — 9	Ղ — 90	Ջ — 900	Ք — 9000

Տասը հազարը կոչվում էր բիր (բյուր) և արտահայտվում էր Լ նշանով: Ուրեմն՝ Ա—Թ տառերը ներկայացնում էին միավորների դասը, Ժ—Ղ-ն՝ տասնավորների դասը, Ճ—Ջ-ն՝ հարյուրավորների դասը և Ռ—Ք-ն՝ հազարավորների դասը: Ըստ վերևում բերված համապատասխանությունների՝ ՌՃԺԱ—1111, ՍՄԻԲ—2222, ՅՆԽԵ—6445, ՔԺԱ—9011, ՓԼԳ—8034, ՌՔՀԷ—1977 և այլն:

Սկսած 16-րդ դարի սկզբներից՝ հայերը մյուս քաղաքակիրթ ազգերին հետևելով, ընդունում են արաբական թվանշանները, որոնք տասն են՝ 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9: Ահա այս տասը թվանշանների միջոցով մենք ի վիճակի ենք արտահայտելու բացարձակ թվականների անսահման բազմությունը:

**ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ.** — Գոյականաբար գործածվելիս բանական թվականները հոլովվում են, ինչպես՝ «Երեքից էլ գո՛հ եմ»: «Երկուսով էլ տառապում էին նույն ցավերով» և այլն:

Փոխանուն թվականները հոլովվում են ի հոլովման հարացուցցով՝ երեք—երեքի—երեքից—երեքով—երեքում, չորս—չորսի—չորսից—չորսով—չորսում և այլն: Երկու թվականը գոյականաբար գործածվելիս ըստանում է երկուս ձևը և հոլովվում հնչյունափոխված կամ անհնչյունափոխ ձևով՝ երկուսը—երկուսի||երկուսի—երկուսից||երկուսից և այլն:

Բարդ թվականների հոլովման դեպքում հոլովական վերջավորու-

թյուններ են ստանում միայն վերջին բաղադրիչները, օրինակ՝ երկու հազար հինգ հարյուր տասնվեցից հաճաճ չորս հարյուր տասնհինգ հավասար է երկու հազար հարյուր մեկի: Դա բացատրվում է նրանով, որ շնայած այսպիսի թվականները գրվում են առանձին, բայց փաստորեն մի բառ են և ունեն մի գլխավոր շեշտ՝ վերջին բաղադրիչի վրա:

Քանակական թվականները հազվադեպ կարող են գործածվել հոգնակի թվով, օրինակ՝ «Հինգերը լավ են գրել, իսկ ուրբերը՝ վատ»։ «Հայրենական պատերազմում միլիոններ զոհվեցին»։ Հոգնակի գործածության ժամանակ թվականը ցույց է տալիս կամ թվանշանի անուն (հինգերը — հինգ թվանշանները), կամ առարկա, որ ունի տվյալ թիվը: Երկու դեպքում էլ հոգնակիությունը վերաբերում է առարկաներին և ոչ թե թվականի արտահայտած քանակին: Սա էլ ինքնին նշանակում է, որ թվականը, որպես վերացական թվի անուն, զուրկ է հոգնակիության բերականական կարգից<sup>4</sup>:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Քանակական թվականները խոսքի մեջ սովորաբար հանդես են գալիս որպես որոշիչ՝ ցույց տալով առարկայի քանակային հատկանիշ, ինչպես՝ «Քառասուն կույս աղջիկ բերեք արմաղան, Քառասուն կարճ կնիկ, որ երկանք աղան» (Թում.)։ «Օխտն աղբյուրից ջուր է առել Կույս սափորով լուռ ու մունչ, Օխտը ծաղկից ծաղիկ քաղել, Կապել սիրո ծաղկեփունջ» (Թում.) «Այդ կապից չորս տարվա ընթացքում երեք աղջիկ էր ծնվել» (Բակ.)։ «Վերջին երկու սուրհանդակները երկու եղբայրների մահվան բոթը բերեցին Տիգրանից» (Բաֆֆի)։ «Կանգնած էին երեք եղբայրները երեք տարբեր խոհերով ու զգացումներով» (Շիրվ.)։ «Երկու մարդկային սև կերպարաններ Շան առջև փախած՝ ցած իջան դեսը» (Թում.):

Միմեկ թվականի հետ գոյականը միշտ եզակի է գրվում, օրինակ՝ մի կամ մեկ զինվոր, աղջիկ, տղա, գիրք, գրիչ, փողոց:

Թեկից բարձր թվականների հետ, ինչպես վերևի օրինակներն են արդեն ցույց տալիս, գոյականը կարող է գրվել և՛ եզակի, և՛ հոգնակի, օրինակ՝ երկու, երեք, չորս, հինգ զինվոր, աղջիկ, տղա, գիրք, գրիչ, փողոց երկու, երեք, չորս, հինգ զինվորներ, աղջիկներ, տղաներ, գրեք, գրիչներ, փողոցներ:

Սակայն առանձին կապակցություններում գոյականը հատկապես եզակի է գրվում, օրինակ՝ «Երկու տարի չեմ տեսել նրան», իսկ առանձին կապակցություններում էլ՝ հատկապես հոգնակի, օրինակ՝ «Երկու երկար ու ձիգ տարիներ չեմ տեսել նրան»: Թվականների հետ գործածվող գոյականների թվային այս տարբեր դրսևորումների մանրամասն բնութագրումը տրվում է շարահյուսության մեջ<sup>5</sup>:

Ուշագրավ են նաև քանակական թվականների հետևյալ կիրառությունները:

ա) Մերձավոր թիվ արտահայտելու համար քանակական թվականի վրա դրվում է մի մասնիկը, օրինակ՝ «Մի քան հոգի կլինենք»։ «Մի հաշուր գինվոր հազիվ փրկվեց»։ «Մի հինգ անգամ ասած կլինեմ» և այլն: Բոլոր օրինակների մեջ մի նշանակում է մոտ, մոտավորապես:

բ) Այսպես և՛ երբ այս կամ այն քանակական թվականից հետո գրվում է մի ուրիշը, ապա հասկանում ենք այս թվերից մեկը կամ գրանց միջև ընկած որևէ թիվ, օրինակ՝ «Նրան ուղեկցում էին տասնութսան ձիավորներ» (Բաֆֆի)։ «էս որ պատահեց, մեր Դավիթ հսկան Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան» (Թում.)։ «Ծերունին զուտ դրամ թողել է միայն սոկոսաբեր թղթերի մեջ՝ այն էլ ընդամենը շուս-հինգ հաշուր հազար ութսուր» (Շիրվ.)։ «Մեր ձմեռանոցը բաղկացած էր այդպիսի 35—50 խրճիթներից» (Անան.):

գ) Հաճախ կլոր թվերով արտահայտվում է ոչ թե կոնկրետ, այլ անորոշ քանակ, օրինակ՝ «Տաս անգամ եմ ասել»։ «Քսան անգամ գնացի-եկա, տանը շէր»։ «Հարյուր անգամ եմ զգուշացրել»:

դ) Անորոշ, ընդհանրապես մեծ քանակության գաղափարը սովորաբար արտահայտվում է հազար, հազար ու մի բառերով, օրինակ՝ «Հազար շար ու շատ, հազար հարամի, Հազար ջահելներ վխտում են հիմի» (Թում.)։ «Հազար ու մի կրակ ու ցավ, Հազար ու մի հոգսեր ունենք» (Թում.)։ «Սկսում է պատմել այն, ինչ հազար անգամ ասել է, և լսողն էլ հազար անգամ իմացել, որ սուտ է ասում» (Բակ.):

ե) Քանակական թվականների կրկնությամբ արտահայտվում է բաշման գաղափար, օրինակ՝ «Նրանք մի-մի գրիչ ստացան, երկու-երկու գիրք ստացան, երեք-երեք տետր ստացան»:

զ) Մեկ բառը կրկնելով արտահայտում է նաև մակբայական իմաստ՝ նշանակելով «երբեմն», օրինակ՝ «Մեկ-մեկ մոռանում եմ»։ «Մեկ-մեկ գալիս է մեր տուն»։ Այս իմաստն ունի նաև մին բառը հետևյալ կիրառություններում՝ «Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է զերթ գազան, Մին՝ վայրենի սուլում պես-պես, Աղմկում է տանիքում» (Թում.): Դրան ազատ կարող էր փոխարինել գրական մեկ ձևը:

է) Նշված է, որ քանակական թվականներն ընդհանրապես բայերի հետ գործածվել չեն կարող: Բայց «բանական քվական + անգամ» կապակցությունը ազատ գործածվում է բայերի հետ՝ ցույց տալով գործողության կատարման քանակը, օրինակ՝ «Երկու անգամ զգուշացրել է»։ «Երեք անգամ եմ ասել»։ «Հազար անգամ շնորհակալություն հայտնեց, հազար անգամ գլուխը խոնարհեց նրա առջև»:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Ինչպես որոշիչ դերում հանդես եկող մյուս խոսքի մասերը, այնպես էլ քանակական թվականները կարող են կիրառվել գոյականաբար և այդ

<sup>4</sup> Հմտ. Ս. Գյուրոդայան, Թվական անուն..., էջ 47:

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 514:

դեպքում նրանք արտահայտում են ոչ միայն թիվ, այլև առարկայական ընդհանուր գաղափար, որ կոնկրետանում է խոսքի շղթայում, օրինակ՝ «Երկուսն էլ ուրացել էին քրիստոնեությունը, երկուսն էլ ընդունել էին պարսից կրոնը» (Րաֆֆի)։ «Գոմում տեղավորված էին կոլխոզի ձիերը՝ փառնաբար լծի, մեկը հեծնելու» (Զար)։ «Բա որ վեցից հինգը կորան, տակը ի՞նչ մնաց» (Խանզ)։

Քանակական թվականների փոխանվանական կիրառությունը հայերենում շատ է տարածված։

#### Կոտորակային թվականներ

**ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ**։— Կոտորակային թվականները թվի հասկացություն են արտահայտում ամբողջի այս կամ այն մասերի միջոցով, օրինակ՝ «Դասարանում կային 36 աշակերտներ. դրանց մեկ երրորդը գերազանցիկներ էին, երկու երրորդը՝ հարվածայիններ»։ Տվյալ դեպքում ամբողջն այստեղ 36-ն է, որի մասերն արտահայտվում են կոտորակային մեծությունների միջոցով։

Կոտորակային թվականների իմաստային զլխավոր տարբերությունը բացարձակներից այն է, որ կոտորակային թվականները ոչ թե նշում են կոնկրետ թիվ, այլ մատնանշում են ամբողջի մասերը։ Այս պատճառով էլ, ասենք, մեկ ֆառոց կոտորակային թվականը իր կոնկրետ թվային բովանդակությունն է ստանում միայն խոսքի մեջ։ Ընդհանրապես մեկ ֆառոց նշանակում է միայն, որ մի ինչ-որ ամբողջ բաժանված է չորս մասի և այդ մասերից վերցված է մեկը։ Ժողովրդական լեզվում կոտորակային թվականները սովորաբար հենց այդպես՝ նկարագրական ձևով են արտահայտվում, օրինակ՝ տասից մեկը, քսանից չորսը, հարյուրից հինգը և այլն։

Կոտորակային թվականները բաղկանում են երկու մասից՝ քանակական թվականից (համարիչից), որ ցույց է տալիս թե ամբողջից քանի մաս է վերցրած և դասական թվականից (հայտարարից), որ ցույց է տալիս, թե ամբողջը քանի մասի է բաժանված) ինչպես՝ մեկ երրորդ, երկու երրորդ, չորս հինգերորդ, ութ տասներկուերորդ, յոթ տասնմեկերորդ, ինն քսանհինգերորդ և այլն։ Հաճախ հայտարար դասականի վրա ավելանում է ԱԿԱՆ մասնիկը. այս դեպքում տասը թվականից ունենում ենք տասներդական ձևը (առաջացած տասներորդական ձևից՝ եր հնչյունախմբի ղեղմամբ), ինչպես՝ հինգ տասներդական, երկու երրորդական, ութ տասնհինգերորդական, չորս հարյուրերորդական և այլն։

Երբ կոտորակային թվականի համարիչը մեկ բառն է. այն կարող է զևղվել։ Փոխանակ ասելու մեկ հինգերորդ մասը, մեկ վեցերորդ մասը և այլն, հաճախ ասում ենք՝ հինգերորդ մասը, վեցերորդ մասը։

Մեկ երկրորդի համար կա հատուկ բառ՝ կես. «Կես ժամից հետո

մենք ոչ միայն ուրախ ծիծաղում, այլև երգում էինք» (Մուր)։ «Կես ժամ չկար, ինչ հեռացել էր գյուղից» (Զար)։

Չորրորդ ձևից բացի կա նաև ֆառոց ձևը, օրինակ՝ «Քառորդ ժամ անցած Մմբատը դարձյալ հոր սենյակումն էր» (Շիրվ)։ «Բայց շանցավ ֆառոց ժամ, և ախոռից փչող հոտը սկսավ անհանգստացնել նրան» (Մուր)։

Կոտորակային թվականները գործածվում են ածականաբար մաս, բաժին ու նման բառերի կամ էլ շարժի միավորների հետ, օրինակ՝ մեկ երկրորդ մասը, երկու երրորդ բաժինը, հինգ ութերորդ հեկտար, չորս հինգերորդ տոննա և այլն։ Շատ հաճախված է կոտորակային թվականների գոյականական գործածությունը։ Այդ դեպքում նրանք պահանջում են սեռական (տրական) հոլով, օրինակ՝ «ուսանողների երկու երրորդը», «բերքի մեկ քառորդը», «արտադրանքի չորս հինգերորդը» և այլն։

#### ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

**ԸՆԴՉԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**։— Դասական են կոչվում այն թվականները, որոնք ցույց են տալիս միատեսակ առարկաների կարգը նրանց թվարկման ժամանակ (առաջին հանդիպում, երկրորդ հանդիպում, երրորդ հանդիպում)։

Ռուս լեզվաբանական գրականության մեջ դասական թվականների վերաբերյալ տարակարծություններ են եղել և մինչև այսօր էլ կան։ Որոշ բերականներ ելնելով իմաստից և քանակականների հետ ունեցած հարաբերակցություններից՝ դրանք համարում են թվականի մի տեսակը, որոշ բերականներ էլ ելնելով ձևաբանական, շարահյուսական ու բանական հատկանիշներից՝ գտնում են, որ դրանք ոչնչով չեն տարբերվում ածականներից<sup>6</sup>։

Նայ բերականագիտության մեջ այսպիսի հարց չի հղել, միայն, ինչպես նշված է արդեն, ելնելով խոսքի մասերի որոշման շարահյուսական հիմունքից՝ ածականի մի տեսակ է համարվել թվական անունն ընդհանրապես։

Նթե թվականն ընդունվում է որպես առանձին խոսքի մաս, իսկ գա այդպիս է, ապա ոչ միայն նպատակահարմար, այլև ավելի ճիշտ է դասականներն ուսումնասիրել թվականների և ոչ թե ածականների բաժնում, որովհետև դրանք ավելի մոտ են կանգնած առաջիններին, քան վերջիններին։

Հարցը ոչ միայն այն է, որ դասականները կազմվում են քանակականներից (դա, իհարկե, բավարար պայման չէ դրանք թվականներ

<sup>6</sup> Այս մասին տե՛ս Ե. Մ. Գալկինա-Փեդորուկ և ըր., Современный русский язык. М., 1958, էջ 212—214. А. М. Финкель, Н. М. Баженов, Курс современного русского литературного языка. Киев, 1965.



համարելու. չէ՞ որ, ասենք, հարաբերական ածականները ևս կազմվում են մյուս խոսքի մասերից, բայց դրանք չեն նույնացվում), այլև գլխավորապես այն, որ դասականները հայերենում ունեն կազմության հատուկ տիպ. նրանք կազմվում են ԵՐՈՐԳ կամ ԲՈՐԳ ածանցներով, և այդ ածանցները հատուկ են միայն ու միայն դասական թվականներին:

Գուցե դրա շափ կարևոր է քանակականների և դասականների ներքին կապը: Եթե ֆանկական թվականներով արտահայտվում է առարկաների հաշվումը ըստ ֆանակի (երեք հանդիպում, հինգ կրակոց), ապա զասական թվականներով արտահայտվում է առարկաների հաշվումը ըստ կարգի (երրորդ հանդիպում, հինգերորդ կրակոց)՝ վերոհիշյալներից ելնելով՝ դասականները պետք է համարել թվականների մի առանձին խումբ:

**ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.**— Ժամանակակից հայոց լեզվում դասականները կազմվում են քանակականներից ԲՈՐԳ կամ ԵՐՈՐԳ ածանցներով, ըստ որում՝ ԲՈՐԳ ածանցն են ստանում երկու, երեք և չորս թվականները՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, իսկ ԵՐՈՐԳ ածանցը՝ մնացածները՝ հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասներորդ, քսաներորդ և այլն: Եթե երկու, երեք և չորս թվականները հանդես են գալիս որպես բաղադրյալ թվականների վերջին բաղադրիչ, ապա դասականի կազմության ժամանակ դրանք ևս ստանում են ԵՐՈՐԳ մասնիկը, օրինակ՝ ֆաներկուերորդ, ֆաներեքերորդ, ֆանչորսերորդ, երկուհարյուրֆանչորսերորդ և այլն: Ինչպես օրինակներն են ցույց տալիս, բաղադրյալ թվականների դեպքում ԵՐՈՐԳ ածանցն ստանում է միայն վերջին բաղադրիչը:

Մեկ թվականից դասական չի կազմվում. այս իմաստով գործածվում է առաջ ձևից ին ածանցով կազմված առաջին բառը: Երբ մեկ բառը հանդես է գալիս որպես բաղադրյալ թվականների վերջին բաղադրիչ, ապա դրանից դասականներ կազմվում են, օրինակ՝ ֆանմեկերորդ, հիսուսմեկերորդ, հայտումեկերորդ:

Դասական թվականները փոխանվանաբար կիրառվելիս հոլովվում են ի հոլովման հարացույցով՝ երկրորդը—երկրորդի—երկրորդից—երկրորդով—երկրորդում, հինգերորդը—հինգերորդի—հինգերորդից—հինգերորդով—հինգերորդում և այլն:

**ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ.**— Դասական թվականները գրութայն մեջ արտահայտվում են.

<sup>7</sup> Դասական թվականներով ստարկայի թիվը, քանակը չի արտահայտվում: Երբ ասում ենք՝ հինգ ուսանող, ութ աթոռ, ապա ուսանողների, աթոռների թիվը հայտնի է, իսկ երբ ասում ենք՝ հինգերորդ ուսանող, ութերորդ աթոռ, դրանից չի երևում ուսանողների, աթոռների քանակը, այլ ճշվում է միայն այդ ստարկաների՝ հաշվման ժամանակ գրույթով կարգը:

ա) Ամբողջական բառերով՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, քսաներորդ և այլն:

բ) Հունական թվանշաններով՝ I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, L (50-րդ), C (100-րդ), D (500-րդ), M (1000-րդ):

գ) Արաբական թվանշաններով, որոնցից հետո դրվում է գծիկ և ԲԳ մասնիկը, իսկ մեկ թվականից հետո դրվում է ին՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 100-րդ և այլն:

դ) Հայերեն այբուբենի տառերով՝ Ա (առաջին), Բ (երկրորդ), Գ (երրորդ), Ժ (տասներորդ), Ծ (հարյուրերորդ), Ռ (հազարերորդ):

**ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**— Դասական թվականները, իրենց արտահայտած իմաստին համապատասխան, ածականի նման իրենց անփոփոխ ձևով դրվում են գոյականների վրա՝ հանդես գալով որոշիչ պաշտոնով, ինչպես՝ «վերցրեց երկրորդ թուղթը, դարձյալ տանուլ տվեց: Երբորդ թուղթը զարկեց և հեռացավ սեղանից» (Շիրվ.)- «Երբորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր: Ավին մինչև վերջն էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ» (Բակ.)- «Առաջին հարկում տեղավորված են հյուսնոցն ու նախկին տանտերերը, իսկ երկրորդ հարկում ապրում են սովորաբար գյուղի եկվոր աշխատողները» (Ջար.):

Որոշչային կիրառությունը դասական թվականների հիմնական կիրառությունն է:

Պետք է նկատի ունենալ, որ դասականի իմաստ կարող է արտահայտվել նաև քանակական թվականների միջոցով, հատկապես երբ նրանք գործածվում են ետադաս, օրինակ՝ հասցեների վրա հաճախ ենք կարդում՝ «Տուն 5, մուտք 4, բնակարան 22», «Շենք 25, մուտք 7, բնակարան 3» և այլն: Այսպես և՛ «Հատոր 4, էջ 225», «Հոդված 47» և այլն: Բոլոր դեպքերում քանակականներն ունեն դասականի արժեք:

Հայերենում տարբերվելը նշվում են քանակական թվականներով՝ 1825 թվին, 1931 թվին, 1977 թվին և այլն, բայց դրանք բոլորն ունեն դասական թվականի արժեք (համեմատել դարերի հետ, որոնք նշվում են դասականներով՝ չորրորդ դարում, իններորդ դարում, քսաներորդ դարում և այլն):

Իմաստային տեսակետից պետք է հաշվի առնել այն, որ որոշ կապակցությունների մեջ դասականներն արտահայտում են առարկայի որակական հատկանիշ, օրինակ՝ «առաջին, երկրորդ, երրորդ կարգի վարպետ, շենք, ապրանք» և այլն:

Դասական թվականներն ածականների նման ազատ կիրառվում են գոյականաբար և այդ դեպքում նրանք արտահայտում են ոչ միայն թվային կարգ, այլև առարկայական ընդհանուր գաղափար, որը բացահայտվում է կամ հենց տվյալ նախադասության մեջ, կամ կարող է թանձրացական բովանդակություն ստանալ ավելի ընդարձակ շարակարգի

հաշվամամբ, օրինակ՝ «Առաջինը սև ձիավորն էր, իսկ երկրորդը կապուտակ ձիավորը» (Բաֆֆի). «Բոլորը դատարկեցին մի-մի բաժակ, հետո երկրորդը, երրորդը, և նրանց արյունն ավելի տաքացավ» (Շիրվ.). «Քիչ անց եկավ մի կտոր էլ տարավ, ապա՝ երրորդը, չորրորդը և վերադարձավ մտավ իր բույնը» (Անան.). «Այնուհետև նա գազազած ընկավ նրանց հետևից և մթության մեջ որսալով՝ գլխատեց երկրորդին, երրորդին, չորրորդին...» (Ջար.). «Երևաց երկրորդ շունը, երրորդը, շների հետևից էլ Պանինը» (Բակ.):

Դասական թվականների փոխանվանական կիրառությունը հայերենում տարածված է ու զանգվածային:

#### Բաշխական թվականներ

**ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.**— Բաշխական են կոչվում այն թվականները, որոնք ցույց են տալիս առարկաների բաշխումը որոշ թվային քանակով:

Բաշխական թվականները կազմվում են երկու ձևով՝ ա) քանակական թվականներին ավելացնելով ԱԿԱՆ ածանցը, օրինակ՝ մեկական, երկուական, երեքական, չորսական, տասական, քսանական, հարյուրական, բ) քանակական թվականների կրկնությունը, օրինակ՝ մեկ-մեկ, երկու-երկու, հինգ-հինգ, ութ-ութ, քսան-քսան, հարյուր-հարյուր և այլն:

Բաշխական թվականները սովորաբար հանդես են գալիս որոշի, իսկ առանձին դեպքերում շփի պարագայի պաշտոնով, օրինակ՝ «Ուսանողներին երեքական գիրք նվիրեցին». «Երեխաներին տվեցին հրեգական խնձոր». «Ձորասյունները բաղկացած են վեցական ջոկատներից». «Աշակերտները երկու-երկու կանգնելով՝ շարք կազմեցին»:

## Դ Ե Ր Ա Ն ՈՒ Ն

### ԴԵՐԱՆՎԱՆ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՆԵՐԸ

**ԱՐԴԱՐԱՅՎԱՄ Է ԴԵՐԱՆՎԱՆ, ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԻ, ԱՆՉԱՏՈՒՄԸ.**— Հենց սկզբից նկատենք, որ առաջին հայացքից պարզ ու հասարակ թվացող այդ հարցին պատասխանելն այնքան էլ հեշտ չէ, և լեզվական փաստերի անկաշկանդ ու անկանխակալ գնահատումը առիթ է տալիս լուրջ խորհրդածությունների:

Որոշ լեզվաբաններ, ելնելով նրանից, որ դերանունները չունեն քերականական հատկանիշների ընդհանուրություն ու միասնություն, որ նրանց տարբեր խմբերը տարբեր խոսքիմասային առանձնահատկություններ են երևան հանում, լուծարում են դերանունը որպես խոսքի մաս՝ տեղաբաշխելով գոյականի, ածականի (թվականի) և մակբայի մեջ: Հարցըն այս ձևով է լուծվում, օրինակ, ոուս քերականության մեջ Ա. Պեդկովին, հայ քերականության մեջ՝ Մ. Աբեղյանը:

Հակառակ տեսակետի վրա կանգնած լեզվաբանները հարցի այսպիսի լուծման սխալը տեսնում են նրանում, որ դերանունները, արտահայտելով առարկա, հատկանիշ և հատկանիշի հատկանիշ ընդհանուր ձևով, առանց տարբերակման, առանձնանում են հարաբերակից համապատասխան խոսքի մասերից՝ գոյականից, ածականից, թվականից ու մակբայից և, հետևաբար, որպես ընդհանուր իմաստ արտահայտող բառեր, պետք է միավորվեն մի խոսքի մասի մեջ: Որ դերանունները ընդհանուր իմաստ արտահայտող բառեր են, — դրա մասին տարակարծություններ չկան: Ամբողջ հարցը հանգում է հետևյալին. կարելի՞ է արդյոք բոլորովին տարբեր խոսքիմասային առանձնահատկություններ գրսևորող բառեր միավորել մի կարգի տակ, չէ՞ որ դերանունները քերականական հատկանիշների միասնություն ու ընդհանրություն չունեն, իրարից տարբերվում են ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով՝ դրսևորելով գոյականի, ածականի ու մակբայի քերականական հատկանիշները: Դրան ի պատասխան՝ հակառակ տեսակետի կողմնակիցները նշում են, որ, ճիշտ է, դերանունները մի միասնական քերականական խումբ չեն կազմում և տարբեր քերականական առանձնահատկություններ են երևան հանում, բայց ունեն իմաստային

ընդհանրություն, ցույց են տալիս առարկա, հատկանիշ և հատկանիշի հատկանիշ ընդհանուր ձևով:

Ինչքան էլ որ այս տեսակետը տարածված լինի, դրա հետ չի կարելի համաձայնել: Ղերանունները իմաստային ընդհանրություն ևս չունեն: Եվ դժվար չէ համոզվել դրանում: Եթե ղերանունները իրո՞ք ունենալին իմաստային ընդհանրություն ու միասնություն, ապա նրանք միասեռ կլինեին նաև որևէ դրսևորած քերականական կարգերով ու հատկանիշներով: Այսպես, որովհետև, ասենք, գոյականները ունեն իմաստային ընդհանրություն, դրանով պայմանավորված, նրանց հատուկ են նույն քերականական կարգերը, և նախադասության մեջ նրանք հանդես են գալիս նույն շարահյուսական պաշտոններով: Կամ՝ քանի որ դիմավոր բայերը ևս ունեն իմաստային ընդհանրություն, ապա, դրանով պայմանավորված, սրանց ևս հատուկ են նույն քերականական կարգերը, և նրանք նախադասության մեջ հանդես են գալիս նույն շարահյուսական պաշտոնով: Եվ եթե ղերանունները չունեն միասնական քերականական հատկանիշներ, հենց այդ բանը մեզ հուշում է, որ նրանք չունեն և չեն էլ կարող ունենալ նաև ընդհանուր իմաստային նույնություն: Եվ իրոք, ղերանունների մի մասն արտահայտում է առարկայի (սա, դա, նա), մյուս մասը՝ առարկայի որակական հատկանիշի (այսպիսի, այդպիսի, այնպիսի), երրորդ մասը՝ առարկայի քանակային հատկանիշի (այսքան, այդքան, այնքան), իսկ մի շորորդ մասը՝ հատկանիշի հատկանիշի (այսպես, այդպես, այնպես) ընդհանուր հասկացություն: Եվ բոլորովին էլ հիմնադրուկ չէ տեսակետն այն լեզվաբանների, որոնք ղերանունները, ըստ իրենց արտահայտած տարբեր խոսքիմասային նշանակությունների, տեղաբաշխում են գոյականի, ածականի (թվականի) և մակբայի մեջ:

Բայց այստեղ առաջանում է մի անհարմարություն: Այսպես, սա, դա, նա, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսպես, այդպես, այնպես բառերը համապատասխանաբար համարելով գոյականներ, ածականներ, թվականներ և մակբայներ՝ լեզվաբանն ազամայից ստիպված է հենց գոյականների, ածականների, թվականների և մակբայների մեջ այդ բառերն առանձին խմբեր համարելու և գլխավորապես ոչ թե այն պատճառով, որ դրանք ընդհանուր, շտաբերակված իմաստ են արտահայտում (դա գուցե այնքան էլ էական չէ), այլ այն պատճառով, որ դրանք առարկայի և հատկանիշի ընդհանուր նշանակությունը արտահայտում են այս կամ այն հարաբերությամբ, ինչպես՝ սա—խոսողին մոտ մտածվող առարկա, դա—խոսակցին մոտ մըտածվող առարկա, նա—խոսողից և խոսակցից հեռու մտածվող առարկա: Հարաբերության այս նույն իմաստային կողմը, միայն հատկանշային նշանակության հետ միահյուսված, հանդես է գալիս նաև բերված մյուս ղերանունների մեջ՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի և այլն: Այս-

քանով էլ բերված բոլոր բառերը իրար հետ շփման եզրեր են հանգես բերում և կարող են միավորվել մի խմբի մեջ որպես ցուցական յուրահատուկ հարաբերություններ արտահայտող բառեր, այնպիսի բառեր, որոնք իրարից տարբերվում են ոչ թե նյութական, բառային իմաստով, այլ հարաբերության իմաստով:

Բայց ժամանակակից քերականական համակարգով ղերանուն համարվող բոլոր բառերին է արդյոք հատուկ «ցուցականության» հարաբերության իմաստը և եթե ոչ, ի՞նչ հատկանիշով են այդ բառերը մտցվում ղերանունների մեջ: Անցնենք այս հարցերի քննությանը:

Անձնական ղերանունները՝ ես, դու, նա (հոգնակի՝ մենք, դուք, նրանք), ցույց տալով խոսողը, խոսակիցը և այն անձը, որի մասին գրնում է խոսքը, իրենց արտահայտած իմաստով հավասարվում են բայի դեմքերին, ինչպես՝ գնացի (ես), գնացիր (դու), գնաց (նա), գնացինք (մենք), գնացիք (դուք), գնացին (նրանք): Բերվածներից միայն եղակի ու հոգնակի 3-րդ դեմքերն են, որ կարող են առարկայական իմաստ արտահայտող ամեն մի բառով ևս դրսևորվել, օրինակ՝ գնաց—ուսանողը, զինվորը, երեխան. գնացին—ուսանողները, զինվորները, երեխաները և այլն, և, հետևաբար, նա և նրանք ղերանունների տակ կարող է հասկացվել առարկայական իմաստ արտահայտող ամեն մի բառ:

Անձնական ղերանունները իրենց արտահայտած իմաստով փաստորեն հավասարվելով բայական դեմքերին՝ իրարից սոսկ տարբերվում են քերականական նշանակությամբ և կազմում են յուրահատուկ եռանդամ հակադրություն՝ արտահայտելով խոսողը, խոսակիցը և այն անձը, որի մասին գնում է խոսքը: Ճիշտ է, իրենց արտահայտած առարկայական իմաստով անձնական ղերանունները հավասարվում են գոյականներին, բայց նրանցից տարբերվում են իրենց քերականական նշանակությամբ, հարաբերության նշանակությամբ, որը գոյականների մեջ չկա: Այսպես, ես, դու, նա բառերը եռանդամ հակադրություն են կազմում, ապա ոչ մի գոյականի համար այսպիսի եռանդամ հակադրություն ցույց տալ հնարավոր չէ:

Իրենց արտահայտած հարաբերության նշանակությամբ անձնականների են մոտենում փոխադարձ ղերանունները՝ միմյանց, իրար, մեկմեկու, միայն դրանց մեջ, ինչպես անվանումն է ցույց տալիս, իշխում է առարկաների փոխադարձ հարաբերությամբ իրար հետ կապված լինելու նշանակությունը, օրինակ՝ «նրանք ճանաչեցին իրար»։ «նրանք սիրեցին միմյանց» և նմանները:

Ցայտուն դրսևորված ցուցական իմաստ են արտահայտում սա, դա, նա և այս, այդ, այն ղերանունները, որոնք ևս եռանդամ հակադրություն են կազմում, իրարից տարբերվելով ոչ թե բառային, այլ սոսկ քերականական՝ հարաբերության նշանակությամբ, այն է՝ սա, այս դերանունները գործածվում են այն դեպքում, երբ առարկան մոտ է առար-

չին դեմքին կամ այդպես է մտածվում, դա, այդ գործածվում են դեպքում, երբ առարկան մոտ է երկրորդ դեմքին, և նա, այն՝ այն դեպքում, երբ առարկան հեռու է առաջին և երկրորդ դեմքերից: Հասկանալի է, որ իրենց արտահայտած հարաբերության նշանակությունը այս դերանունները տարբերվում են գոյականներից (իսկ այս, այդ, այն դերանունները նաև ածականներից), որոնք տարածական այսպիսի հարաբերության նշանակություն չունեն և չեն էլ կարող ունենալ:

Այս, այդ, այն դերանուններով բաղադրվում են մի շարք բառեր՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, այսպես, այդպես, այնպես, այստեղ, այդտեղ, այնտեղ, որոնցում ևս այս, այդ, այն բաղադրիչների իմաստով պայմանավորված՝ գործ ունենք եռանդամ հակադրությունների հետ: Համապատասխան հակադրությունների անդամները ևս իրարից տարբերվում են ոչ թե բառային, այլ սոսկ քերականական նշանակությամբ, հարաբերության նշանակությամբ:

Դժվար չէ նկատել, որ ցուցականության, ակնարկելու իմաստը այս կամ այն շափով հատուկ է նաև մյուս ցուցական դերանուններին՝ սույն, նույն, միևնույն, մյուս և այլն, բայց անժխտելի է նաև այն, որ ցուցականության իմաստը դրանց մեջ ցայտուն ու վառ չի դրսևորվում թեկուզ և այնքանով, որ սրանք չունեն հարաբերակից հակադրվող անդամներ:

Այսքանով վերջացնել ցուցական դերանունների հարցը՝ անցնենք հարցականներին: Հարցական դերանունները մոտավորապես հետևյալներն են. ո՞վ, ի՞նչ, ինչպիսի՞, ինչքա՞ն, ինչչա՞փ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞ր, ո՞րքա՞ն, ո՞րչա՞փ, ո՞րպիսի՞, ո՞րե՞րոզ, ո՞րտե՞ղ, ե՞րբ, ո՞ւր, քանի՞, քանի՞սը, քանի՞երոզ: Բերված բառերի մեծ մասը բաղադրյալ է և իր կազմի մեջ ունի այս կամ այն դերանվանական բաղադրիչը: Եթե մի կողմ թողնենք բաղադրյալները և հաշվի առնենք միայն արմատականները, ապա արդի հայերենի հարցական դերանուններն են. ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ե՞րբ, ո՞ւր, քանի՞: Դրանցից ո՞վ և ի՞նչ բառերը առարկայական իմաստ են արտահայտում (ըստ որում, առաջինը՝ անձի, իսկ երկրորդը՝ ոչ անձի), ո՞ր, քանի՞ բառերը՝ հատկանիշի իմաստ (առաջինը՝ որակական հատկանիշի, իսկ երկրորդը՝ քանակական հատկանիշի), իսկ ե՞րբ և ո՞ւր բառերը՝ հատկանիշի հատկանիշի իմաստ (առաջինը՝ ժամանակի, իսկ երկրորդը՝ տեղի): Ինչպես տեսնում ենք, իմաստային տեսակետից բերված համապատասխան զուգբերի միջև շփման եզրեր չկան: Հասկանալի է, որ դրանց մեջ չի դրսևորվում նաև հարաբերության նշանակություն այն իմաստով, ինչ տեսանք, ասենք, ես, դու, նա, այս այդ, այն և այլ դերանունների մեջ: Այդ դեպքում բերված բառերը ի՞նչ հիմունքով են համարվում դերանուններ և ի՞նչ հիմունքով են միավորվում մի խմբի մեջ որպես դերանվան առանձին տեսակ:

Հարցի պատասխանը թաքնված է այս դերանունների հենց բուն

էություն մեջ: Բանն այն է, որ վերոհիշյալ դերանունները, որպես առանձին ու անկախ բառեր, հենց խոսքից, նախադասությունից դուրս, հատուկ հնչերանգ ունեն և դրանով էլ տարբերվում են դերանվան մեջ մտնող բառերի մյուս բոլոր խմբերից: Դրանում համոզվելու համար բավական է այս դերանունները համեմատել հարաբերակից մյուս դերանունների հետ, ինչպես՝ ես, դու, նա, բայց՝ ով, սա, դա, նա, բայց՝ ինչ, այս, այդ, այն, բայց՝ ուր, այսքան, այդքան, այնքան, բայց՝ քանի և այլն: Այսպիսով, պարզ է դառնում, որ հատուկ հնչերանգը բխում է վերոհիշյալ միավորների բուն բառային բնույթից և նրանց էությունն է կազմում:

Չունենալով իմաստային շփման եզրեր՝ ով, ինչ, ուր, քանի, երբ, ուր բառերը իրար հետ միավորվում են իրենց հատուկ հնչերանգի շնորհիվ:

Ինչպես գիտենք, նույն այդ հարցական դերանունները, երբ կիրառվում են բարդ նախադասության մեջ երկրորդական նախադասությունը գլխավորին կապելու համար, հարաբերական դերանուններ հորջորջմամբ համարվում են դերանունների առանձին տեսակ, օրինակ՝ «Հաղթեց նա, ով շատ էր պարապել»: «Բերեց այն, ինչ պատվիրել էի»: «Ծկավ այն ժամանակ, երբ ամեն ինչ վերջացել էր» և այլն:

Ս. Արբահամյանը անդրադառնալով այս հարցին՝ գրում է, որ ճիշտ չէ հարցականը և հարաբերականը դերանվան անկախ ու առանձին տեսակներ համարել:

Իրոք, հարցականը և հարաբերականը դերանվան առանձին տեսակներ չեն, քանի որ, ասենք, չունենք երկու ով բառ, երկու ինչ բառ և այլն, որոնցից մեկը հարցական, իսկ մյուսը հարաբերական դերանուն լինելու: «Ո՞վ եկավ», «Ով եկավ խմեց, գետը ցամաքեց», «Ո՞վ եկավ», «Դիտեմ, թե ով եկավ» նախադասություններում մենք գործ ունենք նույն և միևնույն ով բառի հետ, որը, ճիշտ է, տարբեր շարահյուսական ֆունկցիաներ է կատարում, բայց և չի դադարում միևնույն բառը լինելուց: Բերված նախադասությունների մեջ ով բառը, ըստ իր կատարած տարբեր ֆունկցիաների, տարբեր հնչերանգներ է ստանում, հնչերանգներ, բեր ֆունկցիաների, տարբեր հնչերանգներ է ստանում, հնչերանգների մյուս որոնցով նա տարբերվում է, ասենք, վերևի նախադասությունների մյուս բառերից: Ծվ քննարկվող դերանունների գլխավոր առանձնահատկությունն էլ հենց այն է, որ ի տարբերություն դերանունների մյուս խմբերի, դրանք ունեն հատուկ հնչերանգ, որը անկախ դիրքում հանդես է գալիս որպես հարցական հնչերանգ: Շարահյուսական տարբեր կապակցություններում, ըստ քննարկվող դերանունների խաղացած դերի, այդ հնչերանգը փոփոխությունների է ենթարկվում (բացականչություն, հատուկ շեշտվածություն), բայց որ միշտ էլ յուրահատուկ դրսևորումներ է ունենում, դա արդեն փաստ է: Ինչպես երևում է, հատուկ հնչերանգը վերոհիշյալ դերանունների էությունից բխող մի առանձնահատկություն է:

Գալով հարցական-հարաբերական դերանունների իմաստին՝ պետք է նշել, որ եթե դերանունները ունեն առարկայի կամ հատկանիշի ընդհանրական իմաստ, այսինքն՝ ընդհանուր իմաստ արտահայտող բառեր են, ապա ընդհանուր իմաստ արտահայտող այդ բառերի մեջ առաջին տեղն են գրավում հարցական-հարաբերական դերանունները: Դրանում համոզվելու համար բավական է նշել, որ, օրինակ, ով հարցի պատասխանը կարող է լինել ոչ միայն գոյականով, այլև դերանվամբ արտահայտված ամեն մի անձի անուն. ո՞վ— Գրիգորը, օւսուցիչը, բանվորը, ես, դու, նա և այլն: Կամ՝ ինչ հարցի պատասխանը կարող է լինել ոչ միայն գոյականով, այլև դերանվամբ արտահայտված ամեն մի իրի անուն. ի՞նչը—գիրքը, ծառը, սեղանը, սա, դա նա: Համեմատել նաև հետևյալները. ինչպիսի՞—մեծ, գեղեցիկ, խելոք, այսպիսի, այդպիսի, այնպիսի. ինչքա՞ն—մեկ, հինգ, ասու, այսքան, այդքան, այնքան և այլն:

Ահա թե ինչու հարցական-հարաբերական դերանունները կարգային (կատեգորիալ) արժեք ունեն:

Վերլուծության ոլորտներից դուրս մնացին անորոշ, որոշյալ և ժբտական դերանունները:

Ժամանակակից հայերենի քերականություններում սովորաբար անորոշ դերանուններ են համարվում հետևյալները. այլ, այսինչ, այնինչ, որոշ, ուրիշ, որևէ, որևիցե, երբևիցե, ոմն, մի, մեկը, ինչ-որ, ինչ-ինչ, մի քանի, մի քանիսը: Ինչպես անմիջաբար կարելի է նկատել, բերված բառերը չունեն ո՛չ իմաստային, ո՛չ ձևաբանական, ո՛չ էլ շարահյուսական կիրառությունների ընդհանրություն, և ոչ մի քերական չի կարող պատասխանել այն հարցին, թե դրանք ի՞նչ հատկանիշով են միավորված մի խմբի մեջ: Առաջին իսկ հայացքից պարզ է, ասենք, որ այլ և մի քանի, ուրիշ և երբևիցե, որոշ և ոմն բառերի միջև շփման եզրեր ամենևին չկան:

Մյուս կողմից՝ եթե մի քանի համարվում է անորոշ դերանուն, որովհետև ցույց է տալիս անորոշ թիվ, քանակ, նույն հատկությունն ունեն, ասենք, շատ, քիչ, բազմաթիվ, բազում և ուրիշ բառեր: Նույն տրամաբանությամբ սրանք ևս կարելի էր համարել «անորոշ դերանուններ»:

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից քերականությունների մեջ անորոշ դերանուն համարվածները բառերի միասնական խումբ չեն կազմում, և դրանց գոնե մեծ մասը չունի առանձնահատուկ գծեր, որոնցով, ասենք, տարբերվել սովորական ածականներից (օրինակ՝ որոշ, ուրիշ), մակբայներից (երբևէ, երբևիցե):

Որոշյալ դերանուններ են համարվում հետևյալները. ամեն, ամենքը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), ամեն մի (ամեն մեկը), ամեն ինչ, յուրաքանչյուր ոմ, ողջ, ամբողջ, համայն, ամենայն: Սրանք քերականական հատկանիշների յուրահատկություններ չեն դրսևորում և մի խմբի մեջ

են դասավորվում իրենց իմաստային «ընդհանրություններ», բայց այս բառերի մի մասը իմաստային ընդհանրությամբ ևս չի կարող միավորվել, օրինակ՝ յուրաքանչյուր ոմ և համայն:

Ժխտական դերանուններ են համարվում ոչինչ, ոչ ոմ, ոչ մի, ոչ մեկը բառերը: Սրանց միակ միավորիչ հատկանիշն այն է, որ ոչ ժխտական մասնիկով պայմանավորված՝ այդ բառերը ժխտական իմաստ են արտահայտում: Բայց թե դրանք որքանո՞վ են բառերի առանձին խումբ կազմում որպես «ժխտական դերանուններ» — ամենևին էլ պարզ չէ:

Նշենք, որ առանձին քերականներ ժխտական դերանուններ չեն ընդունում՝ դրանք տեղաբաշխելով որոշյալների մեջ, որպես նրանցից մի քանիսի ժխտական ձևեր՝ ամեն ինչ—ոչինչ, ամեն ոմ—ոչ ոմ, ամեն մի—ոչ մի: Այս ձևով հարցի մեջ քննարկվող տեսանկյունից հատկություն չի մտցվում, որովհետև որոշյալ դերանունները կառուցվածքի տեսակետից դառնում են ավելի խայտաբղետ:

Այսբանից հետո ո՞րն է ընդհանուր եզրակացությունը: Կարծում ենք վերլուծություններից պարզ դարձավ, որ ժամանակակից քերականություններում դեբանուն խոսքի մասի մեջ են միավորվում միանգամայն տարբեր իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ երևան հանող բառախմբեր: Այսպես էլ արդի քերականական համակարգով ներկայացված դեբանունները քերականական միասնական խումբ չեն կազմում: Բայց դրա հետ միասին անժխտելի է նաև այն, որ դեբանվան մեջ մտցվող առանձին բառախմբեր իրենց յուրահատուկ քերականական հատկանիշներով տարբերվում են բառերի մյուս բոլոր խմբերից: Դրանք են հատկապես անձնական, փոխադարձ, ցուցական և հարցական-հարաբերական դեբանունները: Ըստ երևույթից հենց այդ բառերն էլ կազմում են ժամանակակից հայերենի «իսկական» դեբանունները: Իսկ ինչ վերաբերում է անորոշ, որոշյալ, ժխտական դեբանուններին, ապա դրանք առանձնահատուկ քերականական հատկանիշներ երևան չեն հանում, և եթե մենք ևս վերջիններս ներկայացնում ու քննում ենք դերանունների բաժնում, ապա այդ անում ենք խիստ պայմանականությամբ՝ հետևելով ժամանակակից հայերենի քերականական համակարգով ընդունված դրույթներին: >

#### Դերանվան տեսակները

#### Անձնական դերանուններ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՄԱՍՏԸ. — ժամանակակից հայերենի անձնական դերանուններն են՝ եզակի 1-ին դեմք—ես, ինքս, 2-րդ դեմք—դու, ինքդ, 3-րդ դեմք—նա, ինքը, հոգնակի՝ 1-ին դեմք—մենք, ինքներս,

՝ Տի՛ս Ա. Արքահայր, ժամանակակից հայոց լեզվի քերականություն, էջ 100:

2-րդ դեմք—դուք, ինքներդ, 3-րդ դեմք—նրանք, ինքներ կամ իրենք: Այս դերանունները երբեմն կոչվում են նաև դիմային, որովհետև դեմք են ցույց տալիս:

Ես, ինքս անձնական դերանունները հավասարվում են խոսողի դեմքի հետ, ցույց են տալիս խոսողին, այսինքն խոսողն իրեն անվանում է այս դերանունների միջոցով, օրինակ՝ «Ես եմ ասում»։ «Ինքս եմ ասում»:

Դու, ինքդ անձնական դերանունները հավասարվում են խոսակցի հետ, ցույց են տալիս խոսակցին, այսինքն խոսողն այս դերանուններով անվանում է խոսակցին, օրինակ՝ «Դու ես ասում»։ «Ինքդ ես ասում»:

Նա, ինքը անձնական դերանունները ցույց են տալիս այն անձը, որի մասին խոսվում է, օրինակ՝ «Նա է ասում»։ «Ինքն է ասում»:

Մենք, ինքներս անձնական դերանունները ցույց են տալիս խոսողին և այն անձերին, որոնց անունից հանդես է գալիս խոսողը, օրինակ՝ «Մենք ենք ասում»։ «Ինքներս ենք ասում»:

Մենք դերանունը առանձին դեպքերում կարող է գործածվել ես դերանվան իմաստով՝ այսպիսով կատարելով ոճական հատուկ դեր և արտահայտելով համեստություն, իր «ես»-ը թաքցնելու ձգտում: Ոճական այդ հնարանքը հատկապես կիրառում են հեղինակները, և այդ իսկ պատճառով էլ մենք դերանվան այսպիսի կիրառությունը ես դերանվան իմաստով կոչվում է «հեղինակային մենք», օրինակ՝ «Մենք համաձայն շնք այդ դրույթին»։ «Մենք առաջ ենք քաշում նոր տեսակետ»։ «Մենք ունենք հետևյալ առարկությունները» և այլն:

Դուք, ինքներդ անձնական դերանունները ցույց են տալիս խոսակցին և այն անձանց, որոնց դիմում է խոսողը, օրինակ՝ «Դուք եք ասում», «Ինքներդ եք ասում»:

Դուք դերանունը դու դերանվան իմաստով է գործածվում քաղաքավարական դիմումի դեպքում, օրինակ՝ «Դուք, ընկե՛ր Սիրունյան, շափազանց սիրալիք եղաք իմ նկատմամբ»։ «Դուք, Հասմի՛կ, ինձ շատ եք դուր գալիս» և այլն:

Նրանք, իրենք կամ ինքները անձնական դերանունները ցույց են տալիս այն անձերին, որոնց մասին գնում է խոսքը, օրինակ՝ «Նրանք են ասում»։ «Իրենք են ասում»։ «Ինքներն են ասում»:

Ես||ինքս, դու||ինքդ, նա||ինքը, մենք||ինքներս, դուք||ինքներդ, նրանք||ինքները կամ իրենք համապատասխան զույգերը համանիշներ են, միայն ունեն իմաստային այն տարբերությունը, որ երկրորդների մեջ դեմքը շեղվում է, օրինակ՝ Ես եմ մեղավոր||ինքս եմ մեղավոր, Դու ես պատասխանատու||ինքդ ես պատասխանատու և այլն:

Նշենք նաև այն, որ այս զույգերը հաճախ կարող են միասին հանդես գալ՝ կատարելով ոճական հատուկ դեր և առանձնապես շեղտելով

դեմքի գաղափարը, ինչպես՝ «Ես ինքս ասացի», «Դու ինքդ ես մեղավոր», «Նա ինքը խոստովանեց» և այլն:

Ինքը, ինքները և իրենք դերանունները ունենալով երրորդ դեմքի իմաստ՝ ազատ կարող են գործածվել նաև գոյականների հետ, օրինակ՝ «Մմբատն ինքն է մեղավոր» կամ «Ինքը Մմբատն է մեղավոր», «Ուսանողներն իրենք էին եկել» կամ «Իրենք ուսանողներն էին եկել» և այլն: ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՉՈՒՐՈՒՄԸ.— Անձնական ես, դու, նա, ինքը, մենք, դուք դերանունները և ցուցական սա, դա (նա) դերանունները, ընդամենը ութ բառ, իրենց հոլովական առանձնահատկություններով տարբերվում են հայերենի հոլովոլոր մյուս բոլոր բառախմբերից: Գա հիմք է տալիս այս բառերի հոլովումը, ի տարբերություն մյուս բառերի հոլովման, կոչելու դերանվանական հոլովում: Այս հոլովման առանձնահատկությունները հետևյալներն են:

ա) Ի տարբերություն հայերենի մյուս բոլոր բառախմբերի, վերոհիշյալ բառերն ունեն վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական, այսինքն դերանվանական հոլովման դեպքում սեռականը և տրականը ձևաբանորեն տարբերակված են և անկախ հոլովներ են: Հարցական-հարաբերական ով դերանվան տրականը լինում է ում, այսինքն սա ևս պատկանում է դերանվանական հոլովման, այն տարբերությամբ, սակայն, որ սեռականի համար առանձին հոլովաձև չունի:

բ) Ի տարբերություն անվանական հոլովման, դերանվանական հոլովման դեպքում սեռական և տրական հոլովները, որպես կանոն, ոչ թե կազմվում են ուղղականից, այլ արտահայտվում են ուղղականից տարբեր բոլորովին առանձին արմատներով կամ հիմքերով, որոնք անկախ բառեր են և հիմքի ու վերջավորության շեն կարող տարբալուծվել, ինչպես՝ ես—իմ—ինձ, դու—քո—քեզ, նա—նրա—նրան, ինքը—իր—իրեն, մենք—մեր—մեզ, դուք—ձեր—ձեզ, սա—սառ—սրան, դա—դրա—դրան, (նա—նրա—նրան): Սրանցից միայն սա, դա, նա և ինքը դերանունների դեպքում է, որ սեռականի և տրականի դեպքում որոշ ձևային կապ է նկատվում:

գ) Դերանվանական հոլովման դեպքում ևս բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են անվանական հոլովման սովորական իՅ, ՈՎ և ՈՒՄ վերջավորություններով, բայց դրանք անպայմանորեն դրվում են տրականի ձևի վրա, ըստ որում, ես, դու, մենք, դուք դերանունների այս հոլովումները վերջավորություններից առաջ մտնում է՝ ն կամ Ան բաղադրամասը, և այսպիսով ստացվում են Եից||անից, Եով||անով, Եում||անում զուգաձևերը՝ ինձնից||ինձանից, ինձնով||ինձանով, ինձնում||ինձանում և այլն: Երկրորդ ձևերն ավելի հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին:

Առանձնահատուկ, դերանվանական հոլովում ունեցող անձնական դերանունների հոլովման հարացույցը.

Ուղղ. ես	դու	նա	ինքը	մենք	դուք
Սեռ. իմ	քո	նրա	իր	մեր	ձեր
Տր. ինձ	քեզ	նրան	իրեն	մեզ	ձեզ
Քաղ. ինձնից	քեզնից	նրանից	իրենից	մեզնից	ձեզնից
	ինձանից	քեզանից		մեզանից	ձեզանից
Գործ. ինձնով	քեզնով	նրանով	իրենով	մեզնով	ձեզնով
	ինձանով	քեզանով		մեզանով	ձեզանով
Ներգ. ինձնում	քեզնում	նրանում	իրենում	մեզնում	ձեզնում
	ինձանում	քեզանում		մեզանում	ձեզանում

Ինչ վերաբերում է մյուս անձնական դերանուններին, ապա դրանցից ինքս, ինքզ, ինքներս, ինքներդ չեն հոլովվում, իսկ նրանք և իրենք դերանունները հոլովվում են անվանական Ք/Յ հոլովման սովորական հարացույցով՝ նրանք - նրանց - նրանցից - նրանցով - նրանցում, իրենք - իրենց - իրենցից - իրենցով - իրենցում, այսինքն ունենում են ոչ թև Ծ, այլ 5 հոլով:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Արտահայտելով առարկայական նշանակություն՝ անձնական դերանունները նախագասության մեջ հանդես են գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, այսինքն՝ ենթակայի, խնդիրների և այլ պաշտոններով, ինչպես՝ «Նա իր տան համար պաշարեղենն ինքն է տուն բերում իր ձեռքով առավոտները կանուխ» (Շիրվ.). «Ես քեզ սիրում եմ, դու չես մեռել, Ես ամենուրեք քեզ եմ որոնում» (Տեր.). «Տո՛ւր ինձ իմ հոր հրեղեն ձեռք, Տո՛ւր ինձ իմ հոր Թուր-Կեծակին, Տո՛ւր ինձ իմ հոր գոտին ոսկի, Տո՛ւր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն» (Թում.). «Գու անհոգ նայեցիր իմ վրա Ու անցար քո խաղով կանացի, Ես քեզից դառնացած հեռացա, Ես քեզնից հեռացա ու լացի» (Տեր.) և այլն:

Ցուցական դերանուններ

ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ, ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Ժամանակակից հայերենի ցուցական դերանուններն են համարվում հետևյալները. սա, դա, նա, այս, այդ, այն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այսպես, այդպես, այնպես, նույնպես, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ, սույն, նույն, միևնույն, մյուս:

Մրանցից պարզ կամ արմատական են՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն:

Սկզբից վերլուծենք պարզ արմատական ցուցականների արտահայտ-

մած իմաստները, որոնցով կնախանշվեն դրանցով բաղադրված մյուս դերանունների իմաստները:

ՍԱ, ԴԱ, ՆԱ. — Այս դերանունների իմաստների ու կիրառությունների համար պետք է նկատի ունենալ հետևյալները:

1. Սա, դա, նա դերանունները մատնացույց կարող են անել և՛ առարկա, և՛ անձ, օրինակ՝ «Սա մեր տունն է, գնանք մեզ հյուր» (Խանգ.). «Սասունցի Դավթին ուներ մի քեռի, Սա էլ իմացավ համբավը կովի» (Թում.): Առաջին նախագասության մեջ սա դերանունը իր է մատնացույց անում, իսկ երկրորդ նախագասության մեջ՝ անձ:

2. Արևելահայերենում սա, դա, նա դերանունները միշտ առարկայական-գոյականական իմաստ են արտահայտում, ի տարբերություն, ասենք, արևմտահայերենի, որտեղ կարող են ածականական-հասկանալի իմաստ ևս արտահայտել, ինչպես՝ «Լմնցենք սա գործը». «Մո՛, սա փոշին տուր». «Կաղաչեմ անգամ մը ձեր ոտքն անցունեիք սա կոշիկները (Պար.):

Արևելահայերենում, ինչպես նաև արևելյան բարբառներում ընդհանրապես, սա, դա, նա դերանունները ածականական-որոշչային կիրառություն չունեն:

3. Սա, դա, նա դերանունները բոլորն էլ երրորդ դեմքի են, և դա դրսևորվում է բայ-ստորոգյալների հետ ունեցած համաձայնություններով, որքանով որ բոլորն էլ երրորդ դեմքով դրսևորված ստորոգյալ են պահանջում, ինչպես՝ Սա եկավ, դա եկավ, նա եկավ. Սա ասաց, դա ասաց, նա ասաց: Նույն ձևով և դրանց հոգնակիները՝ Մրանք եկան, դրանք եկան, նրանք եկան. Մրանք ասացին, դրանք ասացին, նրանք ասացին:

4. Սա, դա, նա դերանունները չեն տարբերվում նաև առարկայական նշանակությամբ այնքանով, որքանով որ լինելով դերանուններ՝ դրանք երեքն էլ առարկայական ընդհանուր հասկացություն են արտահայտում: Այս դեպքում ո՞րն է այս դերանունների իմաստային տարբերությունը:

Այս տարբերությունն այն է, որ սա դերանունը ցույց է տալիս, որ առարկան մոտ է խոսողին կամ այդպես է մտածվում, դա դերանունը ցույց է տալիս, որ առարկան մոտ է խոսակցին կամ այդպես է մտածվում, իսկ նա դերանունը ցույց է տալիս, որ առարկան առաջին և երկրորդ դեմքերից հեռու է կամ այդպես է մտածվում:

Այսպիսով, պարզ է դառնում, որ սա, դա, նա դերանունները շատ բերվելով առարկայական նշանակությամբ՝ տարբերվում են քերականական նշանակությամբ՝ մատնացույց անելով առարկան ըստ առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքի նկատմամբ ունեցած տարածական հարաբերության:

Ցուցական դերանունների իմաստային ու կիրառական առանձնա-

հասկոթյունների ընդհանուր բնութագրումից հետո անցնենք նրանց հոլովմանը:

Սա, դա, նա ցուցականները հայերենի հազվադեպ այն բառերից են, որոնք ենթարկվում են դերանվանական հոլովման, սեռականի և տրականի համար ունեն ատանձին ձևեր և հետևաբար՝ 6 հոլով: Այս դերանունների սեռականը ոչ թե կազմվում է ուղղականից, այլ լեզվի ժամանակակից փուլի տեսակետից փաստորեն մի նոր բառ է, ինչպես՝ սա—սրա, դա—դրա, նա—նրա, այսինքն ուղղականը և սեռականը հանդես են գալիս որպես տարարմատ կամ տարահիմք ձևեր: Քննարկվող դերանունների տրականն է սրան, դրան, նրան, որտեղ տրականը սեռականից տարբերվում է ն հնչյունով: Դա ծագմամբ հայերենի ն որոշիչ հոգն է, որը վերոհիշյալ ձևերի մեջ որպես հոգ չի գիտակցվում: Սրան, դրան, նրան ձևերը փաստորեն ընկալվում են որպես պարզ բառեր, որոնք ձևավորանորեն անտարրալուծելի են:

Սա, դա, նա դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են տրականից՝ անվանական հոլովման սովորական իՅ, ՈՎ, ՈՒՄ վերջավորություններով: Ըստ այդմ, այս դերանունների հոլովման հարացույցը հետևյալն է.

Ուղղ.	սա	դա	նա
Սեռ.	սրա	դրա	նրա
Տր.	սրան	դրան	նրան
Բաց.	սրանից	դրանից	նրանից
Գործ.	սրանով	դրանով	նրանով
Ներգ.	սրանում	դրանում	նրանում

Որպես առարկայական նշանակություն արտահայտող բառեր, սա, դա, նա ցուցականներն ունեն հոգնակի ձևեր: Ձևային տեսակետից այս դերանունների հոգնակի թիվը կազմվում է Ք մասնիկով, որ դրվում է տրականի ձևի վրա, ինչպես՝ սա—սրան—սրանք, դա—դրան—դրանք, նա—նրան—նրանք: Այսպիսով, ստացվում են ԱՆՔ վերջավորվող ձևեր, որոնք հոլովվում են Ք/Յ հոլովման սովորական հարացույցով, այսինքն քննարկվող դերանունները հոգնակի թվում ունեն 5 հոլովական ձև՝ սեռական-տրական հոլովը կազմելով Ք/Յ հերթագայությունը, իսկ մյուս թեք հոլովները՝ սեռական-տրականի ձևից՝ անվանական հոլովման սովորական իՅ, ՈՎ, ՈՒՄ վերջավորություններով:

Սրանք, դրանք, նրանք դերանունների հոլովման հարացույցը.

Ուղղ.	սրանք	դրանք	նրանք
Սեռ. տր.	սրանց	դրանց	նրանց
Բաց.	սրանցից	դրանցից	նրանցից
Գործ.	սրանցով	դրանցով	նրանցով
Ներգ.	սրանցում	դրանցում	նրանցում

Առարկայական իմաստ արտահայտող սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք ցուցական դերանունները նախադասության մեջ հանդես են գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, ինչպես՝ «Սա էր մնացել. սա էլ անպատճառ Մեր գլխին մի նոր կրակ է բերում» (Թում.). «Դա կտակ չէ, այլ խրատ՝ մի ապուշ քահանայի ձեռքով» (Շիրվ.). «Արեգակը թեքվել էր դեպի մուտքը, և նրա վերջին ճառագայթները ողողել էին բուսականությունից զուրկ, անհրապույր քաղաքը և նրա առջև տարածված ծովի մակերևույթը» (Շիրվ.). «Դրանք երկու սուրհանդակներ էին» (Րաֆֆի) և այլն:

ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ.— Այս դերանունները իմաստային ու կիրառական շփման եզրեր ունենալով սա, դա, նա դերանունների հետ՝ վերջիններից տարբերվում են նրանով, որ արտահայտում են և՛ հատկանշային, և՛ առարկայական նշանակություն՝ նախադասության մեջ հանդես գալով ածականին և գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով:

Ունենալով հատկանշային նշանակություն՝ այս, այդ, այն ցուցականները դրվում են գոյականների վրա, երբ առարկան մատնացույց է արվում կամ ակնարկվում է, ըստ որում այս դերանվամբ մատնացույց է արվում խոսողին մոտ կամ մոտ մտածվող, այդ դերանվամբ՝ խոսակցին մոտ կամ մոտ մտածվող, իսկ այն դերանվամբ՝ և՛ խոսողից, և՛ խոսակցից հեռու գտնվող կամ մտածվող առարկա, օրինակ՝ այս գիրքը, այդ գիրքը, այն գիրքը. այս երեխան, այդ երեխան, այն երեխան և այլն:

Ըստ իրենց արտահայտած այդ իմաստի՝ այս, այդ, այն ցուցականները նախադասության մեջ հանդես են գալիս որոշիչ շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Այս աշխարհում և ոչ մի բան գին չունի» (Իս.). «Ինձ ո՞վ է մատնել այս մառախուղին» (Տեր.). «Դեռ ժամանակը չէ այդ ծանր խնդիրը որոշելու» (Շիրվ.). «Այդ բակում օդը ծանր էր, խեղդվում էր» (Անան.). «Այն ժամանակ նոր կնոջից եղած զավակները կհամարվեն նրա օրինական ժառանգները» (Շիրվ.):

Առարկայական, գոյականական նշանակությամբ այս, այդ, այն դերանունները հավասարվում են սա, դա, նա դերանուններին՝ նախադասության մեջ հանդես գալով ենթակայի, ուղիղ խնդրի և ստորոգելիական վերադրի շարահյուսական պաշտոններով. այլ պաշտոններով հանդես գալ չեն կարող, որովհետև չեն հոլովվում: Նշենք նաև, որ այս դերանունները չեն կազմում հոգնակի թիվ:

Այս, այդ, այն ցուցականների գոյականական կիրառության մի քանի օրինակներ. «Մի ահալոր գուշակություն էր այս» (Զար.). «Այդ մի երկհարկանի շինություն էր» (Շիրվ.). «Այն գիշերն է, այն հուշերն են տրամաշուք, Այն աստղերն են ցուրտ երկնքում երազում» (Տեր.). «Այդ ես գիտեմ, և դրանից է իմ հոգին խռով» (Զար.). «Հայրդ գիտեր այդ և դրա համար քեզ հանձնեց բոլոր գործերը» (Շիրվ.):



Այս, այդ, այն դերանունները Արարատյան և ընդհանրապես արևելյան բարբառ-  
ներում էս, էդ, էճ ձևերն ունեն: Արարատյան բարբառի կամ խոսակցական լեզվի  
ազդեցությամբ այս ձևերը գործածվում են նաև գեղարվեստական գրականության մեջ:  
հիշենք Հ. Թումանյանի ստեղծագործությունները, որտեղ էս-ն ու էճ-ը գերիշխող են:  
Դրանք նույն ձևով հանդես են գալիս նաև բաղադրությունների մեջ՝ կազմելով էս-  
պիսի, էդպիսի, էճպիսի, էսպես, էդպես, էճպես, էստեղ, էդտեղ, էճտեղ և այլ ձևերը:  
Նշենք նաև, որ էս, էդ, էճ և այլ ձևերը գործածական են միայն գեղարվեստա-  
կան գրականության մեջ, որտեղ կատարում են ոճական ճատուկ դեր՝ լեզվին հա-  
ղորդելով ժողովրդական երանգ: Գրական լեզվի մյուս ոճերում, որպես կանոն, գոր-  
ծածովում են միայն այս, այդ, այն ձևերը:

ՍՈՒՅՆ, ՆՈՒՅՆ.— Գրաբարում կային սոյն, դոյն, նոյն ցուցական-  
ները, որոնք համանիշ էին այս, այդ, այն ցուցականներին, այսինքն՝  
սոյն-ը ցույց էր տալիս առաջին, դոյն-ը՝ երկրորդ, իսկ նոյն-ը՝ երրորդ  
դեմքի նկատմամբ ունեցած տարածական հարաբերություն: Սրանցից  
դոյն (>դոյն) ձևը գործածությունից դուրս է եկել: Ժամանակակից հա-  
յերենում գործածվում են միայն սույն (<սոյն) և նույն (<նոյն) ձևերը:

Սույն դերանունը փոխառություն է գրաբարից և ունի սահմանա-  
փակ գործածություն՝ մեծ մասամբ հանդիպելով պաշտոնական փաս-  
տաթղթերում, բարձր ոճի գրվածքներում և այլն, օրինակ՝ «Սույն դի-  
մումով հայտնում եմ ձեզ...», «Սույն հայտարարությունը կազմված է  
3 լեզուներով»: «Սույն պայմանագիրը ուժի մեջ կմտնի նրա ստորագրե-  
ման օրից» և այլն: Բոլոր դեպքերում սույն դերանվան մեջ զգացվում է  
առաջին դեմքի հետ ունեցած տարածական հարաբերության որոշ իմաստ:

Նույն դերանվան մեջ մեռած է երրորդ դեմքի հետ ունեցած տա-  
րածական հարաբերության նշանակությունը, և նա գործածվում է խոս-  
քի մեջ արդեն նշված հատկանիշը մատնացույց անելու համար՝ առանց  
նկատի ունենալու նրա՝ 1-ին, 2-րդ կամ 3-րդ դեմքերի նկատմամբ ու-  
նեցած հարաբերությունը, օրինակ՝ «Լուրը նույն ժամին տարածվեց ամ-  
բողջ քաղաքում»: «Նույն օրը երեկոյան Սմբատի և Միքայելի միջև տեղի  
ունեցավ առաջին ընդհարումը» (Շիրվ.):

Գրաբարյան նոյն բառի սեռականը՝ նորին, ժամանակակից հայե-  
րենում որոշակի բառերի հետ կազմում է կապակցություններ, որոնք  
խոսքին հաղորդում են վեհություն ու հանդիսավորություն, օրինակ՝  
«Նորին մեծությամբ թագավոր-կայսրը»: «Նորին մեծության կառավա-  
րությունը»: «Նորին սրբազանության մուտքը հանդիսավոր էր»: «Նորին  
վեհափառության Ամենայն Հայոց Հայրապետը հաճել է օրհնության  
կոնդակ հղել առ ձերդ ազնվություն ազնվազարմ Սմբատ Ալիմյան»  
(Շիրվ.):

Միևնույն դերանունը համանիշ է նույն դերանվանը, միայն դրա  
մեջ նույնության, նույնը լինելու գաղափարն ավելի է շեշտված, օրի-  
նակ՝ «Նա դառնացած էր, բայց միևնույն ժամանակ զգում էր մի տե-

սակ հոգեկան թեթևություն»: «Սմբատը լուռ, անշարժ կանգնած էր միև-  
նույն դիրքում» (Շիրվ.):

Այժմ անցնենք արմատական ցուցականներով բաղադրված դերա-  
նունների քննությանը: Ավելորդ կրկնություններից խոսափելու համար  
այստեղ միանգամից նշենք, որ այս, այդ, այն ցուցականներով կազմե-  
ված բոլոր դերանունների մեջ, ինչպես՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի,  
այսպես, այդպես, այնպես, այստեղ, այդտեղ, այնտեղ և այլն, մնում  
է այդ դերանուններին հատուկ հարաբերության իմաստը, ուստի և այդ  
մասին խոսք կլինի միայն անհրաժեշտության դեպքում:

ԱՅՍՊԻՍԻ, ԱՅԴՊԻՍԻ, ԱՅՆՊԻՍԻ, ՆՈՒՅՆՊԻՍԻ.— Հարաբերակից են  
ածականներին: Այսպիսի, այդպիսի, այնպիսի դերանունները ցույց են  
տալիս այնպիսի ընդհանուր հատկանիշ, որը տարածական հարաբերու-  
թյուն ունի 1-ին (այսպիսի), 2-րդ (այդպիսի) և 3-րդ (այնպիսի) դեմ-  
քերի հետ, օրինակ՝ այսպիսի աղջիկ, այդպիսի աղջիկ, այնպիսի աղջիկ-  
այսպիսի գիշեր, այդպիսի գիշեր, այնպիսի գիշեր և այլն:

Ինչպես արդեն օրինակներն են ցույց տալիս, դերանուններն ունեն  
ածականական կիրառություն և նախադասության մեջ հանդես են գա-  
լիս որոշիչ շարահյուսական պաշտոնով:

Նույնպիսի դերանունը հարաբերակից է այսպիսի, այդպիսի, այն-  
պիսի դերանուններին, միայն իմաստային տեսակետից վերջիններից  
տարբերվում է նրանով, որ նույն դերանվան նշանակությանը համա-  
պատասխան, մատնացույց է անում նախօրոք նշված հատկանիշը՝ ա-  
ռանց նրա 1-ին, 2-րդ կամ 3-րդ դեմքի նկատմամբ ունեցած հարաբե-  
րությունը նկատի ունենալու, օրինակ՝ «Նույնպիսի համարձակություն  
ցուցաբերեց նաև նա»: «Նրան նույնպիսի վերաբերմունք ցույց տվին  
նաև հայրենիքում» և այլն:

Այսպիսի, այդպիսի, այնպիսի դերանունները բաղադր-  
յալ են կազմված այս, այդ, այն, նույն + պես + ի բաղադրիչներից: Կազ-  
մության տեսակետից այստեղ ուշագրավն այն է, որ մակբայներից Ի  
ածանցով կազմվում են հատկանիշ արտահայտող բառեր՝ ածականներ:  
Սա հայերենի համար անսովոր բառակազմություն է և հանդիպում է  
միայն դերանվանական կազմություններում:

ԱՅՍՊԵՍ, ԱՅԴՊԵՍ, ԱՅՆՊԵՍ.— Հարաբերակից են մակբայներին:  
Սովորաբար գործածվում են բայերի հետ՝ հանդես գալով ձևի պարա-  
գալի շարահյուսական պաշտոնով: Կարող են դրվել նաև ածականների  
վրա, ինչպես՝ Այսպես խոսեց, Այդպես խոսեց, Այնպես խոսեց: Այսֆան  
պարզ, Այդֆան պարզ, Այնֆան պարզ և այլն:

Սրանց հարաբերակից է նույնպես ձևը, օրինակ՝ «Նույնպես խոսեց  
նաև հաջորդ հոստորը», «Նույնպես վերաբերվեց նաև նրա ընկերը» և  
այլն: Բայց դա ավելի հաճախ շղկապական կիրառություն ունի, օրի-

նակ՝ «նա նույնպես այս կարծիքին է»։ «Դու նույնպես չէիր մասնակցում խորհրդակցութեանը»։

ԱՅՍՔԱՆ, ԱՅԴՔԱՆ, ԱՅՆՔԱՆ, ՆՈՒՅՆՔԱՆ||ԱՅՍՉԱՓ, ԱՅԴՉԱՓ, ԱՅՆՉԱՓ, ՆՈՒՅՆՉԱՓ.— Համապատասխան զույգերը համանիշներ են և ունեն նույն իմաստն ու կիրառությունները, միայն վերջինները առաջինների շափ գործածական չեն։

Այս դերանուններն ունեն մակբայական և ածականական կիրառություն և դեր, այսինքն դրվում են և՛ բայերի (նաև ածականների), և՛ գոյականների վրա, ինչպես՝ ա) Այսֆան, այդֆան, այնֆան խոսեց, գրեց, կերավ. Այսֆան, այդֆան, այնֆան ջերմ, պայծառ, սիրելի, բ) Այսֆան, այդֆան, այնֆան մարդ, ուսանող, քնակարան և այլն։

Քննարկվող դերանուններն առաջին դեպքում հանդես են գալիս շափի ու աստիճանի պարագայի, իսկ երկրորդ դեպքում՝ որոշչի պաշտոնով։

Ըստ իմաստի և կիրառության այսֆան, այդֆան, այնֆան դերանուններին զուգակից է նույնֆան դերանունը, միայն այն տարբերությամբ, որ սրա մեջ դիմային հարաբերակցության իմաստ չի դրսևորվում, օրինակ՝ «նույնֆան աշխատեց նաև հաջորդ օրը»։ «նույնֆան բարի է նաև նրա եղբայրը»։ «նույնֆան ուսանողներ էլ մեր ֆակուլտետում կան»։

Այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ դերանունների վրա առանձին կանգ առնելու հարկ չկա, որովհետև, ինչպես նշված է արդեն, դրանք իմաստով և կիրառությամբ հավասարվում են այսֆան, այդֆան, այնֆան, նույնֆան դերանուններին։

ԱՅՍՍԵՂ, ԱՅԴՍԵՂ, ԱՅՆՍԵՂ.— Ունեն մակբայական կիրառություն։ Որպես կանոն, գործածվում են բայերի հետ և ցույց են տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը՝ հանդես գալով տեղի պարագայի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Այստեղ ոչինչ չի մեղմացնում արեգակի տրոպիկական տապը» (Շիրվ.)։ «Փոեցեք այստեղ մարմինս հլու» (Տեր.)։ «Այդտեղ լավ էր, խոտառատ, զով» (Անան.)։ «Այնտեղ մի պողպատե պահարանի մեջ փայփայելով պահում է այն արեխները» (Շիրվ.)։

Սպասելի նույնտեղ բաղադրությունը չկա (սպասելի ենք ասում, որովհետև ունենք հարաբերակից նույնպես, նույնպիսի, հույնֆան, նույնչափ բաղադրությունները)։

Այստեղ, այդտեղ, այնտեղ դերանունները հոլովվում են Ի հոլովման սովորական հարացույցով՝ այստեղ—այստեղի—այստեղից—այստեղով։ Ներգոյական հոլով չեն կազմում, որովհետև դրանց ուղիղ ձևերը հենց ներգոյականի իմաստ են արտահայտում, օրինակ՝ «նա ապրում է այստեղ» (հմմտ. «նա ապրում է գյուղում»)։ «Այդտեղ լավ հանգստացանք» (հմմտ. «Առողջարանում լավ հանգստացանք»)։

Նշենք նաև, որ լեզվում կան նաև այս տեղը, այդ տեղը, այն տեղը,

այս տեղի, այդ տեղի, այն տեղի և այլ պարզ շարահյուսական կապակցությունները։

Մյուս.— Դերանուն է համարվում նաև մյուս բառը։ Սա արտահայտում է հաջորդություն և ունի ցուցականության որոշ երանգ, ինչպես՝ մյուս գիրքը, մյուս արժույթ, մյուս փողոցը, մյուս տարի։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, մյուս բառը իմաստով մոտավորապես հավասարվում է հաջորդ ածականին, և ինքն էլ ազատ կերպով կարող է ածական համարվել։

Փոխադարձ դերանուններ

ՓՈՒՍԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ, ՀՈՂՈՎՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Ժամանակակից հայերենի փոխադարձ դերանուններն են միմյանց, իրար, մեկմեկու (մեկմեկի)։ Փոխադարձ դերանունները ցույց են տալիս իրար հետ փոխադարձ հարաբերության մեջ գտնվող առարկաներ, օրինակ՝ «Սուրենը և Արամը օգնում են իրար»։ «Համաիկը և Թուգանը գոհ են միմյանցից» և այլն։ Օրինակներից միաժամանակ երևում է, որ փոխադարձ դերանունները հոգնակի իմաստ ունեն։

Արտահայտելով առարկայական նշանակություն՝ նրանք հոլովվում են։ Փոխադարձ դերանունների հոլովական առանձնահատկությունն այն է, որ զուրկ են ուղղական հոլովածից և ունեն 4 հոլով՝ սեռական-տրական, բացառական, գործիական և ներգոյական։ Միմյանց, իրար, մեկմեկու ձևերը ինքնին սեռական-տրականի իմաստ ունեն։ Այս բառերի մյուս հոլովները կազմվում են վերոհիշյալ ձևերից ԻՑ (Ց), ՈՎ, ՈՒՄ վերջավորություններով։ Ըստ այդմ, փոխադարձ դերանունների հոլովման պատկերը հետևյալն է։

Ուղղ.	—	—	—
Սեռ.—տր.	միմյանց	իրար	մեկմեկու
Բաց.	միմյանցից	իրարից	մեկմեկուց
Գործ.	միմյանցով	իրարով	մեկմեկով
Ներգ.	միմյանցում	իրարում	մեկմեկում

Փոխադարձ դերանունները նախադասության մեջ հանդես են գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, միայն այն տարբերությամբ, որ ենթակայի պաշտոն կատարել չեն կարող, որովհետև հետև, ինչպես նշեցինք, ուղղական հոլովածն ունեն, օրինակ՝ «Թրկուսն էլ ճանաչում են միմյանց» (Բաֆֆի)։ «Որքան ենք մենք խաղացել, իրար սիրել ու ծեծել» (Թում.)։ «Մենք առհավետ շղթայված ենք մեկմեկու» (Տեր.)։ «Ծա ու դու էլ շղթայված ենք իրարու, կարոտավառ երազում ենք միշտ իրար» (Տեր.)։ «Մեզ կյանքը նետեց միմյանցից հեռու» (Տեր.)։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, իրար ձևին զուգահեռ գոյություն ունի նաև իրարու ձևը: Դա ժողովրդական-խոսակցական է:

Հարցական դերանուններ

**ԱՐԴԻ ՀԱՅՆՈՒՆԻ ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**— Արդեն նշված է, որ հայ (ինչպես և օտար լեզուների) քերականություններում նույն բառերը հարցական կամ հարաբերական դերանուններ են համարվում ըստ իրենց կատարած շարահյուսական տարբեր կիրառությունների: Սակայն կասկած չի կարող լինել, որ հարցականները և հարաբերականները ոչ թե դերանվան տարբեր տեսակներ են, այլ նույն բառերը, որոնք հանդես են գալիս շարահյուսական տարբեր կիրառություններով: Չնայած դրան՝ հետևելով հայերենի քերականության ավանդույթներին, այլև օտար լեզուների քերականական համակարգերին՝ մենք ևս հարցականները և հարաբերականները ներկայացնում ենք առանձին-առանձին:

Ժամանակակից հայերենի հարցական դերանունները մոտավորապես հետևյալներն են. ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ինչպիսի՞, որպիսի՞, ինչքա՞ն, ինչչա՞փ, որքա՞ն, որչա՞փ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞րե՞րորդ, որտե՞ղ, ե՞րբ, ո՞ր, քա՞նի, քանի՞սը, քանի՞երորդ:

Այս բառերը ընդհանուր իմաստի և շարահյուսական կիրառությունների միասնություն չունեն, և միակ ընդհանուր հատկանիշը, որ միավորում է դրանց մի խմբի մեջ, գուցե հատուկ հնչերանգն է: Ելնելով դրանից էլ՝ մենք այդ դերանունները կբնենք կամ առանձին-առանձին, կամ խմբերով՝ վերջին դեպքում նկատի ունենալով հարցական դերանունների մեջ մտնող որոշ բառերի իմաստային ընդհանրությունն ու շարահյուսական կիրառությունների նույնությունը:

**Ո՞վ.**— Արտահայտում է հարցում անձի մասին: Սեռական-տրական հոլովն է ում, այսինքն ենթարկվում է դերանվանական հոլովման. բացառականը՝ ումից, գործիականը՝ ումով, ներգոյական հոլով չունի: Հոգնակին է ովքեր, որը չի հոլովվում:

Իր առարկայական էությունը համապատասխան՝ ով դերանունը նախադասության մեջ հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, օրինակ՝ «Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջա՛ն, Ո՞վ անիծեց, Մարո ջա՛ն» (Թում.). «Ո՞վ է անվերջ հեծեծում, Ո՞վ է կանչում այսպես ուշ, Ո՞վ է շրջում անդադար, Ո՞ւմ է կանչում հիմա նա» (Տեր.). «Ո՞ւմ շնորհավորես, ո՞ւմից ստանաս մտքումդ փայփայած երազները» (Անան.):

**Ի՞նչ.**— Արտահայտում է հարցում իրի մասին: Հոլովվում է անվանական Ի հոլովման հարացույցով՝ ինչ-ինչի-ինչից-ինչով-ինչում: Հոգնակին է ինչեր, որը կրկին հոլովվում է Ի հոլովմամբ:

Արտահայտելով ընդհանուր առարկայական նշանակություն՝ ինչ դերանունը նախադասության մեջ հանդես է գալիս գոյականի շարահյուսական պաշտոններով, օրինակ՝ «Ի՞նչը, հորեղբայր, ի՞նչը, ի՞նչն եկավ» (Թում.). «Ի՞նչ անեմ, Իսակ, ասա՛, ի՞նչ անեմ,— հարցնում էր նա ստեպստեպ Մարութխանյանին» (Շիրվ.). «Խելքդ ի՞նչ է կտրում, ովքե՞ր են ձկան թշնամիները» (Անան.):

Ինչ դերանունը միաժամանակ ունի նաև ածականական-հատկանշային նշանակություն և մոտավորապես արտահայտում է ինչպիսի դերանվան իմաստը՝ նախադասության մեջ հանդես գալով որոշի շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ «Քեզ ի՞նչ խոսքերով սփոփեմ հիմա, Ի՞նչ արցունքներով հիմա հեկեկամ» (Տեր.). «Աչո՛ւն, քեզ ի՞նչ քնքնությունս, ի՞նչ խոսքերով երգեմ ես» (Տեր.). «Ի՞նչ լուսավոր բաներ էիր պատմում ինձ այն խավար գիշերներին» (Անան.):

**Ո՞ր.**— Արտահայտում է հարցում առարկայի որակական հատկանիշի մասին և ըստ այդմ նախադասության մեջ հանդես է գալիս որոշի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Ո՞ր կողմից եկար դու, Որտե՞ղից նետեցիր քո նետերն իմ հեռուն» (Տեր.). «Այդ ո՞ր ստամբակն էր հոխորտաց» (Ջար.). «Բա քեզ ո՞ր օրվա համար եմ հաց ուտեցնում» (Անան.):

Ո՞ր դերանունը կիրառվելով որոշիչ հոդով և հոլովվելով՝ արտահայտում է առարկայական նշանակություն՝ և հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, օրինակ՝ «Ո՞րը գնաց, ո՞րը մնաց», «Ո՞րը տանեմ, ո՞րը թողնեմ» և այլն:

Ո՞ր դերանվան հոգնակին է որո՞նք: Սա իր առարկայական էությունը համապատասխան՝ կիրառվում է գոյականի շարահյուսական պաշտոններով, օրինակ՝ «Որո՞նք են գեղեցիկ», «Որո՞նք վերցրեց», «Որոնցի՞ց ընտրեցիր» և այլն:

Որ դերանունը հոլովվում է Ի, իսկ օրոնք դերանունը՝ Ք/Յ հոլովմամբ:

**Ինչ՞որի՞սի՞, Որ՞որի՞սի՞.**— Արտահայտում են հարցում առարկայի որակական հատկանիշի մասին և ըստ այդմ խոսքի մեջ հանդես են գալիս որոշի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Ինչպիսի՞ վերաբերմունք ցույց տվեցին». «Ինչպիսի՞ աշխատող ես ուզում». «Որպիսի՞ վերաբերմունք». «Որպիսի՞ հանդեսություն» և այլն:

Ինչպիսի՞ և որպիսի՞ դերանունները գոյականաբար կարող են կիրառվել հազվադեպ, այն էլ սովորաբար հոգնակի ձևով, որն ուղղականում ունենում է նՅՐ կամ Ք մասնիկները՝ ինչպիսիքները||որպիսիքները, ինչպիսիք||որպիսիք: Առաջին ձևերը հոլովվում են Ի հոլովմամբ, իսկ վերջին ձևերը չեն հոլովվում:

**Ինչ՞ա՞ն, Ինչ՞ա՞ք՞||Որ՞ք՞Ա՞ն, Որ՞ք՞Ա՞ք.**— Դրանցից ավելի գործածականները ինչքա՞ն և որքա՞ն բառերն են: Արտահայտում են հարցում

կամ առարկայի քանակային հատկանիշի, կամ գործողութիւն (հատկանիշի) դրսևորման շափի մասին: Առաջին դեպքում հանդես են գալիս որոշիչ, իսկ երկրորդ դեպքում՝ շափի պարագայի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ ա) «Ինչքան մարդ էր հավաքվել», «Որքան մարդ էր հավաքվել», «Ինչքան բնակարան է կառուցվել», «Որքան բնակարան է կառուցվել», «Ինչքան լորեքան է աշխատեց», «Ինչքան լորեքան է խմեց»:

**ՔԱՆԻ՞Ր, ՔԱՆԻ՞ՍԸ.**— Առաջինն արտահայտում է հարցում առարկայի քանակային հատկանիշի մասին և նախադասութիւն մեջ հանդես է գալիս որպէս որոշիչ, օրինակ՝ «Քանի՞ ուսանող», «Քանի՞ բնակարան», «Քանի՞ գյուղ» և այլն: Երկրորդը քանակային հատկանիշ ու առարկայական ձևն է, որն իր մեջ ներառելով քանակային հատկանիշ ու առարկայական նշանակութիւն և հոլովվելով՝ նախադասութիւն մեջ կատարում է գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններ, օրինակ՝ «Քանի՞ սը հաջող հանձնեցին, քանի՞ սը կտրվեցին», «Քանիսի՞ խրախուսեցին», քանիսի՞ ներկայացրին կառավարական պարզակի», «Քանիսի՞ ցես գոհ, քանիսի՞ ցես դժգոհ» և այլն:

**ՈՐՏԵ՞Ղ.**— Արտահայտում է հարցում գործողութիւն կատարման տեղի մասին: Պատասխանը կարող են լինել սեռական-տրական և ներգոյական հոլովներով կամ տարածական կապերով արտահայտված պարագաներ, օրինակ՝ «որտե՞ղ» — ծովափին, գյուղում, աղբյուրի մոտ, ծառի տակ, սեղանի վրա, պատի տակ և այլն: Որտե՞ղ բառի թեք հոլովական ձևերն են «որտեղի՞», «որտեղի՞ց», «որտեղով», որոնց պատասխանները համապատասխանաբար լինում են տեղի անունների սեռական-տրական, բացառական և գործիական հոլովաձևերը:

Ահա որտե՞ղ դերանվան կիրառութիւն մի քանի օրինակներ. «Որտե՞ղ էիր սայթաքում, մայր իմ, քո քաղցր բեռի տակ» (Անան.). «Յո՛ւյց տուր մի տեսնեմ, Որտե՞ղ են ուզում» (Թում.). «Ե՛վ արդյոք որտեղի՞ց, որտեղի՞ց Սպասեմ ավետիք ու խնդում» (Տեր.):

**Ո՞ՒՐ.**— Համանիշ է որտե՞ղ դերանվանը, միայն ո՞ւր դերանվան մեջ կա տարածական ուղղութիւն լրացուցիչ երանգ: Արտահայտում է հարցում գործողութիւն կատարման տեղի մասին, օրինակ՝ «Ո՞ւր փախար դու, Մարո ջան» (Թում.). «Արդյոք ո՞ւր ես, խորհրդավոր արշալույս» (Տեր.). «Իսկ դու ո՞ւր մնացիր, ինչո՞ւ չհասար քո երազած լուսափթիթ ավերը» (Անան.): Ի տարբերութիւն որտեղ դերանվան՝ ուր-ը չի հոլովվում:

**ԻնՉՊԵ՞Ս.**— Արտահայտում է հարցում գործողութիւն կատարման ձևի մասին և, ըստ այդմ, հանդես է գալիս ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Չի՞մա դու կհարցնես, թե հեռվից ինչպե՞ս որոշեցի՞ ձուկ կա՞, թե՞ չէ» (Անան.). «Ինչպե՞ս է այս մարդն ընկել Քաշարան» (Խանգ.):

Սրան համանիշ է ժողովրդական ո՞նց ձևը՝ ինչպե՞ս տեղ հասարկ

ո՞նց տեղ հասար, Քեզ ինչպե՞ս ընդունեցին՝ Քեզ ո՞նց ընդունեցին և այլն:

**Ե՞ՐԲ.**— Արտահայտում է հարցում գործողութիւն կատարման ժամանակի մասին: Բացի ուղիղ ձևից, ունի նաև սեռական-տրական և բացառական հոլովաձևեր՝ երբ-երբվա-երբվանից: Օրինակներ. «Ե՞րբ է մուրհակի ժամանակը լրանում» (Շիրվ.). «Կուրծքը հե առած, հավքից թե առած» — Ե՞րբ կգա նա. Իմ սրտում սառած այս աշունը թաց. — Ե՞րբ կգա նա» (Տեր.). «Հացը թա՞րմ է, երբվա՞ թխած է». «Երբվա՞ թթվասեր է». «Երբվանի՞ց է այսպես համեստ դարձել». «Երբվանի՞ց է հիվանդ»:

**ԻնՉՈ՞Ւ.**— Արտահայտում է հարցում գործողութիւն կատարման պատճառի մասին, օրինակ՝ «Ինչո՞ւ իզուր հանգցնում ես Ջահել կրակն աչքերիդ» (Թում.). «Ինչո՞ւ տղամարդիկ այդչափ անխիղճ են, ինչո՞ւ չգիտեն, թե որքան դառն է խաբող ամուսնու և խաբված սիրուհու վիճակը: Ինչո՞ւ, վերջապես, նրանց համար այդքան դուրին է թիթեռի պես ծաղկից ծաղիկ թռչելը» (Շիրվ.). «Ինչո՞ւ է շուրջս աշխարհը լուռ, ո՞վ է իմ հոգու լույսերը մարել» (Տեր.):

**ՀԱՐՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԱՆԳՆԵՐԸ.**— Հաճախ քննարկվող դերանուններն ունենում են ոչ թե հարցական, այլ արտասանական այլ երանգներ, որոնք գրավոր խոսքի մեջ արտահայտվում են բացականչական նշանով կամ շեշտով, երբեմն էլ դրանք հատուկ կետադրական նշանով շեն նշվում:

Ստորև բերվում են այսպիսի կիրառութիւնների օրինակներ:

«Ե՛վ իմ մուրը ուղիներում, ո՛վ գիտե, Գուցե մի օր դու երևաս, լուսերես» (Տեր.). «Ո՛վ չէր ճանաչում կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին» (Շիրվ.). «Հենց հեռվից միայն վրանների տեսքից անծանոթ մարդը որոշում էր, թե ո՛վ ինչպե՛ս է ապրում, ո՛վ ի՛նչ աստղի տակ է ծնվել» (Անան.). «Որքան հիշողութիւններ էին վերականգնվել նրա մեջ, որպիսի՞ ծանր մտքեր էին այնպիսի շուն ուղեղն այն հարազատ միջավայրում» (Շիրվ.). «Որքան ենք մենք խաղացել, Իրար սիրել ու ծեծել» (Թում.). «Ա՛հ, որքան հուսախաբ արավ նրան այդ սիրված որդին և որքան տանջանքներ պատճառեց, որպիսի՞ հոգեկան սիրված որդին և որքան տանջանքներ պատճառեց, որպիսի՞ հոգեկան սիրված որդին» (Շիրվ.). «Ես չգիտեմ՝ ո՞ւր են տանում հեռավոր Ուղիների ժպավեններն անհամար» (Տեր.). «Ո՞ւր է քու հոր հրեղեն ձին, Ո՞ւր է քու հոր Թուր-կեծակին, Ո՞ւր է քու հոր գոտին ոսկի, Ո՞ւր է քու հոր ծալ-ծալ կապեն» (Թում.):

Հասկանալի է, որ այսպիսի դեպքերում ևս գործ ունենք նույն «հարցական» դերանունների հետ, որոնք արտասանվելով զանազան հնչերանգներով, խոսքին հաղորդում են զգացական այս կամ այն երանգը:

ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Հարաբերակաւն են կոչվում նույն հարցական դերանունները, երբ խոսքի մեջ կատարում են շարահարկական հատուկ դեր՝ երկրորդական նախադասութիւնը կապելով գլխավորին: Այսպիսի կիրառութեամբ հարաբերական դերանուններն իրենց ֆունկցիայով հավասարվում են ստորադասական շղկապներին, սակայն վերջիններից տարբերվում են նրանով, որ նախադասութեան անդամ են դառնում. մյուս կողմից՝ դրանցից առարկայական նշանակութիւն ունեցողները հոլովվում են:

Հարաբերական դերանունները գլխավոր նախադասութիւնների մեջ հաճախ ունենում են իրենց հարաբերակից հարաբերակները, օրինակ՝ «Հարգում եմ նրան, ով աշխատասեր է». «Բերեցի այն, ինչ պատվիրել էիր». «Կգամ այն ժամանակ, երբ աշխատանքն ավարտած կլինես» և այլն:

Նշենք նաև այն, որ հարաբերական դերանունների հետ հաճախ գործածվում է որ բառը և այսպիսով ստացվում են ով որ, ինչ որ, երբ որ, որտեղ որ և այլ բաղադրյալ ձևերը:

Ստորև բերվում են հարաբերական դերանունների կիրառութեան օրինակները:

«Երնե՛կ նրան, ով իր գործով Կապրի անվերջ, անդադար» (Թում.). «Ով մինն ուներ—տասն եմ բերել: Ով տասն ուներ—Քսանն արել» (Թում.). «Ով որ նրանց պաշտպանն է, մեր թշնամին է» (Րաֆֆի). «Ինչ ունես, շունես, Հավաքիր ինձ տուր» (Թում.). «Նա արել է այն, ինչ որ շատերն են անում» (Շիրվ.). «Կինը նրա բարձի տակից դուրս բերեց մի մեծ ծրար, որը կնքված էր զմուռսով» (Շիրվ.). «Ով չի սիրի նրան, որի շունը կյանք է բաշխում, որի մի հայացքը պարզեցում է հավիտենական երջանկութիւն» (Րաֆֆի). «Երկինքը պատած էր մոխրագույն, թանձր ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի Կրկուտ և Նեմրոթ լեռների կողմերը» (Րաֆֆի). «Երբ ինն ամիս ինը ժամն անցավ, Առյուծ-Մհերը զավակ ունեցավ» (Թում.). «Լսե՛լ ես արդո՞ք այս երգը դուրսից, երբ այրում է քեզ մի անուշ թախիծ, երբ քարն ես գրկում, օրհնում ջուր ու հող, երբ հեկեկում ես անբարբառ բախտից» (Տեր.). «Ուր ահեղ կովով չի մտնիլ արքան, Ղոնախ է աշուղն իրեն սագի հետ» (Թում.). «Իմ գերեզմանը թող լինի հեռվում, Ուր մահացել են շշուկ, երգ ու ձայն» (Տեր.). «Ուրտեղ մթնի, այնտեղ քնեմ միայնակ, Վառ աստղերի, կապույտ երկնի ծածկի տակ» (Իս.). «Ուրեմն մերձենում էր, այնքան աճում էր նա, այնքան սոսկալի ձև ստանում» (Րաֆֆի). «Ուրեմն դառն լինե՞ր մոլորութիւնը, այնքան բազր էր նրա հետևանքը» (Շիրվ.). «Ինչպես ու աշնան ծաղկունքը թռչնած, Ինչպես ցուրտ ձմառն Աղբյուրը լոնց Սառույցների տակ, Այնպես էլ, ավա՛ղ, Կյանքս թառամեց» (Իս.):

Հարաբերական ֆունկցիան բխում է այս դերանունների բուն էությունից, այն է՝ ընդհանուր անորոշ իմաստից:

Որոշյալ դերանուններ

ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ժամանակակից հայերենի քերականութիւններում որոշյալ դերանուններ են համարվում ամեն(ը), ամեն մի, ամեն մեկը, ամենք, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), ամեն ինչ, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ողջ(ը), ամբողջ(ը), համայն, ամենայն բառերը: Եթե բառակապակցութիւնների ձևով հանդես եկածները հաշվի չառնենք, որոշյալ դերանունների թիվը կնվազի և կմնան միայն ամեն, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, համայն, ամենայն բառերը:

Իրենց ձևաբանական հատկանիշներով ու շարահարկական առանձնահատկութիւններով այս բառերը սովորական ածականներից համարյա թե չեն տարբերվում, համարյա ենք ասում, որովհետև, համեմայն դեպս, դրանցից մի քանիսը որոշ յուրահատկութիւններ են երևան հանում: Այսպես, Ս, Դ, Ն||Ը հողերը, դրվելով դրանցից մի մասի վրա, ցայտուն դրսևորված դիմորոշ իմաստ են արտահայտում, ինչպես՝ բռյուրս, բոլորդ, բոլորը, ամենքս, ամենքդ, ամենքը, յուրաքանչյուրս, յուրաքանչյուրդ, յուրաքանչյուրը: Որոշյալ դերանունների մյուս առանձնահատկութիւնը գուցե այն է, որ դրանցից մի մասի անորոշ և որոշյալ ձևերը ոչ թե իրարից տարբերվում են սոսկ փոխանվանական կիրառութեամբ (ինչպես այդ նկատվում է, օրինակ, սովորական ածականների դեպքում՝ մեծ—մեծը, սև—սևը և այլն), այլ կարծես թե առանձին բառեր են՝ հատկանշային և առարկայական նշանակութեամբ, օրինակ՝ բոլոր—բոլորը, յուրաքանչյուր—յուրաքանչյուրը, ամեն—ամենը|| ամենք, ողջ—ողջը:

Հայերենի քերականութիւններում որոշյալ դերանունները սովորաբար, ըստ իրենց ընդհանրական իմաստի դրսևորման տարբերութիւնների, բաժանվում են 3 խմբի.

ա) Դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկաների քանակային ամբողջութիւնը՝ չնշելով այդ ամբողջութեան մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Դրանք են՝ ամենքը՝ բոլոր(ը):

բ) Դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկաների կամ նրանց քանակի ամբողջութիւնը՝ շեշտելով ամբողջութեան մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Դրանք են՝ ամեն, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի, ամեն մեկը, յուրաքանչյուր, յուրաքանչյուր ոք: Այս խմբի մեջ են տեղաբաշխվում նաև ոչինչ, ոչ ոք, ոչ մի (ոչ մեկը) ժխտական դերանունները այն հիմունքով, որ դրանք ևս ընդհանրական իմաստ են արտահայտում՝ միայն ժխտական ձևով:

գ) Դերանուններ, որոնք ցույց են տալիս մի առանձին առարկայի ամբողջությունը: Դրանք են ողջ, ամբողջ, համայն, ամենայն:

Իմաստային այս դասակարգումից գուցե ավելի կարևոր է որոշյալ դերանունների կիրառական-շարահյուսական դասակարգումը. Ըստ կիրառության որոշյալ դերանունները բաժանվում են երկու խմբի՝ հասկանալի և առարկայական իմաստ արտահայտող դերանուններին:

Հասկանալի իմաստ արտահայտող որոշյալ դերանուններն են՝ ամեն, ամեն մի, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, համայն, ամենայն: Դրանք նախադասության մեջ, որպես կանոն, հանդես են գալիս ածականին հատուկ շարահյուսական պաշտոնով, այսինքն՝ որոշի պաշտոնով, ինչպես՝ «Լեռն են բոլոր աղմուկները շար, խոսքերը պատիր» (Տերվ.): «Ամբողջ կյանքն անց է կացրել անդու գործունեությանը» (Շիրվ.): «Անցնում է, հսկում սեղաններն ամեն» (Թում.): «Ամեն արարած աստղ ունի այնտեղ» (Իս.): «Պոետները ողջ տիրել են, ցավել» (Թում.): «Լի ամենայն զարհուրանքով, կանգնած է Անուշ բերդը» (Բաֆֆի): «Ամեն մի մարդ ինքն է պատասխանատու թե՛ այս, թե՛ մյուս աշխարհում իր անհատական կյանքի համար» (Շիրվ.):

Առարկայական իմաստ արտահայտող որոշյալ դերանուններն են՝ ամենք||ամենք, ամեն մեկը, բոլորը, յուրաքանչյուրը, ամեն ինչ, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ողջը, ամբողջը: Սրանք նախադասության մեջ հանդես են գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, ինչպես՝ «Շատ շատերը գիտեին, որ այդ բոլորը մտացածին է» (Շիրվ.): «Բոլորն ուրացար, փողպալատ դարձար» (Թում.): «Ամենին աշխատում էին որսալ նրա հայացքը» (Շիրվ.): «Մասն ամենիին հաշտեցրել էր նրա հետ, ամեն ոք աշխատում էր իր վշտակցութունն արտահայտելու գավակներին» (Շիրվ.): «Մի վայրկյան ամենից հեռանալ, Ամենին մոռանալ» (Տերվ.): «Ամեն ինչ ունի շինող մի կյանք» (Տերվ.): «Յուրաքանչյուրը վախենում էր մի գուցե լուրը հասնի միլիոնների ժառանգին» (Շիրվ.): «Իրան, Թուրան ողջ եկել են» (Թում.): «Ամեն միև մի մոր որդի, Ամեն միև մի տան ճրագ» (Թում.):

Վերջին՝ ամեն միև միև ժողովրդական-բարբառային է, սրա գրական է ամեն մեկը. «Ամեն մեկը մի մոր որդի, ամեն մեկը մի տան ճրագ»:

Գրաբարից փոխառյալ է ամենեցուն ձևը, որ նշանակում է ամենքին, բոլորին՝ «Արդ, Բահայան կամքով ասում եմ ես ամենեցուն» (Զար.):

Առարկայական իմաստ արտահայտող որոշյալ դերանունները հոլովվում են Ի հոլովման սովորական հարացուցով՝ բոլորը-բոլորի, ամենքը-

ամենքի, ամեն ինչ-ամեն ինչի, ամեն մեկը-ամեն մեկի: Ամեն ոք, յուրաքանչյուր ոք բառերը չեն հոլովվում:

### ԺԵՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

ԺԵՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ժխտական դերանուններ են համարվում ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը բառերը: Սրանք իրենց իմաստով համապատասխանաբար հավասարվում են ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի, ամեն մեկը որոշյալ դերանուններին, միայն այն տարբերությամբ, որ ժխտականները բացասական, ժխտական իմաստ ունեն, ինչպես՝ ամեն ոք—ոչ ոք, ամեն ինչ—ոչինչ, ամեն մի—ոչ մի, ամեն մեկը—ոչ մեկը: Ահա թե ինչու Ս. Աբրահամյանը, ինչպես նշված է արդեն, առանձին ժխտական դերանուններ չի ընդունում և դրանք տեղաբաշխում է որոշյալ (ընդհանրական) դերանունների մեջ: Քննենք արդի հայերենի ժխտական դերանուններն առանձին-առանձին:

ՈՉՈՒՉ.— Արտահայտում է ընդհանուր առարկայական նշանակություն բացասական, ժխտական իմաստով, ինչպես՝ «Այստեղ ոչինչ չի մեղմացնում արեգակի տրոպիկական տապը» (Շիրվ.): «Մինչև հնարավոր եզրերը վայելիք կյանքը, ոչինչ ու ոչ ոքի մի խնայիր» (Խանգ.): «Մայրս քաշվելուց ոչինչ չասաց» (Անան.):

ՈՉԻՆՉ բառի իմաստը կարելի է արտահայտել ոչ մի բան կապակցությամբ, օրինակ՝ Ոչինչ չգիտի||Ոչ մի բան չգիտի, Ոչինչ չկարողացավ պատասխանել||Ոչ մի բան չկարողացավ պատասխանել և այլն:

ՈՉ ՈՔ.— Ցույց է տալիս ամբողջությամբ ժխտվող անձի անուններ, օրինակ՝ «Ոչ ոք չէր համարձակվում բարձր խոսել» (Շիրվ.): «Այլևս ոչ ոք չէր բամբասում, ոչ ոք չէր ասում, թե Մարկոս աղան, եղել է խաբեբա, կողոպտիչ» (Շիրվ.): «Ոչ ոք չգիտեր, որ ձկների մեծ բազմություն է ապրում այնտեղ» (Անան.): «Ծվ ինձ խավարից ոչ ոք չի կանչում» (Տերվ.):

ՈՉ ՄԵԿԸ.— Իմաստային տեսակետից չփման եզրեր ունի ոչ ոք դերանվան հետ, միայն այն տարբերությամբ, որ ոչ մեկը դերանունը և՛ անձի, և՛ իր նշանակությամբ կարող է գործածվել: Այսպես, Ոչ ոք չէ լսում||Ոչ մեկը չէր լսում, Ոչ ոք չէր կարեկցում||Ոչ մեկը չէր կարեկցում նախադասությունների մեջ ոչ մեկը դերանունը անձ է ակնարկում, իսկ Բոլոր գրեթե էլ հանձնել եմ գրադարան, ոչ մեկը չեմ պահել. Բոլոր հույսերս խորտակվեցին, ոչ մեկը չիրականացավ նախադասությունների մեջ ոչ մեկը դերանունը իր է ակնարկում:

Մի երկու օրինակ գեղարվեստական գրականությունից. «Ոչ մեկը գուրի չունեիր Տեր-Աշոտի լուսավոր գաղափարները լսելու» (Շիրվ.): «Ու մի հավատալ երբեք ոչ մեկին» (Թում.):

<sup>2</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 100—110:  
184

ՈՉ ՄԻ.— Ունի ածականական կիրառություն, այսինքն դրվում է առարկայական իմաստ արտահայտող բառերի՝ գոյականների վրա՝ հանդես գալով որոշիչ շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ Ոչ մի ասող չէր երևում այդ գիշերը» (Րաֆֆի)։ «Եվ ոչ մի գործ նա չի վարել ազնվաբար» (Շիրվ.)։ «Լուին խորհում են երկինք, գետ ու արտ, Եվ ո՛չ մի շարժում, Եվ ո՛չ մի հնչյուն» (Տեր.)։ «Էլ չկա ոչ մի լուսեղեն տագնապ, Եվ ոչ մի երան, և ոչ մի երազ» (Տեր.)։

Այս և նախորդ օրինակները ցույց են տալիս, որ եթե նախադասության մեջ կա ժխտական դերանուն, ապա ստորոգյալը ժխտական խորհարհում է ունենում, ինչպես՝ «Ոչինչ չօգնեց», «Ոչինչ չգիտի», «Ոչ ոք չեկավ», «Ոչ մեկը չուրախացավ» և այլն։ Հասկանալի է, որ ստորոգյալի ժխտական ձևը բխում է այս դերանունների ժխտական իմաստից։ Ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը դերանունները հոլովվում են անվանական Ի հոլովման հարացույցով՝ ոչ ոք-ոչ ոքի-ոչ ոքից-ոչ ոքով, ոչինչ-ոչնչի-ոչնչից-ոչնչով-ոչնչում, ոչ մեկը-ոչ մեկի-ոչ մեկից-ոչ մեկով-ոչ մեկում։ Հատկանշային իմաստ արտահայտող ոչ մի դերանունը չի հոլովվում։

#### Անորոշ դերանուններ

ԱՐԴԻ ՀԱՅՅԵՐՆԵՒ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ.— Ժամանակակից հայերենի քերականություններում անորոշ դերանուններ են համարվում հետևյալները. ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մեկը, մի ֆանի, մի ֆանիսը, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, որոշ, որևէ, երբևէ, երբևիցե, մեկն ու մեկը։

Դպրոցական քերականության մեջ դրանք սահմանվում են հետևյալ կերպ. «Անորոշ դերանունները ցույց են տալիս անձ, առարկա կամ անձի ու առարկայի անորոշ հատկություն, քանակ»<sup>3</sup>։ Ս. Աբրահամյանը անորոշ դերանունները հակադրելով որոշյալներին՝ գրում է. «Եթե որոշյալ դերանուններն ունեն հանրական իմաստ, ապա անորոշներն, ընդհակառակն, մասնական իմաստ ունեն, այսինքն ցույց են տալիս, ակնարկում են առարկաներից մեկը կամ մի քանիսը»<sup>4</sup>։

Սակայն ինչպիսի սահմանում էլ որ տրվի, համենայն դեպս, մի բան պարզ է ու որոշակի, որ այսպես կոչված անորոշ դերանունները, ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, յուրահատուկ ֆեռականական հատկանիշներ երևան չեն հանում և դերանուններ են համարվում սոսկ այն բանի հիման վրա, որ ակնարկում են առարկա կամ հատկանիշ, ընդհանուր, շտաբերակված, տարտամ ու անորոշ ձևով։ Ինչևիցե, բացառք ենք այս բառերի իմաստները և բերենք դրանցից ավելի գործածականների կիրառության օրինակներ։

Ինչ-որ.— Ցույց է տալիս առարկայի անորոշ, տարտամ հատկա-

նիշ՝ նախադասության մեջ հանդես գալով որոշիչ պաշտոնով, ինչպես՝ «Բայց հա հեռվից ինչ-որ բան որոտում էր» (Րաֆֆի)։ «Բժիշկը սրբական էր ինչ-որ սթափեցուցիչ հեղուկ» (Շիրվ.)։ «Ինչ-որ օձային ինքնահացում Եվ դեպի հողը ինչ-որ քամահրանք» (Տեր.)։ «Քեզ մի՛ կաշկանդիր ինչ-որ փտած ավանդներով» (Խանզ.)։

Ինչ-ինչ.— Իմաստով մոտավորապես հավասարվում է ինչ-որ դերանունը, միայն այն տարբերությամբ, որ սա, որպես կրկնավոր, ունի հոգնակիության իմաստ և, ըստ այդմ, պահանջում է հոգնակի որոշյալ, օրինակ՝ «Ինչ-ինչ մարդիկ», «Ինչ-ինչ ճարտեր», «Ինչ-ինչ նկատառումներ» և այլն։

Մի ֆանի.— Արտահայտում է անորոշ, բայց ոչ մեծ քանակի գաղափար՝ նախադասության մեջ հանդես գալով որոշիչ շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Անհրաժեշտ էր մի ֆանի բոպե ևս պահպանել կյանքը հյուծված ու քայքայված անոթի մեջ» (Շիրվ.)։ «Մթնեց Ծերունին լուռ շարշարանքով Մի ֆանի կոճղեր դրեց կրակին» (Քում.)։ «Հավաքվել էին մեռնողի ընտանիքի անդամները, մի ֆանի մերձավորներ, ծխական քահանան» (Շիրվ.)։

Մի ֆանիսը.— Նախորդի փոխանվանական ձևն է, ունի առարկայական իմաստ՝ նախադասության մեջ հանդես գալով գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, օրինակ՝ «Հոգեհանգստին ներկա էին նաև Միքայելի ընկերներից մի ֆանիսը» (Շիրվ.)։ «Մի ֆանիսը ափի կանաչին թաց-թաց մեկնված տաքանում էին» (Անան.)։ «Մի ֆանիսին ճանաչում եմ»։ «Մի ֆանիսից գոհ եմ»։

Մեկը.— Մեկ թվականի մեկը որոշյալ ձևի իմաստային զարգացմամբ առաջացել է մեկը անորոշ դերանունը, որը ցույց է տալիս անորոշ անձ կամ իր, եղած անձերից կամ իրերից պատահածը։ Ունի առարկայական նշանակություն և գործածվում է գոյականի շարահյուսական ֆունկցիաներով, օրինակ՝ «Այդ միջոցին մեկը ցատկեց ձիուց» (Րաֆֆի)։ «Մեկը շշուկով պատմում է կամաց, Մեկը իմ հոգին տանջում է համառ» (Տեր.)։ «Ուզում եմ մեկին քնքրորեն սիրել, Ուզում եմ անուշ փայփայել մեկին» (Տեր.)։

Միևը ձևը, որ գործածվում է Քումանյանի, Մուրացանի և այլոց ստեղծագործություններում, բարբառային է։

ՈՒՐԻՇ.— Նշանակում է «այլ», «տարբեր»։ Ունի հատկանշային իմաստ և գործածվում է որպես որոշիչ, օրինակ՝ «Նա ուրիշ էլ չուներ» (Շիրվ.)։ «Ուրիշ բան էին հին պոետները» (Քում.)։ «Ուրիշ երգեր են հնչում իմ հոգում» (Տեր.)։

ՈՒՐԻՇԸ.— Նախորդի հոգավոր ձևն է, որ ունի գոյականական իմաստ և կիրառություն, օրինակ՝ «Ուրիշը այլ կերպ կվարվեր», «Ինձ չես սիրում, ուրիշին, Ուրիշին ես սիրում դու» (Տեր.)։ «Դեմը քանակի տարեկան տղամարդին ուրիշի հրամանատարության տակ» (Շիրվ.)։

<sup>3</sup> Է. Աղալան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, Երևան, 1974, էջ 103։

<sup>4</sup> Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 111։

ԱՅԼ.— Համանիշ է ուրիշ դերանվանը, օրինակ՝ «Այլ էին Սմբատի զգացումները» (Շիրվ.)։ «Մի այլ երկրային երաժշտության ելևէջների պլըանքն եմ հիշում, Մի այլ տանջանքի եղման եմ տեսնում» (Տեբ.)։

ՈՐԵՎԷՆՆԵՐԻՅԵ.— Նշանակում են «այս կամ այն»։ Իրենց հատկանշային նշանակությանը համապատասխան՝ նախադասության մեջ հանդես են գալիս որոշիչ շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Դեռ սպասում էին, հուսալով որևէ բան իմանալ» (Շիրվ.)։ «Որպեսզի որևէ ավելորդ բառով չվիրավորի իր մորը» (Շիրվ.)։ «Ուրեկցե նորություն կա՞»։

ԵՐԲԵՎԷՆՆԵՐԻՅԵ.— Համանիշներ են, նշանակում են «որևէ ժամանակ»։ Նախադասության մեջ հանդես են գալիս ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոնով, օրինակ՝ «Երբևէ՛ երբևիցե կտեսնե՞մ նրան»։ «Երբևէ՛ երբևիցե կվերջանա՞ն մեր տանջանքները»։ «Երբևէ՛ երբևիցե հանդիպե՞լ ես այդպիսի մարդու»։

ՈՄՆ.— Գրաբարում ցույց էր տալիս անձ ընդհանուր անորոշ նշանակությամբ և ունեեր գոյականական և ածականական իմաստ ու կիրառություն, օրինակ՝ ա) Ոմն գայ «Մեկը գալիս է», Ոմն ասէ «Մեկն ասում է», բ) Այր ոմն գայ «Մի մարդ է գալիս», Իշխան ոմն ասէ «Մի ինչ-որ իշխան ասում է»։

Աշխարհաբարում ունի միայն ածականական իմաստ ու կիրառություն և նշանակում է «ինչ-որ», ընդ որում դրվում է միայն անձ ցույց տվող բառերի վրա, օրինակ՝ «Քեզ այսօր հարցրել է ոմն Պետրոս»։ «Մի ոմն հալատրյան է գործը փչացրել»։ «Ոմն Մատուրյան է այդ հիմնարկի պետը» և այլն։

ՈՄԱՆՔ.— Ոմն դերանվան հոգնակին է, բայց բառային իմաստով որոշ չափով տարբերվում է սրանից։ Նշանակում է մի քանիսը, բայց միայն անձի իմաստով։ Ոմնենալով առարկայական նշանակություն՝ նախադասության մեջ հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, օրինակ՝ «Ոմանք դեմ կանգնեցին այդ առաջարկությանը»։ «Ոմանց խրախուսեցին, ոմանց պարսավեցին» և այլն։ Հոլովվում է անվանական Ք/Յ հոլովման հարացույցով՝ ոմանք-ոմանց-ոմանցից-ոմանցով-ոմանցում։

ԱՅՍԻՆՉ-ԱՅՆԻՆՉ.— Արտահայտում են ընդհանուր, անորոշ հատկանշային նշանակություն՝ ցուցականության երանգով, օրինակ՝ «Համարձակություն ունենայիր ասելու, թե այսինչ մարդն է մեղավորը»։ «Հայտարարեցին, թե այսինչ-այսինչ պատվիրակությունները նիստին չեն մասնակցում»։ «Պիտի պատճառաբանեիր, ասեիր, թե հանձնարարությունը չեմ կատարել այսինչ կամ այնինչ նկատառումներով»։

Այնինչ բառը առանձին գործածությամբ ունի շաղկապական իմաստ և կիրառություն, օրինակ՝ «Այնինչ իմ հոգում ուրիշ երգեր էին հնչում»։

«Մենք շարշարվեցինք ու տանջվեցինք, այնինչ նրանք են վայելում աշխատանքի պտուղները» և այլն։

ՈՐՈՇ.— Սա սովորական ածականներից ոչնչով չի տարբերվում։ Դերանուն է համարվում միայն այն պատճառով, որ շատ կիրառություններում արտահայտում է ընդհանուր անորոշ նշանակություն, օրինակ՝ «Որոշ բանվորներ պարզևատրվեցին, իսկ որոշ բանվորներ արժանացան խրախուսանքի»։ «Որոշ առաջադիմություն նկատվում է»։ «Որոշ հարցեր լուծվեցին» և այլն։

ԻՆՉԵՎԷՆՆԵՐԻՅԵ.— Չնայած որ համարվում են դերանուններ, բայց փաստորեն եղանակավորող բառերի արժեք ունեն, օրինակ՝ «Ինչևէ՛ ինչևիցե, անցնենք հարցի կոնկրետ քննարկմանը»։ «Ինչևէ՛ ինչևիցե, անցածը վերադարձնել հնարավոր չէ»։ «Ինչևէ՛ ինչևիցե, հիմա տեսնենք, թե ինչ ենք անելու» և այլն։



**ԲԱՅՐ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ.**— Խոսքի մասերի մեջ իր ձևերի բազմազանությունը, քերականական կարգերի հարստությունը ու ճոխությունը և խոսքի մեջ խաղացած բացառիկ դերով հատուկ տեղ ունի բայը: Խոսքի մասերից և ոչ մեկը հայերենում (և ոչ միայն հայերենում) չունի քերականական կարգերի ու ձևերի այն հարստությունը, ինչ տեսնում ենք բայի մեջ:

Ինչպես որ գոյականի խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերի իմաստային հիմքը առարկայի հասկացությունն է, այնպես էլ բայի խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերի իմաստային նիւթը գործողությունն է: Այս բանը շատ լավ երևում է նույնարմատ գոյականների և բայերի հակադրությամբ՝ գործ-գործել, հավատ-հավատալ, սեր-սիրել, խոսք-խոսել, երգ-երգել, ծաղիկ-ծաղկել, խաղ-խաղալ և այլն: Այս զույգերի իմաստային ամենամակերեսային համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ առաջինները առարկայական իմաստ են արտահայտում, իսկ երկրորդները՝ գործողություն, ընթացքի:

Սակայն հենց գոյականների մեջ էլ կան բառերի առանձին խմբեր, որոնք իրենց իմաստով մոտենում են բայերին և գործողություն են ցույց տալիս: Այսպես են բայանունները՝ կատարում, ճուշում, մեծարում, ըսպասարկում, կրկնություն, սպանություն, պաշտպանություն, արհամարհանք, տանջանք, զովք, նզովք և այլն: Բայց դրանց և համապատասխան բայերի համեմատությունը ևս իմաստային տարբերություն է երկվան հանում: Այսպես՝ կատարում||կատարել, մեծարում||մեծարել, կրկնություն||կրկնել, արհամարհանք||արհամարհել, զովք||զովել և այլ զույգերից առաջինները ցույց են տալիս գործողությունը որպես առարկա, առարկայացված գործողություն, և դրանց մեջ չկա ընթացքի գաղափար, իսկ երկրորդները ցույց են տալիս գործողությունը հենց որպես այդպիսին, ընթացքի ձևով:

Բայց իմաստային այս տարբերությունը ուղադրություն է գրավում հատկապես նրանով, որ միաժամանակ ուղեկցվում է քերականական հատկանիշների տարբերություններով: Այսպես՝ բերված զույգերից առաջիններին, որպես գոյականների, բայասեռի կարգը հատուկ չէ, և, ըստ այդմ, կան միայն կատարում, կրկնություն, պաշտպանություն, տանջանք, զովք և այլ ձևերը, իսկ երկրորդներին, որպես բայերի, հատուկ

լ բայասեռի կարգը, և ըստ այդմ, կան կատարել-կատարվել, կրկնել-կրկնվել, պաշտպանել-պաշտպանվել, տանջել-տանջվել, զովել-զովվել համապատասխան ներգործական և կրավորական ձևերը: Մյուս կողմից՝ կատարել, կրկնել, պաշտպանել և այլ բառաձևերը, որպես ներգործական սեռի բայեր, ունեն իրենց հատուկ խնդրառությունը, այսինքն ուղիղ խնդիր են պահանջում, օրինակ՝ աշխատանք կատարել, դասը կրկնել, ֆաղաբ պաշտպանել և այլն: Կատարում, կրկնություն, պաշտպանություն բառերը, որպես գոյականներ, ոչ թե ուղիղ խնդիր, այլ հատկացուցիչ են պահանջում, ինչպես՝ աշխատանքի կատարումը, դասի կրկնությունը, ֆաղաբի պաշտպանությունը. դրանք տիպիկ անվանական բառակապակցություններ են:

Այսպես ուրեմն՝ կատարել||կատարում, կրկնել||կրկնություն, զովել||զովք տիպի բառիմաստային տարբերությունը ուղեկցվում է նաև քերականական տարբերություններով: Առաջինները բայ են՝ բայ խոսքի մասին հատուկ հասկանիչներով, իսկ երկրորդները գոյական են՝ գոյական խոսքի մասին հատուկ հատկանիշներով:

Այնուհետև, ժամանակակից քերականագիտության մեջ բայեր են համարվում նաև այնպիսի ձևեր, որոնք հատկանիշ են արտահայտում, ուրեմն և հավասարվում են ածականներին, ինչպես՝ կատարած-կատարող (մարդ), գրած-գրող (աշակերտ), կարդացած-կարդացող (աղջիկ) և այլն: Բայց այսպիսի ձևերի մեջ ևս, ինչպես հետո ավելի հանգամանորեն կտեսնենք, կա գործողության, ընթացքի գաղափար, որը կրկին իր նյութական-քերականական դրսևորումն է ստանում բայասեռի և զըրանով պայմանավորված խնդրառության կարգերում, ինչպես՝ աշխատանք կատարած||կատարող մարդ, նամակ գրած||գրող աշակերտ, գիրք կարդացած||կարդացող աղջիկ: Այս բառաձևերը, որպես ներգործական բայեր, միաժամանակ ունեն նաև իրենց կրավորականները՝ կատարած-կատարված, կատարող-կատարվող, գրած-գրված, գրող-գրվող և այլն: Իսկ այս քերականական հատկանիշներն էլ ինքնին նշանակում են, որ կատարած-կատարված, կատարող-կատարվող և նման ձևերը մտնում են հայերենի բայական համակարգի մեջ:

Ասացինք, որ բայի խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերի իմաստային հիմքը գործողության, ընթացքի գաղափարն է: Այստեղից էլ բայի բնորոշումը՝ բայ են կոչվում այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողություն, ընթացք: Գործողություն բառը տվյալ քերականական ըմբռնմամբ շատ լայն բովանդակություն ունի. դրա տակ հասկացվում է ֆիզիկական, մտավոր ու հոգեկան գործունեություն, դրություն, դրուկ, թյան փոփոխություն և այլն, ինչպես՝ ջարդել, կտրել, փռել, այրել, մտածել, դատել, սիրել, հարգել, լսել, ֆենել, պառկել, մեծանալ, հիվանդանալ, լինել և այլն:

Բայի ձևաբանական առանձնահատկությունները սերտորեն կապված են նրա իմաստային յուրահատկությունների հետ:

Հայերենի բայի ամենացայտուն դրսևորված ձևաբանական առանձնահատկությունը մյուս խոսքի մասերի համեմատությամբ այն է, որ նա, որպես կանոն, բաղադրյալ է և պարզ լինել չի կարող, ինչպես՝ գրել, գրած, գրող, գրեց, գրեմ, գրես, գրի և այլն, բայը հանդես է բերում եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը, որոնք ներհատուկ են բային և ունեն իրենց բնորոշի առանձնահատկությունները:

Որպես բայի ձևաբանական առանձնահատկություն պետք է նշել նաև այն, որ բային հատուկ է ժխտման ֆեռականական կարգը, որն արտահայտվում է Չ մասնիկի միջոցով, օրինակ՝ գրել-չգրել, գրած-չգրած, գրող-չգրող, գրեցի-չգրեցի, գրեմ-չգրեմ և այլն, իսկ հրամայականի դեպքում՝ Մի մասնիկի միջոցով, օրինակ՝ գրի՛ր—մի՛գրիր, վագի՛ր—մի՛ վագիր, խաղա՛—մի՛ խաղա, կարդա՛—մի՛ կարդա և այլն:

Բայը խոսքի մեջ հանդես է գալիս երկու ձևով՝ անդեմ կամ դերբայական և դիմավոր կամ եղանակային: Դերբայական ձևերին հատուկ չեն եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը. դրանք բայի դիմավոր ձևերի հետ միավորվում են բայական իմաստով, այսինքն՝ գործողության, ընթացքի իմաստով, և բայասեռի ու խնդրատեսակի կարգերի ընդհանրությամբ: Այս բանը առիթ է տվել տարբերակելու երկու տիպի կարգեր՝ բայական խոսքիմասային կարգեր, որոնք հատուկ են ամբողջ բային, այսինքն՝ նրա և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերին (բայասեռի, մասամբ նաև կերպի կարգերը) և բայական ստորոգելիական կարգեր, որոնք հատուկ են միայն բայի դիմավոր ձևերին (եղանակի, ժամանակի, դեմքի և թվի կարգերը):<sup>2</sup>

Չնայած բայական կարգերի այսպիսի առանձնացմանը, պետք է նշել, որ բայ խոսքի մասի բուն և իսկական էությունը գրսևորվում է նրա դիմավոր, եղանակային ձևերի մեջ, որոնցով էլ հենց նա առանձնանում է մյուս խոսքի մասերից և հակադրվելով նրանց՝ խոսքի մասերի համակարգում իր ուրույն ու առանձնահատուկ տեղն է գրավում:

Բայը յուրահատուկ տեղ է գրավում խոսքի մասերի համակարգում նաև իր շարահյուսական առանձնահատկություններով:

Բայը հայերենում միակ խոսքի մասն է, որ հանդես է գալիս ստորագայի պաշտոնով: Բայի եղանակային ձևերը գործողության հետ միաժամանակ արտահայտելով եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգեր՝ նախադասության մեջ համարյա միշտ դառնում են ստորագայ, ինչպես՝ «Իմ անվերջ ճամփի տանջանքից հոգնած՝ Ծս ննջել էի ոսկեղեն արտում, Ու նշաց սիրտս վայելքից հանկարծ:— Թը վաց, որ մեկը կանչում է տրտում: Ծվ ես արքնացա խնդության ցա-

Ռեգին սիրվում է հորից:

Բային ներհատուկ է և նրա էությունն է կազմում նաև խոնարհումը:

<sup>1</sup> Հայերենի բայի բաղադրականության մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 48:

Այս քերականական կարգը ևս հատուկ է միայն ու միայն բային: Խոսքի մեջ ձևափոխությունների ենթարկվելով, խոնարհվելով և այսպիսով կազմելով դիմավոր կամ եղանակային ձևեր, ինչպես՝ գրում եմ, գրում ես, գրում է, գրեցի, գրեցիր, գրեց, գրեմ, գրես, գրի և այլն, բայը հանդես է բերում եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը, որոնք ներհատուկ են բային և ունեն իրենց բնորոշի առանձնահատկությունները:

Որպես բայի ձևաբանական առանձնահատկություն պետք է նշել նաև այն, որ բային հատուկ է ժխտման ֆեռականական կարգը, որն արտահայտվում է Չ մասնիկի միջոցով, օրինակ՝ գրել-չգրել, գրած-չգրած, գրող-չգրող, գրեցի-չգրեցի, գրեմ-չգրեմ և այլն, իսկ հրամայականի դեպքում՝ Մի մասնիկի միջոցով, օրինակ՝ գրի՛ր—մի՛գրիր, վագի՛ր—մի՛ վագիր, խաղա՛—մի՛ խաղա, կարդա՛—մի՛ կարդա և այլն:

Բայը խոսքի մեջ հանդես է գալիս երկու ձևով՝ անդեմ կամ դերբայական և դիմավոր կամ եղանակային: Դերբայական ձևերին հատուկ չեն եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը. դրանք բայի դիմավոր ձևերի հետ միավորվում են բայական իմաստով, այսինքն՝ գործողության, ընթացքի իմաստով, և բայասեռի ու խնդրատեսակի կարգերի ընդհանրությամբ: Այս բանը առիթ է տվել տարբերակելու երկու տիպի կարգեր՝ բայական խոսքիմասային կարգեր, որոնք հատուկ են ամբողջ բային, այսինքն՝ նրա և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերին (բայասեռի, մասամբ նաև կերպի կարգերը) և բայական ստորոգելիական կարգեր, որոնք հատուկ են միայն բայի դիմավոր ձևերին (եղանակի, ժամանակի, դեմքի և թվի կարգերը):<sup>2</sup>

Չնայած բայական կարգերի այսպիսի առանձնացմանը, պետք է նշել, որ բայ խոսքի մասի բուն և իսկական էությունը գրսևորվում է նրա դիմավոր, եղանակային ձևերի մեջ, որոնցով էլ հենց նա առանձնանում է մյուս խոսքի մասերից և հակադրվելով նրանց՝ խոսքի մասերի համակարգում իր ուրույն ու առանձնահատուկ տեղն է գրավում:

Բայը յուրահատուկ տեղ է գրավում խոսքի մասերի համակարգում նաև իր շարահյուսական առանձնահատկություններով:

Բայը հայերենում միակ խոսքի մասն է, որ հանդես է գալիս ստորագայի պաշտոնով: Բայի եղանակային ձևերը գործողության հետ միաժամանակ արտահայտելով եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգեր՝ նախադասության մեջ համարյա միշտ դառնում են ստորագայ, ինչպես՝ «Իմ անվերջ ճամփի տանջանքից հոգնած՝ Ծս ննջել էի ոսկեղեն արտում, Ու նշաց սիրտս վայելքից հանկարծ:— Թը վաց, որ մեկը կանչում է տրտում: Ծվ ես արքնացա խնդության ցա-

<sup>2</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 117—118:

վից:— Գիշերվա հովն էր լալիս դաշտերում, Մութ հեռաստանն էր դռ-  
կամ նայում ինձ, Մենակությունն էր բարի պես լուսում» (Տեր.): Դիմավոր  
ձևերի ստորոգելիական գործածությունը այդ ձևերի հենց բուն էություն  
դրսերումն է, սովորական է ու զանգվածային, ուստի և ավելի օրի-  
նակներ բերելու կարիք չի զգացվում:

Ասացինք, որ հայերենում ստորոգյալի պաշտոնով հանդես եկող  
միակ խոսքի մասը բայն է: Ծիշտ է, ստորոգյալի ձևավորմանը կարող  
են մասնակցել նաև այլ խոսքի մասեր, ինչպես՝ նա գյուղացի է, իսկ  
դու ֆաղաֆացի ես. Գայլը գագան է. Ձյունն սպիտակ է և այլն, բայց  
այդպիսի դեպքերում էլ բաղադրյալ ստորոգյալի կազմում կա բայական  
մաս՝ հանգույց, որն արտահայտում է եղանակի, ժամանակի, դեմքի  
ու թվի և, հետևաբար, ստորոգման շարահյուսական կարգը, որը ոչ մի-  
այն ստորոգյալի, այլև նախադասության էական հատկանիշն է ընդ-  
հանրապես:

Քանի որ հայերենում ստորոգում կատարող միակ խոսքի մասը  
բայն է, դրանից հետևում է, որ բայը նախադասության կազմում կա-  
տարում է բացառիկ դեր: Հենց հայերենի բայի՝ նախադասության մեջ  
ունեցած այդ բացառիկ դերը նկատի ունենք Մ. Աբեղյանը, երբ գրում  
էր. «Բայը բուն խոսքն է (նախադասությունը— Մ. Ա.) կամ խոսքի էա-  
կան մասը, իսկ լրացումները՝ ենթակա, խնդիրներ և կողմնակի խնդիր-  
ներ, բայի նկատմամբ խոսքի երկրորդական մասերն են»<sup>3</sup>: Ինչպես էլ  
որ մոտենանք Մ. Աբեղյանի այս դրույթի փաստմանը, համենայն դե-  
պքս, մի բան պարզ է, որ հայերենում ամեն մի դիմավոր բայ պարզա-  
պես մի նախադասություն է կազմում, օրինակ՝ Գնացի. Տեսա. Գնացի.  
Տեսար. Գնաց. Տեսավ. Գնում է. Տեսնում է և այլն: Դիմավոր բայերով  
կազմված նախադասությունների համեմատությամբ հայերենում շափա-  
զանց քիչ դեր ու կշիռ ունեն այսպես կոչված անդեմ և անվանողական  
նախադասությունները (օրինակ՝ Սանձահարե՛լ պատերազմի հրձիգնե-  
րին. Կայարան, գորքե՛ր, գորքե՛ր և նմանները): Դրանք մեր լեզվի շա-  
րահյուսական համակարգում այնքան ոչ էական, երկրորդական դեր են  
կատարում, որ առանձին ուսումնասիրողներ (օրինակ՝ Մ. Աբեղյանը)  
դրանց կողքով լռելյայն են անցնում՝ անդեմ ու անվանողական նախա-  
դասությունները դուրս թողնելով իրենց հետազոտության ոլորտներից:

Բայի շարահյուսական կիրառությունները քննելիս, իհարկե, չի կա-  
րելի աչքաթող անել դերբայները: Հայերենի դերբայական ձևերի մի  
մասը հանդես է գալիս գոյականին, ածականին ու մաճկբային հատուկ  
շարահյուսական կիրառություններով՝ նախադասության մեջ գործածվե-  
լով որպես ենթակա ու խնդիր (անորոշ, ենթակայական, ապառնի երկ-  
րորդ), որոշիչ (հարակատար, ենթակայական, ապառնի երկրորդ) և ժա-

մանակի պարագա (անկատար երկրորդ): Բայց այս փաստը նշանակում  
է միայն մի բան, այն, որ այս դերբայների մեջ գործողություն, ընթաց-  
քի նշանակությունը «մաքուր», «անխառն» ձևով չի դրսևորվում և միա-  
հյուսվում ու միաձուլվում է այլ և այլ խոսքի մասային նշանակություն-  
ների հետ:

Բայի շարահյուսական մյուս առանձնահատկությունը խնդրառու-  
թյունն է, որը դրսևորվում է գոյականների և առարկայական իմաստ  
արտահայտող այլ բառերի՝ բայերից ունեցած կախմամբ: Խնդրառու-  
թյունը համընդհանուր բայական-շարահյուսական կարգ է և հավասա-  
րապես հատուկ է բայի և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերին: Բայերը այս կամ  
այն հոլովով կամ հոլովով ու կապով արտահայտված խնդիրներ ու պա-  
րագաներ են առնում իրենց իմաստի կամ սեռի թելադրությամբ ու պա-  
հանջով, ըստ որում՝ բայի մաստի պահանջով դրված խնդիրներն ու պա-  
րագաները նույնությամբ պահպանվում են նաև նույն բայից ածանցված  
կամ նույն արմատն ունեցող գոյականների և ածականների հետ, իսկ  
սեռի պահանջով դրված խնդիրները՝ կրող (ուղիղ) և ներգործող խնդիր-  
ները, հատկապես առաջինը, հատուկ են միայն բայերին (առաջինը՝ ներ-  
գործական, իսկ երկրորդը՝ կրավորական սեռի բայերին): Ստորև բեր-  
վում են մի քանի օրինակներ նույնարմատ բայերի, գոյականների, ա-  
ծականների (մակբայների) խնդրառության ընդհանրությունն ու նույ-  
նությունը ցույց տալու համար:

Հեռանալ մի բանից՝ հեռացում մի բանից՝ հեռու մի բանից.

Մոտենալ մի բանի՝ մոտեցում մի բանի՝ մոտ մի բանի.

Հպարտանալ մի բանով՝ հպարտություն մի բանով՝ հպարտ մի բա-  
նով.

Հանդիպել մեկին— մեկի հետ՝ հանդիպում մեկին— մեկի հետ.

Կռվել մեկի դեմ— մեկի հետ՝ կռվել մեկի դեմ— մեկի հետ.

Խոսել մի բանի մասին՝ խոսք մի բանի մասին.

Ներգործել մեկի, մի բանի վրա՝ ներգործություն մեկի, մի բանի  
վրա:

Տարբեր խոսքի մասերի խնդրառության այս ընդհանրությունն ու  
նույնությունը բացատրվում է նրանց իմաստային ընդհանրությամբ. չէ՞  
որ նրանք նույն արմատն ունեն, հետևաբար և նյութական-իմաստային  
կողմով իրարից հեռու շեն:

Սակայն կա խնդրառության մի տիպ, որ հատուկ է միայն բայերին  
և այն էլ ներգործական սեռի բայերին: Վերջիններս կապակցվելով ուղիղ  
և խնդրի հետ՝ պայմանավորում են միայն իրենց հատուկ շարահյուսա-  
կան կառուցվածք, ինչպես՝ սիրել հայրենիքը, երեխային, գիրք գրել,  
նամակ կարգալ, փայտ կտրել, տունը մաքրել, աշխատանքը վերջացնել,  
նամակ կարգալ, փայտ կտրել, տունը մաքրել, աշխատանքը վերջացնել,  
նամակ կարգալ և այլն: Եվ հենց այսպիսի խնդրառությամբ է, որ բա-  
յերը տարբերվում են մյուս կարգի բոլոր բառերից: Պետք է նշել, որ

<sup>3</sup> Մ. Աբեղյան, Աշխարհարարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 46:

այս տեսակետից ուղիղ խնդրի հետ չի կարող համեմատվել ներգործող խնդիրը, որը նույն ձևով կարող է հանդես գալ նաև բայանունների հետ, օրինակ՝ սպասարկվել մի կազմակերպության կողմից՝ սպասարկում մի կազմակերպության կողմից, բարձրացվել կառավարության կողմից՝ բարձրացում կառավարության կողմից:

Ամփոփելով ասվածները՝ կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացությանը. իմաստաբանորեն՝ բայը բնորոշվում է գործողության, ընթացքի գաղափարի արտահայտմամբ. ձևաբանորեն՝ որպես խոսքի մաս ունեցած իր հատուկ ձևով, բաղադրյալ կազմությամբ, խոնարհմամբ, որի դեպքում դրսևորվում են եղանակի, ժամանակի, դեմքի ու քվի ներկանական կարգերը, այլև բայացեռով. շարահյուստորեն՝ ստորագման ֆեռականական կարգի դրսևորմամբ, որի շնորհիվ էլ նա եայերենում ստորոգյալի պաշտոնով հանդես եկող միակ խոսքի մասն է, խնդրառությամբ ընդհանրապես և միայն իրեն հատուկ օւղիղ խնդրի ուղղական-տրական) (այլ տերմինաբանությամբ՝ հայցական) խնդրառությամբ՝ մասնավորապես (վերջինս հատուկ է միայն ներգործական սեռի բայերին):

### ԲԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

#### ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Բայերը ժամանակակից հայերենում ըստ կազմության լինում են համադրական և հարկադրական:

Համադրական են կոչվում այն բայերը, որոնց բաղադրիչները համաձույլ են և մի միութուն են կազմում, ինչպես՝ գրել, կատարել, գրտնել, փախչել, կարդալ, հավատալ, բարձրանալ, վախենալ, մեծացնել, սիրվել և այլն: Համադրական բայերը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, ունեն մի բառի տեսք ու ձև:

Հարադրական են կոչվում այն բայերը, որոնց բաղադրիչները համաձույլ չեն և մի միութուն չեն կազմում, ինչպես՝ դուրս գալ, վազ տալ, ցույց տալ, լաց լինել, աղաչանք անել, մեջ բնկնել, գրել տալ և այլն: Հարադրական բայերի բաղադրիչները, ինչպես օրինակներն են ցույց տալիս, կապակցվում են հարադրական բարդության եղանակով:

#### ՊԱՐԶ, ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ, ՊԱՏՄԱՌԱԿԱՆ, ԿԱՐՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԲԱՅԵՐ

ՊԱՐԶ ԵՎ ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ.— Ինչպես հայտնի է, հայերենի բայի ելակետային ձև կամ սկզբնաձև է ընդունված անորոշ դերբայը:

Ժամանակակից հայոց լեզվում անորոշ դերբայը կազմվում է նև Ալ մասնիկներով, ինչպես՝ գրել, կատարել, վազել, կարդալ, հավատալ, մնալ և այլն: Այսպիսի բայերը, որոնք անորոշ դերբայի են և Ալ մասնիկներից առաջ բայածանցներ չունեն, կոչվում են պարզ բայեր:

Անորոշ դերբայի են մասնիկից առաջ մի բանի բայերի մեջ հանդես են գալիս ն, Չ ածանցները, օրինակ՝ գտնել, փախչել, իսկ Ալ մասնիկից առաջ՝ շատ բայերի մեջ Ան, մի բանի բայերի մեջ Ծն ածանցը, օրինակ՝ մեծանալ, սեանալ, վախենալ, մոտենալ: Այսպիսի բայերը կոչվում են սոսկածանցավոր բայեր:

Պարզ և սոսկածանցավոր բայերից ածանցվում են պատճառական՝ բարձրացնել, վախեցնել, հագցնել, կրավորական՝ գրվել, կարդացվել, և բազմապատկական՝ կտրատել, ջարդոտել բայերը, որոնց մասին խոսվում է առանձին: Այսպիսով, այս վերջիններն անտեսելով՝ անորոշ դերբայն արդի հայերենում վերջավորվում է պարզ են, Ալ կամ սոսկածանցավոր նեն, Չեն, ԱնԱլ, ԾնԱլ ձևերով: Դրանցից ժամանակակից հայոց լեզվում կենդանի ու գործուն են են, Ալ և ԱնԱլ կազմությունները: Ստորև խոսվում է այս ձևերի մասին առանձին-առանձին:

Արդի հայերենում ամենամեծ թիվն են կազմում են պարզ կազմության բայերը: Այսպես, ըստ Հ. Բարսեղյանի կազմած բայացանկի, որն ընդգրկում է մոտ 6000 բայեր (հարադիր բայերն այդ բառացանկի մեջ չեն մտնում), են պարզ կազմություն ունի մոտ 4000-ը, այսինքն բոլոր բայերի երկու երրորդը: Ել ձևով բայեր են կազմվում և՛ ներգործական, և՛ շեղոք նշանակությամբ, բայց ավելի մեծ թիվ են կազմում ներգործականները: Այսպես, ներգործական սեռի են՝ ազատել, ատել, բերել, ծախել, կարել, հարգել, մերժել, մխիթարել, շարել, ոգևորել, որոնել, ծախել, կարել, հարգել, մերժել, մխիթարել, շարել, ոգևորել, որոնել, պատժել, ջարդել, սիրել, տանջել, ուզել, քանդել և այլն: Չեղոք սեռի են՝ աղմկել, ամպել, գազազել, խամբել, կապտել, հրճվել, մոլեգնել, նստել, վազել, ընել, ծիծաղել, սատկել, վիճել, տառապել, տխրել, քայլել և այլն:

Բայերի կազմության այս տիպը շատ գործուն է, և այժմ էլ պարզ են ձևով նորանոր բայեր են կազմվում՝ առավելապես ներգործական սեռի, օրինակ՝ ապակել, զիզզազել, ֆարել, ցելսել, տախտակել, պրոպագանդել, հողել, բեռնել և այլն:

Ալ կազմության բայերը նախորդ տիպի համեմատությամբ մեծ թիվ չեն կազմում (մոտ 500): Դրանք առավելապես կազմվում են բնածայնական արմատներից և մեծ մասամբ շեղոք սեռի են: Ալ կազմության

<sup>4</sup> «Սոսկածանցներ» և «սոսկածանցավոր բայեր» անվանումները գործածում ենք պայմանականորեն՝ հետևելով ավանդույթին: Ինչպես հետո կտեսնենք, սոսկածանցները իմաստագործի չեն և ձևավորում են բայերի անկատարի հիմքը:

<sup>5</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:

ոչ բնաձայնական, սովորական բայերը քիչ են: Դրանցից են՝ աղալ, անձ-կալ, բաղձալ, գթալ, գնալ, եռալ, դողալ, երևալ, խղճալ, ժպտալ, կար-դալ, հոգալ, շողալ, ողբալ, սուրալ, ցոլալ և այլն: Ոչ բնաձայնական արմատներից կազմութայն Ալ տիպը արդի հայերենում այլևս գործուն չէ: Ալ կազմութայն բայերը, ինչպես նշվեց, մեծ մասամբ բնաձայնական արմատներից են, օրինակ՝ բլբլալ, գլգլալ, դժժալ, ղնգալ, զնգզնգալ, թխկալ, թխկթխկալ, թշշալ, թշթշալ, ծվծվալ, սվսվալ, տզզալ, տզտզալ և այլն: Այս ձևով բնաձայնական արմատներից կազմվել և կազմվում են բազմաթիվ բայեր:

ԱնԱլ ձևով սովորաբար բայեր են կազմվում գոյականներից և ա-ծականներից, դրանք համարյա բոլորն էլ չեզոք սեռի են և ցույց են տալիս մի բանի վերածվելը, մի բան դառնալը, օրինակ՝ ազահանալ, աղքատանալ, երջանկանալ, ընկերանալ, հիվանդանալ, հզորանալ, մե-ծանալ, նեղանալ, որբանալ, շորանալ, շերմանալ, տաքանալ, ուրախա-նալ, քարանալ, օտարանալ և այլն: ԱնԱլ ձևով կազմված բայերի քա-նակը ըստ Հ. Բարսեղյանի կազմած բայացանկի մոտ 700 է: Կան այս ձևով կազմված մի քանի ներգործական բայեր, որոնք իմաստային այս խմբին չեն պատկանում, ինչպես՝ գողանալ, լվանալ, խոստանալ, հղա-նալ, մոռանալ, ստանալ, ցանկանալ, ուրանալ: Այս բայերը ավանդված են հնից, և այժմ ԱնԱլ ձևով ներգործական սեռի բայեր չեն կազմվում:

ՆՆՎ կազմութայն բայերի թիվը մոտ երկու տասնյակ է: Դրանք մո-տավորապես հետևյալներն են՝ անել, անցնել, առնել, բուսնել, գտնել, ղնել, ելնել, ընկնել, թողնել, իջնել, լինել, հագնել, հասնել, հատնել, հեծնել, մեռնել, մտնել, պրծնել, տանել, տեսնել: Այս կազմութայնը քա-րացած է, և ՆՆՎ ձևով այժմ նոր բայեր չեն կազմվում:

ՉՆՎ կազմութայն բայերի թիվը մի տասնյակի էլ չի հասնում: Դը-րանք են՝ դիպչել, թռչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, ուռչել, փախ-չել: Կազմութայն այս տիպը ոչ միայն նախորդից ավելի քիչ բայեր է ընդգրկում, այլև ժողովրդական լեզվում ՉՆՎ ձևերը տեղի են տալիս ՆՆՎ ձևերին, ինչպես՝ թռչել > թռնել, կպչել > կպնել, փախչել > փախնել: Վեր-ջին ձևերը գործածված ենք գտնում անգամ գեղարվեստական գրակա-նութայն մեջ:

ԾՆԱլ ձևով կան հետևյալ բայերը. արժենալ, գիտենալ, կամենալ, կենալ, հագնալ, մերձենալ, մոտենալ, պարծենալ, վախենալ, ուզենալ, ունենալ: Կազմութայն այս տիպը ևս քարացած է, և այս ձևով այլևս նոր բայեր չեն կազմվում:

Պարզ և սոսկածանցավոր բայերից ածանցվում են կրավորական, պատճառական և բազմապատկական բայերը:

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐ.— Կազմվում են ՅՆ մասնիկով, ըստ որում՝ ԾՆ, ԾՆԱլ ձևերը վերածվում են ԾՅՆՆՎ ձևի, ինչպես՝ վազել-վազեցնել, ծիծաղել-ծիծաղեցնել, վախենալ-վախեցնել, մերձենալ-մերձեցնել, Ալ,

ԱՆԱլ կազմութայնները՝ ԱՅՆՆՎ ձևի, ինչպես՝ եռալ-եռացնել, դողալ-դողացնել, աղքատանալ-աղքատացնել, մեծանալ-մեծացնել, իսկ ՆՆՎ, ՉՆՎ կազմութայնները՝ ՅՆՆՎ ձևի, ինչպես՝ հագնել-հագցնել, հասնել-հասցնել, թռչել-թռցնել, կորչել-կորցնել:

ԿԲԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ.— Կազմվում են Վ ածանցով, ըստ որում՝ ԾՆ, ՆՆՎ ձևերը վերածվում են ՎՆՎ, ՆՎՆՎ ձևի, օրինակ՝ սիրել-սիրվել, կատարել-կատարվել, հարգել-հարգվել, գտնել-գտնվել, տեսնել-տեսնը-վել, Ալ, ԱՆԱլ, ԱՅՆՆՎ կազմութայնները՝ ԱՅՎՆՎ ձևի, այսինքն ձևաբա-նական կառուցվածքով չեն տարբերակվում, ինչպես՝ կարդալ-կարդաց-վել, աղալ-աղացվել, իմանալ-իմացվել, հասկանալ-հասկացվել, բարձ-րացնել-բարձրացվել, մեծացնել-մեծացվել, ԾՆԱլ, ԾՅՆՆՎ կազմութայն-ները՝ ԾՅՎՆՎ ձևի, այսինքն ձևաբանական կառուցվածքով չեն տարբե-րակվում, օրինակ՝ կամենալ-կամեցվել, վախեցնել-վախեցվել, հագեց-նել-հագեցվել, իսկ ՅՆՆՎ կազմութայնները՝ ՅՎՆՎ ձևի, օրինակ՝ հագցը-նել-հագցվել, հասցնել-հասցվել, մտցնել-մտցվել և այլն:

ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԲԱՅԵՐ.— Ցույց են տալիս գործողութայն կըբի-նություն, սաստկություն կամ մի քանի առարկաների միանման գործո-ղություն, կազմվում են ՆՎ վերջավորվող բայերից ՈՏ, ԱՏ, Տ և սակավ գործածական մի քանի այլ ածանցներով, օրինակ՝ մորթոտել, բռնոտել, նստոտել, խոցոտել, կծոտել, կրծոտել, խեղդոտել, ցատկոտել, պատա-ռոտել, կապոտել, կոխոտել, պոկոտել, ջարդոտել, կտրոտել, կոտրա-տել, կոտորատել, փետրատել, ծռմոտատել, կտրտել, կոտրտել, փշրտել, պահլըտել, սատկոտել, փնտրտել, պատոտել, ճանկոտել, ճխլտել, խան-ձոտել, Բազմապատկական ՈՏ, ԱՏԱԿ, ՈՐ մասնիկներով ունենք՝ քան-դըռտել, փայլատակել, կարմրատակել, ծամծմորել, պաշպշորել և այլն<sup>6</sup>: դըռտել, փայլատակել, կարմրատակել, ծամծմորել, պաշպշորել և այլն<sup>6</sup>: Քանի որ կան ՈՏ վերջածանցով ածականներ, որոնցից բայեր են կազ-մվում՝ ժանգոտ-ժանգոտել, մրոտ-մրոտել, ալրոտ-ալրոտել, ուստի հաս-կանալի է, որ դրանք չպետք է շփոթել բազմապատկական բայերի հետ:

ԲԱՅԱԿԱՆ ԼՇՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐ

ԲԱՅԱԿԱՆ ԼՇՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ Ե, Ա ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐ.— Անո-րոշ դերբայի, ինչպես և բայական մի շարք այլ ձևերի կազմութայն մեջ հատուկ դեր ունեն Ե և Ա «ձևույթները», որոնք կոչվում են լծորդներ կամ խոնարհիչներ, օրինակ՝ գրել-կարդԱլ, գրեմ-կարդԱմ, գրեց-կար-դԱց և այլն:

Ըստ խոնարհիչների կամ լծորդությունների՝ ժամանակակից հայե-

<sup>6</sup> Բազմապատկական բայերի մասին ավելի ընդարձակ տե՛ս Մ. Աբրեղյան, Հա-յոց լեզվի տեսություն, էջ 291. Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 132—136, Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 269—290:

քննում բայերը բաժանվում են երկու խմբի՝ Ե կամ 1-ին խոնարհման բայեր և Ա կամ 2-րդ խոնարհման բայեր:

Ե խոնարհման են պատկանում այն բայերը, որոնց անորոշ դերբայը վերջավորվում է Ե՛ և ձևով, օրինակ՝ գրել, վագել, գտնել, փախչել, բարձրացնել, վագեցնել, հագցնել, գրվել, սիրվել, կտրատել, չարդատել և այլն:

Ա խոնարհման են պատկանում այն բայերը, որոնց անորոշ դերբայը վերջավորվում է Ա՛ և ձևով, օրինակ՝ հավատալ, գնալ, մեծանալ, զվարճանալ, մտնել, մեծնել և այլն:

Ժամանակակից հայոց լեզվում իրենց ծավալային ընդգրկումով ազելի մեծ թիվ են կազմում Ե խոնարհման բայերը՝ կազմելով բոլոր բայերի մոտավորապես  $\frac{3}{4}$ -ը:

### ԲԱՅԱՀԻՄՔԵՐ

**ԲԱՅԱՀԻՄՔԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԸ.**— Իրար հետ համեմատելով գր-ել, գր-ում, գր-եմ և այլ ձևերը, նկատում ենք, որ դրանց մեջ կա մի ընդհանուր մաս, որ անփոփոխ կերպով հանդես է գալիս բոլոր ձևերի մեջ. դա է ԳՐ մասը: Գրեց-ի, գրեց-իր, գրեց-եք և այլ ձևերի մեջ որպես ընդհանուր անփոփոխ մաս հանդես է գալիս ԳՐԾՑ, իսկ գրե-լ-օ, գրել-իս, գրել-ու, գրել-իք ձևերի մեջ՝ ԳՐԵԼ մասը: Ահա բայական հիմքերի որոշման ելակետ է հանդիսանում հենց այս՝ որոշ բայա-ձևերի մեջ անփոփոխ և ընդհանուր կերպով հանդես եկող բայական բաղադրիչների անջատումը:

Ինչպես տեսանք, գրել բայի համար անջատվեցին երեք ընդհանուր մասեր կամ բայահիմքեր, որոնց վրա վերջավորությունների ավելացմամբ կազմում են բայական ձևերը. դրանք են՝ ԳՐ-, ԳՐԾՑ- և ԳՐԵԼ-: Համեմատությունը ցույց է տալիս, որ այսպիսի երեք հիմքեր են անջատվում, ասենք, նաև կարդալ բայի համար, ինչպես՝ ա) կարդալ, կարդ-ում, կարդ-ա, բ) կարդաց-ած, կարդաց-ի, կարդաց-եք, գ) կարդալ-օ, կարդալ-իս, կարդալ-ու, այսինքն՝ կարդալ բայի համար անջատվում են ԿԱՐԴ-, ԿԱՐԴԱՑ- և ԿԱՐԴԱԼ- հիմքերը:

Այսպես շարունակելով կարող ենք համոզվել, որ ժամանակակից հայերենի յուրաքանչյուր բայի բոլոր ձևերը կազմվում են երեք հիմքերից: Առաջին հիմքը կոչվում է անկատարի կամ անորոշի (բերված օրինակներում գր-, կարդ-), երկրորդ հիմքը՝ կատարչայի (գրեց-, կարդաց-), իսկ երրորդ հիմքը (գրել-, կարդալ-)՝ դերբայական հիմք:

Մինչև վերջերս հայերենի քերականություններում բայաձևերի համար ընդունվում էր երկու հիմք՝ անկատարի (անորոշի) և կատարչայի: Այս դրույթը գալիս է դեռևս Մ. Աբեղյանից, որը, ինչպես հայտնի է, բայ էր համարում միայն դիմավոր, եղանակային ձևերը, իսկ եղանա-

կային ձևերում, իրոք, կարելի է անջատել միայն երկու հիմք՝ անկատարի և կատարչայի հիմքեր: Բայց քանի որ Մ. Աբեղյանին հաջորդած քերականություններում բայական համակարգի մեջ զետեղվեցին նաև դերբայները, դրանից ինքնին բխում է մի երրորդ հիմքի առանձնացումը, որը և կատարում է է. Աղայանը, այն կոչելով դերբայական հիմք<sup>7</sup>:

Այժմ բայական հիմքերի կազմության մասին:

Բոլոր բայերի դերբայական հիմքը այդ բայերի անորոշ դերբային է և ունենալով Ե՛ կամ Ա՛ մասնիկները՝ միշտ հանդես է գալիս որպես նշույթավոր հիմք: Դերբայական հիմքից կազմվում են անկատար երկրորդ և ապառնի դերբայները: Անկատար դերբայն ունենում է ԻՍ, իսկ ապառնի դերբայները՝ ՈՒ և ԻՔ մասնիկները, օրինակ՝ գրել-գրելիս-գրելու-գրելիք, կարդալ-կարդալիս-կարդալու-կարդալիք և այլն: Այս կանոնը համապարփակ է, ոչ մի բացառություն չի ճանաչում երկու խոնարհումների և նրանց մեջ մտնող մանրակաղապարների համար, ուստի և դերբայական բայահիմքից բայական ձևերի կազմությանը այլևս չենք անդրադառնալու:

Բոլոր բայերի անկատարի հիմքն ստանում ենք անորոշ դերբայից Ե՛ և Ա՛ մասնիկները հանելու միջոցով, ինչպես՝ գրել-գր-, կարդալ-կարդ-, փախչել-փախչ-, գտնել-գտն-, բարձրանալ-բարձրան-, բարձրացնել-բարձրացն- և այլն: Բացառություն չկա:

Ներքին կազմության տեսակետից անկատարի բայահիմքերը բաժանվում են երկու խմբի՝ ա) աննշույթ բայահիմքեր, որոնք իրենց կազմում չունեն սոսկածանցներ կամ պատճառական ածանցներ, օրինակ՝ գրել-գր-, հավատալ-հավատ-, և բ) նշույթավոր բայահիմքեր, որոնք իրենց կազմում ունեն սոսկածանցներ կամ պատճառական ածանցներ, օրինակ՝ գտնել-գտն-, փախչել-փախչ-, մեծանալ-մեծան-, մտնել-մտն-, բարձրացնել-բարձրացն-, փախցնել-փախցն և այլն<sup>8</sup>:

Կատարչայի հիմքը կազմված է և տարբեր տիպեր է ունենում:

Ե և Ա խոնարհման պարզ բայերի կատարչայի հիմքը համապատասխանաբար ունենում է ԵՑ և ԱՑ բաղադրիչները, որոնք ավելանում են անկատարի հիմքի վրա, օրինակ՝ գրել-գր-ԵՑ, սիրել-սիր-սիրեց, կարդալ-կարդ-կարդաց, հավատալ-հավատ-հավատաց և այլն:

Ե խոնարհման Ն և Զ ածանց ունեցող բայերի կատարչայի հիմքում անկատարի հիմքի Ն և Զ ածանցներն ընկնում են, և այսպիսով ստացվում են պարզ կամ արմատական հիմքեր, օրինակ՝ գտնել-գտն-գտն-, մտնել-մտն-մտ-, փախչել-փախչ-փախ-, թռչել-թռչ-թռ- և այլն:

<sup>7</sup> Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի ճորովումը և խոնարհումը, էջ 227—230:

<sup>8</sup> Անկատարի հիմքերի համար գործածում են նաև վերջավոր ու անվերջավոր (Է. Աղայան) և ձևավոր ու անձևավոր (Գ. Զահուկյան) անվանումները:

Ա խոնարհման սոսկածանցավոր բայերի կատարյալի հիմքում անկատարի հիմքի Ան և Են ածանցները համապատասխանաբար փոխարինվում են ԱՅ և ԵՅ ածանցներով, օրինակ՝ բարձրանալ-բարձրան-բարձրաց-, հեռանալ-հեռան-հեռաց-, մոտենալ-մոտեն-մոտեց-, մերձենալ-մերձեն-մերձեց- և այլն: Այսպիսով, Ե և Ա խոնարհման պարզ բայերը և այս բայերը կատարյալի հիմքով նույնանում են, օրինակ՝ գրել-գրեց|| մոտենալ-մոտեց, վազել-վազեց || մերձենալ-մերձեց, կարդալ-կարդաց || բարձրանալ-բարձրաց, հավատալ-հավատաց || հեռանալ-հեռաց և այլն:

Պատճառական բայերի կատարյալի հիմքում անկատարի հիմքի ն հնչյունը փոխվում է Բ-ի, օրինակ՝ բարձրացնել-բարձրացն-բարձրացր-, մոտեցնել-մոտեցն-մոտեցր-, հազցնել-հազցն-հազցր- և այլն:

Այսպիսով, ներքին կազմութան տեսակետից կատարյալի հիմքերը ևս լինում են նշույթավոր, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ցույական (գրեց, սիրեց, կարդաց, հավատաց), ու ընկալական (բարձրացր, մոտեցր, հազցր) և աննշույթ (գտ, մտ, փախ, թռ):

Համեմատելով անկատարի և կատարյալի հիմքերը՝ հեշտ է նկատել, որ խոնարհման ոչ մի ձևում դրանք չեն նույնանում և այս կամ այն ձևով հակադրվում են իրար:

Անկատարի և կատարյալի հիմքերը իրար են հակադրվում երեք ձևով՝

	աննշույթ	նշույթավոր
	անկատար	կատարյալ
գրել	գր—	գրեց—
կարդալ	կարդ—	կարդաց—
	նշույթավոր	աննշույթ
	անկատար	կատարյալ
գտնել	գտն—	գտ—
փախչել	փախչ—	փախ—
	նշույթավոր	նշույթավոր
	անկատար	կատարյալ
բարձրանալ	բարձրան—	բարձրաց—
մոտենալ	մոտեն—	մոտեց—
բարձրացնել	բարձրացն—	բարձրացր—
մոտեցնել	մոտեցն—	մոտեցր—

Մի քանի բայեր կատարյալի զուգաձև հիմքեր ունեն, ինչպես՝ բեր|| բերեց, դր||դրեց, ար||արեց և այլն, սակայն դրանք ժամանակակից հա-

յերենի խոնարհման ընդհանուր ձևերից շեղվող այսպես կոչված «անկանոն» բայեր են, որոնց մասին կխոսվի առանձին:

Անկատարի ու կատարյալի հիմքերից կազմվող ձևերին անդրադառնալու ենք ստորև, առանձին խոնարհումներին և նրանց մանրակազմապարեներին նվիրված հատվածներում:

**ԱՄՅԻ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ**

**Սեռերի համակարգը**

ԱՄՅԻ ՍԵՌԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ.— Հայոց լեզվի բայը ներկայացնում է բազմաթիվ ձևերի բարդ համակարգ: Նա ունի դերբայների համակարգ, խոնարհվելով կազմում է եղանակների, ժամանակների, կերպերի, դեմքերի ու թվերի համակարգ: Դրանց պետք է ավելացնել, որ հայերենի բայը կազմում է նաև սեռերի համակարգ:

Քայի սեռի կարգը ցույց է տալիս ֆեռականակաճ ենթակայի ու խնդրի, տրամաբանական սուբյեկտի և օբյեկտի փոխնաբերությունը, որն իր դրսևորումն է գտնում բայաձևի մեջ: >

Հարցին մոտենանք մաքուր ձևաբանական սկզբունքով և տեսնենք, թե սեռերի ի՞նչ համակարգ է կազմում արդի հայերենի բայը:

Հետևյալ երկու խմբի բայերի կազմած սեռային շարքերը պատկերացում կարող են տալ ժամանակակից հայերենի սեռերի համակարգի մասին ընդհանրապես:

**Առաջին խումբ**

	Ա շարք	Բ շարք	Գ շարք
	բարձրանալ	բարձրացնել	բարձրացվել
	հեռանալ	հեռացնել	հեռացվել
	մեծանալ	մեծացնել	մեծացվել
	ավելանալ	ավելացնել	ավելացվել
	մոտենալ	մոտեցնել	մոտեցվել

**Երկրորդ խումբ**

	Ա շարք	Բ շարք
	գրել	գրվել
	սիրել	սիրվել
	հարգել	հարգվել
	արհամարհել	արհամարհվել
	սպասարկել	սպասարկվել

<sup>9</sup> Հմմտ. Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 233:

Բերված երկու խմբերի բայերի ձևաբանական փոփոխությունը հա-  
յոց լեզվի բային հատուկ ու տիպական սեռային փոփոխությունն է:

Առաջին խմբի երեք շարքերը իրար են հակադրված և՛ ձևով, և՛  
իմաստով: Ա շարքի բայերը (բարձրանալ) ցույց են տալիս այնպիսի  
գործողություն, որ պարփակված է ենթակայի մեջ և որի կատարման  
համար ուղիղ խնդիր չի պահանջվում: Բ շարքի բայերը (բարձրացնել)  
ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ դուրս է գալիս ենթակայի  
շրջանակներից և որի կատարման համար պահանջվում է ուղիղ խնդիր:  
Գ շարքի բայերը (բարձրացվել) ցույց են տալիս այնպիսի գործողու-  
թյուն, որ խնդրից անցնում է ենթակային:

Երկրորդ խմբի ո՛չ Ա, ո՛չ Բ շարքերը սեռային նոր իմաստ չեն ար-  
տահայտում: Նրանք միավորվում են առաջին խմբի Բ և Գ շարքերի հետ:  
Այսպիսով, եթե յուրաքանչյուր խմբից վերցնենք մի բայ՝ իր սեռային  
զույգերով, բերված երկու խմբերի շարքերը կմիավորվեն իրար հետ հե-  
տևյալ ձևով.

Ա խումբ	Բ խումբ	Գ խումբ
բարձրանալ	բարձրացնել	բարձրացվել
— — —	սիրել	սիրվել

Առաջին խմբի բայերի արտահայտած քերականական իմաստը կոչ-  
վում է շեղք սեռի իմաստ, երկրորդ խմբինը՝ ներգործական, իսկ եր-  
րորդ խմբինը՝ կրավորական սեռի իմաստ:

Այժմ անցնենք ներգործական, կրավորական ու շեղք սեռի բայերի  
իմաստների ու կիրառությունների ավելի հանգամանակից քննությանը:

#### Ներգործական սեռի բայերը

**ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՐԻ ԲԱՅԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏ-**  
**ՆԵՐՔ.**— Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս մի այնպիսի գոր-  
ծողություն, որի ժամանակ տրամաբանական սուբյեկտի, ֆեռականակաՆ  
ենթակայի կատարած գործողության համար պահանջվում է ուղղական  
կամ տրական հոլովով դրված ուղիղ խնդիր լրացում (տրամաբանական  
օբյեկտ):

Ներգործական սեռի բայերը միշտ ընդունում են ում և ինչ հարցերը,  
որոնց պատասխանը լինում է տրական (անձի առում) և ուղղական (իրի  
առում) հոլովներով դրված ուղիղ խնդիր լրացումը: Այսպես, էմման զը-  
վարճացրեց ո՞ւմ— իր հորը. Սուրենը սիրում է ո՞ւմ, ի՞նչ— հարազատ-  
ներին, աշխատանքը. Աշոտը ճանաչեց ո՞ւմ, ի՞նչ— ընկերոջը, նկարը.  
Լենան գրեց ի՞նչ— նամակ. Երեխան կտորեց ի՞նչը— բաժակը և այլն:

Ուղիղ խնդրի և ներգործական բայի հարաբերությունները տրամա-

բանական տեսակետից բազմապիսի կարող են լինել: Դրանցից նշենք  
մի քանի ավելի ընդհանուրները:

ա) Ուղիղ խնդիրը կարող է հանդիսանալ այն առարկան, որը ներ-  
գործվում, ազդվում, փոփոխվում, մի դրուժյան մեջ է մտնում կամ մի  
դրուժյանից մի ուրիշ դրուժյան է անցնում գործողության ազդեցության  
տակ, օրինակ՝ մտրթել— ոչխարը, վերանորոգել ու գարգարել պատերը,  
շարժել ապակին, պղտորել ջրերը, կտաբել մատիտը, ավերել գյուղը,  
ենդէլ պաշտպանությունը, պատռել գիրքը, զվարճացնել երեխային,  
գայրչիազնել ջուրը և այլն:

բ) Ուղիղ խնդիրը կարող է հանդիսանալ այն առարկան, որը որ-  
պես արդյունք առաջանում, ստեղծվում է գործողության հետևանքով,  
օրինակ՝ գիրք գրել, երջանիկ հասարակարգ կառուցել, ստեղծել հզոր  
բանակ, շատուվան պատրաստել, գուպա գործել, սեղան շինել և այլն:

գ) Ուղիղ խնդիրը կարող է հանդիսանալ այն առարկան, որի վրա  
սոսկ ուղղված է գործողությունը իր ամբողջ ծավալով, առանց իրական  
փոփոխություններ մտցնելու նրա մեջ, օրինակ՝ դիտել երկինքը, նկատել  
կանաճ, հարգել ուսուցչին, սիրել հայրենիքը, լսել ձայնը, մոռանալ  
երեխային, զգալ գեղեցիկը և այլն: Ինչպես նկատում ենք, այսպիսի ու-  
ղիղ խնդիր են ունենում մարդու գիտակցական, իմացական, զգայական  
և ընդհանրապես մտավոր ու հոգեկան գործունեություններն արտահայ-  
տող ներգործական բայերը:

Ելնելով բայի և ուղիղ խնդրի կոնկրետ բառային իմաստների հետ  
կապված առանձնահատկություններից՝ բերված բաժանումների ներսում  
բայի և ուղիղ խնդրի զանազան հարաբերությունները ցույց տվող ավելի  
ևս փոքր խմբեր կարելի է առանձնացնել, ինչպես՝ դեպքեր, երբ ուղիղ  
խնդիրը փոփոխություն է կրում գործողությունից (շարժել բաժակը), երբ  
մի դրուժյան մեջ է մտնում գործողության հետևանքով (զվարճացնել  
երեխային), երբ մի դրուժյանից մի այլ դրուժյան է անցնում (մեծաց-  
նել երեխային), երբ ստեղծվում է գործողությունից (տուն կառուցել),  
երբ ոչնչանում է գործողությունից (տուն քանդել) և այլն, և այլն:

Բայց այդ տարբեր հարաբերությունները ոչ թե քերականորեն են  
արտահայտվում, այլ պայմանավորված են բայի և ուղիղ խնդրի կոնկ-  
րետ բառային նշանակությամբ: Հայոց լեզվի քերականական կառուց-  
վածքի տեսակետից նշանակություն չունի՝ բայի գործողության ազդե-  
ցության տակ օբյեկտն ստեղծվում է, թե՞ ոչնչանում, փոփոխություն  
կրում է, թե՞ ոչ, մի դրուժյան մեջ է մտնում, թե՞ մի վիճակից մի այլ  
վիճակի է անցնում: Քերականական վերլուծությունը մեզ ոչինչ չի կա-  
րող ասել այն մասին, թե «տուն կառուցել», «տուն քանդել» կամ «տուն  
ստանալ» կապակցությունների մեջ բայի և խնդրի հարաբերությունը տար-  
բեր է: Ներգործական բայերի քերականական հարաբերությունը առար-



կային ընդգրկում է վերևի բոլոր դեպքերն էլ, և սեռի խնդիրը բոլոր դեպքերում ձևավորվում է ուղղակիանով կամ տրականով:

ՅՆ ԱՍԱՆՅՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ (ԺԱՄԱՆԱԿԱԿՈՅ ԶԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ).— Հայերենի ներգործական բայերը ըստ իրենց կազմութայն բաժանվում են երկու խմբի՝ պարզ կազմության ներգործականներ (գրել, բարեկարգել, հաղթահարել, հասկանալ, թողնել և այլն) և բաղադրյալ կազմության ներգործականներ կամ պատճառական բայեր (մտցնել, բարձրացնել, թաքցնել, հասկացնել, հիշեցնել և այլն): Վերջիններս կազմվում են ՅՆ ածանցով՝ շեղոքներից կամ ներգործականներից: Քննենք դրանք առանձին-առանձին:

Չեզոքներից ՅՆ ածանցով կազմված բայերը.— Ժամանակակից հայերենի շեղոք բայերի մի զգալի մասը, ստանալով ՅՆ ածանցը, դառնում է ներգործական սեռի, օրինակ՝ մեծանալ-մեծացնել, բարձրանալ-բարձրացնել, մոտենալ-մոտեցնել, զարմանալ-զարմացնել, ծիծաղել-ծիծաղեցնել և այլն:

ՅՆ ածանցով կազմված ներգործականները իրենց համապատասխան շեղոքներից նրանով են տարբերվում, որ եթե շեղոք բայերը ցույց են տալիս միայն ենթակայի գործողությունը կամ դրույթունը, ինչպես՝ «Սուրենը զվարճանում է»։ «Երեխան մեծանում է»։ «Աշակերտը նրստում է»։ «Արևը բարձրանում է» և այլն, ապա այդ շեղոքներին համապատասխան ներգործականները, ցույց տալով հանդերձ ենթակայի գործողությունը, միաժամանակ արտահայտում են այն առարկայի պահանջը, որը մի որոշ դրույթան մեջ է մտնում այդ գործողության ազդեցությամբ, փոխվում, մի դրույթունից մի ուրիշ դրույթան է անցնում, ինչպես՝ «նա զվարճացնում է իր երեխաներին»։ «Մայրը մեծացնում է իր զավակներին»։ «Ուսուցիչը աշակերտին նստեցրեց առաջին սեղանին»։ «Քանվորները բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը» և այլն:

Հայ քերականների մեծ մասը գտնում է, որ ՅՆ ածանցով կազմված բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որ ենթական ինքը չի կատարում, այլ միայն պատճառ է լինում ուրիշին՝ մի գործողություն կատարելու: Այստեղից էլ ՅՆ ածանցով կազմված բայերի «պատճառական բայեր» անվանումը:

Վերջիննք հետևյալ նախադասությունները. «Ուսուցիչը կորցրեց իր գրքերը»։ «Ուսուցիչը վերջացրեց աշխատանքը»։ Դժվար թե հնարավոր լինի ասել, թե այս նախադասություններում կորցնել, վերջացնել բայերով արտահայտված գործողությունները կատարում է ոչ թե ուսուցիչ ենթական, այլ նրա դրոյմամբ, ստիպմամբ կատարում են գրքերը, աշխատանքը խնդիրները:

Այժմ վերջիննք հետևյալ նախադասությունները.

Դիրեկտորը նրան ազատեց աշխատանքից:  
Դիրեկտորը նրան հեռացրեց աշխատանքից:  
Նրանք ավարտեցին աշխատանքը:  
Նրանք վերջացրին աշխատանքը:  
Նա ամրապնդեց իր դիրքերը:  
Նա ամրացրեց իր դիրքերը:

Եթե ընդունենք պատճառական բայերին տրված վերևի բացատրությունը, ապա պիտի ընդունենք նաև, որ բերված համապատասխան առարին և երկրորդ նախադասությունների միտքը բոլորովին տարբեր է, որովհետև առաջին օրինակների մեջ գործողությունը կատարում է ենթական (ներգործական սեռի բայեր), իսկ երկրորդ օրինակների մեջ գործողությունը ենթական չի կատարում, այլ նրա դրոյմամբ, ստիպմամբ կատարում է մի ուրիշ առարկա (պատճառական սեռի բայեր): Բայց «Դիրեկտորը նրան ազատեց աշխատանքից» և «Դիրեկտորը նրան հեռացրեց աշխատանքից» նախադասությունները, ինչպես և համապատասխան մյուս նախադասությունները, նույն կամ համարյա նույն միտքն են արտահայտում: Ազատել-հեռացել, ավարտել-վերջացել, ամրապնդել-ամրացնել բայերը իրարից տարբերվում են կոնկրետ բառային, բայց ոչ քերականական նշանակությամբ: Այսպես են նաև հետևյալները. իրագործել-իրականացնել, լայնացնել-ընդլայնել, մեղմել-մեղմացնել, բեռնել-կենտրոնացնել, մաքել-հանգցնել և այլն: Դրանք բոլորն էլ արտահայտում են մի այնպիսի գործողություն, որ բխում է քերականական ենթակայից և ուղղված է ուղիղ խնդրի վրա: Այս երկու խմբերը, իրարից տարբերվում են կազմությամբ. առաջինները պարզ, իսկ երկրորդները բաղադրյալ ներգործական բայեր են\*:

Բայց, համենայն դեպս, բացի կազմության տարբերությունից, այս երկու խմբերը ունեն իմաստային երանգի տարբերություն:

ՅՆ ածանցով կազմված բայերը, սեռով, քերականական ընդհանուր իմաստով շարբերվելով պարզ ներգործականներից, նրանցից տարբերվում են իրենց դրսևորած գործողության յուրահատուկ բնույթով: Իսկ դա արտահայտվում է նրանում, որ բաղադրյալ ներգործական բայերով դրսևորված գործողությունների ուղիղ խնդիրը ոչ միայն ներգործության ենթարկվող, այլև մի դրույթունից մյուսին անցնող, մի դրույթան մեջ մտնող, որոշ դեպքերում մի գործողություն կատարող առարկա է: Ահա մտնող, որոշ դեպքերում մի գործողություն կատարող առարկա է: Ահա է բաղադրյալ ներգործականների արտահայտած գործողության յուրահատուկ բնույթը, դրանց պատճառականությունը: Հասկանալի է, որ այդ բայերի գործողության յուրահատուկ բնույթը ստեղծվում է այնպատճառով, որ դրանք ունեն իրենց համապատասխան շեղոքները: Այսպատճառով,

\* Այստեղ պարզ և բաղադրյալ անվանումները գործածվում են պայմանականորեն:

պես, քանի որ, ասենք, վազեցնել, մտեցնել, հասցնել, բարձրացնել և այլ բայերն ունեն իրենց համապատասխան շեղոքները, այդ պատճառով էլ դրանցով արտահայտված գործողությունների դեպքում ատաղին գծի վրա է մղվում այն, որ ենթական ոչ թե ինքն է վազում, մտեցնում, հասնում, բարձրանում, այլ վազեցնում է, մտեցնում է, հասցնում է, բարձրացնում է մեկ ուրիշի, իսկ այդ մեկ ուրիշը ոչ միայն վազեցվում է, մտեցվում է և այլն, այլև վազում է, մտեցնում է և այլն: Պատճառական բայերով դրսևորված գործողությունը կարծես թե հանդես է գալիս որպես երկփեղկված գործողություն (վազեցնել-վազել, մտեցնել-մտեցնել):

Այստեղից դժվար չէ կարկանդակել, որ երբ Յն ածանցով կազմված բայերը շունեն իրենց համապատասխան շեղոքները, չի կարող հանդես գալ նաև այդ բայերի արտահայտած գործողության յուրահաստուկ բնույթը՝ պատճառականությունը:

Փրաքարից փոխառյալ մի քանի պատճառական բայեր, ինչպես՝ կառուցել, հատուցել, մատուցել, հարուցել և այլն, գործածվում են արդի հայերենում, բայց պատճառականություն չեն արտահայտում: Ինչու: Որովհետև դրանք շունեն իրենց համապատասխան շեղոքները:

Ասում են, թե փակցնել, կառնցնել, յուրացնել, վերցնել բայերը, շնայած որ կազմված են Յն ածանցով, պատճառական չեն կամ կորցրել են պատճառական իմաստը: Իսկ ինչու: Միայն և միայն այն պատճառով, որ դրանք շունեն իրենց համապատասխան շեղոքները: Այդ բայերը ավելի քիչ «պատճառականություն» չեն արտահայտում, քան, ասենք, վազեցնել, նստեցնել, զվարճացնել և այլ բայերը:

Ընդհանուր եզրակացությունը կլինի հետևյալը:

Պարզ ներգործական և Յն ածանցով կազմված ներգործական բայերի միջև գործողության, ենթակայի և ուղիղ խնդրի փոխհարաբերության տեսակետից տարբերություն չկա: Այդ երկու խմբի բայերն էլ ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որ բխում է ենթակայից և անցնում է ուղիղ խնդրի վրա: Պատճառական բայերը, ունենալով իրենց համապատասխան շեղոքները, ի հակադրություն դրանց, ավելի ցայտուն կերպով են դրսևորում ներգործական սեռի քերականական էությունը<sup>10</sup> ցույց տալով մի այնպիսի գործողություն, որի ազդեցության տակ ուղիղ խնդիրը մի որևէ վիճակի, դրություն մեջ է մտնում կամ մի դրությունից անցնում է մի ուրիշ դրության: Պատճառական բայերը իրենց արտահայտած այդ իմաստով ոչ թե հակադրվում են պարզ ներգործական բայերին, այլ նրանց հետ քերականական մի միասնություն են կազմում՝ միավորվելով ներգործական սեռ քերականական կարգի տակ:

<sup>10</sup> Հմմտ. Հ. Ֆարսեյան, Արդի Ռայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 122:

Այստեղից էլ ելնելով՝ Յն ածանցի հիմնական ֆունկցիան ոչ թե այն է, որ շեղոք սեռի բայերին դարձնում է պատճառական՝ ցույց տալով մի այնպիսի գործողություն, որը ենթակայի ստիպմամբ կամ դրողմամբ կատարում է մի այլ առարկա, այլ այն, որ շեղոք սեռի բայերին դարձնում է ներգործական՝ ցույց տալով հնթակայի այնպիսի գործողություն, որի կատարման համար անհրաժեշտ է ուղիղ խնդիր լրացում: Յն ածանցը սեռային ածանց է:

Ներգործականներից Յն ածանցով կազմված բայերը.— Բացի չեղքներից, Յն ածանցը կարող են ստանալ նաև մի քանի ներգործական բայեր, ինչպես՝ հագնել-հագցնել, հասկանալ-հասկացնել, հիշել-հիշեցնել, զգալ-զգացնել, լսել-լսեցնել, խմել-խմեցնել, կարդալ-կարդացնել, ոտել-ուտեցնել կամ կեցցնել, տեսնել-տեսցնել, ճանաչել-ճանաչեցնել, մտանալ-մտացնել և այլն: Այդ բայերի թիվը սահմանափակ է և չի անցնում մի երեք տասնյակից:

Ի՞նչ տարբերություն կա պարզ ներգործական և համապատասխան պատճառական-ներգործական բայերի միջև:

Եթե պարզ ներգործականներն արտահայտում են այնպիսի գործողություն, որի համար պահանջվում է ենթակայի գործողությունն իր վրա կրող առարկա, ինչպես՝ «Աղջիկը ճաշ է ուտում»։ «Երեխան կաթ է խմում», ապա ներգործականներից կազմված պատճառականները արտահայտում են այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է մի առարկա՝ ենթակայի գործողության ազդեցության տակ մի ուրիշ առարկայի վրա ներգործելու համար, ինչպես՝ «Մայրը աղչկան ճաշ է ուտեցնում»։ «Հայրը երեխային կաթ է խմեցնում»<sup>11</sup>:

Բերում ենք մի քանի օրինակ գեղարվեստական գրականությունից.— «Խարում է, տանում գցում ծովի մեջ, Շորերը առնում, ետ բերում քաղաք, Հագցնում իր սև, դարձվոր աղջկան» (Թում.)։ «Նստեցնում է քեզ մի երկու բաժակ Տաք ջուր խմեցնում կամ մի թաս օդի» (Թում.)։ «Մի՞ թողնիր, որ եղբայրդ տանի հարստությունը ուտեցնի՛ կնոջն ու զավակներին» (Շիրվ.)։ «Ա՛խ, Սեդա, գոնե մի կերպ հասկացնե՛իր ինձ այդ գաղտնիքը» (Մուր.)։ «Լևոնին այդ բոլորը հիշեցնում էր իսկական ռազմաճակատ» (Ջար.)։ «Սովորեցնում էին նրան կրոն, լեզուներ ու դպրություն» (Րաֆֆի):

Ներգործականներից Յն ածանցով կազմված բայերը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, թելադրում են երկու հարց՝ ում, ինչ և պահանջում են այդ հարցերի պատասխանը որպես տրականով դրված անուղղակի խնդիր և ուղղականով դրված ուղիղ խնդիր, ինչպես՝ հագցնել ուղղակի խնդիր և ուղղականով դրված ուղիղ խնդիր, ինչպես՝ հագցնել ում, ի՞նչ— երեխային շորերը: հիշեցնել ում, ի՞նչ— ուսանողին իր պարտականությունը, հասկացնել ում, ի՞նչ— աշակերտի դասը և այլն:

Հայերենի համար որպես ընդհանուր կանոն չի կարելի սահմանել:

<sup>11</sup> Տե՛ս անդ, էջ 123:

թե ներգործական բայերը, ստանալով պատճառական ածանցներ, լրիվ փոխում են իրենց բառային ու քերականական նշանակությունը: Այսպես, արդի հայերենում պատել-պտտեցնել, մեղմել-մեղմացնել, կրճել-կրճատացնել համապատասխան գույգերը համանիշներ են և իրարից տարբերվում են սոսկ իմաստային երանգով: Այսպիսի զուգահեռ ձևերը ավելի շատ էին գրարարում, ինչպես՝ ազատեմ-ազատեցուցանեմ, փրատեմ-փրատեցուցանեմ, գայթազեմ-գայթազեցուցանեմ, հնազանդեմ-հնազանդեցուցանեմ, բորբոքեմ-բորբոքեցուցանեմ, դանդաղեմ-դանդաղեցուցանեմ, դղրդեմ-դղրդեցուցանեմ, ծաւալեմ-ծաւալեցուցանեմ և այլն: ՈՒՅԱՆ ածանցը այսպիսի դեպքերում ավելի է ուժեղացնում բայի ներգործական նշանակությունը և նրան տալիս է պատճառականության երանգ:

Պատճառական բայեր են կազմվում նաև տալ բայի հարադրությամբ: Տալ բայով պատճառականներ կարելի է կազմել համարյա բոլոր ներգործական բայերից, ինչպես՝ սիրել-սիրել տալ, բերել-բերել տալ, զարդարել-զարդարել տալ, վերջացնել-վերջացնել տալ, հագցնել-հագցնել տալ, հեռացնել-հեռացնել տալ, ավելացնել-ավելացնել տալ և այլն:

Տալ բայի հարադրությամբ կազմված պատճառականները ցույց են տալիս մի գործողություն, որ ոչ թե ենթական է կատարում, այլ կատարել է տալիս մի ուրիշին, ինչպես՝ գրեց-գրել տվեց, զարդարեց-զարդարել տվեց, բերեց-բերել տվեց, բարձրացրեց-բարձրացնել տվեց և այլն: **ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԾԱՐԱՀԱՅՈՒՄԱԿԱՆ ԱՅԼ ԱՌԱՆՁՆԱԿԱՆՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** — Ներգործական բայերի գործածությունը առանց ուղիղ խնդրի. — Երբեմն ներգործական բայերը գործածվում են առանց ուղիղ խնդրի: Այսպիսի դեպքերում նրանք ցույց են տալիս շարունակական, կրկնողական գործողություն՝ որպես ենթական մշտական, մնայուն, բընութագրող հատկանիշ, օրինակ՝ նա լավ է կարգում. Միշտ գրում է. Քիչ է ուտում. Եատ է խմում և այլն: Այսպիսի կիրառությունները հաճախ համարում են ներգործական բայերի բացարձակ գործածություն:

Ներգործական սեռի բայ + բացառական հոլովով դրված մասնական խնդիր. — Երբեմն ներգործական սեռի բայերը ուղիղ խնդրի փոխարեն ունենում են բացառական հոլովով դրված մասնական խնդիր, օրինակ՝ նա այդ հացից կերավ. Հայրս այդ գրքերից ուղարկել էր մեզ:

Այսպիսի կապակցությունները ցույց են տալիս, որ առարկան գործողության մեջ է մտնում ոչ թե իր ամբողջ ծավալով, այլ մի մասով միայն: Համեմատել, օրինակ, «Այդ գինին տուր» և «Այդ գինուց տուր». «Այդ հացը բեր» և «Այդ հացից բեր» կապակցությունները: Բացառական հոլովով մասնական խնդիր կարող են ունենալ մի շարք ներգործական բայեր: Բերենք մի քանի օրինակ:

«Ես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում» (Թում.). «Յարս էլ խմե՛ց էդ ջրից» (Թում.). «Վերջը Գառնիկի մսիցն է ուզում» (Թում.). «Միծածա-

ղելով կանչեց Արմենակը՝ պինդ համբուրելով նրա վարդազունն այտից» (Նար-Դոս). «Վաճառիր այդ այլուրից». «Գնիր այդ կտորից». «Իր ունեցածից ինձ էլ տվեց». «Այդ գինուց մենք էլ ունենք». «Վայելիր այս պտուղներից»:

Ներգործական սեռի բայ + սեռական-տրական հոլովի և մասին կապի միջոցով արտահայտված վերաբերության խնդիր. — Ժամանակակից հայերենում ասացական, պատմողական, իմացական և նման իմաստներ արտահայտող ներգործական բայերի խնդիրը հաճախ արտահայտվում է սեռական-տրական հոլովի և մասին կապի միջոցով, ինչպես՝ «Պատմում է նրանց իր ձիու ֆաշագործությունների մասին». «Հիշեց այդ կարևոր որոշման մասին». «Լսում էին թոխյաների մասին». «Հայտնեցին նրա վերադարձի մասին». «Ձեկուցեցին հայրանակի մասին»: Սրանք իմաստով տարբերվում են «Ներգործական բայ + ուղիղ խնդիր» կապակցություններից: Այսպես, «պատմել այդ գիրքը» կապակցությունը նշանակում է «լրիվ պատմել այդ գիրքը», իսկ «պատմել այդ գրքի մասին» կապակցությունը նշանակում է «որոշ բան պատմել այդ գրքի մասին»:

Մասին կապով արտահայտված այս խնդիրը, որ կոչվում է վերաբերության խնդիր, ժողովրդական լեզվում սովորաբար բացառականով է արտահայտվում, օրինակ՝ «Խոսում են լոռու հին-հին ֆաջերից» (Թում.). «Ճամփին որսից էինք խոսում» (Թում.):

Կրավորական սեռի բայեր

**ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** — Ժամանակակից հայոց լեզվում կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործական սեռի բայերից՝ Վ ածանցով: Սակավ բացառություններով, յուրաքանչյուր ներգործական բայ ունի իր համապատասխան Վ ածանցով կրավորականը, ինչպես՝ պարզեատրել—պարզեատրվել, ուսումնասիրել—ուսումնասիրվել, ծաղրել—ծաղրվել, կալանավորել—կալանավորվել, կարգալ—կարգացվել, զգալ—զգացվել, բարձրացնել—բարձրացվել, մեծացնել—մեծացվել և այլն:

Եթե ներգործական սեռի բայերը ցույց են տալիս մի գործողություն, որ ենթակայից անցնում է խնդրին, ապա կրավորական սեռի բայերը ցույց են տալիս մի գործողություն, որ խնդրից անցնում է ենթակային:

Ներգործական սեռի բայերով կազմվում են ներգործական կառուցվածքի նախադասություններ, օրինակ՝ «Դիրեկտորը պարզեատրեց ուսավորին», իսկ կրավորական սեռի բայերով՝ կրավորական կառուցվածքի նախադասություններ, օրինակ՝ «Ուսանողը պարզեատրվեց դիրեկտորից»: Ներգործական կառուցվածքի նախադասության մեջ քերականական

սուբյեկտը և օբյեկտը համապատասխանում են տրամաբանական սուբյեկտին և օբյեկտին, այնինչ կրավորական կառուցվածքի մեջ տրամաբանական սուբյեկտը հանդես է գալիս անուղղակի խնդրի, իսկ տրամաբանական օբյեկտը՝ ենթակայի քերականական կարգով:

Սուբյեկտի և օբյեկտի հարաբերությունների այս տարբեր արտացոլումները հնուց անտի հատուկ են հայոց լեզվին: Արդեն գրաբարում իբրև են հակադրվում «Որդի սիրէ զհայր» և «Հայր սիրի յորդոյ» նախադասությունները՝ որպես նույն մտքի տարբեր արտացոլումներ: Դրանք իրենց ուժն ու կենսունակությունը պահպանել են նաև այսօր, և այժմ և հնարավորություն ունենք այդ նույն միտքն արտահայտելու երկու ձևով՝ «Որդին սիրում է հորը», «Հայրը սիրվում է որդուց»:

Երբ ասում ենք, որ ներգործական և համապատասխան կրավորական կառուցվածքները նույն միտքն արտահայտում են լեզվական տարբեր միջոցներով, ապա որոշ անճշտություն ենք թույլ տալիս, որովհետև դրանք ոչ թե նույնանիշներ, այլ շարահյուսական համանիշներ են: Եվ ինչպես որ բառապաշարային համանիշները լրիվ նույնական չեն, այնպես էլ լրիվ նույնական չեն շարահյուսական համանիշները:

Վերևում բերված նախադասությունների բովանդակային տարբերությունը հանգում է հետևյալին: Եթե ներգործական կառուցվածքի նախադասության մեջ առաջին գծի վրա է դրված սուբյեկտի՝ իր իսկ հատկանիշի ստեղծման փաստը, որի իրականացման համար օբյեկտ է պահանջվում, ապա կրավորական կառուցվածքի նախադասության մեջ առաջին գծի վրա է մղված օբյեկտի հետ կատարված գործողության փաստը, իսկ թե այդ գործողությունն ո՞վ է կատարել, մղված է երկրորդական գծի վրա: Կարճ և՛ պարզ ասած՝ (եթե բերված ներգործական կառուցվածքի նախադասության խնդիրն է ցույց տալ, որ դիրեկտորը պարզևատու է ուսանողին, ապա կրավորական կառուցվածքի նախադասության խնդիրն է ցույց տալ, որ ուսանողը պարզևատուվել է (դիրեկտորից): Այս տեսակետից, ահա, դրանք ոչ միայն շարահյուսորեն, այլև բովանդակությամբ և իրենց արտահայտած մտքի երանգներով նույն նախադասությունները չեն:

Ասվածներից կարելի է գալ հետևյալ եզրակացություններին.

ա) Կրավորական կառուցվածքի նախադասության տրամաբանական սուբյեկտը որպես գործողության, հատկանիշի ստեղծող այս կամ այն կերպ անտեսված է, նա չունի այն ուժն ու գործությունը, ինչ համապատասխան ներգործական նախադասության սուբյեկտը:

բ) Կրավորական կառուցվածքի նախադասության, մեջ օբյեկտի դերն ավելի մեծ է, քան համապատասխան ներգործական կառուցվածքի նախադասության մեջ:

Կրավորական նախադասության տրամաբանական սուբյեկտը կամ քերականական ներգործող խնդիրը, որ կոչվում է նաև կրավորական սե-

սի խնդիր, արտահայտվում է կամ բացառական հոլովով, կամ սեռական-տրականի և կողմից կապի միջոցով, ինչպես՝ Հայրը սիրվում է որդուց՝ որդու կողմից, նա արհամարհվում է ծողովորդից՝ ծողովորդի կողմից, Աբելն սպանվեց Կայենից՝ Կայենի կողմից և այլն: Վերջին ձևերն ավելի ու ավելի են տարածվում և գերիշխող դառնում:

Կրավորական կառուցվածքի այն նախադասությունը, որի մեջ առկա է ներգործող խնդիրը (տրամաբանական սուբյեկտը), կոչվում է եռանդամ կրավորական, օրինակ՝ «Այս հարցը քննարկվում է կառավարության կողմից»:

Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ եռանդամ կրավորական ընդհանրապես քիչ գործածական է: Այսպես է, օրինակ, ռուսերենում և գերմաներենում: Եռանդամ կրավորականը քիչ գործածական է նաև հայերենում:

Եռանդամ կրավորականի սակավ գործածությունը լեզուներում բխում է կրավորական կառուցվածքի նախադասության բուն էությունից, այն է՝ իջեցնել գործողի, որպես ռեալ տրամաբանական սուբյեկտի դերը, ցույց տալ օբյեկտի հետ կատարված որոշ գործողության փաստ՝ մեծ մասամբ անկախ գործողից: Ահա այս է պատճառը, որ կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունների մեջ ներգործող խնդիրը, տրամաբանական սուբյեկտը մեծ մասամբ չի հիշատակվում, չի արտահայտվում, օրինակ՝ «Այդ հարցը ուսումնասիրվում է»։ «Առաջարկությունը մերժվեց»։ «Ճահիճները շորացվում են»։ «Ցուրացվում են նոր հողատարածությունները»։ «Կառուցվում են նոր հիանալի բնակարանները»։ «Արտադրության մի խումբ առաջավորներ պարզևատուվեցին» և այլն:

Կրավորական կառուցվածքի այն նախադասությունը, որի մեջ ներգործող խնդիրը՝ տրամաբանական սուբյեկտը, չի նշվում, կոչվում է երկանդամ կրավորական:

Երկանդամ կրավորականը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, արտահայտում է օբյեկտի (քերականական ենթակայի) հետ կապված մի որոշ գործողություն՝ առանց հիշատակելու գործողին:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏԱՆ ԻՄԱՍՆՆԵՐԸ.— Արդի հայերենում ներգործականներին համապատասխան կրավորական բայերի մի մասը միայն կրավորական սեռի իմաստ է արտահայտում, իսկ մյուս մասը ըստ գործածության կարող է արտահայտել և՛ կրավորական, և՛ շեղոր սեռերի իմաստները:

Այսպես, օրինակ՝ գնահատվել, ծաղրվել, կալանավորվել, ուղտովվել, հրավիրվել բայերը ինչպիսի շարահյուսական կապակցությունների մեջ էլ որ գործածվեն, անպայմանորեն ըմբռնվում են որպես կրավորական սեռի, և նրանց ենթական միշտ ընկալվում է որպես տրամաբանական օբյեկտ, ինչպես՝ նա գնահատվում է, ծաղրվում է, կալանավոր-

վում է, ուղարկվում է, հրավիրվում է: Բերված բայերի ընույթն բանեն նաև՝ բազմաթիվ ուրիշ կրավորականներ, օրինակ՝ գովվել, խմվել, ուտվել, արտասվել, բերվել, կանչվել, արհամարհվել, բարձրացվել, ավելացվել, ոչնչացվել և այլն և ընդհանրապես պատճառականներից կազմված կրավորականները:

Այժմ վերցնենք հաճճնվել, պատրաստվել, սկսվել բայերը: Դրանք մեկ կարող են գործածվել որպես կրավորական սեռի՝ ցույց տալով, որ ենթական գործողությունն իր վրա է կրում ուրիշից, օրինակ՝ «Որոշումը հանձնվեց գործկոմի քննարկմանը»: «Ուսանողների կողմից զեկուցում էր պատրաստվել»: «Գարնանացանը գյուղացիների կողմից սկսվեց մարտի վերջերին», մեկ կարող են գործածվել որպես շեղոք սեռի՝ ցույց տալով, որ ենթական գործողությունը ուրիշից չի կրում, այլ կատարում է ինքը, օրինակ՝ «Նա գերի հանձնվեց»: «Պատրաստվում է դատարան դիմել»: «Ստանամանիքներն սկսվեցին դեկտեմբերի կեսերից»: Բերված բայերի ընույթն ունեն նաև բազմաթիվ ուրիշ կրավորականներ, ինչպես՝ բաժանվել, շարժվել, փակվել, բացվել, տեղափոխվել, տանջվել, հուզվել և այլն:

Հարց է առաջանում՝ ինչո՞վ է պայմանավորված կրավորական բայերի արտահայտած շեղոք իմաստը:

Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից հայոց լեզվում պարզ ներգործական բայերը չունեն առանձին շեղոք սեռի ձև՝ որպես ոչ կրավորական: Բայց կենդանի լեզվական պրակտիկայի ընթացքում անհրաժեշտություն և կարիք է զգացվում, ասենք, շարժ(ել), ազատ(ել), քափ(ել), բաց(ել), պատրաստ(ել), սկս(ել) և այլ բայիմաստներով դրսևորվող գործողությունը ներկայացնել ոչ միայն որպես ներգործական ու կրավորական սեռի, այլև շեղոք սեռի գործողություն, ինչպես՝ «Քամին շարժվում է մեղմիկ»: «Վարդը բացվում է մայիսին»: «Նրա աչքերից արցունքներ էին թափվում» և այլն:

Այսպես է եղեց նաև գրաբարում, որտեղ ներգործական բայերի կրավորաձև խոնարհմամբ արտահայտվում էր ոչ միայն կրավորական, այլև շեղոք սեռի իմաստ, օրինակ՝ «Եւ երբեք երբեք պատերազմունք շարժին, ուր մեղատորք և արդարք առաւարակ կտորրին» (Եզգիկ): «Ապա լցան, սփռեցան, ծաւալեցան ընդ ամենայն երկիրն Հայոց» (Փաստոս): «Յորդագոյնս տարածեցաւ աղանդ օնցա» (Ագաթանգեղոս):

Միջին հայերենում Վ/Խ, Ո/Ը/ անձնցի առաջացմամբ հնարավորություն է ըստեղծվում անցողական բայերի մեջ տարբերակելու ներգործական, կրավորական և շեղոք սեռի ձևեր, ինչպես՝ եփեմ /ճ./, եփիմ /չ./, եփվիմ /կ./, բաժնեմ/իմ/վիմ, այրեմ /իմ/վիմ, շարժեմ/իմ/վիմ, ծռեմ/իմ/վիմ, պատռեմ/իմ/վիմ, փոխեմ/իմ/վիմ, կտորեմ/իմ/վիմ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս երևույթը միջին հայերենում չի ներկայացնում որպես մի հետևողական համակարգ՝ մասն առնալով, որ սեռային երեք ձևեր են ունեցել միայն Ե խոնարհման անցողական բայերի մի մասը, մյուս կողմից էլ՝ Վ-ով ձևերը հաճախ շեղոք կամ անդրադարձ իմաստ են արտահայտել:

Միջին հայերենի անցողական բայերի երեք սեռերը պահպանվել են Պոլսի բարբառում, որից և մասնակիորեն անցել են արևմտահայ գրական լեզվին: Վերջնուսն փրանի ներգործական բայեր, կրավորական սեռի ձևից բացի, ունեն առանձին շեղոք սեռի ձև, ինչպես՝ կտորեմ||կտորի||կտորվի, ծռեմ||իմ||վիմ, քափեմ||իմ||վիմ, այրեմ||իմ||վիմ, մարեմ||իմ||վիմ<sup>12</sup>:

Ի՞նչ վերաբերում է արդի հայերենին, ապա, ինչպես Եզվել է արդեն, այստեղ ներգործական սեռի բայերն ընդհանրապես չունեն առանձին շեղոք սեռի ձև՝ որպես ոչ կրավորական, և այդ է պատճառը, որ նրանց շեղոք սեռն արտահայտվում է կրավորական ձևի միջոցով:

Կրավորական բայերի արտահայտած շեղոք սեռի իմաստն ընդհանրապես բնորոշվում է նրանով, որ բայիմաստով դրսևորված գործողությունը կատարում է քերականական ենթական: Բայց կրավորական բայերի կոնկրետ բառային նշանակությունից կախված՝ այդ ընդհանուր նշանակության մեջ, որպես նրա կոնկրետ դրսևորումներ, հանդես են գալիս իրարից տարբեր մի քանի իմաստներ, որոնք տարբեր ձևով են բնութագրում ենթականի և գործողության հարաբերությունը:

Մի շարք կրավորական բայեր արտահայտում են այնպիսի գործողություն, որ կատարում է ենթական, բայց և միևնույն ժամանակ ուղղված է հենց իր՝ ենթականի վրա: Ընթական այդ բայերի դեպքում հանդես է գալիս իր կատարած գործողությունը իր վրա կողի դերում: Այսպիսի իմաստ արտահայտող բայերը մեր քերականագիտության մեջ կոչվում են անդրադարձ բայեր: «Մայիսի մեկին նա քնից զարթնեց թե չէ, վեր կացավ, լվացվեց, սանրվեց, զուգվեց, զարդարվեց և շտապեց փողոց» նախադասության մեջ ընդգծված բայերը անդրադարձ իմաստ են արտահայտում: Այդպիսիք են նաև՝ հագնվել, հանվել, պատրաստվել, պաշտպանվել, ֆսվել, սափրվել, փաթաթվել, յուղվել, օծվել, շաքարվել, մաքրվել, շփվել, տեղավորվել և մի քանի ուրիշները:

Անդրադարձ իմաստը կրավորական բայերի շեղոք իմաստի մասնակի դրսևորումներից մեկն է: Կրավորաձև շեղոք բայը հակադրվում է իր համապատասխան ներգործական սեռի բային հետևյալ ձևով: Եթե ներգործական բայը ցույց է տալիս ենթականի կատարած և ուրիշ առարկայի վրա ուղղված գործողություն, ինչպես՝ «Նա տանջում է ինձ», «Նա հուզում է ինձ», ապա կրավորաձև շեղոք բայը ցույց է տալիս ենթականի կատարած, բայց և միևնույն ժամանակ ենթականի մեջ մնացած, ենթականի մեջ պարփակված գործողություն, ինչպես՝ «Նա հուզվում է», «Նա տանջվում է»: Եթե հարցին մոտենանք այս տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ կրավորաձև շեղոքների հակադասական մեծամասնությունը այս կամ այն կերպ անդրադարձ իմաստ է արտահայտում: Բայց կրավորական բայերի անդրադարձ իմաստի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ ենթականի գործողությունը ոչ

<sup>12</sup> Տե՛ս Ա. Այսրենյան, ՔՃԱԿԱԿԱՆ քերականություն..., էջ 89:

թե ընդհանրապես պարփակված է ենթակայի մեջ, այլ ուղղված է հենց իր՝ ենթակայի վրա: Եթե չկա գործողության անմիջական ուղղվածություն, ուրեմն և չկա անդրադարձ իմաստ: Այսպես, եթե «Նա բռնեց չունքերն ու թաղվեց մտախոհության մեջ» նախադասության ընդգծված բայն այս կամ այն կերպ կարելի է համարել անդրադարձ իմաստ արտահայտող, ապա «Լույսը բացվեց», «Նա ծնվել է քաղաքում», «Նրա հայրը գտնվում է Երևանում» նախադասությունների բայերը անդրադարձ գործողության նշույլ իսկ չեն արտահայտում:

Մի քանի կրավորական բայեր ցույց են տալիս երկու կամ մի քանի առարկաների այնպիսի գործողություն, որը կատարում է այդ առարկաներից յուրաքանչյուրը, բայց և միևնույն ժամանակ այդ առարկաներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես մյուս առարկայի (կամ առարկաների) կատարած գործողության օբյեկտ: Այսպիսի իմաստ արտահայտող բայերը կոչվում են փոխադարձ բայեր: «Սուրենը և Աշոտը համբուրվեցին» նախադասության բայը փոխադարձ իմաստ է արտահայտում: Այսպիսի բայերի թիվը հայերենում սակավ է: Դրանցից են՝ համբուրվել, պաշարվել, ծեծվել, տեսնվել, ողջագուրվել, քախվել, գարկվել (Նա պետք է գնար թշնամու հետ զարկվելու) և այլն:

#### Չեզոք սեռի բայեր

Չեզոք սեռի ընդհանուր բնույթը և զանազան տեսակները. — Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի՝ տրամաբանական սուբյեկտի մի այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում մի անմիջական առարկա, իբրև ուղիղ խնդիր, ինչպես՝ «Նա վեր ցատկեց, նստեց անկողնի մեջ, դուրս ելավ լուսամուտից: Ձյունը՝ նահանջում էր դեպի հեռավոր գագաթները: Դաշտերի համատարած սևության մեջ տեղ-տեղ միայն մնացել էին ձյունի կղզիներ» (Զար.). «Ծվ ես աբթնացա խնդության ցավից. — Գիշերվա հովն էր լալիս դաշտերում, Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ, Մենակությունն էր քարի պես լուսւմ» (Տեր.):

Մ'վ ներգործական, և՛ չեզոք սեռի բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որ կատարում է քերականական ենթակայն: Բայց ներգործական և չեզոք բայերը իրարից տարբերվում են իրենց շարահյուսական հատկությամբ. առաջինները ուղիղ խնդիր են պահանջում, իսկ երկրորդները՝ ոչ:

Բայերի ներգործական կամ չեզոք կարգերին պատկանելը միայն և միայն քերականորեն է որոշվում: Եթե դրանց որոշման ժամանակ ելնենք տրամաբանական և ոչ թե քերականական տվյալներից, ապա ներգործական պետք է ճանաչենք նաև դավանանք, տիրապետել, օգնել, ախրել, վնասել, ծեծ տալ, սիրտ տալ և բազմաթիվ ուրիշ չեզոքներ, քանի որ, ասենք, «սիրել հայրենիքը» և «դավանանք հայրենիքին», «գի-

տենալ լեզուն» և «տիրապետել լեզվին» կապակցությունների մեջ բայի և խնդրի տրամաբանական հարաբերությունները համարյա նույնն են: Բայց բայի և խնդրի տրամաբանական տեսակետից նույն հարաբերությունները առաջին օրինակներում արտահայտված են «բայ+ուղիղ խնդիր», իսկ երկրորդ օրինակներում՝ «բայ+անուղղակի խնդիր» կապակցությունների միջոցով: Այսքանով էլ առաջին օրինակների բայերը ներգործական, իսկ երկրորդ օրինակների բայերը չեզոք սեռի են: Այսպես և, չնայած որ ծեծել և ծեծ տալ, սրտապնդել և սիրտ տալ համապատասխան զույգերը նույն կամ համարյա նույն իմաստն են արտահայտում, բայց ծեծել և սրտապնդել բայերը ներգործական սեռի են, քանի որ ուղիղ խնդիր են պահանջում, իսկ ծեծ տալ և սիրտ տալ բայերը չեզոք սեռի են, քանի որ ուղիղ խնդրի հետ կապակցվել չեն կարող (դրանք անուղղակի խնդիր են պահանջում):

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ նույն բայերը, ըստ իրենց տարբեր իմաստների, կարող են պատկանել և՛ չեզոք, և՛ ներգործական սեռերին, օրինակ՝ «Նա ապրում է Երևանում», «Ի՛նչ օրեր ապրեցինք». «Նայում էր դաշտերին», «Այսօրվա թերթերը դեռ չի նայել» և այլն: Այս երևույթը հայերենի վերջին շրջանի քերականական աշխատությունների մեջ անվանվում է կրկնասեռություն:

Ներգործական և կրավորական սեռի բայերը խնդրառական միասնություն ունեն, քանի որ առաջինները կապակցվում են ուղիղ խնդրի ուղղական-տրականի (այլ տերմինով՝ հայցականի), իսկ երկրորդները՝ ներգործող խնդրի բացառականի հետ:

Չեզոք սեռի բայերը խնդրառական միասնություն չունեն: Նրանց մեծ մասը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար կողմնակի առարկա, օբյեկտ չի պահանջվում, օրինակ՝ ֆայլել, վազել, ֆնել, ծլել, աճել, թռչել, լոնել, մեռնել, մեծանալ, սևանալ և այլն: Այսպիսի բայերը նախադասության մեջ կարող են ունենալ պարագաներ, բայց սովորաբար խնդիրներ ունենալ չեն կարող:

Չեզոք սեռի բայերի մի մասը պահանջում է սեռական-տրական (բուն տրական) հոլովով դրված անուղղակի խնդիր, օրինակ՝ ախրել, ախրապետել, վնասել, սպասել, դիպչել, կպչել, նայել, իշխել, դիմադրել, օգնել, նպաստել, օժանդակել, դավանանք (մի բանի, մեկին): Չեզոքների մի մասը ուժեղ խնդրառությամբ կապակցվում է բացառական հոլովի հետ, օրինակ՝ ակնածել, օգտվել, ամաչել, գարչել, դժգոհել, գարնուրել, խորշել, խուսափել, վախենալ (մի բանից, մեկից): Որոշ չեզոքների ուժեղ խնդրառությամբ կապակցվում են գործիական հոլովի հետ,

\* Այս երևույթի մասին ընդարձակ տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 702—722:

օրինակ՝ հպարտանալ, պարծենալ, հիանալ, լիանալ, ուրախանալ, զր-  
մայլվել (մի բանով, մեկով):

Զեզոք բայերի խնդրառություն մանրամասն քննությունը կապ չունի  
բայի սեռերի հարցի հետ: Զեզոք սեռի բայերը միավորվում են մի կար-  
գի տակ այն հիմունքով, որ չեն կարող ցույց տալ ո՛չ գործողության  
անցում ենթակայից ուղիղ խնդրին, ո՛չ ներգործող խնդրից ենթակային:  
ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏԱՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ՉԵԶՈՔ  
ՍԵՌԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ.— Հայոց լեզվում չեզոք սեռն  
արտահայտվում է ոչ միայն պարզ ու սոսկածանցավոր, այլև Վ ածանց  
ունեցող բայերի մեջ:

Կրավորական բայերի իմաստների վերլուծությանը նվիրված հատ-  
վածում տեսանք, որ մի շարք կրավորական բայեր արտահայտում են  
նաև չեզոք սեռի իմաստ: Դրա տակ, ինչպես նշված է արդեն, հասկա-  
նում ենք այն, որ կրավորական բայով արտահայտված գործողությունը,  
հատկանիշը բխում է քերականական ենթակայից և ոչ թե ներգործող  
խնդրից:

Հետևելով Մ. Աբեղյանի ոճին՝ կարելի է ասել, որ մի շարք կր-  
ավորական բայերի չեզոք գործածությունը հայերենում սովորական երե-  
վույթ է: Զեզոք սեռի իմաստ են արտահայտում բազմաթիվ կրավորա-  
կան բայեր, ինչպես՝ «նա ահագին բան սովորեց և փոխվեց բնավորու-  
թյամբ». «Բացվեց Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտը». «Երկ-  
նակամարում գորշ ամպեր են կուտակվել». «Նրա աչքերից արտասուքի  
կաթիլներ պոկվեցին». «Նրա վերքը արդեն փակվել է». «Աշունն ավարտ-  
վում է, սկսվում է արդեն ձմեռը». «Արեգակը թե՛վել էր դեպի մուտքը».  
«Այդ սպանիչ մթնոլորտում հավում էր նրա երիտասարդ կյանքը». «Վիշ-  
տը նրա մեջ խառնվել էր ուրախության հետ». «Նա ափելի ոգևորվեց».  
«Ամեն ինչ ծնվում է ու մեռնում». «Զիռ սմբակները խրվում էին սև-  
հողի մեջ». «Նա համոզվեց, որ իր վրա են ծիծաղում». «Մազերից մի  
բարակ փունջ անջատվել ու կախվել էր նրա խոշոր կականջին». «Նա շրջ-  
վեց իմ կողմը». «Զուրն անմիջապես ծծվեց հողի մեջ». «Տաքարյուն  
երիտասարդն անմիջապես բորբոխվեց». «Նա բարոյապես շատ էր տանջ-  
վում». «Իմ առջև փռվել էին արտերրւմ. «Նա պնդում էր, թե պետք է  
ամուսնուց բաժանվի»:

Հասկանալի է, որ ընդգծված բայերը այլ կապակցությունների մեջ  
կարող են արտահայտել կրավորական սեռի իմաստ: Հարց է առաջա-  
նում՝ գործնականորեն (ինչպե՞ս տարբերել կրավորական բայերի ար-  
տահայտած կրավորական և չեզոք սեռի իմաստները: Դրա համար կա-  
րելի է առաջարկել հետևյալ միջոցները:

ա) Կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունների  
միտքը հնարավոր է տալ համապատասխան ներգործական սեռի բայե-  
րով կազմված նախադասություններով: Այսպես, «Ժողովում այդ առա-

ջարկությունը մերժվեց». «Այդ աշխատանքը բարձր գնահատվեց» նա-  
խադասությունները ներգործականի են վերածվում «Ժողովում այդ ա-  
ռաջարկությունը մերժեցին», «Այդ աշխատանքը բարձր գնահատեցին»  
ձևով: Սա նշանակում է, որ վերևի օրինակներում մերժվել և գնահատ-  
վել բայերը կրավորական սեռի իմաստ են արտահայտում: Զեզոք ի-  
մաստ արտահայտող կրավորական բայերով կազմված նախադասու-  
թյունների միտքը հնարավոր չէ տալ համապատասխան ներգործական  
սեռի բայերով կազմված նախադասություններով: Այսպես, «Բացվեց  
Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտը». «Նա թաղվեց ծանր մրտ-  
քերի մեջ» նախադասությունների միտքը չի կարող տրվել համապա-  
տասխան ներգործական սեռի բայերով կազմված նախադասություննե-  
րով, որովհետև բերված օրինակներում բացվել և թաղվել բայերը չեզոք  
սեռի իմաստ են արտահայտում:

բ) Կրավորական սեռի բայերը թելադրում են ումի՞ց, ինչի՞ց կամ  
ո՞ւմ կողմից հարցերը, որոնց պատասխանը լինում է կրավորական սե-  
ռի բայի ներգործող խնդրի: Եթե ներգործող խնդրը նախադասությու-  
նների մեջ չի հիշատակված, ապա այդ հարցերի միջոցով այն կարելի է  
ձևականորեն վերականգնել<sup>13</sup>: Այսպես, «Ժողովում այդ առաջարկությու-  
նը մերժվեց». «Այդ աշխատանքը բարձր գնահատվեց» նախադասու-  
թյունների կրավորական սեռի բայերը թելադրում են ումի՞ց, ո՞ւմ կող-  
մից հարցերը, որոնց պատասխանը լինում է ներգործող խնդրի (բան-  
վորների կողմից, կառավարությունների կողմից):

Զեզոք սեռի իմաստ արտահայտող կրավորական բայերը չեն թե-  
լադրում կրավորական սեռի բայերի համար տրվող հարցերը: «Արե-  
գակը թե՛վել էր դեպի մուտքը». «Սկսվեց ձմեռը» նախադասությու-  
նների կրավորական բայերի համար հնարավոր չէ տալ ումի՞ց, ո՞ւմ կող-  
մից հարցերը, որովհետև այդ օրինակներում կրավորական բայերը չե-  
զոք սեռի իմաստ են արտահայտում:

գ) Կրավորական սեռի բայերով արտահայտված ստորոգյալները  
պատասխանում են ի՞նչ է արվում, ի՞նչ արվեց և այլ հարցերին, իսկ  
Վ ածանց ունեցող չեզոք սեռի բայերով արտահայտված ստորոգյալնե-  
րը՝ ի՞նչ է անում (ի՞նչ է լինում), ի՞նչ արեց (ի՞նչ եղավ) և այլ հար-  
ցերին: Ըստ այդմ՝ «Այդ առաջարկությունն ուսումնասիրվում է» նախա-  
դասության ստորոգյալը պատասխանում է ի՞նչ է արվում հարցին, իսկ  
«Նա ձգվեց հրամանատարի առաջ» նախադասության ստորոգյալը՝ ի՞նչ  
արեց հարցին:

Եթե կրավորական բայով արտահայտված ստորոգյալը չի թելա-  
դրում կամ չի կարող թելադրել ի՞նչ է արվում, ի՞նչ արվեց և այլ հար-  
ցերը, ուրեմն նա չեզոք և ոչ թե կրավորական սեռի է:

<sup>13</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 200:

Այս մի քանի միջոցներով չեզոք սեռի իմաստ արտահայտող կրավորական բայերը կարելի է տարբերել կրավորական սեռի բայերից:

«ԿՐԱՎՈՐԱԿԵՐՈՂ ՉԵԶՈՔՆԵՐ».— Ժամանակակից հայերենում կան վ ածանցով կազմված մի շարք չեզոք բայեր, որոնք չունեն իրենց համապատասխան պարզ ներգործական ձևերը: Դրանք մոտավորապես հետևյալներն են. բնակվել, գանգատվել, գծվել, գունատվել, զբաղվել, զբմայլվել, բնդհարվել, թափվել, խաղաղվել, խելագարվել, խղճաճարվել, համարձակվել, հակվել, հաշտվել, հարձակվել, հիասթափվել, հնազանդվել, հուսահատվել, հպատակվել, հրժարվել, հարհատվել, մոլորվել, մոռացվել, չփվել, պապանձվել, սթափվել, սիրահարվել, սխալվել, վախճանվել, վնասվել, ցնորվել, ուշաթափվել, փլվել, փշաֆաղվել, փփվել:

Վ ածանցով կազմված, բայց ժամանակակից լեզվում իրենց համապատասխան պարզ ներգործական ձևերը չունեցող բայերը (որանց ներգործական սեռն արտահայտվում է պատճառականի ձևով՝ բնակվել—բնակեցնել, թափվել—թափցնել, մոլորվել—մոլորեցնել և այլն) կրավորական սեռի իմաստ չեն կարող արտահայտել, չեզոք սեռի բայեր են և մեր քերականությունների մեջ հորջորջվում են «կրավորակերպ» չեզոքներ ոչ այնքան հաջող անվանմամբ:

Դրանց մեծ մասը գրաբարում եղել են կրավորաձև խոնարհման չեզոքներ և մի քանիսը ունեցել են իրենց համապատասխան Ե լծորդով ներգործականը, ինչպես՝ խաղաղիմ/եմ, համարձակիմ/եմ, հաշտիմ/եմ, հնազանդիմ/եմ, պապանձիմ/եմ, սթափիմ/եմ, վախճանիմ/եմ, ցնորիմ/եմ, յոժարիմ/եմ, մի քանիսն էլ չեն ունեցել, ինչպես՝ գանգատիմ, գմայլիմ, բնակիմ, թափիմ, խելագարիմ, ուշաթափիմ, սխալիմ: Բնակիմ և սխալիմ բայերը ունեցել են նաև Ե լծորդով չեզոք ձևեր:

Մեր լեզվում «կրավորակերպ» չեզոքների գոյությունը բացատրվում է նրանով, որ երբ Վ բայաձևն ստեղծումով ներգործական բայերի կրավորակերպ խոնարհման ԻԼ ձևը փոխվեց ՎԻԼ ձևի, միաժամանակ կրավորակերպ խոնարհվող մի շարք չեզոք սեռի բայեր (գանգատիմ, բնակիմ, խելագարիմ, սխալիմ և այլն) նույնպես ստացան այդ ածանցը, իսկ հետո այդ բայերի նմանակությամբ կազմվեցին նաև այլ բայեր (գծվել, սիրահարվել, փշաքաղվել):

Վ ածանցը «կրավորակերպ» չեզոքների մեջ սոսկ ձևական նշանակություն ունի, և երբ դրանցից ՅՆ ածանցով ներգործական սեռի բայեր են կազմվում, այն դուրս է ընկնում, ինչպես՝ հաշտվել—հաշտեցնել, բնակվել—բնակեցնել, հնազանդվել—հնազանդեցնել, սիրահարվել—սիրահարեցնել և այլն, բայց՝ գծվել—գծվեցնել:

Մի քանի «կրավորակերպ» չեզոքներ ունեն առանց Վ-ի (չեզոք) ձևեր, ինչպես՝ հակառակվել/ել, համաձայնվել/ել, մոլորվել/ել, մոռացվել/ել, հոժարվել/ել, նմանվել/ել, վերաբերվել/ել, տառվել/ել: Գրական լեզուն երբեմն գերադասում է Վ-ով, իսկ երբեմն առանց Վ-ի ձևերը: Առանձին դեպքերում դրանց միջև նկատվում են իմաստային տարբերություններ, օրինակ՝ վերաբերվել||վերաբերել (նա ինձ վատ է վերաբերվում, և Այդ բանն ինձ չի վերաբերում):

ԴԻՄԱՎՈՐ ԵՎ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐ.— Ինչպես նշված է արդեն, հայերենում բայը դրևսորվում է երկու՝ դիմավոր կամ եղանակային և անդեմ՝ կամ դերբայական ձևերով:

Դիմավոր են կոչվում բայի այն ձևերը, որոնց գործողության հետ միասին հատուկ են եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը, օրինակ՝ կարդում եմ, կարդում էի, կարդացել եմ, կարդացել էի, կարդացի, կարդամ և այլն:

Անդեմ են կոչվում բայի այն ձևերը, որոնք արտահայտում են սոսկ գործողություն՝ առանց եղանակի, ժամանակի, դեմքի և թվի, օրինակ՝ կարդալ, կարդացել, կարդացած, կարդալու և այլն:

Այժմ անցնենք բայի արտահայտության այս երկու ձևերի քննությանը՝ վերլուծությունն սկսելով բայի անդեմ կամ դերբայական ձևերից:

### ԳԵՐԲԱՅՆԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ.— Վերլուծությունն սկսենք հետևյալ հարցադրմամբ. կարելի՞ է արդյոք ժամանակակից քերականական համակարգով դերբայներ համարվող բոլոր ձևերը՝ կարդալ, կարդում, կարդալիս, կարդալու, կարդացել, կարդացած, կարդացող, կարդա, կարդալիք, համարել նույն բառի քերականական ձևեր կամ բառաձևեր: Չէ՞ որ դրանցից մի մասը՝ անորոշը—կարդալ, անկատար II-ը — կարդալիս, հարակատար—կարդացած, ենկարդալ, անկատար II-ը — կարդալիք, բառային ինքնորոշություն ու անկախություն ունեն: Ծի՞շտ ենք վարվում մենք այս դերբայները ևս մյուսների նման դիտելով որպես բառի քերականական ձևեր:

Անժխտելի է, իհարկե, որ բառային ինքնուրույն կիրառություն ունեցող դերբայները մյուսներից տարբերվում են ոչ միայն իրենց հարաբերական անկախությամբ, այլև լեզվի համակարգում իրենց խաղացած դերով: Բայց, համենայն դեպս, դրանք ևս մյուսների նման քերականական ձևեր են, բառաձևեր և ոչ թե անկախ ու ինքնուրույն բառային միավորներ: Դրանում համոզվելու համար պետք է նկատի ունենալ հետևյալը:

Ժամանակակից հայերենի բոլոր դերբայները, անկախ իրենց իմաստից և լեզվի համակարգում խաղացած դերից ու շարահյուսական կիրառություններից, իրար հետ կապված, իրարով պայմանավորված համազոյակից ձևեր են, և դրանցից մեկի գոյությունը կանխադրում է համազոյակից ձևեր են, և դրանցից մեկի գոյությունը կանխադրում է նաև մյուսների գոյությունը: Եթե լեզվում ունենք որևէ դերբայական ձև,



օրինակ, մշակել, ապա հաստատ կարող ենք ասել, որ ունենք կամ կարող ենք կազմել մյուս բոլոր դերբայական ձևերը, ինչպես՝ մշակել — մշակում, մշակելիս, մշակելու, մշակել (եմ), մշակած, մշակող, մշակի, մշակելիք: Ամեն մի անորոշ դերբայ ունի իր համապատասխան անկատար, ապառնի, հարակատար և մյուս բոլոր դերբայները. ամեն մի հարակատար դերբայ ունի իր համապատասխան անորոշ, անկատար, ենթակայական ու մյուս բոլոր դերբայները և այսպես շարունակ: Ահս ձևերի այսպիսի հետևողական ու բացառություններ շճանաչող հարաբերակցությունը ոչ մի կասկած չի թողնում, որ բոլոր դերբայները քերականական ձևեր են և ոչ թե առանձին, անկախ բառեր: Հենց այն բանը, որ, ասենք, ԱՄ և ՈՂ մասնիկները կարող են հարակատար և ենթակայական դերբայներ կազմել համարյա բոլոր բայերից, նշանակում է դրանք ձևակազմական և ոչ թե բառակազմական մասնիկներ են:

Հայերենի բոլոր դերբայները միավորվում ու համախմբվում են մի քառի տակ որպես քերականական ձևեր, որովհետև նրանց բոլորին, դիմավոր ձևերի նման, հատուկ է գործողության, ընթացքի գաղափարը, որն իր նյութական-քերականական արտահայտությունն է ստանում բայասեռի և խնդրառության կարգերում: Այսբանով էլ հայերենի բոլոր դերբայները, որպես բայի անդեմ ձևեր, ի հակադրություն դիմավոր ձևերի, կարող են համախմբվել մի քերականական կարգի տակ:

Սակայն բայի անդեմ ձևերը՝ մի կողմից, և դիմավոր ձևերը՝ մյուս կողմից, տարաբնույթ առանձնահատկություններ են երևան հանում, որ անսպասմանորեն պետք է հաշվի առնել հայերենի դերբայական ձևերը բնութագրելիս:

Այս հարցը հանգում է հետևյալին: Բայի դիմավոր ձևերը համառոտ էրականական առանձնահատկություններ են երևան հանում, նրանք իրարից տարբերվում են իրենց ձևաբանական առանձնահատկություններով միայն՝ եղանակով, ժամանակով, դեմքով ու թվով, բայց ոչ երբեք կիրառության ու լեզվի համակարգում իրենց խաղացած դերով: Բայի դիմավոր ձևերը խոսքի մեջ նույն կիրառությունն ունեն և հանդես են գալիս ստորոգյալի շարահյուսական պաշտոնով: Լեզվի մեջ ինչ կիրառություն որ ունի, ասենք, գրում եմ ձևը, նույն կիրառությունը կունենա գրել եմ ձևը, այլև գրելու եմ ձևը և դրանց միջև, բացի կերպային-ժամանակային տարբերություններից, այլ տարբերություններ ցույց տալ հնարավոր չէ:

Եթե հարցին մոտենում ենք այս տեսանկյունից, ապա պարզ է դառնում, որ հայերենի դերբայական ձևերը տարասեռ, տարաբնույթ էրականական առանձնահատկություններ են երևան հանում: Հին քերականության թերությունն այս հարցում այն էր, որ բոլոր դերբայները քննվում էին նույն մակարդակով, բավարար ուղադրություն չէր դարձվում դերբայների ներքին խմբավորմանը և նրանց տարբեր խմբերի դրսևո-

րած առանձնահատկություններին ու յուրահատկություններին: Դերբայների ուսումնասիրության ժամանակ այս հարցերի վրա է հենց իր ուղադրությունը բեռնում նորագույն լեզվաբանությունը<sup>14</sup>:

Նկատի ունենալով դերբայական ձևերի տարբեր կիրառությունները և լեզվի կառուցվածքում դրսևորած տարբեր ֆունկցիաները՝ ժամանակակից հայերենի դերբայները բաժանվում են երկու խմբի<sup>15</sup>.

ա) Ինքնուրույն շարահյուսական կիրառությունից զուրկ և, հետևաբար, բառային անկախություն չունեցող դերբայներ, որոնք են՝ անկատար (կարդում), ապառնի (կարդալու), վաղակատար (կարդացել), ժխտման (կարդա): Դրանք է. Աղայանի հորջորջած կերպային դերբայներն են:

բ) Ինքնուրույն շարահյուսական կիրառություն ունեցող և, հետևաբար, բառային անկախություն ունեցող դերբայներ, որոնք են՝ անորոշ (կարդալ), անկատար II (կարդալիս), հարակատար (կարդացած), ենթակայական (կարդացող), ապառնի II (կարդալիք): Դրանք է. Աղայանի հորջորջած վիճակային դերբայներն են:

Առաջին խմբի դերբայները կոչվում են կախյալ դերբայներ, իսկ երկրորդ խմբինը՝ անկախ դերբայներ:

Կախյալ դերբայներից անկատարը՝ կարդում, վաղակատարը՝ կարդացել և ապառնին՝ կարդալու իրենց իմաստով և լեզվի ձևաբանական կառուցվածքում խաղացած դերով համազոր են՝ կազմելով եռանդամ հակադրություն: Այս դերբայները իրարից տարբերվում են սոսկ կերպային-ժամանակային իմաստով, այն է՝ անկատարը արտահայտում է կատարվող, ընթացքի մեջ գտնվող գործողություն, վաղակատարը՝ կատարված, ավարտված, ընթացքից դուրս եկած գործողություն, իսկ ապառնին՝ կատարելի, սպասելի գործողություն: Իմաստային այսպիսի հակադրությունը պայմանավորում է այս դերբայների՝ լեզվի ձևաբանական կառուցվածքում կատարած համազոր դերը, որն արտահայտվում է նրանում, որ դրանցից յուրաքանչյուրը օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հետ բաղադրում է սահմանական եղանակի երկուական ժամանակ՝ արդի հայերենի համար այնքան բնորոշ կարգում եմ—կառում էի, կառոցցել եմ—կառոցցել էի, կարդալու եմ—կարդալու էի կառում էի, կառոցցել եմ—կառոցցել էի, կարդալու եմ—կարդալու էի զուգադիր հակադրություններով: Անկատար, վաղակատար և ապառնի զուգադիր հակադրություններով: Անկատար, վաղակատար և ապառնի դերբայները այս հարացույցային ձևերից դուրս այլ կիրառություն չունեն: Նրանք միշտ հանդես են գալիս օժանդակ բայի հետ միասին և այդ զուգորդումից դուրս նրանք որպես անկախ լեզվական միավոր փաստորեն գոյություն չունեն: Նույնն է նաև ժխտման դերբայը, որը ևս ան-

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ, Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1987:

<sup>15</sup> Այս և հետագա շարադրանքը հմմտ. Է. Աղայանի վերոհիշյալ աշխատության Ռտ (էջ 344—348):

կախու ինքնուրույն բառային կիրառութիւն շունի, միշտ հանդես է գալիս օժանդակ բայի ժխտական ձևերի հետ՝ բաղադրելով պայմանական կամ ենթադրական եղանակի ժխտական ապառնի և անցյալի ապառնի ժամանակները՝ շեմ կարգա—չէի կարգա զուգարիք հակադրութիւններով:

Վերլուծութիւններից միաժամանակ կարելի է գալ այն եզրակացութիւնը, որ կախյալ դերբայները լեզվի քերականական կառուցվածքում իրենց խաղացած դերով մոտավորապես հավասարվում են բայահիմքերին: Այսպես, եթե բարձրան հիմքից համապատասխան վերջավորութիւնների կցումով առաջանում են բարձրանամ, բարձրանաս, բարձրանա և այլ բայաձևերը, բարձրաց հիմքից՝ բարձրացա, բարձրացար, բարձրացավ և այլ բայաձևերը, ապա բարձրանում հիմքի և նմ օժանդակ բայի խոնարհված ձևերի միացմամբ առաջանում են բարձրանում եմ, բարձրանում ես, բարձրանում է և այլ բայաձևերը, բարձրացել հիմքից՝ բարձրացել եմ, բարձրացել ես, բարձրացել է և այլ բայաձևերը: Իհարկե, չի կարելի վճռականորեն պնդել, թե բարձրանում եմ—բարձրանում էի, բարձրանալու եմ—բարձրանալու էի և այլ բայաձևերի հետ հանդես եկող եմ և էի միավորները սոսկ վերջավորութիւնների դեր են կատարում: Հայտնի է, որ բայական բուն վերջավորութիւնները, ինչպես՝ բարձրացա, բարձրացար, բարձրացավ և այլն, ձուլված են հիմքերին, նրանց հետ սերտ միասնութիւն են կազմում և ձևաբանական վերլուծութիւն միջոցով միայն կարող են տարրալուծվել, իսկ կախյալ դերբայների կազմում հանդես եկող եմ և էի միավորները շեն ձուլվել հիմքերին, նրանց հետ սերտ ամբողջութիւն շեն կազմում, կարող են դրվել նաև նախադաս և անգամ ընդմիջվել այլ բառերով, օրինակ՝ Ես եմ այսօր երեկոյան գնում նրանց տուն. Դու ես բոլորի ներկայութիւնք նրան այդ բանն ասել և այլն: Եթե դրան գումարենք նաև այն, որ եմ—էի ձևերը կարող են դրվել նաև գոյականների, ածականների ու այլ բառերի վրա և կազմել բաղադրյալ ստորոգյալ (աշակերտ է, աշակերտ էր, լավ է, լավ էր և այլն), այլև այն, որ դրանք կարող են ունենալ անկախ ու ինքնուրույն բառային գործածութիւն՝ արտահայտելով նյութական իմաստ (Նա եղել է, է և կիինի), ապա պարզ կդառնա, որ կարգում եմ—կարգում էի, կարգալու եմ—կարգալու էի, կարգացել եմ—կարգացել էի տիպերի մեջ եմ և էի միավորների դերը շափազանց դժվարութիւնք կարող է սոսկ հավասարեցվել բայական բուն վերջավորութիւնների դերին: Բայց որ այդ տիպերի մեջ եմ և էի միավորները այս կամ այն շափով շփման եզրեր են հանդես բերում բայական բուն վերջավորութիւնների հետ— դրանում ևս կասկած չի կարող լինել:

Այժմ անցնենք անկախ դերբայների բնութագրմանը: Անկախ դերբայները լեզվի կառուցվածքում համագոր ու համահնչյուն առանձնահատկութիւններ երևան շեն հանում: Վերջիններիս միակ ընդհանրութիւն-

նը գործառական տեսակետից գուցե միայն այն է, որ նրանք հանդես են գալիս նախադասութիւն ինքնուրույն անդամների պաշտոններով: Գրանից դուրս նրանք երևան են հանում էական տարբերութիւններ:

Անկախ, ինքնուրույն կիրառութիւն ունեցող դերբայները նույն շարահյուսական առանձնահատկութիւնները շունեն: Անորոշ դերբայը սովորաբար հանդես է գալիս գոյականի, հարակատարը՝ ածականի, ենթակայականը և ապառնի II-ը՝ ածականի և գոյականի, իսկ անկատար II-ը՝ մակբայի շարահյուսական պաշտոններով:

Իրենց իմաստներով պայմանավորված՝ անկախ դերբայները տարբեր են նաև ձևաբանական առանձնահատկութիւններով: Անորոշ դերբայը հոլովվում է՝ հենց ինքնին, որովհետև նա իր մեջ համատեղում է նաև գոյական անվան հատկանիշներ, օրինակ՝ գրել—գրելու—գրելուց, հոգնել—հոգնելու—հոգնելուց և այլն: Ենթակայական դերբայը ևս հոլովվում է հենց ինքնին, որովհետև նրա մեջ գործողութիւն հետ միասին դրսևորվում է նաև գործողի գաղափար, ինչպես՝ կարդացող—կարդացողի—կարդացողից: Հարակատար դերբայը հոլովվում է գոյականաբար գործածվելիս՝ որպես փոխանուն իր մեջ համատեղելով հատկանշային և առարկայական նշանակութիւն, օրինակ՝ հոգնածը (հոգնած գինվորը, մարդը)— հոգնածի—հոգնածից, քնածը—քնածի—քնածից: Անկատար II-ը փոխանվանաբար գործածվել չի կարող, ուրեմն և զուրկ է հոլովի կարգից, բաց ստութիւնք այն հաշվազուտ դեպքերի, երբ գործածվում է ինքնանվանողաբար, օրինակ՝ «Հոգնելիս»-ը հոգնել բայի անկատար դերբայն է:

Այս թռուցիկ վերլուծութիւններն էլ բավական են համոզվելու, որ անկախ դերբայները տարասեռ, տարաբնույթ քերականական առանձնահատկութիւններ են դրսևորում: Ահա թե ինչու Մ. Արեղյանը դրանք տեղաբաշխում էր տարբեր խոսքի մասերի մեջ:

Արդեն նշված է, որ հայերենի դերբայներին, որպես բայաձևերի, հատուկ է գործողութիւնք, ընթացքի գաղափարը: Հայերենի դերբայների իսկական բնույթը ավելի ճիշտ բացահայտելու համար պետք է մանրամասնորեն վերլուծել այս վերջին կետը:

Հայերենի տարբեր դերբայների համեմատութիւնք կարելի է գալ այն եզրակացութիւնը, որ դերբայները գործողութիւնք, ընթացքի գաղափարը նույն համասեռ ձևով շեն արտահայտում, դրսևորում կամ ներկայացնում: Այսպես, անկատար՝ կարգում, վաղակատար՝ կարգացել, ապառնի՝ կարգալու և ժխտման՝ կարգա դերբայների մեջ սոսկ կա գործողութիւնք, ընթացքի գաղափար: Գրանից դուրս այլ նշանակութիւններ այս ձևերի մեջ չկան: Իսկ սա էլ ինքնին նշանակում է, որ անկատար, վաղակատար, ապառնի և ժխտման դերբայները գործողութիւնք ներկայացնում են «մաքուր», «անխառն» վիճակում և այսբանով էլ հենց «անաղարտ» ձևով են դրսևորում բայ խոսքիմասային կարգի քերական-

նական էութունը: Այդ առանձնահատկությամբ է պայմանավորված նաև այն, որ դրանք լեզվի բերականական կառուցվածքում միանման դեր են կատարում՝ օժանդակ բայի հետ բաղադրելով եղանակային ձևեր: Ահա այդ առանձնահատկության շնորհիվ էլ վերոհիշյալ դերբայները կարող են անջատվել մնացած բոլոր դերբայներից և համարվել առանձին բերականական կարգ:

Այս նույն բանը կարելի՞ է ասել արդյոք անկախ դերբայների մասին: Կարելի՞ է ասել, թե անորոշ, հարակատար, ենթակայական, անկատար II և ապառնի II դերբայների մեջ ևս գործողությունը, ընթացքը արտահայտվում, դրսևորվում կամ ներկայացվում է «մարտը», «անխառն» ձևով կամ վիճակում: Ո՛ր, չի կարելի ասել: Վերոհիշյալ դերբայների մեջ գործողության, ընթացքի հետ միաժամանակ առկա են կամ հանդես են գալիս նաև այլ և այլ խոսքի մասային նշանակություններ: Մանրամասնությունների մեջ շմտնելով՝ այս դերբայների և այլ խոսքի մասերի հարաբերակցությունները ներկայանում են հետևյալ ձևով:

Անորոշ դերբայը գործողության, ընթացքի հետ միաժամանակ դրսևորում է նաև առարկայական-գոյականական իմաստ, օրինակ՝ Միրում է վազել, խաղալ, կարդալ, երգել, պարել և այլն:

Հարակատար դերբայը՝ հատկանշային-ածականական իմաստ, ինչպես՝ Բնած երեխա, հոգնած զինվոր, ջարդված ապակի և այլն:

Ենթակայական դերբայը՝ ածականական և գոյականական իմաստ միաժամանակ, օրինակ՝ կարդացող աշակերտ, կարդացող (նա, ով կարդում է), մտածող մարդ, մտածող (նա, ով մտածում է), պայլաբող մարդ, պայլաբող (նա, ով պայլաբում է) և այլն:

Ապառնի II-ը՝ ածականական և գոյականական իմաստ միաժամանակ, օրինակ՝ ասելիք խոսքեր, ասելիք (ասելու բան), գրելիք նամակ, գրելիք (գրելու բան), անելիք գործ, անելիք (անելու բան) և այլն:

Անկատար II-ը՝ պարագայական-մակրայական իմաստ, օրինակ՝ Տուն զնալիս հանդիպեցի, Կարգալիս մուսյլում էր, Հիշելիս տխրում էր և այլն:

Այսպիսով պարզ է դառնում, որ ժամանակակից հայերենի դերբայներից «մախու» բայական իմաստ են արտահայտում միայն անկատար (կարդում), վաղակատար (կարդացել), ապառնի (կարդալու) և ժրխտման (կարդա) դերբայները, իսկ մյուս դերբայների մեջ բայական իմաստը գուցակցվում է այլևայլ խոսքի մասային իմաստների հետ: Անորոշ դերբայի մեջ դրսևորվում է գոյականի, հարակատար դերբայի մեջ՝ ածականի, ապառնի II և ենթակայական դերբայների մեջ՝ և՛ ածականի, և՛ գոյականի, իսկ անկատար II-ի մեջ՝ մակրայի խոսքի մասային իմաստը:

Դերբայների մասին ասվածները սխեմայով կամփոփվեն հետևյալ ձևով:

Դերբայներ	Գործողություն, ընթացք	Գոյականական-առարկայական իմաստ	Ածականական-հատկանշային իմաստ	Մակրայական-պարագայական իմաստ
Անորոշ (կարդալ)	+	+	-	-
Անկատար (կարդում)	+	-	-	-
Անկատար II (կարդալիս)	+	-	-	+
Ապառնի (կարդալու)	+	-	-	-
Ապառնի II (կարդալիք)	+	-	+	-
Վաղակատար (կարդացել)	+	-	-	-
Հարակատար (կարդացած)	+	-	+	-
Ենթակայական (կարդացող)	+	+	+	-
Ժխտման (կարդա)	+	-	-	-

Դերբայների այս ընդհանուր բնութագրությունից հետո քննենք հայերենի անկախ և կախյալ դերբայները առանձին-առանձին:

**Ա Ն Կ Ա Ս Դ Ե Բ Բ Ա Յ Ն Ե Թ**  
**Ա Ն Ո Ր Ո Շ Դ Ե Բ Բ Ա Յ**

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ԻՄԱՍՏԸ ԵՎ ՀՈՒՎՈՒՄԸ.— Ինչպես նշված է արդեն, ժամանակակից հայոց լեզվում անորոշ դերբայը կազմվում է ԵՆ և ԱՆ մասնիկներով, ինչպես՝ գրել, վազել, հավատալ, կարդալ և այլն: Անորոշ դերբայի ԵՆ և ԱՆ մասնիկներից առաջ հաճախ հանդես են գալիս սոսկական, պատճառական, կրավորական ու բազմապատկական ածանցներ, և այսպիսով ստացվում են անորոշ դերբայի ՆԵՆ, ՉԵՆ, ԱՆԱՆ, ԵՆԱՆ, ՅՆԵՆ, ՎԵՆ, ԱՏԵՆ, ՈՏԵՆ և այլ ածանցավոր ձևերը, ինչպես՝ գտնել, փախչել, մեծանալ, վախենալ, բարձրացնել, սիրվել, կտրատել, ջարդոտել և այլն: /

Ե՛վ հայ, և՛ օտար լեզուների քերականություններում/անորոշ դերբայը բնորոշելիս սովորաբար զուգահեռ է անցկացվում դրա և գոյականի ուղղական հոլովի միջև: Ե՛վ իրոք, գոյականի ուղղական հոլովածի և անորոշ դերբայի միջև ինչ-որ զուգահեռություն գոյություն ունի: Ինչ-

պես որ գոյականների ուղղական հոլովածները անվանում են առարկան, օրինակ՝ տուն, քաղաք, փողոց, ծառ, մարդ, բանվոր, այնպես էլ բայի անորոշ դերբայները անվանում են գործողությունը, օրինակ՝ գրել, կարդալ, վաշել, հավատալ, ջարդել, մաքել, կտրել և այլն: Մյուս կողմից՝ գոյականի ուղղական հոլովածները, գոնե հայերենում, հանդես են գալիս որպես բառի ուղիղ, սկզբնական ձևեր, որոնցից մեր լեզվական գիտակցությամբ ածանցվում են գոյականի բոլոր մյուս ձևերը, ինչպես՝ քաղաք — քաղաք + ի, քաղաք + ից, քաղաք + ուլ — քաղաք + ում — քաղաք + ներ — քաղաք + ներ + ի — քաղաք + ներ + ից և այլն: Այսբանով էլ, նաև որպես առարկայի անվանում, ուղղական հոլովը գերիշխող դիրք ունի գոյականի մյուս բոլոր ձևերի նկատմամբ: Իսկ այս տեսակետից ինչպիսի՞ն է անորոշ դերբայի դրուսթյունը:

Եթե ժամանակակից քերականական համակարգով բոլոր անդամ և դիմավոր «բայական» ձևերը համախմբվում են մի կարգի տակ՝ գրել, գրած, գրող, գրելիս, գրեցի, գրեմ, գրիք և այլն, ապա դրանցից «ելակետային», «սկզբնական», «ուղիղ», «անփոփոխ» ձև է անորոշը, և դա միայն այն հիմունքով, որ անորոշ դերբայը անվանում է գործողություն: Այս տեսակետից նա բոլորովին էլ անորոշ դերբայ չէ, այլ, եթե կարելի է այսպես արտահայտվել, անվանողական դերբայ է: Ինչպես որ գոյականի «ուղիղ» ձևը անվանում է առարկան, այնպես էլ բայի «ուղիղ» ձևը անվանում է գործողությունը, ուրեմն և՛ «սկզբնական», «չփոփոխված» ձև է, և այսբանով էլ մյուսները ստորադասված են նրան: Ամեն մի անորոշ դերբայ ունի իր համապատասխան դերբայական և դիմավոր ձևերը՝ գրել—գրած—գրող—գրեցի—գրեմ—գրիք, կարդալ—կարդացած—կարդացող—կարդացի—կարդամ—կարդա և այլն: Հայերենում կան միայն սակավաթիվ դիմավոր ձևեր, որոնց համապատասխան անորոշները չկան, ինչպես՝ եմ, կամ, գիտեմ, ունեմ: Բայց այս մի բանի ձևերը սոսկ կաթիլ են ծովի մեջ, և, որպես օրինաչափություն, ամեն մի անորոշ դերբայ ունի իր համապատասխան դիմավոր ու անդամ ձևերը և ընդհակառակն: Այսբանով փակելով հարցը՝ անցնենք անորոշ դերբայի հոլովմանը:

Անորոշ դերբայը հոլովվում է ՈՒ հոլովմամբ, ինչպես՝ գրել—գրելու—գրելուց—գրելով, կարդալ—կարդալու—կարդալուց—կարդալով և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ անորոշ դերբայի հոլովումը փոխանվանական հոլովում չէ և վերջինիցս տարբերվում է և՛ իմաստով, և՛ ձևով: Այսպես, սպիտակը բառածեր փոխանվանական հոլովմամբ համատեղում է հատկանիշի և առարկայի իմաստները, իսկ, դրան հակառակ, օրինակ, գրելը սոսկ նշանակում է գրելու գործողությունը, բայց ոչ՝ գրելու գործողությունը և դրա հետ մի ուրիշ առարկա: Մյուս կողմից՝ փոխանվանական հոլովումն ընդհանրապես կատարվում է որոշյալ առումով

և ի հոլովմամբ, օրինակ՝ սպիտակը—սպիտակի—սպիտակից և այլն, մինչդեռ անորոշ դերբայի հոլովումը սեղի է ունենում ՈՒ հոլովմամբ՝ որոշյալ առման հետ նաև անորոշ առումով, օրինակ՝ գրելը—գրելու—գրելուց, գրել—գրելու—գրելուց և այլն<sup>16</sup>:

Անորոշ դերբայը հոլովվում է հենց ինքնին և ոչ թե փոխանվանական կերպարությամբ, որովհետև նա իր մեջ համատեղում է բայի և գոյական անվան՝ հատկանիշները: Անորոշ դերբայը բայ է այնքանով, որ արտահայտում է գործողության, ընթացի գաղափար, որն իր ֆեռականական-նյութական դրսևորումն է ստանում բայասեռի և դրանից բխող խնդրառության կարգերում. անորոշ դերբայը միաժամանակ գոյական է այնքանով, որ որպես գործողության անուն իր իմաստով հավասարվում է բայանուններին, արտահայտելով նաև առարկայական գաղափար, որն իր ֆեռականական-նյութական դրսևորումն է ստանում հոլովի կարգում: Այսպես ուրեմն՝ անորոշ դերբային ներհասուկ են և՛ բայի, և՛ գոյականի համար բնորոշ քերականական կարգերը՝ բայասեռն ու խնդրառությունը և հոլովումը, հետևաբար և անորոշ դերբայը պետք է բնորոշվի հենց որպես այդպիսին:

Հայ քերականությունների մեջ նշվում է, որ անորոշ դերբայը հոգնակի թիվ չունի, <sup>սակեր</sup> թեև նա կարող է ստանալ նե՛ր մասնիկը, սակայն դա ոչ թե դերբայի իմաստի հոգնակիությունն է ցույց տալիս, այլ ստացական հոգի իմաստի՝ գնալներս—մեր գնալը, գնալներդ—ձեր գնալը, գնալները—նրանց գնալը: Իհարկե, չի կարելի բացարձակորեն պնդել, թե անորոշ դերբայը ընդհանրապես հոգնակի թվով գործածվել չի կարող, որովհետև բացառիկ դեպքերում դա ևս հնարավոր է, ինչպես՝ Այսպիսի զղջալներ շատ եմ տեսել. Քո ուտել-խմելները վերջ կունենան, թե՛ ոչ: Բայց դրանք բացառիկ օրինակներ են, և, որպես կանոն, հոգնակի թվի կարգը անորոշ դերբային հատուկ չէ: Սրան կարծես թե հակասում է այն դրուսթը, թե անորոշ դերբայը իր մեջ համատեղում է նաև գոյական անվան հատկանիշները: Եթե իրոք այդպես է, ապա ինչո՞ւ նա հոգնակի թիվ չի կազմում: Բացատրությունը պարզ է. չէ՞ որ անորոշ դերբայը գործողության անուն է, և հասկանալի է, որ գործողությունը հոգնակի ձևով անվանվել չի կարող: Այստեղ պետք է հիշել, որ սոսկ վերջինի ձևով անվանվում և՛ կարող: Այստեղ պետք է հիշել, որ սոսկ վերջինի ձևով անվանվում և՛ կարող: Այստեղ պետք է հիշել, որ սոսկ վերջինի ձևով անվանվում և՛ կարող:

Անորոշ դերբայի բայական և անվանական-գոյականական հատկանիշները դրսևորվում են ոչ միայն սեռի ու խնդրառության և հոլովման համատեղությամբ նույն ձևի մեջ, այլև բացահայտվում են անորոշ դերբային տրվող հարցերով: Այսպես, «Մի՞րում է վազել, խաղալ, կարդալ,

<sup>16</sup> Հմմտ. Ա. Արքանամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 306:

գրել, գրոսնել, զվարճանալ, երգել, պարել» կապակցութեան մեջ անորոշ դերբայները համասարապես կարող են պատասխանել և ի՞նչ անել, և ի՞նչ հարցերին. նա սիրում է ի՞նչ անել՝ վազել, խաղալ, կարգալ... նա սիրում է ի՞նչ՝ վազել, խաղալ, կարգալ և այլն: Ի միջի այլոց նկատենք, որ այսպիսի դեպքերում և՛ անորոշ, և՛ որոշյալ առմամբ գործածվելով (այսինքն՝ առանց հոդի և ըլին հոդով կիրառվելով)՝ անորոշը չի փոխում իր բնույթը, թեև որոշյալ առման դեպքում նրա առարկայական էութունն ավելի ցայտուն է գրսեորվում՝ «Սիրում է վազելը, խաղալը, կարգալը, գրելը» և այլն:

**ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅԻ ԿԻՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**— Կատարված իմաստային վերլուծություններն արդեն ընդհանուր գծերով նախանշում են անորոշ դերբայի շարահյուսական կիրառության հիմնական ուղորտները: Գործողության, ընթացքի նշանակությունը համատեղելով առարկայական նշանակության հետ՝ անորոշ դերբայը իր առարկայական, բայանվանական էությունը համապատասխան՝ խոսքի մեջ հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով: Գոյականների նման նախադասության մեջ գործածվելով ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական, հազվադեպ նաև ներգոյական հոլովներով՝ անորոշ դերբայն արտահայտում է այս հոլովներին հատուկ շարահյուսական հարաբերություններ:

Անորոշ ուղղական հոլովածեր նախադասության մեջ հանդես է գալիս ենթակայի և ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոններով, ինչպես՝ ա) «Մի՛ մտածիր այն ցավերի մասին, որոնց դարմանելը վեր է քո ուժից» (Մուր.). «Այդպես շուտ ուրախանալը դեռ վաղ է, սիրելի՛ մայր» (Բաֆֆի). «Եվ ավելորդ, և անօգուտ է պատճառի կամ պատճառների մասին մտածելը» (Նար-Դոս). «Իմ շուտ վեր կենալը կարևոր էր մեր ընտանիքի համար» (Անան.). բ) «Սգալի տեսարանն սկսեց նրան ձանձրացնել» (Շիրվ.). «Սիրում էր աղմկալի քեֆեր, կուրելի, շարդել, սրառու նրա վրա շշեր շպրտել, թուղթ խաղալ» (Շիրվ.). «Սովորեցնում էր վազել, լայն վիհերի վրայից թռչել, ձիարշավ լինել և խրոխտ նծույզների սանձահարել» (Բաֆֆի). «Դարան են մտնում, հենց որ զգում են վայրի խոզերի մտենալը» (Բակ.):

Անորոշ դերբայի ուղղական հոլովածեր հաճախ գործածվում է տրականի և բացառականի փոխարեն, ինչպես՝ Պատրաստվում էր գնալ (փի. գնալու), Վարժվել է հանգերով ոտանավորներ գրել, Փափագում էի տեսնել ու լսել նրան, Զգում եմ վերացնել թերութունները, բարձրացնել աշխատանքի որակը, Ամաչում էր գնալ, ասել (գնալուց, ասելուց), Վախենում էր նրան հանդիպել, տեսնել, հետք խոսել, Խուսափում էր մոտենալ իր նախկին ընկերներին, նրանց հետ բարեկամություն անել և այլն:

Այսպիսի ուղիղ ձևով գործածված անորոշը, որի ուղիղ ձևը պայ-

մանավորված չէ խնդրառու բայի հոլովառությամբ, կոչվում է քացարձակ անորոշ:

**Անորոշի սեռական-տրական հոլովածեր կիրառվում է այնպես, ինչպես գոյականի սեռական-տրական հոլովածեր:**

Որպես գոյականից կախված ձև՝ անորոշի սեռական-տրականը հանդես է գալիս սուբյեկտ կամ հատկացուցչի պաշտոնով ինչպես՝ «Մեր նամփա քնկնելու ժամանակն էր» (Թում.). «Հետևից հյուրի կուտրվելու ձայն լսվեց» (Բակ.). «Ալիմյանների տանն ասեղ գցելու տեղ շկար» (Շիրվ.). «Ափսոս էլ կարդալու բան չկա, վերջացավ» (Անան.). «Զարմանալու և հետաքրքրվելու հերթն ինձ հասավ» (Նար-Դոս):

Որպես բայից կախված ձև՝ անորոշի սեռական-տրականը հանդես է գալիս՝ ա) հանգման խնդրի պաշտոնով, ինչպես՝ «Նախասենյակում սպասում էր դռների բացվելուն, նրա արթնանալուն» (Բաֆֆի). «Պատրաստվում էր օգնել ձագի աշխարհ գալուն» (Անան.). բ) նպատակի պարագայի պաշտոնով՝ շարժում ցույց տվող բայերի հետ, օրինակ՝ «Գալիս էին իրենց հարգանքը մատուցանելու հանգուցյալին» (Շիրվ.). «Վարագներն իջնում են շուր խմելու» (Բակ.):

Անորոշի բացառական հոլովը սովորաբար հանդես է գալիս՝ ա) անշատման անուղղակի խնդրի պաշտոնով, օրինակ՝ «Նա հրաժարվում է մեզ հետ հանդիպելուց, մեզ հետ խոսելուց, մեր երեսը տեսնելուց». «Խուսափում է իր նախկին բարեկամներին այցելելուց, նրանց տեսնելուց». բ) պատճառի պարագայի պաշտոնով, օրինակ՝ «Շատ աշխատելուց չէի կարողանում լավ քնել». «Շտապելուց մի քանի սխալներ թույլ տվեց»:

Անորոշի գործիական հոլովը շատ դժվարությամբ է ըմբռնվում առարկայական նշանակությամբ և այդ պատճառով էլ, որպես կանոն, խնդրի պաշտոնով հանդես չի գալիս:

Անորոշի գործիական հոլովածեր հիմնականում հանդես է գալիս ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով, և նրա այս կիրառությունը զանգվածային է ու շափազանց տարածված, օրինակ՝ «Սիժեռակը սուր ծղրտալով ընկավ կատվի հետևից՝ նրա շուրջը թռտալով ու կտցահարելով» (Թում.). «Հեռվից խաղալով ու խայտալով վազում էր սպիտակ ձին» (Բակ.). «Փայփայելով պահում է այն տրեխները» (Շիրվ.):

Բացի ձևի պարագայից, անորոշի գործիականը նախադասության մեջ նաև կիրառվում է ժամանակի և պատճառի ու հիմունքի պարագաների պաշտոններով, օրինակ՝ ա) «Գիբորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ» (Թում.). «Արտասանելով այս խոսքերը՝ նա շտապով դուրս գնաց» (Շիրվ.). բ) «Հասկանալով նրա խորամանկությունը՝ այդ օրը տնից դուրս չեկավ». «Զգալով նրա դրությունը՝ ես դուրս եկա սենյակից»:

Անորոշի ներգոյական հոլովը սակավադեպ է միայն կիրառվում՝ արտահայտելով սահմանափակման նշանակություն, օրինակ՝ «Ես շատ ծուլ եմ նամակներ գրելում» (Նար-Դոս)։ «Դմակին կտա ու մի տալումը դմակը կպոկի» (Թում)։ Անորոշի ներգոյականի իմաստը սովորաբար արտահայտվում է սեռական-տրականով ու մեջ կապով, օրինակ՝ «Սո-վորելու մեջ հավասարը շունի»։ «Ճառելու մեջ մի հատ է»։ «Վարպետա-ցել է ուրիշներին վարկաբեկելու մեջ» և այլն։

Սակայն կան կիրառություններ, երբ անորոշ դերբայը սոսկ հան-դես է գալիս գործողության նշանակությամբ, առանց առարկայական իմաստի։ Այսպիսի բնույթ ունեն հետևյալ կիրառությունները։

ա) Անորոշ՝ դերբայը որպես եղանակային ձևերի բաղադրիչ.— Ժա-մանակակից լեզվի ոչ հեռավոր անցյալում անորոշ դերբայը մասնակ-ցում էր բայի գիմավոր ձևերի կազմությանը՝ օժանդակ բայի ժխտա-կան ձևերի հետ բաղադրելով ենթադրական եղանակի ժխտական ձևերը, ինչպես՝ «Ծրբեք իր բնի մոտերքում որս չի անիլ ու վնաս չի տալ» (Թում)։ «Անիծվի՛ս, եթե վերջին կամքս չես կատարիլ» (Շիրվ)։ «Ծր-բեք չեմ ամուսնանալ նրա հետ» (Շիրվ)։

Այս ձևերը, որոնք մինչև դարասկիզբը օրինաչափական էին, այժմ գործածությունից դուրս են եկել և հնաբանությունների արժեք ունեն։

բ) Անորոշ՝ դերբայի գործածությունը հրամայական եղանակի ի-մաստով, ինչպես՝ «Գլխատել ստահակին Եվ ինձ ներկայացնել գլուխն անմիջապես» (Զար)։ «Միայն պատրաստ պահել խոռվահույզ ոգին Եվ հավատալ Շամիրամա մեծահնար խելքին» (Զար)։ «Որոշում հանեց... հայ հողագուրիկին Չբավարարել վեց արշին հողով, Այլ— ընդամենը— Չխենթացնել մահվան ու ջարդի մշտական զոդով» (Սևակ)։

գ) Անորոշ՝ դերբայի գործածությունը ըզմական եղանակի իմաստով, ինչպես՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, Ամենին մոռանալ, Չսիրել, չխորհել, չափսոսալ—Չեռանա՛լ... Մի վայրկյան ամենից հեռանալ, Ա-մենին մոռանալ.— Խավարում, ցավերում Բարանալ Մեն-միայն... Մո-ռանալ, մոռանալ ամեն ինչ, Ամենին մոռանալ, Չսիրել, չտեսնչալ, չկան-չել, հեռանալ» (Տեր)։

Այսպես և՛ անորոշ դերբայով արտահայտվում են նաև եղանակա-յին այլ երանգներ, ինչպես՝ «Ի՞նչ դիրք բռնել մոր մոտ. կեղծե՛լ, խա-րե՛լ, թե՛ բացարձակ կերպով դատապարտել հոր վարմունքը» (Բաֆֆի)։ «Լինե՛լ, թե՛ շիկե՛լ՝ այս է խնդիրը» («Համլետ»)։ «Փակել դպրոցը, ու-սումնարանը... Բայց ինչպե՞ս փակես մի ազգի լեզուն» (Սևակ)։

Հասկանալի է, որ այսպիսի գործածությունների դեպքում անորոշ դերբայի հոլովական ձևի մասին խոսք լինել չի կարող, որովհետև անո-րոշ դերբայը վերջին կիրառությունների դեպքում զուրկ է առարկայնու-թյան գաղափարից, հետևաբար նաև հոլովի քերականական կարգից։

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ԻՄԱՍՍՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Անկատար 2-րդը կազմվում է ԻՍ մասնիկով, որը դրվում է բոլոր բայերի անորոշ դերբայի վրա, ինչպես՝ գրել—գրելիս, կարդալ—կարդալիս, փախչել—փախչելիս, բարձրացնել—բարձրացնելիս և այլն\*։ Այս կանոնը համա-պարփակ է ու համընդհանուր և ոչ մի բացառություն չի ճանաչում։ Ըստ այդմ՝ անկատար 2-րդի ձևերը ժամանակակից հայոց լեզվում ընկալ-վում են ու ըմբռնվում որպես անորոշ դերբայից ածանցված ձևեր։

Անկատար 2-րդը ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող, շարունա-կական, տևական գործողություն և իր արտահայտած այդ իմաստով համահնչյուն է ՈՒՄ անկատարին, բայց նրանից տարբերվում է իր կի-րառություններով։

Անկատար 2-րդի համար պետք է տարբերել երկու հիմնական կի-րառություն. ա) անկատարը որպես նախադասության ինքնուրույն ան-դամ, ինչպես՝ Փողոցն անցնելիս վայր ընկավ. Համալսարան գնալիս անդիպեց ընկերոջը և այլն. բ) անկատարը որպես երկրորդական բա-ղադրյալ ժամանակների կազմիչ, ինչպես՝ անցնելիս է լինում, անցնե-լիս եղավ, անցնելիս լինի, գնալիս է լինում, գնալիս եղավ, գնալիս լինի և այլն։

Երեք բայերի՝ գալ, լալ և տալ բայերի ԻՍ անկատարով բաղադրվում են նաև սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակ-ները՝ գալիս եմ—գալիս էի, լալիս եմ—լալիս էի, տալիս եմ—տալիս էի։

Անկատար 2-րդը հանդես գալով որպես նախադասության ինքնու-րույն անդամ և որպես երկրորդական բաղադրյալ ժամանակների կազ-միչ, այսինքն՝ տարբեր դերերով, դրսևորում է նաև տարբեր իմաստներ։ Որո՞նք են այդ իմաստները։

Որպես երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմիչ ԻՍ ան-կատարը իր իմաստով համարյա հավասարազոր է դառնում ՈՒՄ ան-կատարին՝ ցույց տալով ընթացքի մեջ գտնվող գործողություն, մի գոր-ծողություն, որը որե՛ն ժամանակակետում տևում է հարաձիգ, օրինակ՝ գնալիս եմ լինում, գնալիս էի լինում, գնալիս եղա, գնալիս լինեմ և այլն։

Որպես նախադասության ինքնուրույն անդամ ԻՍ անկատարը ժա-մանակային իմաստ է արտահայտում՝ դրսևորելով «տվյալ գործողու-թյունը կատարելու ժամանակ» հասկացությունը և իր արտահայտած այդ իմաստին համապատասխան՝ հանդես է գալիս ժամանակի պարա-

\* Տարբեր քերականներ տարբեր կերպ են անվանում այս դերբայը, այն է՝ ան-կատարի II ձև կամ տարբերակ (Մ. Արեղյան, Ա. Արրախանյան), ժամանակային (Ը. Աղայան), հարակցական (Ս. Արրախանյան), գույքնօրացական (Ն. Պառնաս-յան)։ Մենք ավելի նպատակահարմար ենք գտնում այդ դերբայն անվանել անկա-տար երկրորդ։

գայի շարահյուսական պաշտօնով, ինչպես՝ Տուն գնալիս հանդիպեց իր ընկերոջը. Քննություն հանձնելիս շփոթված էր. Միծաղելիս աջ այտին փոսիկ էր գոյանում և այլն:

Իր այդ իմաստով ԻՄ անկատարը կարծես թե արտահայտում է անորոշ դերբայի քերականական-հոլովական հարաբերություններից մեկը, որը զրսևորվում է անորոշի սեռական-տրական հոլովաձևի և ժամանակ կապի միջոցով, ինչպես՝ Վազելիս վայր ընկավ||Վազելու ժամանակ վայր ընկավ. Երգելիս հուզվում է||Երգելու ժամանակ հուզվում է. Արևը մայր մտնելիս անտառում էինք||Արևը մայր մտնելու ժամանակ անտառում էինք և այլն: Այս զուգահեռ ձևերի իմաստային միակ տարբերությունն այն է, որ առաջին ձևերում շեշտված է նաև գործողության շարունակականությունն ու տևականությունը, իսկ երկրորդ ձևերում դրանց վրա ուշադրություն չի դարձվում:

Քանի որ անկատար 2-րդը ժամանակի պարագայի պաշտոնում սոսկ ցույց է տալիս գործողության ժամանակահատված (վազելիս—վազելու ժամանակ), սրանից ինքնին բխում է, որ նա կարող է գործածվել բայական բոլոր ժամանակների հետ, ինչպես՝ «Քայլելիս հենվում է փայտին» (Բակ.). «Մարդը մի շաբաթ առաջ նրա անունը լսելիս դեմքը բլբլեցնում էր» (Շիրվ.). «Մեր արևաշող հովիտն իջնելիս միշտ սիրտս նխացել է հրճվանքից» (Անան.). «Այս ասելիս սրբազանը ջերմեռանդորեն բարձրացրեց աչքերը դեպի վեր» (Շիրվ.). «Ով ցած կբերի նրան քոչելիս, թե չի ենն կինն ու գինին» (Թում.) և այլն:

### ՀԱՐԱԿԱՏԱՐ ԳԵՐԲԱՅ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Հարակատար դերբայը կազմվում է ԱԾ մասնիկով, որը զրվում է պարզ (նաև կրավորական ու բազմապատկական) բայերի անկատարի, իսկ մնացած բայերի կատարյալի հիմքի վրա, ինչպես՝ ա) գրել—գր—գրած, կատարել—կատար—կատարած, սիրվել—սիրվ—սիրված և այլն, բ) կարդալ—կարդաց—կարդացած, հավատալ—հավատաց—հավատացած, մեծանալ—մեծաց—մեծացած, վախենալ—վախեց—վախեցած, գտնել—գտ—գտած, փախչել—փախ—փախած, բարձրացնել—բարձրացր—բարձրացրած, հեռացնել—հեռացր—հեռացրած և այլն:

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԳԵՐԲԱՅԻ ԵՐԿԱԿԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ.— Հարակատար դերբայի իսկական էությունը ճիշտ ըմբռնելու համար միշտ պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները. ա) հարակատար դերբայն արտահայտում է գործողություն, բ) հարակատար դերբայն արտահայտում է գրություն, վիճակ: Հարակատարի այս երկու նշանակությունները հանդես են գալիս միասնաբար և ի մի են ձուլված:

Ըստ այդմ, եթե փորձենք սահմանել հարակատար դերբայը՝ նկատի ունենալով նրա արտահայտած այս երկու իմաստները, կունենանք

հետևյալ սահմանումները. ա) հարակատար դերբայը ցույց է տալիս գործողություն, որը վերածվել է դրության, վիճակի. բ) հարակատար դերբայը ցույց է տալիս դրություն, վիճակ, որն արդյունք է որոշակի գործողության: Այս երկու բնորոշումներն էլ կարելի է ընդունել, մասնավաճառ որ նրանք փաստորեն նույնն են, և տարրեր են միայն նրանց ելակետերը:

Հարակատար դերբայը, ինչպես նշված է արդեն, մտնում է անկախ դերբայների մեջ, իսկ «անկախ դերբայները գործողության հետ միաժամանակ արտահայտում են այլ և այլ խոսքիմասային նշանակություններ»: Կոնկրետ դեպքում՝ հարակատար դերբայը գործողության հետ միաժամանակ արտահայտում է նաև հատկանշային նշանակություն:

Հարակատարի արտահայտած գործողության, բայական նշանակությունը, մյուս դերբայներին համագոր ու համահնչյուն, իր փերականական-նյութական արտահայտությունն է ստանում բայասեռի և դրանից բխող խնդրառության կարգերով: Հարակատարը ևս, մյուս դերբայների նման, ուղիղ խնդր է ընդունում, ինչպես՝ գիրք գրած մարդ, աշխարհ տեսած գինվոր, ֆենությունը հանձնած ուսանող, աշխատանքը վերջացրած բանվոր և այլն, և փոփոխություններ է կրում ըստ սեռերի, ինչպես՝ բարձրացած (չ.)—բարձրացրած (ն.)—բարձրացված (կ.), մեծացած—մեծացրած—մեծացված, գրած—գրված, կատարած—կատարված, ջարդած—ջարդված և այլն:

Հարակատարի արտահայտած հատկանշային-ածականական նշանակությունը իր փերականական-նյութական դրսևորումն է ստանում նրա շարահյուսական կիրառությունների մեջ: Ինչպես ստորև կտեսնենք, հարակատար դերբայը, իր արտահայտած հատկանշային-ածականական բնությանը համապատասխան, նախադասության մեջ հանդես է գալիս ածականին հատուկ շարահյուսական կիրառություններով՝ որոշիչ (և ձևի պարագա), ստորոգելիական վերագիր: Ինչպես ածականը, այնպես էլ հարակատար դերբայը կարող է գործածվել գոյականաբար և այդ դեպքում նա հատկանշի հետ միասին արտահայտում է նաև առարկայական նշանակություն ու հոլովվում է, ինչպես՝ հոգնածը—հոգնածի—հոգնածից—հոգնածով, բերածը—բերածի—բերածից—բերածով և այլն: Մի խոսքով՝ հարակատար դերբայի և ածականի շարահյուսական կիրառությունների մեջ տարբերություններ չկան:

Այսպես ուրեմն՝ հարակատար դերբայի մեջ զրսևորվում են և՛ գործողության, և՛ հատկանշիչի (գրության, վիճակի) նշանակություններ: Իհարկե, որոշ կիրառություններում, ինչպես սպասելի էր, գերիշխում է գործողության, իսկ որոշ կիրառություններում էլ՝ հատկանշիչի նշանակությունը, բայց որպես ընդհանուր կանոն ամեն մի բայից կազմված հարակատար դերբայի մեջ այս երկու նշանակություններն էլ զրսևորվում են հավասարազոր ու հավասարաթեք: Այն վեճը, թե «հարակա-

տար դերբայ + եմ-էի» կառուցվածքները եղանակային ձևեր են, թե՛ բազադրյալ ստորոգյալներ, իհարկե, դատարկ վեճ չէ և ունի իր իմաստը:

Այն ֆեռականները, որոնք գտնում են, թե «հարակատար + եմ-էի» կառուցվածքները մտնում են բայի խոնարհման մեջ և եղանակային ձևվեր են, շեշտը դնում են հարակատարի արտահայտած բայական, գործողության նշանակության վրա. իսկ այն ֆեռականները, որոնք գտնում են, թե «հարակատար դերբայ + եմ-էի» կառուցվածքները բայի խոնարհման մեջ չեն մտնում, բազադրյալ ստորոգյալներ են, շեշտը դնում են հարակատարի արտահայտած հատկանշային նշանակության վրա:

Այժմ հարակատար դերբայի կերպային-ժամանակային իմաստի մասին:

Չնայած ենթակայական, հարակատար և ապառնի 2-րդ դերբայները ուղղաձիգ հակադրություն չեն կազմում և այս պատճառով էլ միշտ չէ, որ կարող են իրարով փոխարինվել, որովհետև գրանցից յուրաքանչյուրը, անկախ կերպաժամանակային իմաստից, ունի միայն իրեն հատուկ առանձնահատկությունները, համեմայն դեպս որպես որոշիչ գործածվելիս դրանք եռանդամ հակադրություն են կազմում, ինչպես՝ կառուցվող շենք—կառուցված շենք—կառուցվելիք շենք, ֆենվող ուսանող—ֆենված ուսանող—ֆենվելիք ուսանող:

Եթե քննարկվող ձևերին մոտենանք Մ. Աբեղյանի կերպերի տեսության զուգահեռությամբ, ապա ենթակայական դերբայն արտահայտում է կատարվող կերպ, հարակատար դերբայը՝ կատարված կերպ, իսկ ապառնին՝ կատարելի կերպ:

Եթե քննարկվող ձևերին մոտենանք ժամանակային տեսանկյունից, ապա առաջին շարքի բառաձևերն ունեն ներկայի, երկրորդները՝ անցյալի, իսկ երրորդները՝ ապառնի ժամանակային հատկանիշ: Ըստ այդքի, ենթակայական դերբայի կերպային-ժամանակային իմաստը բացահայտվում է ներկայով՝ ֆենվող ուսանող—ուսանող, որը ֆենվում է. հարակատարինը՝ վաղակատարով՝ ֆենված ուսանող—ուսանող, որը ֆենվել է (ֆենված է), իսկ ապառնիինը՝ ապառնիով՝ ֆենվելիք ուսանող—ուսանող, որը ֆենվելու է:

**ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**— Նախ նշենք, որ սովորաբար գտնում են, թե հարակատար որոշչային կիրառությունները ածականական, իսկ հարակատարի և ԵՄ-էի բայի կապակցությունները բայական կիրառություններ են: Սակայն իրականում հարակատարի կիրառության այսպիսի հակադրություն և, հետևաբար, այսպիսի հարց գոյություն չունի: Ե՛վ որպես որոշիչ գործածվելով, և՛ եմ բայի հետ հանդես գալով՝ հարակատար դերբայը երկու դեպքում էլ, եթե կարելի է այսպես արտահայտվել, գտնվում է իր բնական գրության մեջ՝ դրսևորելով իր ածականական և բայական էությունը: «Նստած մարդ» և «նա նստած է», «հարգված մարդ» և «նա հարգված է», «սիրված մարդ» և

«նա սիրված է» համապատասխան կապակցությունների մեջ հարակատար դերբայը իմաստային տարբերություններ ամենևին երևան չի հանում, այլ և՛ առաջին, և՛ երկրորդ կապակցությունների մեջ նա դրսևորում է բայական ու ածականական հատկանիշներ՝ երկու դեպքում էլ ցույց տալով գործողություն, որ վերածվել է վիճակի, դրության կամ, որ նույնն է՝ դրություն, վիճակ, որ արգյունք է գործողության:

Սակայն մենք կսկսենք հարակատարի հատկապես որոշչային կիրառության քննությունից: Այս մոտեցումն ունի իր իմաստը, և դա այն է, որ հարակատարի որոշչային կիրառությունը համապարփակ է, ծավալային սահմանափակումներ չունի և հատուկ է անխտիր բոլոր բայերին. իսկ «հարակատար դերբայ + եմ-էի» կառուցվածքները, ինչպես ստորև կտեսնենք, ունեն զգալի ծավալային սահմանափակումներ՝ հատուկ լինելով բայերի որոշչային խմբերի միայն:

Գործածվելով որպես որոշիչ՝ հարակատար դերբայը ցույց է տալիս առերկայի հատկանիշը որպես դրություն, վիճակ, օրինակ՝ «Արևոտված, խոցված սիրտը նախրյան Բացվել է այսօր աշխարհի սրտում» (Չար.). «Հաբած, հոգնած տերն ու զորքը Մրափում են խավարում» (Թում.). «Մաշված դուռը դողող երգում էր մի հին երգ» (Բակ.). «Հնձած արտերում կաքավները հավաքում էին ընկած հատիկները, կտցահարում թափված հասկերը» (Բակ.):

Այստեղ պետք է հատուկ շեշտել հարակատարի կիրառական մի առանձնահատկությունը: Դա այն է, որ հարակատար դերբայը ներգործական ձևով կարող է կրավորական (անանցողական) իմաստ արտահայտել: Այսպես, դասերը պատրաստած աշակերտը, ֆենությունները հանձնած ուսանողը, աշխատանքը վերջացրած բանվորը, ապակին ջարդած երեխան կապակցությունների մեջ ներգործաձև հարակատար դերբայը ներգործական սեռի իմաստ է արտահայտում, իսկ պատրաստած դասերը, հանձնած ֆենությունները, վերջացրած աշխատանքը, ջարդած ապակին կապակցությունների մեջ ներգործաձև հարակատար դերբայը կրավորական (անանցողական) իմաստ է արտահայտում: Ուրեմն՝ լեզվում լինում է մի դրություն, երբ, ասենք, գրած—գրված, պատրաստած—պատրաստված, կատարած—կատարված ձևերի հակադրությունը վերանում է, և, որպես հավասարազոր ձևեր, երկուսն էլ կրավորական իմաստ են արտահայտում:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս տարբերակել ներգործական հարակատար դերբայի ներգործական և կրավորական նշանակությունները: Կարելի է սահմանել հետևյալ ընդհանուր կանոնը. երբ ներգործաձև որոշիչ հարակատար դերբայի դրսևորած գործողության կատարողը որոշյալն է, ուրեմն հարակատար դերբայն ունի անցողական նշանակություն, իսկ երբ որոշյալը գործողության կրողն է, ուրեմն հարակատար դերբայն ունի անանցողական նշանակություն:



Այս շատ լավ երևում է հետևյալ հակադրություններում:

**Ներգործածելու հարակատար դերբայի կիրառությունը**

**Ա ն ց ո ղ ա կ ա ն ն շ ա ն ա կ ու թ յ ու ն**

խոտ հնձած գյուղացի  
գիրք կարդացած մարդ  
դասը պատմած աշակերտ  
խոտը տրորած ձի

**Ա ն ա ն ց ո ղ ա կ ա ն ն շ ա ն ա կ ու թ յ ու ն**

հնձած խոտ  
կարդացած գիրք  
պատմած դաս  
տրորած խոտ

Ինչպես հայտնի է, շատ որակական ածականներ կարող են գործածվել նաև մակբայաբար՝ ցույց տալով գործողության կատարման ձևը, օրինակ՝ նա բարձր է խոսում, լավ է պատմում, հիանալի է գրում և այլն: Այս նույն հատկությունն ունեն նաև հարակատար դերբայները: Գործածվելով բայերի հետ՝ հարակատար դերբայը բնութագրում է գործողությունը՝ հանդես գալով ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ «Դուրս եկա և հուզված ու մոլոր քայլեցի դեպի գյուղ» (Անան.): «Կինը զարմացած նայեց նրա երեսին» (Շիրվ.): «Փառք բեզ, աստճ,— ուրախացած ու զարմացած կանչում էին ամենքը» (Թում.): «Երկար ժամանակ դիտում էր հուզված» (Նար-Դոս):

Ինչպես հատկանիշ արտահայտող ամեն մի բառ, այնպես էլ հարակատար դերբայը լայնորեն կարող է կիրառվել գոյականաբար և այդ դեպքում նա արտահայտում է ոչ միայն հատկանիշի, այլև առարկայական գաղափար: Գործածվելով փոխանվանաբար՝ հարակատարը հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, ինչպես՝ «Մինասի տղա Ստեփանի պատմածը ճշմարտանման է» (Բակ.): «Այսպես են անում սովորաբար ինձ պես անպատվածները, ինձ պես խաբվածները, ինձ պես լվիվածները» (Նար-Դոս): «Նա չկամեցավ հիսուն տարվա արյուն-քրտինքով վաստակածը քամուն տալ» (Շիրվ.):

«ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ + ԵՄ-էի» ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԸ.— Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, հարակատար դերբայն արտահայտում է այնպիսի գործողություն, որը վերածվել է վիճակի, գրության: Հարակատարի այս յուրահատուկ իմաստը թելադրում է, որ բոլոր բայերը հարակատար ժամանակներով գործածվել չեն կարող:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում հարակատար ժամանակներով գործածվում են՝ ա) կրավորական բայերը (տարածված է,

կատարված է, ջարդված է, գրված է և այլն), բ) շեղոք սեռի այն բայերը, որոնք գրություն, վիճակ են ցույց տալիս (ընկած է, բարկացած է, կանգնած է, նստած է և այլն): Իսկ ինչ վերաբերում է ներգործական բայերին, ապա դրանք ընդհանրապես հարակատար ժամանակաձևեր չեն կազմում: Գրած եմ, հարգած եմ, սիրած եմ, կատարած եմ և այլ ձևերը ժամանակակից լեզվում փաստորեն գոյություն չունեն:

Անցողական հարակատար բայերի ներգործական նշանակությամբ գործածության առանձին օրինակներ կարելի է գտնել հայ դասական գեղարվեստական գրականության մեջ, օրինակ՝ «Նա հազած էր ոռու քաղաքացիական աստիճանավորի հնամաշ ու գունատ մունդիր ու կրծքին փառջ արած մի կարմրագույն խաչաձև շքանշան» (Շիրվ.): «Ծս մա՞րդ սպանեմ... Ես, որ կյանքումս մի ճանճ անգամ չեմ սպանած» (Նար-Դոս): «Այդ խոստումն արած է ուրիշին» (Մուր.): Բայց այս ձևերը հենց այն ժամանակ էլ փաստորեն ընդհանուր օրինաչափությունից շեղվող ձևեր էին:

Ժողովրդական-խոսակցական լեզվում սովորական է անցողական բայերի հարակատար ժամանակների գործածությունը անանցողական իմաստով, օրինակ՝ «Մեր գիրն էլ հայրաք էսպես էր գրած» (Թում.): «Որսկանությունը անհծած ա:— Անհծած ա, բա՛ւ, մին որսկանությունը, մին էլ ձկնորությունը, երկուսն էլ անհծած ա» (Թում.): «Սեղանի վրա թանաքամանին հեկած էր մի յուսակար» (Շիրվ.): «Մտորների վրա շարքով կապած էին ցմոյգները» (Բաֆֆի): «Պատասխանեց, որ գրքերում գրած է» (Բակ.): «Պատի վրա մեխած էր մի լայն վագրի սորթի» (Բաֆֆի): «Սյունի պատվանդանի վրա դրած էր փայտյա փոքրիկ օթակ» (Բաֆֆի):

Գրական լեզվում այսպիսի դեպքերում սովորաբար գործածվում են հարակատարի Վ-ով ձևերը՝ Որսր.ությունն անհծած է||Որսորությունն անհծված է. Գրքերում գրած է/Գրքերում գրված է և այլն:

Հարակատար ժամանակների գործածությամբ արևելյան գրականը որոշակիորեն տարբերվում է արևմտյան գրականից: Վերջինում որպես եղանակային ձևերի բաղադրիչ հանդես եկող վաղակատար և հարակատար դերբայների միջև իմաստային տարբերություն չկա, որի հետևանքով էլ հարակատար ժամանակներով գործածվում են բոլոր բայերն անխտիր, ներառյալ նաև ներգործականները, ինչպես՝ «Հետը տեսնվելու, տունը երթալու առիթը փնտրած ու գտած էր» (Զոհրապ): «Ոստիկանությունն աղջիկ սը ձերբակալած էր» (Պար.). «Խոշոր թիկնոց սը հագած էր» (Պար.). «Բոլորովին մոռցած էր սնուկները (Պար.). «Գտած էի արտասահմանյան գործիչ սը» (Օտյան). «Իր հույսը դրած էր նվերներու վրա միայն» (Օտյան):

Հարց է առաջանում՝ ինչո՞վ է բացատրվում հարակատար ժամանակաձևերի կազմության որոշակի սահմանափակվածությունը արևելյան գրական լեզվում:

Հասկանալի է, որ եթե ներգործական բայերն անխտիր հարակատար ժամանակներ չեն կազմում, իսկ կրավորական բայերն անխտիր հարակատար ժամանակներ են կազմում, նշանակում է այս երևույթը հարակատար ժամանակներով գործողությունների բնույթների տարբերությամբ:

Գիտենք, որ ներգործական և կրավորական սեռերն անմիջական հակադրություն են կազմում. ներգործական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որ դուրս է գալիս ենթակայից և անցնում է խնդրին, օրինակ՝ Աշակերտը հարգում է ուսուցչին, իսկ կրավորական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որ դուրս է գալիս խնդրից և անցնում է ենթակային, ինչպես՝ Ուսուցիչը հարգվում է աշակերտից: Եվ եթե հարակատար ժամանակները ցույց են տալիս ենթակայի դրությունը, վիճակը, որն արդյունք է որոշակի գործողության, հենց իմաստային այս առանձնահատկությունից բխում է, որ ներգործական սեռի բայերը հարակատար ժամանակներով գործածվել չեն կարող, որովհետև դրանց ցույց տված գործողությունը, որ դուրս է գալիս ենթակայից, չի կարող այդ նույն ենթակայի համար հարատևող վիճակ ստեղծել: Այլ կերպ ասած՝ Աշակերտը հարգած է ուսուցչին կառուցվածքը ժամանակակից հայերենում անիմաստ է: Կրավորական սեռի բայերի համար հարակատար ժամանակները բնորոշ են, որովհետև նրանք ցույց են տալիս մի գործողություն, որն ուղղված է ենթակային, ենթակայի մեջ է և, հետևաբար, նրա համար կարող է ստեղծել կայուն վիճակ, ինչպես՝ Ուսուցիչը հարգված է:

Մյուս կողմից՝ ճիշտ է, մենք սովորաբար ասում ենք, որ ներգործական և կրավորական սեռերն արտահայտում են նույն գործողությունը հակադիր ուղղվածությամբ, բայց պետք է նկատի ունենալ, որ դրանք բացարձակ հակադրություններ չեն, և ներգործական սեռը, որպես կանոն, գործողություն է ցույց տալիս, իսկ կրավորական սեռն ավելի դրություն, վիճակ է ցույց տալիս: Կրավորական սեռի այս իմաստը համահնչյուն է հարակատար ժամանակների իմաստային կողմին և ահա թե ինչու կրավորական բայերից կազմված հարակատար ձևերը այնքան լայն կիրառություն ունեն ժամանակակից հայերենում, օրինակ՝ «Քավորը արագացավ է, հայրապետը արագացավ է, իմ հայրը՝ սպարապետը արագացավ է» (Րաֆֆի). «Այնտեղ եմ դառնում Մարկոս Ալիմյանի ոսկիներով լի տոպրակները» (Շիրվ.). «Մահամբձի մահճակալը գրված էր պատի տակ» (Շիրվ.). «Ամեն ինչ խորասուզված էր անվերժանելի մթության մեջ» (Րաֆֆի). «Նրա սարսափը հեռունեղում էր տարածված» (Բակ.). «Առանց էն էլ վիրավորված եմ ես» (Թում.) և այլն:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, ներգործականներին համապատասխան կրավորականներն ազատ կիրառվում են հարակատար ժամանակներով անկախ այն բանից՝ կրավորական, թե՛ չեզոք սեռի իմաստ են արտահայտում, որովհետև վերջին դեպքում Վ ածանցը գործողությունը «պարփակում է» ենթակայի մեջ, իսկ ենթակայի մեջ պարփակված այդ գործողությունը հեշտորեն ստանում է վիճակի կամ դրություն հարակալության նշանակություն:

Գալով չեզոք սեռի բայերին՝ պետք է նշել, որ դրանցից հարակատար ժամանակներ են կազմում միայն նրանք, որոնց ցույց տված գործողությունը կարող է հատկանշվել դրության հարակալության նշանակությամբ կամ հետևանքային կողմով, ինչպես՝ նստած է—էր, հոգնած է—էր, քնած է—էր, զարգացած է—էր, կպած է—էր, բարկացած է—էր, պոռկած է—էր, զայրացած է—էր և այլն:

ՀԱՐԱԿԱՏԱՐ ՁԵՎԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ.— Այս հարցը գիտնականորեն առաջ է բաշխված Մ. Արեղյանի կողմից: Ձուգահեռ անցկացնելով վաղակատար և հարակատար դերբայներով կազմված ժամանակային ձևերի միջև՝ նա գտնում է, որ և՛ վաղակատար, և՛ հարակատար ժամանակները՝ բնավել է—բնավել էր, բնավել է—բնավել էր, կատարյալ կերպի ժամանակներ են, միայն վերջինների մեջ կա հետևանքային կողմ, դրության հարակալության նշանակություն: Հետագա շրջանի համարյա բոլոր քերականներն ընդունում են այս բացատրությունը, բացի Գ. Զահուկյանից և է. Աղայանից:

Գ. Զահուկյանը զուգահեռ է անցկացնում հարակատար և անկատար ձևերի միջև, գտնելով, որ «Ընդհանուր առմամբ ան-ով ձևերն արտահայտում են վիճակ, նրանց հակադրվող ուն-ով ձևերը՝ գործողություն, շարժում, վիճակային անցում»<sup>17</sup>: Նշենք, նաև, որ ըստ Գ. Զահուկյանի կարծիքի՝ ան-ով ձևերը մտնում են բայի խոնարհման համակարգի մեջ:

է. Աղայանը այն դրույթն է զարգացնում, թե հարակատարը, ինչպես և ենթակայականը, գործողության շարունակական կերպ ունի: Հասկանալի է, որ եթե հարակատար դերբայն ունի շարունակական կերպ, ապա կապակցվելով օժանդակ բայի ներկայի հետ՝ նա կարտահայտի շարունակական ներկայի գաղափար, իսկ օժանդակ բայի անցյալի հետ կապակցվելով՝ կարտահայտի շարունակական անցյալի գաղափար: Բայց որովհետև հարակատար բայաձևերը ավելի վիճակ, քան թե գործողություն են ցույց տալիս, այստեղից հարակատարով և օժանդակ բայի ներկայով կազմված բայաձևերը՝ նստած է, հոգնած է և այլն, կարող են անվանվել վիճակի ներկա, իսկ հարակատարով և օժանդակ բայի անցյալով կազմված բայաձևերը՝ նստած էր, հոգնած էր և այլն, կարող են անվանվել վիճակի անցյալ: Հարցն այսպես է լուծված է. Աղայանի և է. Բարսեղյանի կազմած դպրոցական քերականության առաջին հրատարակություններում: «Հարակատար ներկան ցույց է տալիս առարկայի դրությունը, վիճակը ներկայում, խոսելու պահին»<sup>18</sup>, Այստեղից մի բայ է մնում միայն, որպեսզի հարակատար ձևերը հանվեն բայի խո-

<sup>17</sup> Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 274:

<sup>18</sup> է. Աղայան, է. Բարսեղյան, Հայոց լեզու, 1965, էջ 233:

նարհման հարացույցից, որ և կատարվում է դպրոցական քերականութ-  
թյան վերջին հրատարակություններում<sup>19</sup>;

Վերևում բերված սահմանման համար հիմք են ծառայել այնպիսի  
օրինակներ, որոնց ներկայի իմաստն անժխտելի է, օրինակ՝ բեզարած  
է, քառնած է, կանգնած է: Կարելի է բերել նաև այլ օրինակներ, որտեղ  
հարակատար ձևերը ներկայի իմաստ են արտահայտում, ինչպես՝ նա  
զբաղված է, բարկացած է, ջղայնացած է, պառկած է, նստած է, հոգնած  
է, սիրահարված է և այլն: Սակայն, համենայն դեպս, հարակատար դեր-  
բայով և օժանդակ բայի ներկայով կազմված բայաձևերը դնել ներկա  
ժամանակի տակ նշանակում է միակողմանիորեն ներկայացնել այս բա-  
յաձևերի ժամանակային բովանդակությունը: Անժխտելի է, որ որոշակի  
դեպքերում «հարակատար դերբայ + եմ» կառուցվածքները բացահայտո-  
րեն դրսևորված անցյալ ժամանակ են ցույց տալիս, որը շատ լավ երե-  
վում է հետևյալ հակադրություններում. ուսանողը բնական է— բնական  
է— բնական է. խանութը ստուգված է— ստուգվում է— ստուգվելու է.  
աշխատանքը ավարտված է— ավարտվում է— ավարտվելու է. շենքը կա-  
ռուցված է— կառուցվում է— կառուցվելու է. ճահիճը չորացված է— չորաց-  
վում է— չորացվելու է. ժողովուրդը ստրկացված է— ստրկացվում է—  
ստրկացվելու է. առաջադրանքը կատարված է— կատարվում է— կատար-  
վելու է և այլն: Հասկանալի է, որ բնական է, ստուգված է, ավարտված է  
և այլ բայաձևերը բացահայտորեն դրսևորված անցյալ գործողություն են  
ցույց տալիս՝ դրուժյան հարակալության նշանակությամբ, և ներկա  
ժամանակի բայաձևեր համարվել շեն կարող:

Այսպես ուրեմն՝ «հարակատար դերբայ + եմ» կառուցվածքի բայա-  
ձևերի մի մասը բացահայտորեն դրսևորված դրուժյան կամ վիճակի  
ներկայի իմաստ ունի (նստած է, կանգնած է և նմանները), իսկ մյուս  
մասը անցյալ ժամանակի իմաստ ունի՝ մինչև ներկա ժամանակակետը  
շարունակվող դրուժյան հարակալության նշանակությամբ (քննված է,  
ավարտված է և նմանները):

Հարց է առաջանում. ինչո՞վ են պայմանավորված հարակատար բա-  
յաձևերի արտահայտած այդ տարբեր իմաստները: Երկրորդն էր կաս-  
կած հարուցել չի կարող: Գրանք պայմանավորված են հարակատար դեր-  
բայի հենց բուն էությունները: Հիշենք հարակատար դերբայի բնորոշում-  
ները. հարակատարը ցույց է տալիս գործողություն, որը վերածվել է  
դրուժյան, վիճակի կամ հարակատարը ցույց է տալիս դրուժյուն, վի-  
ճակ, որը արդյունք է որոշակի գործողության, այսինքն՝ հարակատար  
դերբայի մեջ միշտ առկա է երկու գաղափար՝ գործողության, ընթացքի  
և դրուժյան, վիճակի, հատկանիշի գաղափար: Տարբեր դերբայների բառ-  
իմաստային առանձնահատկությունների հետ կապված՝ գերիշխում է

այս իմաստներից մեկը կամ մյուսը: Կարելի է սահմանել հետևյալ ընդ-  
հանուր դրույթը:

Եթե հարակատար դերբայի մեջ գերիշխում է հետևանքի, դրուժյան  
գաղափարը, իսկ գործողության գաղափարը երկրորդական գծի վրա է  
մղված, ապա «հարակատար դերբայ + եմ» կառուցվածքը ցույց է տալիս  
դրուժյուն, վիճակ և ունի ներկայի ժամանակային հատկանիշ (օրինակ՝  
հոգնած է). եթե հարակատար դերբայի մեջ գերիշխում է գործողության  
գաղափարը, ապա «հարակատար դերբայ + եմ» կառուցվածքը ցույց է  
տալիս վիճակ, դրուժյուն դարձած գործողություն և ունի անցյալի ժա-  
մանակային հատկանիշ (օրինակ՝ ստուգված է): Բայց որովհետև ոչ ա-  
ռաջիններն են «մաքուր» դրուժյուն, վիճակ արտահայտում առանց  
գործողության գաղափարի, ոչ էլ վերջինները՝ «մաքուր» գործողություն,  
առանց վիճակի, դրուժյան գաղափարի, այդ իսկ պատճառով էլ փաս-  
տորեն ոչ առաջիններն են «մաքուր» ներկա և ոչ վերջիններն են «մա-  
քուր» անցյալ: Ինչպես անմիջաբար կարելի է նկատել, մեր վերաբեր-  
մունքն այս հարցի նկատմամբ երկվակյան է: Բայց դրա պատճառը հենց  
բուն լեզվական երևույթի՝ հարակատար դերբայի երկվությունն է:

Հասկանալի է, որ ինչ ասվեց «հարակատար դերբայ + եմ» կառուց-  
վածքի մասին, նույնը պետք է ասել նաև «հարակատար դերբայ + էի»  
կառուցվածքի մասին, որտեղ գործողության կամ դրուժյան արտահայ-  
տությունը նույնն է, միայն այդ գործողությունը կամ դրուժյունը վերց-  
վում է անցյալ ժամանակակետի հարաբերությամբ:

Մեզ մնում է պատասխանել այս գլխում քննված գուցե ամենա-  
դժվար հարցին. «հարակատար դերբայ + եմ-էի» կառուցվածքները մեռ-  
նում են բայի խոնարհման հարացույցի մեջ, թե՞ ոչ: Որ դրանք մի շարք  
հատկանիշներով տարբերվում են «անկատար դերբայ + եմ-էի», «վա-  
ղակատար դերբայ + եմ-էի», «պատնի դերբայ + եմ-էի» կառուցվածքնե-  
րից, դա անվիճելի է և կասկած չի հարուցում: Բայց դրանից բխում է  
արդյոք, թե «հարակատար դերբայ + եմ-էի» կառուցվածքները բայական  
ժամանակներ շեն և պետք է հանվեն բայի խոնարհման հարացույցից,  
— դժվար է ասել: Ինչպես որ հարակատար դերբայն ունի երկվական բնու-  
թյուն, այնպես էլ երկվական բնություն ունեն նրանով և եմ-էի օժան-  
դակ բայով կազմված կառուցվածքները: Եվ դրանք հանելով բայի խո-  
նարհման հարացույցից՝ անտեսում ենք հարակատարի արտահայտած  
գործողության նշանակությունը, իսկ թողնելով հարացույցի մեջ՝ ան-  
տեսում ենք նրա արտահայտած հատկանշային նշանակությունը: Այ-  
սուամենայնիվ ավելի ճիշտ կլինի «հարակատար դերբայ + եմ-էի» կա-  
ռուցվածքները հանել, քան թե թողնել բայի խոնարհման հարացույցի  
մեջ:

<sup>19</sup> Տե՛ս է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, 1974:

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Ենթակայական դերբայը կազմվում է ՈՂ մաս-  
նիկով, որը դրվում է Ծ խոնարհման բայերի անկատարի, իսկ Ա խո-  
նարհման բայերի կատարյալի հիմքի վրա, ինչպես ա) գրել—գր-գրող,  
գտնել—գտն-գտնող, փախել—փախչ-փախչող, բարձրացնել—բարձրացն-  
բարձրացնող, բ) կարդալ—կարդաց-կարդացող, հավատալ—հավատաց-  
հավատացող, բարձրանալ—բարձրաց-բարձրացող, մոտենալ—մոտեց-  
մոտեցող և այլն:

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՂԻ ԱՆՈՒՆ ՅՈՒՅՅ ՏՎՈՂ  
ԲԱՌԵՐԻ ԿԱՐԳ.— Որ ենթակայական դերբայը բայական հասկացություն  
է, սերտ կերպով կապված է բայական մյուս ձևերի հետ և պետք է  
քննվի հայերենի բայական համակարգում,— դա կասկածից դուրս է:  
Հենց այն բանը, որ բայի ամեն մի անորոշ ձև ունի իր համապատասխան  
ՈՂ մասնիկով կազմված ձևը, ինչպես՝ կատարել—կատարող, մշակել—  
մշակող, հավատալ—հավատացող, զգալ—զգացող և այլն, մեզ արդեն  
հուշում է, որ գործ ունենք ոչ թե առանձին բառային միավորների, այլ  
բառի քերականական ձևերի հետ: Եթե ՈՂ մասնիկով կազմված ձևերն  
առանձին բառային միավորներ լինեին, անորոշ դերբայի (ինչպես և  
մյուս դերբայների) հետ ձևերի այսպիսի հետևողական և բացառություն-  
ներ չճանաչող հարաբերակցություն հանդես գալ չէր կարող: Հայտնի է,  
որ բառակազմական մասնիկների գործածության ոլորտները այս կամ  
այն շափով սամանափակված են բառերի թանձրացական, նյութական  
նշանակություններով, իսկ քերականական մասնիկների գործածության  
ոլորտներն ավելի լայն են ու համեմատաբար ազատ բառերի նյութա-  
կան նշանակություններից: Եվ եթե ամեն մի անորոշ դերբայից, անկախ  
այդ դերբայի բառային նշանակությունից, կարող են ՈՂ մասնիկով ձե-  
վեր կազմվել, այս փաստն ինքնին նշանակում է, որ ՈՂ մասնիկը ձևա-  
կազմական ձևույթ է, և, հետևաբար, նրանով կազմված միավորները  
բառաձևեր են և մտնում են հայերենի ձևաբանական համակարգի մեջ:

Քանի որ հայերենում որպես բայական ձևերի ելակետ ընդունվում  
է անորոշը, ուստի և մենք քննում ենք և ստորև ևս քննելու ենք անորոշի  
և ենթակայականի հարաբերակցության ու հակադրության հարցը:

Անորոշ դերբայը կազմվում է ԵՂ և ԱՂ մասնիկներով, ինչպես՝ կա-  
տարել, գրել, վագել, հավատալ, մնալ, զգալ և այլն, և ցույց է տալիս  
գործողության անուն, իսկ ենթակայական դերբայը կազմվում է ՈՂ մաս-  
նիկով, ինչպես՝ կատարող, գրող, վագող, հավատացող, մնացող, զգա-  
ցող և այլն, և ցույց է տալիս գործողի անուն:

Այս համարմամբ պարզ է դառնում, որ եթե անորոշ դերբայը գոր-  
ծողության անվան կարգ է, ապա ենթակայական դերբայը գործողի ան-  
վան կարգ է:

Գիտենք, որ գործողի անվան գաղափարը հայերենում արտահայտ-  
վում է ոչ միայն ենթակայական դերբայի, այլև լեզվական զանազան  
միջոցներով. նախ՝ շանազան ածանցներով, օրինակ՝ Ան— վագան, կը-  
ծան, իկ— շրջիկ, մուրացիկ, ԻԶ— փրկիչ, երգիչ, ՈՐԳ— գնորդ, քուսորդ,  
ՈՒ— ազդու, հատու, ՈՒԿ— կտրուկ, բանուկ, ՈՒՆ— սանուն, հասուն,  
ՎՈՐ— սգավոր, ճգնավոր և այլն, երկրորդ՝ իսկական բարդություններ,  
երբ բառի վերջին բաղադրիչը գործողի անվան նշանակություն արտա-  
հայտող բայահիմք է, օրինակ՝ ստախոս, հայասեր, մատենագիր, ամե-  
նագետ, շատակներ, տաղասաց, արագավագ, լրագրավաճառ և այլն, ո-  
րոնք հայերենում շատ լայն տարածում ու գործածություն ունեն:

Քերված բառերի բոլոր խմբերը գործողի անվան նշանակություն են  
արտահայտում և այսբանով էլ իրենց ընդհանուր իմաստով միավորվում  
են ենթակայական դերբայի հետ: Բայց ենթակայական դերբայը գոր-  
ծողի անվան նշանակություն արտահայտող մյուս բոլոր բառախմբերից  
տարբերվում է բնականորեն: Իսկ ո՞րն է քերականական այդ տարբե-  
րությունը: Դա այն է, որ ենթակայական դերբային, որպես բայաձևի,  
հատուկ է բայասեռի քերականական կարգը, որը գործողի անվան նշա-  
նակություն արտահայտող ածականներին ու գոյականներին հատուկ չէ:  
Այսպես, ներգործական բայահիմքերից կազմված ենթակայական դեր-  
բայներն ունեն ուղիղ խնդրի հետ կապակցվելու շարահյուսական հատ-  
կություն, որը գործողի անվան նշանակություն արտահայտող մյուս բա-  
ռախմբերն ունենալ չեն կարող: Թվում է, թե կարելի է ասել, որ, օրի-  
նակ, փրկիչ և փրկող ձևերը, համենայն դեպս, բառիմաստային մեծ  
տարբերություն չունեն, բայց դրանք տարբեր են քերականորեն, որով-  
հետև առաջինը ուղիղ խնդրի հետ կապակցվել չի կարող, իսկ երկրորդը  
կարող է: Համեմատել, օրինակ, «Իմ փրկիչը դու ես» և «Ինձ փրկողը  
դու ես» կառուցվածքները:

Պետք է նշել, որ ենթակայական դերբայը ուղիղ խնդրի է պահան-  
ջում անկախ նրանից, թե նախադասության ի՞նչ անդամների պաշտոն-  
ներով է գործածված, ածականաբար՝, թե՞ գոյականաբար է կիրառված,  
ինչպես՝ «Ողական ամուսնը շրջապատող ծառազարդ բլուրները ծխում  
էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով» (Բաֆֆի). «Էս բանը լսում է  
ծիտիկի լեզուն կտրող շար պառավը» (Թում.). «Սառան ստիպում է  
Գարեգինին սպանելու իր պատիվն անարգողին և իրեն լճողին» (Նար-  
Դոս). «Փայտ ծախողն է, ասենք, մի սովորական գուլազցի» (Զար.).  
«Իր ձագերին սպանողին է փնտրում» (Անան.):

Ստանալով վ. ածանցը, ինչպես բայական մյուս ձևերը, այնպես էլ  
ներգործական ենթակայական դերբայները վերածվում են կրավորակա-  
նի և զրկվելով ուղիղ խնդրի հետ միանալու շարահյուսական հատկու-  
թյունից՝ ցույց են տալիս մի գործողություն, որն ուղղված է ենթակա-  
յին կամ պարփակված է ենթակայի մեջ, ինչպես՝ «Պարզվեց, որ ներք-  
ին կամ պարփակված է ենթակայի մեջ, ինչպես՝ «Պարզվեց, որ ներք-

նահարկում պահվող ոսկով լի տոպրակներն անգործ մարդկանց վառ երեւակայութեան ծնունդ են եղել» (Շիրվ.)։ «Վարագույրների միջով ներս սլիվող արեգակի շողերը ոսկեզօծում էին այդ փողին» (Շիրվ.)։ «Ենեզդ-վողի նման նա բերանը բաց ու խուփ էր անում և թույլ տրոփում ձեռքում» (Անան.)։

Ընդհանրապես ինչպես ներգործական մյուս բոլոր բայաձևերը, այնպես էլ ենթակայական դերբայները ունեն իրենց համապատասխան վածանցով կազմված կրավորականները, ինչպես՝ կատարել—կատարվել, կատարած—կատարված, ԿԱՏԱՐՈՂ—ԿԱՏԱՐՎՈՂ, վառել—վառվել, վառած—վառված, ՎԱՌՈՂ—ՎԱՌՎՈՂ, կառուցել—կառուցվել, կառուցած—կառուցված, ԿԱՌՈՒՑՈՂ—ԿԱՌՈՒՑՎՈՂ, գգալ—գգացվել, գգացած—գգացված, ԶԳԱՅՈՂ—ԶԳԱՅՎՈՂ և այլն։

Ահա հենց այս՝ ներգործականություն-կրավորականություն հակադրությամբ ենթակայական դերբայը միավորվում է անորոշ, հարակատար և բայական մյուս ձևերին, նրանց հետ մի խումբ է կազմում և միևնույն ժամանակ հակադրվում է նրանց՝ որպես բայ խոսքիմասային կարգի մի առանձնահատուկ ու ուրույն դրսևորում։

Այսպես ուրեմն՝ ենթակայական դերբայը շարահյուսուրեն գործողի անուն ցույց տվող բառերի մյուս խմբերից տարբերվում է նրանով, որ կարող է ուղիղ խնդիր լրացում ունենալ (հասկանալի է, որ խոսքը գրնում է ներգործականների մասին), իսկ ձևաբանորեն տարբերվում է նրանով, որ կարող է ստանալ վածանցը և վերածվել կրավորականի։

ԲԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՏՎԱՆԵՇՆԵՐԻ ՀԱՄԱՏՎՈՒՄԸ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻ ՄԵՋ.— Ինչպես հայտնի է, հնուց ի վեր ենթակայական դերբայը սահմանվել է որպես գործողի անուն (nomen agentis), գործողության ընթացքի մեջ գտնվող, եղող առարկա։ Մի անգամ ևս հավաստելով այս սահմանման ճշտությունը՝ փորձենք ավելի հանգամանորեն քննել այս դերբայի իմաստը, բովանդակային կողմը։

Քանի որ ենթակայական դերբայը գործողի անուն է, ցույց է տալիս գործողության ընթացքի մեջ գտնվող, եղող առարկա, սա ինքնին նշանակում է, որ ենթակայական դերբայի մեջ կա երկու գաղափար՝ ա) գործողության գաղափար, բ) առարկայի գաղափար։ Եվ իրոք, վազող նշանակում է նա, ով վազում է, կատարող— նա, ով կատարում է, կսվող— նա, ով կսվում է, գնացող— նա, ով գնում է և այսպես շարունակ։

Այստեղ մեր տերմինաբանությունը ճշտելով, պետք է ասենք, որ ենթակայական դերբայի մեջ կա առարկայություն ընդհանուր և ոչ թե բանձրացական գաղափար։ Ասացինք, որ պայմանական ձևով ենթակայական դերբայի արտահայտած առարկայական գաղափարը կարող է բացահայտվել նա դերանվամբ (վազող— նա, ով վազում է)։ Իսկ ինչո՞ւ հատկապես նա դերանվամբ։ Այն պարզ պատճառով, որ նա դերանունը (ինչպես և առարկայական իմաստ արտահայտող դերանուններն ընդ-

հանրապես) ցույց է տալիս ոչ թե թանձրացական առարկա, այլ առարկա ընդհանուր ձևով, առանց մասնավորեցնելու։ Ենթակայական դերբայի արտահայտած առարկայական գաղափարը ազատ համադրվում է նա դերանվան իմաստին, հեշտորեն բացահայտվում ու տրվում է նա դերանվամբ, որովհետև երկու դեպքում էլ դրսևորվում է առարկայություն ընդհանուր իմաստ։

Քանի որ ենթակայական դերբայի մեջ կա առարկայական ընդհանուր գաղափար, ուրեմն նա գոյական է ինքնին, և նրա փոխանվանական կիրառության մասին խոսք լինել չի կարող։ Վերցնենք հետևյալ նախադասությունները. «Չնայած դրան, եկողը չէր ուզում հեռանալ» (Շիրվ.)։ «Բան եմ ասում, իսկ առողին խող է հարկավոր և հասկացող» (Զար.)։ «Նամակ ու հեռագիր գալիս մինչև կազդացող էին գտնում, ջուր էր մաղվում ստացողի գլխին» (Անան.)։ Այս նախադասությունների մեջ ենթակայական դերբայները առարկայական իմաստ են արտահայտում։ Բայց նրանք առարկայական իմաստ են արտահայտում ոչ թե այն պատճառով որ գործածված են փոխանվանական-գոյականաբար, այլ այն պատճառով, որ նրանց մեջ այս իմաստն ինքնին կա, այսինքն գոյականական-առարկայական կիրառությունը ենթակայական դերբայի բրնական, նրա էությունը դրսևորումը հանդիսացող և ոչ թե փոխանվանական կիրառություն է։

Պետք է ասել նաև հետևյալը։ Քանի որ ենթակայական դերբայի ածականական-որոշչային կիրառությունը ևս բխում է նրա բուն էությունից, ապա այդ դեպքում ևս նա գտնվում է իր բնական դրության մեջ։ «Վազողը մոտեցավ» և «Վազող երեխան մոտեցավ», «Միծաղողը նա է, ով վերջինն է ծիծաղում» և «Միծաղող մարդը նա է, ով վերջինն է ծիծաղում» նախադասություններից առաջիններում ենթակայական դերբայները առարկայական իմաստ են արտահայտում և հանդես են գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոնով (ենթակա), իսկ երկրորդներում՝ հատկանշային իմաստ են արտահայտում և հանդես են գալիս ածականին հատուկ շարահյուսական պաշտոնով (որոշիչ)։ Բայց և՛ առաջին, և՛ երկրորդ նախադասությունների մեջ ենթակայական դերբայները, եթե կարելի է այսպես արտահայտվել, գտնվում են իրենց բնական դրության մեջ, որովհետև առաջիններում դրսևորված է ենթակայական դերբայի բուն էությունը՝ առարկայական ընդհանուր գաղափարը, իսկ երկրորդներում՝ առարկայական ընդհանուր գաղափարի թանձրակալանցումը, որը և դրսևորված է որոշյալների միջոցով։ Այսպես ուրեմն՝ ենթակայական դերբայի և՛ առարկայական, և՛ հատկանշային կիրառությունները բխում են նրա բուն իսկ էությունից՝ առարկայական ընդհանուր նշանակությունից։

Իր արտահայտած այս իմաստին համապատասխան՝ ենթակայական դերբայը ազատ կարող էր համարվել գոյական (կամ ածական),

եթե նրան հատուկ շինեին սեռի և խնդրառութեան կարգերը: Եվ եթե ենթակայական դերբայը բայական համակարգի մեջ է մտնում սոսկ այն պատճառով, որ ունի սեռի ու խնդրառութեան կարգերը, իսկ մյուս հատկանիշներով մոտենում է գոյականին կամ ածականին, նման է գոյականին կամ ածականին, սրանից ինքնին բխում է, որ ենթակայական դերբայը իր մեջ համատեղում է բայի և անվան հատկանիշները:

Այն էլ պետք է ասել, որ իր բայական նշանակությանը համապատասխան՝ ենթակայականը հարակատարի հակադրությունն է կազմում և արտահայտում է ընթացքի մեջ գտնվող գործողություն, ի հակադրություն հարակատարի, որը ցույց է տալիս ընթացքից դուրս եկած գործողություն՝ հետևանքային որոշ հատկանիշով, ինչպես՝ ֆենվոլ ուսանող—ֆենված ուսանող, կառուցվող շենք—կառուցված շենք, կառարվող աշխատանք—կատարված աշխատանք, վաճառվող ապարանք—վաճառված ապարանք և այլն:

Հայ լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ ենթակայականի արտահայտած իմաստը բացահայտվում է ներկա շարունակականով՝ ֆենվոլ ուսանող—ուսանող, որը ֆենվում է, իսկ հարակատարի արտահայտած իմաստը՝ վաղակատար ժամանակով՝ ֆենված ուսանող—ուսանող, որը ֆենվել է: Այսքանով էլ ենթակայական դերբայը ներկայի, իսկ հարակատարը անցյալի ժամանակային հատկանիշ ունի:

Նշենք նաև այն, որ ենթակայական և հարակատար դերբայները կորող են գործածվել բոլոր ժամանակների հետ, ինչպես.

**Ե ն ք ա կ ա յ ա կ ա ն դ ե ր բ ա յ**

Տեսնում եմ } վազող երեխային, ծաղկող ծառերը, քննվող  
Տեսել եմ } ուսանողին:  
Տեսնելու եմ }

**Հ ա ր ա կ ա տ ա ր դ ե ր բ ա յ**

Տեսնում եմ } վազած երեխային, ծաղկած ծառերը, քննված  
Տեսել եմ } ուսանողին:  
Տեսնելու եմ }

Բերված բոլոր օրինակներում ենթակայական դերբայը ներկա, անցյալ և ապառնի ժամանակների հետ ունի միաժամանակության, իսկ հարակատարը՝ նախաժամանակության գաղափար:

**ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**— Ենթակայական դերբայի իմաստային վերլուծություններով արդեն նախանշվում են նրա շարահյուսական կիրառության ոլորտները: Արտահայտելով առարկայական նշանակություն՝ ենթակայական դերբայը նախադասության մեջ

հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով՝ ենթակա, խնդիր (և հատկացուցիչ), ինչպես՝ «Տեսնողն էլ կասի— ի՛նչ աղջիկ է սա» (Թում.). «Մեռնողն ապակյա աչքերով նշան արավ դեպի Մմբատը» (Շիրվ.). «Քանդողը ես եմ, Ո՛վ է շինելու» (Սևակ). «Կյանքն ու արևը բաշխում է ապրողներին ու մեռնում» (Թում.). «Հաղթողին փեսի թախտի մոտ բերին» (Թում.). «Եվ մաքառումը իզուր է, հանձնվիր հաղթողներին» (Զար.). «Նախատում էինք տրտեղացողին, Դեպի նա դառնում անողոք ու շար» (Զարենց). «Հավաքվել էին մեռնողի ընտանիքի անդամները» (Շիրվ.). «Քանզի ընծան ընծայողի պատվին է հավասար» (Զար.):

Ենթակայական դերբայի հիմնական կիրառություններից մեկը նրա ածականական-որոշչային կիրառությունն է, ինչպես՝ «Արդեն արթնանում էր զառանցող քաղաքը» (Զարենց). «Քայլում էի աշնանամուտի դեղնող անտառով» (Անան.). «Տաճարի շուրջ սուրբ-սուրբ վանքեր, Հընչող, շենող, կանչող գանգեր» (Սևակ). «Մթնածոր տաճող միակ արահետն առանձին ձյան հետ փակվում է» (Բակ.). «Նրա բազմաթիվ հողերից բխող նավթը խեղդում էր, և գործարանի ծուխը կուրացնում նրանց աչքերը» (Շիրվ.):

Ենթակայական դերբայի որոշչային պաշտոնից բխում է նրա գործածությունը որպես ստորոգելիական վերագիր, ինչպես՝ «Իսկ ձյունոտ ճամփան խաբող էր ու նենգ» (Զարենց). «Նոսքերդ առավել խոցող են, մա՛յր, քան համոզիչ» (Զար.). «Աչքերը պղտոր էին ու քափառող» (Անան.). «Մանկությունից եղել ես մաածող ու աչքաբաց» (Շիրվ.). «Դու մանր շոյող է ինչպես զեփյուռ, Ձիերի դոփյունը ինչպես երգ» (Զարենց):

Այս հատվածը վերջացնելուց առաջ նշենք, որ խոսակցական լեզվում ենթակայական դերբայը գործածվելով որոշիչ հողով և հատկապես օժանդակ բայի ժխտական ձևերի հետ՝ արտահայտում է ապառնի ժամանակի իմաստ, ինչպես՝ «Այնուհետև թեկուզ գլուխս ճղիր, այլևս դրանից ձեռք վերցնողը չեմ» (Նար-Դոս). «էս անգամ ճամփից դուրս եկողը չեմ» (Անան.). «Զուր ես բերում, աղջի՛կ ջան, մե՛կ է, ես կշաացողը չեմ» (Անան.):

**ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻ ԳՈՅԱԿԱՆԱՅՈՒՄԸ.**— Արդեն ասված է, որ ենթակայական դերբայն իր մեջ համատեղում է բայի և գոյական անվան իմաստներն ու հատկանիշները: Այստեղից էլ՝ ենթակայական դերբայը հեշտորեն կարող է փոխանցվել գոյականի, որովհետև նա իր մեջ գոյականի հատկանիշներ արդեն իսկ ունի (ինչպես որ հարակատար դերբայն ունի ածականի հատկանիշներ):

Ինչպե՛ս է տեղի ունենում ենթակայական դերբայի գոյականացումը: Դա տեղի է ունենում բառերի շարահյուսական կիրառության հիմքի վրա: Ենթակայական դերբայը գոյականի է վերածվում, երբ որոշ շարահյուսական կապակցությունների մեջ հաճախակի գործածվելով՝ իմաս-

տային յուրահատուկ զարգացում է ապրում, խամրում է նրա արտահայտած գործողության, ընթացքի գաղափարը, և միևնույն ժամանակ նրա ընդհանուր առարկայական նշանակությունը վերածվում է թանձրացականի: Հասկանալի է, որ դրանով նույն ձևը չի դադարում դերբայ լինելուց. այլ կիրառությունների մեջ նա պահում է իր հարաբերակցությունները բայական ձևերի հետ որպես դերբայ՝ գործողության, ընթացքի և առարկայական նշանակության գաղափարներով միաժամանակ: Այսպիսով լեզվում առաջանում են համանուններ: Վերածվելով գոյականի՝ ՈՂ ձևերը գրկվում են սեռի, բայական խնդրառության հատկանիշներից՝ ձևեր բերելով գոյականին հատուկ հատկանիշներ:

Ընթակայական դերբայի փոխանցման մասին ավելի կոնկրետ գաղափար կազմելու համար բերենք մի քանի օրինակներ: Գրող որպես գրել բային համապատասխան ենթակայական դերբայ նշանակում է՝ նա, ով գրում է և ուղիղ խնդիր է պահանջում, օրինակ՝ դիմում գրող, գիրք գրող, բառարան գրող և այլն: Բայց միաժամանակ այս ձևը իր մեջ արդեն իսկ եղած առարկայական իմաստի թանձրացականացմամբ նշանակում է հատկապես այն անձը, որը գեղարվեստական ստեղծագործություններ է գրում: Վերջին իմաստով գրող բառը մաքուր գոյական է, ուղիղ խնդիր պահանջել չի կարող և ունենում է գոյականին հատուկ լրացումներ՝ որոշիչ և հատկացուցիչ, օրինակ՝ գրող, տաղանդավոր գրող, խորհրդային գրող, Հայաստանի գրողներ և այլն: Այսպես և՛ ընտրող որպես ընտրել բային համապատասխան ենթակայական դերբայ նշանակում է՝ նա, ով ընտրում է և ուղիղ խնդիր է պահանջում, օրինակ՝ կին ընտրող, գիրք ընտրող և այլն: Բայց միաժամանակ այս ձևը իմաստի նեղացմամբ նշանակում է այն անձը, որ ընտրության ժամանակ ընտրելու, ձայն տալու իրավունք ունի, օրինակ՝ խորհրդային ընտրող, մեր քաղաքի ընտրողներ և այլն: Հասկանալի է, որ վերջին իմաստով ընտրող ձևը մաքուր գոյական է: Նույնանման օրինակներ են նաև՝ ուսանող՝ բժշկություն ուսանող, համալսարանի ուսանող. ծնող՝ երեխա ծնող, երեխայի ծնող. ընթերցող՝ գիրք ընթերցող, հանրային գրադարանի ընթերցող:

Այս ձևով ահա մի շարք ենթակայական դերբայների մեջ զարգացել է նաև թանձրացական-առարկայական բովանդակություն, և նրանք միևնույն ժամանակ նաև գոյականներ են: Ի թիվս նշվածների, այսպիսի բառեր են նաև հետևյալները. աշխատող, ծառայող, սիրող, մեղադրող, մտածող, հետազոտող, ուսումնասիրող, արդյունաբերող, շահագործող և այլն:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ շատ դեպքերում, անգամ շարահյուսական կապակցության մեջ, դժվար է ասել գործ ունենք ենթակայական դերբայի, թե՛ գոյականի հետ: Ընդհանուր ձևով կարելի է սահմանել հետևյալ կանոնը. եթե ՈՂ ձևի մեջ դրսևորվում է ընթացքի

գաղափար, ապա նա դերբայ է, եթե ոչ՝ գոյական է: Բայց ինչպե՞ս որոշենք՝ հետևյալ օրինակներում ընթացքի գաղափար կա՞, թե՞ ոչ և եթե կա, ապա ո՞ր օրինակներում հատկապես: «Քանզի ընծան ընծայողի պատվին է հավասար» (Զար.). «Երբ դու կեղծիքը ճեղքել ես ուզում, Պիտի սովորես ստողի լեզուն» (Սեակ). «Զարմանում էր ուտողների ախորժակի վրա» (Շիրվ.). «Գրանց ես սովորողների տեղ էի ընդունում» (Մուր.). «Աստղին լսող է հարկավոր» (Զար.). «Մին-մին եկողի հետ գիր դարկի (Թում.): Կարելի է ասել, որ բերված բոլոր օրինակներում ենթակայական դերբայները գոյականի շարահյուսական պաշտոններով են կիրառված: Բայց դա, ինչպես նշված է, ենթակայական դերբայի բնական դրությունն է, և, գոյականի հատկանիշներ ունենալով՝ հանդերձ, նա չի դադարում բայ լինելուց, որովհետև պահպանում է բայական խնդրառությունը, ինչպես՝ դասը պատմողը, դասը պատմողի, դասը պատմողից, դասը պատմողները, նամակ գրողը, նամակ գրողից, նամակ գրողներից, ծառը կտրողը, ծառը կտրողից, ծառը կտրողներից և այլն:

Ամբողջ հարցը այն է, թե վերևում բերված օրինակներում ՈՂ ձևերը ենթակայական դերբայներ են, թե՛ գոյականներ, ինչպես այդ պարզորեն տեսնում ենք, ասենք, նամակ գրող և խորհրդային գրող կապակցություններում, որոնցից առաջինում ՈՂ-ով ձևը դերբայ է, իսկ երկրորդում՝ գոյական: Փաստերը ցույց են տալիս, որ այս երկու նշանակությունները շատ դեպքերում իրարից հեշտորեն չեն զանազանվում: Թե ինչու է այսպես, կաշխատենք բացատրել ստորև:

Վերջենք հետևյալ օրինակը. Դասը լավ պատմողը բարձր գնահատական կտանա: Այս կապակցության մեջ լավ-ը ձևի պարագա է և պատասխանում է ինչպե՞ս հարցին՝ ինչպե՞ս պատմողը: Սա նշանակում է, որ այստեղ պատմող ենթակայական դերբայ է: Դա հաստատվում է նաև դասը ուղիղ խնդրով և վերջինս խանգարիչ է հանդիսանում, որպեսզի լավ բառը չըմբռնվի որոշիչ նշանակությամբ: Այժմ վերջենք հետևյալ օրինակը. Լավ պատմողը գրավեց բոլորին: Լավ բառն այս կապակցության մեջ կարող է պատասխանել և՛ ինչպես հարցին՝ ինչպե՞ս պատմողը, և՛ ինչպիսի հարցին՝ ինչպիսի՞ պատմողը: Առաջին դեպքում ՈՂ ձևը ենթակայական դերբայ է, իսկ երկրորդ դեպքում՝ գոյական:

Եվ եթե հարցին մոտենում ենք այս տեսանկյունից, ապա վստահ կարող ենք ասել, որ և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն ամեն մի ՈՂ ձևի մեջ կա դերբայական և գոյականական իմաստի երկփեղկում, և ամեն մի ՈՂ ձև կարող է որոշիչ ընդունել և պատասխանել ինչպիսի՞ հարցին, օրինակ՝ ինչպիսի՞ վագոն, ֆենոլ, ուսումնասիրող, հետազոտող, դատող, խոսող, կատարող, պատերազմող, կարգացող, վաճառող, մաքրող, պարապող, ուտող, խմող, գուշակող, խաղացող, նվագող և այլն, և այլն:

Տեսականորեն ամեն մի ենթակայական դերբայ պոտենցիալ ձևով նաև գոյական է և կարող է ըմբռնվել սոսկ առարկայական նշանակությամբ՝ գործողության, ընթացքի գաղափարից անկախ: Ահա սա է ենթակայական դերբայների՝ զանգվածային ձևով գոյականների վերածվելու գաղտնիքը:

### ԱՊԱՌՆԻ ԵՐԿՐՈՐԴ (ԻՔ ՁԵՎ)

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ԻՄԱՍՏՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ապառնի 2-րդի համար Մ. Աբեղյանն ու Գ. Սևակն ընդունում են երկու տարբերակ՝ Ի (կատարելի) և ԻՔ (կատարելիք): Սակայն ժամանակակից հայոց լեզվում անորոշ դերբայներից Ի ձևով կազմված բառերը, ինչպես ճիշտ կերպով նշում է է. Աղայանը, վերջնականապես անցել են բայածականների շարքը և բայական համակարգի մեջ չեն մտնում: Մի կողմ թողած այն հանգամանքը, որ անորոշ դերբայներից Ի ձևով կազմված բառերը՝ գովելի, սիրելի, կատարելի և այլն, կորցնելով ապառնիության իմաստը, ցույց են տալիս «ինչ որ պետք է, կարելի է անել» (Մ. Աբեղյան) կամ «մի բանի արժանի լինելը» (է. Աղայան), դրանց բայական համակարգից դուրս գալը ապացուցվում է նաև հետևյալներով:

ա) Ի ձևեր կարող են կազմվել ոչ բոլոր բայերից: Այսպես օրինակ՝ վազել, գնալ, ֆնել, հոգնել, բարկանալ, հետաճալ, սևանալ, պայծառանալ և բազմաթիվ այլ բայեր Ի ձևանցն ստանալ չեն կարող: Սա ինքնին նշանակում է, որ Ի ձևով կազմությունները ոչ թե բառաձևեր են, այլ անկախ ու առանձին բառային միավորներ:

բ) Ի մասնիկով ներգործական բայերից կազմված բառերը, ինչպես՝ սիրելի, հարգելի, տանելի, հասկանալի, առելի, շոշափելի, բուժելի, կատարելի, զգալի, ընդունելի և այլն, ընդհանրապես գուրկ են բայասեռից և ուղիղ խնդիր ընդունել չեն կարող: Եթե դրանք բայական ձևեր լինեին, կունենային ուղիղ խնդրի հետ կապակցվելու շարահյուսական հատկություն:

գ) Դրանով պայմանավորված՝ Ի ձևերը չեն կարող ստանալ Վ ձևանցը և արտահայտել կրավորական սեռի իմաստ: Տարվելի, սիրվելի, հարգվելի և նման ձևեր լեզվում ընդհանրապես գոյություն չունեն:

դ) Ի ձևերը, ներառյալ նաև ներգործական բայերից կազմվածները, ազատ համեմատության աստիճաններ են կազմում, որը կրկին ցույց է տալիս, որ դրանք ածականներ են, ինչպես՝ հասկանալի—ավելի հասկանալի—ամենահասկանալի, ընդունելի—ավելի ընդունելի—ամենաընդունելի, գովելի—ավելի գովելի—ամենագովելի, հարգելի—ավելի հարգելի—ամենահարգելի, առելի—ավելի առելի—ամենաառելի, սիրելի—ավելի սիրելի—ամենասիրելի և այլն:

ե) Ի մասնիկով կազմված բառերի ժխտականը կազմվում է Ան

նախածանցով կամ ՈՉ մասնիկով՝ Ի տարբերություն բայական բոլոր ձևերի, որոնց ժխտականն ընդհանրապես կազմվում է Չ մասնիկով, օրինակ՝ բուժել—չբուժել, բուժած—չբուժած, բուժող—չբուժող, բայց բուժելի—անբուժելի, սիրելի—չսիրելի, բայց՝ սիրելի—ոչ սիրելի, հարգելի—չհարգելի, բայց՝ հարգելի—անհարգելի կամ ոչ հարգելի և այլն:

Այսպես ուրեմն՝ անորոշ դերբայից Ի մասնիկով կազմված ձևերը ժամանակակից հայոց լեզվում ածականներ են և գործածվում են ածականին հատուկ շարահյուսական պաշտոններով (որոշիչ և ստորոգելիական վերագիր), օրինակ՝ «Այնտեղ էր նրա սիրելի հայրը, այնտեղ էր նրա սիրելի թագավորը» (Բաֆֆի). «Բայց էս բոլորը տանելի բաներ էին» (Թում.). «Նա անտանելի է, ուղղակի զովելի»։ «Քո վարմունքը գովելի է ու խրախուսելի»:

Ի ձևին նվիրված այս հատվածը վերջացնելուց առաջ նշենք նաև, որ շնայած անորոշ դերբայներից Ի-ով կազմված ձևերն ընդհանրապես գուրկ են սեռի քերականական կարգից, բայց և այնպես շարահյուսական հատուկ կառուցվածքներում նրանց մեջ կրավորական նշանակություն է դրսևորվում, ինչպես՝ «Ինքն էլ այնպես սիրելի էր ամենքին» (Թում.). «Կրկին լսելի եղավ որոտման ահեղ դղրդունը» (Բաֆֆի). «Նախասնյալում լսելի եղան ոտքի ձայներ» (Բաֆֆի): Դրանք գրաբարյան Ի վերջավորվող դերբայի կրավորական նշանակության արձագանքներն են<sup>20</sup>, որոնք ժամանակակից հայերենում կենդանի ու գործուն օրինաչափության արժեք չունեն:

Այժմ կարող ենք անցնել ԻՔ վերջավորվող դերբայի վերլուծությանը: ԻՔ մասնիկը, ինչպես ապառնի 1-ինի ՈՒ մասնիկը, դրվում է անորոշ դերբայի վրա, օրինակ՝ գրել—գրելիք, կառուցել—կառուցելիք, կատարել—կատարելիք, անել—անելիք, կարդալ—կարդալիք, գալ—գալիք, գնալ—գնալիք և այլն:

Իր արտահայտած ժամանակի իմաստային կողմով և այս կամ այն չափով նաև գործածություններ ապառնի 2-րդը հակադրվում է հարակատար և ենթակայական դերբայներին: Եթե հարակատարը ցույց է տալիս որևէ ժամանակակետի նախորդած գործողություն, օրինակ՝ «Կտեսնես կառուցված շենքերը», ենթակայականը՝ զուգորդող գործողություն՝ «Կտեսնես կառուցվող շենքերը», ապա ապառնի երկրորդը ցույց է տալիս հաջորդող գործողություն՝ «Կտեսնես կառուցվելիք շենքերը»: Այլ կերպ ասած՝ եթե հարակատարը անցյալի, ենթակայականը ներկայի, ապա ապառնի դերբայը ապառնու ժամանակային հատկանիշ ունի: Այսպիսին են նաև հետևյալ հակադրությունները. կատարված՝ կատարվող

<sup>20</sup> Գրաբարում Ի վերջավորվող դերբայն արտահայտում էր նաև ԵՃթակայական դերբայի իմաստ՝ ներգործական և կրավորական նշանակություններով, օրինակ՝ կրելի և նշանակում էր կրող և կրվող, կատարելի՝ կատարող և կատարվող, լսելի՝ լսող և լսվող և այլն:



կատարվելիք աշխատանք, գրված||գրվող||գրվելիք նամակ, ստացված||ստացվող||ստացվելիք գումար, կարգացված||կարգացվող||կարգացվելիք գիրք, վաճառված||վաճառվող||վաճառվելիք ապրանք և այլն:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս երեք դերբայները, բացի ժամանակային տարբերությունից, ունեն նաև իմաստային այլ տարբերություններ, որի պատճառով էլ նրանց հակադրությունը ուղղակի ու ուղղաձիգ հակադրություն չէ, ինչպես ունենք, ասենք, վաղակատար, անկատար և ապառնի (ՈՒ) դերբայների դեպքում, ինչպես՝ կարդացել եմ-էի, կարդում եմ-էի, կարդալու եմ-էի, որոնք հակադրվում են սոսկ կերպային-ժամանակային հատկանիշներով:

Հարակատարի, ենթակայականի և ապառնիի իմաստային տարբերությունները բնութագրվում են հետևյալ կերպ. հարակատար դերբայը ցույց է տալիս հատկանիշ, որն արդյունք է որոշակի գործողության, օրինակ՝ գրած, կարդացած. ենթակայական դերբայը ցույց է տալիս գործողի անուն, այսինքն առարկա, որ կատարում է բայիմաստով դրսևորված գործողությունը, օրինակ՝ գրող: կարդացող. ապառնի երկրորդը ցույց է տալիս բայիմաստով դրսևորված գործողությանը ենթակա, կրող լինելու առարկայական գաղափար, օրինակ՝ գրելիք, կարդալիք:

Այս բնորոշումներից պարզ է դառնում, որ ապառնի երկրորդը մոտ է ենթակայականին, որովհետև երկուսի մեջ էլ կա առարկայական ընդհանուր գաղափար, միայն թե ենթակայականի դեպքում առարկան հանդես է գալիս որպես գործողության կատարող, իսկ ապառնի 2-րդի դեպքում առարկան հանդես է գալիս որպես գործողություն կրող: Ենթակայականի և ապառնի 2-րդի ներքին իմաստները շարահյուսական կապակցությամբ դրսևորվում են հետևյալ կերպ. ենթակայական դերբայ՝ գրող—նա, ով գրում է. կարդացող—նա, ով կարդում է. ապառնի դերբայ՝ գրելիք—այն, որ պիտի գրվի. կարդալիք—այն, որ պիտի կարդացվի:

Երբ ենթակայական դերբայն է հանդես գալիս որպես որոշիչ, ապա նրա որոշյալը դերբայով արտահայտված գործողության կատարողն է, իսկ երբ ապառնի 2-րդն է հանդես գալիս որպես որոշիչ, ապա նրա որոշյալը դերբայով արտահայտված գործողության կրողն է: Ներքևի օրինակները շատ լավ գաղափար են տալիս ենթակայականի և ապառնի 2-րդի իմաստային այս տարբերության մասին:

Ենթակայական	Ապառնի
գրող աղջիկ	գրելիք նամակ
կարդացող աշակերտ	կարդալիք գիրք
կառուցող բանվոր	կառուցելիք շենք
հանձնող ուսանող	հանձնելիք քննություն
խմող երիտասարդ	խմելիք գինի

Այստեղ բերված բոլոր բայերը ներգործական սեռի են, և ըստ այդմ ենթակայական դերբայները կարող են ուզիլ խնդիր լրացում ստանալ, ինչպես՝ դաս գրուլ աղջիկ, գիւժ կարդացող աշակերտ և այլն: Բայց համապատասխան ապառնի դերբայները ուղիղ խնդիր լրացում ընդունել չեն կարող: Այսպես՝ դաս գրելիք աղջիկ, գիւժ կարդալիք աշակերտ և այլ նման կապակցություններ լեզվում գոյություն չունեն: Դա բացատրվում է ապառնի 2-րդի իմաստային առանձնահատկությամբ, նրանով, որ նա ցույց է տալիս գործողությանը ենթակա, կրող լինելու առարկայական նշանակություն: Սրանից կարելի է եզրակացնել, որ ներգործականներից կազմված ԻՔ ձևերը ի բնե կրավորական սեռի հատկանիշ և իմաստ ունեն:

Հասկանալի է, որ ԻՔ ձևեր են կազմվում նաև կրավորականներից: Այսպիսով՝ լեզվում ունենում ենք, ասենք, գրելիք նամակ||գրվելիք նամակ, կատարելիք գործ||կատարվելիք գործ, կառուցելիք շենք||կառուցվելիք շենք և այլ զուգաձևերը: Հարց է առաջանում՝ այս զուգաձևերի միջև իմաստային տարբերություններ կա՞ն և եթե կան, ապա որո՞նք են:

Արդեն ասված է, որ կրավորական իմաստ կարող է արտահայտել նաև ներգործաձև հարակատար դերբայը, որի հետևանքով կրավորական նշանակությամբ ունենում ենք գրած նամակ||գրված նամակ, կատարած գործ||կատարված գործ, կառուցած շենք||կառուցված շենք և այլ զուգաձևերը:

Ինչ հարաբերություն որ կա գրած նամակ և գրված նամակ կապակցությունների գրած և գրված ձևերի միջև, այդ նույն հարաբերությունը կա նաև գրելիք նամակ և գրվելիք նամակ կապակցությունների գրելիք և գրվելիք ձևերի միջև:

Այս զուգահեռ ձևերի իմաստային տարբերությունն ամենից առաջ այն է, որ, որքան էլ այդ տարօրինակ լինի, ներգործաձևերի մեջ կրավորական սեռի նշանակությունն ավելի ուժեղ է, իսկ կրավորաձևերի մեջ կրավորական սեռի նշանակությունը թույլ է, և նրանք կարող են շեղոք սեռի իմաստով ևս ըմբռնվել, օրինակ՝ դիզած խոտ—դիզված խոտ, սկսած խաղ—սկսված խաղ, շարժած գերան—շարժված գերան, զգգգած մագեր—զգգգված մագեր և այլն: Այս զույգերից առաջինները անպայմանորեն գործողության կատարող են ենթադրում և կրավորական սեռի են, իսկ երկրորդները անպայմանորեն չէ, որ գործողության կատարող են ենթադրում և կարող են ըմբռնվել նաև շեղոք իմաստով: Այս նույն բանը կարելի է ասել նաև դիզելիք խոտ||դիզվելիք խոտ, սկսելիք խաղ||սկսվելիք խաղ և նման զույգերի արտահայտած իմաստների մասին:

Ապառնի 2-րդը բայական ձևերից միակն է, որ զուրկ է ներգործական սեռից և, հետևաբար, ուզիլ խնդիր հետ միանալու շարահյուսական հատկությունից: Մենք արդեն գիտենք, որ գրելիք—գրվելիք, կատարելիք—կատարվելիք և այլ հակադրությունը ոչ թե այլ բայաձևերին հա-

տուկ ներգործական սեռ— կրավորական սեռ հակադրության դրսևորումն է, այլ փաստորեն ավելի ձևական բնույթ ունի: Նշենք նաև, որ դա հայերենի միակ դերբայն է, որ բոլոր բայերից կազմվել չի կարող: Ելնելով այս դերբայի իմաստային վերլուծությունից և դատելով տեսականորեն՝ կարելի էր եզրակացնել, որ **ԻՔ** ձևով ապանի դերբայները պետք է հատուկ լինեն ներգործական (և համապատասխան կրավորական) բայերին: Եվ, իրոք, այդպես էլ է, ինչպես՝ ասել—ասելիք, բերել—բերելիք, գրել—գրելիք, կատարել—կատարելիք, կառուցել—կառուցելիք, առնել—առնելիք և այլն: Կրկին դատելով տեսականորեն և ելնելով ապանի 2-րդի իմաստից՝ կարելի էր եզրակացնել, որ բոլոր շեղոք սեռի բայերից չէ, որ կարող է **ԻՔ** ձևով ապանի դերբայ կազմվել: Այսպես՝ լեզվում ազատ շրջանառության մեջ են՝ ծիծաղած—ծիծաղող, կոված—կովող, հոգնած—հոգնող, նիհաձ—նիհաձող, ննջած—ննջող, շտապած—շտապող, պառկած—պառկող, վազած—վազող, վախեցած—վախեցող, տառապած—տառապող, տխրած—տխրող՝ ՄԱՐԿ, ՁԻՆՎՈՐ և այլ կապակցությունները, իսկ ծիծաղելիք, կովելիք, հոգնելիք, նիհելիք, ննջելիք՝ ՄԱՐԿ, ՁԻՆՎՈՐ և նման կապակցություններ գոյություն չունեն:

Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ **ԻՔ** վերջավորվող ձևերի մեջ, բացի ապանիության գաղափարից, կա նաև գործողությանը ենթակա, կրող լինելու առարկայական նշանակություն: Եվ ահա այդ իսկ պատճառով էլ հարակատարը, ենթակայականը և ապանի 2-րդը լրրիվ հարաբերակից համարվել չեն կարող: Այս տեսակետից հետաքրքրական են հետևյալ օրինակները: Քնած երեխա, քնող երեխա ձևերին համապատասխան քնելիք երեխա կապակցությունը լեզվում գոյություն չունի, բայց գոյություն ունի կամ կարող է կազմվել քնելիք տեղ կապակցությունը: Կամ՝ զնացած զինվոր, զնացող զինվոր ձևերին համապատասխան զնալիք զինվոր կապակցությունը գոյություն չունի, բայց կա կամ կարող է կազմվել զնալիք զնալիք քնալիքի տուն կապակցությունը: Ինչու է այդպես: Այն պարզ պատճառով, որ քնելիք երեխա, զնալիք զինվոր, քնալիքի մարդ կապակցությունների մեջ որոշյալները չեն կարող ըմբռնվել որպես գործողությանը ենթակա, կրող առարկաներ, իսկ քնելիք տեղ, զնալիք զնալիք, քնալիքի տուն կապակցությունների մեջ որոշյալները հենց այսպես էլ ըմբռնվում են:

Այսպես ուրեմն՝ իր արտահայտած իմաստին համապատասխան՝ ապանի **ԻՔ** ձևը ունի ծավալային սահմանափակություն, այսինքն՝ չի կազմվում բոլոր բայերից: Դրա հետ միաժամանակ նա ունի նաև գործածականության ոլորտների սահմանափակություն և իր կիրառական հաճախականությամբ չի կարող, ասենք, համեմատվել զուգակից ԱԾ և ՈՂ ձևերի հետ: Այս դերբայների գործածականության մոտավոր հարաբերակցության մասին գաղափար կարող են տալ հետևյալ տվյալները:

Հարակատարի, ենթակայականի և ապանի 2-րդի գործածականության հաճախականությունը «Արու-Լալա Մահարի», «Արա Գեղեցիկ» և «Անլուելի զանգակատուն» ստեղծագործություններում

«Արու-Լալա Մահարի»	«Արա Գեղեցիկ»	«Անլուելի զանգակատուն»	Ընդամենը	
ԱԾ ՈՂ ԻՔ	ԱԾ ՈՂ ԻՔ	ԱԾ ՈՂ ԻՔ	ԱԾ ՈՂ ԻՔ	
40 38 1	154 29 5	469 185 13	672 252 19	

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ քնություն նյութ դարձած ստեղծագործություններում հարակատարի, ենթակայականի և ապանի 2-րդի գործածականության մոտավոր հարաբերակցությունն է՝ 35:13:1:

Նախորդ էջերում կատարված վերլուծումներն արդեն նախանշում են ապանի 2-րդի շարահյուսական կիրառության ոլորտները: Այս դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս ածականի և գոյականի պաշտոններով, այսինքն դառնում է կամ որոշիչ, կամ ենթակա ու խընդիր (նաև հատկացուցիչ):

Երբ ապանի 2-րդը գործածվում է որպես որոշիչ, նրա արտահայտած ընդհանուր առարկայական նշանակությունը թանձրականանում է որոշյալի մեջ, ըստ որում վերջինս ապանի դերբայով արտահայտված գործողությանը ենթարկվող առարկա է, ինչպես՝ կառուցելիք շենք, ուղարկելիք ապրանք, գրելիք նամակ, զանձելիք գումար, հանձնելիք ֆրենսյուն, հրատարակելիք գիրք, վաճառելիք ապրանք և այլն:

Ապանի 2-րդի գոյականական կիրառությունը փաստորեն փոխանություն էլ չէ, այլ նրա հենց բնական դրության դրսևորումը: Այն էլ պետք է նշել, որ ապանի 2-րդի գոյականական կիրառությունները հաճախված են և գերակշռում են նրա ածականական կիրառություններին: Այսպիսի օրինակներ են՝ «Ասա՛, որ մենք անելիքներս իմանանք» (Զար.)։ Այսպիսի օրինակներ են՝ «Կա՛, որ անելիք» (Դեմ.)։ «Իրիկնադեմին եկ մեր տուն, խոսելիք ունեմ» (Շիրվ.)։ «— Քող, որ մենակ մտածեմ իմ անելիքի մասին:— Բայց այսօր չէ՞, այսօր կվճռես անելիք» (Շիրվ.)։ Այսպիսի գործածությունների դեպքում այս դերբայի արտահայտած առարկայական նշանակությունը բացահայտվում է բան բառով՝ անելիք—անելու բան, անելիք—ասելու բան, խոսելիք—խոսելու բան:

Գոյականական կիրառությունների հիմքի վրա շատ ապանի դերբայների մեջ զարգանում է նաև թանձրացական-առարկայական նշանակություն, և, այսպիսով, նրանք վերածվում են մաքուր գոյականների: Այսպիսի բառեր են՝ գիտելիք, ծխելիք, հիշելիք, պատկանելիք, սպասելիք, ուտելիք, վառելիք, հագնելիք, ըմպելիք, օժանելիք, հավատալիք, սելիք, խաղալիք, գալիք: Մ. Աբեղյանը գրում է. «Այսպես և բոսպանալիք, խաղալիք, գալիք: Մ. Աբեղյանը գրում է. «Այսպես և բոսպանալիք կարող են կազմվել գոյականներ, որոնք կարող են գործած-»

վել իբրև ածական՝ ասելիք (ասելու բան), գրելիք, անելիք, առաջարկելիք, երթալիք, գալիք (գալու բան), լինելիք— ինչ որ լինելու է. նույնիսկ կրավորական բայերից՝ հաղթվելիք, խմվելիք, գրվելիք, կառուցվելիք»<sup>21</sup>, Այստեղ որոշ շափազանցություն կա, որովհետև բոլոր բայերից չէ, որ կարող են իՔ ձևով ապառնի դերբայներ կազմվել, մյուս կողմից էլ՝ կրավորական ձևերից կազմվածները դժվարությամբ կարող են ըմբռնվել որպես գոյականներ: Բայց մի բան պարզ է, որ իՔ ձևով կազմված դերբայների մեջ կա առարկայական ընդհանուր նշանակություն, որի թանձրականացմամբ նրանք հեշտորեն մաքուր գոյականների են վերածվում:

Այս հատվածը վերջացնելուց առաջ նշենք, որ արդի հայերենում կան անորոշ դերբայներից իՔ ձևով կազմված մի քանի բառեր, որոնք ցույց են տալիս գործարան, ինչպես՝ տեսանելիք, ճաշակելիք, հոտոտելիք, շոշափելիք, հպելիք, ծամելիք: ԻՔ ձևերի այս նշանակությունը գալիս է գրաբարից: Վերջինումս ի վերջավորվող ապառնին արտահայտում էր նաև ենթակայական դերբայի իմաստ՝ լսելի—լսող, տեսանելի—տեսնող և այլն:

#### Կ Ա Ն Յ Ա Ն Դ Ե Ր Բ Ա Յ Ն Ե Ր

#### Ա Ն Կ Ա Տ Ա Ր Դ Ե Ր Բ Ա Յ (ՈՒՄ ՁԵՎ)

Ա Ն Կ Ա Տ Ա Ր Դ Ե Ր Բ Ա Յ Ի Կ Ա Ջ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր Ը ԵՎ Ի Մ Ա Ս Ա Յ Ի Ն ՈՒ Կ Ի Ր Ա Ռ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ն Ձ Ա Ն Ա Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր Ը.— Ժամանակակից հայոց լեզվում անկատար դերբայը կազմում է ՈՒՄ մասնիկով, որ դրվում է անորոշի ել և Ալ մասնիկների տեղում և նրանց փոխարեն, ինչպես գրել—գրում, կատարել—կատարում, կարդալ—կարդում, հավատալ—հավատում և այլն: >

Անկատար դերբայի ՈՒՄ մասնիկը ծագմամբ նույնացում է ներգոյական հոլովի ՈՒՄ վերջավորության հետ: Դա ապացուցվում է ոչ միայն ներգոյական հոլովի ու անկատար դերբայի ձևային նույնությամբ ու իմաստային աղերսներով: այլև նրանով, որ արևելյան բարբառները (Արարատյան, Թիֆլիսի, Արարաթի և այլն) և նրանց միմյուս վրա բարձրացած արևելահայ գրական լեզուն, որոնք ունեն ՈՒՄ մասնիկով կամ դրա տարբերակներով կազմված ներգոյական հոլով, միաժամանակ ունեն ՈՒՄ մասնիկով կամ դրա տարբերակներով կազմված անկատար դերբայ:

Անկատար դերբայը ցույց է տալիս ընթացի մեջ գտնվող ճարտարագործություն և վաղակատար ու ապառնի դերբայների հետ կազմում է անմիջական ու ուղղաձիգ կերպային հակադրություն՝ կատարվող, կա-

տարված և կատարելի կերպային գաղափարներով, ինչպես՝ գրում||գրել||գրելու, կարդում||կարդացել||կարդալու, հավատում||հավատացել||հավատալու և այլն:

Արտահայտելով կատարվող կերպային իմաստ, բայց փաստորեն ձևավորված շինելով որպես առանձին ու ինքնուրույն բառ, այլ մի տեսակ կատարելով ազատ բայահիմքի դեր՝ անկատար դերբայը միշտ հանդես է գալիս օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հետ՝ բաղադրելով սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները, ինչպես՝ գրում եմ—գրում էի, կարդում եմ—կարդում էի և այլն: Օժանդակ բայի այս զուգորդումներից դուրս, անկատար դերբայը այլ կիրառություն չունի, հետևաբար և նրա դերը սոսկ ձևաբանական է: Ահա թե ինչու ենք ասում, որ անկատար դերբայը, ինչպես և վաղակատար ու ապառնի դերբայները, մի տեսակ կիսանկախ բառերի, ազատ բայահիմքերի դեր են կատարում: >

#### Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր Դ Ե Ր Բ Ա Յ

Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր Դ Ե Ր Բ Ա Յ Ի Կ Ա Ջ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր, Ի Մ Ա Ս Ը ԵՎ Կ Ի Ր Ա Ռ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ն Թ Յ ՈՒ Ն Ե Ր.— Աշխարհաբարի առաջին քերականներից սկսած մինչև Մ. Աբեղյանը վաղակատարը և հարակատարը մտցրել են մեկ ընդհանուր անցյալ դերբայ հասկացության տակ՝ վերջինիս համար ընդունելով երկու վերջավորություն՝ ել և ԱՄ: Հարցի աշպիտի լուծումն, անշուշտ, պայմանավորված էր գրաբարի քերականական ավանդույթների ազդեցությամբ: Չէ՞ որ գրաբարում կար մի միասնական եսլ վերջավորվող դերբայ (գրեալ, կատարեալ, շարժեալ), որն արտահայտում էր աշխարհաբարի և՛ ել, և՛ ԱՄ վերջավորվող ձևերի իմաստները: Դա հնարավորություն էր տալիս, գրաբարի քերականական ավանդույթներին համապատասխան, աշխարհաբարի ել և ԱՄ ձևերը ներկայացնել որպես մի միասնական անցյալ դերբայի տարբեր վերջավորություններ կամ տարբերակներ: Հայ քերականագիտության վերջին շրջանում միայն ել և ԱՄ ձևերը իրավացիորեն դիտվեցին որպես անկախ ու ինքնուրույն դերբայներ՝ նրանց համար օգտագործելով Մ. Աբեղյանի՝ վաղակատար և հարակատար անվանումները:

Հասկանալի է, որ վաղակատար և հարակատար դերբայները տարբեր են իրենց իմաստներով, կիրառություններով և լեզվի համակարգում խաղացած դերով, հետևաբար՝ տարբեր լեզվական միավորներ են և որպես այդպիսիք էլ պետք է ներկայացվեն:

Վաղակատար դերբայն առաջանում է գրաբարյան անցյալ դերբայից՝ եսլ>եկ պատմական հնչյունափոխության ճանապարհով, ինչպես՝ գրեալ>գրել, կատարեալ>>կատարել, սիրեալ>սիրել և այլն: Այս հնչյունափոխությունը տեղի է ունեցել ոչ

<sup>21</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 253:

միայն անցյալ դերայնքում, այլև ուրիշ ձևերում, ինչպես՝ ցորեան > ցորեն, կորեակ > կորեկ, իրեանք > իրենք, գրեաց > գրեց, սիրեաց > սիրեց և այլն:

Ժամանակակից հայերենում վաղակատար դերբայը կազմվում է Նվ վերջավորութամբ, որ դրվում է անկատարի կամ կատարյալի հիմքերի վրա:

Ե խոնարհման պարզ բայերի (նաև կրավորական ու բազմապատկական բայերի) վաղակատարը կազմվում է անկատարի հիմքից. սա նշանակում է, որ այս դեպքում անորոշ և վաղակատար դերբայները ձևավային նույնություն ունեն, այսինքն՝ համանուններ են:

Անորոշ	Անկատարի հիմք	Վաղակատար
գրել	գր—	գրել
վազել	վազ—	վազել
կատարել	կատար—	կատարել
սիրել	սիր—	սիրել

Անորոշ և վաղակատարի ձևային այս նույնությունը պատահական բնույթ է կրում և առաջացել է ԵԱ > Ե հնչյունափոխության հետևանքով (գրեալ > գրել, կատարեալ > կատարել և այլն):

Մնացած բոլոր բայերի, այսինքն՝ Ա խոնարհման պարզ և սոսկածանցավոր, Ե խոնարհման Ն և Զ սոսկածանցավոր և պատճառական բայերի վաղակատար դերբայը կազմվում է կատարյալի հիմքից. սա նշանակում է, որ այս դեպքում անորոշ և վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված են:

Անորոշ	Կատարյալի հիմք	Վաղակատար
հավատալ	հավատաց—	հավատացել
բարձրանալ	բարձրաց—	բարձրացել
մոտենալ	մոտեց—	մոտեցել
գտնել	գտ—	գտել
փախչել	փախ—	փախել
բարձրացնել	բարձրացր—	բարձրացրել
մոտեցնել	մոտեցր—	մոտեցրել
հագցնել	հագցր—	հագցրել

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, Ա խոնարհման պարզ Ալ և սոսկածանցավոր ԱնԱլ վերջավորվող բայերը վաղակատարում ունենում են միևնույն կազմությունը՝ հավատալ—հավատացել||բարձրանալ—բարձրացել, կարդալ—կարդացել||մեծանալ—մեծացել, գնալ—գնացել||սևա-

նալ—սևացել և այլն: Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ վաղակատարում ունենում ենք ԱՅՆԼ ձևը: Սա բացատրվում է նրանով, որ Ա խոնարհման պարզ Ալ վերջավորվող և սոսկածանցավոր ԱնԱլ վերջավորվող բայերը նույնաձև հիմք են ունենում՝ առաջինները ստանում են ԱՅ բաղադրիչը՝ հավատալ—հավատաց, իսկ վերջինները Ան ածանցը փոխում են ԱՅ-ի՝ հասկանալ—հասկաց: Այսպիսով, անորոշում տարբեր կազմություն ունեցող այսպիսի բայերը վաղակատարում կազմության նույն տիպն են ստանում:

Արդի հայերենում կան սակավաթիվ բայեր, որոնք կատարյալում զուգաձև հիմքեր ունեն՝ և՛ պարզ արմատական, և՛ բաղադրյալ ցոյական ձևով: Այս բայերի վաղակատար դերբայը կազմվում է պարզ-արմատական հիմքից<sup>22</sup>:

Անորոշ	Կատարյալի հիմքեր	Վաղակատար
անել	ար  արեց	արել
բերել	բեր  բերեց	բերել
դնել	դիր  դրեց	դրել
թողնել	թող  թողեց	թողել
հանել	հան  հանեց	հանել
տալ	տալ  տվեց	տվել
զարկել	զարկ  զարկեց	զարկել

Անդրադառնալով վաղակատարի իմաստին ու կիրառությանը՝ պետք է նշել, որ վաղակատար դերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված, ընթացքից դուրս եկած գործողություն, կատարված կերպ ունի և, ինչպես նշված է արդեն, անկատար և ապառնի դերբայների հետ կազմում է եռանդամ հակադրություն՝ նրանցից տարբերվելով սոսկ իր կերպային-ժամանակային իմաստով: Լեզվի համակարգում խաղացած դերով նա նման է անկատար դերբային, մի տեսակ կիսանկախ բառի, ազատ բայահիմքի դեր է կատարում և միշտ հանդես գալով ԵՄ-էի օժանդակ բայի հետ՝ բաղադրում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները, ինչպես՝ գրել եմ—գրել էի, կարդացել եմ—կարդացել էի և այլն: Այս ձևերից դուրս վաղակատար դերբայն այլ կիրառություններ չունի: Ուրեմն վաղակատար դերբայի դերը ևս սոսկ ձևաբանական է:

#### ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ (ՈՒ ՁԵՎ)

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ԻՄԱՍՍՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Ժամանակակից հայերենի ՈՒ վերջավորվող ապառնի դերբայն

<sup>22</sup> Տե՛ս Ա. Արքառամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 385:

առաջանում է անորոշի սեռական հոլովածեից: Ապառնի դերբայը, սակայն, ձևով չի տարբերակվել անորոշից, և այսպիսով արդի հայերենում ստեղծվել է համանուն ձևերի մի ամբողջ շարք: Հասկանալի է, որ ամեն մի անորոշ դերբայ ստանալով ՈՒ վերջավորությունը՝ կազմում է սեռական-տրական հոլով. միևնույն ժամանակ ամեն մի անորոշ դերբայից ՈՒ մասնիկով կարող է ապառնի դերբայ կազմվել: Այսպիսով ունենում ենք հետևյալ պատկերը:

Անորոշ դերբայ	Անորոշ դերբայի սեռ.-տր. հոլով	Ապառնի դերբայ
գրել	գրելու	գրելու
գրվել	գրվելու	գրվելու
կարգալ	կարգալու	կարգալու
բարձրանալ	բարձրանալու	բարձրանալու
մեծացնել	մեծացնելու	մեծացնելու
փախչել	փախչելու	փախչելու
դտնել	գտնելու	գտնելու

Եվ այսպես, ամեն մի բայի անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածեր և համապատասխան ապառնի դերբայը նույն ձևն ունեն. դրանք ձևաբանորեն տարբերակված չեն և ոչ մի բայի մեջ: Ուրեմն, եթե անորոշի սեռական-տրական հոլովածեից բացի առանձին ապառնի դերբայ ենք ընդունում, պետք է ընդունենք նաև համանուն ձևերի մի անհուն շարքի գոյությունը: Սակայն կան քերականներ, որոնք գտնում են, թե, ասենք, ուտելու հաց և ուտելու եմ հարաբերակցության դեպքում գործ ունենք ոչ թե համանունության, այլ բազմիմաստության հետ, այսինքն՝ ապառնի դերբայը որպես անորոշի սեռական-տրական հոլովածեից անկախ ու առանձին լեզվական միավոր գոյություն չունի: Այսպես, Ա. Այտընյանը գտնում է, որ բազմադրյալ ժամանակների կազմության մեջ հանդես եկող ՈՒ ձևը ոչ թե առանձին ապառնի դերբայ է, այլ անորոշի սեռական հոլովածե: Նա գրում է. «Աններևութին սեռականը թէ բազմադրեալ ժամանակներ կը ձևացնէ.— տեսնելու եմ, էի և թէ իբրև ածական կը գործածուի. այսպես՝ վախճալու երազներ, բնակելու տուն, տեսնելու բան մը, շտապելու կերակուրներ»<sup>23</sup>: Իսկ առանձին լեզվաբաններ էլ ավելի առաջ գնալով՝ ուղղակիորեն գտնում են, թե ՈՒ ձևը, որպես անորոշի հոլովական ձև, չի կարող դիտվել որպես բայի եղանակային ձևերի բազմադրիչ: Ըստ այդ դրույթի, օրինակ, գնալու եմ ձևը չի

մտնում գնալ բայի խոնարհման հարացույցի մեջ: Այս տեսակետն է զարգացնում վրացի լեզվաբան, հայագետ Շանիձեն<sup>24</sup>:

Սակայն հակառակ այս լեզվաբանների՝ Մ. Արեղյանից սկսած համարյա բոլոր հայ քերականները անորոշի սեռական-տրական հոլովից զատ առանձին ապառնի դերբայ են ընդունում: Բայց թե ՈՒ վերջավորվող ձևի հատկապես ո՞ր գործածությունները պետք է համարել ապառնի դերբայ և ո՞ր գործածությունները սեռական-տրական հոլովածե, — այս հարցի վերաբերյալ հայ լեզվաբանները համերաշխ չեն: Նրանք համերաշխ են այն հարցում, որ, ասենք, գնալու եմ ձևի մեջ գնալու ապառնի դերբայ է: Դրանից դուրս արդեն սկսվում են տարակարծությունները: Այսպես, Գ. Սևակը գտնում է, որ ապառնի դերբայն ունի նաև որոշչային գործածություն<sup>25</sup>, օրինակ՝ գրելու թուղթ, խմելու ջուր և այլն: Ա. Աբրահամյանն, ընդհակառակն, գտնում է, որ ապառնի դերբայի դերը սոսկ ձևաբանական է, այն միայն հանդես է գալիս դիմավոր ձևերի կազմության մեջ՝ եմ և լինել բայերի հետ կազմելով բազմադրյալ ժամանակներ՝ գրելու եմ, գրելու եմ լինում և այլն<sup>26</sup>: Է. Աղայանն արդեն կասկածի տակ է առնում ապառնի դերբայի ոլորտի այսքան նեղ ըմբռնումն անգամ: Բերելով գնալու լինել, գնալու լինելի և այլ ձևերը՝ նա գրում է, որ այս ձևերի մեջ «գնալու կարելի է համարել և՛ անորոշի սեռական հոլով, և՛ ապառնի դերբայ, և այստեղ էլ, ինչպես շատ ուրիշ դեպքերում, դժվար է հաստատապես ասել, թե ո՞րն է»<sup>27</sup>:

Եվ եթե, իրոք, հարց է, ասինք, գնալու կլինեմ ձևի մեջ գնալու անորոշ դերբայի սեռական հոլով է, թե՞ ապառնի դերբայ, ապա նույնպիսի հարց կարող է համարվել՝ գնալու եմ ձևի մեջ գնալու անորոշի սեռական հոլով է, թե՞ ապառնի դերբայ, այսինքն՝ անորոշի սեռական հոլովը և ապառնի դերբայը իրարից անկախ ու ինքնուրույն քերականական միավորներ են արդյոք:

Այս բոլորն ասում են, որ անորոշի սեռական, ավելի ճիշտ սեռական-տրական և ապառնի դերբայ հարաբերակցության հարցը հայ քերականությունների մեջ դեռևս իր վերջնական լուծումը չի ստացել և առիթ է տալիս տարբեր մեկնաբանությունների: Դա բացատրվում է նրանով, որ բուն լեզվի մեջ էլ, ձևային բացարձակ նույնության պայմաններում, երբեմն պարզորոշ ու հստակ չեն նաև իմաստային տարբերությունները: Ահա այդ է պատճառը, որ ՈՒ ձևի միևնույն կիրառությունները տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են ընկալում ու արժեքավորում:

Մենք ևս անորոշի սեռական-տրական հոլովածեից առանձին ապառնի

<sup>24</sup> Տե՛ս «Труды Тбилисского университета», 1965, № 166, էջ 437—38:

<sup>25</sup> Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 300:

<sup>26</sup> Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 377—378:

<sup>27</sup> Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 353:

նի դերբայ ենք ընդունում: Իայց ընդունում ենք ոչ թե այն պատճառով, որ, ասենք, գնալու եմ, տեսնելու եմ, կատարելու եմ և այլ ձևերի մեջ սեռական-տրականի հոլովական հարաբերություն չի արտահայտվում: Անորոշի սեռական-տրական հոլովածևր ապառնիություն ընդհանուր իմաստ է արտահայտում, ինչպես՝ գնալու տեղ, տեսնելու բան, կատարելու գործ և այլն: Եթե այդպես չլիներ, գնալու (եմ) ձևը, որ սեռական-տրական է, կատարելի գործողություն արտահայտել չէր կարող:

Անորոշի սեռական-տրական հոլովածևի ապառնի դերբայի, որպես առանձին քերականական միավորների, անջատումը պատճառաբանվում է հետևյալ փաստարկներով:

1. Ո՛ր ձևը (գնալու) հարացույցի մեջ է մտնում մեկ անորոշ դերբայի հոլովական ձևերի հետ, օրինակ՝ գնալ—գնալու—գնալուց—գնալով, մեկ էլ անկատար և վաղակատար դերբայների հետ որպես սահմանական եղանակի գլխավոր բաղադրյալ ժամանակների կազմիչ, օրինակ՝ գնում եմ—գնում էի, գնացել եմ—գնացել էի, գնալու եմ—գնալու էի: Մի կողմ թողած առաջին ձևերը, որոնց հակադրությունը հոլովական իմաստների հակադրություն է, անդրադառնա՞նք վերջին ձևերին:

Գնում, գնացել, գնալու միավորները ձևային ու իմաստային հակադրություն են կազմում. դրանցից առաջինը՝ Ո՛ր ձևը ցույց է տալիս կատարվող, ընթացքի մեջ գտնվող գործողություն, երկրորդը՝ Ե՛լ ձևը ցույց է տալիս կատարված, ընթացքից դուրս եկած գործողություն, իսկ երրորդը՝ Ո՛ր ձևը ցույց է տալիս կատարելի, սպասելի գործողություն: Անկախ անորոշի սեռական-տրական հոլովածևի հետ համեմատվելուց՝ գնալու ձևը գնում և գնացել ձևերի զուգակիցն է և կարող է դիտվել որպես միևնույն համասեռ քերականական կարգի մի անդամ, այսինքն՝ նրանց հետ նույն համակարգի մեջ մտնող անդամ: Գնում անկատար դերբայ է, գնացել՝ վաղակատար. դրանց հետ ունեցած հարաբերակցության տեսակետից էլ՝ գնալու ապառնի դերբայ է:

Ուրեմն այսպես՝ անորոշի սեռական-տրական հոլովածևից զատ առանձին ապառնի դերբայ պետք է ընդունել ամենից առաջ անկատար և վաղակատար դերբայների հետ ունեցած հարաբերակցության և հակադրության հիմքի վրա:

2. Հայտնի է, որ հայերենի բոլոր բարբառներում անորոշ դերբայը հոլովվում է: Եթե գրելու եմ, գրելու էի և նման ձևերի մեջ հանդես եկող գրելու միավորը տարբեր չէ անորոշի սեռական-տրական հոլովածևից և նրա հետ նույնն է, ապա այդ ինչպե՞ս է, որ շնայած անորոշ դերբայի համապարփակ հոլովմանը բոլոր բարբառներում, բոլոր բարբառները չէ, որ ունեն գրելու+եմ-էի վերլուծական ձևերը, որպես ժամանակային ձևեր: Այսպես, Ա. Ղարիբյանն արձանագրելով, որ գրականի նման ապառնի ժամանակ կազմում են հայերենի շատ բարբառներ, օրինակ՝ Արարատյան (գրելու լեմ, գրելու լի), Թիֆլիսի (գրելու իմ, գրելու էի),

Ջուղայի (գրելու լամ, գրելու ի), Պոլսի (գրելու էմ, գրելու էի) և այլն, միաժամանակ նշում է հետևյալը. «Ապառնին դերբայի գործածությունն իբրև ժամանակ կազմող ձև չենք գտնում մի շարք բարբառներում, օրինակ՝ Վանի, Կարնո, Տիգրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Շապին-Գարահիսարի և այլն: Այդ բարբառները, Վանի բացառությամբ, ապառնի փոխարեն գործ են ածում հարկադրական եղանակի ձևերը՝ քիդի, բըզբ, բի, բը, դը, բըզբը մասնիկներով և բառերով: Վանի բարբառը՝ ներկայի և անցյալի անկատարի ձևերը»<sup>28</sup>:

Հարցին մոտենալով այս տեսանկյունից պետք է նշել, որ գրական լեզվում միշտ չէ, որ Ո՛ր+եմ-էի կապակցությունները ապառնի ժամանակներ են կազմում: Քանի որ անորոշի սեռական-տրական հոլովն արտահայտում է նաև հասկանալի իմաստ, ուստի և նրա ձևերը միանալով եմ բայի հետ՝ կազմում են բաղադրյալ ստորոգյալ և բնութագրում են առարկան որակային կողմից, օրինակ՝ «Այս ջուրը խմելու է» (խմելու ջուր է), «Այս ապրանքը դեն գցելու է» (դեն գցելու ապրանք է), «Այս ցորենը ցանելու է, իսկ այս ցորենը ուտելու» (ցանելու ցորեն է, ուտելու ցորեն է) և այլն: Ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ, ասենք, «Նա այս ջուրը խմելու է» և «Այս ջուրը խմելու է», «Նա այս ապրանքը վաճառելու է» և «Այս ապրանքը վաճառելու է» նախադասություններից առաջիններում Ո՛ր ձևերը կերպային-ժամանակային իմաստ են արտահայտում և իմաստային այդ հիմունքով էլ ապառնի դերբայներ են, իսկ երկրորդներում հատկանշային-որակական իմաստ են արտահայտում և իմաստային այդ հիմունքով էլ անորոշի սեռական-տրական հոլովածևներ են<sup>29</sup>: Ահա իմաստային (և ոչ թե կառուցվածքային) այդ տարբերությամբ էլ առաջին օրինակների Ո՛ր+եմ բաղադրությունները համարվում են պարզ ստորոգյալներ և մտնում են բայի խոնարհման համակարգի մեջ, իսկ երկրորդ օրինակների Ո՛ր+եմ բաղադրությունները համարվում են բաղադրյալ ստորոգյալներ, բառերի ազատ կապակցություններ և չեն մտնում ու չեն էլ կարող մտնել բայի խոնարհման համակարգի մեջ:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ արևելահայ գրական լեզվում և հայերենի մի շարք բարբառներում անորոշի սեռական-տրական հոլովածևը որոշ կապակցությունների մեջ իմաստային յուրահատուկ զարգացում է ապրել, որը և թույլ է տալիս առանձին ապառնի դերբայ ընդունելու:

Այս հատվածը վերջացնելով նշենք, որ դպրոցական քերականության դասագրքում, նկատի ունենալով Ո՛ր վերջավորվող դերբայի կերպային իմաստը, այն վերանվանված է կատարելի դերբայ:

<sup>28</sup> Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1958, էջ 190—191:

<sup>29</sup> Հմմտ. Ա. Արքայանյան, Բաղը ժամանակակից հայերենում, էջ 378—379:

**Ժխտական դերբայ**

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Պայմանական կամ ենթադրական կոչված եղանակի ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերով և խոնարհվող բայի մի ընդհանուր ձևով, որն անփոփոխ կերպով գործածվում է օժանդակ բայի հետ:

**Պայմանական կամ ենթադրական եղանակի կազմութունը**

**Դրական խոնարհում**

**Ապառնի Անցյալ ապառնի**

կգրեմ	կկարդամ	կգրեի	կկարդայի
կգրես	կկարդաս	կգրեիր	կկարդայիր
կգրի	կկարդա ևն	կգրեր	կկարդար ևն

**Ժխտական խոնարհում**

**Ապառնի Անցյալ ապառնի**

չեմ գրի	չեմ կարդա	չէի գրի	չէի կարդա
չես գրի	չես կարդա	չէիր գրի	չէիր կարդա
չի գրի	չի կարդա ևն	չէր գրի	չէր կարդա ևն

Ժխտական խոնարհման աղյուսակում բերված գրի, կարդա միավորները լեզվի կառուցվածքում իրենց խաղացած դերով համահնչյուն են, ասենք, գրում եմ—գրում էի, չեմ գրում—չէի գրում, կարդում եմ—կարդում էի, չեմ կարդում—չէի կարդում, գրել եմ— գրել էի, չեմ գրել—չէի գրել, կարդացել եմ—կարդացել էի, չեմ կարդացել—չէի կարդացել և այլ ձևերում հանդես եկող գրում, կարդում, գրել, կարդացել միավորներին (թեև գործածության ավելի նեղ ոլորտ ունեն)։ Եթե այս վերջինները դերբայներ են, ապա դերբայներ են նաև չեմ գրի—չէի գրի, չեմ կարդա—չէի կարդա և այլ ձևերում հանդես եկող գրի և կարդա միավորները:

Ծնելով ըզձական ապառնու եզակի երրորդ դեմքի հետ ունեցած ձևական նմանությունից (գրեմ, գրես, գրի, կարդամ, կարդաս, կարդա) Ա. Ղարիբյանն այս դերբայն ավանհ ըզձական<sup>30</sup>: Հետագայում նկատի ունենալով այն, որ դերբայը գործածվում է միայն օժանդակ բայի ժրտական ձևերի հետ՝ վերանվանվեց ժխտական կամ ժխտման դերբայ և այս անվանումով էլ գործածվում է քերականությունների մեջ:

Ժխտման դերբայն առաջանում է անորոշ դերբայից: Ոչ հեռու անցյալում, մինչև դարուս սկզբները, արևելահայ գրական լեզվում որպես պայմանական եղանակի ժխտական ձևերի բաղադրիչ հանդես էր գալիս հենց անորոշ դերբայը, միայն Ծ խոնարհման բայերի լծորդի Ծ ձայնավորը փոխվում էր Ի-ի: Ըստ այդմ, օրինակ, գրել և կարդալ բայերի պայմանակի ժխտականի համար ունենում էինք խոնարհման հետևյալ հարցույցը:

չեմ գրի	չէի գրի	չեմ կարդալ	չէի կարդալ
չես գրի	չէիր գրի	չես կարդալ	չէիր կարդալ
չի գրի	չէր գրի ևն	չի կարդալ	չէր կարդալ ևն

Այս ձևերն անմիջաբար գալիս են Արարատյան բարբառից, որտեղ անորոշ դերբայը մասնակցում է ժամանակների կազմությանը՝ բաղադրելով հարկադրական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները, օրինակ՝ գրիլ պտեմ—գրիլ պտեի, կարդալ պտեմ—կարդալ պտեի, արգելական հրամայականը, օրինակ՝ գրիլ մի—գրիլ մեք, կարդալ մի—կարդալ մեք և պայմանական կամ ենթադրական եղանակի ժխտական ձևերը, օրինակ՝ չեմ գրիլ, չես գրիլ, չի գրիլ—չէի գրիլ, չէիր գրիլ, չէր գրիլ, չեմ կարդալ, չես կարդալ, չի կարդալ—չէի կարդալ, չէիր կարդալ, չէր կարդալ և այլն:

Արարատյան բարբառի այս վերջին ձևերն անցան գրական լեզվին որպես պայմանական կամ ենթադրական եղանակի ժխտական ձևեր: Այսպես, Մ. Արեղյանն ուղղակի գրում է. «Ենթադրական եղանակի բացասականը կազմվում է եմ օժանդակով և անորոշ դերբայով: Բացասական շ մակբայը դրվում է օժանդակ բայի վրա, որ սովորաբար դերբայից առաջ է ընկնում: Եզակի երրորդ դեմքը միշտ չի ձևն ունի: Դերբայի Ե լծորդը միշտ փոխվում է ի ձայնավորի»<sup>31</sup>: Որպես օրինակ նա բերում է չեմ գնալ—չէի գնալ, չեմ գրիլ—չէի գրիլ ձևերի խոնարհման ամբողջական տախտակը:

Եվ իրոք, մինչև 20-րդ դարի սկզբները արևելահայ գրական լեզվում պայմանական կամ ենթադրական եղանակի ժխտական ձևերի կազմության հիմնական սկզբունքը սա էր, օրինակ՝ «Անիծվիս, եթե վերջին կամքս չես կատարիլ» (Շիրվ.). «Լավ որսկանը որսի ման չի գալ» (Թում.). «Մի կամ երկու մարդուց ո՛հմակը չի վախենալ» (Թում.). «Երբեք չեմ ամուսնանալ նրա հետ» (Նար-Դոս):

Նույն տեղում Մ. Արեղյանը նշում է, որ ենթադրականի ժխտական կազմություններում «Անորոշ դերբայի լ վերջավորությունը խոսակցական, երբեմն և գրական լեզվի մեջ հաճախ դուրս է ընկնում, օրինակ՝

<sup>30</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, Երևան, 1941, էջ 167: 268

<sup>31</sup> Մ. Արեղյան, Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 181:

չեմ գրի, չեմ խոսի, չեմ գնա, չեմ զարմանա»<sup>32</sup>: Հետագա շրջանում չեմ գրի, չեմ գնա և այլ ձևերը դարձան օրինաշարական, բարձրացան կանոնի աստիճանի, և այսպիսով ավարտվեց անորոշից մի նոր դերբայի՝ ժխտական դերբայի ձևավորման ընթացքը:

Եթե մի կողմ թողնենք լեզվի պատմական տվյալները, ապա պետք է ասենք, որ արդի հայերենում ժխտական դերբայը կազմվում է անկատարի (անորոշի) հիմքից Ա և Ի վերջավորություններով (դրանք պատմականորեն անորոշ դերբայի Ա և Ի լծորդ ձայնավորներն են), ըստ որում Ա են ստանում Ա խոնարհման, իսկ Ի՝ Ե խոնարհման բայերը:

**Ժ խ տ ա կ ա ն դ ե ր բ ա յ ի կ ա զ մ ու թ յ ու ն ր**

**Ա խոնարհման բայեր**

Ա ն ո Ր Ո Շ	Ա ն կ ա տ ա Ր Ի հիմք	Ժ խ տ ա կ ա ն դ եր բ ա յ
կարգալ	կարդ—	կարդա
հավատալ	հավատ—	հավատա
հասկանալ	հասկան—	հասկանա
մտտենալ	մտտեն—	մտտենա
դառնալ	դառն—	դառնա

**Ե խոնարհման բայեր**

Ա ն ո Ր Ո Շ	Ա ն կ ա տ ա Ր Ի հիմք	Ժ խ տ ա կ ա ն դ եր բ ա յ
գրել	գր—	գրի
կատարել	կատար—	կատարի
գտնել	գտն—	գտնի
փախչել	փախչ—	փախչի
հազգնել	հազգն—	հազգնի

Ժամանակակից հայերենի ժխտական դերբայի կազմության այս օրինաշարությունը համընդհանուր է և ոչ մի բացառություն չի ձևաչափում:

Ժխտական գերբայը սեգառարի, ազատիի և վազակատարի հետ կազմում է գերբայերը այն խումբը, որոնց մասին ասել ենք: Թե զըրանչ յնչնուրույն ու անկար գործառնություն շունեզոզ կրանկախ բարեք են արնչ զչյ շափազանց նման է բայահիմքերի գերին: Այստեղ պետք է ավելացնել, որ այս զրանչար բառերի մեջ բացառված տեղն է գրալում: Բնութագրված դերբայը՝ նախ նրանով, որ ոչ և կրատություն

դրորը քանակային տեսակետից ավելի նեղ է, քան մյուսներինը, որովհետև անկատար, ապառնի և վաղակատար դերբայները գործածվում են օժանդակ բայի և՛ դրական, և՛ ժխտական ձևերի հետ, իսկ ժխտական դերբայը գործածվում է օժանդակ բայի միայն ժխտական ձևերի հետ: Մյուս կողմից՝ եթե անկատար, ապառնի և վաղակատար դերբայները այս կամ այն չափով իմաստային որոշակիություն ունեն, ապա ժխտական դերբայը իմաստային որոշակիություն չունի:

Կզնամ, կզնաս, կզնա, կզնանք, կզնաք, կզնաք և համապատասխան չեմ գնա, չես գնա, չի գնա, չենք գնա, չեք գնա, չեն գնա ձևերը իմաստով իրարից տարբերվում են սոսկ նրանով, որ առաջինները դրական, իսկ երկրորդները ժխտական խոնարհման ձևեր են: Զևերի այսպիսի համադրմամբ գաղափար կարելի է կազմել այն դերի մասին, որ խաղում է ժխտական դերբայը ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգում: Ինչպես որ կզնամ ձևի մեջ գն- մասը սոսկ բայահիմք է և գործողության ընդհանուր իմաստ է արտահայտում, այնպես էլ չեմ գնա ձևի մեջ գնա մասը գործողության ընդհանուր իմաստ է արտահայտում՝ իր դերով հավասարվելով բայահիմքին, միայն այն տարբերությամբ, որ ազատ է դիմային վերջավորություններից և, հետևաբար, ունի անկախության ինչ-որ նշույլ, որից բոլորովին զուրկ է գն- մասը:

**ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ**

ԸՆԴՉԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Բայի եղանակային կամ դիմավոր ձևերը, ինչպես և բայն ընդհանրապես, իմաստաբանորեն բնորոշվում են գործողության, ընթացքի գաղափարի արտահայտմամբ: Բայի եղանակային կամ դիմավոր ձևերը այլ կերպ կարելի է կոչել նաև ստորոգելիական ձևեր, որովհետև նախադասության մեջ նրանք, որպես կանոն, հանդես են գալիս ստորոգյալի պաշտոնով, այսպիսով արտահայտելով ստորոգելիության շարահյուսական կարգը, որը նախադասության ամենաէական հատկանիշն է: Բայի ստորոգելիական ձևերն ունեն իրենց ներհատուկ առանձնահատկություններն ու քերականական կարգերը, որոնցով առանձնանում են մյուս խոսքի մասերից ընդհանրապես և բարոնցով անդեմ, դերբայական ձևերից մասնավորապես: Բայի եղանակային ձևերին ժամանակակից հայերենում հատուկ են եղանակի, ժամանակի, գործողության կերպի, դեմքի ու թվի քերականական կարգերը:

**ԲԱՅԻ ԴԵՄՔԻ ՈՒ ԹՎԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ**

ԲԱՅԻ ԴԵՄՔՆ ՈՒ ԹՎԸ ԵՎ ԴՐԱՆՅ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ.— Բայի եղանակային ձևերից անբաժան են դեմքի ու թվի քերականական կարգերը: Այս կարգերի էությունն արտահայտվում է նրանում, որ եղանակ-

\* ԱՌ. Ն. 192:



կային ձևերի մեջ դրսևորվում է նաև գործողութայն կատարողի դեմքը և թիվը:

Հայերենի բայն ունի երեք դեմք՝ առաջին, երկրորդ, երրորդ և երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

Եզակի թվի առաջին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը, օրինակ՝ գնացի, տեսա, գնամ, տեսնեմ: Եզակի թվի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսակիցը, օրինակ՝ գնացիր, տեսաք. գնաս, տեսնես: Եզակի թվի երրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է մի երրորդ անձ կամ իր, օրինակ՝ գնաց, տեսավ. գնա, տեսնի:

Հոգնակի թվի առաջին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը և այն խումբը, որի անունից հանդես է գալիս խոսողը, օրինակ՝ գնացինք, տեսանք. գնանք, տեսնենք: Հոգնակի թվի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսակիցը և այն խումբը, որի մեջ ըստ խոսողի մտնում է խոսակիցը, օրինակ՝ գնացիք, տեսաք. գնաք, տեսնեք: Հոգնակի թվի երրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում են խոսողությունը շմասնակցող անձեր կամ իրեր, օրինակ՝ գնացին, տեսան. գնան, տեսնեն:

Ի տարբերություն մի շարք լեզուների, որոնց մեջ բայի դեմքերը սովորաբար կամ առանձին դեպքերում որոշվում են միայն դերանունների միջոցով, հայերենում բայերի դեմքերն ու թվերը միշտ որոշ են և ձևաբանորեն տարբերակված, ինչպես՝ գնացի, գնացիր, գնաց. գնացիք, գնացիք, գնացին. գնամ, գնաս, գնա, գնանք, գնաք. գնան և այլն: Ժամանակակից հայերենի բայական ձևերի մեջ միայն Ա խոնարհման պարզ բայերի ըզձական եղանակի ապառնիի եզակի երրորդ դեմքը և եզակի հրամայականը ձևով համընկնում են, ինչպես՝ նա գնա. կարգա, հավատա. դու գնա. կարգա, հավատա: Բայց դրանք իրարից տարբերվելով դեմքով, մյուս կողմից էլ հրամայականի ձևերը շեշտ կրելով՝ փաստորեն իրար հետ շփոթվել չեն կարող:

Եվ որովհետև հայերենի բայի դեմքերն ու թվերը միշտ որոշակի են ու տարբերակված՝ այդ պատճառով էլ դիմավոր ձևերի հետ դերանուն ենթակաների գործածությունը մի տեսակ ավելորդություն է դառնում, եթե դա չի պատճառաբանվում տրամաբանական շեշտով, գեմքեռի հատուկ հակադրությամբ և այլն:

Մ. Արեղյանն անդրադառնալով այս հարցին և նշելով, որ հրեղավորպական մի շարք լեզուներում, օրինակ՝ գերմաներենում, ֆրանսերենում, սկզբնապես տարբեր բայական ձևերը հնչյունափոխության պատճառով հաճախ նույն ձևին են վերածվել, ուստի և դերանուն ենթականերն անհրաժեշտ են բայի դեմքերը որոշելու համար, մեր լեզվի մասին գրում է. «Հայերենում էլ հարկավ բայից առաջ կամ հետո դնում ենք հաճախ դեմքի համապատասխան մի անձնական դերանուն, բայց այդ

լինում է ոչ թե բայի դեմքը որոշելու համար, այլ սովորաբար իբրև ավելորդություն կամ երբ դեմքը գորեղ շեշտվում է, ինչպես՝ Ծ՛ս եմ գրնում: Միշտ պետք է նկատի ունենալ, որ մեր լեզվի մեջ դերանվան իբրև ենթակա կիրառությունն առանց որևէ դիտավորության՝ ընդհանրապես ավելորդ ծանրաբեռնություն է, որ առաջ է գալիս շատ անգամ օտար լեզուների ազդեցությունից»<sup>33</sup>:

Հայերենի բայի դեմքերն ու թվերը արտահայտվում են հատուկ վերջավորությունների միջոցով, որոնք կցվում են բայահիմքերին վերջից՝ հաճախ լծորդ ձայնավորների հետ միասին, երբեմն էլ առանց դրանց, ըստ որում միևնույն վերջավորությունն արտահայտում է և՛ դեմքի, և՛ թվի գաղափար, օրինակ՝ գնացի ձևի մեջ ի վերջավորությունն արտահայտում է եզակի թվի առաջին դեմքի իմաստ, գնացիք ձևի մեջ ի վերջավորությունը՝ հոգնակի թվի երկրորդ դեմքի իմաստ և այլն:

Բայի դեմքերն ու թվերը արտահայտվում են վերջավորությունների հետևյալ խմբերի միջոցով:

ա) ե զ ա կ ի	հ ո գ ն ա կ ի
Մ	նՔ
Ս	Ք
Օ	ն

Այս վերջավորություններն են ստանում ըզձական եղանակի ապառնիին և մի քանի բայերի գրաբարաձև ներկան, միայն ըզձականի դեպքում Ծ խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքում լծորդի Ծ ձայնավորը փոխվում է Ի-ի: Օրինակներ.

ե զ ա կ ի

գրե—Մ	կարդա—Մ	ե—Մ	կա—Մ
գրե—Ս	կարդա—Ս	ե—Ս	կա—Ս
գրի—Օ	կարդա—Օ	է—Օ	կա—Օ

հ ո գ ն ա կ ի

գրե—նՔ	կարդա—նՔ	ե—նՔ	կա—նՔ
գրե—Ք	կարդա—Ք	ե—Ք	կա—Ք
գրե—ն	կարդա—ն	ե—ն	կա—ն

<sup>33</sup> Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 299:

բ) Ե զ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

Ի  
ԻՐ  
Ր, ԵՅ, Օ

ԻՆՔ  
ԻՔ  
ԻՆ

Այս վերջավորութիւններն են ստանում բոլոր բայերի ըղձական անցյալի ապառնին և մի քանի բայերի գրաբարածն անկատարը՝ եզակի երրորդ դեմքում ունենալով Ր վերջավորութիւն, Ե և Ա խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը՝ եզակի երրորդ դեմքում ունենալով Օ վերջավորութիւն և պատճառական բայերը՝ եզակի երրորդ դեմքում ունենալով ԵՅ վերջավորութիւն: Օրինակներ.

Ե զ ա կ ի

գրե-Ի կարդայ-Ի է-Ի կայ-Ի կարդաց-Ի բարձրացր-Ի  
գրե-ԻՐ կարդայ-ԻՐ է-ԻՐ կայ-ԻՐ կարդաց-ԻՐ բարձրացր-ԻՐ  
գրե-Ր կարդա-Ր է-Ր կա-Ր կարդաց-Օ բարձրացր-ԵՅ

Հ ո գ ն ա կ ի

գրե-ԻՆՔ կարդայ-ԻՆՔ է-ԻՆՔ կայ-ԻՆՔ կարդաց-ԻՆՔ բարձրացր-ԻՆՔ  
գրե-ԻՔ կարդայ-ԻՔ է-ԻՔ կայ-ԻՔ կարդաց-ԻՔ բարձրացր-ԻՔ  
գրե-ԻՆ կարդայ-ԻՆ է-ԻՆ կայ-ԻՆ կարդաց-ԻՆ բարձրացր-ԻՆ

գ) Ե զ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

Ա  
ԱՐ  
ԱՎ

ԱՆՔ  
ԱՔ  
ԱՆ

Սրանք կատարյալի վերջավորութիւններ են: Անցյալ կատարյալում այս վերջավորութիւններն են ստանում սոսկածանցավոր բայերը: Օրինակներ.

Ե զ ա կ ի

գտ-Ա փախ-Ա բարձրաց-Ա մոտեց-Ա  
գտ-ԱՐ փախ-ԱՐ բարձրաց-ԱՐ մոտեց-ԱՐ  
գտ-ԱՎ փախ-ԱՎ բարձրաց-ԱՎ մոտեց-ԱՎ

Հ ո գ ն ա կ ի

գտ-ԱՆՔ փախ-ԱՆՔ բարձրաց-ԱՆՔ մոտեց-ԱՆՔ  
գտ-ԱՔ փախ-ԱՔ բարձրաց-ԱՔ մոտեց-ԱՔ  
գտ-ԱՆ փախ-ԱՆ բարձրաց-ԱՆ մոտեց-ԱՆ

դ) Ե զ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

ԻՐ, Ա, ՈՒ

ԵՔ

Այս վերջավորութիւններն են ստանում հրամայական եղանակի բայածները, ըստ որում, եզակի թվում ԻՐ վերջավորութիւնն են ստանում Ե խոնարհման պարզ ու սոսկածանցավոր և Ա խոնարհման սոսկածանցավոր բայերը, Ա են ստանում Ա խոնարհման պարզ բայերը, իսկ ՈՒ են ստանում պատճառական բայերը. Հոգնակի թվում ԵՔ վերջավորութիւնն են ստանում բոլոր բայերը: Օրինակներ.

Ե զ ա կ ի

գր-ԻՐ գտ-ԻՐ բարձրաց-ԻՐ  
մոտեց-ԻՐ կարդ-Ա բարձրացր-ՈՒ

Հ ո գ ն ա կ ի

գրեց-ԵՔ գտ-ԵՔ բարձրաց-ԵՔ  
մոտեց-ԵՔ կարդաց-ԵՔ բարձրացր-ԵՔ

Ամփոփելով այս բոլորը՝ կունենանք հայերենի բայի դիմային վերջավորութիւնների հետևյալ պատկերը:

Ե զ ա կ ի

- 1-ին դեմք—Մ, Ի, Ա (գրե—Մ, գրե—Ի, գրեց—Ի, փախ—Ա).
- 2-րդ դեմք— Ս, ԻՐ, ԱՐ, Ա, ՈՒ (գրե—Ս, գրե—ԻՐ, գրեց—ԻՐ, փախ—ԱՐ, կարդ—Ա, բարձրացր—ՈՒ).
- 3-րդ դեմք— ԱՎ, ԵՅ, Ր, Օ (փախ—ԱՎ, բարձրացր—ԵՅ, գրե—Ր, գնա—Օ).

Հ ո գ ն ա կ ի

- 1-ին դեմք— ՆՔ, ԻՆՔ, ԱՆՔ (գրե—ՆՔ, գրեց—ԻՆՔ, փախ—ԱՆՔ).
  - 2-րդ դեմք— Ք, ԻՔ, ԱՔ, ԵՔ (գրե—Ք, գրեց—ԻՔ, փախ—ԱՔ, գրեց—ԵՔ).
  - 3-րդ դեմք— Ն, ԻՆ, ԱՆ (գրե—Ն, գրեց—ԻՆ, փախ—ԱՆ):
- 18-31

է. Աղայանը վերջավորութիւնները բաժանում է երկու խմբի՝ պարզ և բաղադրյալ: «Պարզ են այն վերջավորութիւնները, որոնք ցույց են տալիս դեմքի և թվի քերականական կարգերը, ինչպես, օրինակ, մ, ս, նք, բաղադրյալ են այն վերջավորութիւնները, որոնք միաժամանակ ունեն նաև ժամանակային ցուցիչ, ինչպես, օրինակ՝ ինք, իր և այլն»<sup>34</sup>, նա ժամանակային այսպիսի ցուցիչներ է համարում անցյալ ժամանակաձևերում հանդես եկող Ա—ն և Ի—ն (փախ—Ա-ր, գրեց—Ի-ր և այլն):

Այսպիսի մոտեցումը հնարավորութիւն է տալիս կատարելու ձևավորութիւնների նույնացում և տարբեր ձևերի մեջ գտնելու միևնույն վերջավորութիւնները: Այսպես, ըստ է. Աղայանի, խոնարհման համակարգում ունենք հետևյալ վերջավորութիւնները. եզակի 1-ին դեմք— Մ կամ Օ, 2-րդ դեմք— Ս, Բ, Ա, 3-րդ դեմք— Բ, Վ կամ Օ. հոգնակի 1-ին դեմք— ՆՔ, 2-րդ դեմք— Ք, 3-րդ դեմք— Ն<sup>35</sup>:

Եթե վերջավորութիւնների անդամահատմամբ և նույնացմամբ հոգնակի թվի վերջավորութիւնները կարելի է հանգեցնել առաջին դեմքի ՆՔ, երկրորդ դեմքի Ք և երրորդ դեմքի Ն ձևերին, ապա եզակի թվի վերջավորութիւնները նշվածներին հանգեցվել չեն կարող: Այսպես օրինակ՝ եզակի թվի համար չեն արտացոլված առաջին դեմքի Ա, Ի (փախ—Ա, գնաց—Ի), երկրորդ դեմքի հրամայականի ՈՒ (բարձրացր—ՈՒ, մեծացր—ՈՒ), երրորդ դեմքի ԵՅ (բարձրացր—Ի, բարձրացր—ԻՐ, բարձրացր—ԵՅ) վերջավորութիւնները: Մյուս կողմից՝ եթե լեզվական ձևերի և ընդհանրապես լեզվի կառուցվածքի նկարագրութիւնն ունի նաև գործնական նպատակներ՝ կոչված լինելով ավելի պարզ ու մատչելի ներկայացնելու լեզվի հորինվածութիւնը, ապա այդօրինակ տարրալուծումները շատ դեպքերում վերածվում են իրենց հակադրութեանը՝ ոչ միայն չնպաստելով, այլև հաճախ խանգարիչ հանդիսանալով լեզվի կառուցվածքի իրական տարրերի՝ իմաստակիր միավորների բացահայտմանը:

#### ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻՆԵՐԸ.— Բայի դիմավոր կամ եղանակային ձևերով միաժամանակ արտահայտվում է գործողութեան կատարման ժամանակը, այսինքն թե ե՞րբ է կատարվում գործողութիւնը՝ խոսելու պահին, օրինակ՝ նա գնում է, կարդում է, խոսելու պահից առաջ, օրինակ՝ նա գնացել է, կարդացել է, թե՛ խոսելու պահից հետո, օրինակ՝ նա գնալու է, կարդալու է:

Այսպիսով, տրամաբանորեն դատելով՝ բայի ժամանակները երեքն են՝ ներկա, որը ցույց է տալիս, որ գործողութիւնը կատարվում է խոսելու պահին, անցյալ, որը ցույց է տալիս, որ գործողութիւնը կատար-

վել է խոսելու պահից առաջ, ապառնի, որը ցույց է տալիս, որ գործողութիւնը կատարվելու է խոսելու պահից հետո: Ապա այն տրամաբանական այս երեք ժամանակները լեզվում քերականական զանազան արտացոլումներ են ունենում: Տեսնենք, թե ինչ պատկեր է ներկայացնում ժամանակակից հայերենի բայի քերականական ժամանակների համակարգը:

Եթե մի կողմ թողնենք հարակատար ձևերը (ստուգված է— ստուգված էր), որոնց մասին արդեն խոսվել է և անցյալ կատարյալը, ապա սահմանական եղանակի մնացած ձևերը ներկայացնում են հետևյալ պատկերը:

Ա	Բ
գնում եմ	գնում էի
գնացել եմ	գնացել էի
գնալու եմ	գնալու էի

Այս ձևերից հորիզոնական գծի վրա դասավորվածները անմիջական երկանդամ հակադրութիւն են կազմում և նույնը լինելով դերբայներով՝ իրարից տարբերվում են միայն օժանդակ բայի ձևերով (եմ—էի), իսկ ուղղահայաց գծի վրա դասավորված Ա և Բ շարքերից յուրաքանչյուրը անմիջական եռանդամ հակադրութիւններ են կազմում և նույնը լինելով օժանդակ բայերով՝ տարբերվում են միայն դերբայներով (գնում—գնացել—գնալու):

Բերված վերլուծական ձևերի մեջ օժանդակ բայն արտահայտում է պահը, որի նկատմամբ առնվում է դերբայներով արտահայտված գործողութիւնը, ըստ որում եմ-ը ցույց է տալիս խոսելու պահը, այսինքն՝ ներկա ժամանակ, իսկ էի-ն խոսելուց առաջ ընկած մի որևէ պահ, այսինքն՝ անցյալ ժամանակ (ըստ որում, այդ անցյալ պահը կարող է լինել խոսելուց մի վայրկյան առաջ, մի օր առաջ, մի տարի առաջ կամ հազարավոր տարիներ առաջ. բայական ձևն անտարբեր է ժամանակի այսպիսի ֆիզիկական ըմբռնման նկատմամբ): Կարծես թե վիճելի չէ նաև դերբայների արտահայտած իմաստների հարցը: Եթե համադրենք իրարից քիչ տարբերութիւն ունեցող բնորոշումները, ապա կարող ենք ասել, որ անկատար դերբայը ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող կամ զուգորդող, վաղակատար դերբայը՝ ընթացքից դուրս եկած կամ նախորդող, իսկ ապառնի դերբայը՝ կատարելի կամ հաջորդող գործողութիւն, այսինքն այդ դերբայները գործողութիւնների հաջորդութիւն են ցույց տալիս:

Եթե քերականական ժամանակ ասելով հասկանանք, թե ինչ ժամանակներում է վերցվում գործողութիւնը, ապա սահմանական եղանակի վերոբերյալ 6 բայաձևերը կդասավորվեն երկու ժամանակի՝ ներկա և

<sup>34</sup> Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 382:

<sup>35</sup> Տե՛ս անդ, էջ 383:

անցյալ ժամանակների մեջ: Հարցը մոտավորապես այս ձևով են լուծում Մ. Արեղյանն ու Գ. Զահուկյանը: Առաջինը եմ բայով ու դերբայներով կազմված բայաձևերը փաստորեն համարում է ներկա ժամանակի բայաձևեր, իսկ էի բայով և դերբայներով կազմվածները՝ անցյալ ժամանակի բայաձևեր: Համապատասխան ձևերը, նույնը լինելով ժամանակով, իրարից սոսկ տարբերվում են կերպով (կատարվող, կատարված և կատարելի կերպեր): Երկրորդը գրում է, որ եմ օժանդակ բայի և դերբայների կապակցություններն արտահայտում են իրադրական ներկա ժամանակը, իսկ էի օժանդակ բայի և դերբայների կապակցությունները՝ իրադրական անցյալ ժամանակը: Համապատասխան կապակցությունները, նույնը լինելով ժամանակով, տարբերվում են միայն հաջորդակառուցյալ կարգով (համընկնում, նախորդում, հաջորդում):

Եթե առաջմ մի կողմ թողնելով դերբայների և օժանդակ բայի կապակցությունները՝ վերցնենք, ասենք, գոյականների ու սծականների և եմ—էի բայերի կապակցությունները, դրանք պայմանականորեն դիտելով որպես յուրահատուկ միասնական ձևեր (ինչպես որ դիտում ենք դերբայների և օժանդակ բայի կապակցությունները), ապա գոյական կամ ածական+եմ կապակցությունները միշտ կարտահայտեն ներկա ժամանակի իմաստ, ինչպես՝ նա ուսուցիչ է, զինվոր է, գեղեցիկ է, բարի է, իսկ գոյական կամ ածական+էի կապակցությունները՝ անցյալ ժամանակի իմաստ, ինչպես՝ նա ուսուցիչ էր, զինվոր էր, գեղեցիկ էր, բարի էր:

Այս օրինակները բերեցինք ցույց տալու համար, որ բայական ժամանակի վերոբերյալ ըմբռնումը ունի իր առարկայական կոմպոնենտն ու նախադրյալները:

Եթե քերականական ժամանակ ասելով սոսկ հասկանանք գործողությունների հաջորդությունը մի որևէ ժամանակակետի նկատմամբ, անկախ այն բանից՝ այդ ժամանակակետը ներկան է, թե անցյալը, ապա սահմանական եղանակի վերոբերյալ 6 բայաձևերը կդասավորվեն երեք ժամանակի տակ, որոնցից անկատար դերբայով կազմվածները (գնում եմ—գնում էի) պայմանականորեն կարելի է կոչել համընկնող կամ կատարվող, վաղակատարով կազմվածները (գնացել եմ—գնացել էի)՝ նախորդող կամ կատարված, իսկ ապառնիով կազմվածները (գնալու եմ—գնալու էի)՝ հաջորդող կամ կատարելի ժամանակներ: Ասենք, որ բայական ժամանակների այսպիսի մեկնաբանությունը ևս հիմքից զուրկ և անիմաստ համարվել չի կարող, որովհետև վերջիվերջո առանց գործողությունների հաջորդության ըմբռնման ժամանակի կարգն ընդհանրապես անըմբռնելի է և անիմաստ:

Սակայն բայական ժամանակի այս երկու ըմբռնումներից առաջինի թերությունն այն է, որ սոսկ հաշվի է առնում, թե որ ժամանակակետի հարաբերությամբ է վերցվում գործողությունը՝ անտես առնելով գործո-

ղությունների հաջորդությունը, իսկ երկրորդի թերությունն այն է, որ սոսկ հաշվի է առնում գործողությունների հաջորդությունը՝ անտես առնելով ժամանակակետը, որի նկատմամբ վերցվում են գործողությունները:

Համենայն դեպս, հայերենի սահմանական եղանակի բաղադրյալ ձևերի ժամանակների որոշման առաջին տեսակետը կարող էր ընդունելի համարվել, եթե հայերենի անկատար, վաղակատար և ապառնի դերբայները՝ գնում, գնացել, գնալու, արտահայտեին բուն իսկ կերպային իմաստներ և ոչ թե գործողությունների հաջորդություն, ինչպես որ իրոք է:

Արտահայտելով գործողությունների հաջորդություն, այսինքն՝ կատարվող, կատարված և կատարելի գործողություններ՝ գերբայները, իրենց այդ բնույթին համապատասխան, մասնակցում են բայի ժամանակի քերականական կարգի դրսևորմանը:

Այսպես ուրեմն՝ սահմանական եղանակի բաղադրյալ ձևերի ժամանակի կարգի արտահայտման մեջ դեր ունեն և՛ դերբայները, և՛ օժանդակ բայը, ըստ որում, օժանդակ բայը ցույց է տալիս ներկա և անցյալ ժամանակակետեր, իսկ դերբայները ցույց են տալիս գործողությունների հաջորդություն այդ ժամանակակետերի հարաբերությամբ:

Հարցին մոտենալով այս տեսանկյունից՝ տեսնում ենք, որ գնում եմ ձևը ցույց է տալիս մի գործողություն, որ համընկնում է խոսելու պահին հետ, գնացել եմ ձևը՝ մի գործողություն, որ նախորդել է խոսելու պահին, իսկ գնալու եմ ձևը՝ մի գործողություն, որ հաջորդելու է խոսելու պահին:

Գնում եմ բայաձևերի շարքը հայտնի է ներկա, գնացել եմ շարքը՝ վաղակատար, իսկ գնալու եմ շարքը՝ ապառնի ժամանակ անվանումով: Իսկ ի՞նչ են ցույց տալիս գնում էի—գնացել էի—գնալու էի բայաձևերը: Այդ բայաձևերը կազմող դերբայների էությունը համապատասխան՝ դրանք ևս ցույց են տալիս համընկնող, նախորդող և հաջորդող կամ կատարվող, կատարված և կատարելի գործողություններ, միայն ոչ թե խոսելու պահին, այլ մի անցյալ ժամանակակետի հարաբերությամբ: Այս և նախորդ բայաձևերի տարբերությունը միայն այն է, որ գնում եմ և այլ տիպի դեպքում ելակետը, բաժանման և հարաբերության սահմանը խոսելու պահն է, իսկ գնում էի և այլ տիպի դեպքում ելակետը, բաժանման և հարաբերության սահմանը խոսողի ընտրած մի անցյալ ժամանակակետն է: Ըստ այդմ, գնում էի ձևը ցույց է տալիս, որ գործողությունը համընկնում է խոսողի ընտրած անցյալ ժամանակակետի հետ, գնացել էի ձևը ցույց է տալիս, որ գործողությունը նախորդել է այդ ժամանակակետին, իսկ գնալու էի ձևն էլ ցույց է տալիս, որ գործողությունը հաջորդելու է այդ ժամանակակետին:

Գնում էի բայաձևերի շարքը հայտնի է անցյալի անկատար, գնացել

էի շարքը՝ անցյալի վաղակատար, իսկ գնալու էի շարքը՝ անցյալի ապառնի ժամանակ անվանումով:

Այսպիսով պարզ է դառնում, որ սահմանական եղանակի 6 բաղադրյալ բայաձևերից 3-ի մեջ հաջորդական գործողությունները վերցվում են ներկայի, իսկ 3-ի մեջ՝ անցյալի հարաբերությամբ. հենց այսքանով էլ մենք գործ ունենք քերականական 6 ինքնուրույն ու անկախ ժամանակների հետ, որոնք կազմում են երկանդամ հակադրություններ՝ գնում եմ—գնում էի, գնացել եմ—գնացել էի, գնալու եմ—գնալու էի: Առանձին է մնում անցյալ կատարյալ ժամանակը, որն այս բոլորից տարբերվում է և կազմության ձևով, և իմաստով:

Այս երկանդամ հակադրությունները դրսևորվում են ոչ միայն սահմանական եղանակի վերլուծական ձևերում, այլև հայերենի բայական ձևերի դրսևորման ամբողջ հիմքն են կազմում և, հաշվի չառած սահմանական եղանակի անցյալ կատարյալն ու հրամայականը, տարածվում են ժամանակակից հայերենի բոլոր եղանակային ձևերի վրա, ինչպես՝ ըղձական եղանակ—գնամ—գնայի, ենթադրական եղանակ—կգնամ—կգնայի, հարկադրական եղանակ—պիտի գնամ—պիտի գնայի:

Դրանցից գնամ, կգնամ, պիտի գնամ ձևերը, տարբերվելով եղանակային իմաստով, միավորվում են ժամանակային նշանակությամբ՝ արտահայտելով խոսելու պահի նկատմամբ կատարելի գործողություն: Դրանք ունեն ապառնի ժամանակ: Նույն ձևով՝ գնայի, կգնայի, պիտի գնայի ձևերը, տարբերվելով եղանակային իմաստով, միավորվում են ժամանակային նշանակությամբ՝ արտահայտելով մի անցյալ պահի նրկատմամբ կատարելի գործողություն: Դրանք անցյալի ապառնի ժամանակ ունեն:

Նկարագրված երկանդամ հակադրությունները հայերենի խոնարհման համակարգի բուն իսկ էությունը կազմող, նրա կառուցվածքի էությունը որոշող ամենաբնորոշ առանձնահատկությունն են կազմում: Դրա համար գուցե բավական է հիշատակել միայն այն, որ քերականական ձևերը բայական հարացույցից կարելի է դուրս բերել կամ հարացույցի մեջ զետեղել միայն զույգերով: Այսպես օրինակ՝ վերջերս տարածում է գտնում այն դրույթը, որ հարակատար դերբայը կազմում է բաղադրյալ ստորոգյալ և բայական ձևերի կազմությանը չի մասնակցում, և, ըստ այդմ, խոնարհման հարացույցը պակասում է զույգ՝ հարակատար և անցյալի հարակատար ժամանակներով՝ նստած եմ—նստած էի: Որոշ քերականներ պիտի-ով կազմված կապակցությունները խոնարհման ձևեր չեն համարում և հարացույցից կրկին դուրս են հանում զույգ ձևեր՝ պիտի գրեմ—պիտի գրեի: Առանձին քերականներ խոնարհման ձևեր են ընդունում ենթակայական դերբայով և այդ դեպքում էլ հարացույցի մեջ ավելացնում են զույգ ձևեր՝ սովորող եմ—սովորող էի: Եթե փորձենք պայմանականորեն հարացույցի մեջ զետեղել գոյական կամ ածական +

օժանդակ բայ կապակցությունները, ապա այդ դեպքում ևս մեր խոնարհման հարացույցը կհարստանա զույգ ձևերով՝ բանվոր է—բանվոր էր, մեծ է—մեծ էր<sup>36</sup>: Այս բոլորը ցույց են տալիս, որ, ինչպես նշեցինք, մի կողմ թողած անցյալ կատարյալն ու հրամայականը, արդի հայերենի բայական ժամանակների ամբողջ համակարգը հիմնված է երկանդամ հակադրությունների վրա:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ առանձին լեզվաբաններ, բացարձակացնելով լեզուներում հաճախակի հանդիպող այսպիսի երկանդամ հակադրությունները (бинарная оппозиция), գտնում են, որ «Քերականական կարգը նշանակությամբ իրար բացառող երկու (և ոչ ավելի) ձևերի շարքերի կամ խմբերի միասնությունն է»<sup>37</sup>: Քերականական կարգերի այսպիսի նեղացված ըմբռնումը և երկանդամ հակադրությունների բացարձականցումը լեզվաբանական գրականության մեջ իրավացիորեն քննադատության է ենթարկվել<sup>38</sup>, որովհետև լեզվի քերականական կառուցվածքում իրական կերպով գոյություն ունեցող բոլոր հակադրությունները արհեստականորեն չի կարելի հանգեցնել երկանդամ հակադրությունների (օրինակ՝ արդի հայերենի հոլովները, բայի եղանակները, դեմքերը և այլն): Բայց մի բան պարզ է ու անժխտելի, որ լեզուների քերականական կառուցվածքում երկանդամ հակադրությունները (օրինակ՝ եզակի թիվ—հոգնակի թիվ, որոշյալ առում—անորոշ առում, կատարյալ կերպ—անկատար կերպ և այլն) մեծ դեր ու կըշիռ ունեն, հետևաբար դրանց իրական հաշվառումը օգնում է ավելի խոր կերպով բացահայտելու լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները:

ՀԱՄԱԳՐԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ (ՊԱՐԶ ՈՒ ԲԱՂԱԳՐՅԱԼ) ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.— Ըստ արտահայտման ձևի՝ բայի ժամանակները բաժանվում են երկու խմբի՝ համադրական ու վերլուծական կամ պարզ ու բաղադրյալ ժամանակներ:

Համադրական կամ պարզ են կոչվում այն ժամանակները, որոնք կազմվում են բայահիմքով և վերջավորություններով, օրինակ՝ գնացի, գնացիր, գնաց. գնամ, գնաս, գնա և այլն: Ժամանակակից հայերենի համադրական ժամանակներն են սահմանական եղանակի անցյալ կատարյալը և ըղձական ու հրամայական եղանակների ձևերը: Համադրական են համարվում նաև պայմանական և հարկադրական եղանակների

<sup>36</sup> Հմմտ. Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, էջ 102—104:

<sup>37</sup> А. В. Исаченко, О грамматическом значении, ВЯ, 1961, № 1, էջ 31:

<sup>38</sup> См. Б. И. Головин, Заметки о грамматическом значении, ВЯ, 1962, № 2.

А. В. Бондаренко, Система глагольных времен в современном русском языке, ВЯ, 1962, № 3. Е. И. Шендельс, О грамматической полисемии, ВЯ, 1962, № 3. Г. В. Джаукян, Общее и армянское языкознание, Ереван, 1978.

ձևերը, որոնք կազմվում են ըղձականից: Կ և ՊԻՏԻ եղանակիչ մասնիկներով, ինչպես՝ կզնամ—կզնայի, պիտի գնամ—պիտի գնայի: Այսպիսի մոտեցումը պատճառաբանված է այնքանով, որքանով որ Կ և ՊԻՏԻ մասնիկները եղանակի քերականական կարգի արտահայտիչներ են և բայի ժամանակի դրսևորման մեջ որևէ դեր չեն կատարում: Ե՛վ ըղձականի, և՛ պայմանականի ու հարկադրականի ձևերում ժամանակի կարգն արտահայտվում է նույն կերպ՝ բայահիմքի և վերջավորությունների կցումով, օրինակ՝ գնամ—կզնամ—պիտի գնամ, գնայի—կզնայի—պիտի գնայի և այլն: Դրանցից առաջինները նույն ապառնի, իսկ երկրորդները նույն անցյալի ապառնի ժամանակի ձևեր են:

Վերլուծական կամ բաղադրյալ են կոչվում այն ժամանակները, որոնք կազմվում են դերբայներով և օժանդակ բայով: Վերլուծական ժամանակների կազմությանը մասնակցում են անկատար, վաղակատար ու ապառնի դերբայները, որոնք բաղադրում են սահմանական եղանակի ներկա ու անցյալ անկատար, վաղակատար ու անցյալ վաղակատար և ապառնի ու անցյալ ապառնի ժամանակները, ինչպես՝ գնում եմ—գնում էի, գնացել եմ—գնացել էի, գնալու եմ—գնալու էի, և ժխտական դերբայը, որը բաղադրում է պայմանական եղանակի ժխտական ապառնի և անցյալի ապառնի ժամանակները՝ չեմ գնա—չէի գնա:

#### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ԲԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԵՐԸ.— Բայի վերլուծական ձևերը համադրականներից տարբերվում են ոչ միայն կազմությամբ, այլև իրենց արտահայտած գործողության յուրահատուկ բնույթով, որը պայմանավորված է վերլուծական ժամանակները կազմող դերբայների իմաստով: Ինչպես գիտենք, վերլուծական ժամանակներ կազմող դերբայները, այսինքն՝ կախյալ դերբայները, արտահայտում են գործողության ընթացքային վիճակ, այն է՝ անկատար դերբայն արտահայտում է կատարվող, վաղակատար դերբայը՝ կատարված, իսկ ապառնի դերբայը՝ կատարելի գործողություն:

Դերբայների արտահայտած գործողության ընթացքի հարաբերումը որևէ ժամանակակետի հետ հայ քերականագիտության մեջ կոչվում է գործողության կերպ: Ըստ այդմ՝ վերլուծական բայաձևերում դրսևորվում են կատարվող, կատարված և կատարելի կերպեր:

Անկատար դերբայով կազմված ժամանակները արտահայտում են գործողության կատարվող կերպ, ինչպես՝ գնում է—գնում էր, գրում է—գրում էր, կարգում է—կարգում էր և այլն: Ուրեմն՝ սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կատարվող կերպի ժամանակներ են:

Վաղակատար դերբայով կազմված ժամանակներն արտահայտում

են գործողության կատարված կերպ, ինչպես՝ գնացել է—գնացել էր, գրել է—գրել էր, կարդացել է—կարդացել էր և այլն: Ուրեմն՝ սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները կատարված կերպի ժամանակներ են:

Ապառնի դերբայով կազմված ժամանակներն արտահայտում են գործողության կատարելի կերպ, օրինակ՝ գնալու է—գնալու էր, գրելու է—գրելու էր, կարդալու է—կարդալու էր և այլն: Ուրեմն՝ սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները կատարելի կերպի ժամանակներ են:

Կատարելի կերպի կարելի է համարել նաև պայմանական եղանակի ժխտական ձևերը, որոնք ևս արտահայտվում են վերլուծական ձևով՝ չի գնա—չէր գնա, չի գրի—չէր գրի, չի կարդա—չէր կարդա և այլն, միայն պետք է նկատի ունենալ, որ ժխտական դերբայով կազմվող այս ձևերի մեջ գործողության ընթացքի գաղափարը թույլ է արտահայտված:

#### ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՐԱՐԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՂԽԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ.— Կրկին անդրադառնալով գնում եմ—գնում էի, գնացել եմ—գնացել էի, գնալու եմ—գնալու էի ձևերին՝ նշենք, որ եթե դրանք երկանդամ հակադրություններ են կազմում ըստ օժանդակ բայի ժամանակների, ապա եռանդամ հակադրություններ են կազմում ըստ դերբայների՝ գնում եմ—էի|գնացել եմ—էի|գնալու եմ—էի: Այս եռանդամ հակադրություններով, ինչպես պարզել ենք արդեն, արտահայտվում է գործողության կերպի կարգը:

Այս եռանդամ հակադրությունները առկա են նաև այսպես կոչված երկրորդական վերլուծական (բաղադրյալ) ժամանակներում, որոնց վերլուծությանն էլ անցնում ենք այժմ:

Երկրորդական վերլուծական ժամանակները կազմվում են անկատար 2-րդ (գնալիս), հարակատար (գնացած) ու ապառնի (գնալու) դերբայներով և լինել բայի խոնարհման ձևերով:

Եթե գլխավոր վերլուծական ժամանակների դեպքում բաժանման ելակետը ներկան է (եմ) կամ անցյալը (էի), որոնց նկատմամբ գործողությունը կարող է լինել կատարվող, կատարված և կատարելի (կամ համընկնող, նախորդող ու հաջորդող), ապա երկրորդական վերլուծական ժամանակների դեպքում բաժանման ելակետը որևէ գլխավոր ժամանակ է, որի նկատմամբ գործողությունը կարող է լինել կատարվող (համընկնող), կատարված (նախորդող) և կատարելի (հաջորդող):

Այսպիսով, ամեն մի գլխավոր ժամանակի համապատասխանում են երկրորդական կամ հարաբերական ժամանակների երեք ձևեր, որոնք ըստ անկատար, հարակատար և ապառնի դերբայների արտահայտում

իմաստները՝ դրսևորում են կատարվող, կատարված և կատարելի կերպեր՝ հետևյալ ձևով.

Ս ա հ մ ա ն ա կ ա ն		Ը Ղ Ճ ա կ ա ն							
գնում եմ	<table border="0"> <tr><td>գնալիս եմ լինում</td></tr> <tr><td>գնացած եմ լինում</td></tr> <tr><td>գնալու եմ լինում</td></tr> </table>	գնալիս եմ լինում	գնացած եմ լինում	գնալու եմ լինում	գնամ	<table border="0"> <tr><td>գնալիս լինեմ</td></tr> <tr><td>գնացած լինեմ</td></tr> <tr><td>գնալու լինեմ</td></tr> </table>	գնալիս լինեմ	գնացած լինեմ	գնալու լինեմ
գնալիս եմ լինում									
գնացած եմ լինում									
գնալու եմ լինում									
գնալիս լինեմ									
գնացած լինեմ									
գնալու լինեմ									
գնում էի	<table border="0"> <tr><td>գնալիս էի լինում</td></tr> <tr><td>գնացած էի լինում</td></tr> <tr><td>գնալու էի լինում</td></tr> </table>	գնալիս էի լինում	գնացած էի լինում	գնալու էի լինում	գնայի	<table border="0"> <tr><td>գնալիս լինեի</td></tr> <tr><td>գնացած լինեի</td></tr> <tr><td>գնալու լինեի</td></tr> </table>	գնալիս լինեի	գնացած լինեի	գնալու լինեի
գնալիս էի լինում									
գնացած էի լինում									
գնալու էի լինում									
գնալիս լինեի									
գնացած լինեի									
գնալու լինեի									
գնալու եմ	<table border="0"> <tr><td>գնալիս եմ լինելու</td></tr> <tr><td>գնացած եմ լինելու</td></tr> <tr><td>գնալու եմ լինելու</td></tr> </table>	գնալիս եմ լինելու	գնացած եմ լինելու	գնալու եմ լինելու	կգնամ	<table border="0"> <tr><td>գնալիս կլինեմ</td></tr> <tr><td>գնացած կլինեմ</td></tr> <tr><td>գնալու կլինեմ</td></tr> </table>	գնալիս կլինեմ	գնացած կլինեմ	գնալու կլինեմ
գնալիս եմ լինելու									
գնացած եմ լինելու									
գնալու եմ լինելու									
գնալիս կլինեմ									
գնացած կլինեմ									
գնալու կլինեմ									
գնալու էի	<table border="0"> <tr><td>գնալիս էի լինելու</td></tr> <tr><td>գնացած էի լինելու</td></tr> <tr><td>գնալու էի լինելու</td></tr> </table>	գնալիս էի լինելու	գնացած էի լինելու	գնալու էի լինելու	կգնայի	<table border="0"> <tr><td>գնալիս կլինեի</td></tr> <tr><td>գնացած կլինեի</td></tr> <tr><td>գնալու կլինեի</td></tr> </table>	գնալիս կլինեի	գնացած կլինեի	գնալու կլինեի
գնալիս էի լինելու									
գնացած էի լինելու									
գնալու էի լինելու									
գնալիս կլինեի									
գնացած կլինեի									
գնալու կլինեի									
գնացել եմ	<table border="0"> <tr><td>գնալիս եմ եղել</td></tr> <tr><td>գնացած եմ եղել</td></tr> <tr><td>գնալու եմ եղել</td></tr> </table>	գնալիս եմ եղել	գնացած եմ եղել	գնալու եմ եղել		<p style="text-align: center;">Հ ա ր կ ա դ ր ա կ ա ն</p> <table border="0"> <tr><td>գնալիս պիտի լինեմ</td></tr> <tr><td>գնացած պիտի լինեմ</td></tr> <tr><td>գնալու պիտի լինեմ</td></tr> </table>	գնալիս պիտի լինեմ	գնացած պիտի լինեմ	գնալու պիտի լինեմ
գնալիս եմ եղել									
գնացած եմ եղել									
գնալու եմ եղել									
գնալիս պիտի լինեմ									
գնացած պիտի լինեմ									
գնալու պիտի լինեմ									
գնացել էի	<table border="0"> <tr><td>գնալիս էի եղել</td></tr> <tr><td>գնացած էի եղել</td></tr> <tr><td>գնալու էի եղել</td></tr> </table>	գնալիս էի եղել	գնացած էի եղել	գնալու էի եղել	պիտի գնամ				
գնալիս էի եղել									
գնացած էի եղել									
գնալու էի եղել									
գնացի	<table border="0"> <tr><td>գնալիս եղա</td></tr> <tr><td>գնացած եղա</td></tr> <tr><td>գնալու եղա</td></tr> </table>	գնալիս եղա	գնացած եղա	գնալու եղա	պիտի գնայի	<table border="0"> <tr><td>գնալիս պիտի լինեի</td></tr> <tr><td>գնացած պիտի լինեի</td></tr> <tr><td>գնալու պիտի լինեի</td></tr> </table>	գնալիս պիտի լինեի	գնացած պիտի լինեի	գնալու պիտի լինեի
գնալիս եղա									
գնացած եղա									
գնալու եղա									
գնալիս պիտի լինեի									
գնացած պիտի լինեի									
գնալու պիտի լինեի									

Հ ր ա մ ա յ ա կ ա ն

գնա	}	գնալիս եղիր
		գնացած եղիր
		գնալու եղիր

Այսպիսով, գլխավոր ժամանակային ձևերի 14 շարքերին համապատասխան ունենում ենք երկրորդական ժամանակային ձևերի 42 շարք (14×3=42): Մի կողմ թողնելով այն հարցը, որ այս ձևերի մի մասը քիչ գործածական է, նշենք, որ երկրորդական ժամանակները գլխավոր ժամանակների հետ հարաբերական գործածություն ունեն, ըստ որում այս հարաբերակցությունը դրսևորվում է գլխավոր ժամանակի և երկ-

րորդական վերլուծական ժամանակներում հանդես եկող լինել բայի խոնարհված ձևերի ժամանակային համապատասխանությամբ, այսինքն՝ գնում եմ ձևին համապատասխան կարող են գործածվել գնալիս եմ լինում—գնացած եմ լինում—գնալու եմ լինում շարքերի ձևերը միայն, օրինակ՝ Ամեն անգամ, երբ ես նրանց տուն եմ գնում, նա պարապելիս է լինում, պարապած է լինում, պարապելու է լինում. գնացել եմ ձևին համապատասխան՝ գնալիս եմ եղել—գնացած եմ եղել—գնալու եմ եղել ձևերը միայն, օրինակ՝ Ամեն անգամ, երբ ես նրանց տուն եմ գնացել, նա պարապելիս է եղել, պարապած է եղել, պարապելու է եղել: Այսպես և մյուսները:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ յուրաքանչյուր գլխավոր ժամանակային ձև ունի իրեն համապատասխան երկրորդական վերլուծական ժամանակային երեք ձևեր, որոնցից անկատար դերբայով կազմված շարքը ցույց է տալիս, որ երկրորդական ժամանակով արտահայտված գործողությունը համընկնում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը և ունի կատարվող կերպ (Ամեն անգամ, երբ նրանց տուն եմ գնում, նա պարապելիս է լինում). հարապատասխան դերբայով կազմված շարքը ցույց է տալիս, որ երկրորդական ժամանակով արտահայտված գործողությունը նախորդում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը և ունի կատարված կերպ (Ամեն անգամ, երբ նրանց տուն եմ գնում, նա պարապած է լինում). ապառնի դերբայով կազմված շարքը ցույց է տալիս, որ երկրորդական ժամանակով արտահայտված գործողությունը հաջորդում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը և ունի կատարելի կերպ (Ամեն անգամ, երբ նրանց տուն եմ գնում, նա պարապելու է լինում):

Այս դեպքում էլ, ինչպես պարզորոշ կերպով տեսնում ենք, գործ ունենք երկրորդական վերլուծական ձևերում դրսևորվող գործողությունների հաջորդության կարգի հետ: միայն այն տարբերությամբ, որ երկրորդական վերլուծական ձևերում գործողությունների հաջորդությունը վերցվում է լինել բայի ժամանակային ձևերի հարաբերությամբ, իսկ վերջիններս էլ, ինչպես նշված է արդեն, պայմանավորված են գլխավոր ժամանակներով, քանի որ, ասենք, գնում եմ ձևին համապատասխանում է լինում եմ ձևը, գնացել եմ ձևին՝ եղել եմ ձևը, գնացի ձևին՝ եղա ձևը և այլն:

Այս վերլուծություններից հետո հեշտանում է երկրորդական վերլուծական ժամանակների անվանումը: Քանի որ վերջին դեպքում ժամանակը կամ ժամանակակետը (մեզ թվում է, որ տվյալ գործածությամբ այս բառերի միջև տարբերություն չկա) արտահայտվում է լինել բայի խոնարհման ձևերով, իսկ դերբայները ցույց են տալիս գործողությունների հաջորդություն, ուրեմն և դրանից տրամաբանորեն բխում է, որ երկ-

որողական վերլուծական ժամանակները կարելի է անվանել հետևյալ  
հերթ.

գնալիս եմ լինում— համընկնող ներկա  
գնացած եմ լինում— նախորդող ներկա  
գնալու եմ լինում— հաջորդող ներկա  
գնալիս էի լինում— համընկնող անցյալի անկատար  
գնացած էի լինում— նախորդող անցյալի անկատար  
գնալու էի լինում— հաջորդող անցյալի անկատար  
գնալիս եմ եղել— համընկնող վաղակատար  
գնացած եմ եղել— նախորդող վաղակատար  
գնալու եմ եղել— հաջորդող վաղակատար

Այսպես նաև մյուսները: Այս թվարկմամբ արդեն պարզ է դառնում  
երկրորդական վերլուծական ժամանակների անվանման սկզբունքը: Ին-  
նեղ բայով անվանվում է ժամանակը կամ ժամանակակետը, իսկ դեր-  
բայներով՝ գործողությունների հաջորդությունը:

#### ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ.— Բայի եղա-  
նակի կարգի տրամաբանական հիմքն այն է, որ նույն և միևնույն գոր-  
ծողությունը կարող է ներկայացվել որպես իրական, ցանկալի, ենթա-  
դրական, կարելիական, պայմանական, անհրաժեշտական և այլն, ըստ  
որում, այս դեպքում ևս, ինչպես շատ ուրիշ դեպքերում, նույն գործո-  
ղության տարբեր երանգավորումները գնահատվում են խոսողի տեսան-  
կյունից: Բայի եղանակի կարգը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը  
գործողության նկատմամբ:

Սակայն պետք է տարբերել բայի եղանակի կարգը եղանակավորու-  
թյան լեզվական կարգից ընդհանրապես, որն ավելի լայն է և, բացի  
ձևաբանական միջոցներից, դրսևորվում է նաև բառային, շարահյուսա-  
կան և հնչերանգային միջոցներով: Հայտնի է, որ լեզվում կան բառերի  
հատուկ խմբեր, այսպես կոչված եղանակավորող բառերը, որոնք ար-  
տահայտում են խոսողի վերաբերմունքը և մեծ մասամբ վերաբերում  
են նախադասության բայ-ստորոգյալին, օրինակ՝ «Նա երևի կգա», «Քու-  
ցե կգա», «Մի՞թե կգա», «Կարծես կգա» և նման բառերով արտահայտ-  
վում է խոսողի թեական, երկբայական վերաբերմունքը գործողության  
նկատմամբ, իսկ «Նա իրոք կգա», «Անպայման կգա», «Անշուշտ կգա»  
և նման բառերով արտահայտվում է խոսողի հաստատողական վերա-  
բերմունքը գործողության նկատմամբ: Այս ձևով ամենատարբեր եղա-  
նակավորող բառերի միջոցով գործողությանը կարելի է հաղորդել ամե-

նատարբեր երանգներ և, այսպիսով, բայի զանազան «եղանակներ» ըս-  
տանալ: Սակայն քանի որ տվյալ դեպքում քննության նյութ է հանդի-  
սանում բայի եղանակի կարգի ձևաբանական արտահայտությունը, ուս-  
տի և, մյուս ձևաբանական կարգերին զուգահեռ, բայական եղանակի  
տակ պետք է հասկանալ խոսողի վերաբերմունքի այնպիսի արտահայ-  
տություն, որը դրսևորվում է հենց բայաձևի մեջ՝ բայի ձևաբանական  
փոփոխության միջոցով: Այստեղից պարզ է դառնում, որ երևի կգա,  
գուցե կգա, անշուշտ կգա, իրոք կգա և նման տիպի կապակցություն-  
ները, լինելով ազատ շարահյուսական կապակցություններ և ոչ թե բա-  
յի խոնարհման ձևեր, չեն կարող դիտվել բայի եղանակի կարգի, որպես  
ձևաբանական կարգի, արտահայտիչներ և բերված բոլոր դեպքերում  
կգա բայն արտահայտում է նույն և միևնույն «ձևաբանական եղանակը»:

Մի կողմ թողնելով եղանակավորող բառերն ու լեզվական զանա-  
զան միջոցները, որոնք բայական ձևերին հաղորդում են եղանակային  
այս կամ այն երանգները և հաշվի առնելով միայն բայի խոնարհման  
ձևերը, նկատում ենք, որ հենց խոնարհման ձևերի մեջ գործողությունն  
անխուսափելիորեն ներկայանում է իր այս կամ այն եղանակային երան-  
գով, օրինակ՝ գնացի (իրական գործողություն), գնամ (ցանկալի գոր-  
ծողություն), գնա՛ (հրամայական գործողություն) և այլն:

Ժամանակակից հայերենի քերականություններում ընդունվում է բա-  
յի հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական կամ ենթա-  
դրական, հարաբերական կամ անհրաժեշտական և հրամայական:

Սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ կեր-  
պով կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն, մի գոր-  
ծողություն, որ խոսողի հայեցակետով, նրա ունեցած հիմունքով կամ  
ներկայացմամբ համապատասխանում է իրականությանը, օրինակ՝ գը-  
նում եմ—գնում էի, գնացել եմ—գնացել էի, գնալու եմ—գնալու էի,  
գնացի:

Ըղձական եղանակի բայաձևերը ցույց են տալիս գործողության  
կատարման իղձ, ցանկություն, տենչանք, փափագ, օրինակ՝ գնամ—  
գնայի, տեսնեմ—տեսնեի:

Ըստ արդի քերականություններում ընդունված տեսակետի՝ պայմա-  
նական կամ ենթադրական եղանակի բայաձևերը ցույց են տալիս պայ-  
մանական կամ ենթադրական գործողություն, օրինակ՝ կգնամ—կգնայի,  
կտեսնեմ—կտեսնեի: Սակայն ինչպես հենց այս օրինակներից կարելի է  
եզրակացնել, ԿԸ եղանակիչով կազմված բայաձևերը ավելի հաստատո-  
ղական, քան թե պայմանական կամ ենթադրական գործողություն են  
ցույց տալիս, ուստի և դրանք ավելի ճիշտ կլինեն կոչել հաստատողա-  
կան եղանակի բայաձևեր:

Հարկադրական կամ անհրաժեշտական եղանակի բայաձևերը ցույց  
են տալիս հարկադրական կամ անհրաժեշտական գործողություն, օրի-



նակ՝ պիտի գնամ—պիտի գնայի, պիտի տեսնեմ—պիտի տեսնեի:

Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս խոսողին ուղղված հրաման, կարգադրություն, հորդոր, խնդրանք, օրինակ՝ գնա, տես:

Հայերենի բայի արտահայտած եղանակային իմաստները ավելի մանրամասնորեն կներկայացվեն ստորև, առանձին եղանակներին նրվիրված հատվածներում:

**ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

**ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.**— Մի կողմ թողած հարակատարն ու անցյալ հարակատարը, որոնց հարցը վիճելի է, սահմանական եղանակն ունի 7 գլխավոր կամ բացարձակ և 21 (7×3) երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր, որոնք ներկայացնում են հետևյալ պատկերը.

Գլխավոր կամ	երկրորդական կամ
բացարձակ	հարաբերական
ժամանակաձևեր	ժամանակաձևեր

գնում է	{ գնալիս է լինում գնացած է լինում գնալու է լինում
գնում էր	{ գնալիս էր լինում գնացած էր լինում գնալու էր լինում
գնալու է	{ գնալիս է լինելու գնացած է լինելու գնալու է լինելու
գնալու էր	{ գնալիս էր լինելու գնացած էր լինելու գնալու էր լինելու
գնացել է	{ գնալիս է եղել գնացած է եղել գնալու է եղել
գնացել էր	{ գնալիս էր եղել գնացած էր եղել գնալու էր եղել
գնաց	{ գնալիս եղավ գնացած եղավ գնալու եղավ

Ինչպես նշված է արդեն, սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ կերպով կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն: Սահմանականը այսպես կոչված առարկայական եղանակ է, ի տարբերություն մյուս եղանակների, որոնք, այսպես կոչված, անձնական եղանակներ են: Սահմանականը լեզվաբանական գրականության մեջ բնորոշվում է նաև որպես իրականության եղանակ, որովհետև սահմանական եղանակի բայաձևերով առարկայական աշխարհի եղելությունները ներկայացվում են իրենց բնական դրության մեջ՝ առանց անձնական այս կամ այն վերաբերմունքի: Սակայն այստեղ մի էական-վերապահում պետք է անել. սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ գործողություն ոչ թե բացարձակ կերպով, այլ խոսողի ներկայացմամբ: Այս դեպքում ևս, ինչպես և խոսողության ընթացքում ընդհանրապես, տերն ու ֆնօրենը խոսողն է: Դրանից ինքնին բխում է, որ սահմանական եղանակով կարող են արտահայտվել այնպիսի գործողություններ, որոնք ըստ էության չեն համապատասխանում իրականությանը, բայց դա քերականական տեսակետից նշանակություն չունի: «Սուրեն Սիրունյանը սովորում է բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսում» նախադասության «սովորում է» ստորոգյալը որքան էլ շահամապատասխանի իրականությանը, մնում է որպես սահմանական, որովհետև բայաձևը ոչ միայն ոչինչ չի ասում այդ անհամապատասխանության մասին, այլև, ընդհակառակն, արձանագրում է այդ համապատասխանության փաստը:

Քանի որ քերականությունն ուսումնասիրում է լեզվական ձևերը և նրանց արտահայտած իմաստները և ոչ թե այդ իմաստների և իրականության փոխհարաբերությունները, դրանից ինքնին բխում է, որ սահմանական եղանակի բայաձևերով միշտ արտահայտվում են քերականական տեսակետից ստույգ կատարվող, կատարված կամ կատարելի եղելություններ: Ուրեմն՝ վերևի՝ «սահմանական եղանակը իրականության եղանակն է» բնորոշումը պետք է հասկանալ այդ իմաստով:

**ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ**

**ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**— Սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, ինչպես<sup>39</sup>.

<sup>39</sup> Այսուհետև խոսվելու է միայն գլխավոր ժամանակաձևերի մասին՝ ցկատի ունենալով, որ երկրորդական վերլուծական ժամանակների բնութագրությունն արդեն տրված է:

Ե խ ո ն ա ր հ ու մ

Ա խ ո ն ա ր հ ու մ

գրում եմ  
գրում ես  
գրում է  
գրում ենք  
գրում եք  
գրում են

կարդում եմ  
կարդում ես  
կարդում է  
կարդում ենք  
կարդում եք  
կարդում են

Մահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը ցույց են տալիս խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, մի գործողություն, որի սկիզբն անշուշտ տրամաբանորեն ընկնում է խոսելու պահից առաջ, բայց և խոսելու պահին ընթացքի մեջ է, շարունակվում է հարածիզ, օրինակ՝ Հիմա, երբ խոսում եմ, նա գրում է, կարդում է, աշխատում է, գնում է և այլն:

Իր այս բնույթով հայերենի ներկա ժամանակն իրոք անկատար ներկա է, և, եթե կարելի է այսպես արտահայտվել, անսահմանափակ ժամանակ է, որովհետև չի սահմանափակված ոչ սկզբով, ոչ էլ վերջով՝ ի տարբերություն մյուս ժամանակների, որոնք, որպես կանոն, այս կամ այն սահմանափակվածությունն ունեն: Օրինակ՝ գնացել է ձևի մեջ գործողությունը սահմանափակված է ըստ ավարտվածության (գործողությունը կատարվել վերջացել է), իսկ գնալու է ձևի մեջ՝ ըստ սկզբնավորության (գործողությունը դեռ նոր պետք է սկսվի):

Սա սահմանական ներկայի հիմնական կամ գլխավոր իմաստն է, որը դրսևորվում է ամենափոքր շարակարգում կամ հենց սոսկ բայաձևի մեջ (գնում է), և ներկայի մյուս բոլոր կիրառությունները բխում և պայմանավորված են հենց այդ իմաստով:

Ներկա ժամանակաձևի այս հիմնական կամ գլխավոր կիրառության համար բերենք մի երկու օրինակ գեղարվեստական գրականությունից. «Բարակ ամպերը մաղում են ոսկի, Զրբը անուշ հեքիաթ են ասում. Կարոտ է սիրտս մտերիմ խոսքի, Հոգնատանջ հոգիս բախտ է երազում» (Տերյան): «Լուսություն կա Կաթավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղվկում է Բասուտա գետը, Բեռում է փիերը և հղկում հունի կապույտ որձաբարը: Իր նեղ հունի մեջ գալաքվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ռոնում են հազար գամփոներ և կրծում քարե շղթաները» (Բակունց):

Կան լեզուներ, որոնք այս շարունակական ներկայի համար հատուկ բայաձևեր ունեն: Այսպես են, օրինակ, անգլերենը և թուրքերենը: Վերջինիս օրինակով արևմտյան որոշ բարբառներում ստեղծվել են շարունակական ներկայի և անկատարի հատուկ ձևեր, ինչպես՝ ընդհանուր

ներկա և անցյալ անկատար— կուտե, կուտե, շարունակական ներկա և անցյալ անկատար— կուտե կո, կուտե կո:

Մահմանական եղանակի ներկայի բայաձևերով են արտահայտվում բոլոր ժամանակների համար ընդունելի ճշմարտությունները, իրերի մշտական հատկանիշների վերագրումը, բնորոշումները, սահմանումները և այլն: Դա այսպես կոչված ընդհանուր կամ մշտական ներկան է, որով արտահայտված եղելությունները այդպես են ըստ բնության և ոչ թե խոսելու պահին մի անգամ կատարվում են, ինչպես՝ «Ջուրը հեղուկ է», «Մարդ մահակնացու է», «Երկիրն իր լույսն ստանում է արեգակից», «Ձկները ջրում են ապրում», «Ճաղողն աշնանն է հասնում», «Առյուծը մոնչում է», «Գայլը ռոնում է» և այլն:

Ընդհանուր կամ մշտական ներկան լայն առումով սահմանումի կամ բնութագրման ներկա է:

Մահմանումի կամ բնութագրման ներկային է մոտենում այսպես կոչված «առածական ներկան»: Դրանով արտահայտվում են ընդհանուր կարծիքներ, առածներ, իմաստալից խոսքեր և այլն, ինչպես՝ «Չարիքը՝ շարիք, իսկ բարիքը բարիք է ծնում», «Լավությունը չի կորչում», «Շունը տիրոջը չի ճանաչում», «Ճրագն իր տակ լույս չի տալիս», «Ծառը պտղից է ճանաչվում» և այլն:

Ներկայի բայաձևերով արտահայտվում են իբրև կարգ, կանոն, սովորույթ կրկնվող գործողությունները, որոնք ընդգրկում են մի որոշակի ժամանակաշրջան, սրանց մեջ և խոսողի ներկան, օրինակ՝ «Ամեն գիշեր մոռյլ ծերունին մեն-մենակ իջնում է վար, բաց է անում երկաթե դռները ժանգոտ բանալիով, համրում է տոպրակները և ավելացնում նոր ոսկիներ» (Շիրվ.): «Գիշեր է դառնում, և գիշերվա հետ որսի են ելնում Մթնածորի բնիկները: Արջը տանձ է ուտում, իրար թաթով են տալիս, քավալյուր են լինում շոր տերևների վրա, դարան մտնում, հենց որ զգում են վայրի խոզերի մոտենալը» (Բակ.):

Այսպիսի ներկան ընդհանուր ձևով կոչվում է սովորույթ կամ կրկնություն ներկա:

Ներկայի բայաձևերով կարող են արտահայտվել նաև անցյալում կատարված-վերջացած գործողությունները: Այսպիսի ներկան կոչվում է պատմական ներկա: Ներկայի այսպիսի կիրառությունը ավելի շուտ ոճական մի յուրահատուկ հնարանք է և ունի հատուկ նպատակադրում՝ անցյալի գործողությունները մտովի տեղափոխել ներկա ժամանակակետը և դրանք ներկայացնել որպես խոսելու պահին հարածիզ կատարվող, այսպիսով կենդանություն ու հավաստիություն հաղորդելով խոսքին, ինչպես՝ «Վարդան Մամիկոնյանը իր կտրիճներով սրբնաց անցնում է գետը, մխրճվում է թշնամու հոծ խմրի մեջ, գետին է տապալում բազում թշնամիների, բայց ինքն էլ այդ մարտում ընկնում է քաջաբար»: «Մեսրոպը իջնում է Աղվանք, Արսվաղենի և Երեմիայի մոտ, ո-

րոնք աշակերտներ են հավաքում և նրան հանձնում: Հետո Մեսրոպը արքունիքից կանչում է Բենիամին թարգմանին, նրանց օգնությամբ նընարում է գրերը և Հովնաթանին վերակացու թողնելով՝ Հայաստան է դառնում (Աճառ.):

Ներկայի բայաձևերով են արտահայտվում ապագա այնպիսի գործողություններ, որոնց կատարումը խոսողը ներկայացնում է որպես ստույգ, առարկություն չվերցնող, հավաստի՝ կարծես թե նրանք խոսքի պահին արդեն կատարվելիս լինեն, օրինակ՝ «Հունիսին ավարտում եմ համալսարանը, նշանակում եմ ստանում և ընտանիքով տեղափոխվում եմ գյուղ»։ «Հենց վաղը տոմս եմ վերցնում, թողնում եմ ամեն ինչ և թռչում Մոսկվա»:

Այսպիսի կիրառությունները հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին և գրականում տարածված չեն ու քիչ են հանդիպում:

### ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Անցյալ անկատար ժամանակը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով, ինչպես.

Ե խ ո ն ա ր հ ու մ	Ա խ ո ն ա ր հ ու մ
գրում էի	կարդում էի
գրում էիր	կարդում էիր
գրում էր	կարդում էր
գրում էինք	կարդում էինք
գրում էիք	կարդում էիք
գրում էին	կարդում էին

Անցյալ անկատար ժամանակի հիմնական, գլխավոր իմաստն այն է, որ ցույց է տալիս մի անցյալ ժամանակում ընթացքի մեջ գտնվող, շարունակվող, հարածիք գործողություն, ինչպես՝ «Երեկ, երբ խոսում էինք, նա գրում էր, կարդում էր, աշխատում էր, գնում էր»:

Ահա մի քանի օրինակ գեղարվեստական գրականությունից. «Գյուղացիները անսահման հետաքրքրությամբ դիտում էին կապտավուն նը-ժուլգի վազը: Նրանք շինք թափեցնում իրենց հրճվանքը, երբ ձին թռչում էր օդակի վրայով» (Բակ.). «Արջը հետևում էր նրան: Ավին վազում էր, թռչում գերանների վրայով, ծառի ճյուղերը շանգում էին դեմքը սուր մագիլների պես, սայթափում էր, նորից բարձրանում» (Բակ.):

Անցյալ անկատար ժամանակով արտահայտվում են անցյալում որպես կարգ, կանոն, սովորույթ կատարվող գործողությունները կամ

էլ կրկնվող գործողությունները: Դա, այսպես կոչված, ընդհանուր կամ սովորույթի ու կրկնության անկատարն է, օրինակ՝ «Հին հույները ծղր-րիղներին բռնատում, ածում էին փոքրիկ վանդակներն ու կախում իրենց լուսամուտների շրջանակներին, որ երգեն» (Թում.). «Տան ապրուստի մի մասը Մթնածորի խորքերից էր հոգում: Բացուտներում միրհավ էր ուտում, թակարդ էր լարում աղվեսի համար, երբեմն էլ Մթնածորի խորքերն էր գնում, ժամերով նստում քարի քամակին, մինչև վարազները ջրի գային» (Բակ.). «Առավոտից մինչև երկու-երեք ժամը Մուխանը հաշտարար դատարանի առջև սրա ու նրա համար հատը տասը կոպեկով խնդրագրեր էր հորինում կամ օրենքներ բացատրում, իսկ այնուհետև օրվա վաստակածը հանձնում էր օղետներին» (Շիրվ.):

### ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Սահմանական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, ինչպես.

Ե խ ո ն ա ր հ ու մ	Ա խ ո ն ա ր հ ու մ
գրելու եմ	կարդալու եմ
գրելու ես	կարդալու ես
գրելու է	կարդալու է
գրելու ենք	կարդալու ենք
գրելու եք	կարդալու եք
գրելու են	կարդալու են

Սահմանականի ապառնի ժամանակը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը կատարվելու է խոսելու պահից հետո, օրինակ՝ «Հիմա, երբ մենք խոսում ենք, նա գրելու է, կարդալու է, աշխատելու է, գնալու է»:

Ապառնի ժամանակով արտահայտվող կատարելի գործողությունը կարող է կատարվել խոսելու պահից անմիջաբար հետո կամ շատ երկար ժամանակ հետո: Քերականական ժամանակն անտարբեր է ժամանակի այսպիսի կոնկրետ ըմբռնման նկատմամբ և ֆիզիկապես չի շփվում, ինչպես՝ «Ծն իսկույն գնալու եմ հանքերը» (Շիրվ.). «Առավոտը քեզ համար սարի բոխի եմ բերելու». «Մի խոշոր կոմբինատ են կառուցելու մեր գյուղում: Մեր կոլխոզը վերանալու է» (Խանդ.). «Էն ամպերի մեջ կորած սարն ենք բարձրանալու» (Անան.):

Հայ քերականությունների մեջ սովորաբար նշվում է, որ սահմանականի ապառնի ժամանակը ամենաքիչ գործածական ժամանակներից

է: Գա, իհարկե, ճիշտ է և բացատրվում է նրանով, որ ապառնիի իմաստ է արտահայտվում նաև ենթադրական և հարկադրական եղանակների ձևերով: Պետք է նկատի ունենալ, որ գնալու է, կգնա, պիտի գնա ձևերը իմաստաբանորեն շատ մոտ են և շատ դեպքերում գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Ահա այս պատճառով էլ սահմանականի ապառնիի բայաձևերը տարածման լայն ոլորտներ չունեն:

**ԱՆՑՅԱԻ ԱՂԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ**

**ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.**— Սահմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով, ինչպես.

Ծ խ ո ն ա ր հ ու մ	Ա խ ո ն ա ր հ ու մ
գրելու էի	կարդալու էի
գրելու էիր	կարդալու էիր
գրելու էր	կարդալու էր
գրելու էինք	կարդալու էինք
գրելու էիք	կարդալու էիք
գրելու էին	կարդալու էին

Անցյալի ապառնի ժամանակը իր կազմությանը համապատասխան՝ ցույց է տալիս մի գործողություն, որը մի անցյալ ժամանակում կատարելի էր, օրինակ՝ «Երեկ, երբ խոսում էինք, նա գրելու էր, կարդալու էր, աշխատելու էր, գնալու էր». «Երկու-երեք շաբաթ անտատում էինք գիշերելու» (Անան.). «Իհարկե, ինքն իր կալանավոր լինելու մասին ասելու էր» (Խանզ.):

Անցյալի ապառնի ժամանակը ապառնիից էլ քիչ գործածական է. սա սահմանական եղանակի ամենասակավ գործածական ժամանակն է:

**ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ**

**ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.**— Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, ինչպես.

Ծ խ ո ն ա ր հ ու մ	Ա խ ո ն ա ր հ ու մ
գրել եմ	կարդացել եմ
գրել ես	կարդացել ես

գրել է	կարդացել է
գրել ենք	կարդացել ենք
գրել եք	կարդացել եք
գրել են	կարդացել են

Վաղակատար ժամանակի բայաձևերը ցույց են տալիս ներկա ժամանակակետից բուռն կատարված, ավարտված գործողություն, օրինակ՝ «Հիմա, երբ մենք խոսում ենք, նա գնացել է, գրել է, կարդացել է». «Գնալով Ռուսիա, նա այնտեղից բերել է կեղծ դրամներ և տգետների վրա սաղացել: Նա խաբել է, գողացել է, գովել ու կաղուպել է խեղճերին, նա նույնիսկ բուժավորել է իր մի ընկերոջը» (Շիրվ.): «Պախարայի նախիրը եկել է, շուր խմել ու անցկացել» (Անան.). «Գիշերն է փռել իր թևերը մութ, Գիշերն է գերել իմ սիրտը ցաված» (Տեր.):

Վաղակատար բայաձևերի իմաստային գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանք, որպես կանոն, ցույց են տալիս այնպիսի գործողություն, որին խոսողն ինքը ականատես չի եղել, այլ պատմում է կամ ուրիշներից լսելով, կամ էլ հետևանքից դատելով, ի տարբերություն անցյալ կատարյալ ձևերի, որոնք արտահայտում են այնպիսի գործողություն, որին խոսողն ականատես է եղել կամ իրեն դնում է գործողության կատարման վայրկյանի մեջ, ինչպես՝ Չլուն է եկել||Չլուն եկավ, Ոչխարը մորթել են||Ոչխարը մորթեցին, նա կտրվել է||նա կտրվեց, Փողոցները մաքրել են||Փողոցները մաքրեցին, նա շատ է խմել||նա շատ խմեց և այլն:

Վաղակատարի իմաստը քննելիս իր վրա ուշադրություն է գրավում նաև այն, որ վաղակատար բայաձևերը այս կամ այն շափով ներկայի հատկանիշ ևս ունեն, քանի որ խոսողը միշտ ներկան նկատի ունի, որից առաջ գործողությունը, ճիշտ է, կատարվել-վերջացել է, բայց և գործողության հետևանքը կարող է հարատևել մինչև ներկա ժամանակակետը, ինչպես՝ «Ամպերն եկել են սարերը պատել, Չորերը լցվել, իրար փաթաթվել» (Թում.). «Տխուր երեկոն զարկել է վրան» (Տեր.). «Գիշերն է փռել իր թևերը մութ, Գիշերն է գերել իմ սիրտը ցաված» (Տեր.). «Արևն արդեն պոռնկը դրել է մեր Պնդուկ կոչված սարի ուսին» (Անան.):

Այսպես և՛ «նա պառկել է, քնել է, հոգնել է, նստել է» և այլն:

Պայմանական երկրորդական նախադասություններում վաղակատարով կարող են արտահայտվել նաև ապագայում կատարվելիք գործողություններ, օրինակ՝ «Եթե տեսել եմ, կասեմ». «Որ հանդիպել եմ, ձեռիցս չի պրծնի». «Եթե գնացել ես, էլ քեզ հետ չեմ խոսելու» և այլն: Իմաստային այս երանգն ավելի շատ արտահայտվում է անցյալ կատարյալով՝ «Եթե տեսա, կասեմ». «Որ հանդիպեցի, ձեռիցս չի պրծնի»: Այս կիրառությունները հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին:

ԱՆՅՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով, ինչպես.

Ե խ ո ն ա Ր Հ ու մ	Ա խ ո ն ա Ր Հ ու մ
գրել էի	կարդացել էի
գրել էիր	կարդացել էիր
գրել էր	կարդացել էր
գրել էինք	կարդացել էինք
գրել էիք	կարդացել էիք
գրել էին	կարդացել էին

Իր կազմության բնույթին համապատասխան՝ անցյալի վաղակատարը ցույց է տալիս մի գործողություն, որը մի անցյալ ժամանակակետում կատարվել, վերջացել է, ըստ որում՝ գործողության արդյունքը կամ հետևանքը կարող է տևել մինչև տվյալ անցյալ ժամանակակետը, ինչպես՝ «Երեկ, երբ մենք խոսում էինք», նա գրել էր, գնացել էր, կարդացել էր». «Արեգակը թեփվել էր դեպի մուտքը, և նրա վերջին ճառագայթները լուսավորել էին բուսականությունից զուրկ, անհրապույր քաղաքը և նրա առջև տարածված ծովի մակերևույթը» (Շիրվ.). «Ղեզ ու արծաթափայլ Արածանին գարնանային հեղեղներից կատաղել էր և պղզտոր հորձանքներով ծածկել էր յուր փիերը» (Բաֆֆի). «Հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր, ավելի ճիշտ՝ շներին հրամայել էր գզգզել կնոջը» (Բակ.):

Ինչպես օրինակներից կարելի է եզրակացնել, վաղակատար բայաձևերի ընդհանուր բնույթին համապատասխան՝ անցյալի վաղակատարը ևս, որպես կանոն, արտահայտում է այնպիսի գործողություն, որին խոսողն ինքն ականատես չի եղել, այլ պատմում է ուրիշներից լսելով կամ էլ գործողության հետևանքից դատելով:

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Անցյալ կատարյալ ժամանակը սահմանական եղանակի միակ պարզ ժամանակն է և կազմվում է կատարյալի հիմքերով և համապատասխան վերջավորություններով:

Կատարյալի հիմքերի նկարագրությունն արդեն տրված է և նշված, որ դրանք լինում են երեք տեսակ՝ ցոյական (գրեց-, կարդաց-), բեական (բարձրացր-) և պարզ կամ արմատական (գտ-, փախ-):

Անցյալ կատարյալը կազմվում է երկու տիպի վերջավորություններով՝ Ի ձայնավոր ունեցող վերջավորություններով, որոնք գրաբարյան այսպես կոչված «ներգործաձև» խոնարհման շարունակությունն են, և Ա ձայնավոր ունեցող վերջավորություններով, որոնք գրաբարյան «կերավորաձև» խոնարհման շարունակությունն են: Միայն պետք է նկատի ունենալ, որ ժամանակակից հայերենում, ինչպես և աշխարհաբարում ընդհանրապես, վերջավորությունների այս տարբեր տիպերը բայի սեռային դրսևորումների հետ ոչ մի առնչություն չունեն, իսկ գրաբարում, ճիշտ է, ոչ հետևողականորեն, բայց համեմայն դեպս որոշակի դեպքերում տարբերակում էին ներգործական և կրավորական սեռերը, օրինակ՝ գրեցի—գրեցեր—գրեցա (գրեցի—գրեցիր—գրեց)— ներգործական սեռ, գրեցայ—գրեցար—գրեցալ (գրվեցի—գրվեցիր—գրվեց)— կրավորական սեռ:

Անցյալ կատարյալի Ի ձայնավորով վերջավորություններն ունեն հետևյալ պատկերը.

Ե զ ա կ ի	Հ ո գ ն ա կ ի
Ի	Ինք
Իր	Իք
Օ կամ ԵՅ	Ին

Անցյալ կատարյալում այս վերջավորություններն են ստանում Ե և Ա խոնարհումների պարզ բայերը և պատճառական բայերը, ըստ որում՝ վերջիններս եզակի երրորդ դեմքում ունենում են ոչ թե Օ, այլ ԵՅ: Օրինակներ.

Ե խ ո ն ա Ր Հ ու մ	Ա խ ո ն ա Ր Հ ու մ	
գրեցի	բարձրացրի	կարդացի
գրեցիր	բարձրացրիր	կարդացիր
գրեց	բարձրացրեց	կարդաց
գրեցինք	բարձրացրինք	կարդացինք
գրեցիք	բարձրացրիք	կարդացիք
գրեցին	բարձրացրին	կարդացին

Անցյալ կատարյալի Ա ձայնավորով վերջավորություններն ունեն հետևյալ պատկերը.

Ե զ ա կ ի	Հ ո գ ն ա կ ի
Ա	Անք
Ար	Աք
Ավ	Ան

Անցյալ կատարյալում այս վերջավորութուններն են ստանում Ծ և Ա խոնարհումների ստակածանցավոր բայերը: Օրինակներ.

Ծ խոնարհում

Ա խոնարհում

գտա	փախա	բարձրացա	մոտեցա
գտար	փախար	բարձրացար	մոտեցար
գտավ	փախավ	բարձրացավ	մոտեցավ
գտանք	փախանք	բարձրացանք	մոտեցանք
գտաք	փախաք	բարձրացաք	մոտեցաք
գտան	փախան	բարձրացան	մոտեցան

Չնայած այն բանին, որ անցյալ կատարյալի վերջավորութունների այս երկու տիպերը լրիվ համարժեք են ու հավասարազոր և գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, բայց ըստ այս կամ այն կազմության հիմքերի վրա դրվելու առանձնահատկության շափազանց մեծ կայունություն են հանդես բերում և, որպես կանոն, իրարով փոխարինվել չեն կարող, ինչպես այդ նկատվում է հոլովական համակարգում (հմմտ. օրինակ՝ ժագումի՝ ժագման, գիշերվա՝ գիշերի, ընկերոջ՝ ընկերի և այլն, բայց միայն՝ գրեցի (ոչ երբեք՝ գրեցա), կարդացի, փախա, գտա, բարձրացա և այլն):

Այժմ անցյալ կատարյալ ժամանակի իմաստի մասին:

Անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում առանց որևէ տևականության կատարված, ավարտված վերջացած գործողություն, ինչպես՝ «Երեկ ժամի հինգին նա գրեց, կարդաց, աշխատեց, գնաց»։ «Սրաֆիոն Գասպարիչը թաշկինակը շարժեց, դրամները հնչեցին: Արծաթի ախորժալուր ձայնն էլեկտրական տոկի պես անցավ խոժանի մարմնով, ցնցեց նրան: Նա շարժվեց, դրդաց, դիմեց դեպի թաշկինակը» (Շիրվ.): «Դու անհոգ նայեցիր իմ վրա Ու անցառ քո խաղով կանացի. Ես քեզնից դառնացած հեռացա, Ես քեզնից հեռացա ու լացի» (Տեր.): «Ես վազեցի ձորը, մտա գետակն ու սկսեցի շոշափել քարերը: Ես այդպիսի քարեր գտա, դարսեցի դուլիի մեջ, շուր լցրի վրան ու ֆայլեցի գետակն ի վեր: Անտառը վերջացավ, գետակի գույնն ավելի պայծառացավ» (Անան.):

Անցյալ կատարյալ ժամանակը տարբերվում է անցյալ ժամանակահատված արտահայտող մյուս ժամանակներից:

Իր իմաստով անցյալ կատարյալը նախ տարբերվում է անցյալ անկատարից: Եթե անցյալ անկատար ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում տևական, հարածիգ, ընթացքի մեջ գտնվող գործողություն, ապա անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում կատարված-ավարտված գործողություն

առանց որևէ տևականության, ինչպես՝ Երեկ ժամի 8-ին նա գրում էր՝ գրեց, կարդում էր՝ կարդաց, գեկուցում էր՝ գեկուցեց, նաշում էր՝ նաշեց, նկարում էր՝ նկարեց և այլն:

Եթե իմաստային մյուս տարբերությունները հաշվի չառնենք, ապա կարող ենք ասել, որ անցյալ կատարյալն ու անցյալ անկատարը, ինչպես դրանց անվանումներն են արդեն ցույց տալիս, կերպային հակադրություն են կազմում: Առաջինը կատարյալ կերպ ունի, այսինքն շեշտում է գործողության վերջը, ավարտվածությունը, իսկ երկրորդը անկատար կերպ ունի, այսինքն արտահայտում է գործողությունն իր ընթացքի, տևականության մեջ, և գործողության վերջը չի երևում:

Անցյալ կատարյալը տարբերվում է նաև վաղակատարից ու անցյալի վաղակատարից: Եթե վաղակատարի դեպքում խոսողը միշտ նըկատի ունի ներկա ժամանակակետը, որի նկատմամբ գործողությունը ներկայացվում է որպես ավարտված, ինչպես՝ «Հիմա, երբ խոսում եմք, նա գնացել է», իսկ անցյալի վաղակատարի դեպքում խոսողը միշտ նըկատի ունի մի անցյալ ժամանակակետ, որի նկատմամբ գործողությունը ներկայացվում է որպես ավարտված, ինչպես՝ «Երեկ, երբ մենք խոսում էինք, նա գնացել էր», ապա անցյալ կատարյալի դեպքում խոսողը մի անցյալ ժամանակակետում գործողությունը ներկայացնում է որպես առանց որևէ տևականության կատարված-վերջացած, ինչպես՝ «Երեկ նա գնաց»:

Մյուս կողմից՝ անցյալ կատարյալը, ինչպես նշված է արդեն, տարբերվում է վաղակատարից ու անցյալի վաղակատարից նրանով, որ անցյալ կատարյալը, որպես կանոն, ակնհայտեսի ժամանակ է:

**ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.— Ըղձական եղանակն ունի երկու գլխավոր կամ բացարձակ և վեց (2×3=6) երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր, որոնք ներկայացնում են հետևյալ ընդհանուր պատկերը.

Գ լ խ ա վ ո Ր կ ա մ բ ա ց ա Ր ձ ա կ  
 ժ ա մ ա ն ա կ ա ձ լ ե Ր  
 գ ն ա մ  
 գ ն ա յ ի

Ե Ր կ Ր Ո Ր դ ա կ ա ն կ ա մ հ ա Ր ա բ ե Ր ա կ ա ն  
 ժ ա մ ա ն ա կ ա ձ լ ե Ր

գ ն ա լ ի ս լ ի ն ե մ  
 գ ն ա ց ա ծ լ ի ն ե մ  
 գ ն ա լ ու լ ի ն ե մ

գնալիս լինեի  
գնացած լինեի  
գնալու լինեի

Ըղծականը սուրբկտիվ եղանակներից մեկն է և ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, տենչանք, փափագ, ըստ որում, գնամ շարքի բայաձևերը իղձ, ցանկություն են ցույց տալիս խոսողի ներկայում, ուստի և դրանք իրենց բնավորությամբ ներկայի հատկանիշ ունեն, իսկ գնայի շարքի բայաձևերը իղձ, ցանկություն են ցույց տալիս մի անցյալ ժամանակում, ուստի և դրանք իրենց բնավորությամբ անցյալի հատկանիշ ունեն: Սակայն քանի որ ցանկալի գործողությունը ըստ բովանդակության, կատարման տեսակետից միշտ ապառնի է, ուստի և գնամ շարքի բայաձևերին տրվում է (ներկայի) ապառնի, իսկ գնայի շարքի բայաձևերին՝ անցյալի ապառնի անվանումը:

ԱՊԱՐՆԻ ԺԱՄԱՆԱԿ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Ըղծականի ապառնի ժամանակը կազմվում է անկատարի հիմքով և համապատասխան դիմաթվանիշ վերջավորություններով:

Ըղծական ապառնի վերջավորություններն են.

ե զ ա կ ի	հ ո գ ն ա կ ի
Մ	նՔ
Ս	Ք
Օ	ն

Այս վերջավորությունները ըստ առաջին և երկրորդ խոնարհումների՝ Ծ և Ա լծորդ ձայնավորների հետ միասին համապատասխանաբար դրվում են անկատարի հիմքի վրա, միայն առաջին խոնարհման դեպքում եզակի երրորդ դեմքի լծորդի Ծ ձայնավորը փոխվում է Ի-ի: Այսպիսով, ստացվում են ըղծական ապառնիի հետևյալ ձևերը.

Ծ խ ո ն ա Ր Հ ու մ	Ա խ ո ն ա Ր Հ ու մ
գրեմ	կարդամ
գրես	կարդաս
գրի	կարդա
գրենք	կարդանք
գրեք	կարդաք
գրեն	կարդան

Ըղծական ապառնիի հիմնական իմաստն այն է, որ ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, փափագ ներկայում, օրինակ՝ «Գնամ, սա՛ր գնամ, գլուխս դնեմ գոգին, մորս կարոտն առնեմ» (Անան.). «Մարդոց ժխորը թողնեմ հեռանամ, կիբ-լցված սրտով նստեմ միայնակ, Գրկեմ վարդերս դալուկ, դժնդակ, Մեռնող վարդերս փայփայեմ ու լամ» (Տեր.). «Այսօր գթանք իրարու, — հեղձ լինեմք ու շամաշենք, Բախտ չտեսնանք ու հեռու Տարիները չհիշենք» (Տեր.):

Իրենց արտահայտած իմաստին համապատասխան՝ ըղծականի ձևվերը լայնորեն կիրառվում են ստորադասական նախադասություններում.

Նպատակի երկրորդական նախադասություններում, ինչպես՝ «Նա ձիու սանձը հանեց բերանից, որ լողալու միջոցին ազատ շունչ առնե» (ԲաՖՖի). «Մտանում էին ազայի դիակին, որ տեսնեմ նվիրական ոտնամանները» (Շիրվ.). «Իմաստուն խոսքեր սովորեցի ես, Որ հրապուրեմ զորությունս մթին, Հոգիդ կախառդեմ ու հմայեմ քեզ, Ինձ այրող հուրը նետեմ քո սրտին» (Տեր.). «Շտապում են կշտանալ, որ լուսադեմին գնան անտառի թավուտներում թափվեն» (Անան.):

Պայմանի երկրորդական նախադասություններում, ինչպես՝ «Ըթե հիվանդը կենդանի ձուկ կուլ տա, կկտրի դանակի պես, կամ՝ դես, կամ՝ դեն» (Անան.). «Քե սաղ մնամ, եկող աշունք հարսանիք եմ անելու» (Բակ.). «Որ բամփեն գլխին, տափին կփակչի» (Բակ.). «Աչքովդ էլ տեսնես, չհավատաս» (Անան.):

Խնդրի երկրորդական նախադասություններում՝ ուզել, ցանկանալ, խնդրել, պահանջել, ապսպրել, պատվիրել, պատվեր տալ և իմաստային նույն խմբի մեջ մտնող այլ բայերի պահանջով, ինչպես՝ «Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիթորին տանի քաղաք» (Թում.). «Ուզում է, որ առաջ ես խոսեմ, ուտելիք խնդրեմ» (Անան.). «Հայրդ փափագում էր, որ միայն անունդ խլես նրանցից և այդ օտարազգի կնոջից» (Շիրվ.). «Նրանից պահանջում էին, որ իր ուխտը դոժե, թողնե կնոջը, ձգե զավակներին» (Շիրվ.). «Ապսպրեց, որ Համբոն գա» (Թում.). «Սկսեցին համոզել հիվանդին, որ կենդանի ձուկը կուլ տա» (Անան.):

Ուզում եմ գնալ, ցանկանում եմ ասել և նման տիպի կապակցությունների անորոշ դերբայները ժողովրդական լիզվում արտահայտվում են ըղծականի ձևերով՝ ուզում եմ գնամ, ուզում ես գնաս, ուզում է գնա և այլն:

Մեր հին քերականները, նկատի ունենալով ըղծականի միայն այսպիսի կիրառությունները, այս եղանակը կոչում էին ստորադասական:

Ըղծական եղանակի բայաձևերը հաճախ արտահայտում են պատվեր, հորդոր, երբեմն և հրաման, ինչպես՝ «Վախտ ու անվախտ դես ու դեն շրնկնես, ձեռդ ընկած փողը քոռ ու փուչ շանես» (Թում.). «Ինձ մտահան շանես, հա՛... պատվիրեց յացակումած» (Խանդ.). «Մինչև կրակն իջնելը ե՛կ մի քանի հատ էլ բռնեմք, խորովեմք ուտենք ու գնանք





հանգստանայիր» (Տեր.)։ «Լիներ, այնպես լինեք, որ ինքը հնձվոր լինեք, նրանց արտը հեծեք, Սոնան հաց բերեք իրեն, շապիկը ջրտներ ու բրդտնած նստեք կողքին» (Բակ.)։

### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԵՆԹԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԿԸ-ՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ.— Արևելահայ գրական լեզվի ԿԸ-ով կազմված բայաձևերի եղանակային բովանդակության հարցը հայ բերականության պատմության մեջ տարակարծություններ ու վեճերի առիթ է տվել և է՛։

Այսպես, Ստ. Պալասանյանը ԿԸ-ով կազմված ապառնիի ձևերը (կգնամ, կգնաս, կգնա) դնում է սահմանականի մեջ, իսկ անցյալի ապառնիի ձևերը (կգնայի, կգնայիր, կգնար) համարում է առանձին եղանակ՝ պայմանական եղանակ<sup>40</sup>։ Ելնելով այն դրույթից, որ կգնամ շարքի ձևերը հիմնականում արտահայտում են ներկա, իսկ կգնայի շարքի ձևերը՝ անցյալ ժամանակ՝ Մ. Աբեղյանն այն դրույթն է զարգացնում, թե ԿԸ-ով կազմված բայաձևերը ենթադրական գործողություն են արտահայտում. այստեղից էլ այս բայաձևերի ենթադրական եղանակ հորջորջումը<sup>41</sup>։ Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի քերականություններում, բացի ենթադրական գործողության արտահայտումից, ԿԸ-ով կազմված բայաձևերի հիմնական եղանակային բովանդակությունն է համարվում նաև պայմանական գործողության արտահայտումը, և, այսպիսով, այս բայաձևերն անվանվում են պայմանական կամ ենթադրական եղանակի ձևեր<sup>42</sup>։ Ս. Աբրահամյանը, անդրադառնալով այդ հարցին, գալիս է այն եզրակացությանը, որ ԿԸ-ով բայաձևերը ըստ եղանակային բովանդակության սահմանական են<sup>43</sup>։ Հ. Բարսեղյանը քննարկվող հարցի մասին գրում է. «Պայմանական կամ ենթադրական եղանակը ցույց է տալիս խոսքի մոմենտից հետո կամ մի անցյալ ժամանակակետում կատարվելիք գործողություն, որի կատարման իսկությունը խոսողը հավաստում է հաստատ համոզմունքով, հաճախ էլ պայմանով կամ ենթադրաբար»<sup>44</sup>։ Պ. Պողոսյանը ԿԸ-ով կազմված բայաձևերին տալիս է կատեգորիկական եղանակ հորջորջումը։ Կատեգորիկական եղանակի բայաձևերն արտահայտում են «գործողության նկատմամբ խոսողի կատեգորիկ հաստատական կամ ծխտական վերաբերմունքը»<sup>45</sup>։ Վրացի հայագետ Շիրակաձեն քննարկվող հարցը լուծում է Ստ. Պալասանյանի նման՝ կգնամ

շարքի ձևերը համարելով սահմանական, իսկ կգնայի շարքի ձևերը՝ պայմանական եղանակի ձևեր<sup>46</sup>։ Է. Աղայանը գտնում է, որ ԿԸ-ով կազմված բայաձևերը մտնում են սահմանական եղանակի մեջ<sup>47</sup>։

Նշելով, որ ԿԸ մասնիկը կարող է դրվել միայն ըղձական բայաձևերի վրա՝ Գ. Զահուկյանը գրում է. «Այն ցույց է տալիս հաղորդողի կողմից հաստատաբար, որոշակիորեն ենթադրվող եղելություն։ Օգտագործելով ավանդական անվանումը՝ կ(ը)-ով օժտված բայաձևերը կարելի է կոչել ենթադրական։ Քանի որ կ(ը)-ն հաստատ, որոշակի ենթադրություն արտահայտող մասնիկի արժեք ունի, ուստի կ(ը)-ով օժտված կ(ը) գնամ, կ(ը)գրեմ տիպի բայաձևերը սահմանական եղանակի արժեք են ստանում, մանավանդ որ որպես հավաստի արձանագրվող յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն ենթադրական է։ Մյուս կողմից՝ յուրաքանչյուր ենթադրություն հենվում է որոշ պայմանի վրա, ուստի և առանց կ(ը)-ի (ըղձական) ձևերի հետ զուգորդվելու դեպքում՝ վերջիններս արտահայտում են պայման, կ(ը)-ով (ենթադրական) ձևերը՝ որոշ պայմանով կատարելի եղելություն (հմտ. «Եթե գա, կգնամ» կամ «Եթե գար, կգնայի»)։ այստեղից էլ ծագում է կ(ը)-ով ձևերի պայմանական անվանումը»<sup>48</sup>։

Հարց է առաջանում. ինչպե՞ս կողմնորոշվել այս կարծիքների մեջ, վերջիվերջո ո՞րն է ԿԸ-ով կազմված ձևերի եղանակային բովանդակությունը։

Հայ քերականների՝ ԿԸ-ով կազմված բայաձևերի մասին արտահայտած կարծիքներից համենայն դեպս կարելի է եզրակացնել, որ կգնամ, կգնայի շարքերի ձևերը եղանակային տեսակետից բազմիմաստ ձևեր են։ Եթե մի կողմ թողնենք պայմանական եղանակային իմաստը, որը ոչ թե բխում է ԿԸ-ով կազմված բուն բայական ձևերից, այլ պայմանավորված է շարահյուսական հատուկ կառուցվածքով, օրինակ՝ «Եթե գաս, կանեմ», «Եթե գայիր, կանեի» (այսպիսի պայմանականություն կարող է արտահայտվել նաև սահմանականի ձևերով, ինչպես՝ «Եթե գաս, անելու եմ», «Եթե գայիր, անելու էի»), ուրեմն և եղանակի ձևաբանական արտահայտություն համարվել չի կարող, ապա ԿԸ-ով կազմված բայաձևերը առնվազն արտահայտում են եղանակային հետևյալ իմաստները։

ա) Հաստատողական եղանակի իմաստ, երբ ԿԸ-ով կազմված ձևերը արտահայտում են ապառնիի գաղափար։ Այդ դեպքում նրանք ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ խոսողի կարծիքով, նրանց համար հիմունքով հաստատ, անվերապահորեն կատարվելու է ներ-

<sup>40</sup> Տե՛ս Ստ. Պալասանյան, Քերականության մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906։  
<sup>41</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։  
<sup>42</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։  
<sup>43</sup> Տե՛ս ԳԱՏ, 1953, № 9։  
<sup>44</sup> Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 251։  
<sup>45</sup> Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները, էջ 32։

<sup>46</sup> Տե՛ս «Լեզվի և ոճի հարցեր», 2, Երևան, 1964, էջ 205, 209։  
<sup>47</sup> Տե՛ս Է. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3։  
<sup>48</sup> Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 246։

կա կամ անցյալ ժամանակակետերից հետո: Իրենց արտահայտած իմաստով ԿԸ-ով կազմված բայաձևերը հավասարվում են սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի ձևերին՝ միայն այն տարբերությամբ, որ սահմանական ձևերի մեջ խոսողի անձնական վերաբերմունքը չի դրսևորվում, իսկ ԿԸ-ով կազմված ձևերի մեջ դրսևորվում է, և եղելու-թյունները ներկայացվում են որպես անվերապահորեն, անպայմանորեն կատարելի, ինչպես՝ նա գնալու է: Նա կգնա. Վաղը նա գնելուցում է կտրադուլու: Վաղը նա գնելուցում կկտրադուլու: Նշենք նաև այն, որ սահմանական և հաստատողական իմաստները իրար շատ մոտ իմաստներ են, և այդ իսկ պատճառով էլ ԿԸ-ով ձևերը այդ իմաստով գործածվելիս ազատ կարող են փոխարինվել սահմանական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ձևերով:

բ) Ենթադրական եղանակի իմաստ, երբ ԿԸ-ով կազմված բայա-ձևերը, առանց ապառնիության գաղափարի, արտահայտում են ներկա-յի (և անցյալի) իմաստ, օրինակ՝ նա այդ մասին կիմանա (այժմ). նա տեսեսող է եղել, փող կունենա և այլն:

գ) Սահմանական եղանակի իմաստ, երբ ԿԸ-ով կազմված բայա-ձևերը կիրառվում են ներկա և անցյալ անկատար ժամանակների իմաստով որպես սովորության, կրկնության ներկա և անցյալի անկատար, օրինակ՝ Առավոտյան վեր կկենա, շտապ մի կտոր հաց կուտի ու կըշտապի դաշտ. Առավոտյան վեր կկենա, շտապ մի կտոր հաց կուտե ու կըտապե դաշտ:

Հարց է առաջանում՝ այս երեք եղանակային առումներից ո՞րն է գլխավորն ու հիմնականը: Կարծում ենք, որ հարցը երկրնտրանք չի կարող առաջացնել: Եթե նկատի ունենանք, որ ԿԸ-ով կազմված բայա-ձևերը ենթադրական եղանակի իմաստ են արտահայտում, երբ նրանց մեջ մարում է ապառնիության գաղափարը, իսկ սահմանական եղա-նակի իմաստ են արտահայտում, երբ երկրորդաբար կիրառվում են որ-պես կրկնության, սովորության ներկա և անցյալ անկատար, ապա պարզ կդառնա, որ ԿԸ-ով կազմված բայաձևերի եղանակային հիմնական ի-մաստը հաստատողական իմաստն է, ուրեմն և դրանք կարելի է կոչել հաստատողական եղանակի բայաձևերը: Բայց մենք, հետևելով ավան-դույթին, գործածում ենք «պայմանական կամ ենթադրական եղանակ» անվանումը:

Ենթադրական եղանակը, ըղձականի նման, ունի երկու գլխավոր կամ բացարձակ և վեց երկրորդական կամ հարաբերական ժամանա-կային ձևեր, որոնք ներկայացնում են հետևյալ ընդհանուր պատկերը:

Գլխավոր կամ բացարձակ  
 ժամանակաձևեր  
 կգնամ  
 կգնայի

Երկրորդական կամ հարաբերական  
 ժամանակաձևեր

գնալիս կլինեմ  
 գնացած կլինեմ  
 գնալու կլինեմ  
 գնալիս կլինեի  
 գնացած կլինեի  
 գնալու կլինեի

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Այսպես կոչված պայ-մանական կամ ենթադրական եղանակի ապառնի ժամանակի ձևերը, ինչպես առիթ ենք ունեցել նշելու, կազմվում են ըղձականի ապառնիի ձևերից, որոնց վրա սկզբից ավելանում է Կ (ձայնավորով սկսվող բա-յերի դեպքում) կամ ԿԸ (բաղաձայնով սկսվող բայերի դեպքում) մաս-նիկը: Այսպիսով, ստացվում են հետևյալ ձևերը.

Ե խ ո ն ա Ր հ ու մ	Ա խ ո ն ա Ր հ ու մ
կգրեմ	կկարդամ
կգրես	կկարդաս
կգրի	կկարդա
կգրենք	կկարդանք
կգրեք	կկարդաք
կգրեն	կկարդան

Այս բայաձևերի հիմնական իմաստն այն է, որ ցույց են տալիս մի գործողություն, որ խոսողի ունեցած հիմունքով հաստատ, անվե-րապահորեն կատարվելու է խոսքի պահից հետո ընկնող մի ժամանա-կահատվածում, ինչպես՝ «Դու չես հավատում, Սամվել, բայց շուտով կտեսնես, որ այդ բոլորը կկատարվի» (Բաֆֆի). «Վաղը նա կպկաների, կթեցանում է կնոջն ու ևրեխաներին բերել Մոսկվայից: Այրին, ի-հարկե, կգայրանա, կաղերսե, բայց փույթ չէ, հետո կամա-ակամա կըն-տելանա իր հարսին ընդունելու մտքի հետ» (Շիրվ.). «Էլի գարուն կգա, կբացվի վարդը, Սիրեկանը էլի յարին կմնա, կփոխվին տարիքը, կփոխ-վի մարդը, Բլբուլի երգն էլի սարին կմնա» (Զար.). «Կշարժեմ նորից վի մարդը, Բլբուլի երգն էլի սարին կմնա» (Չեր.). «Կշարժեմ նորից բայլերս տարտամ, կապտերներին հեզ լույսը կգրկեմ, Զվարթ անցորդին ուրախ կժպտամ, Ինքս ինձ կերգեմ» (Տեր.):

Ենթադրական եղանակի ապառնիի ձևերը առանձին դեպքերում կի-րառվում են ենթադրական, հավանական, կարելիական եղելու-թյուններ

արտահայտելու համար, ինչպես՝ «Այժմ նա տանը կլինի»։ «Որ տասը բարեկամ ունենանք, մի քսան էլ թշնամի կունենանք»։ «Այս դահլիճում հազար մարդ կտեղավորվի»։ «Նա այդ բանն էլ կգիտենա»։ «Վերջերս շի աշխատում, փողի կարիք կունենա»։ «Աշխարհ է. էդպես էլ կպատանի» (Անան.)։ «— Ձմեռը սարի շրերում ձկները կապրե՞ն։ — Խոր լճերում կապրեն (Անան.)»։

Ինչպես նշված է արդեն, ենթադրական եղանակի բայաձևերով արտահայտված այսպիսի եղելությունները վերաբերում են ոչ թե ապառ- նիին, այլ ներկային։

Ենթադրական եղանակի ապառնիի ձևերը հաճախ արտահայտում են այնպիսի եղելություններ, որոնց կատարումը կախված է այս կամ այն պայմանից. եթե պայմանն իրականանա, ապա գործողությունն անվերապահորեն կկատարվի։ Այսպիսի դեպքերում պայմանական բայաձևերը սովորաբար ուղեկցվում են եթե, թե, որ և այլ շաղկապներ ունեցող երկրորդական նախադասություններով, որոնք իրենց կազմում որպես ստորոգյալ սովորաբար ունենում են ըղձական եղանակի բայաձևեր, ինչպես՝ «Որ էդպես բան անի, կգամ, կոնիցը կրոնեմ, էն Քուռը կգցեմ» (Թում.)։ «Եթե բաժանվի այժմյան կնոջից, իրավունք ձեռք բերի ամուսնանալ մի հայ աղջկա հետ, այն ժամանակ նոր կնոջից եղած զավակները կհամարվեն նրա օրինական ժառանգները» (Շիրվ.)։ «էն տեսակ կին, ես իմ հոգին, Թե աշուղն էլ ունենար, Առանց զենքի, Առանց զորքի Շահերի դեմ կզնար։ Միրո հնոց, Կրակ ու բոց— էնպես աչքեր թե ժպտան, Մարդու համար օրվա պես վառ Գիշերները լույս կտան։ Վարդի թերթեր— էնպես շուրթեր, Թե հաղթություն բեզ մաղթեն, էլ բեզ ո՛չ շահ, Ո՛չ ահ ու մահ, Ո՛չ զենք ու զորք կհաղթեն» (Թում.)։

Ենթադրական եղանակի ապառնիի ձևերը հաճախ կիրառվում են սահմանական եղանակի ներկայի բայաձևերի փոխարեն հատկապես որպես սովորույթի, կրկնության, սահմանումի ներկա, ինչպես՝ «Զուկը պոչից շեն բռնի, գլխից կրոնեն» (Անան.)։ «Լավ որսկանը ման շի գալ. նա որսը կպահի, — պատում էր որսկանը» (Թում.)։ «Ամեն օր աշխատանքից հետո կուտի, կխմի, փքված ու կարմրած տուն կգա, կոխվ կսարբի, կվիճի, կգոռգոռա, շատ անգամ էլ տան եղած-չեղածը կտա կջարդի»։

Ենթադրականի երկրորդ դեմքի ձևերը արտահայտում են խոսակցին ուղղված պատվեր, հորդոր, հրաման, ինչպես՝ «էգուց տավարը Միմոնին պահ կտաս, կգաս բակատեղ, հա՛մ հետդ հաց կբերես, հա՛մ մեզ կօգնես» (Անան.)։ «Վաղն առանց այլևայլի կվճարես ուստա Բարսեղին իմ պարտքը, մուրհակը հեռ կվերցնես, ինձ համար կպատաստես հինգ հազար ուրբի։ Ես ունիմ ուրիշ պարտքեր էլ, բոլորը կվճարես ու կգրես իմ հաշվին» (Շիրվ.)։ «Բողալուկ ուկր շարչարում են բեզ, էգուց նախիրը կտանես արոտ» (Թում.)։

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Պայմանական կամ ենթադրական եղանակի անցյալի ապառնի ժամանակի ձևերը կազմվում են ըղձականի անցյալի ապառնիի ձևերից, որոնց վրա սկզբից ավելանում է Կ(ը) եղանակիչ մասնիկը։ Այսպիսով, պայմանականի անցյալի ապառնիի համար ստացվում են հետևյալ ձևերը.

Ե	խ ո ն ար հ ու մ	Ա	խ ո ն ար հ ու մ
կ	գրեի	կ	կարդայի
կ	գրեիր	կ	կարդայիր
կ	գրեր	կ	կարդար
կ	գրեինք	կ	կարդայինք
կ	գրեիք	կ	կարդայիք
կ	գրեին	կ	կարդային

Այս բայաձևերն ունեն պայմանական կամ ենթադրական ապառնիի եղանակաժամանակային տոումները, միայն անցյալի նշանակությամբ, ուստի և այս ձևերի վրա առանձին կանգ առնելու անհրաժեշտություն չկա։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ անցյալի ապառնիի ձևերը կարող են գործածվել ապառնիի իմաստով, երբ եղելությունների կատարումը պետք է ներկայացնել որպես քիչ հավանական կամ ուղղակի անհավանական (հիշենք ըղձականի անցյալի ապառնիի գործածությունը ապառնիի իմաստով), ինչպես՝ «Մի ձուկ լինիր, ի՛նչ կուտի»։ «Ա՛խ, մի նրան կտեսնեի՛», շան լափը կթափեի գլխին, կխայտառակեի»։

Մի կողմ թողած մյուս կիրառությունները՝ նշենք, որ հատկապես շատ է տարածված հաստատողականի անցյալի ապառնիի ձևերի կիրառությունը որպես սովորույթի կամ կրկնության անցյալ անկատար, ինչպես՝ «Անտառում հանկարծ կերևա, փայտահատի կողքին կկանգնե, կնայե, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը։ Մեկ էլ եր, կնայե, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը։ Մեկ էլ թաքստոցից դուրս կգա, կմոնչաւ աչքես, որ արջերն էլ էին թաքստոցից դուրս գալիս ու որջերում մոռում» (Բակ.)։ «Կնստեր իր տեղը, կկոթեն հոնի կարմիր մահակին, գլուխը մի կողմի վրա կթեփե և եթե զրուցընկեր շունենար, ինքն իրեն կխոսե և թթի տակ կծպար» (Բակ.)։

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.— Հարկադրական կամ անհրաժեշտական եղանակի բայաձևերը ցույց են տալիս հարկադրական կամ անհրաժեշտական գործո-

ղություն: Հարկադրականի ձևերը կազմվում են ըղձականից, որոնց վրա սկզբից ավելանում է ՊԻՏԻ կամ ՊԵՏՔ է եղանակիչը: Այսպիսով, հարկադրական եղանակը ևս ունենում է երկու գլխավոր կամ բացարձակ և վեց երկրորդական կամ հարաբերական ժամանակաձև:

Գլխավոր կամ բացարձակ  
 ժամանակներ  
 պիտի գնամ  
 պիտի գնայի

Երկրորդական կամ հարաբերական  
 ժամանակներ

գնալիս պիտի լինեմ  
 գնացած պիտի լինեմ  
 գնալու պիտի լինեմ  
 գնալիս պիտի լինեի  
 գնացած պիտի լինեի  
 գնալու պիտի լինեի

**Ապառնի ժամանակ**

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Հարկադրականի ապառնի ժամանակը կազմվում է ըղձական եղանակի ապառնիի ձևերից, որոնց վրա սկզբից ավելանում են ՊԻՏԻ կամ ՊԵՏՔ է եղանակիչ բառ-մասնիկները: Այսպիսով, ստացվում են հարկադրականի ապառնիի հետևյալ ձևերը:

Ե խ ո ն ար հ ու մ	Ա խ ո ն ար հ ու մ
պիտի գրեմ	պիտի կարդամ
պիտի գրես	պիտի կարդաս
պիտի գրի	պիտի կարդա
պիտի գրենք	պիտի կարդանք
պիտի գրեք	պիտի կարդաք
պիտի գրեն	պիտի կարդան

Նույն իմաստն են արտահայտում նաև պետք է գրեմ, պետք է կարդամ ձևերը:

Հարկադրականի ապառնի ժամանակը ցույց է տալիս մի գործողություն, որ խոսողի ներկայացմամբ անհրաժեշտաբար, հարկադրաբար պետք է կատարվի խոսելու պահից հետո, ինչպես՝ «Աշուղ Սայաթ-Նովի նման ես երգ ու տաղ պիտի ասեմ, Երգեմ պիտի գիշեր-ցերեկ—

ես սրտի խաղ պիտի ասեմ» (Չար.). «Ծ'ս և միայն ե'ս պիտի կրեմ նրա պատիժը» (Շիրվ.). «Ժառանգության մի մասը պիտի ստանա իր կինը» (Շիրվ.). «Ծս պեսս' է շարունակեմ իմ ճանապարհը» (Բաֆֆի). «Պետք է կորցնեմ քեզ էնքան հեռու, Որ էլ շտեսնես արևը լոռու» (Թում.). «Յոթ տերություն իրար պիտի խառնվեն, հացը պիտի քանկանա, թագավորի խարջը շատանա» (Բակ.):

**ԱՆՑՑԱԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ**

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Հարկադրականի անցյալի ապառնի ժամանակը կազմվում է ըղձական եղանակի անցյալի ապառնիի ձևերից, որոնց վրա սկզբից ավելանում են ՊԻՏԻ կամ ՊԵՏՔ է բառ-մասնիկները: Այսպիսով, ստացվում են հարկադրականի անցյալի ապառնիի հետևյալ ձևերը:

Ծ խ ո ն ար հ ու մ	Ա խ ո ն ար հ ու մ
պիտի գրեի	պիտի կարդայի
պիտի գրեիր	պիտի կարդայիր
պիտի գրեր	պիտի կարդար
պիտի գրեինք	պիտի կարդայինք
պիտի գրեիք	պիտի կարդայիք
պիտի գրեին	պիտի կարդային

Նույն իմաստն են արտահայտում նաև պետք է գրեի, պետք է կարդայի ձևերը:

Հարկադրականի անցյալի ապառնի ժամանակը ցույց է տալիս մի գործողություն, որ հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի էր մի անցյալ ժամանակակետում, ինչպես՝ «Այդ օրերին նա պիտի գնար լեռան մյուս լանջը բուրդ գնելու» (Անան). «Ծս նրան պիտի ուղեկցեի ուսն աշուղ նրա ձին պիտի պանեի, մինչև պապս ներկայանար պրիս-տավին» (Բակ.). «Նա պետք է շատ տեղեր գնար, շատ երկրներին անց-տավին» (Բակ.). «Նա պետք է շատ տեղեր գնար, շատ երկրներին անց-տավին» (Բակ.). «Նրան պիտի հանձնեի իր բոլոր գործերը» (Շիրվ.). «Մի տարուց ետք բազազը նրան պետք է տաներ դուքան, շինեի «դուքանի աշկերտ», ու էսպես Գիբորը պետք է բարձրանար» (Թում.):

**ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Հրամայական եղանակն ունի մեկ գլխավոր կամ բացարձակ և երեք երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր:

Գ լ ի ս ա վ ո Ր Կ ա մ Բ ա ց ա Ր Ճ ա Կ  
Ժ ա մ ա ն ա Կ  
զ ն ա

Ծ Ր Կ Ր Ո Ր Դ ա Կ ա ն Կ ա մ Կ ա Ր ա Բ Ե Ր ա Կ ա ն  
Ժ ա մ ա ն ա Կ ն Ե Ր

զ ն ա լ ի ս Ե Ղ ի Ր  
զ ն ա ց ա ծ Ե Ղ ի Ր  
զ ն ա լ ու Ե Ղ ի Ր

Հրամայական եղանակն ունի միայն եզակի և հոգնակի թվերի երկրորդ դեմք: Ստորև ներկայացվում է հրամայական եղանակի բայաձևերի կազմության նկարագրությունը առանց նկատի ունենալու երկրորդական ժամանակաձևերը, քանի որ դրանց կազմության սկզբունքն արդեն ներկայացվել է երկրորդական վերլուծական ժամանակների քննության կապակցությամբ:

Հրամայական եղանակի եզակիի ձևերը կազմվում են իՐ, Ա և ՈՒ վերջավորություններով:

ԻՐ վերջավորությունն են ստանում Ծ խոնարհման պարզ ու սոսկածանցավոր և Ա խոնարհման սոսկածանցավոր բայերը, ըստ որում Ծ խոնարհման պարզ բայերն այդ վերջավորությունն ստանում են անկատարի, իսկ մյուս բոլոր բայերը՝ կատարյալի հիմքի վրա:

Հրամայական եզակիի կազմությունն իՐ վերջավորությամբ

գրել—գր—գրիր  
գտնել—գտ—գտիր  
փախչել—փախ—փախիր  
բարձրանալ—բարձրաց—բարձրացիր  
մոտենալ—մոտեց—մոտեցիր

Ժողովրդական լեզվում հրամայականի այս ձևերի Ր վերջնահնչյունն ընկնում է, և ստացվում են գրի, գտի, փախի և այլ ձևերը:

Հրամայական եզակիում Ա վերջավորությունն են ստանում Ա խոնարհման պարզ բայերը, ըստ որում՝ վերջավորությունը դրվում է անկատարի հիմքի վրա:

Հրամայական եզակիի կազմությունն Ա վերջավորությամբ

կարդալ—կարդ—կարդա  
մնալ—մն—մնա  
զգալ—զգ—զգա

Հրամայական եզակիում ՈՒ վերջավորությունն են ստանում պատճառական բայերը. դա դրվում է կատարյալի հիմքի վրա:

Հրամայական եզակիի կազմությունն ՈՒ վերջավորությամբ

բարձրացնել—բարձրացր—բարձրացրու  
մոտեցնել—մոտեցր—մոտեցրու  
փախցնել—փախցր—փախցրու

Բոլոր բայերի հոգնակի հրամայականը կազմվում է ԾՔ վերջավորությամբ, որ բոլոր տիպերի դեպքում դրվում է կատարյալի հիմքի վրա:

Հրամայական հոգնակիի կազմությունը

գրել—գրեց—գրեցեք  
սիրել—սիրեց—սիրեցեք  
գտնել—գտ—գտեք  
փախչել—փախ—փախեք  
կարդալ—կարդաց—կարդացեք  
բարձրանալ—բարձրաց—բարձրացեք  
բարձրացնել—բարձրացր—բարձրացրեք  
մոտեցնել—մոտեցր—մոտեցրեք  
փախցնել—փախցր—փախցրեք

Ծ խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը ժողովրդախոսակցական լեզվում կաղմվում է նաև անկատարի հիմքից, և, այսպիսով, ստացվում են գրեմք, սիրեմք, կառաբեմք, խոսեմք և այլ ձևերը, որոնք խոսակցական լեզվի ազդեցությամբ ավելի ու ավելի են տարածվում:

Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս խոսակցին ուղղված հրաման, կարգադրություն, պատվեր, հորդոր, խնդրանք և արտասանվում են հատուկ հնչերանգով, որը գրավոր լեզվում սովորաբար նշվում է շեշտով: Թե հրամայականի ձևերը այս իմաստներից հատկապես ո՞րն են արտահայտում, որոշվում է շարահյուսական կապակցությամբ: Օրինակներ.

«Կատարի՛ր նախ և առաջ հորդ կտակի գլխավոր կետը. բաժանվի՛ր կնոջից ու երեխաներից» (Շիրվ.). «Ազատվի՛ր հորդ անեծքից, որդի՛, ազատվի՛ր և մեզ էլ ազատի՛ր,— կրկնեց նա հարյուր անգամ կրկնածը» (Շիրվ.). «Քո պայծառ գահից մեղմորեն իջի՛ր, մագերդ փոխի՛ր հոգնատանջ կրծքիս, Անուշ երգերով սիրտս պաճուճի՛ր, Ցնորք հուշերով ամուսնից կրծքիս, Անուշ երգերով սիրտս պաճուճի՛ր, Ցնորք հուշերով ամուսնից կրծքիս» (Սեբ.). «Սոնա՛ ջան, խմի՛ր, որ լավանաս» (Անան.). «Վե՛ր էի՛ր հոգիս» (Տեբ.). «Սոնա՛ ջան, խմի՛ր, որ լավանաս» (Անան.).

կաց, բալա՛ ջան, քիչ մնաց, — հնչեց մորս աղաչական ձայնը» (Անան.) — «Աղչի՛, պղինձը ջուր լցրեմ բերեմ, կրակն ամեմ տաքանան» (Քում.):

### Քայի խոնարհման հարացույցի ընդհանուր նկարագիրը

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑ ՄԱՆՐԱԿԱՎՂԱ-ՊԱՐՆԵՐԸ.— Բայական ձևերի կազմության քննությունից հետո կարելի է ներկայացնել բայի խոնարհման ընդհանուր համակարգը կամ հարացույցը:

Ինչպես տեսանք, խոսքի մեջ հանդես գալով իր հիմնական պաշտոնով՝ ստորոգյալի պաշտոնով՝ բայը զանազան փոփոխությունների է ենթարկվում՝ կազմելով եղանակների, ժամանակների, դեմքերի ու թեվերի համակարգ: Բայի փոփոխությունը ըստ եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի կոչվում է խոնարհում:

Բայի խոնարհումը կատարվում է որոշակի օրինաչափություններով, համակարգային բնույթ ունի և անմիջաբար կապված է նրա կազմության հետ:

Ինչպես նշված է արդեն, արդի հայերենի բայաձևերի ելակետ է ընդունված անորոշ դերբայը, որը վերջավորվում է պարզ ԾԼ (գրել), ԱԼ (կարդալ), սոսկածանցավոր ՆԾԼ (գտնել), ՉԾԼ (փախչել), ԱՆԱԼ (մեծանալ), ԵՆԱԼ (մոտենալ), պատճառական ՑՆԾԼ (փախցնել), կրավորական ՎԾԼ (գրվել, կարդացվել), բազմապատկական ԱՏԾԼ, ՈՏԾԼ (կրտրատել, ջարդոտել) և այլ ձևերով: Ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում անորոշ դերբայն ունենում է ԾԼ կամ ԱԼ ածանցները, ըստ որում անորոշ դերբայի բուն ածանցն է Լ-ն, իսկ Ե և Ա հնչյունները լծորդ ձայնավորներ են կամ «խոնարհիչներ»: Այս տեսակետից աշխարհաբարում պարզվել է գրաբարյան խոնարհման պատկերը: Գրաբարում հանդես էին գալիս Ե (գրեմ), Ի (գրիմ), Ա (աղԱմ), ՈՒ (զգենՈՒմ) և Ո (միայն մի բայի մեջ՝ գՈմ) խոնարհիչները:

Արդեն առիթ ենք ունեցել ասելու, որ ըստ անորոշ դերբայի կազմության ժամանակակից հայերենում տարբերակվում է երկու խոնարհում՝ Ե կամ առաջին խոնարհում և Ա կամ երկրորդ խոնարհում: Ե կամ առաջին խոնարհման են պատկանում անորոշում ԾԼ վերջավորվող բայերը, Ա կամ երկրորդ խոնարհման են պատկանում անորոշում ԱԼ վերջավորվող բայերը: Սակայն և՛ ԾԼ, և՛ ԱԼ վերջավորվող բայերի մեջ, ընդհանրություններով հանդերձ, նկատվում են ձևերի կազմության զգալի տարբերություններ, որոնք և թույլ են տալիս առաջին խոնարհման մեջ ընդունելու երեք մանրակաղապարներ՝ Ե խոնարհման պարզ բայեր (գրել), Ե խոնարհման սոսկածանցավոր բայեր (գտնել, փախչել) և պատճառական բայեր (վազեցնել, բարձրացնել, փախցնել), իսկ երկրորդ խոնարհման մեջ՝ երկու մանրակաղապարներ՝ Ա խոնարհման պարզ բա-

յեր (կարդալ) և Ա խոնարհման սոսկածանցավոր բայեր (մեծանալ, մոտենալ): Իսկ ինչ վերաբերում է կրավորական ու բազմապատկական բայերին, օրինակ՝ գրվել, կարդացվել, ջարդոտել, կտրատել և այլն, ապա դրանք խոնարհման առանձին մանրակաղապարներ չեն կազմում, իրենց ձևերը կանոնավոր կերպով կազմում են Ե խոնարհման պարզ բայերի նման, ուստի և դրանց վրա առանձին կանգ առնելու հարկ չկա, և Ե խոնարհման պարզ բայերի մասին ասվածները հավասարապես կվերաբերեն նաև դրանց:

### Ե ԿԱՄ ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

ԸՆԴՉԱՆՈՒՐ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ե կամ առաջին խոնարհումն ընդգրկում է արդի հայերենի բայերի բացարձակ մեծամասնությունը: Ըստ Ն. Բարսեղյանի կազմած բայացանկի տվյալների, որում ընդգրկված են միայն պարզ և սոսկածանցավոր բայերը, առաջին խոնարհման են պատկանում ժամանակակից հայերենի բայերի մոտ երկու երրորդ մասը: Եթե նկատի ունենանք նաև այն, որ առաջին խոնարհման են պատկանում նաև բոլոր պատճառական, կրավորական ու բազմապատկական բայերը, ապա առաջին և երկրորդ խոնարհումների փոխհարաբերությունն ավելի ևս կփոխվի հօգուտ Ե խոնարհման՝ կազմելով բայերի մոտ երեք քառորդ մասը:

Ինչպես նշված է արդեն, Ե խոնարհման բայերը, ըստ ձևակազմական որոշակի առանձնահատկությունների, ստորաբաժանվում են երեք մանրակաղապարների՝ պարզ բայեր, որոնց հետ իրենց կազմությամբ միավորվում են նաև կրավորական ու բազմապատկական բայերը, սոսկածանցավոր բայեր և պատճառական բայեր:

Ստորև բնութագրվում են այս երեք խմբերի ձևակազմական առանձնահատկությունները:

### Ե խոնարհման պարզ բայեր

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՌԱՋԻՆ ՍՈՍԿԱԾԱՆԳԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ՁԱԿԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՃՆԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ե խոնարհման պարզ (նաև կրավորական ու բազմապատկական) բայերի ձևակազմական առանձնահատկությունները հետևյալներն են:

- ա) Անցյալ կատարյալը ցոյական է՝ ԵՅ բաղադրիչով և ունենում է Ի, ԻՐ, Օ, ԻՆՔ, ԻՔ, ԻՆ վերջավորություններ:
- բ) Բայական բոլոր ձևերը, բացի անցյալ կատարյալից և հրամայականի հոգնակից, կազմվում են անկատարի հիմքից, որի պատճառով էլ երբեմն այս բայերը կոչվում են միաբուն բայեր:
- գ) Հրամայական եղանակի եզակին կազմվում է անկատարի հիմքից իՐ վերջավորությամբ:

Այսպիսով, այս մանրակաղապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը: Որպես օրինակ բերվում են գրել բայի ձևերը:

**Գերբայներ**

ա) **անկախ**

- Անորոշ — գրել
- Անկատար II — գրելիս
- Հարակատար — գրած
- Ծնթակայական — գրող
- Ապառնի II — գրելիք

բ) **կախյալ**

- Անկատար I — գրում
- Ապառնի I — գրելու
- Վաղակատար — գրել
- Ժխտական — գրի

**Ծղանակային համադրական ձևեր**

անցյալ կատարյալ	հրամայական	
գրեցի	գրեցինք	
գրեցիր	գրեցիք	գրի՛ր
գրեց	գրեցին	գրեցե՛ք

**Ըղծական եղանակ**

ապառնի		անցյալի		ապառնի	
գրեմ	գրենք	գրեի	գրեինք		
գրես	գրեք	գրեիր	գրեիք		
գրի	գրեն	գրեր	գրեին		

Ըղծական ապառնիի և անցյալի ապառնիի ձևերից կ(Ը) և ՊԻՏԻ մասնիկներով կազմվում են ենթադրական և հարկադրական եղանակի ձևերը, ինչպես՝ կգրեմ—կգրեի, պիտի գրեմ—պիտի գրեի:

Վերլուծական ձևերն, ինչպես գիտենք, կազմվում են անկատար, ապառնի ու վաղակատար դերբայներով և օժանդակ բայի ներկայի ու

անցյալի ձևերի միջոցով, ինչպես՝ գրում եմ—գրում էի, գրելու եմ—գրելու էի, գրել եմ—գրել էի: Ուստի և ավելորդ կրկնությունից խուսափելու նպատակով մյուս մանրակաղապարների վերլուծության ժամանակ ինչպես ենթադրական ու հարկադրական ձևերի, այնպես էլ վերլուծական կազմություն ունեցող սահմանական ձևերի մասին այլևս խոսք չի լինելու:

**Ե խոնարհման սովորականացվոր բայեր (Ն. 2 ածանց ունեցող բայեր)**

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ե խոնարհման սովորականացվոր բայերի ձևակազմական առանձնահատկությունները հետևյալներն են:

ա) Կատարյալի հիմքը պարզ արմատական է: Անցյալ կատարյալն ունենում է Ա, ԱՐ, ԱՎ, ԱՆՔ, ԱՔ, ԱՆ վերջավորությունները:

բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար, ենթակայական ու ժխտական դերբայները և ըղծական (հասկանալի է, նաև ենթադրական ու հարկադրական) եղանակի ձևերը:

Կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, հրամայականը և վաղակատար ու հարակատար դերբայները:

գ) Հրամայականի եզակին կազմվում է ԻՐ վերջավորությամբ, որ գրվում է կատարյալի հիմքի վրա:

Այսպիսով, այս մանրակաղապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը: Որպես օրինակ բերվում են գտնել և փախչել բայերի ձևերը:

**Գերբայներ**

ա) **անկախ**

- Անորոշ — գտնել փախչել
- Անկատար II — գտնելիս փախչելիս
- Հարակատար — գտած փախած
- Ծնթակայական — գտնող փախչող
- Ապառնի II — գտնելիք —

բ) **կախյալ**

- Անկատար I — գտնում փախչում
- Ապառնի I — գտնելու փախչելու
- Վաղակատար — գտել փախել
- Ժխտական — գտնի փախի

**Եղանակային համադրական ձևեր**

անցյալ կատարյալ

գտա	գտանք	փախա	փախանք
գտար	գտաք	փախար	փախաք
գտավ	գտան	փախավ	փախան

հրամայական

գտիր	գտեք	փախիր	փախեք
------	------	-------	-------

ըղձական ապառնի

գտնեմ	գտնենք	փախչեմ	փախչենք
գտնես	գտնեք	փախչես	փախչեք
գտնի	գտնեն	փախչի	փախչեն

ըղձական անցյալի ապառնի

գտնեի	գտնեինք	փախչեի	փախչեինք
գտնեիր	գտնեիք	փախչեիր	փախչեիք
գտներ	գտնեին	փախչեր	փախչեին

**Պատճառական բայեր (եՑՆ, ԱՑՆ, ՑՆ ածանց ունեցող բայեր)**

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Պատճառական բայերի ձևակազմական առանձնահատկությունները հետևյալներն են:

ա) Կատարյալի հիմքը բնական է և կազմվում է ն/ր հերթագայությանմբ (բարձրացնել—բարձրացն/բարձրացր, մոտեցնել—մոտեցն/մոտեցր, հագցնել—հագցն/հագցր և այլն): Անցյալ կատարյալն ստանում է Ի, ԻՐ, ԵՑ, ԻՆՔ, ԻՔ, ԻՆ վերջավորությունները:

բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար, ենթակայական ու ժխտական դերբայները և ըղձական եղանակի ձևերը:

Կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, հրամայական եղանակը և վաղակատար ու հարակատար դերբայները:

գ) Հրամայականի եզակին կազմվում է ՈՒ վերջավորությամբ:

Այսպիսով, այս մանրակաղապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը: Որպես օրինակ բերվում են նազգցնել բայի ձևերը:

**Գերբայներ**

ա) անկախ

բ) կախյալ

Անորոշ	— հագցնել	Անկատար I	— հագցնում
Անկատար II	— հագցնելիս	Ապառնի I	— հագցնելու
Հարակատար	— հագցրած	Վաղակատար	— հագցրել
Ենթակայական	— հագցնող	Ժխտման	— հագցնի
Ապառնի II	— (հագցնելիք)		

**Եղանակային համադրական ձևեր**

անցյալ	կատարյալ	հրամայական
հագցրի	հագցրինք	հագցրու
հագցրիր	հագցրիք	հագցրեք
հագցրեց	հագցրին	

**Ըղձական եղանակ**

ապառնի	անցյալի	ապառնի
հագցնեմ	հագցնեի	հագցնեիմ
հագցնես	հագցնեիր	հագցնեիր
հագցնի	հագցնեն	հագցնենի

Պատճառական բայերի ձևային նմանակությամբ՝ այսպես են խոնարհվում նաև լցնել, հառցնել բայերը:

**Ա ԱՄ ԵՐԿՐՈՐԳ ԽՈՆԱՐՀՈՒՄ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ա խոնարհման բայերը, Ե խոնարհման բայերի համեմատությամբ, փոքր թիվ են կազմում: Ըստ ձևակազմական առանձնահատկությունների, ինչպես նշված է արդեն, դրանք բաժանվում են երկու խմբի՝ պարզ բայեր և սոսկածանցավոր բայեր: Ստորև տրվում է այս մանրակաղապարների ձևակազմական առանձնահատկությունների բնութագրերը:

**Ա խոնարհման պարզ բայեր**

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ա խոնարհման պարզ բայերն ունեն ձևակազմական հետևյալ առանձնահատկությունները:

ա) Կատարյալի հիմքը ցոյական է՝ ԱՑ բաղադրիչով: Անցյալ կատարյալը կազմվում է Ի, ԻՐ, Օ, ԻՆՔ, ԻՔ, ԻՆ վերջավորություններով:



բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար, ժխտական դերբայները, ըղձական եղանակը և հրամայականի եզակին: Կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, հրամայականի հոգնակին և վաղակատար, հարակատար ու ենթակայական դերբայները:

գ) Հրամայականի եզակին կազմվում է Ա վերջավորությամբ: Այսպիսով, այս մանրակաղապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը: Որպես օրինակ բերվում են հավատալ բայի ձևերը:

**Դերբայներ**

ա) անկախ	բ) կախյալ
Անորոշ — հավատալ	Անկատար I — հավատում
Անկատար II — հավատալիս	Ապառնի I — հավատալու
Հարակատար — հավատացած	Վաղակատար — հավատացել
Ենթակայական — հավատացող	Ժխտման — հավատա
Ապառնի II — (հավատալիք)	

**Եղանակային համադրական ձևեր**

անցյալ կատարյալ	հրամայական
հավատացի հավատացիք	
հավատացիր հավատացիք	հավատա հավատացեք
հավատաց հավատացին	

**Ըղձական եղանակ**

ապառնի	անցյալի	ապառնի
հավատամ հավատանք	հավատայի հավատայինք	
հավատաս հավատաք	հավատայիր հավատայիք	
հավատա հավատան	հավատար հավատային	

Ա ԽՈՆԱՐՀՄԱՆ ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ  
(ԱՆ ԵՎ ԵՆ ԱԾԱՆՑ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐ)

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ան և են սոսկածանց ունեցող բայերի ձևակազմական առանձնահատկությունները հետևյալներն են:

ա) Կատարյալի հիմքը ցոյական է (բարձրանալ—բարձրան—բարձ-

րաց, մոտենալ—մոտեն—մոտեց և այլն): Անցյալ կատարյալը կազմվում է Ա, ԱՐ, ԱՎ, ԱՆՔ, ԱՔ, ԱՆ վերջավորություններով:

բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար ու ժխտման դերբայները և ըղձական եղանակի ձևերը: Կատարյալի հիմքից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները, անցյալ կատարյալ ժամանակը և հրամայական եղանակի ձևերը:

գ) Հրամայականի եզակին կազմվում է ԻՐ վերջավորությամբ, որը դրվում է կատարյալի հիմքի վրա:

Այսպիսով, այս մանրակաղապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը: Որպես օրինակ բերվում են բարձրանալ և մոտենալ բայերի ձևերը:

**Դերբայներ**

ա) անկախ	
Անորոշ — բարձրանալ մոտենալ	
Անկատար II — բարձրանալիս մոտենալիս	
Հարակատար — բարձրացած մոտեցած	
Ենթակայական — բարձրացող մոտեցող	
Ապառնի II — (բարձրանալիք մոտենալիք)	

**բ) կախյալ**

Անկատար I — բարձրանում մոտենում	
Ապառնի I — բարձրանալու մոտենալու	
Վաղակատար — բարձրացել մոտեցել	
Ժխտական — բարձրանա մոտենա	

**Եղանակային համադրական ձևեր**

անցյալ կատարյալ	
բարձրացա բարձրացանք մոտեցա մոտեցանք	
բարձրացար բարձրացաք մոտեցար մոտեցաք	
բարձրացավ բարձրացան մոտեցավ մոտեցան	

**Հրամայական**

բարձրացիր մոտեցիր բարձրացեք մոտեցեք	
-------------------------------------	--

**Ըզձակաճ եղանակ**

ա պ ա ռ ն ի

բարձրանամ	բարձրանանք	մոտենամ	մոտենանք
բարձրանաս	բարձրանաք	մոտենաս	մոտենաք
բարձրանա	բարձրանան	մոտենա	մոտենան

ա ն ց յ ա լ ի ա պ ա ռ ն ի

բարձրանայի	բարձրանայինք	մոտենայի	մոտենայինք
բարձրանայիր	բարձրանայիք	մոտենայիր	մոտենայիք
բարձրանար	բարձրանային	մոտենար	մոտենային

Խոնարհման այս ընդհանրական ձևերից բացի, ժամանակակից հայերենում կան նաև խոնարհման ավելի մասնակի մանրակաղապարներ, որոնք հատուկ են սակավաթիվ բայերի: Դրանք արդի հայերենի այսպես կոչված անկանոն բայերն են, որոնց խոնարհման նկարագրությունն էլ անցնում ենք այժմ:

**ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**— Քերականական ձևերը, որպես կանոն, որոշակի օրինաչափություններով կազմվող և որոշակի շարքերի մեջ մտնող ձևեր են, որոնք խոսողն ազատ կազմում է կամ կարող է կազմել առանց նախօրոք ուրիշներից լսած լինելու: Այսպես, ենթադրենք մեկն առաջին անգամ է լսում արշավել և սուրալ բայերը: Դրանք լսելուց հետո նա ազատ կարող է կազմել արշավեցի, արշավեցիր, արշավեց, արշավիր, արշավեցեք. սուրացի, սուրացիր, սուրաց, սուրա, սուրացեք և այլ ձևերը: Սա հնարավոր է դառնում այն պատճառով, որ արշավել և սուրալ բայերը ձևերի կազմության իրենց տիպով ու օրինաչափությամբ մտնում են գրել՝ գրեցի—գրեցիր—գրեց—գրիր—գրեցեք, զգալ՝ զգացի—զգացիր—զգաց—զգա—զգացեք և այլն մեծ խմբերի մեջ:

Ահա քերականական այսպիսի ձևերը, որոնք կազմվում են որոշակի օրինաչափություններով, մտնում են որոշակի շարքերի մեջ, այսինքն կազմվում են այլ ձևերի համաբանությամբ, կոչվում են կանոնավոր ձևեր:

Սակայն կան առանձին քերականական ձևեր, որոնք որոշակի շարքերի մեջ չեն մտնում, այլ ձևերի համաբանությամբ չեն կազմվում, և, հետևաբար, խոսողը դրանք կարող է կազմել միայն ուրիշներից լսելով և սովորելով: Այսպես օրինակ՝ ուտել և լինել բայերի անցյալ կատար-

յալի և հրամայականի կերա, կերար, կերավ, կեր, կերեք. եղա, եղար, եղավ, եղիր, եղեք ձևերը խոսողը կարող է կազմել միայն ուրիշներից լսելով ու սովորելով:

Ահա քերականական այսպիսի ձևերը, որոնք միայնակ կամ առանձին են մնում, այլ ձևերի համաբանությամբ չեն կազմվում, և խոսողը դրանք կարող է կազմել միայն ուրիշներից լսելով ու սովորելով, կոչվում են անկանոն ձևեր:

Իրքան էլ որ՝ առաջին հայացքից տարօրինակ լինի, պետք է նշել, որ սովորաբար քերականական ձևերի անկանոն կազմություններ են հանդես բերում լեզվի բառապաշարի ամենասովորական, ամենատարածված բառերը: Այսպես են, օրինակ, հայր, մայր, եղբայր գոյականները, որոնց սեռական-տրականը կազմվում է յուրահատուկ ձևով՝ ԱՅ/Ո հերթագայություններով, վերևում բերված ուտել և լինել բայերը, որոնց կատարյալի հիմքը այլ արմատից է և այլն: Սակայն եթե նկատի ունենանք, որ լեզվի զարգացման հիմնական միտումներից մեկը քերականական ձևերի միասնականացման, անկանոն ձևերի վերացման միտումն է, ապա պարզ կդառնա, որ միայն մեծ հաճախականություն ու գործածականություն ունեցող ձևերը կարող են կայունություն հանդես բերել՝ այսպիսով կազմելով միայնակ, առանձին, ներփակ խմբեր կամ այլ, գուցե և անհաջող անվանմամբ՝ «անկանոն ձևեր»:

Քերականական անկանոն ձևերի մասին այս փոքրիկ բացատրությունը տալուց հետո անցնենք ժամանակակից հայերենի անկանոն բայերի բնութագրմանը:

Անկանոն են համարվում այն բոլոր բայերը, որոնք իրենց ձևակազմական առանձնահատկություններով շեղվում են խոնարհման վերևում նկարագրված հինգ ընդհանրական տիպերից: Անկանոն բայերը սովորաբար գալիս են լեզվի պատմության հին շրջաններից՝ արտացոլելով նրա ավելի հին ու կանոնավոր օրինաչափությունները: Անկանոնությունները սովորաբար հանդես են գալիս անցյալ կատարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում:

Ստորև անկանոն բայերի բնութագրերը տրվում է ըստ վերևում նրկարագրված մանրակաղապարների<sup>49</sup>:

**Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐՁ ԲԱՅԵՐ.**— Ե խոնարհման պարզ բայերից խոնարհման ընդհանուր համակարգից շեղումներ են հանդես բերում սաել, բերել, զարկել և ուտել բայերը:

**ԱՍՆԸ.**— Այս բայի անկանոնությունն արտահայտվում է նրանում, որ կատարյալի հիմքը կազմվում է ԱՅ բաղադրիչով՝ ասաց: Ըստ այդմ՝ անցյալ կատարյալի համար ունենում ենք ասացի, ասացիր, ասաց, աս-

<sup>49</sup> Այս հատվածի շարադրանքը հմմտ. Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքի «Անկանոն բայերի խոնարհումը» հատվածի հետ (էջ 300—309):

ասցինք, ասացիք, ասացինք ձեռքը: Բայց խոսակցական, հաճախ նաև գրավոր լեզվում կան նաև ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցինք ձեռքը: Հրամայական եղանակի ձևերը կա կազմվում են Ա խոսարձման պարզ բայերի նման՝ ասա, ասացեմ: Մյուս բոլոր ձևերը կանոնավոր են և շին շեղվում Ե խոնարհման պարզ բայերի ձևակազմական կաղապարներին:

**ԲԵՐՅԵԼ.**— Կատարյալի հիմքը սլարգ արմատական է՝ բեր, որից կազմվում են անցյալ կատարյալի բերի, բերիր, բերեց, բերինք, բերիք, բերինք կանոնից շեղվող ձևերը: Սակայն Ե խոնարհման կանոնավոր բայերի համաբանությունը այժմ տարածվում է նաև այս բայի «կանոնավոր» կատարյալը՝ բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցինք: Հրամայականի ձևերն են՝ բեր, բերեմ:

**ՉԱՐԿԵԼ.**— Կատարյալի հիմքը պարզ արմատական է՝ զարկ, որից ստացվում են անցյալ կատարյալի զարկի, զարկիր, զարկեց, զարկինք, զարկիք, զարկինք ձևերը: Հրամայական՝ զարկ, զարկեմ: Այս անկանոն ձևերը Ե խոնարհման պարզ բայերի համաբանությունը փոխարինվում են զարկեցի, զարկեցիր, զարկեց, զարկեցինք, զարկեցիք, զարկեցինք և զարկիր, զարկեցեմ ձևերով:

**ՈՒՏԵԼ.**— Անկանոնությունն արտահայտվում է նրանում, որ կատարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս կեր արմատը: Գրանից կազմվող ձևերն ունեն հետևյալ պատկերը. անց. կատ. կերա, կերար, կերավ, կերանք, կերաք, կերանք. հրամ. կեր, կերեմ. վաղակ. դիրք. կերել, հարակ. կերած:

**Ե ԽՈՆԱՐԻՄԱՆ Ն ԱՍՏԱՆՅ ՈՒՆԵՅՈՂ ԲԱՅԵՐ.**— Ե խոնարհման ն ածանց ունեցող բայերից ձևերի կազմության անկանոնություններ են հանդես բերում անել, դնել, տանել և ելնել, առնել, տեսնել, թողնել ու լինել բայերը: Ըստ կատարյալի հիմքի կազմության դրանք ստորաբաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում՝ անել, դնել և տանել բայերը, որոնց կատարյալի հիմքը ընկան է և կազմվում է ն/Ր հերթագայությունը՝ անել—ար, դնել—դր, տանել—տար, իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում մնացած բայերը. դրանց հիմքը պարզ արմատական է՝ ելնել—ել, առնել—առ, տեսնել—տես, թողնել—թող: Լինել բայի կատարյալի հիմքը այլ արմատից է՝ եղ:

**ԱՆԵԼ.**— Անցյալ կատարյալի արի, արիր, արեց (արավ), արինք, արիք, արինք ձևերին զուգահեռ գործածական են նաև անցյալ կատարյալի ցոյական ձևերը՝ արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցինք: Հրամ. արա, արեմ: Վաղակ. դիրք. արել, հարակ. արած, ենթ. առող||արուլ:

**ԴՆԵԼ.**— Անցյալ կատարյալի դրի, դրիր, դրեց, դրինք, դրիք, դրինք ձևերին զուգահեռ ունի նաև ցոյական դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք,

դրեցիք, դրեցինք ձևերը: Հրամայական՝ դիր, դրեմ (դրեցեմ): Վաղակ. դիրք. դրել, հարակ. դրած, ենթ. դնող||դուլ:

**ՏԱՆԵԼ.**— Անցյալ կատարյալ՝ տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարանք: Հրամ. տար, տարեմ: Վաղակ. դիրք. տարել, հարակ. տարած, ենթ. տանող||տարող:

**ԹՈՂՆԵԼ.**— Անցյալ կատարյալի թողի, թողիր, թողեց, թողինք, թողիք, թողինք ձևերին զուգահեռ կան նաև թողեցի, թողեցիր, թողեց, թողեցինք, թողեցիք, թողեցինք ցոյական ձևերը: Հրամ. թող, թողեմ: Վաղակ. դիրք. թողել, հարակ. թողած, ենթ. թողնող:

**ԵԼՆԵԼ.**— Անկանոն է միայն այս բայի ել եզակի հրամայականը: Գործածական է նաև հրամայականի ելիր «կանոնավոր» ձևը:

**ԱՌՆԵԼ.**— Անկանոն է միայն այս բայի առ եզակի հրամայականը:

**ՏԵՍՆԵԼ.**— Անկանոն է միայն այս բայի տես եզակի հրամայականը:

**ԼԻՆԵԼ.**— Կատարյալի հիմքում հանդես է գալիս եղ արմատը: Անցյալ կատարյալ՝ եղա, եղար, եղավ, եղանք, եղաք, եղանք: Հրամ. եղիր, եղեմ: Վաղակ. դիրք. եղել, հարակ. եղած, ենթ. լինող||եղող:

**Ա ԽՈՆԱՐԻՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐ.**— Ա խոնարհման պարզ բայերից անկանոն են գալ, լալ և տալ բայերը, որոնք բոլորն էլ միահնչյուն արմատներ ունեն, և դրանց անկանոնությունը գուցե բացատրվում է հենց դրանով: Այս բայերը առանձնանում են մյուս բոլոր բայերից նրանով, որ անկատար I (ում վերջավորվող) դերբայ չունեն: Սրանք ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են անկատար II-ի (իս վերջավորվող դերբայի) և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով՝ գալիս եմ—գալիս էի, տալիս եմ—տալիս էի, լալիս եմ—լալիս էի: Անկատարի հիմքից կազմվող մյուս ձևերը կանոնավոր են: Կատարյալի հիմքից կազմվող ձևերի մասին խոսվում է ստորև:

**ԳԱԼ.**— Կատարյալի հիմքը այլ արմատից է՝ եկ: Անցյալ կատարյալ՝ եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկանք: Հրամ. եկ, եկեմ (ժողովրդական՝ արի, արեմ): Վաղակ. դիրք. եկել, հարակ. եկած, ենթ. եկող:

**ՏԱԼ.**— Անցյալ կատարյալի հիմքը զուգած է՝ տվ (<տու) և տվեց: Ըստ այդմ անցյալ կատարյալի համար կան զուգ ձևեր՝ տվի, տվիր, տվեց, տվինք, տվիք, տվինք||տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիք, տվեցինք: Հրամ. տուր, տվեմ: Վաղակ. դիրք. տվել, հարակ. տված, ենթ. տվող:

**ԼԱԼ.**— Անցյալ կատարյալ՝ լացի, լացիր, լացեց, լացինք, լացիք, լացինք||լացեցի, լացեցիր, լացեց, լացեցինք, լացեցիք, լացեցինք: Անցյալ կատարյալի այս ձևերը համարյա անգործածական են և փոխարինվում են լաց լինել հարադիր բայի ձևերով՝ լաց եղա, լաց եղար, լաց եղավ և այլն: Հրամ. լաց (լաց եղիր), լացեմ (լաց եղեմ): Վաղակ. դիրք. լացել (լաց եղել), հարակ. լացած (լաց եղած), ենթ. լացող (լաց եղող):

**Ա ԽՈՆԱՐԻՄԱՆ ՍՈՍԿԱՆՅԱՎՈՐ ԲԱՅԵՐ.**— Ա խոնարհման սոսկ-

ածանցավոր բայերից ձևերի կազմության անկանոնություններ են հանդես բերում դառնալ, լվանալ, կենալ բայերը: Որոշ քերականներ դրանց մեջ են զետեղում նաև բանալ և բառնալ բայերը, բայց դրանք ժամանակակից լեզվում փոխարինվելով բացել և բարձել ձևերով՝ վերածվում են կանոնավոր բայերի:

**ԴԱՌՆԱԼ.**— Կատարյալի հիմքն է դարձ, այսինքն կազմվում է Ռն/ՐՁ հերթազայությամբ: Անցյալ կատարյալ՝ դարձա, դարձաւ, դարձավ, դարձանք, դարձաք, դարձան: Հրամայական՝ դարձի՛ր, դարձե՛ք: Վաղակ. դերբ. դարձել, հարակ. դարձած, ենթ. դարձող:

Անցյալ կատարյալի և հրամայականի դառա, դառաւ, դառավ, դառանք, դառաք, դառան: դառի՛ր, դառե՛ք ձևերը բարբառային են:

**ԼՎԱՆԱԼ.**— Այս բայի անկանոնությունն արտահայտվում է նրանով, որ անցյալ կատարյալը կազմվում է Ի ձայնավոր ունեցող վերջավորություններով՝ լվացի, լվացիր, լվաց, լվացիմք, լվացիք, լվացին, որոնք փաստորեն լվալ բարբառային բայի ձևերն են: Հրամայական՝ լվա, լվացե՛ք: Վաղակ. դերբ. լվացել, հարակ. լվացած, ենթ. լվացող:

**ԿՆՆԱԼ.**— Կատարյալի հիմքն է կաց: Անցյալ կատարյալ՝ (վեր) կացա, կացաւ, կացավ, կացանք, կացաք, կացան: Հրամայական՝ (վեր) կաց, կացե՛ք: Վաղակ. դերբ. (վեր) կացել, հարակ. կացած, ենթ. կացող: Այս բայի կատարյալի կից հիմքը և նրանից կազմված կեցա, կեցաւ, կեցավ, կեցիր, կեցե՛ք և այլ ձևերը բարբառային են և գրական լեզվում գործածական չեն:

**ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ**

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ.**— Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնք խոնարհման բոլոր ձևերը չունեն: Այսպես, ժամանակակից հայերենում կան մի քանի բայեր, որոնք ունեն միայն սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևեր, ըստ որում՝ դրանք կազմվում են ոչ թե դերբայով ու օժանդակ բայով, այլ բայահիմքով ու վերջավորություններով, այսինքն՝ գրաբարածև կազմություն ունեն: Այս բայերը հետևյալներն են:

**ԵՄ.**— Ներկա՝ եմ, ես, է, ենք, եր, են:

Անցյալ՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին:

**ԿԱՄ.**— Ներկա՝ կամ, կաս, կա, կանք, կար, կան:

Անցյալ՝ կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային:

**ԳԻՏԵՄ.**— Ներկա՝ գիտեմ, գիտես, գիտի, գիտենք, գիտեք, գիտեն:

Անցյալ՝ գիտեի, գիտեիր, գիտեր, գիտեինք, գիտեիք, գիտեին:

**ՈՒՆԵՄ.**— Ներկա՝ ունեմ, ունես, ունի, ունենք, ունեք, ունեն:

Անցյալ՝ ունեի, ունեիր, ուներ, ունեինք, ունեիք, ունեին:

**ԱՐԺԵՄ.**— Ներկա՝ արժեմ, արժես, արժի, արժենք, արժեք, արժեն:

Անցյալ՝ արժեի, արժեիր, արժեր, արժեինք, արժեիք, արժեին:

Այս բայերը հաճախ կոչվում են հավելավոր բայեր:

Վերջին երեք բայերի համար կան ժամանակակից լեզվի տեսակետից կանոնավոր կազմություն ունեցող գիտեմ եմ—գիտեմ եմ էի, ունեմ եմ—ունեմ եմ էի, արժեմ եմ—արժեմ եմ էի ձևերը, որոնք համապատասխանաբար գիտեմալ, ունեմալ, արժեմալ բայերի ձևերն են: Բայց գիտեմ—գիտեի, գիտեմ եմ—գիտեմ եմ էի և այլ համապատասխան զույգերը Կարբերվում են ոչ միայն ձևով, այլև իմաստով: Պարզ ձևերը ոչ տևական կերպ ունեն և նշանակում են կոնկրետ ներկա ու անցյալի անկատար, իսկ բաղադրյալ ձևերը տևական կերպ ունեն և նշանակում են ընդհանուր ներկա ու անցյալի անկատար, օրինակ՝ Նա ունի—ուներ: Ունեմ եմ—ունեմ եմ էր:

Իմաստային այս նույն երանգն է գրսևորվում նաև կարող եմ—կարող էի: Կարողանում եմ—կարողանում էի, ուզում եմ—ուզում էի: Ուզեմ եմ—ուզեմ եմ էի համապատասխան զույգերի մեջ:

Ժամանակակից հայերենում կան նաև պակասավոր մի քանի այլ բայեր, ինչպես՝ ց ա ն կ ա լ, որն ունի միայն ըղձական (և սրանից կազմվող ենթադրական ու հարկադրական) եղանակի ձևեր՝ ցանկամ—ցանկայի, հ ու ս ա լ, որն ունի միայն ըղձական (համապատասխանաբար՝ ենթադրական ու հարկադրական) և հրամայական եղանակների ձևեր՝ հուսամ—հուսայի, հուսա, հուսացե՛ք, լ վ ա լ, որն ունի միայն անցյալ կատարյալի և հրամայականի ձևեր՝ լվացի, լվացիր, լվաց և այլն, լվա, լվացե՛ք:

Ցանկալ, հուսալ, լվալ պակասավոր բայերի մյուս ձևերը լրացվում են համանիշ ցանկանալ, հուսա ունենալ, լվանալ բայերի ձևերով:

**ԺԻՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**— Ժխտական խոնարհման ձևերը, ի հակադրություն դրականների, ցույց են տալիս, որ գործողությունը բացասվում, ժխտվում է, օրինակ՝ դրական— գում եմ, գրեցի, գրեմ, ժխտական— չեմ գում, չգրեցի, չգրեմ: —

Ժամանակակից հայերենում ժխտական խոնարհման ձևերը, որպես կանոն, կազմվում են դրական խոնարհման ձևերից Չ մասնիկով, իսկ հրամայականի դեպքում ՄԻ մասնիկով, չնայած որ ժխտական խոնարհման առանձին ձևեր (ենթադրական եղանակի ձևերը) հատուկ կազմություն ունեն:

**ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԵՎ ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԻՏԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.**— Համադրական կազմություն ունեցող սահմանականի անցյալ կատարյալի և ըղձական եղանակի ապառ-

նիի և անցյալի ապառնիի դեպքում Չ մասնիկը դրվում է դրական բա-  
յաձևերի վրա սկզբից, ինչպես.

**Անցյալ կատարյալ**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրեցի	գրեցինք	չգրեցի	չգրեցինք
գրեցիր	գրեցիք	չգրեցիր	չգրեցիք
գրեց	գրեցին	չգրեց	չգրեցին

**Ապառնի**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրեմ	գրենք	չգրեմ	չգրենք
գրես	գրեք	չգրես	չգրեք
գրի	գրին	չգրի	չգրին

**Անցյալի ապառնի**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրեի	գրեինք	չգրեի	չգրեինք
գրեիր	գրեիք	չգրեիր	չգրեիք
գրեր	գրեին	չգրեր	չգրեին

ՍՍ.ՂՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԺԽՏԱԿԱ-  
ՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Սահմանական եղանակի վերլուծական ժամա-  
նակների ժխտականը կազմվում է ժխտական օժանդակ բայի և համա-  
պատասխան դերբայների միջոցով: Օժանդակ բայի ժխտական ձևերն են.

Ներկա— չեմ, չես, չի, չենք, չեք, չեն.

Անցյալ— չեի, չեիր, չեր, չեինք, չեիք, չեին: >

Ինչպես տեսնում ենք, ներկայի եզակի երրորդ դեմքի է ձևը ժրխ-  
տականի դեպքում դառնում է ոչ թե չէ, այլ չի: Ծիշտ է, ժխտականի  
համար կա նաև չէ ձևը, բայց դա կիրառվում է բաղադրյալ ստորոգյալ-  
ների կազմում, օրինակ՝ մարդ է—մարդ չէ, մեծ է—մեծ չէ, սև է—սև  
չէ և այլն:

Ժխտական օժանդակ բայը դրվում է նախադաս, դերբայներից ա-

նաջ, և, այսպիսով, ստացվում են վերլուծական ժամանակների հետևե-  
լալ ձևերը:

**Ներկա**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրում եմ	գրում ենք	չեմ գրում	չենք գրում
գրում ես	գրում եք	չես գրում	չեք գրում
գրում է	գրում են	չի գրում	չեն գրում

**Անցյալ անկատար**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրում էի	գրում էինք	չէի գրում	չէինք գրում
գրում էիր	գրում էիք	չէիր գրում	չէիք գրում
գրում էր	գրում էին	չէր գրում	չէին գրում

**Ապառնի**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրելու եմ	գրելու ենք	չեմ գրելու	չենք գրելու
գրելու ես	գրելու եք	չես գրելու	չեք գրելու
գրելու է	գրելու են	չի գրելու	չեն գրելու

**Անցյալի ապառնի**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրելու էի	գրելու էինք	չէի գրելու	չէինք գրելու
գրելու էիր	գրելու էիք	չէիր գրելու	չէիք գրելու
գրելու էր	գրելու էին	չէր գրելու	չէին գրելու

**Վաղակատար**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրել եմ	գրել ենք	չեմ գրել	չենք գրել
գրել ես	գրել եք	չես գրել	չեք գրել
գրել է	գրել են	չի գրել	չեն գրել

**Անցյալի վաղակատար**

Դ ր ա կ ա ն		Ժ խ տ ա կ ա ն	
գրել էի	գրել էինք	չէի գրել	չէինք գրել
գրել էիր	գրել էիք	չէիր գրել	չէիք գրել
գրել էր	գրել էին	չէր գրել	չէին գրել

ՀԱՐԿԱԿՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Հարկա-  
դրականի ժխտական ձևերը ևս կազմվում են դրական ձևերից Չ մաս-  
նիկով, որը դրվում է կամ պիտի եղանակիչի վրա սկզբից կամ բուն  
բայաձևի վրա սկզբից, ըստ որում ավելի գործածական են ու տարած-  
ված առաջին ձևերը:

**Ապառնի**

դրական		ժխտական	
պիտի գրեմ	պիտի գրենք	չպիտի գրեմ	չպիտի գրենք
պիտի գրես	պիտի գրեք	չպիտի գրես	չպիտի գրեք
պիտի գրի	պիտի գրին	չպիտի գրի	չպիտի գրին

**Անցյալի ապառնի**

դրական		ժխտական	
պիտի գրեի	պիտի գրեինք	չպիտի գրեի	չպիտի գրեինք
պիտի գրեիր	պիտի գրեիք	չպիտի գրեիր	չպիտի գրեիք
պիտի գրեր	պիտի գրեին	չպիտի գրեր	չպիտի գրեին

Ինչպես նշեցինք, գործածական են նաև պիտի չգրեմ, պիտի չգրեի  
և այլ ձևերը:

Պետք է գրեմ—պետք է գրեի դրական հարկադրականին համապա-  
տասխան՝ կան նաև ժխտական չպետք է գրեմ—չպետք է գրեի պետք է  
չգրեմ—պետք է չգրեի ձևերը:

ԵՆԹԱԿՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Ենթա-  
դրական եղանակի ժխտականը ոչ թե կազմվում է դրականից, այլ յու-  
րահատուկ, դրականից տարբեր կազմութուն ունի: Ենթադրականի ժխտ-  
ականը կազմվում է ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտա-  
կան ձևերով, որոնք դրվում են դերբայից առաջ:

**Ապառնի**

դրական		ժխտական	
կգրեմ	կգրենք	չեմ գրի	չենք գրի
կգրես	կգրեք	չես գրի	չեք գրի
կգրի	կգրին	չի գրի	չեն գրի

**Անցյալի ապառնի**

դրական		ժխտական	
կգրեի	կգրեինք	չէի գրի	չէինք գրի
կգրեիր	կգրեիք	չէիր գրի	չէիք գրի
կգրեր	կգրեին	չէր գրի	չէին գրի

ԱՐԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Հրամայականի  
ժխտականը կոչվում է արգելական և կազմվում է Մի մասնիկի միջոցով:

Հ. Բարսեղյանը արգելական հրամայականի կազմության մասին  
գրում է. «Ռուր տիպի բայերի արգելական հրամայականը ծագումով  
կազմված է «մի» արգելականից և անորոշ դերբայի այլևայլ ձևափո-  
խություններից: Արգելական հրամայականի եզակի թվում ե խոնարհ-  
ման բայերի «լ» վերջավորությունը փոխարինվում է «ր» վերջավորու-  
թյամբ, իսկ ե խոնարհիչը դառնում է ի: Օրինակ՝ մի գրի, մի սիրի,  
մի փախչի, մի մտնի, մի խաղացնի, մի վախեցնի և այլն: Ա խո-  
նարհման բայերի մեջ «մի» արգելականն ավելանում է անորոշ դեր-  
բայի վրա, որի «լ» վերջավորությունն ընկնում է: Օրինակ՝ մի կարգա,  
մի խաղա, մի մտենա, մի բարձրանա և այլն: ... Ժխտական հրամա-  
յականի հոգնակին կազմվում է դարձյալ անորոշ դերբայով և «մի» ար-  
գելականով: Այս դեպքում անորոշ դերբայի «լ»-ն բոլոր տիպերի բա-  
յերում փոխարինվում է «ք»-ով: Օրինակ՝ մի գրեմ, մի մտնեմ, մի փախ-  
չեմ, մի փախցնեմ, մի կարդամ, մի մտենամ, մի բարձրանամ և այլն»<sup>50</sup>:

Սակայն արգելականի կազմության այս օրինաչափությունը այժմ  
փոխվում է: Քանի որ պարզ բայերի դեպքում հրամայականի դրական  
և արգելական ձևերը նույնանուն են, ինչպես՝ գրի—մի գրի, սիրի—  
մի սիրի, կարդա—մի կարդա, հավատա—մի հավատա և այլն, ուստի  
և դրանց նմանակությունը մյուս բայերի արգելական ձևերը ևս կազմը-  
վում են դրական ձևերից, ինչպես՝ գտի—մի գտի, փախի—մի փա-  
խի, բարձրացի—մի բարձրացի, հազցու—մի հազցու և այլն, ո-  
րոնք ավելի ու ավելի են տարածվում և գերիշխող դառնում: Սխալված  
լենք լինի, եթե ասենք, որ արդի հայերենում արգելական հրամայա-  
կանի ձևերը կազմվում են դրական հրամայականից: Այսպես, եթե հաշ-  
վի շանենք ժամանակակից լեզվում արդեն հնաբանությունների վե-  
րածվող կազմությունները, արգելական հրամայականի ձևերը կունենան  
հետևյալ պատկերը:

դրական	արգելական
	եզակի
գրի	մի գրի
(գրի)	(մի գրի)
փախի	մի փախի
գտի	մի գտի
բարձրացրու	մի բարձրացրու
կարդա	մի կարդա
բարձրացի	մի բարձրացի

<sup>50</sup> Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 318:

Հ ո գ ն ա կ ի

գրեցեք	մի գրեցեք
(գրեք)	(մի գրեք)
փախեք	մի փախեք
գտնք	մի գտնք
բարձրացրեք	մի բարձրացրեք
կարգացեք	մի կարգացեք
բարձրացեք	մի բարձրացեք

Արգելական հրամայականի մի փախչիւր, մի գտնիւր, մի խաղաց-  
նիւր, մի մտնեմ, մի փախչեմ, մի փախցնեմ, մի կարգաք, մի մտտեմաք,  
մի բարձրանաք և այլ ձևերը վերածվում են հնաբանությունների կամ  
գտնվում են հնաբանություններ դառնալու ճանապարհին:

**ԴԵՐՐԱՅՆԵՐԻ ԺԵՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ.**— Չ մասնիկով կազմվող ժխտա-  
կան ձևեր են ունենում նաև դերբայները, բայց միայն անկախ, բառա-  
յին ինքնուրույն գործածություն ունեցող դերբայները, այսինքն անու-  
րոշ, անկատար II, հարակատար, ենթակայական և ապառնի II դեր-  
բայները, օրինակ՝ գրել—չգրել, գրելիս—չգրելիս, գրած—չգրած, գրող—  
չգրող, գրելիք—չգրելիք, կարդալ—չկարդալ, կարդալիս—չկարդալիս,  
կարդացած—չկարդացած, կարդացող—չկարդացող, կարդալիք—չկար-  
դալիք:

ՀԱՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՉՄԱՆ

**ՀԱՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՉՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵ-  
ՐԸ.**— Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում շարժական  
մեծ դեր ու կշիռ ունեն այսպես կոչված հարադրական բայերը՝ դուրս  
գալ, ներս գալ, խաղ անել, լաց լինել, բուն մտնել, գրել տալ, զարդա-  
րել տալ, մեռնել պրծնել, գալ անցնել: թողնել գնալ, պոկվել ընկնել  
և այլն:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, դրանցից մի մասի մեջ հան-  
դես է գալիս որևէ խոսքի մաս (մակբայ, գոյական և այլն) և բայ (օրի-  
նակ՝ ներս գալ, խաղ անել), մի մասի մեջ անորոշ դերբայը և տալ բայը,  
որոնց միասնությամբ պատճառական իմաստ է արտահայտվում (գրել  
տալ, զարդարել տալ), իսկ մյուս մասը իրենից ներկայացնում է իմաս-  
տային այս կամ այն աղերսակցությունն ունեցող երկու բայերի միու-  
թյուն (թողել գնալ, պոկվել ընկնել):

Առաջին և երկրորդ խմբերի (դուրս գալ, գրել տալ) հարադրական  
բայերի խոնարհման առանձնահատկությունն այն է, որ վերլուծական  
ձևերի և՛ դրականում, և՛ ժխտականում օժանդակ բայն ընկնում է հա-

րադրի և բայական մասի միջև, օրինակ՝ դուրս է գալիս—դուրս չի գա-  
լիս, դուրս է եկել—դուրս չի եկել, գրել է տալիս—գրել չի տալիս, գրել է  
տվել—գրել չի տվել և այլն: Պարզ ժամանակներում դրանց խոնարհու-  
մը չի տարբերվում սովորական բայերի խոնարհումից, օրինակ՝ դուրս  
եկա, դուրս եկաւ, դուրս եկավ, գրել տվի, գրել տվիւր, գրել տվեց. դուրս  
գամ, դուրս գաս, դուրս գա. գրել տամ, գրել տաս, գրել տա և այլն: Ըն-  
թարգրական եղանակում Կ(Ը) մասնիկը դրվում է խոնարհվող բայաձևի  
վրա, օրինակ՝ դուրս կգամ—դուրս կգայի, գրել կտամ—գրել կտայի:  
Սակայն հարկադրականի դեպքում ՊԻՏԻ եղանակիչը կարող է դրվել և՛  
անմիջաբար խոնարհվող բայի, և՛ հարադրի վրա, օրինակ՝ դուրս պիտի  
գամ|պիտի դուրս գամ, գրել պիտի տամ|պիտի գրել տամ և այլն: Հա-  
մարական ձևերի ժխտականի դեպքում Չ մասնիկն անմիջաբար դրվում  
է բայական մասի վրա, օրինակ՝ դուրս գնաց— դուրս չգնաց, գրել աը-  
վեց—գրել չտվեց, գրել տամ—գրել չտամ և այլն: Նույն կերպ անմի-  
ջաբար խոնարհվող բայաձևի վրա է դրվում նաև արգելական հրամայա-  
կանի ՄԻ մասնիկը, օրինակ՝ դուրս գնա—դուրս մի գնա, դուրս գնա-  
ցեք—դուրս մի գնացեք, գրել տվեք—գրել մի տվեք և այլն: Սակայն ա-  
ռանձին դեպքերում ՄԻ ձևը կարող է դրվել նաև հարադրական բայի  
վրա, որպես մի ամբողջության վրա սկզբից, օրինակ՝ մի դուրս գնա,  
մի դուրս գնացեք, մի գրել տվեք և այլն: Այս ձևերը կանոնի աստիճանի  
չեն բարձրացել և հանձնարարելի չեն:

Ներս գալ, գրել տալ տիպի նման են խոնարհվում երկրորդական  
վերլուծական ժամանակներ կազմող գրելիս լինել, գրած լինել, գրելու  
լինել հարադրությունները, ինչպես՝ գրելիս եմ լինում—գրած եմ լինում—  
գրելու եմ լինում, գրելիս չեմ լինում—գրած չեմ լինում—գրելու չեմ լի-  
նում, գրելիս եղա—գրած եղա—գրելու եղա, գրելիս չեղա—գրած չեղա—  
գրելու չեղա և այլն:

Թռչել գնալ տիպի հարադրականի բայերի խոնարհումը առանձնա-  
պես չի տարբերվում սովորական բայերի խոնարհումից, միայն վերլու-  
ծական ժամանակներում օժանդակ բայը կարող է դրվել և՛ առաջին, և՛  
երկրորդ բաղադրիչից հետո՝ ըստ այն բանի, թե ո՞ր բաղադրիչի վրա է  
ընկնում տրամաբանական շեշտը, օրինակ՝ թռչում է գնում|թռչում գը-  
նում է, թռել է գնացել|թռել գնացել է: Ժխտական խոնարհման ժամա-  
նակ օժանդակ բայն ընկնում է նախագաս՝ դրվելով առաջին բաղադրի-  
չից առաջ, օրինակ՝ չի մեռնում պրծնում, չի թռել գնացել: Համարա-  
կան ժամանակների խոնարհումը սովորական խոնարհումից ոչնչով չի  
տարբերվում, միայն ժխտականի դեպքում Չ մասնիկը դրվում է միայն  
առաջին բայի վրա, օրինակ՝ չմեռավ պրծավ, չթռչեմ գնամ և այլն:

Այսպես ուրեմն՝ մակբայական իմաստով լեզվում ունենում ենք զուգահեռ ձևեր, ինչպես ֆնֆուլ||ֆնֆշորեն||ֆնֆուլ կերպով (կղանակով), ձեվով, մեղմ||մեղմորեն||մեղմ կերպով, զգույշ||զգույշորեն||զգույշ կերպով և այլն:

Ինչպես առիթ ենք ունեցել նշելու, որոշ քերականներ մակբայի շարահյուսական պաշտոնով հանդես եկող ածականները տվյալ շարահյուսական կապակցության մեջ համարում են հենց մակբայներ, իսկ որոշ քերականներ էլ գտնում են, որ ածականը իր շարահյուսական բոլոր կիրառությունների դեպքում մնում է որպես ածական և մակբայ համարվել չի կարող, Հասկանալի է, որ հարցի այս տարբեր լուծումները պայմանավորված են նրանով, թե էակա՞ն, թե՞ երկրորդական է համարվում խոսքի մասերի որոշման շարահյուսական հիմունքը:

Մեր կարծիքով ճիշտ պետք է համարել առաջին տեսակետը: Որակական ածականների պարագայական կիրառությունը ոչ թե պատահական, անցողիկ հատկանիշ է, այլ հայերենին հատուկ մի երևույթ է: Լեզվում ինչքան զանգվածային է, ասենք, լավ և հիսնալի բառերի ու լուրջային կիրառությունը, ինչպես՝ լավ մարդ, զինվու՞, աղբիկ, հիանալի դասախոս, բծիշկ, բանվոր և այլն, նույնքան զանգվածային է դրանց նաև պարագայական կիրառությունը, ինչպես՝ լավ խոսեց, գրեց, խաղաց, պարապեց, կովեց, հանձնեց. հիանալի խոսեց, զեկուցեց, կովեց, խաղաց, դատեց, կարդաց, լուծեց և այլն: Եվ ամենևին էլ ճիշտ չէ այս կիրառություններից առաջինը համարել հիմնական, խոսքի մասային իմաստից բխող, իսկ երկրորդը՝ ոչ հիմնական, շարահյուսական կիրառությամբ պայմանավորված:

Ասենք նաև այն, որ «մաքուր» մակբայ համարվող որոշ բառեր կարող են դրվել նաև գոյականների վրա, ինչպես՝ առաջ շաբաթում, դանդաղ վերադարձ, լիովին ոչնչացում և այլն: Ճիշտ է, այս օրինակներում մակբայները գործածված են բայանունների հետ, բայց դա հարցի էությունը չի փոխում: Քանի որ նրանք հանդես են գալիս որոշի պաշտոնով, ուրեմն և մեզ համար տվյալ դեպքում ածականներ են և ոչ թե մակբայներ: Պետք է նշել նաև, որ այսպես կոչված իմաստաբանական մոտեցման դեպքում առանձին դեպքերում ուղղակի անհնար կլինեն որոշել տվյալ բառը ածական, թե՞ մակբայ պետք է համարել: Այսպես օրինակ՝ շատ և քիչ բառերը ավելի գոյականների՞, թե՞ բայերի վրա են դրվում — ուղղակի անհնար է ասել:

Եզրակացությունն այն է, որ հայերենում որակական ածականները և մակբայները շատ դեպքերում տարբերակված չեն, և միևնույն բառը կարող է հանդես գալ և հանդես է գալիս ածականի ու մակբայի դերով: Հասկանալի է, որ առաջին դեպքում տվյալ բառն ածական է, իսկ երկրորդ դեպքում՝ մակբայ:

Մակբայը կարող է դրվել նաև ածականների կամ մակբայների վրա՝

առավելապես ցույց տալով հատկանիշի աստիճանը կամ գործածվելով մի այլ նշանակությամբ, ինչպես՝ «Լեռնային վտակը հագրվ լսելի ձայնով խըշում էր սառույցի տակ» (Անան.). «Միմոնը մի շատ խելացի բայլ արավ» (Անան.). «Գուցե նրան, նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն օսլայած շապիկի բարձր ու ամուր օձիքը» (Շիրվ.). «Նրա դեմքը խիստ լուրջ արտահայտություն էր ստացել» (Նար-Գոս). «Կոնվին իմ ներսում բավական երկար տևեց» (Անան.). «Գլուխը թեքել էր կրծքին, որ քեթևակի՝ բաց էր» (Շիրվ.). «Այսօր փողոցը գրեթե ամալի էր» (Շիրվ.). «Հավիտյան վազող ու միշտ ժրաշան՝ հոտերի միջից առվակը խնդաց» (Չար.). «Հավետ անմոռաց մեր Գուլիցիները» (Սևակ) և այլն:

Սակավադեպ մակբայները կարող են գործածվել նաև թվականների հետ՝ ցույց տալով թվականով արտահայտված քանակի հավաստիականության աստիճանը, օրինակ՝ «չաւը երեք տարի», «ուլիղ վեց ամիս», «մոտ քսան աշակերտներ» և այլն:

Մինչև այժմ քննվածները կարելի է կոչել հատկանշային մակբայներ, որովհետև դրանք ցույց են տալիս գործողության կատարման ձևը կամ հատկանիշի գրականության շափն ու աստիճանը:

Մի շարք մակբայներ ցույց են տալիս գործողության կատարման կամ հատկանիշի գրականության տեղն ու ժամանակը, ինչպես՝ «Թավամազ հոնքերը կարծես վաչ իջան աչքերի սուր հայացքն ավելի խտացնելու համար» (Մուր.). «Իջնում է մայթերին, էլեկտրաբարշի վագոնների վրա, ամենուր (Անան.). «Գազանը տեղ-տեղ վայր էր ընկել» (Անան.). «Բազմաթիվ նախանձոտ հայացքներ ուղեկցում էին նրան ամենուրեք (Շիրվ.). «Իսկ նա հնչում էր ամենուր ու միշտ, Ամենուր ու միշտ, Ուր հայն էր շնչում» (Սևակ). «Միշտ արևկող էր անում՝ մեջքը վրանին հենած և միշտ սրթսրթում էր, միշտ մրսում» (Անան.). «Տրեխների գոյությունը տակավին չէր երևում» (Շիրվ.). «Վաղուց, վաղուց մըտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն. վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ» (Չար.). «Քեզ երբեք սիրտս չի մոռանա» (Տեր.). «Էզուց նախիրը կտանես արոտ» (Թում.) և այլն:

Բոլոր ասվածներից կարելի է եզրակացնել, որ մակբայները նախադասության մեջ, որպես կանոն, հանդես են գալիս ձևի, շափ ու քանակի, տեղի, ժամանակի պարագաների շարահյուսական պաշտոններով: Սակայն պարագայական պաշտոններով հանդես եկող ոչ բոլոր բառերն են, որ մանում են մակբայների մեջ: Այսպես են, օրինակ, գոյականները:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ երբ գոյականները նախադասության մեջ իրենց զանազան հոլովական ձևերով կատարում են պարագայի պաշտոն, ապա նրանք այս կամ այն շափով կորցնում են իրենց առարկայական նշանակությունը և հակվում են դեպի մակբայրենց առարկայական նշանակությունը և հակվում են դեպի մակբայները: Վերջնենք հետևյալ նախադասությունները. «Լուրը նույն ժամին



տարածվեց ամբողջ գյուղում»։ «Ամռանը գինձորները վերադարձան»։ «Քարկուրյունից գունատվել էր»։ «Մեծ սիրով կկատարեմ բո հանձնարարությունը»։ Այս նախադասությունների մեջ ընդգծված բառաձևերը ցույց են տալիս գործողության կատարման տեղը, ժամանակը, պատճառը, ձևը, այսինքն հանդես են գալիս պարագայական նշանակությամբ։ Բայց դա էլ ինքնին նշանակում է, որ գյուղում, ամռանը, բարկուրյունից, սիրով բառաձևերը տվյալ կիրառությամբ հակվում են դեպի մակբայները, որովհետև այս կամ այն շափով կորցնելով իրենց առարկայական նշանակությունը՝ պատասխանում են որակի, երբ, ի՞նչ պատճառով, ինչպե՞ս հարցերին։ Սակայն այս և նման ձևերը իրավացիորեն մակբայ չեն համարվում և չեն էլ կարող համարվել, որովհետև սրանք ոչ ի՞նչ անկախ ու ինքնուրույն բառեր են, այլ բառաձևեր և որպես այդպիսի մտնում են համապատասխան գոյականների հոլովական հարաբերության մեջ՝ գյուղ—գյուղի—գյուղից—գյուղով—գրուղում, բարկուրյուն—բարկուրյան—բարկուրյունից—բարկուրյամբ և այլն։ Մյուս կողմից՝ շնայած գոյականների պարագայական կիրառության դեպքում նրանց առարկայական նշանակությունը այս կամ այն շափով խամրում է, սակայն սխալ կլինե՞ր ասել, թե այդ դեպքում նրանց առարկայական նշանակությունը վերանում է ընդհանրապես։ Ինչքան էլ որ գյուղում, ամռանը, բարկուրյունից, սիրով ձևերը գործածվում են որպես պարագա, այնուամենայնիվ, առարկայական նշանակությունը նրանց մեջ առկա է և այդ պատճառով էլ նրանք ազատ որոշիչներ են ընդունում, իսկ բառի շարահյուսական այդ հատկանիշը գոյական լինելու լավագույն շափանիշն է։

Հայ քերականության մեջ ճիշտ կերպով գոյականով արտահայտված պարագաները առանձնացվել են մակբայով արտահայտված պարագաներից. առաջինները կոչվել են պարագայական խնդիրներ, իսկ երկրորդները՝ բուն պարագաներ։ Մ. Աբեղյանը նշում է, որ պարագայական խնդիրները՝ այսինքն գոյականով արտահայտված պարագաները, միջին տեղն են բռնում բուն պարագաների՝ այսինքն մակբայով արտահայտված պարագաների և առարկայական խնդիրների միջև։

Տվյալ դեպքում, սակայն, մեզ հետաքրքրում է գոյականի և մակբայի հարաբերակցության և տարբերակման հարցը։ Մ. Աբեղյանը գրում է, որ բուն պարագաներին ժամանակի անուններից մոտենում են այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմի, առաջ բառերը, բայց դրանք մակբայ համարելու հիմք չկա, քանի որ դրանք հոլովվելով բառեր են և խոսքի մեջ կատարելապես պահում են իրենց հոլովական նշանակությունները<sup>2</sup>։ Նա նշված բառերը վճռականորեն ու անվերապահորեն գոյականներ է համարում՝ հավասարության նշան դնելով սրանց և շարաք, ամիս, տարի, առավոտ, իրիկուն բառերի միջև՝ գրելով. «Եվ ինչ-

պես որ վերջինները ժամանակի պարագայի նշանակությամբ գործ են ածվում իբրև ժամանակի հայցական՝ փոխանակ ներգոյականի,— նա առավորել է կալ, նա իրիկունը կզա, նա ամառն եկավ և այլն,— նույն ձևով բանում են և՛ նա երեկ եկավ, նա վաղը կզա, նա էգուց կզա և այլն։ Այսօր բառն ևս նույն տեղի պարագայական խնդիր է և ոչ մակբայ, ինչպես որ պարագայական խնդիր են՝ նա այս շաբաթ գնաց, նա այս ամիս դնաց, նա այս տարի գնաց, Այս ամառ ես գյուղումն էի, Այս ձմեռ ձյուն եկավ և այլն խոսքերի մեջ այս շաբաթ, այս ամիս, այս տարի, այս ամառ, այս ձմեռ»<sup>3</sup>։ Ելնելով սրանից էլ նա գտնում է, որ պետք է գրել որպես երկու բառ՝ այս օր, ինչպես որ գրվում են այս շաբաթ, այս ամիս, այս տարի և այլն։

Կարծում ենք, որ ճիշտ չի հավասարության նշան դնել այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմի, առաջ և շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն բառերի միջև։ Այս երկու խմբերի բառերը հավասարեցվում են, որովհետև հավասարապես հոլովվող բառեր են և պահում են իրենց հոլովական նշանակությունները։ Դա, իրոք, ընդհանրություն է։ Բայց բառերի այդ խմբերը չունեն արդյոք ձևակազմական և իմաստային ու կիրառական տարբերություններ։ Այսպիսի տարբերություններ անշուշտ կան։ Դրանք կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Առաջին խմբի բառերը հոգնակի թիվ չեն կարող կազմել (միայն գործածական է առաջ բառի հոգնակի ներգոյականի ձևը՝ առաջնեում), իսկ երկրորդները ազատ գործածվում են հոգնակի թիվով՝ շաբաթներ, ամիսներ, տարիներ և այլն։ Ըստ այդմ՝ վերջիններն ազատ կապակցվում են քանակական թվականների հետ՝ երեկ շաբաթ, չորս ամիս, հինգ տարի և այլն, իսկ առաջինները քանակական թվականների հետ գործածվել չեն կարող. երկու այսօր, չորս երեկ և այլ ձևեր չեզվում գոյություն չունեն։

2. Առաջին խմբի բառերը, որպես կանոն, ենթակայի և խնդրի պաշտոններով հանդես գալ չեն կարող, իսկ երկրորդ խմբի բառերի գործածությունն այդ պաշտոններով սովորական է ու զանգվածային։

3. Առաջինները սովորաբար որոշիչներ ընդունել չեն կարող՝ գեղեթեկ, հաղթական այսօր, վաղը, էգուց և այլ կապակցությունները գործածական չեն, իսկ երկրորդները ազատորեն որոշիչներ են ընդունում՝ գեղեթեկ, հաղթական շաբաթ, ամիս, տարի և այլն։

Այս երկու խմբի բառերի ձևակազմական և կիրառական-շարահյուսական տարբերություններն արդյունք են այն բանի, որ շաբաթ, ամիս, սակայն տարբերություններն արդյունք են այն բանի, որ շաբաթ, ամիս և այլ բառերը ցայտուն դրսևորված առարկայական նշանակություն են արտահայտում, իսկ այսօր, վաղը, երեկ, էգուց, այժմ, հիմի, առաջ բառերի առարկայական նշանակությունը եթե խպատ էլ չի մատրի, ապա որոշակի շափով խամրած է։ Այս բառերի մեջ առարկայական

<sup>2</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 382։

<sup>3</sup> ԱճՊ, էջ 383։

նշանակութեան որոշ հետքեր պետք է տեսնել այնքանով, որքանով որ վերջիվերջոյ դրանք հոլովվող բառեր են, բայց պետք է նկատի ունենալ, որ դրանց հոլովական ձևերը՝ այսօր—այսօրվա—այսօրվանից, երեկ—երեկվա—երեկվանից, վաղը—վաղվա—վաղվանից և այլն հանդես են գալիս պարագայական (ուղղականը և բացառականը) և որոշչային ֆունկցիաներով, այսինքն՝ ոչ առարկայական, ոչ գոյականական ֆունկցիաներով:

Այսքանից հետո ո՞րն է ընդհանուր եզրակացութիւնը. այսօր, երեկ, վաղը, էգուց, հիմի, առաջ բառերը գոյականներ, թե՞ մակբայներ են: Եթե այդ հարցին անպայմանորեն պետք է պատասխանել, ապա դրանք ավելի մակբայներ, քան թե գոյականներ են, որովհետև խոսքի մեջ հանդես են գալիս ոչ թե գոյականի, այլ մակբային հատուկ շարահայտական ֆունկցիաներով, իսկ բառերի շարահայտական ֆունկցիան վերջիվերջոյ բխում է և պայմանավորված է նրանց խոսքիմասային իմաստով:

Բերված փաստերից միաժամանակ բխում է նաև այն եզրակացութիւնը, որ առանձին դեպքերում եթե շատեր անհնարին, ապա շատ դժվար է առանձնացնել գոյականն ո՞ւմ մակբայը միմյանցից: Հայ քերականութիւնների մեջ այդ հարցի վերաբերյալ հատուկ շփանհիշներ չեն մշակված: Դա ցույց տալու համար նշենք հետևյալը: Ս. Աբրահամյանը մի կողմից կեսօրին, կեսգիշերին, գիշերով, ցերեկով համարում է մակբայներ<sup>5</sup>, իսկ մյուս կողմից էլ «Երեխաները խաղում են դրսում»։ «Ներսում շատ շոգ է» նախադասութիւնների դրսում և ներսում բառերը համարում է գոյականներ<sup>6</sup>: Անմիջաբար նկատվում է, որ գոյականի ու մակբայի տարբերակման ու սահմանագծման միասնական շփանհիշ չկա: Ինչո՞ւ են կեսօրին, կեսգիշերին, գիշերով, ցերեկով ձևերը մակբայներ. չէ՞ որ դրանք կենդանի հոլովական ձևեր են, պահպանում են իրենց հոլովական նշանակութիւնը, առարկայական իմաստը և ըստ այդմ կարող են որոշիչներ ընդունել, ինչպես՝ արևավառ կեսօրին, մութ կեսգիշերին, ձյունախառն գիշերով, անձրևային ցերեկով:

Այդ դեպքում ինչո՞ւ մակբայներ չհամարել նաև, ասենք, իրիկնապահին, լուսաղեմին ձևերը հետևյալ նախադասութիւնների մեջ. «Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտառում» (Թում.). «Լուսաղեմին տրդերքը վերադարձան» (Թում.):

Մյուս կողմից, եթե հակառակ այս բոլորին՝ դրանք համենայն դեպս մակբայներ են, ապա առավել ևս մակբայներ են դրսում և ներսում (դրս և ներս) ձևերը, որովհետև դրանց առարկայական նշանակութիւնը համարյա զգալի չէ և այդ պատճառով էլ չեն կարող որոշիչներ

ընդունել (մեծ ներսում, մեծ դրսում, լավ ներսում, լավ դրսում և նման այլ կապակցութիւններ լեզվում գոյութիւն չունեն):

Պետք է ուշադրութիւն դարձնել նաև հետևյալ հանգամանքի վրա՝ Ս. Աբրահամյանը, ի թիվս ուրիշների, տեղի մակբայներ է համարում նաև վեր, վար, մեջտեղ, հեռու բառերը, ըստ որում, որպես օրինակներ բերվում են այնպիսի նախադասութիւններ, որոնց մեջ այս բառերը գործածվում են ուղիղ ձևով, ինչպես՝ «Սմբատը երբեմն նայում էր վեր»։ «Նա կանգնեց սենյակի մեջտեղ»։ «Բյուրավոր ճառագայթները տարածվում են հեռու ու նեղուս»<sup>7</sup>: Հայտնի է, որ այս բառերը հոլովվում են, ինչպես՝ վեր—վերի—վերից, մեջտեղ—մեջտեղի—մեջտեղից—մեջտեղում, հեռու—հեռվի—հեռվից—հեռվում: Մի կողմ թողած սևոական-տրական հոլովը, հարց է տալանում՝ այս բառերի բացառական, գործիական և ներգոյական ձևերը ևս մակբայներ են, թե՞ ոչ: Ս. Աբրահամյանի գրքում այս հարցի պատասխանը չի տրված, բայց բերված օրինակներից կարելի է հոգանել, որ հեղինակը մակբայներ է համարում միայն այս բառերի ուղիղ ձևերը: Սակայն մեր խորին համոզմամբ այս բառերի ուղիղ և թեք ձևերի միջև խոսքիմասային տարբերութիւններ չկան: Եթե հեռու բառը մակբայ է «Նա դնաց հեռու» նախադասութեան մեջ, ապա նա մակբայ է նաև «Նա գալիս է հեռվից» նախադասութեան մեջ: Նույն ձևով էլ՝ եթե վեր բառը մակբայ է «Նա նայում է վեր» կապակցութեան մեջ, ապա մակբայ է նաև «Նա նայում է վերից» կապակցութեան մեջ: Ըստ երևույթին այսպիսի բառերի և՛ ուղիղ, և՛ թեք հոլովական ձևերը, որոնք չեն կարող խնդրի ֆունկցիայով հանդես գալ, փաստորեն մակբայներ են կամ գտնվում են մակբայացման ճանապարհին:

Սակայն ինչպես էլ որ մոտենանք այս հարցերի լուծմանը, մի բան պարզ է ու որոշակի. լրիվ տրամաբանական ու հետևողական և հակասութիւններից բացարձակապես զերծ քերականական համակարգեր չեն եղել և ըստ երևույթին չեն էլ լինի, որովհետև կենդանի ու զարգացող և ժողովրդի բերանում հավերժ ծփացող այդ անհուն օվկիանոսը քերականական կաղապարներով ու կանոններով պարփակելն ուղղակի անհնար է, և լեզվաբանը միշտ վերահասու է լեզվի միայն ամենաընդհանուր օրինաչափութիւններին:

Այսպիսով, կատարված վերլուծութիւններով և որոշ լեզվաբանների հայացքների քննադատական շարադրանքով ուրվագծվեցին մակբայի, որպես խոսքի մասի, իմաստային ու ձևաբանական առանձնահատկութիւնների և շարահայտական կիրառութեան ոլորտների ընդհանուր պատկերը: Այժմ անցնենք մակբայների ուսումնասիրութեան հետ կապված կոնկրետ հարցերի քննութեանը:

<sup>5</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Զօթարդ խոսքի մասերը..., էջ 259:

<sup>6</sup> Տե՛ս անդ, էջ 230:

<sup>7</sup> Տե՛ս անդ, էջ 264:

**ՊԱՐԶ ՄԱԿՐԱՅՆՆԵՐ.**— Կազմութեամբ մակբայները տարբերվում են նյութական իմաստ արտահայտող մյուս խոսքի մասերից նրանով, որ, մի կողմ թողած մակբայաբար հանդես եկող սրակական ածականները, բուն մակբայների մեջ մտնող արմատական բառերը շատ քիչ են. զըրանց բանակը չի անցնում մի բանի տասնյակից: Ժամանակակից լեզվի անսակետից արմատական կարող են համարվել հետևյալ մակբայները. երբևմե, այժմ, միշտ, հետո, իսկայն, նախ, ապա, իսպառ, արդեն, միասին, հիմա, երբեք, վե՛ր, մերք, կամաց, շարունակ, աստ, անդ, ամենուր, հապենպ, հավետ, հավերժ, հանկարժ, կանախ, հույժ, հար, շտապ, արդ, ուշ, շուտ, վեր, վար, ցած, առաջ, արագ, դանդաղ և այլն: Նշենք, որ ժամանակակից լեզվի տեսակետից պարզ կամ արմատական համարվող բերված մակբայների գոնե մի մասը պատմականորեն ոչ թե պարզ, այլ բաղադրյալ բառեր են:

Պարզ մակբայների սակավաթիվ բանակը լեզվում անընդհատ համարվում է հատկապես կրկնավոր բարդությունների և գոյականի մեծած կամ բարացած հոլովական ձևերի ու նախորդիվ կապակցությունների միջոցով և ածանցմամբ:

**ԿՐԿՆԱՎՈՐ ՄԱԿՐԱՅՆՆԵՐ.**— Նախ նշենք, որ մակբայական նշանակությամբ կարող են կիրառվել ածականների կրկնությամբ կազմված սաստկական կամ բազմակիտության նշանակություն ունեցող ածականները, ինչպես՝ ծանր-ծանր (նստել), ուրախ-ուրախ (գնալ), հպարտ-հպարտ (բայել), ծուռ-ծուռ (նայել), բաց-բաց (մեկնվել), ամուր-ամուր (սեղմել), բարձր-բարձր (խոսել), խեղճ-խեղճ (նայել) և այլն:

Մակբայների մի զգալի մասն էլ կազմվում է մակբայների և գոյականների պարզական կրկնությամբ, ինչպես՝ կամաց-կամաց, արագ-արագ, մերք-մերք, ստեպ-ստեպ, շուտ-շուտ, ուշ-ուշ, շարուն-շարուն, հիվանդ-հիվանդ, խումբ-խումբ, առու-առու, հուլունք-հուլունք և այլն:

Սակայն շափազանց շատ են այն մակբայները, որոնք կազմվում են գոյականների կրկնությամբ առ նախորդով, օրինակ՝ շիք առ շիք, կաթիլ առ կաթիլ, ֆայլ առ ֆայլ, բույն առ բույն, վայրկյան առ վայրկյան, բառ առ բառ, տող առ տող, ողկույզ առ ողկույզ, արցունք առ արցունք և այլն:

Կրկնավոր մակբայներ կան նաև Ի և Յ նախդիրներով, ինչպես՝ հեկհեկ, խառնիխառն, հերք ի հերք, շար ի շար, դուրս ի դուրս, օրեցօր, տարեցտարի:

Կրկնավոր մակբայները շատ-շատ են առաջին բաղադրիչի բացառականի Ծ ձևով, ինչպես՝ ֆաբեֆաբ, սաբեսաբ, բերենբերան, շարեշար,

<sup>6</sup> Այս հատվածի շարադրանքը հմտ. Ս. Աբրահամյան, Զօրավոր խոսքի մասերը..., էջ 238—256:

դանդաղ, դարեդար, ժամեծամ, պատեպատ, տնետուն, գյուղեգյուղ, ձրեձուր և այլն:

Մակբայական իմաստներ են արտահայտվում նաև ժամանակի ու տեղի հատկանիշ իմաստ արտահայտող մի քանի բառերի միացությամբ ՈՒ շողկապով կամ առանց դրա, ինչպես՝ գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ, դեռ-դեռ կամ գիշեր ու ցերեկ, ամառ ու ձմեռ, դեռ ու դեռ, զօր ու գիշեր, աչ ու ձախ, տակն ու վրա և այլն:

**ՔԱՐԱՑԱՄ ՆՈՒՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՑ ԵՎ ՆԱԽԴՐԻՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱՄ ՄԱԿՐԱՅՆՆԵՐ.**— Մակբայների մի զգալի մասն առաջանում է գրաբարյան կամ ուղղակի հին հոլովական ձևերից և նախորդիվ կապակցություններից, ինչպես՝ վաղուց, հնուց, մանկուց (մանկութ), փոքուց, այսուհետև, այնուհետև, արդեն, արդյոք, հավաստյալ, հազիվ, ի բնե, ի սրտե, ի վերջա, ի մտոտ, ի տես, ի ցույց, ի սպաս, իծե՛ք, ցմահ, ցգերեզման, ցայսօր, առայժմ, առմիշտ, առնավետ և այլն:

Այսպիսի բառերի մեջ առանձին տեղ են գրավում տեղի իմաստ արտահայտող մի շարք գոյականների և ի վերի վար կապերի կապակցությունները, ինչպես՝ սարն ի վերսարն ի վար, լեռն ի վերլի վար, ջուրն ի վերլի վար, գետն ի վերլի վար, ջրվեժն ի վերլի վար և այլն: Դրանք այնքան շատ են և այնքան ազատորեն են կազմվում, որ կարող են համարվել բառերի պարզ շարահյուսական կապակցություններ:

**ՄԱԿՐԱՅՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԱՅԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՑ ԶԱՅԵՐԵՆԻ ՄԱԿՐԱՅՆԱԿԵՐՏ ԱՅԱՆՑՆԵՐԸ.**— Հայերենում մակբայների կազմության մեջ շափազանց մեծ դեր է խաղում ածանցումը: Կան մոտավորապես մեկ տասնյակ ածանցներ, որոնք միայն մակբայներ են կազմում կամ հանդես են գալիս մակբայների կազմության մեջ: Դրանցից ամենագործունեն են ԲԱՐ, ՊԵՍ, ՈՐԵՆ ածանցները: Առաջին երեկուսը միշտ բառերին են միանում Ա հոդակապով:

ԲԱՐ, ՊԵՍ և ՈՐԵՆ ածանցները, հատկապես ԲԱՐ և ՈՐԵՆ ածանցները, իմաստով իրար շատ մոտ են և հաճախ դրվում են միևնույն բառերի վրա՝ այսպիսով կազմելով համանիշ բազմաթիվ բառեր, ինչպես՝ ազանաբարաորեն, անկախաբարաորեն, գազանաբարաորեն, լազանաբարաորեն, գերազանցաբարաորեն, լազանաբարաորեն, գերազանցաբարաորեն, վերջնականաբարաորեն և այլն:

Սակայն, չնայած այսպիսի զուգահեռություններին, այս ածանցների մեջ կիրառական և իմաստային որոշ տարբերություններ են նկատվում:

**ԲԱՐ.**— Ծագում է բարբ բառի բար արմատից և իր նյութական իմաստով առկա է բարբ, բարուկան, գազանաբար և այլ բառերի մեջ: ա) Գործածվելով անձի, սակավազիկ նաև կենդանիների անունների հետ՝ նշանակում է «իբրև», «որպես», «եման», «ձեռով», օրինակ՝

բարեկամաբար, ասպետաբար, ավագակաբար, եղբայրաբար, ընկերաբար, թշնամաբար, առյուծաբար, աղվեսաբար և այլն:

Կան նաև այսպիսի կազմութիւններ՝ գոյականաբար, ածականաբար, մակբայաբար. բոլորաբար, վայրկյանաբար. աստիճանաբար, անմիջաբար:

բ) Դրվելով հատկապես անձի հատկանիշ ցույց տվող որակական ածականների վրա, որոնք սովորաբար մակբայաբար կամ կարող են գործածվել, նրանց վերածում է «մաքուր» մակբայների՝ նշանակելով «կերպով», «ձևով», «ինչպես՝ ազնվաբար (ազնիվ կերպով)», ազահաբար, անամոթաբար, գոռոզաբար, խիզախաբար, կուպտաբար, հեզաբար, նենգաբար, փաշտաբար, կեղծաբար և այլն:

ՈՐԵՆ.— Առաջանում է օրէնք բառի օրէն արմատից և իր նյութական իմաստով առկա է օրենք, օրինական, օրինակապան, ապօրինի և բազմաթիվ այլ բառերի մեջ: Զրկվելով առարկայական նշանակութիւնից՝ որպես ածանց նշանակում է «ձևով», «կերպով», «նման», «պես»:

ա) Դրվելով ածականների վրա՝ նրանց վերածում է «մաքուր» մակբայների՝ նշանակելով «կերպով», «ձևով», «ինչպես՝ ազահոռեն, ազատորեն, ազնվորեն, անկեղծորեն, գիտակցորեն, դաժանորեն, զգաստորեն, թեթևամտորեն, խիզախորեն, կատաղորեն, հարազատորեն, հարկորեն, նշտորեն, մեղմորեն, միամտորեն, նենգորեն, ջերմորեն, վստահորեն և այլն: Այս իմաստով ՈՐԵՆ ածանցը նույնանիշ է ԲԱՐ ածանցին:

բ) Ձևի մակբայներ է կազմում նաև մի շարք գոյականներից՝ նշանակելով «պես», «ձևով», օրինակ՝ ասպետորեն, ավագակորեն, զազանորեն, եղբայրորեն, ստրկորեն, վարպետորեն: Այսպիսի կազմութիւններ, սակայն, ավելի շատ են ԲԱՐ ածանցով:

գ) Դրվելով հատկապես ԱԿԱՆ ածանցն ունեցող մի շարք բառերի վրա (որոշ դեպքերում բաղադրութիւն մեջ ԱԿԱՆ ածանցը չի պահպանվում)՝ ՈՐԵՆ ածանցն արտահայտում է մասնական, մասնավորեցման իմաստ՝ նշանակելով «կողմից», «տեսակետից», «ինչպես՝ գիտականորեն (գիտական կողմից, տեսակետից)», գործնականորեն, տեսականորեն, պայմանականորեն: լեզվականորեն, ֆերականորեն, էականորեն, գեղարվեստորեն, թվաբանորեն, հանրահաշվորեն, ռաբանորեն, ձևաբանորեն, իմաստաբանորեն և այլն:

ՊԵՍ.— Նույնանում է պես արմատին և նախնական բաղադրութիւնների մեջ գործածվել է հենց այս նշանակութիւնով, ինչպես՝ տղայապես (տղայի պես), վայրենապես, զինվորապես, օտարապես, բժշկապես:

ա) Դրվելով գոյականների վրա՝ մասնական իմաստ արտահայտող մակբայներ է կազմում «տեսակետից», «կողմից» բառերի նշանակու-

թյամբ: «Այս մակբայները համապատասխան են նույն գոյականներից ԱԿԱՆ ածանցով կազմված ածականներին»<sup>10</sup>, ինչպես՝ գաղափարապես (գաղափարական տեսակետից), մեթոդապես, ֆիզիկապես, բարոյապես. ապան ձևով՝ ֆառափականապես: Կան նաև՝ արտաքինապես, ներքինապես:

բ) Դրվելով ածականների վրա՝ նրանց վերածում է մակբայների և նշանակում է «կերպով», «ձևով», օրինակ, արժանավորապես, գլխավորապես, հայտնապես, հատկապես, հիմնավորապես, մոտավորապես, վերջնականապես, վնասականապես և այլն:

Կան այլ ածանցներ ևս, որոնք մակբայներ են կազմում կամ մասնակցում են մակբայների կազմութիւնը, բայց դրանք ԲԱՐ, ՈՐԵՆ և ՊԵՍ ածանցների նման գործուն ու տարածված չեն: Ստորև բերվում են այս կամ այն չափով կենդանի բառակազմական նշանակութիւն ունեցողները:

ՈՎԻՆ՝ ՈՎԻ.— Կազմում են ձևի կամ իմաստային այլ երանգներ ևս ունեցող մակբայներ, օրինակ՝ ազգովին, խմբովին, լիովին, գլխովին, ամբողջովին, բոլորովին, ամենևին, տակավին, տնովի (տուն-տնովի), յուրովի:

ՊԱՏԻԿ.— Կազմում է շարժ և քանակի մակբայներ, օրինակ՝ կըրկնապատիկ, եռապատիկ, քառապատիկ, հնգապատիկ, յոթնապատիկ, բյուրապատիկ, բազմապատիկ և այլն:

ՈՒՅ.— Բացառական հոլովի ՈՒՅ վերջավորութիւնն է, որը մի բանի բառերի մեջ ածանցի արժեք ունի՝ կազմելով ժամանակի մակբայներ, օրինակ՝ առաջուց, հնուց, մանկուց, վաղուց, շուտուց, այլև՝ էզուց:

ԱՆՅ.— Գործածվում է որոշ բառերի մեջ՝ կազմելով ձևի մակբայներ՝ երեսանց, կողմանց, արտանց, շապկանց:

ՈՒՍ.— Գործածվում է որոշ բառերի մեջ՝ կազմելով տեղի մակբայներ՝ արտաֆուտ, ներֆուտ, վերուտ, հեռուտ: Առաջին երկուսի մեջ զգալի է նաև ձևի նշանակութիւնը:

ԱԿԻ.— Կազմում է մի քանի բառեր, որոնք համատեղում են և՛ մակբայական, և՛ ածականական նշանակութիւն, օրինակ՝ շեղակի (հարմարեցված, հարված), շեշտակի, լայնակի, ուղղակի, հանկարծակի, հաճախակի, երբեմնակի:

ՎԱՐԻ.— Սովորաբար ներկայացվում է որպես ածականակերտ ածանց, բայց դրանով կազմված բառերը իրենց մեջ համատեղում են նաև մակբայական իմաստ ու կիրառութիւն, օրինակ՝ ֆառափվարի նաև մակբայական իմաստ ու կիրառութիւն, օրինակ՝ ֆառափվարի նաև մակբայական իմաստ ու կիրառութիւն, որ ժողովրդա-խոխոսել, տղայավարի վերաբերվել: ՎԱՐԻ ածանցը, որ ժողովրդա-խոսակցական երանգ ունի, կազմում է մի շարք բառեր, ինչպես՝ գլուխապարի, վարի, թուրավարի, հայավարի, տնավարի, գծավարի, իշխանավարի, իշավարի, տղավարի, գողավարի, մարդավարի և այլն: Մակբայական

<sup>9</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 276:

<sup>10</sup> Աճ, էջ 277:

կիրառութեամբ այս բառերն արտահայտում են ձևի նշանակութիւնը:

ԳԻՆ.— Այս ածանցով կազմված բառերը ևս որպես կանոն հանդես են գալիս ածականի և մակբայի ֆունկցիաներով, ինչպիսի՝ թախանձագին, խնդրանք, թախանձագին խնդրել: ԳԻՆ ածանցով կազմվում են մի շարք բառեր, օրինակ՝ թախանձագին, ուրբագին, տխրագին, լալագին, ցավագին, սրտագին, մոլեգին, հիվանդագին, զվարթագին, ուժգին և այլն:

**Մակբայների իմաստային դասակարգումը**

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՈՒ ՀԱՏԿԱՆՇԱՅԻՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ.— Հայ նոր քերականությունների մեջ մակբայներն ըստ իրենց արտահայտած իմաստի սովորաբար բաժանվում են չորս տեսակի՝ ժամանակի, տեղի, ձևի և շարժումի: Վերջերս ընդունվում են նաև ընդհանրական մակբայներ: Դրանք այն մակբայներն են, որոնք իրենց բառային իմաստի մեջ համատեղում են սարբեր տեսակի մակբայների նշանակությունները (ժամանակ ու ձև, տեղ ու ձև և այլն):

Մակբայն մակբայների ներքին իմաստային կողմը նկատի ունենալով՝ ավելի նպատակահարմար է նրանց հետևյալ ստորաբաժանումը: Մակբայները նախ կարելի է բաժանել նրկու խմբի՝ պարագայական, որոնք ցույց են տալիս գործողությանը ուղեկցող հանգամանքները, այսինքն՝ տեղ, ժամանակ և այլն, և հատկանշային, որոնք արտահայտում են գործողության որակային ու քանակական բնութագիրը, այսինքն՝ ձևը և քանակն ու աստիճանը: Այս երկու խմբերի իմաստային տարբերության մասին պատկերացում կարող են տալ հետևյալ օրինակները՝ «Նա երեկ եկավ», «Նա առաջ եկավ»: Առաջին նախադասության երեկ մակբայը սոսկ ցույց է տալիս, թե երբ է կատարվել գործողությունը և նրա ներքին կողմի հետ կապ ու առնչություն չունի: Երկրորդ նախադասության առաջ մակբայը, ընդհակառակն, անմիջապես առնչվում է գործողության ներքին կողմի հետ՝ այն բնութագրելով որակային տեսակետից:

Պարագայական մակբայները հայերենում լինում են ժամանակի և տեղի: Ուրիշ լեզուներում կան նաև պատճառի, նպատակի, պայմանի, հետևանքի և այլ մակբայներ: Հայերենում պատճառի ու նպատակի մի քանի մակբայներ կարելի է ցույց տալ միայն, օրինակ՝ ջգրու, ահա, ցրտու, դիտմամբ:

Հատկանշային մակբայներն իրենց հերթին լինում են՝ որակային (ձևի), օրինակ՝ դանդաղ գրել և քանակային (շարժում ու աստիճանի), օրինակ՝ շատ գրել:

**Ժամանակի մակբայներ**

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ.— Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը: Բայց ժամանակի գաղափարը բոլոր մակբայների մեջ նույն ձևով չի դրսևորվում, այլ ամենատարբեր ու բազմազան իմաստային կողմերով է արտահայտվում: Ահա այս վերջին հանգամանքն առիթ է տալիս ժամանակի մակբայները գոնե ամենաընդհանուր ձևով խմբավորելու առանձին իմաստային խմբերի մեջ<sup>11</sup>:

Մի խումբ մակբայներ ցույց են տալիս ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ, այսինքն՝ հասկանիչը ե՞րբ է դրսևորվում՝ խոսելու պահին, նրանից առաջ, թե՞ հետո: Այս իմաստային հակադրությունը ցույց են տալիս կերպով կորսվող ճիշտ կառուցված մեջ՝ «Առաջ դեռասան էր, հիմա բանաստեղծ է, հետո երևի քննադատ կդառնա» (նրկատեղ, որ տվյալ դեպքում անգամ զուգահեռություն գոյություն ունի բայական ժամանակների և մակբայների միջև):

Խոսելու պահի նկատմամբ ներկայի գաղափար են արտահայտում հիմա, հիմի, այժմ մակբայները, անցյալի գաղափար՝ առաջ մակբայը, իսկ ապագայի գաղափար՝ հետո մակբայը: Բացի դրանցից, ներկայի գաղափար է արտահայտվում նաև ներկայումս, անցյալի գաղափար՝ վերջերս, իսկ ապառնու գաղափար՝ առաջիկայում և հետագայում բաների միջոցով, որոնցից առաջինը ցույց է տալիս համեմատաբար մոտ, իսկ երկրորդը՝ հեռավոր ապագա: Դրանցից վերջերս ուղղական (հայցական), իսկ մյուսները՝ ներգոյական հոլովածի հիմքի վրա առաջացած մակբայներ են:

Իներնք այս մակբայների կիրառության մի քանի օրինակներ. «Իսկ հիմա լսեցե՞ք, մարդիկ, Շահ-Նամեն բանաստեղծ Չարենցի» (Չար.). «Հիմի ուրիշ երիտասարդներ են խաղում իմ մանկության ընկեր գետակի ափին» (Անան.). «Առաջ թեև «գազան» ու «ցեց»՝ կդառնայի շուտով ափին» (Թում.). «Հալատացե՞ք, ներկայումս ապրում են միայն դեռ մեծ» (Թում.). «Հալատացե՞ք, ներկայումս մեր մայրաքաղաքը ավելի է բասանդիները» (Շիրվ.). «Առաջիկայում մեր մայրաքաղաքը ավելի է զեղեցկանալու» (Լր.). «Հետագայում այդ աշխատանքները ավելի մեծ ծավալ են ընդունելու» (Լր.). «Վերջերս անկշտում գայլերի պես ընկան շենքերը» (Դեմ.):

Ներկա, անցյալ և ապառնի ժամանակների հետ այս կամ այն շարժում առնչություն ունեն կամ ընդհանրապես ժամանակային հաջորդություն են ակնարկում նաև այլ մակբայներ՝ վաղորճ, նախօրճ, շուտով,

<sup>11</sup> Հետագա շարադրանքը հմտ. Ս. Աբրահամյան, Չթերվող խոսքի մասերը... էջ 257—263:





«—Մտ'տ եկեք,— առանց որևէ ջերմութեան հրավիրեց Շուշանը» (Խանգ.).  
«Նայում են ներքև ... ձեն շի գալիս դեռ» (Քում.). «Հուզվում են, հո-  
տում հեղեղները մեծ, Մաղլցում վերև ու թավալվում ցած» (Տեր.). «Քա-  
վամազ հոնքերը կարծես վայր իջան՝ աչքերի սուր հայացքն ավելի խրս-  
տացնելու համար» (Մուր.). «Եվ քարավանը օրոր ու շորոր գնում էր  
առաջ ու ետ շէր նայում» (Իս.). «Իուրս եկանք դուռը. նայեցի վերև»  
(Քում.). «Օրիորդը ձեռները գրեց ծոցը, հայացքը հառեց հեռու» (Շիրվ.):

Դրանց մեծ մասի ձևաբանական առանձնահատկությունն այն է,  
որ հոլովոյղ բառեր են, օրինակ՝ մեջ—միջից—միջով, ներս—ներսից—  
ներսում, դուրս—դուրսից—դուրսում և այլն: Այս առանձնահատկությամբ  
էլ այս բառերը հակվում են դեպի գոյականները, և շատ քերականներ  
դրանք հենց գոյականներ էլ համարում են: Բայց որովհետև սրանց ա-  
ռարկայական նշանակությունը խամրած է կամ զգալի շափով խամրած  
է, այդ իսկ պատճառով էլ այդ բառերի և՛ ուղիղ, և՛ թեք հոլովական  
ձևերը որպես կանոն հանդես են գալիս միայն պարագայական ֆունկ-  
ցիաներով: Սա ինքնին նշանակում է, որ այս ձևերը փաստորեն մակ-  
բայներ են: Դրա օգտին է խոսում նաև այն, որ առաջ, ներքև, վերև և  
այլ բառերի և՛ ուղիղ, և՛ թեք հոլովական ձևերը որոշիչ լրացումներ ըն-  
դունել չեն կարող:

Ստորև բերվում են վերոհիշյալ բառերի թեք ձևերի մակբայական  
կիրառության օրինակներ. «Եվ թեթև նետած սլաքի նման՝ Դեմից մի  
թռչուն անցավ սրբնթաց» (Չար.). «Ներքևից վերև գարմացած նայում  
էր ինձ» (Անան.). «Հարկահանը տակից վեր նայեց և շպտաստիանեց»  
(Դեմ.). «Ներքևում մուգ-կանաչ անտառներ են տարածվում, իսկ վերև-  
վում՝ ալպիական արոտներ» (Անան.). «Ճանապարհին Սանդուխտն ա-  
ռաջից էր գնում Շահանն ու Օհանը միասին, Օհանի սղան հետևից»  
(Բակ.). «Առջևից գալիս էին մի խումբ կանաչք» (Դեմ.). «Նրանք գա-  
լիս էին հետվից, շատ հետվից» (Րաֆֆի). «Իմացից երկու գյուղացի  
դուրս եկան» (Քում.). «Նստից մի խոսք տնքոց լսեցի» (Քում.). «Դուրսում  
տիրում էր ջերմ, լուսապայծառ օր» (Րաֆֆի). «Ներսում տաք-տաք վի-  
ճարանում էին». «Այնտեղ, ցածում դեռ նիրհում են դաշտ ու ձոր» (Տեր.):

Այս բառերից մի քանիսը, օրինակ՝ դուրսը, ներսը, առջևը, հատկա-  
պես ժողովրդա-խոսակցական լեզվում, ուղիղ ձևով կարող են արտա-  
հայտել ներգոյականի իմաստ, ինչպես՝ «էս ժամանակ բազազն ու իր  
կինը վիճում էին ներսը» (Քում.). «Ներսը, սրտիս խորքում կամացուկ  
շարժվում է նա» (Չար.). «Իուրսը մայիսն է, արբածը, Դուրսը՝ խնդում  
ու աղմուկ» (Տեր.). «Առջևը հայրենի նեղ ձորն էր» (Խանգ.):

Վերոհիշյալ բոլոր բառերը և՛ ուղիղ, և՛ թեք ձևերով հանդես են  
գալիս նաև կապերի պաշտոնով, օրինակ՝ տան առաջ, տան մոտ, տան  
առաջից, տան մոտից, տան առաջով, տան մոտով և այլն:

Տեղի մակբայների մեջ հատուկ խումբ են կազմում տեղի հաջորդ-

ման իմաստ արտահայտող բառերը: Դրանք տեղ ցույց տվող գոյական-  
ների կրկնությունը. կազմված բաղադրություններ են, որոնցից առաջինը  
դրվում է գրաբարին և արևմտյան բարբառներին հատուկ բացառականի  
ե ձևով, իսկ երկրորդը՝ ուղիղ ձևով, ինչպես՝ դոնեղուտ, սարեսար, տնե-  
տուն, գյուղեգյուղ, ձորեձոր, քարեքար, պատեպատ, բերեբերան և այ-  
լն: Օրինակներ. «Քարեքար ընկան, դատարկուն եղան» (Քում.). «Սա-  
րեսար, ձորեձոր ընկնելով գուրս պիտի պահենք» (Դեմ.). «Հայրն ամեն  
ամիս տնետուն պատում էր» (Բակ.). «Նրա մասին բերեբերան պատ-  
մություններ էին անում» (Բակ.). «Քարեքար ընկավ, պատեպատ խրփ-  
վեց» (Սևակ): Այս մակբայների մեջ դրսևորվում է նաև ձևի իմաստ:

Տեղ ցույց տվող բառերի մեջ առանձին խումբ են կազմում գոյա-  
կանների և ի վեր, ի վար բառերի կապակցությունները, որոնք ցույց  
են տալիս ուղղություն դեպի վերև և ներքև, օրինակ՝ սարն ի վեր, սարն  
ի վար, գետն ի վեր, գետն ի վար, ջրվեժն ի վեր ի վար, հուսանքն ի  
վեր ի վար, հուճն ի վեր ի վար, լեռն ի վեր ի վար, ջուրն ի վեր ի վար,  
լանջն ի վեր ի վար, ձորն ի վեր ի վար, կիճն ի վեր ի վար և այլն:  
Տեղի անունը կարող է հոգնակի թվով ևս դրվել, օրինակ՝ սարերն ի վեր ի  
վար, լեռներն ի վեր ի վար, լանջերն ի վեր ի վար: Տեղի անունը  
առանձին դեպքերում կարող է գործիականով ևս արտահայտվել. ինչ-  
պես՝ «Մեր գետովն ի վեր «ամառանոց» գնալիս ձկների վերջին կայանը  
մեծ ջրվեժի տակն էր» (Անան.):

Ստորև բերվում են վերոհիշյալ ձևերի կիրառության օրինակներ.  
«Ոնգում իրար ուսի տալով, Երզը զնգում սարն ի վեր» (Քում.). «Ներ-  
քևից դուրս եկան ու ջուրնիվեր, ջուրնիվեր գնացին» (Քում.). «Փախչում  
են ցրվում ողջ սարերն ի վեր» (Քում.). «Ինչ անուշ է Ձեր լանջն ի վեր...»  
(Քում.). «Ամբողջ ուժով թռչում էին ջրվեժն ի վեր» (Անան.). «Սուրում  
էին ջրի կատաղի հուսանքն ի վեր» (Անան.). «Ես ցամաքող հունն ի վեր  
գնացի» (Անան.). «Լեռն ի վար վարգող եղևիկի ոտներ» (Սևակ). «Մե-  
րունու ձեռքերն ի վեր հառնում էր ինչ-որ կաթնագույն լուսապսակ»  
(Վերֆ.). «Կուրճեն ի վար շղթայով կապած էր ոսկեշրջանակ ակնոցը»  
(Վերֆ.):

Ինչպես նշված է արդեն, սարն ի վեր, սարն ի վար, գետն ի վեր,  
գետն ի վար և այլ ձևերը կարող են ազատ կերպով դիտվել որպես բա-  
ռերի սովորական շարահյուսական կապակցություններ:

Ամենուր և ամենուրեք մակբայները ցույց են տալիս տեղի ընդ-  
հանուր գաղափար և նշանակում են ամեն տեղ, օրինակ՝ «Իսկ նա հըն-  
չում էր ամենուր ու միշտ, Ամենուր ու միշտ, ուր հայն էր շնչում» (Սե-  
վակ). «Ամենուրեք մի կարոտ ես նետել դու» (Տեր.):

ՈՒՄՏ ածանցով կազմված վերուստ, արտափուտ մակբայները ցույց  
են տալիս տեղի սկզբնակետ, օրինակ՝ «Այս ճանապարհը ձեզ ի վե-  
րուստ սահմանած» (Չար.). «Արևունուստ է հրամայված»: նույն ա-



ծանցն ունեցող արտաճուստ, ներժուստ մակբայների մեջ ավելի գեր-  
իշխում է ձևի նշանակությունը, օրինակ՝ «Արտաճուստ գառ է ձևանում,  
բայց ներժուստ գայլ է»:

Դեմուդեմ, դեմդիմաց, դեմ հանդիման մակբայները համանիշ են  
և նշանակում են առարկաների տեղի այնպիսի հարաբերություն, որոն-  
ցից մեկը մյուսին է ուղղված առաջի մասով, դեմքով, ճակատով, օրի-  
նակ՝ «Ինձնուպեմ լղեմդիմաց լղեմ հանդիման կանգնած էին երկու ախո-  
յաններս»: Այս մակբայների մեջ ևս, բացի տեղի իմաստից, դրսևորվում  
է նաև ձևի իմաստ:

Գործողության տեղի ու ձևի իմաստային երանգ ունեն նաև տեղ-  
տեղ և տեղնուտեղը մակբայները, որոնցից առաջինը ցույց է տալիս,  
որ գործողությունը կամ հատկանիշը դրսևորվում է առանձին տեղերում,  
իսկ երկրորդն ուղղակի նշանակում է «տեղում», օրինակ՝ «Վիպում էր  
քեռին ու երգում տեղ-տեղ» (Սևակ). «Գազանը տեղ-տեղ վայր էր ըն-  
կել» (Անան.). «Եթե բոլոր ներկա եղողները լուսեաբար ու տեղնուտեղը  
մահանային, դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվեին» (Շիրվ.):

Ինչպես այս շարադրանքից կարելի է եզրակացնել, տեղի մակբայ-  
ները չեն կարող հավասարվել ժամանակի մակբայներին ո՛չ իրենց քա-  
նակով, ո՛չ էլ իմաստային բազմազանությամբ: Կարելի է ասել, որ հա-  
յերենում տեղի մակբայները շատ շեն, և լեզուն, ինչպես երևում է, կա-  
րիք էլ չի գգում համարելու դրանց քանակը, որովհետև տեղի պարա-  
գայական իմաստներն ավելի շատ արտահայտվում են գոյականների  
հոլովական ձևերի միջոցով:

#### Հատկաճշային մակբայներ

##### Որակական մակբայներ

ԱՐԳԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ.— Որակական մակբայ-  
ները ցույց են տալիս գործողության որակը, այսինքն՝ թե ինչ արտա-  
քին կամ ներքին հատկանիշ ունի գործողությունը և ըստ այդմ հանդես  
են գալիս ձևի պարագայի շարահյուսական ֆունկցիայով:

Գործողության որակը հայերենում նախ և առաջ արտահայտվում  
է որակական ածականների միջոցով, որոնք այդ դեպքում, ինչպես նըշ-  
ված է արդեն, կիրառվում են մակբայաբար, օրինակ՝ «Թուռն ու բնուշ  
պարում էին նրանք» (Իս.). «Ազատ, համարձակ անցնում էին նրա աչ-  
քերի առջևից» (Բաֆֆի). «Հիմա էլ պարզ ու հստակ տեսնում եմ քեզ»  
(Անան.). «Հարսներն ու աղջիկները լուռ ու խլուր ներս ու գուրս էին  
անում» (Թում.). և այլն: Այսպիսի բազմաթիվ օրինակներ տրված են  
նաև «Մակբայը որպես խոսքի մաս» հատվածում:

Բուն մակբայ հանդիսացող արմատական կամ որպես այդպիսին

գիտակցվող որակական մակբայներն արդի հայերենում շատ քիչ են:  
Դրանցից են՝ արագ, դանդաղ, հապենպ, շտապ, կամաց, ակամա, իս-  
կույն, հանկարծ. միասին, օրինակ՝ «Ամենից արագ էր մոտեցել լուսա-  
մուտին» (Շիրվ.). «Իսնդաղ ճեմում էր ծովափին երգի արբան իմաս-  
տուն» (Զար.). «Գնում է շտապ, քայլերը մոլոր» (Թում.). «Եվ հան-  
կարծ իմ մանկությունն ծանոթ ձայներով լցվեց հովիտը» (Անան.). «Մե-  
կը շշուկով պատմում է կամաց» (Տեր.). «Կամսարյանը իսկույն ծոցը  
դրավ հուշատետրը» (Մուր.) և այլն:

Որակական մակբայների հիմնական խումբն են կազմում ածական-  
ներից և գոյականներից ՈՐԵՆ, ԲԱՐ, ՊԵՍ ածանցներով կազմված մակ-  
բայները, որոնք նշանակում են «այս կամ այն կերպ», «այս կամ այն  
ձևով», «այս կամ այն բանի նման», ինչպես՝ «Ու քայլում է աղջիկն  
այնպես զգուշորեն» (Սևակ). «Մոր պես բնշտեն մոտեցիր դեմքիս»  
(Տեր.). «Քո սլաշածա գահից մեղմորեն իջիր» (Տեր.). «Մարությանը  
դարձյալ լուռ էր համառորեն» (Նար-Գոս). «Տխուր կծպտաս դու հոգ-  
նածորեն Ու հոգնածորեն դուռը կբանաս» (Տեր.). «Ա՛լ որդի, բո գուրսը  
պահ էլի,— հայրաբար խրատում էր նա» (Անան.). «Ու թևերն ահա  
փռած տիրաբուր, թռչում է հոգիս, թռչում դեպի տուն» (Թում.). «Եվ ոչ  
մի գործ նա չի վարել ազնվաբար» (Շիրվ.). «Ասաց տիկինը վնասբար»  
(Մուր.) և այլն:

Գործողության որակական հատկանիշ են արտահայտում նաև ՈՎԻՆ||  
ՈՎԻ, ՎԱՐԻ, ԱՆՅ, ԱԿԻ, ԳԻՆ ածանցներով կազմված մակբայները, օրի-  
նակ՝ «նմրովին վրա բերին սեպուհներն ու զինվորները ժիծադադեմ»  
(Գեմ.). «Թույլ տամ որ ինձ թրջի հիմնովին» (Անան.). «Ուրախանալու  
միայն ազգովին» (Սևակ). «Մենք արդեն մտովի ճաշակում ենք այդ լըթ-  
նաղ ուտելիքը» (Անան.). «Սմբատը լալախավարի, բայց սառը սեղմեց  
մեկի ու մյուսի ձեռքը» (Շիրվ.). «Մամիկոնյան նախարարն արագ ու  
կողմանց զննեց խոսողին» (Գեմ.). «Աշխատեց սրտով, խղճով, սրտանց»  
(Խանգ.). «Քննչազին սեղմեց իր կրծքին»:

Կան ձևի մակբայներ կազմող այլ ածանցներ ևս՝ ԻՎ, ՈՒԿ, ՈՎ և  
այլն, որոնք գործածվում են սակավաթիվ բառերի մեջ, օրինակ՝ «Մի  
սովեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով» (Տեր.). «Տիկինը խըս-  
տիվ պատվիրում էր սուրհանդակին...» (Բաֆֆի). «Գալիս են կրկին  
թեթև, կամացուկ» (Թում.). «Շտապով մոտեցավ եվայի սենյակի դա-  
նը» (Նար-Գոս). «Արևը մայր մտավ, օրը միանգամից ցրտեց» (Անան.).  
«Մենք լռելյայն առաջ գնացինք» (Անան.). «Շահյանը գաղտագողի դի-  
տում էր եվային» (Նար-Գոս):

Առանձին պետք է խոսել գոյականների կրկնությունը կազմված  
մակբայների մասին: Դրանք գործողության ձևի հետ միասին ցույց են  
տալիս նաև հաջորդություն, օրինակ՝ «Եվ շարուն-շարուն բարձրանում  
էր վեր Մեր բեռնավորված ընկերների շուն» (Զար.). «Հրթիռ-հրթիռ վեր

են թռչում կյանքերը մեր կարեկներ» (Զար.). «Վազն է լալիս այգում հուլունք-հուլունք» (Դավթ.). «Ձներն են լալիս, որ առու-առու Կրքից պղտորված իրար գիրկ վազեն» (Դավթ.). «Գաբրիել Բագրատյանն այս բառերն արտասանում է հաս-հատ» (Վերֆ.):

Հաջորդականության այդ իմաստն ալեի ցայտուն ձևով է դրսևորվում Անի նախորդ միացած կրկնավորների մեջ, օրինակ՝ «Քայլ առ քայլ հետևում էր նրան» (Րաֆֆի). «Թափվե՛ք, իմ երգեր, արցունք առ արցունք» (Տեր.). «Ընծայելով կաթիլ առ կաթիլ իր դառնագին հաճույքը» (Զար.). «Գրոհ են տալիս բանակ առ բանակ Մեն ու մենավոր արեգակի դեմ» (Սևակ). «Եվ աղջիկներն ա՜հա տաք բարություն են տանում կողով առ կողով» (Դավթ.). «Եվ կաթել է շիթ առ շիթ Տաք սրտի մեջ ողկույզի» (Դավթ.). «Ջրվեժ առ ջրվեժ խորանալով՝ ջրերը կորչում են կիրճի մեջ» (Խանդ.). «Եվ այսպես, դիվիդիա առ դիվիդիա, գունդ առ գունդ ծավալվեցին մեր զորքերը» (Լր.):

Ձևի ու հաջորդության այս իմաստն է արտահայտվում նաև հետևյալ օրինակներում. «Ժողովուրդ մի ողջ սրտով վշտառու Ելավ ներք ի հերթ, Ելավ շառ ի շառ իր խաղ ու պարի, իր տաղ ու երգի Կախարդիչ մոգին հրաժեշտ տալու» (Սևակ):

Հատկանիշի դրսևորման աստիճանականություն են ցույց տալիս հետզհետե, աստիճանաբար մակբայները, օրինակ՝ «Հետզհետե գիշերվա խավարն սկսեց նոսրանալ» (Թում.). «Աստիճանաբար վերացվում են նաև այդ թերությունները» (Լր.):

Ժողովրդական-խոսակցական լեզվում բայերից ձևի մակբայներ են կազմվում են օժանցով, ինչպես՝ օտոբալեն, շոռոբալեն, գնգալեն, օրինակ՝ «Ձենը դմբդմբալեն գալիս էր գեղը հասնում» (Անան.). «Էնպես էի կիկիպալեն գնում, ոնց որ կոկիկ ճամփով» (Անան.):

#### Քանակական մակբայներ

ԱՐԳԻ ՀԱՅՆՐԵՆԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆՆԵՐԸ.— Քանակական մակբայները ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի դրսևորման չափն ու աստիճանը և ըստ այդմ լինում են՝ շափի և աստիճանի:

Չափի մակբայներից մի քանիսը կազմվում են թվականներից և բանակ ցույց տվող բառերից ԱԿԻ, ՊԱՏԻԿ, ԻՅՍ օժանցներով, օրինակ՝ միապատիկ, միակի, երկակի, կրկնակի, եռակի, քառակի, հինգակի, բազմակի, երկարատիկ, եռապատիկ, քառապատիկ, հնգապատիկ, յոթնապատիկ, բյուրապատիկ, բազմապատիկ. երիցս, չորիցս, քառիցս, բազմիցս:

Գործողության կամ հատկանիշի դրսևորման քանակային չափը արտահայտվում է նաև թվականների և անգամ բառի կապակցությամբ կազմված վերլուծական մակբայների միջոցով, ինչպես՝ մեկ անգամ,

երկու անգամ, երեք անգամ, տաս անգամ (ասել, հրավիրել) և այլն:

Մի քանի մակբայներ ցույց են տալիս կրկնողություն, ինչպես՝ նորից, նորեն, կրկին, վերստին, դարձյալ, օրինակ՝ «Նրան նորից ձերբակալեցին», նորից թշեցին Սիրի» (Խանդ.). «Այժմ դու նորեն կամենում ես մեզ թողնել» (Մուր.). «Սամվելը կրկին մտավ յուր ընդունարանը» (Րաֆֆի). «Դարձյալ իջավ գիշերը, դարձյալ ու կրկին Մենակ ես դու ինքդ բո դեմ մերկ ու բաց» (Տեր.). «Ձի կամենա նա վերստին թեզ տանել» (Տեր.):

Բավական շատ են այն մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի դրսևորման աստիճանը: Դրանցից են՝ շատ, քիչ, բավական, բավականին, շախագանց, սաստիկ, խիստ, հագիվ, ամբողջապես, բոլորովին, ամենևին, իսպառ, հույժ, անչափ և այլն: Օրինակներ. «Գիշերը նա շատ ուշ վերադարձավ Մուշեղի մոտից» (Րաֆֆի). «Արևը բավական բարձրացել էր» (Րաֆֆի). «Կոիվը իմ ներսում շափազանց երկար տևեց» (Անան.). «Ես սաստիկ ամաչեցի ու էդ շափ փողն էլ տվի» (Թում.). «Աշնանամուտին գետակները խիստ բարակում են» (Անան.). «Լեռը պարտոված էր հագիվ լսելի ոսկհետն թնդունով» (Վերֆ.). «Հայաստանը մնացել էր բոլորովին անտեր ու անսպառախ» (Րաֆֆի) և այլն:

Գրեթե և համարյա մակբայները ցույց են տալիս հատկանիշի կամ գործողության դրսևորման մոտավոր աստիճանը, օրինակ՝ «Նա համարյա չսեց վերջին խոսքերը» (Րաֆֆի). «Այսօր փողոցը գրեթե ամալի էր» (Շիրվ.):

Գործածվելով քանակական թվականների հետ՝ դրանք ցույց են տալիս քանակի մոտավորություն, օրինակ՝ «համարյա հինգ տարի», «գրեթե վեց ամիս»:

Թվականների հետ քանակի մոտավորություն են արտահայտում նաև մոտ, մոտավորապես, շուրջ մակբայները, օրինակ՝ «Մոտմոտավորապես՝ շուրջ երեք տարի շեմ տեսել նրան»:

Ի տարբերություն դրանց՝ ուղիղ և ճիշտ բառերը ցույց են տալիս տվյալ թվով արտահայտված քանակի լրիվությունը, ճշտությունը, օրինակ՝ «Ուղիղ հիսուն տարի ատաղ թողնելով իր աննշան ծննդավայրը...» (Շիրվ.). «Ճիշտ հիսունհինգ տարեկան էր սրբազանը» (Շիրվ.):

Ընդամենը մակբայը ցույց է տալիս տվյալ թվով արտահայտված քանակի ամբողջությունը, օրինակ՝ «Այդ դժբախտ դեպքից անցել է ընդամենը երեսուն տարի» (Րաֆֆի). «Նշանակել էր նրան ընդամենը մի հարյուր ուրբի գրպանի ծախք» (Շիրվ.):

\* \* \*

Բացի նշված խմբերից, ընդունվում են նաև ընդհանրական մակբայներ: Ընդհանրական են կոչվում այն մակբայները, որոնք ըստ կի-

բառուժյան տարբեր իմաստներ են արտահայտում կամ էլ հենց տվյալ կիրառութայն մեջ համատեղում են տարբեր իմաստներ:

Այսպես, առաջ մակբայն ըստ կիրառութայն ունի տեղի և ժամանակի իմաստներ, ինչպես՝ «Զորքերը շարժվեցին առաջ» և «Առաջ նա սիրում էր ինձ»: Մեկ-մեկ բառը ըստ կիրառութայն արտահայտում է շափի ու ձևի և ժամանակի իմաստներ, օրինակ՝ «Մեկ-մեկ խոսեցեք և ոչ թե խմբով» և «Մեկ-մեկ մոռանում եմ»: Շուտ-շուտ մակբայը ըստ կիրառութայն համատեղում է ժամանակի և շափի ու ձևի իմաստներ, օրինակ՝ «Նա շուտ-շուտ (հաճախ) է գալիս մեր տուն», և «Շուտ-շուտ արի, ուշանում ենք»:

Մրանից տարբեր երևույթ է, երբ նույն մակբայը հենց միևնույն կիրառութայն դեպքում համատեղում է պարագայական տարբեր հատկանիշներ:

Այսպես, արտաֆուտ, ներֆուտ մակբայների մեջ տեղի իմաստի հետ միասին զարգացել է նաև ձևի նշանակություն և դրանք ավելի ձևի իմաստով են ըմբռնվում: Տեղի և ձևի իմաստները համատեղում են նաև տեղնուտեղը, դեմ առ դեմ, դեմ դեմի, դեմ հանդիման, դեմ դիմաց մակբայները:

Որոշ մակբայների մեջ համատեղվում են ժամանակի և ձևի նշանակությունները, օրինակ՝ իսկույն, ռոպեապես, անմիջապես, վայրկենաբար, ստեղ-ստեղ, հաճախ, շարունակ, անընդհատ, մերթ րնդ մերթ: Վերջին օրինակներում իրեն զգացնել է տալիս նաև շափի նշանակությունը:

Կան մի քանի մակբայներ էլ, որոնք համատեղում են շափի ու ձևի նշանակությունները, ինչպես՝ բոլորովին, իսպառ, ամբողջովին:

## Կ Ա Պ

ԿԱՊԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ.— Կապերը հակադրվում են նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերին՝ գոյականին, ածականին, թվականին, բային և մակբային նրանով, որ ոչ թե արտահայտում են օբյեկտիվ աշխարհն իր առարկաներով ու երևույթներով, հատկանիշներով ու գործողություններով, այլ ցույց են տալիս հարաբերություններ, այսինքն արտահայտում են քերականական իմաստ:

Կապերի դերը խոսքի մեջ շարահյուսական է: Լինելով բառերի կապակցության ձևերից մեկը՝ կապերը ցույց են տալիս, թե ինչ հարաբերության մեջ է գտնվում գոյականը (նաև առարկայական իմաստ արտահայտող դերանուններն ու գոյականաբար գործածված բառերն ընդհանրապես) խնդրառու կամ գերադաս բառի նկատմամբ, օրինակ՝ «Նոսում էին պատերազմի մասին»։ «Նա իր ընկերների հետ եկավ»։ «Գիրքը դրեց սեղանի վրա»։ «Համալսարան եկավ զեկուցելու համար»։ «Ժողովը տեղի էր ունենում փոքրիկ սենյակի մեջ»։ «Աշակերտը պարզևատրվեց դիրեկտորի կողմից» և այլն:

Իրենց արտահայտած այդ իմաստով կապերը հոլովական ձևերի համարժեքներն են և առանձին դեպքերում կարող են նրանցով փոխարինվել: Այսպես, վերևի նախադասությունների մեջ դրսևորված հարաբերությունները կարող են արտահայտվել նաև հոլովներով, ինչպես՝ «Նոսում էին պատերազմից»։ «Նա ընկերներով եկավ»։ «Գիրքը դրեց սեղանին»։ «Համալսարան եկավ զեկուցելու»։ «Ժողովը տեղի էր ունենում փոքրիկ սենյակում»։ «Աշակերտը պարզևատրվեց դիրեկտորից»: Բայց ավելի հաճախ կապերն արտահայտում են այնպիսի հարաբերություններ, որոնք հոլովական ձևերով արտահայտվել չեն կարող, օրինակ՝ «Հերոսաբար մարտնչեցին թշնամիների դեմ»։ «Առանց սիրո կյանքն ունայնություն է»։ «Եկան բոլորը, բացի Տիգրանից»։ «Բարկացավ երեսայի վրա»։ «Լեռան առաջ փոված է ընդարձակ հարթավայրը»։ «Պճնը վել է սիրամարզի պես»։ «Նստել էր ծառի տակ»։ «Աղբյուրի մոտ հավաքվել էր ամբողջ գյուղը» և այլն: Եվ որովհետև կապերը հարաբերություններ են արտահայտում՝ իրենց դերով մոտավորապես հավասարվելով հոլովական թեթույթների դերին, այս նշանակում է, որ նրանք պատկանում են լեզվի քերականական միջոցներին: Ահա հենց դրանով

էլ պայմանավորված է կապերի գործածութեան այնքան մեծ հաճախականութիւնը:

Սակայն սխալ կլիներ հավասարութեան նշան դնել հոլովական ձևերի և կապերի միջև ընդհանրապես: Կատարելով նույն դերն ու ֆունկցիան, այսինքն՝ նախադասութեան մեջ արտահայտելով բառերի բազմաթիւ ու բազմապիսի հարաբերութիւններ, հոլովներն ու կապերը նախ և առաջ իրարից տարբերվում են որպէս լեզվի կառուցվածքային միավորներ: Հոլովները պատկանում են լեզվի ձևաբանական կառուցվածքին, լեզվի ձևաբանական կառուցվածքի տարրեր են, իսկ կապերը պատկանում են լեզվի բառապաշարային համակարգին, լեզվի բառապաշարային համակարգի միավորներ են: Որպէս բառապաշարային համակարգի միավորներ՝ կապերը շփման եզրեր են հանդես բերում նյութական իմաստ ունեցող բառերի հետ այնքանով, որքանով որ կապերը ևս բառեր են, հետևաբար ունեն նաև բառային իմաստ, որը դրսևորվում է և ընկալելի է նաև խոսքից, նախադասութեանից դուրս, օրինակ՝ բացի, առանց, դեպի, մինչև, տակ, վրա, մեջ, առաջ և այլն: Բայց կապերը տարբերվում են նյութական խոսքի մասերից իրենց յուրահատուկ իմաստով, այն է՝ քերականական իմաստով: Այսպիսով, պարզ է դառնում, որ կապերն ունեն երկակի բնույթ և շփման կետեր են հանդես բերում լեզվի և՛ բառապաշարային, և՛ քերականական միավորների հետ: Ահա թե ինչու Վ. Վ. Վինոգրադովը նշում է, որ կապերը գտնվում են լեզվի բառապաշարի և քերականական կառուցվածքի եզրերին:


Այս տեսակետից այլ է հոլովական ձևերի դրութիւնը, որոնք անկախութիւնից լրիվ գործի քերականական մասնիկներ են: Ծիշոտ է, հոլովական մասնիկները ևս իմաստակիր միավորներ են, օրինակ՝ բաղաբ + 0, քաղաք + Ի, քաղաք + ԻՅ, քաղաք + ՈՎ, քաղաք + ՈՒՄ, բայց այդ իմաստը դրսևորվում է միայն բառերի մեջ՝ իրար հետ ունեցած հարաբերակցութեամբ:

Այնուհետև, հոլովների արտահայտած հարաբերութիւնները ավելի ընդհանուր են ու վերացական, քան կապերի արտահայտած հարաբերութիւնները: Եվ դա այլ կերպ լինել չէր կարող: Մագունաբանորեն կապված լինելով նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի հետ՝ կապերը շատ հազվադեպ են խզում իրենց աղերսները դրանց հետ և վերածվում առաջահար կամ վերջահար քերականական մասնիկների: Այսպէս են, օրինակ, գրաբարի Զ և Ի նախդիրները: Սակայն կապերի միայն շնչին մասն է հասնում այսպիսի վերացականութեան, իսկ բացարձակ մեծամասնութիւնը պահպանում է իր բառային նշանակութիւնն ու անկախութիւնը:

Մյուս կողմից՝ հոլովները կազմում են նույն բառի ձևերը և հան-

դես են գալիս որպէս քերականական կարգի արտահայտիչներ, ինչպես՝ ֆաղափ—ֆաղափի—ֆաղափից—ֆաղափով—ֆաղափում: Դրանց հակառակ, չենք կարող ասել, օրինակ, թե ֆաղափի վրա, ֆաղափի մեջ, ֆաղափի մասին, դեպի ֆաղափ, մինչև ֆաղափ և այլ կապակցութիւնները ֆաղափ բառի ձևերն են: Իսկ սրանից ինքնին բխում է, որ կապերը չեն կարող դիտվել որպէս քերականական կարգերի արտահայտիչներ: Ուրեմն՝ այս տեսակետից կապերը հոլովներից տարբերվում են նրանով, որ հարաբերութիւններ են արտահայտում ոչ թե բառի քերականական ձևերի փոփոխութեամբ, այլ իրենց բառային իմաստով:

Կապերը հարաբերութիւններ են արտահայտում ոչ թե ինքնին, այլ հոլովական ձևերի հետ միասին կամ որ նույնն է՝ կապերը գործածվում են այս կամ այն հոլովի հետ, ինչպես՝ «Գնաց դեպի տուն»: «Պատմեց իր տանջանքների մասին»: «Վերադարձավ պատերազմից հետո» և այլն: Կապն ու հոլովական ձևը կախված են լինում մի բառից, սովորաբար բայից կամ բայանունից, երբեմն սովորական գոյականից, ածականից, սակավադեպ նաև մակբայից, որը կոչվում է գերադաս կամ խնդրառու բառ, իսկ այն բառը, որը հարաբերութեան մեջ է մտնում, կոչվում է կապային խնդիր: «Վերադարձավ պատերազմից հետո» նախադասութեան մեջ գերադաս կամ խնդրառու բառն է վերադարձավ, իսկ կապային խնդիրն է պատերազմ, որի հարաբերութիւնն արտահայտված է բացառական հոլովածեի և հետո կապի միջոցով: Այստեղ փաստորեն կա կրկնակի ստորադասութիւն, ենթարկվածութիւն կամ կախում: Կապն ու հոլովական ձևը միասին կախված են բայից, իսկ հոլովական ձևն էլ իր հերթին կախված է կապից, որը սխեմայով կարտահայտվի հետևյալ ձևով.



Կապերը հոլովական ձևերի հետ միասին արտահայտում են պարագայական հարաբերութիւններ, ինչպես՝ «Ճամփան տանում է դեպի Արարատ, Դեպի Մայր Աւստի՝ ճոխ դաշտի միջով»: «Այս գիշեր նորից լալիս է քամին իմ դռան առաջ, իմ պատերի տակ» (Իս.), և խնդրային հարաբերութիւններ, ինչպես՝ «Սկսեցի մտածել կյանքի ու մահվան մասին» (Թում.). «Թորքերը կոզում էին Կովկասում՝ ռուսների դեմ, Միջագետքի անապատում՝ անգլիացիների ու հնդկների դեմ» (Վերք.). «Ինչու էս ինձ վրա բարկանում, բարկացիր Աշխենի վրա» (Նար-Դոս). «Դաշտ տեղերը մարդկանց վրա էլ է հարձակվում» (Թում.):

Բերված բոլոր նախադասութիւններում կապերը կախված են բայից կամ ենթարկվում են բայերին: Բայց այդ կախվածութեան կամ ենթարկվածութեան մեջ ինչ-որ աստիճանավորումներ կան: Ընդհանրա-

1 Հմմտ. Ս. Աբրահամյան, Զթեքվոյ խոսքի մասերը... էջ 292—293:

պես պետք է նշել, որ երբ կապերը հանդես են գալիս որպես պարագայական հարաբերությունների արտահայտիչներ, նրանց ենթարկվածությունը, կախվածությունը խնդրառու (գերադաս) բառից ավելի թույլ է, քան երբ նրանք հանդես են գալիս որպես առարկայական հարաբերությունների արտահայտիչներ: Այսպես, «հոսել ուսուցչի մոտ», «հոսել ուսուցչի առաջ», «հոսել ուսուցչի պես» կապակցությունների մեջ կապերի կախվածությունը բայից շատ թույլ է, և կարելի է ասել, որ այսպիսի դեպքերում կապերը հակվում են դեպի գոյականները, իսկ «հոսել ուսուցչի մասին», «հոսել ուսուցչի դեմ», «հոսել ուսուցչի վրա» կապակցությունների մեջ կապերի կախվածությունը բայից ուժեղ է, և կարելի է ասել, որ այսպիսի դեպքերում կապերը հակվում են դեպի բայը:

Որ «հոսել ուսուցչի մոտ» կապակցության մեջ կապի կախվածությունը բայից շատ թույլ է, հաստատվում է նրանով, որ մոտ կապով պարագայական խնդիր պահանջող բայերի (բառերի) ոլորտը և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն անսահմանփակ է: Ամեն մի գործողություն կարելի է կատարել որևէ առարկայի մոտ (Ինձ մոտ կովեց, կերով, գրեց, ջարդեց, զարդարվեց, սանրվեց, բարկացավ և այլն, և այլն):

Ընդհակառակն, որ «հոսել ուսուցչի մասին» կապակցության մեջ կապի կախվածությունը բայից ուժեղ է, հաստատվում է նրանով, որ մասին կապով առարկայական խնդիր պահանջող բայերի (բառերի) ոլորտը որոշակիորեն սահմանափակված է ասացական, պատմողական, դատողության, հաղորդման և նման այլ իմաստներ արտահայտող բայերի շրջանակներով, ինչպես՝ խոսել, ասել, պատմել, գրուցել, կարգալ, գրել, լսել, դատել, մտածել, իմանալ, հայտնել, հաղորդել և այլն՝ մեկի կամ մի քանի մասին:

Ինչպես որ բայերը ուժեղ խնդրառությունը կարող են այս կամ այն հոլովը պահանջել. օրինակ՝ «Մոտենալ գետին», «Կարգալ գիրքը», «Խոսափել պատերազմից», «Հպարտանալ հաջողություններով» և այլն, այնպես էլ բայերը իրենց բառիմաստի թելադրանքով կարող են պահանջել այս կամ այն կապը, օրինակ՝ «Պատմել պատերազմի մասին», «Կովել դավաճանների դեմ», «Բարկանալ երեխայի վրա» և այլն:

Ուրեմն, ինչպես որ լեզվում ունենք «ՈՐՈՇԱԿԻ ԲԱՅ—ՈՐՈՇԱԿԻ ՀՈՒՎԱԿԱՆ ՁԵՎ» կաղապարը, այնպես էլ ունենք «ՈՐՈՇԱԿԻ ԲԱՅ—ՈՐՈՇԱԿԻ ԿԱՊ» կաղապարը:

Հայերենի քերականություններում ընդհանրապես կապը բնորոշվում է որպես շփեթվող խոսքի մաս: Եվ կարծես թե հենց այդպես էլ պետք է լիներ: Զե՞ որ կապերը բառերի ստորագասական հարաբերություններն արտահայտող սպասարկու բառեր են, հոլովական ձևերի համարժեքները և այդ իսկ պատճառով էլ իրենք հոլովվել ու փոփոխվել չեն կարող: Բայց հայ քերականները վաղուց են նկատել, որ կապ համարվող մի շարք բառեր թեքման, հոլովման ձևեր են ունենում, ինչպես՝ վրա—

վրայից—վրայով, տակ—տակից—տակով, մեջ—միջից—միջով, առաջ—առաջից—առաջով, մոտ—մոտից—մոտով, առջև—առջևից—առջևով և մի քանի ուրիշները:

Մեր քերականները, որպես կանոն, խոսքիմասային իմաստի տեսակետից հակադրություն են տեսնում մոտ, վրա, մեջ, տակ և այլ բառերի ուղիղ և թեք ձևերի միջև, ուղիղ ձևերը համարելով կապ, իսկ թեք ձևերը՝ գոյական:

Այսպես, բնույթով ընդունված տեսակետի՝ հետևյալ նախադասություններում ընդգծված բառերը կապ են. «Փարթամ կանաչի տակ փտում են ոսկորները Պետոն» (Բակ.). «Մի ակնթարթում անհետացավ մերձակա ծառերի մեջ» (Բաֆֆի). «Փայտը դրեց օջախի մոտ ու լուռ նստեց խոտի վրա» (Բակ.). «Արածանիի ափերի մոտ ապրում էր և մի այլ ժողովուրդ» (Բաֆֆի): Դրանց հակառակ՝ հետևյալ նախադասություններում ընդգծված բառերը գոյական են. «Կինը նրա բարձի տակից դուրս բերեց մի մեծ ծրար» (Շիրվ.). «Մտերի տակով պաղ առու է հոսում» (Բակ.). «Թույլ էր արգեն իր միջից մեր երկրի բարձրաբերձ ոգին» (Զար.). «Հանգիստ, միալար քայլում էր առաջ հեղ լուսնկայի շողերի միջով» (Իս.). «Գիշերը նա շատ ուշ վերադարձավ Մուշեղի մոտից» (Բաֆֆի). «Քայր անցնելի վրանիս մոտով» (Տեր.). «Երիտասարդը ցած իջավ գահավորակի վրայից» (Բաֆֆի). «Ավին վազում էր, թռչում գերանների վրայով» (Բակ.). «Զյան վրայով դեպի նրա դուռը թարմ ոտնահետքեր էին ձգվում» (Խանդ.): Այս տեսակետը, որքան էլ տարածված լինի, չի կարող ճիշտ համարվել և ահա թե ինչու:

Մոտ, վրա, մեջ, տակ ձևերը՝ մի կողմից և մոտից—մոտով, վրայից—վրայով, միջից—միջով, տակից—տակով համապատասխան ձևերը՝ մյուս կողմից, իրենց խոսքիմասային իմաստով իրարից չեն տարբերվում: Համապատասխան ձևերը իրարից սոսկ նրանով են տարբերվում, որ առաջինները բառի ուղիղ, այսինքն՝ ուղղական-հայցական ձևեր են, իսկ երկրորդները բառի թեք, այսինքն՝ բացառական կամ գործիական ձևեր են և, հետևաբար, իրարից միայն հոլովական իմաստով են տարբերվում: Եթե մեք բառը կապ է «Տրակտորն աշխատում է դաշտի մեջ» նախադասության մեջ, ապա նա կապ է նաև «Տրակտորը դուրս եկավ դաշտի միջից», «Տրակտորը առաջ է շարժվում դաշտի միջով» նախադասություններում: Նույն բառի ուղիղ և թեք ձևերը իրար չեն կարող հակադրվել որպես տարբեր խոսքի մասեր, նրանք հակադրվում են միայն որպես տարբեր քերականական իմաստների կրողներ:

Որ քննվող բառերի թեք հոլովական ձևերը ևս կապեր են և ոչ թե գոյականներ, լավագույնս հաստատվում է նաև նրանով, որ գրանք ածական որոշիչները բնույթով չեն կարող: Հնարավոր չէ ասել՝ «Դուրս եկավ արտի մեծ միջից, գեղեցիկ միջից, լավ միջից» կամ «Դուրս եկավ սեղանի մեծ տակով, գեղեցիկ տակով, լավ տակով» և այլն, իսկ որո-

շիշ ածականներ ընդունելը առարկայնության լավագույն շահանիշ է։  
Ուրեմն՝ մեջ, վրա, տակ, մոտ և այլ բառերը հոլովվում են ոչ թե  
այն պատճառով, որ գոյականներ են կամ դրանց ուղիղ ձևերը կապեր  
են, իսկ թեք ձևերը գոյականներ, այլ այս բառերը կապեր են և հոլով-  
վում են հենց որպես կապեր։

Սակայն հոլովվում են ոչ թե հայերենի կապերն ընդհանրապես,  
այլ միայն նրանք, որ տարածական իմաստ են արտահայտում, ինչպես՝  
մոտ, վրա, տակ, մեջ, առաջ, առջև, դիմաց, դեմ և նմանները։ Այս կա-  
պերի հոլովման մեջ անպայմանորեն դեր ունի այն հանգամանքը, որ  
առաջացած լինելով գոյականներից՝ դրանք ունեն նյութական նշանա-  
կության որոշ հետքեր, որ գրանորվում է թե՛ ուղիղ, թե՛ թեք ձևերով  
հանդես գալիս։ Անկասկած դա էլ հնարավորություն է տալիս նաև ստա-  
ցական հոգեր ընդունելու և հանդես գալու նաև ստացական հոգնակի-  
ների ձևով, ինչպես՝ մոտՍ, մոտԴ, մոտԸ, վրաՍ, վրաԴ, վրան, մոտ-  
նեՐՍ, մոտնեՐԴ, մոտնեՐԸ, վրանեՐՍ, վրանեՐԴ, վրանեՐԸ և այլն։

Համեմատյան դեպս, տարածական կապերի հոլովական ձևերը իմաս-  
տային տեսակետից տարբերվում են մյուս բոլոր կապերից։ Այդ տար-  
բերությունն այն է, որ տարածական կապերի հոլովված ձևերը կրկնակի  
հարաբերություն են արտահայտում՝ մեկ իրենց բառային իմաստով՝  
մեջ, վրա, մոտ, տակ, մեկ էլ հոլովական ձևերով՝ միջի—միջից—միջով,  
վրայի—վրայից—վրայով, մոտի—մոտից—մոտով, տակի—տակից—տա-  
կով։

Այսպիսով, բոլոր ասվածներից կարելի է հանգել հետևյալ եզրա-  
կացությունը։

Կապ խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերը՝

ա) Խմաստարանոցն բնորոշվում են նրանով, որ իրենք զուրկ լի-  
նելով նյութական իմաստից՝ արտահայտում են քերականական հարա-  
բերություններ։

բ) Անբաճառն բնորոշվում են նրանով, որ դրանց մեծամասնու-  
թյունը զուրկ է թեքման ձևերից, սակայն տարածական իմաստ արտա-  
հայտող կապերի մի զգալի մասը հոլովվում է և ընդունում ստացական  
հոգեր։

գ) Շարահյուսուրեն բնորոշվում են նրանով, որ առանձին նախա-  
դասության անդամ լինել չեն կարող։ Դրանք միշտ գործածվում են գո-  
յականների կամ գոյականական իմաստ արտահայտող բառերի հետ՝  
ցույց տալով վերջիններիս հարաբերությունները գերադաս կամ խնդրա-  
ուր բառերի նկատմամբ։

#### Կապերի կազմությունը

ԿԱՊԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Պատ-  
մականորեն կապերն առաջացել և առաջանում են նյութական իմաստ

արտահայտող խոսքի մասերից՝ հատկապես գոյականներից, մակբայ-  
ներից, ածականներից, սակավադեպ նաև դերբայական ձևերից՝ վեր-  
լիններիս նյութական իմաստի կորստով և դրան զուգընթաց՝ հարաբե-  
րության իմաստի զարգացմամբ և ծավալմամբ։

Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից կապերին են  
անցնում կամ կարող են անցնել այն բառերը, որոնց մեջ, որպես կա-  
նոն, այս կամ այն շահով արդեն առկա է հարաբերության իմաստը։

Կապերի առաջացումը նյութական խոսքի մասերից տեղի է ունե-  
նում պատմական երկարատև ժամանակաշրջանում, լեզվական կենդա-  
նի գործընթացում, բառերի շարահյուսական կիրառության հիմքի վրա,  
այս կամ այն բառի մեջ հարաբերության իմաստի զարգացման ու ծա-  
վալման հիմքի վրա։

Հայերենի կապերի մի մասը գալիս է դեռևս մեր լեզվի պատմու-  
թյան վաղնշական շրջաններից, ծագմամբ հնդեվրոպական է և իր զու-  
գահունքն ունի ազգակից մյուս լեզուներում։ Անցնելով պատմական  
զարգացման երկար ուղի՝ այսպիսի կապերի մեջ զարգացել են վերա-  
ցական նշանակություններ, և նրանք իրենց արտահայտած ընդհանուր  
իմաստներով մոտավորապես հավասարվում են հոլովական ձևերին։ Այս-  
պես են, օրինակ, գրաբարյան Ի, Յ, ԱՌ, ԸՄՏ, ԸՆԴ, Զ նախդիրները,  
որոնք բոլորն էլ, բացի Զ-ից, որի ծագումն անհայտ է, գալիս են հընդ-  
եվրոպական հիմնալեզվից՝ և այս կամ այն շահով կենդանի են ու գոր-  
ծոն արեելահայ ու արևմտահայ գրական լեզուներում կամ բարբառ-  
ներում։

Հայերենի կապերի մի մասն էլ թեկուզ չի հասել այսպիսի վերա-  
ցականության և ունի վառ կերպով գրանորված բառային իմաստ, բայց  
այդ իմաստը սոսկ հարաբերության իմաստ է, իսկ նյութական իմաս-  
տը մեռած է կամ անզգայելի։ Այսպիսի կապեր են. առանց (առ+անց),  
առթիվ (առիք բառի գրաբարյան գործիական հոլովը), գերզ (զի+արզ  
«կերպ»), բացի (բաց «հեռու»+ի), դեպի (դեպ+ի), դիմաց (դեմք բա-  
ռի գրաբարյան սեռական-տրական հոլովը), ի դեմս (դեմք բառի գրա-  
բարյան նախդրիվ հայցականը), իբրև (ի բար «պես»+և), համար (ա-  
ռաջացած համար գոյականից), հանդեպ (հան+դեպ), հանդերձ (առա-  
ջացած հանդերձ «հագուստ» գոյականից), հանձին (անձն բառի գրաբար-  
յան նախդրիվ տրականը), հանուն (անուն բառի գրաբարյան նախդրիվ  
հայցականը), հետ (նախապես նշանակել է ոտք), մասին (մասն բառի  
գրաբարյան տրականը), մինչև (մինչ+և), ներքն (արմատն է ներ, որ  
նշանակում է մեջ), շնորհիվ (շնորհ բառի գրաբարյան գործիականը),

<sup>1</sup> Ստուգաբանությունները տե՛ս Հ. Աճառյանի «Հայերեն արևմտական բառա-  
բանում»։

քան (նշանակել է շափ. այդ իմաստն այժմ էլ պահպանվել է բաղադրութունների մեջ՝ քանակ, այսքան, այդքան, այնքան)՝:

Ժամանակակից հայերենում կան մի շարք բառեր էլ, որոնց մեջ բացարձակորեն գերիշխում է հարաբերության իմաստը, բայց այս կամ այն շափով դրանք ունեն նաև նյութական նշանակության հետքեր, օրինակ՝ տակ, մեջ, վրա, դեմ, մոտ, պես և այլն:

Եվ վերջապես, կան բառեր էլ, որոնց համար բնորոշ են և՛ նյութական, և՛ հարաբերության նշանակությունները՝ առաջին կամ երկրորդ նշանակության հավասարաշափ դրսևորմամբ կամ դրանցից մեկի կամ մյուսի գերակշռությամբ: Այսպիսի բառեր են.

Առաջ («նա առաջ գնաց») և «Սեղանի առաջ նստած՝ լուռ մտածում էր»):

Ժամանակ («Ժամանակ շունեմ») և «Դասի ժամանակ հանգիստ չէր նստում»):

Կողմից («Լեռան հյուսիսային կողմից սկիզբ են առնում սառնորակ անավակներ») և «Այդ առաջարկությունն արվել էր դիրեկտորի կողմից»):  
Հետևանքով («Հետևանքով է որոշվում այս կամ այն գործի ճշտությունը») և «Նա մահացավ խոշտանգումների հետևանքով»):

Միջոցով («Որևէ ներելի կամ աններելի միջոցով պետք է այդ գործը գլուխ բերել») և «Այդ գործը գլուխ բերեց բարեկամի միջոցով»):

Նպատակով («Նա միշտ հպարտացել է այս վեհ նպատակով») և «Քաղաք եկավ ուսումը շարունակելու նպատակով»):

Պատճառով («Հետևանքն է որոշվում պատճառով և ոչ թե պատճառը հետևանքով») և «Տուժեց իր մեծամտության պատճառով»):

Առաջին օրինակներում ընդգծված բառերը գործածված են նյութական, իսկ երկրորդներում՝ հարաբերության իմաստով: Իհարկե, այսպիսի բառերի քանակը բերվածներով չի սահմանափակվում, և կան նաև շատ ուրիշները, օրինակ՝ անկախ, գործում, դուրս, երեսից, հակառակ, համապատասխան, հետո, շափ, շնայած, համընթաց, զուգընթաց, դեպքում, պակի՛ն, կապակցությամբ, համաձայն, շնայած, ձեռքից, միջոցին, ուղղությամբ, տեղ, հասցեին և այլն:

Ինչպես արդեն բերված օրինակներից է երևում, կապերի մի զգալի մասը գոյականական ծագում ունի, ըստ որում՝ կապերի կամ կապական բառերի կարող են վերածվել գոյականի և՛ ուղիղ, և՛ թեք ձևերը, այլև նախորդի կապակցությունները: Ստորև բերվում են օրինակներ այս բոլոր դեպքերի համար՝ առանց քննելու, թե սովյալ ձևը լրիվ կապի՞ է վերածվել, հավասարաշափ դրսևորում է կապային ու ստորկայական նշանակություն, թե՞ կապային նշանակությունը դեռևս նոր է զարգանում:

Անմիջաբար գոյականների ուղիղ ձևերից առաջացած կապերը սակավաթիվ են, օրինակ՝ ժամանակ, համար, հանդերձ, շափ, պես (եղանակ, կերպ), տակ, տեղ: Կան մի շարք կապեր, որոնք ծագմամբ գոյականներ են, բայց կապային խոսքի մասին են անցել մակբայների միջնորդությամբ: Դրանց մասին խոսվում է առանձին:

Գրաբարյան տրական հոլովաձևեր են դիմաց և մասին կապերը: Նշենք նաև, որ ժամանակակից հայերենում մի քանի բառերի տրական հոլովաձևեր որոշ կապակցությունների մեջ զրկվելով կամ մասամբ զրկվելով առարկայական նշանակությունից՝ հարաբերության իմաստ են ստանձնում, ուրեմն և գտնվում են կապ դառնալու ճանապարհին: Այսպիսի բառաձևեր են՝ միջոցին (հրաժեշտի միջոցին), պակի՛ն (բարկության պահին), օգտին (նրա օգտին), սիրուն (աստծու սիրուն), հասցեին (խոսել մեկի հասցեին):

Առաջին, միջին, տակին ձևերը (առաջ, մեջ, տակ քառերի տրական հոլովաձևերը), ժողովրդական-բարբառային են, օրինակ՝ «Փնփնթացում էր նա իմ առաջին» (Թում.). չՍպաի լսնջին. հովի միջին, Մուշտուշ անուշ մրսփել» (Թում.). «Պատերազմը քթերիս տակին Լ» (Դեմ.):

Կապերի կազմավորման մեջ որոշ դեր է խաղում նաև բացառական հոլովը: Ժամանակակից հայերենի մի քանի բառերի բացառական հոլովաձևերը զրկվելով նյութական իմաստից՝ հարաբերության պաշտոն են ստանձնում, օրինակ՝ կողմից («Որդին սիրվում է հոր կողմից»), երեսից («Կնոջս երեսից եկան այս փորձանքները»), ձեռքից («Փախավ արդարադատության ձեռքից»):

Կապերի կազմավորման մեջ ամենամեծ դերը խաղում է գործիական հոլովը: Գրաբարյան գործիական հոլովաձևեր են առթիվ, շնորհիվ, որ ժամանակակից հայերենում վերածվել են իսկական կապերի: Այսպես և քիչ գործածական՝ հիմամբ:

Սակայն ավելի շատ են այն կապերը, որոնք առաջացել են արդի հայերենի գործիական հոլովի հիմքի վրա: Այսպես են՝ կապակցությամբ, հետևանքով, հիմունքով, ձեռքով, միջոցով, նկատմամբ, նպատակով, պատճառով, վերաբերմամբ, վերաբերությամբ, ուղղությամբ: Այս հոլովաձևերը շատ կապակցությունների մեջ կորցնելով իրենց առարկայական նշանակությունը՝ վերածվում են կապակցական բառերի, օրինակ՝ «այս գործի կապակցությամբ», «խոշտանգումների ու ծաղրածանակի հետևանքով», «բարեկամների միջոցով», «կանանց նկատմամբ», «տանջելու նպատակով», «հիվանդության պատճառով», «օրիորդի վերաբերմամբ», «արդյունաբերության զարգացման ուղղությամբ», «Գործը տեսավ բարեկամների ձեռքով», «ուսումնաարտադրական աշխատանքների գծով» և այլն:

Կապերի դեր են կատարում նաև մի քանի բառերի ներգոյական հոլովաձևեր, օրինակ՝ ընթացում («չորս տարվա ընթացում»), դեպքում

<sup>3</sup> Ստուգաբանությունները տե՛ս հուլիս տեղում:

(«պատերազմի դեպքում»), գործում («հանցագործությունները կանխելու գործում»):

Կապերի կարող են վերածվել նաև նախորդի հոլովածները, ինչպես՝ ի սեր («ի սեր հայրենիքի»), ի հեճուկս («ի հեճուկս գոռոզ թշնամու»), ի տրիտուր («ի տրիտուր նահատակների արյան»), ի նշան («ի նշան փառքի»), ի դեմս («ի դեմս այս ուսմունքի»), հանձին («հանձին բանաստեղծի»), հանձինս («հանձինս առաջվար բանվորների»), հանուն («հանուն եղբայրության և սիրո»), հոգուտ («հոգուտ ազգի»): Այս բոլոր կապերի մեջ առկա է գրաբարյան Ի (ձայնավորից առաջ 3>2) նախդիրը: Ի նախորդ կազմված կապերից են նաև բացի, դեպի, իբրև:

Մի շարք կապեր էլ մակբայական ծագում ունեն: Ընդհանրապես մակբայների և կապերի միջև հարաբերակցություններ են նկատվում հետևյալ հիմունքով: Առարկայական նշանակությամբ թուլացած բառերը հակվելով բայերին՝ մակբայական իմաստ են արտահայտում, իսկ հակվելով գոյականներին՝ կապային իմաստ են արտահայտում: Ահա թե ինչու ժամանակակից հայերենում մի շարք բառեր ըստ կիրառության մակբայներ կամ կապեր են: Այսպիսի բառեր են.

Մակբայ	Կապ
առաջ գնաց	սեղանի առաջ
դեմ կանգնել	ժողովրդի դեմ
դուրս գալ	ընտանիքից դուրս
ընդառաջ գնալ	զորքին ընդառաջ
հեռու գնալ	հայրենիքից հեռու
հետո խոսեց	հաջից հետո
մեջ ընկնել	սենյակի մեջ
մոտ գնալ	աղբյուրի մոտ
ներքև գնալ	սարերից ներքև
շուրջ տաս	այս հարցի շուրջը
վեր գնալ	սարերից վեր
վերև գնալ	սարերից վերև
վրա վազել	սեղանի վրա

Կապեր են առաջանում նաև ածականներից: Ածականներից տառացած կապեր կամ կապական բառեր են՝ անկախ («այս հանգամանքներից անկախ»), առիթեր («գրությանն առիթեր»), զուգընթաց («այս գործողություններին զուգընթաց»), համաձայն («կարգադրության համաձայն»), համապատասխան («որոշման համապատասխան»), համեմատ («կարողության համեմատ»), համընթաց («կյանքին համընթաց»), հավասար («մեզ հավասար»), մատիկ («գյուղին մոտիկ»), հման («հերոսի նման») և մի քանի ուրիշները:

Սակավադեպ կապեր կարող են առաջանալ նաև դերբայներից, ինչպես՝ նայած, չնայած, նայելով, չնայելով, վերաբերյալ (ներառյալ, բացառյալ): Այսպես նաև՝ անցած («հինգ օր անցած»), սկսած («սկսած ժամի հինգից»): Անցնել բայի անց արմատը վերածվել է կապի («5 օր անց»): Այսպես նաև զատել (զատանել) բայի զատ արմատը («նրանից զատ»):

Կա նաև հիման վրա բաղադրյալ կապը՝ «Ինձ տրված իրավունքների հիման վրա», «Ստեղծված հնարավորությունների հիման վրա» և այլն:

**Նախադրություններ և ետադրություններ**

**ԿԱՊԵՐԻ ՇԱՐԿԻԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**— Ժամանակակից հայերենում կապերը դրվում են կապվող բառերից կամ առաջ, կամ հետո: Կապվող բառերից առաջ դրվող կապերը կոչվում են նախադրություններ, իսկ կապվող բառերից հետո դրվող կապերը կոչվում են ետադրություններ:

Նախադրությունները, ետադրությունների հետ համեմատած, սակավաթիվ են: Դրանք մոտավորապես հետևյալներն են. առ, առանց, դեպի, գերզ, ըստ, ի, ի դեմս, իբրև, ինչպես, որպես, հանձին, հանուն, հոգուտ, մինչ, մինչև, նախքան, չնայած, ց, քան, քանց: Եթե կապվող բառը լրացումներ ունի, ապա այդ նախադրությունները դրվում են լրացումներից առաջ:

**Օրինակներ.** «Ուստ ընդունված սովորույթի՝ դեռ կսարքեն անմեղ դավեր» (Սևակ). «Իբրև մի հրաշալի երագ փռված էր ծագեծագ» (Զար.). «Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ, Դեպի լյառը անհաս ու վեհանիստ» (Զար.). «Չնայած ձմռան բուր ու բուրանին՝ Ալպերն անցյան հաջողությամբ» (Լր.). «Ինչ ինչում ես կարող, որպես մահու խալթ, Քնքոջ, որպես անդարձ բախտի հիշատակ» (Տեր.). «Մինչև իմ հասնելը ոչխարի դմակը պոկեց, տարավ» (Թում.) և այլն:

Ժամանակակից հայերենի կապերի մեծ մասը ետադրություններ են, ինչպես՝ առաջ, առքիվ, առջև, դեմ, դիմաց, կողմից, համար, հետ, հետո, հետևանքով, մասին, մեջ, միջոցով, միջև, մոտ, ներքո, ներքև, նրկատմամբ, հման. հպատակով, պես, վերաբերմամբ, վերաբերյալ, վրա, ապ, տեղ և այլն:

**Օրինակներ.** «Ձեր դառն առաջ կանգնում եմ երկար» (Տեր.). «Այստեղ, զինվորների մեջ, այս երիտասարդ ու անհոգ մարտիկների մեջ նա մի պահ մոռացավ իր սրտին շոքած մեծ վիշտը» (Դեմ.). «Բազենյանի մի պահ մոռացավ իր սրտին շոքած մեծ վիշտը» (Դեմ.). «Բազենյանի մի պահ մոռացավ իր սրտին շոքած մեծ վիշտը» (Դեմ.). «Մնար ու հոփար մեր միևնույնարի— իր ուրդու մասին» (Սևակ). «Փակ են քո սրտի



հետևանքներն իմ դեմ, Քո աշխերի դեմ իմ աշքերը՝ կույր» (Տեր.) և այլն:

Կան մի քանի կապեր էլ, որ կարող են գործածվել կապվող բառերից և՛ առաջ, և՛ հետո, այսինքն հանդես են գալիս և որպես նախադրություն, և որպես ետադրություն: Այսպիսի կապեր են. անկախ—Անկախ այդ հանգամանքներից||Այդ հանգամանքներից բացի—Բացի վերոհիշյալ ուսանողներից||Վերոհիշյալ ուսանողներից բացի. ընդդեմ—Ընդդեմ պատերազմի||Պատերազմին ընդդեմ. հակառակ—Հակառակ ցանկություն||Յանկությունը հակառակ. համաձայն—Համաձայն տեղեկությունների||Տեղեկությունների համաձայն. համապատասխան—Համապատասխան այդ որոշման||Այդ որոշման համապատասխան. հանդեպ—Հանդեպ կնոջ||Կնոջ հանդեպ. հետո—Հետո հայրենիքից||Հայրենիքից հետո. շնորհիվ—Շնորհիվ բնության||Բնության շնորհիվ:

Բերված կապերից ընդդեմ, հակառակ նախադաս գործածությունը հակվում են դեպի սեռական խնդրատությունը, իսկ ետադաս գործածությունը՝ տրական խնդրատությունը, ինչպես՝ ընդդեմ նրա, հակառակ նրա, բայց նրան ընդդեմ, նրան հակառակ:

Կապերի գործածության համար պետք է նկատի ունենալ նաև հետևյալները:

Նախադասության համադաս անդամների հետ կապերը սովորաբար շեն կրկնվում, և մեկ կապը բավական է ցույց տալու գերադաս բառի նկատմամբ ունեցած դրանց հարաբերությունը, ինչպես՝ «Փոս ընկած աշքերում անհուն բարություն կար և միամիտ սեր դիպի խուրը. կովը, ծաղկած սարերը» (Բակ.). «Շարունակ յուրեր էին շրջում լրտեսների, զավահանների, դասալիճների մասին» (Վերք.). «Փառի, իշխանության և պատվի համար ամեն սրբություն կվաճառեն նրանք» (Րաֆֆի):

Սակայն նախադասության համադաս անդամների հետ կապերը կարող են կրկնվել՝ կատարելով ոճական յուրահատուկ դեր, այն է՝ առանձին-առանձին շեշտելով նախադասության համադաս անդամների՝ գերադաս բառի նկատմամբ ունեցած նույն հարաբերությունը. ինչպես՝ «նոսում էր իր մասին, իրենց ընտանիքի անդամների մասին. նոր պիեսի մասին, իրենց տան ներքին հարկում ապրող շինովնիկի մասին, իրենց ծառաների մասին» (Նար-Պոս). «Քայլել է դեպի օտեր. դեպի արևը» (Անան.). «Ետնապես կաթեց ֆարերի վրա, մամուտների վրա» (Բակ.). «Հետո սկսեցին խոսել կովի վրա, հացի քանկության վրա» (Թում.). «Առանց հոգսերի ու առանց վշտի խաղում էինք մենք էն երազ հովտում» (Թում.):

Հազվադեպ հնարավոր է նաև հակառակ երևույթը, այսինքն նույն կապվող բառի վրա կարող են դրվել երկու կապեր, օրինակ՝ կեսօրից առաջ կամ հետո, Պահաբանի վրա կամ մեջ, Ինճաբիոցի վերև ու ներքև և այլն: Ինչպես այս օրինակներից կարելի է եզրակացնել, մեկ բառի վրա դրվելու համար կապերը պետք է արտահայտեն հակառակ հարա-

բերություններ: Սակայն պետք է նշել, որ նույն բառանքի հետ երկու կապի գործածությունն ընդհանրապես օրինաչափական չէ, և ավելի հաճախ կապվող բառածը կրկնվում է կապերից, յուրաքանչյուրի հետ, օրինակ՝ «Կգամ ձեր տուն կեսօրից առաջ կամ կեսօրից հետո». «Գիրքը պահաբանի վրա կամ պահաբանի մեջ կլինի» և այլն: Գուցե միայն առաջ և հետո կապերն են, որոնց միասին գործածությունը կապային խնդրների հետ սարածված է ու սովորական, ինչպես՝ «Քարանից առաջ, թե՛ հետո», «Պատերազմից և՛ առաջ, և՛ հետո» և այլն:

Այս հատվածը վերջացնելուց առաջ նշենք նաև այն, որ հնարավոր է նաև կապի կրկնություն, ինչպես այդ երևում է Ավ. Իսահակյանի հետևյալ տողից. «Որ ես հաղթական, լույս փառքերիդ մեջ սրարբած սուրբա՞ դեպի. դեպի՞ թեզ» («Աբու-Հալա Մահարի», լրթերորդ սուրահ): Նույն ոճով կարելի է կազմել նաև այսպիսի կապակցություններ. «Մինչև, մինչև լույս տանջվեցի թեզ համար». «Հօգուտ, հօգուտ մեր ազգի միայն մտածել» և այլն: Որպես ընդհանուր կանոն՝ կարող են կրկնվել կապը և իր խնդիրը միասին, այսինքն բառերի կապակցությունն ամբողջությամբ, օրինակ՝ «Մինչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց» (Զար.):

**Կապերի դասակարգումը ըստ կազմավորման աստիճանականության և իսկական ու անիսկական կապեր**

**ԻՍԿԱԿԱՆ ՈՒ ԱՆԻՍԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ.** — Ժամանակակից հայերենի բերականությունների մեջ սովորաբար կապերը բաժանվում են երեք խմբի՝ իսկական կապեր, անիսկական կապեր և կապական բառեր: Կապերի այսպիսի դասակարգումը գալիս է Մ. Աբեղյանից, բայց վերջինիս դասակարգման մեջ որոշ վերախմբավորումներ են կատարվում: Իսկական կապերի հարցը պարզ է. դրանք հարաբերությունն ցույց տվող այն բառերն են, որոնք միշտ կապի դեր են կատարում և առանձին գործածվել, հող ստանալ ու հյուսվել շեն կարող, օրինակ՝ ի, ց, առ, ըստ, մինչև, դեպի. առաջ, մասին և այլն:

Այսպես հստակ չէ անիսկական կապերի և կապական բառերի տարբերակումը: Մ. Աբեղյանը անիսկական կապեր էր համարում պես, շափ, տեղ, հետ, դեմ, մտո, վրա բառերը, որոնք անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերով տրական հոլով են պահանջում, ինչպես՝ ինձ հետ, ինձ մոտ, ինձ վրա: Գիտենք, որ այս բառերը կարող են հող ստանալ և հոլովվել՝ իմ մոտից, իմ մոտով, մոտս և այլն: Վերջին դեպքում այս բառերն ըստ Մ. Աբեղյանի արդեն գոյականներ են:

Մ. Աբեղյանը կապական բառեր է կոչում այն գոյականները, մակբայներն ու ածականները, որոնք խոսքի մեջ որևէ կախման հարաբերություն են ցույց տալիս՝ ձևով, երեսից, փոխանակ. ժամանակ, համաձայն, առաջ և այլն:

Անիսկական կապերը և կապական բառերը Մ. Աբեղյանը տարբե-

րակում է ըստ հոլովառության: Եթե նկատի ունենանք, որ նրա նշած կապերից դեմ և տնդ բառերը ժամանակակից հայերենում սեռական են պահանջում՝ իմ տեղ, իմ դեմ, այլև այն, որ մյուս անխկական կապերը ևս կարող են սեռական հոլովի հետ գործածվել՝ իմ մոտ, իմ պես, իմ վրա, իմ շարի, ապա պարզ կդառնա, որ անխկական կապերի և կապական բառերի տարբերակումը սոսկ հոլովառությամբ՝ ձիշտ համարվել չի կարող: Մյուս կողմից՝ արդեն նշված է, որ, ասենք, մոտ, վրա և այլ բառերի հոլովական ձևերը ոչ թե գոյականներ են, այլ կապեր, իսկ այս բառերի հոլովված ձևերը սեռական են պահանջում և ոչ թե տրական (իմ մոտից, քո մոտից, իմ վրայից, քո վրայից):

Այսպիսով նպատակահարմար է դառնում կապերը բաժանել երկու խմբի՝ իսկական կապեր և անխկական կապեր:

Իսկական են կոչվում այն կապեր, որոնք միշտ հարաբերության իմաստով են գործածվում, չեն կարող հող ստանալ ու հույզվել: Ժամանակակից հայերենի իսկական կապերը մուտավորապես հետևյալներն են. առ, առանց, առթիվ, բացի, դեպի, զատ, գերդ, ըստ, ի, ի հեճուկս, ի սեր, ի տիրուր, ի դեմս, ի վեր, իբրև, համար, հանդեպ, հանդերձ, հանձին, հանձինս, հանուն, հոգուտ, մասին, մինչև, միջև, նախքան, ներքև, նկատմամբ, շնորհիվ, վերաբերմամբ, վերաբերյալ, տեղակ, ց, փոխանակ, փոխարեն, քան (քանց):

Անխկական են կոչվում այն կապեր, որոնք հարաբերության իմաստից զատ կարող են արտահայտել հաս նյութական իմաստ, ըստ որում՝ նյութական իմաստը կարող է դրսևորվել հարաբերության իմաստի հետ հավասար շափով, միշ կամ առաջիկ: Մյուս կողմից՝ դրանց մի մասը կարող է հող ստանալ և հոլովվել: Արդի հայերենի անխկական կապերը մուտավորապես հետևյալներն են. առաջ, առջև, դեմ, դիմաց, դուրս, հետ, հետո, մեջ, մոտ, նման, շուրջ, շարի, պես, վրա, տակ, տեղ, հով, անկախ, անունից, անց, անցած, առնթր, գծով, երեսից, զուգընթաց, ընդառաջ, ընդդեմ, ընթացում, ժամանակ, կից, կողմից, հակառակ, համաձայն, համապատասխան, համեմատ, հանգույն, հավասար, հեռու, հետևանքով, ձեռքից, ձեռքով, միջոցով, մոտիկ, ներքև, նպատակով, որպես, չնայած, չնայելով, պատճառով, վերաբերմամբ, վերև, ուղղությամբ և մի քանի ուրիշները:

Ձիշտ է, անխկական կապերը այս կամ այն շափով պահում են այն խոսքի մասերի հատկանիշները, որոնցից նրանք առաջացել են, բայց մի բան պարզ է, որ անխկական կապերի մեջ մտնող բոլոր բառերն էլ գտնվում են իսկական կապ դառնալու ճանապարհին:

#### Կապերի իմաստային դասակարգումը

ԿԱՊԵՐԻ ԱՐՏԱԶԱՅՏԱՍ ՇԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ.— Ինչպես նշված է արդեն, կապերն արտա-

հայտում են կախման զանազան հարաբերություններ՝ իրենց դերով մուտավորապես հավասարվելով հոլովներին: Հաճախ միայն հոլովական ձևը բավական է շարահյուսական ամբողջական ու լրիվ հարաբերություն արտահայտելու համար, ինչպես՝ «Մոտենում է գետին»։ «Նա գիրք է կարդում»։ «Գրում է մատիտով»։ «Աշխատում է դաշտում»։ «Ետևափում է ընկերջից» և այլն: Բայց կան բազմաթիվ ու բազմազան հարաբերություններ, որոնք սոսկ հոլովներով արտահայտվել չեն կարող, այլ արտահայտվում են հոլովական ձևերով ու կապերով միասին: Այսպիսի դեպքերում հոլովները մատնանշում են միայն ամենաընդհանուր հարաբերությունները, իսկ կապերը դրանք մասնավորում են պահանջվող ուղղությամբ, ինչպես՝ Աշակերտի առաջ, դեմ, դիմաց, համար, հանդեպ, հետ, մասին, մեջ, միջոցով, մոտ, նկատմամբ, շնորհիվ, պես, վրա, փոխարեն և այլն:

Կապերի արտահայտած հարաբերությունները բազմազան են ու բազմապիսի: Դրանցից հատկանշակույններն ու գլխավորները հետևյալներն են:

ՏԱՐԱԾԱԿԱՆ՝ առաջ, առջև, դիմաց, դուրս, ի վեր, ի վար, հանդեպ, մեջ, միջև, մոտ, ներքև, ներքև, շուրջ, վեր, վերև, վրա, տակ, հով և այլն, ինչպես՝ «Ձեր դռան առաջ կանգնում եմ երկար» (Տեր.)։ «Ձեռքով ուժգին թափով հասավ և կանգնեց զորականի առջև» (Գեմ.)։ «Քարի մոտ է բանում ալպիական մանուշակը, պարիսպների տակ» (Բակ.)։ «Նախրից ներքև, մի թմբի վրա վեց պախրա նստած որոճում էին» (Անան.)։ Այսպես և՛ ծառի դիմաց, ամբողջից դուրս, հոսանքն ի վեր, հոսանքն ի վար, դաշտի մեջ, լուսնի ներքև, վարագույրների հետևում, լեռան շուրջը, սարերից վեր և այլն:

Տարածական հարաբերության հետ միասին ուղղության հարաբերություն են արտահայտում դեպի, մինչև, առ կապերը, օրինակ՝ «Քոչում էր անդուլ, հաղթական ու վե՛՛ դեպի արևը, անմահ արևը» (Իս.)։ «Նստնում են մինչև նրա ակունքները, մինչև լեռնային աղբյուրները» (Անան.)։ «Նոգու խորքում ազադակում էր առ Քրիստոս» (Վերք.)։

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ՝ անց, առաջ, ժամանակ, ի վեր, հետո, մեջ, միջև, միջոցին, մոտ, նախքան, պահին, պես, օրոք, սկսած, անցած, ընթացում, օրինակ՝ «Արշալույսից առաջ մենք դարան էինք մտած եղնուտի կերճում» (Թում.)։ «Նրան ձերբակալեցին հենց դասախոսության ժամանակ» (Խանդ.)։ «Մինչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց» (Ձար.)։ «Արևը մայր մտնելու մոտ սկսեց փչել զով քամին» (Մուր.)։ «Ձինաստան հասնելուն պես բոլորին տալիս են Մառի գրքից մեկական օրինակ» (Լր.)։ Այսպես և՛ այն օրից ի վեր, տրամության պահին, Տեղանի օրոք, երկու շաբաթ անց, մի ամսվա մեջ, շորս տարվա ընթացում և այլն:

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ՝ մասին, նկատմամբ, վերաբերյալ, վերաբերմամբ,

շուրջ(ը), առթիվ, հանդեպ, հասցեին, գծով, ուղղությամբ, ինչպես՝ «Սկզբ-սկզբի մտածել կյանքի ու մահվան մասին» (Թում.)։ «Կանանց, նկատմամբ պետք է ներողամիտ լինել» (Վերֆ.)։ «Քացատրություններ պահանջեց հայտնի գործի վերաբերյալ» (Վերֆ.)։ Այսպես և՛ հայացքների վերաբերմամբ. հայկական հարցի շուրջը, պատերազմի առթիվ, սեփական անձի հանդեպ, խոսել մեկի հասցեին, արդյունաբերության գծով, ուսումնական աշխատանքների ուղղությամբ։

ԲԱՅԱՌԱՄԱՆ՝ առանց, բացի, դուրս, գառ, բացառությամբ, օրինակ՝ «Կո՛ւյր՝ ու գո՛ւյ մարդիկ, առանց երազի, առանց լսելու հեքիաթն այս վսեմ» (Իս.)։ «Ուրիշ ի՞նչ կարող է ինձ հետաքրքրել, բացի այդ հիմար կտակից» (Շիրվ.)։ «Իսկ գրքից գառ կա կյանք ու գիրկ, Իսկ խաղից գառ կան խաղ ու տաղ» (Սևակ)։ «Եվ իմ կամքից դուրս ամեն ինչ բանա է և՛ ստրկացում, և՛ բռնադատում» (Իս.)։

ՊԱՏՃԱՌԻ ՈՒ ՀԻՄՈՒՆՔԻ՝ համար, պատճառով, առթիվ, հետևանքով, շնորհիվ, հիման վրա, երեսից, ձեռքից, սիրուն, կապակցությամբ, ինչպես՝ «Ու էն հարսանքից թշնամի դարձան Ախպեր սղերքը էս դեպքի համար» (Թում.)։ «Առատ ձյան պատճառով խախտվել է հաղորդակցությունը քաղաքների միջև» (Լր.)։ «Ջերմաստիճանի խիստ անկման հետևանքով կազմալուծվել է երկրի տնտեսական կյանքը» (Լր.)։ «Քամու շնորհիվ ծառերի զառ-զառ խաշամն է թռչում թավալ առ թավալ» (Դավթ.)։ Այսպես և՛ ծննդյան առթիվ։ տոնի կապակցությամբ, տուժել նրա ձեռքից, երեսից և այլն։

ՆՊԱՏԱԿԻ՝ համար, հանուն, նպատակով, ի, օրինակ՝ «Ժպտաց Վասակը տխուր մաքերի բեռից ազատվելու համար» (Գեմ.)։ «Հազարամյակներ շարունակ ջանք է թափել հանուն վերելքի, հանուն քաղաքակրթության նվաճումների» (Վերֆ.)։ «Շինարարությունն արագ ավարտելու նպատակով նոր միջոցներ են ներդրվում» (Լր.)։ «Սուլթան Համիդը ի փառս Ալլահի, Ի նշան հասնի Ամեն մի հայի նվ ի գիտություն իր երկար քթով ամեն տեղ մտնող Այդ Եվրոպայի...» (Սևակ)։

ՓՈՒՍԱՐԻՆՈՒԹՅԱՆ՝ փոխաբեն, փոխանակ, տեղ, տեղակ՝ «Սպասավորի փոխաբեն ներս մտավ նրա գեղեցիկ, ոսկեգույն բարակը» (Բաֆֆի)։ «Փոխանակ ուրախանալու ու պարծենալու՝ դու ինչ-որ ասեկոսների մասին ես մտածում» (Նար-Դոս)։ «Շատերն էին փող տալիս հացի տեղ» (Բակ.)։ «էն աստղերն էին աչքերի տեղակ» (Թում.)։

ՀԱՄԱՊԱՏԱՍԻՆՈՒԹՅԱՆ՝ ըստ, համաձայն, համապատասխան, հավասար, համեմատ՝ «Ըստ մեր նախնական պայմանի, ձկների փորը տվի իրեն» (Անան.)։ «Նախնական տեղեկությունների համաձայն անձնակազմից զոհվել է երեք մարդ» (Լր.)։ «Նրանք պետք է իրենց գործունեությունը վերակառուցեն նոր պայմաններին համապատասխան» (Լր.)։ «Տղամարդուն հավասար գործ է կատարում» (Լր.)։ «Աշխներ, իր սովորության համեմատ, նստած էր բոլորովին լուռ» (Նար-Դոս)։

ՉԵՎԻ ԵՎ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ՝ պես, նման, ինչպես, որպես, քիչ գործածական՝ հանգույն, ժողովրդական՝ ոնց, ոնց որ, օրինակ՝ «Եվ ղեփյուռի պես սահելով, վարնան պես բուրելով վազում է մի գեղուհի» (Իս.)։ «Կանգնել է երազի նման նվ չկա նախի ուրիշ» (Չար.)։ «Որ երկշոտ էին ինչպես եղջերուն» (Սևակ)։ «Դու ինչու ես կարող, որպես մահու խայթ, Քնքուշ, որպես անդարձ բախտի հիշատակ» (Տեր.)։ «Երբ իր մահով, խինդով, ահով՝ ծնում է աստղ իր հանգույն» (Չար.)։ «Պոզեր ունի ոնց որ մի կաղնի» (Թում.)։

ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ՝ իբրև, որպես, ինչպես՝ «Նա իբրև բժիշկ՝ որպես բժիշկ՝ ինչպես բժիշկ պարտավոր էր օգնել»։ «Իբրև ուսուցիչ՝ որպես ուսուցիչ՝ ինչպես ուսուցիչ էս կասեմ իմ կարծիքը»։

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱԿԱՌԱԿՈՒԹՅԱՆ՝ դեմ, ընդդեմ, հանդիման, դեմ-հանդիման, ի հեճուկս՝ «Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն շեղանչեցի ես ոչ ոքի դեմ» (Իս.)։ «Նա տրտնջալով ծերության ընդդեմ՝ Քթթում էր յուր ծառերի տակին» (Թում.)։ «110000 զորքի հանդիման մարտնչում էին 600 քաջեր» (Սևակ)։ «Որ վառ ցրտի դեմ-հանդիման Ոնց էլ լինի՝ գուռ է փակում» (Սևակ)։ «Հայրնի մի կտոր հողի վրա բուրրանվեր կենտրոնացրել էր իր ամբողջ ուշադրությունը՝ ի հեճուկս աշխարհում եղած բոլոր գայթակղությունների» (Վերֆ.)։

ՀԱԿԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ՝ հակառակ, շնայած, շնայելով, օրինակ՝ «Սրմբատը համաձայնություն էր տվել՝ հակառակ իր հայացքներին» (Շիրվ.)։ «Չնայած Իսկուհու ծանր վիճակին՝ ստիպված եղան ճանապարհ ընկնելու երկրորդ օրը» (Վերֆ.)։ «Չնայելով տարիքին՝ ճանապարհն անցնում էր ժրուխտով» (Մուր.)։

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ՝ հետ, հանդերձ, համընթաց, զուգընթաց՝ «Նրանց հետ միասին վազվզում էր պարտեզում, նրանց հետ ճաշում էր, նրանց հետ քնում» (Իս.)։ «Այս հաջողություններով հանդերձ՝ աշխատանքներում կան լուրջ թերություններ» (Լր.)։ «Ռոմանտիզմին համընթաց զարգանում էին նաև նոր գրական ուղղություններ» (Լր.)։ «Երեսայի աճին զուգընթաց զարգանում է նաև նրա դիմադրողականությունը» (Լր.)։

ՉԱՓԻ՝ չափ, ավել, ավելի, ավելի քան, մինչև, պակաս՝ «Դու փոքր ես, երկիր, Սրտի չափ ես դու» (Դավթ.)։ «Նա հազարից ավելի ավելի գիրք ունի»։ «Նա մինչև հազար գիրք ունի»։ «Նա հազարից պակաս գիրք ունի»։

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ՝ քան, համեմատ, համեմատությամբ՝ «Խոսքերը մեր հոգուն հաճո են առավել, քան այս պտուղը քաղցրահամ» (Չար.)։ «Արդյունաբերության աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմեց ութ տոկոս» (Լր.)։ «Իր եղբոր համեմատ նա շատ է զարգացած»։

ՇԱՀԻ՝ հոգոտ, օգտին, համար՝ «Չինովիկ ծիծաղը հոգոտ Միրի կընդունենին» (Բակ.)։ «Այս գործի օգտին հինգ հարյուր ուրբի եմ նվիրում» (Նար-Դոս)։ «Ահա քեզ համար բերել եմ ավյուն» (Թում.)։

ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՄԱՆ՝ գծով, ուղղությամբ, գործում, մեջ՝ «Պրոռեկտոր գիտահետազոտական աշխատանքների գծով»։ «Նկատելի աշխատանքներ կատարվեցին բնակչության կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ» (Լր.) «Այս գույծում ձեռք բերվեցին նոր հաջողություններ» (Լր.)։ «Ուսման մեջ առաջավոր է»։

ՆԵՐԿՈՐԾՈՒԹՅԱՆ՝ կողմից՝ «Աշակերտը պարզևատրվեց դիրեկտորի կողմից»։

ՊԱՅՄԱՆԻ՝ դեպքում՝ «Պատերազմ ծագելու դեպքում մենք անակրեկալի չենք գա»։

ԳԻՄԱՆԻՆՈՒԹՅԱՆ՝ հանձին, հանձինս, ի դեմս՝ «Հանձին մարքսիստական ուսմունքի՝ սրողեստարիատը գտավ իր հոգևոր գեները» (Լր.)։ «Ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին»՝ հանձինս աշխատավորների պատգամավորների խորհուրդների» (Լր.)։ «Ի դեմս նոր կանտականություն՝ մենք գործ ունենք հետադիմական ուսմունքներից մեկի հետ» (Լր.)։

ՍՏԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ մոտ՝ «Գարբիելի մոտ սկսվել էր ինչ-որ անծանոթ հոգեվիճակ» (Վերք.)։ «Այս հիվանդությունն ավելի հաճախ զարգանում է ձմռան ամիսներին ծնված երեխաների մոտ. ամռան ամիսներին ծնվածների մոտ նա համարյա չի նկատվում» (Լր.)։ Մոտ կապի մեջ ստացականության իմաստ է զարգացել ուսերենի ազդեցությամբ։

Հնարավոր է նշել մասնակի այլ հարաբերություններ ևս։ Ինչպես արգեն բերված օրինակներից է երևում, նույն կապը կարող է հանդես գալ որպես շարահյուսական տարբեր հարաբերությունների արտահայտիչ՝ իր մեջ համատեղելով ամենատարբեր նշանակություններ։ Այսպես օրինակ՝ առաջ, մինչև, մեջ և այլ կապեր արտահայտում են տեղի ու ժամանակային նշանակություններ, ևս մաս կապը՝ նպատակի, պատճառի, շահի և այլ նշանակություններ։ Իսկ սա էլ նշանակում է, որ մի շարք կապեր բազմիմաստ են։ Իհարկե, այդ նշանակություններից մեկը հիմնական է լինում, և մյուսները կարելի է բխեցնել դրանից։ Որպես ընդհանուր օրինաչափություն՝ հին կապերը բազմիմաստ են, իսկ նորերը՝ մենիմաստ։

Կապերի նշանակությունը հաճախ կախված է լինում կապային խընդիրներից։ Թե ինչու «Մինչև էջմիածին», «Արտի մեջ», «Գետի մոտ» կապակցությունների մեջ կապերը տեղի, իսկ «Մինչև կիրակի», «Մի տարվա մեջ», «Գարնան մոտ» կապակցությունների մեջ ժամանակային իմաստ են արտահայտում, բացատրվում է միայն նրանով, որ առաջին դեպքում կապային խնդիրները տեղի, իսկ երկրորդ դեպքում ժամանակի անուններ են։

Առանձին դեպքերում կապի նշանակությունը կախված է լինում կապային խնդրի հոլովածից, օրինակ՝ «Սուրենի առաջ», «Հոր առաջ» (տեղ), «Սուրենից առաջ», «Հորից առաջ» (ժամանակ)։

Բայց կա նաև հակառակ երևույթը, երբ տարբեր հոլովածով խընդիր անելը բոլորովին չի ազդում կապի նշանակության վրա, ինչպես՝ «Մի շաբաթ հետո կգա», «Մի շաբաթից հետո կգա», «Քեզ համար ուրիշ գորություն չկա, բացի գենը», «Բացի գենից, քեզ համար ուրիշ գորություն չկա»։

Մյուս կողմից՝ կապերի իմաստային նշանակությունները ավելի հաճախ պայմանավորված են լինում նրանով, թե կապը և կապի խնդիրը ի՞նչ կապակցությունների մեջ են գործածվում և ի՞նչ գերադաս բաներից են կախված լինում, ինչպես՝ «Գիրքը դրեց սեղանի վրա», «Ժայռերի վրա սավառնում էին թռչունները», «Մեր տունը Չարենցի փողոցի վրա է», «Մտերն օրորվում էին ճանապարհների վրա», «Հարձակվեցին թշնամու վրա», «Պատուհանը նայում է պարտեզի վրա», «Խոսում էին հացի թանկության վրա», «Այս խոսքերի վրա նա ներս մտավ», «Գինին վերջանալու վրա է», «Տարին տարու վրա ավելի է գեղեցկանում» և այլն։

Հասկանալի է, որ բերվածներով չեն սպառվում և չեն էլ կարող սպառվել Վրա կապի՝ բառակապակցությունների մեջ արտահայտված իմաստները, Հայերենի կապերի մի զգալի մասը բազմիմաստ է և գործածվելով տարբեր բառակապակցությունների մեջ՝ դրսևորում է իր նշանակությունների բազմազանությունն ու հարստությունը։

#### Կապերի հոլովառությունը

ԿԱՊԵՐԻ ՀՈՂՈՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ (ԽՆԳՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ).— Ինչպես նշված է արդեն, կապերը գործածվում են այս կամ այն հոլովածի հետ կամ որ նույնն է՝ կապերը պահանջում են այս կամ այն հոլովը։ Թե ինչու տվյալ կապը հատկապես այս կամ այն հոլովն է պահանջում, բացատրվում է ոչ թե ինչ-որ պատահականությամբ, այլ կապի նշանակությամբ։ Որպես ընդհանուր կանոն, համապատասխանություն գոյություն ունի կապի նշանակության և հոլովական ձևի ընտրության միջև։ Եվ թե մի քանի կապեր տարբեր հոլովների հետ են գործածվում, օրինակ՝ ա) «դեպի բեզ» և «դեպի ինքը», բ) «փոթորիկի առաջ» և «փոթորկից առաջ», ապա դա բացատրվում է կամ հոլովական ձևերի համանշտությամբ, այսինքն՝ որոշակի դեպքերում տարբեր հոլովների իմաստային հակադրությունների շեղբացմամբ (առաջին օրինակները), կամ կապերի արտահայտած տարբեր հարաբերություններով (երկրորդ օրինակները)։

Ասված է, որ ժամանակակից հայերենում հայցական հոլով ընդհանրապես գոյություն չունի, իսկ սեռական ու տրական հոլովները տարբերակված են միայն անձնական և մի քանի ցուցական դերանունների մեջ, Կապերի խնդրառությունը մենք շարադրում ենք հենց այդ տեսա-

կետից, բայց գոյականների համար ևս առանձին դեպքերում գործածում ենք սևռական և տրական տերմինները՝ միայն նկատի ունենալով, որ այդ հոլովները որոշ դերանունների մեջ տարբերակված են:

Ժամանակակից հայոց լեզվում ուղղական հոլովի հետ գործածվում են հետևյալ կապերը. առ (առ Քրիստոս), դեպի (դեպի դաշտ), զերդ (զերդ գազան), ի (ի գիտություն), ի վեր (գետնի վեր), ի վար (գետնի վար), մինչև (մինչև տուն, մինչև կիրակի), ց (ցայսօր), անց (մի շաբաթ անց), առաջ (մի տարի առաջ), հետո (մի շաբաթ հետո), նախքան (նախքան նրա գալը), իբրև, որպես, ինչպես (նա աշխատում է իբրև ուսուցիչ, որպես ուսուցիչ, ինչպես ուսուցիչ), քան (ծրեանը մեծ է, քան կենդանականը), ժողովրդական՝ ոնց, ոնց որ, քանց, հանց (ոնց երեխա, ոնց որ երեխա, քանց գել-գազան, հանց գել-գազան): Ուրեմն՝ ուղղական հոլով են պահանջում ուղղություն ցույց տվող կապերը, ժամանակի կապերից մի քանիսը, բացահայտման և նմանության ու ձևի կապերը (պես և նման կապերը սեռական կամ տրական հոլովների հետ են գործածվում) և քան համեմատության կապը:

Սակայն պետք է նկատի ունենալ հետևյալները:

1. Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի հետ ուղղության կապերը տրական են պահանջում, ինչպես՝ դեպի ինձ, դեպի ինչ, մինչև մեզ, մինչև ձեզ:

2. Առաջ և հետո կապերը ուղղական հոլովի հետ են գործածվում միայն ժամանակ ցույց տվող բառերի դեպքում (թեև հետո կապի հետ ուղղականի հետ հավասար գործածվում է նաև բացառականը՝ հինգ օր հետո՝ հինգ օրից հետո, մի շաբաթ հետո՝ մի շաբաթից հետո): Այլ բառերի դեպքում գործածվում է բացառականը՝ ֆենոլոգիայից առաջ, հետո, ընտրություններից առաջ, հետո: Ուղղական՝ բացառական զուգահեռությունը նկատվում է նաև անց կապի դեպքում՝ «Յոթանասունն անց տղամարդ էր», «Յոթանասունից անց տղամարդ էր»:

3. Ժողովրդական-խոսակցական լեզվում ուղղական հոլովի հետ են գործածվում նաև առանց և բացի կապերը, օրինակ՝ «Առանց ժամ ու պատարագ, Մեջը դրին Մարտին» (Թում.): «Ես նրա համար մի արխալուղացու առա նվիրեցի, բացի ձիու վարձը» (Թում.): Առանց կապի համար օրինակաբանություն սեռական-տրական, իսկ բացի կապի համար բացառական հոլովն է:

Ժամանակակից հայերենում չոթ հոլով ընդունող լեզվաբանները վերոհիշյալ բոլոր կապերի հետ գործածված հոլովական ձևերը (մինչև Սուրենը, դեպի Սուրենը, մի շաբաթ առաջ, երկու օր հետո և այլն) համարում են հայցական, բացառությամբ այն դեպքերի, երբ իբրև, որպես, ինչպես կապերը մասնակցում են ստորոգելիական վերադրի և մասնական բացահայտիչի ձևավորմանը (Աշխատում է իբրև ուսուցիչ): Վերջին դեպքում այդ կապերի խնդիրը համարվում է ուղղական:

Ժամանակակից հայերենի կապերի ճշգրտ մեծամասնությունը սևռական հոլով է պահանջում, և դա արդյունք է նրա, որ զգալի թվով կապեր առաջացած լինելով գոյականներից՝ պահանջում են իրենց սևռական խնդրառությունը: Սեռական հոլովի հետ գործածվող կապերն են. մոտ (իր մոտ), վրա (նրա վրա), առաջ (սրա առաջ), մեջ (դրա մեջ), առջև (իր առջև), միջև (սրա ու նրա միջև), տակ (նրա տակ), ներքո (նրա ներքո), դիմաց (իր դիմաց), հետ (իր հետ), ժամանակ (սրա ժամանակ), ընթացքում (դրա ընթացքում), (սրա) շնորհիվ, առթիվ, պատճառով, հետևանքով, երեսից, ձեռքից, հիման վրա. դեմ (նրա դեմ), ընդդեմ (ընդդեմ նրա). (նրա) փոխարեն, փոխանակ, տեղ (իր) մասին, շուրջ, նկատմամբ, վերաբերմամբ, վերաբերյալ, հասցեին, հանդեպ. (սրա) պես, նման. հօգուտ (սրա), (նրա) օգտին, ըստ (դրա), (սրա) շափ, (իր) համար, նպատակով, ի դեմս (սրա), հանուն (դրա), (նրա) միջոցով, կողմից և այլն: Օրինակները ցույց են տալիս, որ սևռական հոլովի հետ գործածվում են ամենատարբեր շարահյուսական հարաբերություններ արտահայտող կապեր (տեղ, ժամանակ, պատճառ, նպատակ, վերաբերություն և այլն):

Նշվածներից մոտ, վրա, հետ, պես, շափ, համար, հօգուտ, հանդիս, ի դեմս, հանուն կապերը անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի հետ տրական հոլով են պահանջում, ինչպես՝ ինձ, ինչ, մեզ, մեզ, ձեզ— մոտ, վրա, հետ, պես, շափ, համար. հօգուտ, հանդիս, ի դեմս, հանուն— ինձ, ինչ, մեզ, մեզ, ձեզ: Այսպես նաև հանդեպ կապը, երբ գործածվում է որպես նախադրություն, օրինակ՝ հանդեպ ինձ, ինչ, բայց որպես հտադրություն պահանջում է սեռական հոլով՝ իմ հանդեպ, և այլն:

Քննարկվող կապերի խնդրառությունից կարելի է գալ այն եզրակացություն, որ անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերը որպես որոշ կապերի խնդիրներ հակադրվում են երրորդ դեմքին և յուրահատկություն են հանդես բերում: Դա բացատրվում է նրանով, որ առաջին և երկրորդ դեմքերը ցույց տալով խոսողին և խոսակցին՝ գտնվում են հավասարազոր դրություն մեջ, իսկ երրորդ դեմքը ցույց տալով առարկան կամ անձը, որի մասին գնում է խոսքը, չի կարող հավասարազոր լինել դրանց: Այս տեսակետից դերանունների երրորդ դեմքը հավասարվում է գոյականներին և նրանց հետ կապակցությունների մեջ միևնույն օրինաչափություններին է ենթարկվում, օրինակ՝ դեպի նա և դեպի Սուրենը, դեպի ինձ և դեպի Անահիտը, բայց դեպի ինձ, դեպի ինչ և այլն:

Սրանից բխում է, որ եթե գոյականների համար ևս առանձին սևռական և տրական հոլովներ են ընդունվում, ապա այդ հոլովները գոյականների մեջ պայմանականորեն պետք է տարբերակվեն ըստ դերանունների երրորդ դեմքի (բայց ոչ երբեք առաջին ու երկրորդ դեմքերի)

հոլովական համապատասխանության: Այսպես, շնայած որ ունենք ինձ մոտ, քեզ մտ, մեզ վրա, ձեզ վրա, ինձ համար, քեզ համար, մեզ պես, ձեզ պես և այլ ձևերը, բայց և այնպես՝ սեղանի մոտ, տանիքի վրա, հայրենիքի համար, երեխայի պես կապակցությունների մեջ գոյականների հոլովածը պետք է համարել սեռական, որովհետև դերանվան երրորդ դեմքի հետ այս կապերը գործածվում են սեռական հոլովով՝ իր մոտ, նրա մոտ, սրա վրա, դրա համար, իր պես և այլն: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ ինձ մոտ, քեզ վրա, ձեզ պես և այլ կապակցությունների մեջ դերանունները իմաստով սեռական են և առանձին դեպքերում հենց սեռական ձևով էլ գործածված ենք գտնում գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ «Այն եմ ես անվերջ խորհում եմ վրա» (Տեր.): «Դու անհոգ նայեցիր իմ վրա» (Տեր.): «Խարձիր իմ մտա, վերադարձիր դու նորից» (Տեր.):

Բացի վերոհիշյալներից, բուն տրական հոլով են պահանջում հետևյալ կապերը. զուգընթաց (սրան զուգընթաց), ընդառաջ (նրան ընդառաջ), կից (սրան կից), հակառակ (դրան հակառակ), համաձայն (սրան համաձայն. նաև՝ սրա համաձայն), հավասար (նրան հավասար), շնայած (շնայած սրան), շնայելով (շնայելով դրան):

Բացառական հոլով են պահանջում բացառման հարաբերությունն արտահայտող բացի (բացի ընկերներից ու բարեկամներից), գառ (խաղից ու տաղից գառ), տարածական հարաբերությունն արտահայտող դուրս (բաղաբից դուրս), հեռու (հայրենիքից հեռու), ներքև (ծառից ներքև), վերև (սարերից վերև), վեր (ժայռերից վեր), ժամանակային հարաբերությունն արտահայտող առաջ (արշալուստից առաջ), հետո (մայրամուտից հետո), սկսած (կեսօրից սկսած), ի վեր (այն օրից ի վեր) կապերը:

Ինչպես նշված է արդեն, բացի կապը գործածվում է նաև ուղղականի հետ (բացի մայրը, բացի եղբայրը): Այսպես են նաև ստաջ և հետո կապերը, երբ գործածվում են ժամանակի անունների հետ (մի ամիս առաջ, մի ամիս հետո, յոթ օր առաջ, յոթ օր հետո):

Ասացինք, որ վերև, ներքև կապերը բացառական են պահանջում, ինչպես՝ սեղանից վերև, սեղանից ներքև: Բայց դրանց հոլովված ձևերն արդեն գործածվում են սեռականի հետ, ինչպես՝ սեղանի վերևից. ներքևից. սեղանի վերևում, ներքևում: «Սուփրի վերև միշտ նստեի, իմ ապրուստը դրսեի» (Թում.). «Ամբողջ գյուղը հավաքվել էր գլուղի վերև, տավարի մոտ» (Բակ.) նախադասություններում վերև ձևը սեռական է պահանջել, որովհետև ներգոյականի արժեք ունի (սուփրի վերև = սուփրի վերևում. գլուղի վերև = գլուղի վերևում):

Գործիական հոլովի հետ է կիրառվում հանդերձ կապը, որը սոսկ ավելի է շեղում ու բացահայտ դարձնում գործիականի միասնության և հակառակ հիմունքի իմաստները, օրինակ՝ «Այս ամբողջ բաղաբաղա-

նությունը. տո՛՛մի հասցեին ուղղված հանդիսանալիս մեր հանդերձ. պարզապես լիտի ծաղր էր» (Վերջ.). «Ասկայն վառանալով. սքրալով սե իրեն դատապարտելով հանդերձ. նա այժմ էլ գգում էր. որ բարձրացած պատենելն անխորտակելի է» (Շիրվ.):

Մե երկու կապակցություններում շափ կապը գործածվում է գործիական հոլովի հետ. ինչպես՝ «Ուտերն ու կուրճը կիսով շափ մեքել» (Շիրվ.): «Միրանի տափի բախտը կիսով շափ գործված համարեցին» (Բակ.): «Ինքս հոգով շափ հարգել եմ նրան» (Նար. Բոս.): Սակայն չորանք բարացած. ոչ կենդանի շարահյուսական ձևեր են. որովհետև մշուտ են առանձին, և դրանց նմանակությամբ նոր կապակցություններ կազմվել չեն կարող: Չափ կապն ընդհանրապես սեռական կամ տրական հոլով է պահանջում (նրա շափ, ինձ շափ):

Ներգոյական հոլովն ընդհանրապես կապերի հետ չի գործածվում: Կապերի հոլովատությունը նվիրված այս հատվածը վերջացնելուց առաջ ասենք նաև հետևյալը: Գրտենք, որ այս. այդ. այն ցուցականները թեք հոլովական ձևեր չունեն: Սրանից կարելի էր եզրակացնել. որ այն կապերը, որոնք թեք հոլովներ են պահանջում, այս դերանունների հետ գործածվել չեն կարող: Ընդհանրապես այդպես էլ է. բայց պետք է նկատի ունենալ, որ սեռական հոլով պահանջող մի բանի կապեր կարող են այս. այդ. այն դերանունների հետ գործածվել: Այսպիսի կապեր են՝ առթիվ. մասին, նպատակով. պատճառով. ինչպես՝ այս մասին. այդ առթիվ. այն նպատակով. այս պատճառով և այլն: Դրանք բոլորն էլ գոյականական ծագում ունեն և այս կապակցությունները երբեմն «դերանուն - գոյական» կապակցությունների շարունակություն են նոր իմաստավորմամբ:

Այս, այդ. այն դերանունները կարող են գործածվել նաև առանց բացի կապերի հետ, օրինակ՝ «Առանց այդ էլ շատ է շարձարվել». «Բացի այս, պետք է նկատի ունենալ նաև նրա դիրքը» և այլն: Այս գործածությունը բացատրվում է նրանով, որ առանց բացի կապերը ժողովրդական լինելով կարող են բառի ուղիղ ձևերի հետ գործածվել (բացի գիրքը, առանց ընկեր):



րադաս բառը գերադաս բառի նկատմամբ՝ որոշելով նրա ֆունկցիան նախադասության մեջ, օրինակ՝ «եսուում էին պատերազմի մասին»։ «Հարծակվեցին հակառակորդի վրա»։ «Վերադարձավ եղբոր հետ»։ «Հանդիպեցին դպրոցի մոտ» և այլն։ Ինչպես օրինակներն են ցույց տալիս, կապերն արտահայտում են ստորագաս բառերի՝ գերադաս բառերի նրկատմամբ ունեցած հարաբերությունները՝ այսպիսով իրենց խնդիրների հետ միասին դառնալով նախադասության մեկ անդամ։

Ի տարբերություն կապերի՝ շղկապները ստորագաս բառերը գերադաս բառերին կապելու, նախադասության անդամների ձևավորման, բառերի ֆունկցիայի որոշման դեր չունեն։ Եթե կարելի է այսպես արտահայտվել, շղկապներն անտարբեր են իրենցով կապակցվող միավորների հոլովական ձևերի նկատմամբ։ Պարզ նախադասության կազմում նրանք իրար են շղկապում նախադասության համազոր անդամներ կամ մասեր, որոնք գտնվում են այս կամ այն համադասական հարաբերության մեջ, օրինակ՝ «Սուրենը և Արամը գնացին» — միավորման հարաբերություն։ «Թե՛ Սուրենը, թե՛ Արամը գնացին» — թվարկման հարաբերություն։ «Սուրենը ևս գնաց» — հավելման հարաբերություն։ «Սուրենը կամ Արամը» — տրոհման հարաբերություն։

Սակայն շղկապների կիրառության հիմնական ոլորտը բարդ նախադասությունն է, որտեղ շղկապները հանդես են գալիս ավելի լայն շարահյուսական-կապակցական ֆունկցիաներով՝ արտահայտելով բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների ամենաբազմազան ու տարբեր համադասական ու ստորագասական հարաբերությունները, օրինակ՝ «Քամին դադարեց, և սկսվեց տեղատարափ անձրևը»։ «Նա ուզում էր ասել ամեն ինչ, բայց ուժերը դավաճանում էին»։ «Ծղբայրն ուռուցիչ է, իսկ քույրը բժշկուհի»։ «Նրանք նվիրված են իրենց գաղափարներին, ուստի կհաղթեն»։ «Դու հանցանք ես գործել, հետևաբար պետք է պատժվես»։ «Գնաց մայրաքաղաք, որպեսզի ուսուցը շարունակի»։ «Գիտեմ, որ դու չես դավաճանի քո սկզբունքներին»։ «Մենք կհաղթենք, որովհետև մեր գործն արդար է»։ «Լենց որ հասան գետափին, իսկույն իջան ձիերից»։ «Եթե դա կատարես, քո մեղքը կթեթևանա»։

Սակայն շատ հաճախ նախադասության կազմում շղկապներով միավորվում են ոչ թե երկու, այլ իմաստային այս կամ այն հարաբերության մեջ գտնվող մի շարք նախադասություններ՝ կազմելով բազմաբարդ շարահյուսական ամբողջություններ, ինչպես՝ «Իսկ երբ աղան բադի պես աչ ու ախ երեքվելով գնում էր փողոցով կամ անցնում էր խանութից խանութ և կամ կլուր էր մտնում, ամենքն աշխատում էին որսալ նրա հայացքը, որպեսզի բարևեն խոնարհ և արժանանան նրա արհամարհական պատասխանին» (Շիրվ.)։ «Գաբրիելն այս երեք ուսյալ երևելիներից ուզում էր իմանալ, թե սրանք ինչ լույսի տակ են տեսնում

իրարությունը, թե ինչ են մտադիր անելու, եթե աքսորի հրաման տրվի, և ինչ միջոցներ են գործադրելու, որպեսզի թիչ տանջանքներով կրեն իրենց վիճակված խաչը» (Վերք.)։

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ շղկապները, որպես լեզվական միավորներ, ունեն իրենց յուրահատուկ իմաստներն ու շարահյուսական կիրառության ոլորտները։ Հատկանիշներ, որոնցով նրանք տարբերվելով մյուս բոլոր բառախմբերից՝ առանձին տեղ են գրավում խոսքի մասերի համակարգում։

Քանի որ այստեղ խոսքը դուռն է շղկապների՝ լեզվի համակարգում խաղացած դերի մասին ընդհանրապես, ապա նշենք, որ շղկապները կարող են գործածվել նաև ինքնուրույն, անկախ նախադասությունների, պարբերությունների, խոսքի ամբողջական հատվածների սկզբում՝ այդ դեպքում դրսևորելով դրանց և խոսքի շղթայում դրանց նախորդած լեզվական միավորների տրամաբանական, իմաստային կապերն ու աղբյուրները։

Վերցնենք հետևյալ նախադասությունները «Գիբորից»։ «Համբուն ուզում էր իր տասներկու տարեկան Գիբորին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի։ Կինը չէր համաձայնում։— Զե՛մ ուզում, իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարհը մի՛ գցիլ, չե՛մ ուզում,— լաց էր լինում կինը։ Բայց Համբուն լլսեց»։ Միանգամայն ակնբախ է, որ վերջին նախադասությունը իմաստային ու հնչերանգային տեսակետից ավարտուն, ինքնուրույն ու անկախ նախադասություն է և քերականորեն կապակցված չէ նախորդ նախադասությունների հետ։ Սակայն բայց շղկապն այստեղ կատարում է յուրահատուկ ֆունկցիա՝ արտահայտելով իրենով սկսվող և նախորդ նախադասությունների տրամաբանական կապը։ Նույնպիսին է իսկ շղկապի դերը «Քառսից» բերվող հետևյալ հատվածի մեջ։ «Սանձարձակ ծաղրում էին, գրպարտում, հայհոյում քաղաքի առաջին միլիոնատիրոջ, սակայն միայն հեռվից։ Իսկ երբ աղան ... գնում էր փողոցով կամ անցնում էր խանութից խանութ և կամ կլուր էր մտնում, ամենքն աշխատում էին որսալ նրա հայացքը»։

Նշենք նաև, որ առանձին շղկապներ, կիրառվելով ինքնուրույն, անկախ նախադասությունների մեջ, ցույց են տալիս, որ այս շղկապների հետ գործածվող միավորները ունեցել են իրենց համազորները նախորդ նախադասությունների մեջ, օրինակ՝ «Այդ տան պատերը ևս սևագույն քարից էին»։ «Աղոթքներն էլ շոգնեցին»։ «Նաև իմ բարեկամին ազատեցին» և այլն։

Այնուհետև, թե շղկապով կարող են սկսվել ամբողջական խոսքեր, որպես վերնագրեր, օրինակ՝ «Թե ինչ պատահեց դոն Կիխոտի և այծարածների միջև» (Սերվ.)։ «Թե դոն Կիխոտի հետ եղած այծարածներից մեկն ինչ պատմեց» (Սերվ.)։ «Թե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն» (Թում.)։ «Թե ինչպես հույսն ու հու-



սահատութիւնը պարբերաբար հաջորդում էին իրար» (Անան.). «Թե ինչպէս կարիքն առանց հապաղելու սկսեց բախել նրանց դուռը» (Անան.) և այլն: Դրանք փաստորեն ծագմամբ երկրորդական նախադասութիւններ են (Պատմութիւն այն մասին, թե..., Խոսք այն մասին, թե...), որ անկախացել են:

Այսպէս՝ ուրեմն՝ շաղկապները կապերի հետ միասին կազմում են լեզվի բերականական իմաստ արտահայտող բառախմբերը, որոնք զուրկ լինելով էյուրաբական նշանակութիւնից՝ սոսկ շարահայտական, կապակցական դեր են կատարում՝ արտահայտելով բառերի և նախադասութիւնների հարաբերութիւնները:

Շաղկապների առաջացումն ու զարգացումը անմիջականորեն ու սերտորեն կապված է բարդ նախադասութիւնի առաջացման ու զարգացման հետ: Իսկ բարդ նախադասութիւնները մարդկային մտածողութիւնի թելադրանքով ու պահանջով զարգացման բարձր մակարդակի են հասնում հատկապէս գրավոր-գրական լեզվում՝ ի վիճակի լինելով արտահայտելու լեզվական տարբեր միավորների իմաստային ամենաբազմազան փոխհարաբերութիւնները և ընդգրկելով բազմաթիւ ու բազմապիսի տիպեր ու ձևեր:

Հարցին մոտենալով այս տեսակետից՝ պետք է նշել, որ ժամանակակից գրավոր-գրական հայերենն ունի բավականին հարուստ շաղկապական համակարգ: Մի կողմ թողած հարաբերական դերանունները՝ գրավոր-գրական հայերենում կան հինգ տասնյակից ավելի բառեր, որոնք հատկապէս բառերի և նախադասութիւնների կապակցման դեր են կատարում, այսինքն կազմում են ժամանակակից հայերենի շաղկապների համակարգը:

Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական-խոսակցական լեզվին և բարբառներին, ապա պետք է նշել, որ գրավոր լեզվի համեմատութեամբ դրանց շաղկապական համակարգը թույլ է զարգացած: Այս տեսակետից բավական է նշել, որ գրավոր-գրական լեզվում այնքան սովորական ու լայնորեն տարածված այնպիսի շաղկապներ, ինչպիսիք են՝ այլ, այլապես, այնինչ, այսպիսով, սակայն, թեև, թեպետ, չնայած, հետևաբար, հետևապէս, մինչդեռ, նաև, նույնիսկ, ոչ թե ... այլ, ոչ միայն ... այլև, որովհետև, որպեսզի, — ժողովրդական-խոսակցական լեզվում և բարբառներում գործածական չեն: Գուցե սխալված չլինենք, եթե ասենք, որ ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում գործածվում են նրկու տասնյակից ոչ ավելի շաղկապներ: Դրանցից են՝ որ, թե, թե չէ, կամ, կամ թե, կամ թե չէ, ու, մինչև, էլ և մի քանի ուրիշները:

Ինչևիցե, մի բան պարզ է, որ գրավոր-գրական լեզուն գերադասութիւնը տալիս է զոգովածական (այսինքն՝ շաղկապական), իսկ ժողովրդական-խոսակցական լեզուն՝ շարահարական (այսինքն՝ անշաղկապ) կապակցութիւններին:

Մ. Արեղյանը, շատ ճիշտ բնորոշելով այս երևույթը, միանգամայն իրավացիորեն գրում է. «Շարահարութիւնը խոսքերի կապակցութիւն ամենապարզ, սկզբնական ձևն է և հատուկ է ժողովրդական լեզվին. գրական լեզվի մեջ պահանջվում է, որ կապակցական խոսքերի հարաբերութիւնն արտահայտվի որևէ բառով»<sup>2</sup>:

Եվ իրոք, մեր գրավոր-գրական և ժողովրդական-խոսակցական լեզուների հիմնական տարբերութիւններից մեկը հենց այս է: Սրա համար ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ Հ. Թումանյանի լեզուն, որը մտտ լինելով ժողովրդախոսակցականին՝ շափազանց առատ է շարահարական կապակցութիւններով, որոնք գրավոր-գրական լեզվում կղրսնորվեին որպէս զոգովածական (շաղկապական) կապակցութիւններ, ինչպէս՝ «(եթե) Մնկան ծերին աքլորը ծուղրուղու կանչի, ձենը ականջը չի հասնիլ» (462). «(եթե, երբ) Ծս եմ գնում, — կարասը լիքն օձ է դառնում, (եթե, երբ) սրանք են գնում — ոսկի» (448). «Մին էլ գնում է (որ) շուրը կապի, գալիս է (ու) տեսնում՝ (որ) բաղաջը չկա» (441). «Առավոտը վեր է կենում (ու) տեսնում (որ) մի աղվես է ընկել մէջը» (441). «(Թեև) Բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ ձմեռ չը եմ մնում» (426). «Տեսնում է (որ) մի պառավ փետի է ման գալի (որ) որպեսզի թոնիրը վառի, հաց թխի» (433). «Գնում է (ու) տեսնում՝ (որ) մի տեղ հարսանիք են անում, (բայց) մասցու չունեն, որ մորթեն (434)»<sup>3</sup>:

Կատարված քննութիւններով ընդհանուր ձևով ուրվագծվեցին շաղկապի խոսքիմասային առանձնահատկութիւնները, նրա շարահարական կիրառութիւնների ոլորտները: Այժմ շաղկապի և այլ խոսքի մասերի փոխհարաբերութիւնների մասին:

#### Շաղկապների հարաբերակցութիւններն այլ խոսքի մասերի հետ

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՓՈՒՆԴԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Լեզվաբանական գրականութիւնի մեջ ճիշտ կերպով նշվում է, որ շաղկապները և կապերը պատկանում են համեմատաբար ուշ առաջացած խոսքի մասերի թվին: Դա ամենից տառջ հաստատվում է նրանով, որ շաղկապների և կապերի մեջ մտնող բառերը, որպէս կանոն, առաջանում են նյութական իմաստ արտահայտող բառերից նրանց նյութական իմաստի մթազմման և հարաբերութիւնի իմաստի զարգացման ճանապարհով: Այսպէս են, օրինակ, այլ, կամ («կամք»), ուստի, ուրեմն, միայն, որ, սակայն (սակ «պայման») շաղկապները, առթիվ, դիմաց, համար, հաւնդերձ, հանձին, մասին կապերը և այլն:

Խոսքը մասնավորելով շաղկապների մասին պետք է նշել, որ նը-

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 609:

<sup>3</sup> Հ. Թումանյան, Երկեր, հ. 1. Երևան, 1958 (փակագծերում նշանակված են էջերը):

րանք սովորաբար առաջանում են դերանուններից, կապերից, մակբայ-  
ներից, եղանակավորող բառերից, առանձին գեպերում գոյականներից  
ու բայական ձևերից: Այսպես օրինակ՝ մենք գիտենք, որ ժամանակա-  
կից հայերենի ու շաղկապն առաջանում է ու դերանունից, իսկ վերջինս  
գրաբարում բուն շաղկապական կիրառություն չունի: Այսպես և դերան-  
վանական ծագում ունեն այլ, այնինչ, այսինքն, ևանի շաղկապները:  
Հայտնի է, որ կամ շաղկապն առաջանում է կամ բառից, որը գրաբար-  
ում հավասարապես նաև գոյական էր, իսկ շաղկապը՝ իսկ բառից, որը  
գրաբարում հավասարապես նաև ածական ու գոյական էր: Արդի հայե-  
րենի ուստի շաղկապն առաջանում է ուստի մակբայից, որը գրաբարում  
միաժամանակ ուներ նաև շաղկապական կիրառություն: և այն:

Այս բոլոր օրինակները խոսքի մասերի փոխներգործության և փո-  
խանցման երևույթներ են: Դիտենք, որ լեզուն ոչ թե պատրաստի ու  
ավարտուն գործ է, այլ անընդհատ շարժման մեջ գտնվող, հարտև  
փոփոխվող ու զարգացող երևույթ է: Դարերի ընթացքում լեզվի աստի-  
ճանական փոփոխության հետևանքով փոխվում են բառերի ձևերը, ի-  
մաստները, իսկ վերջիններիս հետ կապված կարող են փոխվել նաև բա-  
ռերի ֆունկցիաները: Հասկանալի է, որ փոփոխություններն ուղեկցում  
են լեզվին նրա պատմության ամբողջ ընթացքում, և իր զարգացման և  
ու մի փուլում լեզուն չի կարող ներկայանալ որպես ինքնաբավ ու ա-  
վարտուն համակարգ:

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ տարբեր խոսքի մասերի  
փոխներգործությունները և փոխանցման երևույթները տեղի են ունենում  
նաև լեզվի ժամանակակից փուլում: Եթե մի կողմ թողնենք լեզվի պատ-  
մական տվյալները և անդրադառնանք սոսկ ժամանակակից հայերենին,  
ապա պետք է նկատենք, որ արդի լեզվում ևս շաղկապները ինքնաբավ,  
այլ խոսքի մասերից պարփակված համակարգ չեն ներկայացնում:

Նշված է, որ գործառական տեսակետից շաղկապները բնորոշվում  
են իրենց կապակցական դերով: Բայց չէ՞ որ նախադասությունների  
կապակցությունն իրականանում է ոչ միայն շաղկապների, այլև հարա-  
բերական դերանունների միջոցով: Նախադասությունների կապակցման  
իրենց ֆունկցիայով հարաբերական դերանունները հավասարվում են  
ստորադասական շաղկապներին, բայց վերջիններիցս տարբերվում են  
նրանով, որ նախադասության անդամ են դառնում, մյուս կողմից էլ՝  
դրանցից առարկայական նշանակություն ունեցողները հոլովվում են:  
Հարաբերական դերանունները գլխավոր նախադասությունների մեջ հա-  
ճախ ունենում են իրենց համապատասխան հարաբերյալները՝ այսպի-  
սով ափիլի դայտուն ձևով դրսևորելով բարդ նախադասության կազմիչ  
մասերի: Տնչերանգային և իմաստային միասնությունը, ինչպես՝ «Վերց-  
րեց այն, ինչ իրեն հարկավոր էր»։ «Եկավ այն ժամանակ, երբ արգեն  
ուշ էր»։ «Դրեց այնպես, ինչպես ես էի պահանջել»։ «Ուրեմն մեծանում

է, այնքան գեղեցկանում է»։ «Խոսում էր այնպես ոգևորված, ինչպես  
երբևր չէր խոսել» և այլն:

Բերված բոլոր նախադասությունների մեջ հարաբերական դերանուն-  
ները երկրորդական նախադասությունները կապում են գլխավորներին՝  
այսպիսով, կատարելով շաղկապական ֆունկցիա, բայց բուն շաղկապ-  
ներից, ինչպես նշված է, տարբերվում են նրանով, որ հարաբերական  
դերանունները՝ հանդես են դալիս նախադասության անդամների դերով,  
որը պայմանավորված է նրանց ունեցած, ճիշտ է, անորոշ, ընդհանուր,  
բայց և այնպես նյութական նշանակությամբ:

Պետք է նշել նաև այն, որ առանձին գեպերում հարաբերական  
դերանունները և շաղկապները հստակորեն չեն սահմանագծվում: Այս-  
պես, օրինակ՝ հաստատ կարող ենք ասել, որ «Այն մարդը, որը չի հար-  
գում իրեն, չի կարող հարգել նաև ուրիշներին» նախադասության մեջ  
ու բառը հարաբերական դերանուն է, իսկ «Զգացի, որ տխուր է» նա-  
խադասության մեջ՝ շաղկապ: Բայց ի՞նչ է նույն բառը «Այն մարդիկ,  
որ չեն հարգում իրենց, չեն կարող հարգել նաև ուրիշներին» նախադա-  
սության մեջ՝ շաղկապ, թե՞ հարաբերական դերանուն: Այստեղ ուր բա-  
ռը կարելի է համարել շաղկապ՝ նկատի ունենալով այն, որ թվով չի  
համաձայնել մարդիկ որոշյալին, բայց կարելի է համարել նաև հարա-  
բերական դերանուն՝ նկատի ունենալով այն, որ կարող է փոխարինվել  
մարդիկ որոշյալի հետ թվով համաձայնող ուրեմն հարաբերական դեր-  
անվամբ՝ «Այն մարդիկ, որոնք չեն հարգում իրենց...»: Այս մի հատիկ  
օրինակն էլ բավական է ցույց տալու, որ հարաբերական դերանունների  
և շաղկապների միջև անանցանելի պատմական դերանուններ չկան:

Շաղկապները հարաբերակցություններ են հանդես բերում նաև կա-  
պերի հետ: Դա մի կողմից արտահայտվում է շաղկապների ու կապերի  
դրսևորած որոշ հարաբերությունների նույնությամբ կամ համապատաս-  
խանությամբ, մյուս կողմից՝ նրանով, որ որոշ բառեր ըստ կիրառության  
հանդես են դալիս կապական և շաղկապական ֆունկցիաներով միա-  
ժամանակ: Ահա այսպիսի օրինակներ:

Միևնչև բնությունների վերջը չի կարող այցելել մեզ||Միևնչև քննու-  
թյունները չվերջանան, չի կարող այցելել մեզ:

Ինչպես առյուծ հարձակվեց||Հարձակվեց, ինչպես առյուծն է հար-  
ձակվում:

Նախքան նրա վերադարձը ամեն ինչ պետք է հարթված լինի||Նախ-  
քան նա կվերադառնա, պետք է ամեն ինչ հարթված լինի:

Փոխանակ ուրախանալու՝ տխրել ես||Փոխանակ ուրախանաս, տրխ-  
րել ես:

Չնայած ահավոր վտանգի սպառնալիքներին՝ կյանքն ընթանում էր

նախկին ձևով Ձևայած ահավոր վտանգ էր սպառնում, կյանքն ընթանում էր նախկին ձևով:

Առաջին նախադասություններում ընդգծված բառերը կապեր են, իսկ երկրորդ նախադասություններում՝ շողկապներ:

Շողկապները հարաբերակցություններ են հանդես բերում նաև որոշ մակրայնների և եղանակավորող բառերի հետ: Այսպես, էլ, ապա բառերը ըստ կիրառության մակրայններ և շողկապներ են հավասարապես, իսկ կարծես, կարծես թե, ասես, ասես թե, հենց, միայն բառերը՝ եղանակավորող բառեր և շողկապներ: Ստորև բերվում են համապատասխան օրինակներ, որտեղ առաջին նախադասություններում ընդգծված բառերը մակրայններ կամ եղանակավորող բառեր են, իսկ երկրորդ նախադասություններում՝ շողկապներ:

ա) էլ չեմ տեսնելու նրան. բ) նա էլ դավաճանեց մեր գործին:

ա) Հանգիստ դրեց գլխարկը, ապա վերցրեց ձեռնափայտը. բ) ճիճ մեծ եղբայրը մեզմ էր ու համեստ, ապա փոքրը կատաղի էր ու ամբարտապան:

ա) Կարծես հիվանդ է. բ) Այնպես է գունատվել, կարծես հիվանդ է:

ա) Հենց նա ասաց. բ) Հենց եկավ, ասաց:

ա) Միայն դու լսեցիր իմ խորհուրդները. բ) Ամեն ինչի համաձայն եմ, միայն լսիր իմ խորհուրդները:

Եվ վերջապես, խոսքի մեջ շողկապական դեր են կատարում նաև մի շարք բառեր և կապի ու խնդրի կապակցություններ, ինչպես՝ մեկը ... մյուսը ... երրորդը, սկզբում ... հետո ... ապա, նախ ... ապա, մասամբ ... մասամբ, մերթ ... մերթ, վերջապես, վերջիվերջո, ի դեպ, այս պատճառով, այդ պատճառով, այս նպատակով, այդ նպատակով, սրա համար, դրա համար և այլն:

Ստորև բերվում են այսպիսի բառերի շողկապական կիրառության մի քանի օրինակներ:

«Պետրոս Աթոնին սկզբում զարմացավ, ապա ընդունեց այդ օգնությունը» (Վերք.). «Ըկա, որ քեզ տեսնեմ՝ մեկ, որսի գնամ՝ երկու, անտառը ծախեմ՝ երեք» (Տու.). «Նա կանգնած էր ու նայում էր մերթ ներքև, խոնավ, մամռապատ գետնին, մերթ լուռ ալանջ դնող շանը, մերթ անտառի մերկ կատարների ծովին, մերթ երկնքին» (Տու.). «Ի դեպ, նա այս գործի մեջ ընդգրկեց դասալիքներին» (Վերք.). «Նախ հանգուցյալը հանձնարարում էր Սմբատին աշխատել Միքայելին ուղիղ ճանապարհի բերելու, հետո պատվիրում էր արթուն հսկողություն ունենալ Արշակի վրա...: Այնուհետև նա խնդրում էր ուղղել իր սխալը» (Շիրվ.). «Մեկը նավթահոր էր փորել տալիս, և երեկ խողավակը ծովել էր հորի մեջ, մյուսի գործակատարը գողություն էր արել, երրորդը վա-

ղը պիտի բանկից ազատեր իր մուրհակները, մի ուրիշն էլ մտածում էր...» (Շիրվ.):

Շողկապների կազմությունը

ՇՈՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆՈՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐՁ ՈՒ ԲԱՐՂ ՇՈՂԿԱՊՆԵՐ.— Շողկապներն ըստ կազմության բաժանվում են երկու խմբի՝ պարզ շողկապներ և բարդ շողկապներ:

Պարզ են կոչվում այն շողկապները, որոնք ժամանակակից լեզվի տեսակետից ընկալվում են որպես արմատական բառեր և բաղադրիչների վերածվել չեն կարող: Արդի հայերենի պարզ շողկապները մոտավորապես հետևյալներն են. այլ, ապա, բայց, եթե, և, ու, երբ, էլ, թե, ինչ, իսկ, կամ, միայն, մինչ, որ, ոչ ... ոչ, սակայն, ուստի, ուրեմն, քանի:

Դրանցից մի քանիսը ստուգաբանորեն բաղադրյալ են ու տարրալուծելի, ինչպես՝ մի+այն, ուր+եմն, քան+ի, բայց հենց դրանք էլ արդի լեզվում ընկալվում ու ըմբռնվում են որպես արմատական բառեր:

Չնայած պարզ կամ արմատական շողկապների սակավությանը, դրանք լեզվի կապակցական միջոցների մեջ առանձին դեր ու կշիռ ունեն իրենց գործածականության հաճախականությամբ, բաղադրյալ շողկապների մեջ ունեցած դերով և բազմիմաստությամբ: Այս հատկանիշները հատկապես բնորոշ են զարգացման երկար ուղի անցած և, որ, թե, էլ շողկապներին:

Բարդ շողկապները, ըստ բաղադրիչ անդամների սերտաճման ու միաձուլման տարրեր աստիճանների, բաժանվում են երկու խմբի՝ կցական բարդություններ և հարադրական բարդություններ: Իսկական բարդությունը շողկապների կազմության մեջ դեր չի խաղում:

Ինչպես գիտենք, կցական բարդություններն առաջանում են բառերի պարզ շարահյուսական կապակցություններից, որոնք հաճախակի միասին գործածելով՝ միաձուլվում են, ընկալվում որպես մեկ իմաստ արտահայտող մի բառ և գրվում են միասին: Արդի հայերենի կցական բարդությունները կազմվում են՝ այնինչ (այն+ինչ), այբարդություններ կազմվում շողկապներն են՝ այնինչ (այն+ինչ), այբարդություններ կազմվում շողկապներն են՝ պեկուզ (թե+կուզ), թեպետ (թե+սինեմ (այս+ինեմ)), թեև (թե+և), թեկուզ (թե+կուզ), թեպետ (թե+սինեմ (այս+ինեմ)), թեև (թե+և), թեկուզ (թե+կուզ), թեպետ (թե+սինեմ (այս+ինեմ)), մինչդեռ (մինչ+դեռ), մինչև (մինչ+և), նաև (նա+և), նույնիսկ պետ, մինչդեռ (մինչ+դեռ), մինչև (մինչ+և), նաև (նա+և), նույնիսկ պետ (նույն+իսկ), այլև (այլ+և), որովհետև (որով+հետև), որպեսզի (որպես+զի), քանզի (քան+զի), վասնզի (վասն+զի), թեպետև (թեպետ+և), թեկուզև (թեկուզ+և): Վերջին երկու բառերի բաղադրիչները գրվում են և առանձին՝ թեպետ և, թեկուզ և:

Այս բաղադրությունների մեջ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ դրանց մի մասի երկրորդ բաղադրիչները շողկապներ են: Ավելի մեծ թիվ են կազմում հարադրական բարդություններ կազմված

Չմտ. Ս. Աբրահամյան, Նույնը. Գ. Գարեգինյան. Շողկապները ժամանակակից հայերենում: 358

նող շաղկապները: Դրանք այն շաղկապներն են, որոնց բաղադրիչները թեև չեն միաձուլված և գրվում են առանձին, բայց արտահայտում են մեկ ընդհանուր կապակցական, շաղկապական իմաստ: Հասկանալի է, որ լեզվի շաղկապական միջոցների հարստացումը հատկապես բեղմնավոր է ընթանում հարադրական բարդությունների ուղիով, և լեզվի արդի փուլում էլ այսպիսի նորանոր շաղկապներ են առաջանում: Նշելի է նաև այն, որ հարադրական շաղկապների երկրորդ բաղադրիչը սովորաբար շաղկապ է լինում:

Հարադրական շաղկապների կազմության մեջ հատկապես մասնակցում են որ, և, էլ, թե շաղկապները: Բացի սրանցից, շաղկապի դերով են հանդես գալիս նաև երկու կամ երեք բառի սովորական հարադրական այլ կապակցություններ:

Հարադրական շաղկապներ կազմելու տեսակետից ամենագործունը որ շաղկապն է, որով բաղադրվում են մի շարք հարադրություններ, օրինակ՝ այնպես որ, երբ որ, թե որ, հենց որ, մանավանդ որ, նամանավանդ որ, ևայլն: Որ շաղկապով բաղադրված այս բոլոր հարադրությունները, որ շաղկապի բնույթին համապատասխան, հանդես են գալիս նախադասությունների ստորադասական կապակցությունների արտահայտման ֆունկցիայով: Նշենք նաև, որ այս շաղկապը որպես թարմատար ընդհանրապես կարող է հարադրվել հարաբերական դերանուններին, օրինակ՝ ով որ, ինչ որ, երբ որ, ուր ուր, որտեղ որ, ինչպես որ և այլն:

Հարադրական շաղկապներ են կազմվում նաև և շաղկապով, որ հարադրվում է համադասականներին, օրինակ՝ բայց և, թեպետ և, թեկուզ և, ինչպես և, նայնպես և, նմանապես և, հետևաբար և, հետևապես և, ուստի և, ուրեմն և:

Որոշ հարադրականներ կազմվում են էլ շաղկապի հարադրությամբ, ինչպես՝ ինչքան էլ, որքան էլ, այն էլ, կամ էլ: Նշենք, որ էլ շաղկապը կարող է հարադրվել հարաբերական դերանուններին ընդհանրապես, օրինակ՝ ինչ էլ, ով էլ, ուր էլ, որտեղ էլ, ինչպես էլ և այլն, որոնք ստորադաս նախադասությունները կապելով գլխավորներին, հարստացնում են արդի հայերենի շաղկապական բառերի համակարգը:

Կան նաև թե շաղկապով կազմված հարադրություններ, ինչպես՝ ապա թե, իբր թե, իբրև թե, միայն թե, քան թե, կարծես թե, ասես թե, կամ թե:

Բացի նշվածներից, ժամանակակից հայերենում կան նաև այլ բրնույթի ու կազմության հարադրական շաղկապներ, օրինակ՝ թե չէ, ապա թե ոչ, էթե ոչ, կամ թե չէ, ոչ թե, և ոչ թե, քանի դեռ, այն է, ըստ որում, ընդ որում և այլն: Իհարկե, այսպիսի բաղադրությունները, հաճախ պահպանելով իրենց բաղադրիչների իմաստային երանգները, լեզվի համակարգում խաղացած իրենց դերով չեն կարող հավասարվել ար-

մատական շաղկապներին, որոնք անցած լինելով պատմական զարգացման երկար ճանապարհ, արտահայտում են «մաքուր» կապակցական-բերականական հարաբերություններ, իսկ շատ հարադրական շաղկապների մեջ այդ հարաբերություններն ուղեկցվում են զանազան իմաստներով, որոնք արդյունք են բարդության բաղադրիչների՝ համապատասխան խոսքի մասերի հետ ունեցած կապերի ու աղերսների:

Հարադրական շաղկապներին նվիրված այս հատվածը վերջացնելուց առաջ նշենք, որ հարադրություններ չեն կարող համարվել շաղկապների կից գործածության բոլոր դեպքերը<sup>6</sup>:

Վերջինքն Շիրվանզադեի հետևյալ նախադասությունը. «Պարզ էր, որ եթե բոլոր ներկա եղողները ըստբարբար և տեղնուտեղը մահանան, դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվեն»: Այստեղ միասին, կից գործածված են որ և եթե շաղկապները, բայց դրանք մի հարադրություն չեն կազմում, մի բառի արժեք չունեն, քանի որ նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է մյուսից բոլորովին տարբեր մի առանձին հարաբերություն՝ հանդես գալով տարբեր երկրորդական նախադասությունների կապակցման դերով: Այսպես, որ շաղկապը բերված օրինակում արտահայտում է մեկնական իմաստ՝ «դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվեն» երկրորդական նախադասությունը կապելով «պարզ էր» գլխավոր նախադասության հետ, իսկ եթե շաղկապն արտահայտում է պայմանի իմաստ՝ «բոլոր ներկա եղողները ըստբարբար ու տեղնուտեղը մահանան» երկրորդական նախադասությունը կապելով «դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվեն» երկրորդական նախադասության հետ: Ըստ այդմ, նախադասությունների այլ շարադասությամբ բերված օրինակը կարտահայտվեր հետևյալ ձևով. «Պարզ էր, որ դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվեն, եթե բոլոր ներկա եղողները ըստբարբար և տեղնուտեղը մահանան»: Որ և եթե շաղկապների կից գործածությունը նույն բնույթն ունի նաև Որ հետևյալ նախադասության մեջ. «Գիտեին, որ եթե Մարկոս աղան մի օղակ ունի, այդ այն է, որով անխնա սեղմում է իր պարտապանների կոկորդը» (Շիրվ.):

Այս ձևով, առանց հարադրություն կազմելու, միասին, կից կարող են գործածվել նաև այլ շաղկապներ՝ առանձին-առանձին պահպանելով նրանց բառային անկախությունն ու ինքնուրույնությունը և հանդես գալով որպես շարահյուսական-կապակցական տարբեր հարաբերություններով որպես շարահյուսական-կապակցական տարբեր թեքվում ընկած վերջրի արտահայտիչներ, ինչպես՝ «Եվ երբ ցած էր թեքվում ընկած վերջրի նկու, հացի գնդիկները կարկտի պես էին տեղում նրա պարանոցի վրա» (Շիրվ.). «Նրանք համբուրում էին եկեղեցու դուռը և որովհետև դեռ վաղ էր, ցրվում էին բակում» (Նար-Դոս). «Արևից քարերը տաքանում են, էր, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է,

<sup>6</sup> Հմմտ. Ս. Արթուրյան, Չթեքվող խոսքի մասերը, էջ 398—399:

գլուխը հենում քարին» (Բակ.)։ «Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հավվում։ Են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը» (Բակ.)։

#### Մենադիր, կրկնադիր և զուգադիր շաղկապներ

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԵՎ ՄԵՆԱԳԻՐ, ԿՐԿՆԱԳԻՐ ՈՒ ԶՈՒԳԱԳԻՐ ՇԱՂԿԱՊՆԵՐ.— Զուտ գործածության, կիրառության ձևի տեսակետից պետք է տարբերել շաղկապների երեք տեսակ՝ մենադիր, կրկնադիր և զուգադիր շաղկապներ։

Մենադիր են կոչվում միայնակ, առանձին գործածվող շաղկապները, օրինակ՝ և— Սուրենը և Արամը, ու— ծաղիկ ու ծառ, բայց— գնաց, բայց չհասավ, իսկ— Գու գեղեցիկ ես, իսկ նա ավելի գեղեցիկ է, որ— Գնացի, որ ասեմ, թե— Ասաց թե կգամ, եթե— Եթե գա, լավ կլինի և այլն։

Կրկնադիր են կոչվում կրկնվող շաղկապները, օրինակ՝ և ... և— Ծ՛վ Սուրենը, և՛ Արամը, թե ... թե— Թե՛ Սուրենը, թե՛ Արամը, ոչ ... ոչ— Ո՛չ Սուրենը, ո՛չ Արամը, ... էլ ... էլ— Սուրենն էլ, Արամն էլ, կամ ... կամ— Կա՛մ Սուրենը, կա՛մ Արամը։

Զուգադիր են կոչվում սովորաբար զույգերով, միասին կիրառվող շաղկապները։ Այս դեպքում շարահյուսական միավորների կապակցությունը շատ կուռ է լինում, որովհետև կապակցության առաջին եզրում հանդես եկող շաղկապին որպես կանոն համապատասխանում է որոշակի շաղկապ՝ կապակցության երկրորդ եզրում, ինչպես՝ ոչ միայն ... այլև— Ոչ միայն Սուրենը, այլև Արամը, ոչ թե ... այլ— Ոչ թե քաղաքում, այլ գյուղում, թեև ... բայց— Թեև շատ խնդրեցինք, բայց ապարդյուն, չնայած ... բայց— Չնայած բարեկամներ ենք, բայց համարյա չենք հանդիպում, որովհետև ... ուստի— Որովհետև դու թո մեղքը խոստովանեցիր, ուստի թեզ ներեցին, քանի որ ... ուստի||նետևաբար||նետևավապես— Քանի որ նա քաղաքում չի եղել, ուստի||նետևաբար||նետևապես ժողովին չէր կարող մասնակցել և այլն։

#### Համադասական ու ստորադասական շաղկապներ

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՇԱՐԱՅՈՒՄԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՄԱԳԱՍԱԿԱՆ ՈՒ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ.— Ըստ իրենցով կապակցվող լեզվական միավորների տրամաբանական-շարահյուսական հարաբերությունների բնույթի՝ շաղկապները բաժանվում են երկու խմբի՝ համադասական շաղկապներ և ստորադասական շաղկապներ։

Ժամանակակից հայերենի համադասական շաղկապներն են՝ և, ու,

իսկ, բայց, սակայն, կամ, էլ, նաև, այլև, նույնիսկ, անգամ, մինչև իսկ, մանավանդ, այսինքն, ուրեմն, հետևաբար, հետևապես, բայց և, բայց և այնպես, կամ թե, և կամ, և ... և, թե ... թե, ոչ ... ոչ և այլն։

Ստորադասական շաղկապներն են՝ որ, թե, երբ, եթե, որպեսզի, որովհետև, մինչև, մինչ, մինչդեռ, թեև, թեկուզ, թեպետ, թեպետև, մինչև որ, հենց որ, քանի որ, թե որ, քանի դեռ, չնայած որ և այլն։

Ավանդական քերականության սահմանամբ՝ համադասական շաղկապներով կապակցվող միավորները տրամաբանական ու շարահյուսական տեսակետից համազոր են և անկախ ու ինքնուրույն, իսկ ստորադասական շաղկապներով կապակցվող նախադասությունները տրամաբանական ու շարահյուսական տեսակետից հավասարազոր չեն. դրանցից մեկը կախված է մյուսից, ստորադասված է մյուսին, այսինքն՝ ստորադասական շաղկապներով արտահայտվում են նախադասությունների կախվածության, ստորադասության հարաբերություններ։

Վերջենք հետևյալ նախադասությունները.

1. Քամին դադարեց, և սկսվեց տեղատարափ անձրևը։

2. Աշոտը դասերն է պատրաստում, իսկ Հասմիկը տունն է զարգարում։

3. Ուսուցիչն անմիջաբար հասկացավ, որ իր սիրելի աշակերտն իրեն վատ է զգում։

4. Գործը հաջողությամբ կավարտենք, եթե ստանանք համապատասխան օգնություն։

Առաջին և երկրորդ օրինակների բարդ նախադասությունների մեջ մտնող մասերը կապակցված են և, իսկ համադասական, իսկ երրորդ և չորրորդ օրինակների մասերը՝ ու և եթե ստորադասական շաղկապներով, և, ըստ այդմ, դրանք իրարից լիովին տարբեր տրամաբանական-շարահյուսական հարաբերություններ են արտահայտում։ Առաջին և երկրորդ նախադասությունների բաղադրիչները, հանդես գալով որպես մի ամբողջություն կազմող բարդ նախադասության մասեր, տրամաբանական տեսակետից հավասար դեր ու արժեք ունեն բարդ նախադասության մտքի արտահայտման մեջ, միևնույն ժամանակ շարահյուսորեն համեմատաբար անկախ են ու ինքնուրույն և առանձին գործածություն կա կարող են ունենալ։ Համեմայն դեպս, հաստատ կարող ենք ասել, որ «Սկսվեց տեղատարափ անձրևը» և «Հասմիկը տունն է զարգարում» նախադասությունները, միավորվելով կամ հակադրվելով «Քամին դադարեց» և «Աշոտը դասերն է պատրաստում» նախադասություններին, ո՛չ տրամաբանորեն, ո՛չ շարահյուսորեն ստորադասված չեն, կախված չեն դրանցից, այլ համազոր են դրանց։

Այս նույնը չի կարելի ասել «Իր սիրելի աշակերտն իրեն վատ է զգում» և «Ստանանք համապատասխան օգնություն» նախադասությունների մասին, որոնք լրացնում են «Ուսուցիչն անմիջաբար հասկացավ»

և «Գործը հաջողությամբ կավարտենք» նախադասություններին՝ առաջինը հանդես գալով որպես հասկանալի բայի սեռի և իսկ երկրորդը՝ որպես ավարտելի բայի իմաստի խնդիր: Հետևաբար երրորդ և չորրորդ նախադասությունների երկրորդ բաղադրիչները գտնվում են կախյալ, ստորադասական հարաբերության մեջ:

Մենք հատուկ նպատակով բերեցինք բարդ նախադասությունների երկու հիմնական տիպերի այնպիսի օրինակներ, որոնցում համադասությունն ու ստորադասությունը հակադրվում են առավել ցայտունությամբ և իրար հետ շփման եզրեր համարյա չունեն:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ բոլոր դեպքերում չէ, որ համադասությունն ու ստորադասությունը այսպես հարակործեն սահմանազատվում են ու հակադրվում: Վերևում նշվեց, որ քերականությունների մեջ սահմանվում է, թե համադասական կապակցության բաղադրիչները իրար միտք չեն լրացնում և կարող են անկախ ու ինքնուրույն կիրառություն ևս ունենալ, իսկ ստորադասական կապակցության բաղադրիչներից մեկը լրացնում է մյուսին և անկախ ու ինքնուրույն կիրառվել չի կարող: Բայց լեզվաբանական գրականության մեջ ճիշտ կերպով նշվում է, որ հենց համադասական կապակցության դեպքում ևս բաղադրիչների բացարձակ անկախության ու ինքնուրույնության մասին խոսք լինել չի կարող, քանի որ միավորված լինելով մի բարդ նախադասության մեջ՝ նրանք իմաստային և արտասանական ու հնչերանգային մի ամբողջություն են կազմում, և հետևաբար բարդ նախադասությունը երկու պարզ նախադասությունների սոսկական գումար չէ միայն:

Այն էլ պետք է ասել, որ համադաս նախադասություններից հատկապես երկրորդը, կառուցվածքային տեսակետից կախված լինելով առաջինից, հաճախ հանդես է գալիս ոչ լիարժեք քերականական ձևավորմամբ, առաջին նախադասության մեջ արտահայտված այս կամ այն անդամի գեղջմամբ և, այսպիսով, առանձին ու անկախ գործածություն ունենալ չի կարող<sup>7</sup>, օրինակ՝ «Եղբայրս ապրում է քաղաքում, իսկ քույրըս՝ գյուղում»։ «Դու փողի ես ձգտում, իսկ նա՝ փառքի»։ «Պարտքով փող էր տալիս, բայց միայն բարեկամներին»։ «Արտասահմանում եղել է, սակայն պատերազմի տարիներին» և այլն:

Մյուս կողմից՝ զուգահեռ համադասական շղկապներով կապակցված բարդ նախադասությունների ոչ միայն երկրորդ, այլև առաջին բաղադրիչը, որպես կանոն, անկախ ու ինքնուրույն գործածություն ունենալ չի կարող: Այսպիսի դեպքերում մենք գործ ունենք բարդ նախադասության մեջ մտնող մասերի փոխկապակցության ու փոխադասմանավորվածության հետ. այսինքն՝ ինչքանով որ երկրորդ բաղադրիչը պայմանավորված է առաջինով, այնքանով էլ առաջին բաղադրիչը պայմանա-

վորված է երկրորդով, օրինակ՝ «Նահանջեցի ոչ թե երկուդից, այլ խղճի խաթից» (Անան.). «Նա պիտի լիներ համեստ ոչ միայն վարմունքով, այլև բոլոր զգացմունքներով» (Շիրվ.):

Այնուհետև, մի կողմ թողած բարդ նախադասության բաղադրիչների համեմատական անկախության կամ կախվածության հարցը, նշենք, որ, ինչպես ճիշտ կերպով արձանագրված է քերականական գրականության մեջ, կան բարդ նախադասության այնպիսի կառուցվածքներ, որոնք տատանվում են համադասության և ստորադասության միջև, կամ համադասական շղկապներով երբեմն արտահայտվում են ստորադասությանը հատուկ իմաստներ, օրինակ՝ պատճառահետևանքային, զիջական, իսկ ստորադասական շղկապներով՝ համադասությանը հատուկ իմաստներ, օրինակ՝ շակագրական, կամ խիստ ասած՝ համադասությունը և ստորադասությունը հասակորեն չեն սահմանադատվում<sup>8</sup>:

Այսպես, «Որովհետև դու քո մեղքը խոստովանեցիր, ուստի և քեզ ներեցին» նախադասությունը պետք է համարվի պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող բարդ ստորադասական նախադասություն, իսկ նույն միտքն արտահայտող «Դու քո մեղքը խոստովանեցիր, ուստի և քեզ ներեցին» նախադասությունը՝ կամ համադասական, կամ ստորադասական նախադասություն, որի կախյալ նախադասությունը, սակայն, վերջինն է: Կամ՝ եթե... ապա զուգահեռ շղկապներով կապակցվում են պայմանահետևանքային նախադասություններ, ինչպես՝ «Եթե արքան ձեր մորթիները խոտով չլվանի, ապա ուրախ ապրեցեք Անհուշ բերդում» (Դեմ.). «Եթե տակավին սիրտ ու հոգի ունեք, ապա պետք է տուրվեր անմարդկային վրիժառության ծարավից» (Վերք.): Բայց եթե... ապա զուգահեռ շղկապներով արտահայտվում է նաև հակադրություն, որն արդեն նախադասությունների համադասական հարաբերություն է, ինչպես՝ «Եթե մեծ եղբայրը համեստ էր ու խնայող, ապա փոքրը մեծամիտ էր ու շռայլ»։ «Եթե քույրը ամբողջ օրը տանը գործերով էր զբաղված, ապա եղբայրը թրև էր գալիս փողոցներում»:

Մեր քերականագիտության մեջ ճիշտ կերպով նշված է նաև, որ իրենց իմաստային փոխհարաբերություններով համադասությանը շատ մոտ են կանգնած նաև զիջական երկրորդական նախադասությունները<sup>9</sup>, որոնք զիջական շղկապների գեղջմամբ, առանց իմաստային որոշակի փոփոխություն կրելու, վերածվում են համադասական նախադասությունների, ինչպես՝ «Թեպետ անձամբ չի տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է նրանց մասին»||«Անձամբ չի տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է նրանց մասին»։ «Չնայած երկար տարիներ ամուսնացած էին, բայց նման դեպքերում իրարից դեռևս քաշ-

<sup>8</sup> Տե՛ս ակո, էջ 89:

<sup>9</sup> Տե՛ս Ն. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961, էջ 16:

վում էին»||«Ծրկար տարիներ ամուսնացած էին, բայց նման դեպքերում իրարից դեռևս բաշխում էին» և այլն:

Ահա թե ինչու ուսաց լեզվի առանձին տեսարաններ գուցե իրավացիորեն որոշ թերահավատություններ են մոտենում բարդ նախադասության կապակցական բոլոր տիպերի ստորաբաժանմանը միայն համադասական ու ստորադասական տեսակների, գտնելով, որ այսպիսի մոտեցումը տառապում է որոշ արհեստականություններ, որովհետև նախադասությունների կապակցության այս երկու ծայրաթևերի միջև կան միջանկյալ տիպեր, որոնք ո՛չ համադասություն են, ո՛չ ստորադասություն, կամ նույնքանով ստորադասություն են, որքանով և համադասություն: Վ. Վ. Վինոգրադովը գրում է. «Նախադասությունների համադասության և ստորադասության փոխարեն ավելի զգույշ կլինեք խոսել նախադասությունների կապակցման տարբեր տեսակների և նրանց կախվածության տարբեր աստիճանների մասին՝ արտահայտված շղկապներով և այլ քերականական միջոցներով՝ եղանակային ձևերով, բառերի դասավորությամբ, դերանվանական բառերով, հնչերանգով և այլն»<sup>10</sup>:

Ռուս քերականների հետևողությունները նույնանման մտքեր են արտահայտվել նաև հայ քերականությունների մեջ:

#### Շղկապների իմաստային դասակարգումը

ՇՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆՈՒՄԸ ՐՍՏ ԻՄԱՍՏԻ.— Շղկապների իմաստային կամ իմաստաբանական դասակարգումը հիմնված է շղկապների արտահայտած կապակցական հարաբերությունների վրա: Արդեն նշված է, որ շղկապներն ունեն իրենց բառիմաստները: Եթե հարցին մոտենանք այն տեսանկյունից, որ յուրաքանչյուր բառ, և հետևաբար յուրաքանչյուր շղկապ, ունի միայն իրեն հատուկ և մյուսներից տարբեր իմաստը կամ, համեմայն դեպս, իմաստային նրբերանգը, ապա պարզ կդառնա, որ յուրաքանչյուր շղկապ արտահայտում է միայն իրեն հատուկ կապակցական հարաբերություն, մի հանգամանք, որ կարծես թե ավելորդ է դարձնում շղկապների իմաստային դասակարգման բուն գաղափարն իսկ<sup>11</sup>: Սակայն, համեմայն դեպս, խիստ ասած՝ յուրաքանչյուր շղկապ արտահայտելով միայն իրեն հատուկ մի որոշ կապակցական հարաբերություն, միևնույն ժամանակ իր արտահայտած այդ իմաստով միայնակ չի մնում՝ միավորվելով մոտիկ նշանակություն արտահայտող շղկապների մեծ կամ փոքր խմբի հետ: Հենց դա էլ հնարավորություն է տալիս կատարելու շղկապների իմաստաբանական դասակարգում, այսինքն ելնելով որոշ շղկապների իմաստային ընդհանրություններից՝ նրանք միավորելու առանձին խմբերի մեջ և այս-

պիսով գաղափար կազմելու շղկապների կապակցական ընդհանուր հարաբերությունների մասին:

Ըստ այդմ, կարելի է ընդունել շղկապների իմաստային հետևյալ խմբերը:

ՄԻԱՎՈՐԻԶ-ՀԱՎԵԼԱԿԱՆ՝ և, ու, էլ, ևս, նաև, այլև, թե ... թե, ոչ ... ոչ, ոչ միայն ... այլև, ինչպես ... այնպես էլ և այլն, որոնք ցույց են տալիս, որ կապակցվող շարահյուսական միավորները հավասարաթեք են և ավելանում են իրար վրա սոսկ թվարկվելով: Առանձին դեպքերում արտահայտվում է երկրորդի առավել լինելն առաջինից:

Օրինակներ. «Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը» (Բակ.). «Հայր ու որդի նստած էին բազազ Արտեմի խոհանոցում» (Թում.). «Դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և գաշտի խողաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծություններ» (Րաֆֆ.). «Մահվան հետ գերեզման էլ է բերում թշնամին» (Խանգ.). «Այդ տան պատերը ևս սևագույն քարից էին» (Խանգ.). «Նա՛ բնությունը, նաև գիշերը ստեղծարար ճիգերի մեջ էր» (Դեմ.). «Ուտի ճիպոտը շառաչում էր թե՛ մեղավորների, թե՛ անմեղների գլխին» (Վերֆ.). «Այս հավատից շեն կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր» (Դեմ.). «Նա գրգռված էր ոչ միայն Սուլյանի, այլև բոլոր ներկա եղողների դեմ» (Շիրվ.) և այլն:

ՆԵՐՀԱԿԱԿԱՆ՝ իսկ, բայց, սակայն, մինչդեռ, այնինչ, ոչ թե ... այլ, ոչ թե, և ոչ թե, թե չէ, ապա թե ոչ, այլապես, բայց և այնպես, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ, միայն, միայն թե, որոնք ցույց են տալիս, որ կապակցվող լեզվական միավորներն իմաստով իրար համածայն չեն, այլ հակառակ են ու հակադիր:

Օրինակներ. «Արշակ թագավորը հայի հողով անցնելիս խոխտանում էր, իսկ Պարսկաստանի հողի վրա խեղճանում» (Դեմ.). «Անիծում էր, բայց ոսկի սիրտ ուներ» (Անան.). «Պաշտպանեց, սակայն ապարդյուն» (Խանգ.). «Մինչդեռ առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշեդյուն» (Խանգ.). «Միևնույն առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշեդյուն» (Խանգ.). «Գարբիեի ներսում իշխում էր ոչ թե բերկրանքը, այլ տանջվեցիկն ու շարշարվեցիկն, այնինչ նրանք են վայելում աշխատանքի պտուղները».: «Գարբիեի ներսում իշխում էր ոչ թե բերկրանքը, այլ երազախառն տվայտանքը» (Վերֆ.). «Դու պետք է ներողություն խնդրեիր, ոչ թե հոխորտայիր».: «Ամեն ինչ անեիր նրա սիրտը գրավելու համար և ոչ թե աղմուկ բարձրացնեիր».: «Ծս բեզ էի փորձում, թե չէ այս խարդախ կտակով ևս ոչինչ չէի կարող անել» (Շիրվ.). «Պետք էր այս փախչել նրանից, եթե ոչ մի թեթև տաշեղի նման կտաններ թե՛ ձիուն, թե՛ ձիավորին» (Րաֆֆ.). «Արա այս բանը, ապա թե ոչ վատ կլինի».: «Պետք է շահագրգռել նրան, այլապես բաններս բուրդ է».: «Սիրտս գայլերին թող բաժին դառնա, Միայն թե մայրս մահս լիմանա» և այլն:

ՏՐՈՂԱԿԱՆ՝ կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ, թե (հարցական նա-

<sup>10</sup> В. В. Виноградов, Русский язык, М.-Л., 1947, стр. 708.

<sup>11</sup> Հմմտ. Պ. Ծարախանյան, Գրարարի շղկապները:

խաղաասութիւններում), որոնք կապակցում են այնպիսի միավորներ, որոնց միջև երկրորդը կա կամ ընտրութիւն է կատարվում. եթե ընտրուվում է մեկը, ապա, որպէս կանոն, մերժվում է մյուսը:

Օրինակներ. «Ախպերն ամեն տուն գալով նրա համար մի բան է բերում՝ կամ ծաղիկ, կամ միրգ, կամ հագուստ և կամ թե չէ մի բաղադրանք է ասում» (Թում.). «Վճռել էր կամ մահապատժի արժանանալ, կամ րնկնել ռազմաճակատ» (Խանգ.). «Պապս էլ նրանց պիտի հարցնէր, թե վարը պրծան, կամ թե այսինչ սարի խոտն ինչպէս է» (Բակ.). «Չյան վրա աղվեսի», թե շան թաթերի հետք նկատեց» (Խանգ.). «Միտս չի՞ սպանեց, թե վիրավորեց» (Անան.) և այլն:

ԲԱՅԵԱՅՍՄԱՆ՝ այսինքն, այն է, որոնք կապակցում են այնպիսի միավորներ, որոնցից երկրորդը առաջինի բացահայտումն է այլ բանով կամ այլ կապակցութեամբ կրկնելու միջոցով, օրինակ՝ «Սովորական ժամին, այսինքն՝ առավոտյան ժամը ութին զարթնեց». «Գլխավոր մըթերքները, այսինքն հացը, միտք, շաքարը առատ են». «Զգուշացիր քո ամենամեծ թշնամուց, այն է՝ քո կրքերից»:

ՄԵԿԵԱԿԱՆ՝ որ, թե. որոնք ցույց են տալիս, որ իրենցով կապակցվող լեզվական միավորը նախորդի լրացում-մեկնությունն ու բացատրությունն է, ինչպէս՝ «Պարզ էր, որ աներոջ մահը մագի շափ չէր խլըրտում նրա ազգակցական զգացումների նիրհը» (Շիրվ.). «Հայրը հասկացավ, որ ձիավորները նստել են իր խորի վրա» (Բակ.). «Ակնարկեց, թե դեպքի նկարագրությունն արդեն պատրաստ է լրագրի համար» (Շիրվ.). «Նա պատեց, թե հլուրի ծոցում կար մի փայլուն իր» (Բակ.):

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ՝ որպեսզի, որ. որոնք նպատակի հարաբերություն արտահայտող ստորագրած նախադասությունները կապակցում են գերազաս նախադասություններին, ինչպէս՝ «Պետք է անզգար շարժել, որպեսզի շքրտահարվի, որպեսզի ապրի» (Խանգ.). «Միմեծը Սարու արդալի հետ արդեն իջնում էր ձորակը, որպեսզի միանա ուրիշ ձիավորներին» (Բակ.). «Ես էլ բերել եմ, որ բուն սովորի» (Թում.). «Մայր ձրկները իրենց լորձունքներով ձկնկիթն ամբարցրել են քարերին, որ հոսանքը նրանց շտանի» (Անան.):

ՊԱՅՄԱՆԻ՝ եթե, թե, թե որ, միայն, միայն թե. եթե միայն և այլն, որոնք պայմանի երկրորդական նախադասությունները կապում են գերազասներին, օրինակ՝ «Նրե արբան ատյան կազմի, վերջը պիտի բացվի այս հանգամանքը» (Դեմ.). «Մենք ոչինչ չենք շահի, եթե դրանց կտորենք, չենք էլ շահի. եթե պահենք իբրև պատանդ» (Վերք.). «Քն աջողություն ունենա՞ իմացրու, որ մենք էլ ուրախանանք, թե պակասութիւն ունենա՞ իմացրու, որ հարեհաս լինենք» (Թում.). «Գործը համարիք վերջացած. եթե միայն համաձայն ես իմ պայմաններին»:

ՊԱՏՈՒԻ ԵՎ ՀԻՄՈՒՆՔԻ՝ որովհետև, որ, քանի որ, չէ՞ որ, մանավանդ որ, նամանավանդ որ, որոնք պատճառի և հիմունքի երկրորդա-

կան նախադասությունները կապում են գլխավորներին, օրինակ՝ «Ծղբոր խոսքերը նրան թվացին ծանր ու դաժան, որովհետև զգաց նրանց արդարացիությունը» (Շիրվ.). «Ժամանակը ծանր էր անցնում, որովհետև քաղցած էինք» (Անան.). «Տանտերը գովեց Համբոյին, որ շարժվում էր որդուն մարդ շինի» (Թում.). «Մեզ մնում է զիջանել փիլիսոփայության, քանի որ մեր ընկերոջ զգացումները լուր էն» (Շիրվ.). «Նա մեզ անպայմանորեն կօգնի. չէ՞ որ նա մեր բարեկամն է». «Այս հարցը հաջողությամբ կլուծենք, մանավանդ որ խանգարիչ հանգամանքներ չկան»:

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ՝ երբ, երբ որ, մինչև, մինչև որ, մինչ, հենց, հենց որ. քանի, քանի դեռ, որ, թե չէ, որոնք ժամանակի իմաստ ունեցող երկրորդական նախադասությունները կապում են գլխավորներին:

Օրինակներ. «Երբ թաղման հանդեսը վերջացավ, արդեն երեք ժամն էր» (Շիրվ.). «Երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի մայրամուտ, Մինաձորում սովերները թանձրանում են» (Բակ.). «Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախար հափշտակես» (Թում.). «Երգն անդադար կրկնվեց, մինչև կանաչավուն երկնքում հալվեց վերջին աստղը» (Վերք.). «Բաց չէր թողնում, մինչև որ մարդը դուրս չէր գալիս համբերությունից» (Թում.). «Մինչ նա ծանր ու բարակ բարձրանում էր, աչքերը մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ պտտելով գնում էին հարուստ տան մուտքը» (Շիրվ.). «Հենց մոտենում ենք ձագին, նայում է մեզ վայրենի աչքերով» (Անան.). «Եվ դարունն էր բացվում, և մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր զվարթ ճիշով հայտնվում էր մեր գլուխում ու մեր կտուրի տակ» (Թում.). «Քանի մարդը կենդանի էր, բամբասում էիք, զրպարտում, հացը գլխին հարամ անում» (Շիրվ.). «Քանի լուս է, հնձի» (Թում.). «Քանի դեռ ցուրտ էր, տնից դուրս չէր գալիս». «Գլուղացիք այս ու տեսան, վագեցին գլուղամեջ» (Թում.). «Գարունքը վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, կզը չի ունենում, թե վարի» (Թում.). «Եկավ թե չէ, սկսեց կռիվն ու գոռոզոցը»:

ՀՆՏԵՎԱՆՔԻ՝ հետևաբար, հետևապես, ուստի, ուրեմն, որոնք արտահայտում են եզրակացություն, որի համար իբրև հիմունք ծառայում է նախորդ նախադասությամբ արտահայտված միտքը, ինչպէս՝ «Բոլորս իրար հետ կապված ենք արյամբ, հետևաբար մեզ համար պարտադիր են այստեղ սահմանված օրենքները» (Վերք.). «Նա այժմ իրեն չի պատկանում, հետևապես չի կարող ծառայել չլոր անձին» (Մուր.). «Ծղանակը կանում, հետևապես չի կարող ծառայել չլոր անձին» (Մուր.). «Հանցավոր չէ, ուրեմն կարվատ էր, ուստի փողոցներն ամայի էին». «Հանցավոր չէ, ուրեմն կարողացնեն»: Դրանք ավելի հաճախ գործածվում են և շարկապի հետ միասին՝ հետևաբար և, հետևապես և, ուստի և, ուրեմն և:

ԶԻԶԱԿԱՆ՝ թեև, քեկուզ, քեկուզ և, քեպետ, քեպետ և, չնայած, չնա-



յաճ որ, որոնք ցույց են տալիս հակառակ հիմունք, այսինքն այնպիսի հիմունք, որը հակառակ կամ անհարիր է հետևությունը:

Օրինակներ. «Քեև նահապետական կին էր, բայց կյանքի ձմռանը շատ էր լսել ժամանակակից կանանց դավաճանությունների մասին» (Շիրվ.). «Քեպետ անձամբ չի տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է նրանց մասին» (Մուր.). «Մի կամ երկու մարդուց ոճմակը չի վախենալ, քեկուզ հրացան ունենան» (Քում.). «Քեկուզ և արար աշխարհ գա վրան, Կերթա դեմ ու դեմ, տուր չի տալ իրան» (Քում.). «Մենք էլ էինք տխրում, շնայած մեզնից ոչ ոք չէր տեսել քեուի եզորին» (Բակ.). «Չնայած որ բացվում էր լույսը, բայց ամբողջից դեռ չէր լսվում ոչ մի շշուկ» (Գեմ.):

Չեզի եվ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ՝ ինչպես, ինչպես որ, ժողովրդական՝ ոնց, ոնց որ, ասես, ասես թե, կարծես, կարծես թե, օրինակ՝ «Մոնչաց, ինչպես որ՝ ոնց որ առյուծն է մոնչում». «Այնպես է խոսում մեզ հետ, ասես՝ կարծես մեր իշխանավորը լինի»:

Ինչպես բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որոշ շաղկապներ բազմիմաստ են, այսինքն արտահայտում են տարբեր հարաբերություններ և ըստ այդմ, մտնում են մի քանի իմաստաբանական խմբերի մեջ: Այսպես, թե շաղկապն արտահայտում է հավելման, տրոհական, մեկնական, պայմանի իմաստներ, ինչպես՝ «Հավաքվել էին տղա թե աղջիկ», «Մուրե՞նը, թե՞ Արամը», «Ասաց, թե կգամ», «Քե գաս, կանեմ»: Որ շաղկապն արտահայտում է մեկնական, նպատակային, պայմանի, պատճառի և այլ իմաստներ, ինչպես՝ «Ձգացի, որ հիվանդ է», «Գնաց, որ տեսնի նրան», «Որ տեսա, կասեմ», «Որ շատ ես հետաքրքրվում, կպատմեմ» և այլն: Ըստ այդմ, թե շաղկապը ներկայացվում է և՛ հավելման, և՛ տրոհական, և՛ մեկնական, և՛ պայմանի շաղկապների մեջ, իսկ որ շաղկապը՝ և՛ մեկնական, և՛ նպատակային, և՛ պայմանի, և՛ պատճառի շաղկապների մեջ:

Հասկանալի է, որ հարցին մոտենալով այս ձևով և բազմիմաստ շաղկապները տեղաբաշխելով մի քանի իմաստաբանական խմբերի մեջ՝ մենք այս կամ այն չափով անտեսում ենք նրանց միասնականությունը: Մյուս կողմից՝ որպես նույն հարաբերությունների արտահայտիչներ ներկայացնելով տարբեր շաղկապներ, այսպիսով այս կամ այն չափով անտեսում ենք նրանց իմաստային ու կիրառական առանձնահատկությունները: Շաղկապների ունումնասիրության տեսակետից գուցե ավելի ճիշտ կլիներ յուրաքանչյուր շաղկապ ներկայացնել առանձին և քննել նրա իմաստային ու կիրառական առանձնահատկությունները: Շաղկապների այսպիսի բազմակողմանի և մանրամասն ուսումնասիրությունը կատարվում է շարահյուսության մեջ:

## ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ ՈՐԳԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՍՔԻ ՄԱՍ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ.— Եղանակավորող բառերը որպես հատուկ բառախումբ առանձնացվել են դեռևս Մ. Արեղյանի կողմից: Նա ընդունում է խոսքի մասնիկների 4 տեսակ՝ կապակցական բառեր (կապեր և շաղկապներ), բ) եղանակական բառեր կամ մասնիկներ, գ) բացասական մասնիկներ (ոչ, չը), դ) պատասխանական բառեր (այո, ոչ): Մ. Արեղյանը գրում է, որ եղանակական բառերը կամ մասնիկները՝ թեևս, գուցե, հո, ապաքեև, արդյոք, գոնե, գեթ, իբր թե, միթե, գրեթե, կարծես, կարծյոք, անշուշտ, հազիվ թե, հավանորեն և այլն որևէ կերպ եղանակավորում են խոսքը՝ դրվելով հաճախ բայերի և այլ բառերի վրա<sup>1</sup>:

Սակայն Մ. Արեղյանին հաջորդած քերականություններում եղանակավորող բառերն ու մասնիկները չեն առանձնացվում որպես առանձին խոսքի մաս և ավանդական ձևով տեղաբաշխվում են մակբայների մեջ: Եղանակավորող բառերի, որպես մյուս բոլոր խոսքի մասերից տարբեր բառախմբի, առանձնացումը և այդ առանձնացման տեսական հիմնավորումը վերաբերում է հայ քերականագիտության վերջին շրջանին<sup>2</sup>: Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերի ամբողջական ուսումնասիրությունը հատկապես կատարված է Ս. Աբրահամյանի աշխատություններում:

Խոսքի մասերի որոշման իմաստաբանական հիմունքի տեսակետից քերականագիտությունը մակբայների և եղանակավորող բառերի նույնացման տեսակետը և ի մի բերելով հայ ու ռուս քերականների՝ այս բառախմբերի դրսևորած առանձնահատկությունների մասին արտահայտված կարծիքները՝ նա նշում է, որ ի տարբերություն մակբայների, եղանակավորող

<sup>1</sup> Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 131:

<sup>2</sup> Տե՛ս Ռ. Իշխանյան, Մակբայները հայերենում (ԵՊՀ-ի «Ուսանողական գիտությունացման հիմունքները միջնակարգ դպրոցում, Երևան, 1951. Ա. Աբրահամյան, Հայոց լեզվի անակավորող բառերը հայերենում (ԵՄԻ-ի «Գիտական աշխատությունների ժողովուրդագրությունը», Երևան, 1967, Գ. Չառուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, Վ. Ավագյան, Եղանակավորող բառերը և Գրանց ուսուցումը, Երևան, 1975:



գոյականի կենդանի հոլովական ձևեր, ինչպես՝ անտարակոյս, անկասկած, իրավամբ, իրավ, հարկավ, իհարկե, իրոք, օրինակ՝ «Անտարակոյս վատահոթին կամ գլուտ»։ «Անկասկած ի դուրս ելեալ ի քաղաքէն»։ «Իրաւամբ մատնէր դատաւորին»։ «Արդար ասէիր, իրաւ ասէիր»։ «Հարկաւ ի ձեռս ետ նոցա զԴանիէլ»։ «Ոչ եթէ հարկաւ եկն յաշխարհ, այլ կամօք և յօժարութեամբ»։ «Պատերազմեցաք ընդ քեզ ի հարկէ և ոչ ի կամաց»։ «Իրօք բարկացուցես և բանիւք հաշտեցուցես»։

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ եղանակավորող բառերի կարգը, համենայն դեպս, այնքան էլ նոր կարգ չէ, և նրա սկզբնավորումը պետք է փնտրել լեզվի պատմության վաղնջական շրջաններում։ Անշուշտ ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ գրավոր ձևով մեզ ավանդված հայերենի հնագույն շրջանում եղանակավորող բառերի կարգն արդեն գոյութիւն է ունեցել։

Եղանակավորող բառերի կազմի քննութեամբ կարելի է գալ այն եզրակացութեան, որ, որպես կանոն, եղանակավորող բառերի են վերածվում այնպիսի ձևեր, որոնց բառային իմաստի մեջ արդեն իսկ կան կերպայնութեան, եղանակայնութեան, խոսողի դատողական կամ զգացմունքային վերաբերմունքի երանգներ, ինչպես՝ կարծիք («Կարծոյր նա բանաստեղծութիւններ է գրում»)։ «Կարծես եկել է»։ «Կարծես հիվանդ է»), հարկ («Նա, իհարկե, համաձայն է մեզ հետ»)։ «Տունը, հարկավ, սեփական էր»), տարակոյս («Նա, անտարակոյս, մեծ բանաստեղծ է»), իրավունք («Նա, իրավամբ, համարվում է հայ ամենամեծ բանաստեղծը»)։ «Հիրավի, այսպիսի պայծառ մտածողութիւն կարող են ունենալ միայն մեծ մարդիկ»), հավաստիք («Հավաստյալ, նա քաջ ու անվեհեր մարդ էր»), հավանականութիւն («Հավանորեն՝ հավանաբար այս հարցը դրականորեն կլուծվի») և այլն։

Այժմ եղանակավորող բառերի արտահայտած իմաստների բնույթի մասին։ Ռուս, ինչպես նաև հայ քերականութիւնների մեջ անվերապահորեն այն դրույթն է զարգացվում, թե եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից։ Դրանով էլ, իբր թե, եղանակավորող բառերը հակադրվում են թե մակբայներին և թե նյութական իմաստ արտահայտող մյուս խոսքի մասերին։

Իհարկե, եթե նյութական իմաստ ասելով սոսկ հասկանանք առարկայի և հատկանիշի իմաստ ֆիզիկական առումով, ապա, իրոք, եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից։ Բայց այս դեպքում չպետք է մոռանալ նաև այն, որ եթե նյութականութեանը մոտենանք սոսկ ֆիզիկական տեսանկյունից, ապա աննյութական կարող են համարվել անգամ «ամենանյութական» խոսքի մասերից մեկի՝ գոյականի որոշ խմբեր, ինչպես՝ լավութիւն, մեծամասնութիւն, երմաբուրքիւն, երեխայութիւն և ընդհանրապես բոլոր վերացական գոյականները։ Քանի որ եղանակավորող բառերը դատողական բնույթի բառեր են,

ուստի և որպեսզի ապացուցված համարվեր, թե նրանք զուրկ են նյութական իմաստից, պետք է ապացուցվեր, որ եղանակավորող բառերը, ինչպես, ասենք, կասկերն ու շաղկապներն են, խոսքի մեջ սոսկ կատարում են քերականական դեր՝ ժառանգելով բառերի ու նախադասութիւնների կապի իրացմանը։ Այնինչ միանգամայն պարզ է, որ եղանակավորող բառերը կապակցական դեր չեն կատարում։ Մեր կարծիքով, ժամանակակից հայերենի քերականութիւններում եղանակավորող համարվող բառերի գոնե մի զգալի մասը, օրինակ՝ երևի, գուցե, թեևս, իհարկե, անշուշտ, անպատճառ, անպայման, դժբախտաբար, բարեբախտաբար և այլն, որպես խոսողի դատողական վերաբերմունքի արտահայտութիւններ, հավասարաթեք են նյութական իմաստ արտահայտող մյուս բառախմբերին։ Որ եղանակավորող բառերը նյութական իմաստ են արտահայտում, լիարժեք բառեր են, գուցե հաստատվում է միայն նրանով, որ նրանք խոսքի մեջ հաճախ հանդես են գալիս որպես ամբողջական նախադասութիւնների փոխարինիչներ, օրինակ՝ «— Դու այսօր նրան տեսնելո՞ւ ես— Իհարկե»։ «— Հավատացած եմ, որ կաշխատես ավելին անելի— Անշուշտ»։ «Նա մեզ կպաշտպանի»։ «Երևի»։ Չենք խոսում այդ և ոչ բառերի մասին, որոնք համարվում են եղանակավորողներ և որոնց հիմնական ֆունկցիան պատասխանական նախադասութիւնների մեջ ունեցած այսպիսի կիրառութիւնն է։ «— Դու գալո՞ւ ես— Այո՞»։ «— Նա մե՞զ հետ կլինի— Ո՛չ»։

Մրանից բխում է երկրորդ հարցը՝ եղանակավորող բառերը նախադասութեան անդամ դառնո՞ւմ են, թե՞ ոչ։ Որոշ հայ քերականներ գրտնում են, թե եղանակավորող բառերը նախադասութեան անդամ չեն դառնում։ Այս կարծիքն են պաշտպանում, օրինակ, Ռ. Իշխանյանը, Ս. Աբրահամյանը և ուրիշներ։ Այսպես, վերջինս եղանակավորող բառերը հակադրելով մակբայներին՝ գրում է. «Եթե մակբայները կատարում են պարագայի ֆունկցիա, որի տեսակը որոշվում է մակբայի իմաստային առանձնահատկութեամբ, ապա եղանակավորող բառերը նախադասութեան անդամ չեն լինում»<sup>6</sup>։

Հակառակ սրանց՝ Մ. Աբեղյանն ու Վ. Առաքելյանը գտնում են, որ եղանակավորող բառերը նախադասութեան անդամ են դառնում։ Այսպես, Մ. Աբեղյանը հիմունքի պարագաների մեջ որպես առանձին խումբ առանձնացնում է եղանակի պարագան, որը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը դեպի խոսքի բովանդակութիւնը, օրինակ՝ «Մենք անպատճառ պետք է գնանք նրան տեսնեք»։ «Նա գուցե վաղը կգա մեզ մոտ»։ «Դու իսկապես խելոք վարվեցիր»<sup>7</sup>։ Անդրադառնալով այս նույն հարցին՝ Վ. Առաքելյանն ընդունում է վերաբերմունքի և հավաստիութեան պարագաներ։ Այս պարագաների ֆունկցիայով հանդես են գալիս

<sup>6</sup> Մ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., էջ 503—504։  
<sup>7</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 381։

արդյոք, կարծես. ասես, գուցե, իհարկե. անշուշտ, անպատճառ, անկասկած և այլ բաները<sup>8</sup>:

Կարծում ենք, որ Մ. Աբեղյանը և Վ. Առաքելյանը հարցի լուծմանը մոտենում են ճիշտ դիրքերից: Եվ իրոք, չի կարելի պատճառաբանված համարել այն մոտեցումը, որ, ասենք, «Նա երևի գա», «Գուցե գրի», «Թերևս հանդիպի», «Անպայման կտեսնի», «Անպատճառ կասի»<sup>9</sup> և այլն: Ինչպիսի կիրառությունների զեպրում երևի, գուցե, թերևս, անպայման, անպատճառ և նման բաները նախադասության անդամ չեն համարվում այն հիմունքով, թե դրանք խոսողի սուբյեկտիվ-անձնական վերաբերմունքն են արտահայտում: Զի կարելի համաձայնել այն կարծիքին, թե, իբր, «Նախադասության մեջ եղանակավորող բառի և նախադասության որևէ անդամի կապը միայն իմաստային է լինում և ոչ երբեք շարահյուսական-իմաստային»<sup>9</sup>: Նախ՝ պարզ չէ, թե ինչ բովանդակություն է դրվում «իմաստային կապ» և «շարահյուսական-իմաստային կապ» հասկացությունների մեջ: Մյուս կողմից՝ մենք կապակցության ոչ մի տարբերություն չենք տեսնում և հնարավոր էլ չի տեսնել, ասենք, «Նա իսկույն կգա» և «Նա երևի կգա», «Նա արագ կգա» և «Նա անսպառճառ կգա»<sup>10</sup> «Նա դանդաղ կգա» և «Նա գուցե կգա» զուգադրվող ձևերի միջև: Եթե «Նա իսկույն կգա» նախադասության իսկույն և կգա բառերի կապը շարահյուսական-իմաստային ենք համարում, ապա այդպիսին պետք է համարենք նաև «Նա երևի կգա» նախադասության երևի և կգա բառերի կապը: Իսկ եթե այդ կապը սոսկ իմաստային ենք համարում առաջին նախադասության մեջ, այդպիսին պետք է համարենք նաև երկրորդ նախադասության մեջ: Մի խոսքով, «Նա իսկույն կգա» և «Նա երևի կգա» նախադասությունների մեջ բառերի կապակցությունների տարբերություններ ցույց տալ հնարավոր չէ:

Հասկանալի է, որ մեր ասածը չի վերաբերում բոլոր եղանակավորող բառերին և նրանց բոլոր կիրառություններին: Արտահայտելով խոսողի վերաբերմունքը՝ եղանակավորող բառերը հաճախ հանդես են գալիս որպես միջանկյալ բառեր՝ ամբողջ նախադասությանը հարող դեպքով խոսողի գատողական վերաբերմունքի այս կամ այն երանգը: Այս դեպքում նրանք շարահյուսական հարաբերության մեջ չեն մտնում որոշակի բառերի հետ և այս պատճառով էլ նախադասության անդամի պաշտոն չեն կատարում: Բայց դեպքերի մեծամասնության մեջ նրանք շարահյուսական հարաբերության մեջ են մտնում որոշակի բառերի հետ՝ հանդես գալով եղանակավորող զանազան պարագաների պաշտոններով, օրինակ՝ «Այդ պատերազմի ավերածության և փլատակների տակ նա երևի կթաղի իր զգացմունքը, երևի կկորցնի մի էակ. որին նվիրել է իր առաջին սերը» (Գեմ.). «Կարավաբերդի քարերն ասես կենդանացել ու

խոսում էին հնագետի հետ» (Բակ.). «Արդյո՞ք հիշո՞ւմ ես. անտառ էր, ատու» (Տեր.). «Գուցե նրան նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն օւլայած շապիկի բարձր ու ամուր օձիքը» (Շիրվ.). «Նոր ուղևորն ըստ երևույթին ուզում էր շարունակել խոսակցությունը» (Նար-Դոս). «— Արածանը քաշե՞լ եք, լա՞վ, որ քաշել եք, դե իհարկե կգամ» (Անան.). «Դու անշուշտ իմացար դժբախտությունը՝ մեր հոգևորների և իշխանների ապերասան պատասխանը» (Գեմ.) և այլն:

Հայ և ռուս բերականագիտության մեջ իրավացիորեն նշվել է, որ, ի տարբերություն մակրայնների, որոնք, որպես կանոն, դրվում են բայերի և ածականների վրա, եղանակավորող բառերի գոնե մի զգալի մասը կիրառական այսպիսի սահմանափակում չունի և կարող է դրվել նյութական իմաստ արտահայտող բոլոր խոսքի մասերի վրա, օրինակ՝ «Գուցե գնա», «Գուցե ուսանող է», «Գուցե կարմիր է», «Գուցե երկու հոգի են եղել», «Գուցե դանդաղ է գնացել», «Գուցե նա է եղել» և այլն: Սակայն դրա սու միաժամանակ հատուկ պետք է շեշտել եղանակավորող բառերի կիրառական մի առանձնահատկությունը ևս, որի վրա քերականները, համենայն դեպս, քիչ ուշադրություն են դարձրել: Այդ յուրահատկությունն այն է, որ եղանակավորող բառերը խոսքից, նախադասությունից դուրս, որպես կանոն, անկախ բառակապակցությունների բաղադրիչ հանդես գալ չեն կարող: Այսպես, եթե խոսքից, նախադասությունից դուրս էլ ազատ կազմվում են, ասենք, կարմիր մատիտ, բարձր պատ, մաքուր փողոց, արագ զնալ, դանդաղ գրել, հիանալի խոսել և այլ բառակապակցությունները, ապա երևի մատիտ, գուցե պատ, թերևս փողոց, ըստ երևույթին զնալ, անշուշտ գրել, իհարկե խոսել բառակապակցություններ փաստորեն լեզվում գոյություն չունեն: Այսպիսի կապակցություններ հնարավոր են միայն խոսքի, նախադասության մեջ, օրինակ՝ «Քո ձեռքերը երևի մատիտ է». «Գուցե պա՞տ դնենք և ոչ թե ցանց». «Սկզբում թերևս փողոցը մաքրենք». «Ըստ երևույթին զնացել է». «Անշուշտ գրել է». «Իհարկե խոսել է»:

Այս երևույթը ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել նրանով, որ խոսողի վերաբերմունքը, որպես կանոն, կարող է ձևավորվել ավարտված-կազմավորված մտածության մեջ, որի լեզվական թանձրացական արտահայտությունն է նախադասությունը: Ահա թե ինչու նախադասությունից դուրս ոչ հնարավոր բառակապակցությունները նախադասության մեջ դառնում են հնարավոր:

Այն էլ պետք է ասել, որ եղանակավորող բառերի մեծ մասը սովորաբար վերաբերում է ստորոգյալին, ավելի ճիշտ՝ գուցե ստորոգմանը: Մեզ այդ վերջին մտքին են մղում այն փաստերը, որ, ասենք, եղանակավորող բառերը ազատ կարող են դրվել գոյականով կամ ածականով արտահայտված ամեն մի ստորոգելիական վերադրի վրա, օրինակ՝ «Նա գուցե ուսուցիչ է, բժիշկ է, բանվոր է, ուսանող է». «Նա անշուշտ մեծ

<sup>8</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա. էջ 393—395:

<sup>9</sup> Ռ. Իշխանյան, Մակրայնները ժամանակակից հայերենում, էջ 174:

է, ընդունակ է, խելոք է, տաղանդավոր է, բարի է» և այլն, այն դեպքում, երբ, ինչպես նշված է արդեն, երևի բժիշկ, երևի ուսանող, անշուշտ մեծ, անշուշտ ընդունակ և այլ կապակցությունները, որպես անկախ բառակապակցություններ, լեզվում փաստորեն գոյություն չունեն:

Այս հարցի հետ կապված պետք է նշել, որ եղանակավորող բառերն ազատ գործածվում են անդեմ և անվանողական նախադասություններում, օրինակ՝ «Ի՞նչ անել: Հարցի քննարկումը գուցե հետաձգե՞լ»։ «Հարձակվե՞լ, թե՞ պաշտպանվել: Իհարկե հարձակվել»։ «Թեևս գիշերո՞վ անցնել գետը»։ «Ահա՛ քաղաքը»։ «Ահա՛ ծովը»։ «Ահավասիկ և սերը» և այլն: Այսպիսի կիրառություններն իրենց հերթին մի անգամ ևս ապացուցում են, որ անդեմ և անվանողական նախադասություններում ստորոգման շարահյուսական կարգը այս կամ այն կերպ արտահայտվում է: Հենց ստորոգման առկայությամբ է պայմանավորված եղանակավորող բառերի գործածությունը անդեմ և անվանողական նախադասություններում:

Այժմ եղանակավորող բառերի հնչերանգի մասին: Որպես խոսողի դատողական-կամային վերաբերմունքն արտահայտող ձևեր՝ եղանակավորող բառերն իրենց հնչերանգով կարծես թե առանձնանում են սովորական բառերից: Երբ նրանք վերաբերում են ամբողջ նախադասությանը և ոչ թե նրա առանձին անդամներին, հաճախ արտասանական դադարով անջատվում են նախադասության մյուս անդամներից, որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով, ինչպես՝ «Նրանց պատճառով, թեևս, ինքն ապագայում տանջվի խղճի իայթից» (Մուր.)։ «Հանդուգն խոսքեր ասաց նրան, իբր, նա այնպես չի բժշկում, ինչպես պետք է» (Շիրվ.)։ «Ենթաց, այդ աղջիկն իրավունք ունի իրեն վարկաբեկելու» (Շիրվ.)։ «Անփորձությունն էլ, անշուշտ, մի արտոնություն է, որից երբեմն մարդիկ օգտվում են հաջողությամբ» (Մուր.)։ «Մենամարտ ասած բանը մի ժամանակ, աղաղակ, ունեցել է իր իմաստը» (Շիրվ.)։ «Հիմա, իրո՞ք, կարելի էր ասել, որ պաշտպանության գործն առաջ էր ընթանում բարձր մակարդակով» (Վերք.)։

Շատ դեպքերում էլ եղանակավորող բառերը արտասանական դադարով չեն անջատվում, ինչպես՝ «Երևի ծեր տիկնոջը դուր չէր եկել գառան շափ իմ փափախը» (Անան.)։ «Գուցե ապին պետք է գալիս, գուցե բակատեղը գողեր են գալիս մեզ թալանելու» (Անան.)։ «Անշուշտ կեղտոտ արհեստը ապականել էր նրա բնավորությունը» (Դեմ.)։ «Ախր ես եկա էստեղ մնացի, բա ինչ ես ասում» (Թում.)։ «Ախր ես էլ եմ բեզարել»։ «Գունե քրոջ տեսներ» և այլն:

Գրավոր խոսքում եղանակավորող բառերը տրոհելու կամ շտրոհելու, այսինքն՝ ստորակետով անջատելու կամ շանջատելու հարցում միշտ առաջնորդ պետք է ունենալ կենդանի արտասանությունը:

Եվ վերջապես՝ եղանակավորող բառերի ընդգրկման ոլորտների մա-

սին: Այս խոսքի մասի ուսումնասիրությանը նվիրված քերականական աշխատություններում սովորաբար ընդարձակվում են եղանակավորող բառերի ոլորտները՝ դրանց մեջ հաճախ զետեղելով ամբողջական նախադասություններ, որոնք խոսքի մեջ որպես կանոն միջանկյալ նախադասությունների դեր են կատարում, շողկապներ, դասական թվականներ և մի շարք այլ բառեր, որոնք այլ խոսքի մասային կարգերի մեջ դժվար է տեղավորել, օրինակ՝ ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչ գնով ուզում է լինի, ուր մնաց թե, ուր է թե, ով գիտի, ով իմանա, ճիշտ է, ճշմարիտ է, մեկ է, միևնույնն է, արի, տես, բեր, եկ (երբ գործածվում են ոչ ուղղակի նշանակությամբ), խնդրեմ, կեցցես, կեցցեք, ներեցեք, ներողություն, համմե, նախ, առաջին, երկրորդ, երրորդ (երբ գործածվում են թվարկման նշանակությամբ)<sup>10</sup>:

Այսպիսի մոտեցմամբ խիստ ընդարձակվում և տարտամ ու անորոշ են դառնում եղանակավորող բառերի սահմանները, որովհետև այս կարգի մեջ են ընդգրկվում այնպիսի միավորներ, որոնք իմաստով, կառուցվածքով ու շարահյուսական կիրառություններով իրար հետ շփման հղբեր ամենաին չունեն: Համեմատել, օրինակ, ճիշտ է, ճշմարիտ է, միևնույնն է և արի, տես, բեր, եկ, կեցցես, կեցցեք, խնդրեմ, ներեցեք և նախ, առաջին, երկրորդ, երրորդ զուգադրվող ձևերը:

Ինչևիցե, այստեղ մենք ուզում ենք հատուկ շեշտել, որ առանձին քերականների աշխատություններում եղանակավորողների մեջ են մտցվում մի շարք բառեր, որոնք շողկապական իմաստ և կիրառություն ունեն, ինչպես՝ նույնիսկ, մինչև իսկ, մինչև անգամ, մանավանդ, նամանավանդ, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսինքն, ուրեմն: Որ այս բոլոր բառերը շողկապական, կապակցական դեր են կատարում՝ բացահայտորեն երևում և դրսևորվում է նաև հենց իրենց՝ հեղինակների բերած օրինակների մեջ. ինչպես՝ «Այնտեղ նույնիսկ կային մի քանի պանդուխտներ»։ «Նա մինչև անգամ քրտնեց իր գիրուկ ուսերի վրա դրած ծանր ու անսովոր բեռան տակ»։ «Մի խանութի առաջ հրաշալի պտուղներ էին դարսված: Հրաշալի էին մանավանդ խնձորները»։ Ահա այս պատճառով էլ վերոհիշյալ բոլոր բառերը մենք ներկայացնում ենք շողկապների բաժնում:

#### Եղանակավորող բառերի իմաստային դասակարգումը

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ.— Եթե մի կողմ թողնենք միջանկյալ նախադասությունների ձևով հանդես եկող կապակցությունները, այլև տարբեր խոսքի մասերի պատկանող բառերը, որոնք իրենց այս կամ այն կիրառությամբ կարող են կերպայնու-

<sup>10</sup> Տե՛ս Ս. Արքաճապան, Չթեքվող խոսքի մասերը, էջ 513. В. Авакян, Модальные слова современного армянского языка, էջ 28—31:

թյան կամ եղանակավորության երանգներ արտահայտել, ապա արդի հայերենում կան մոտ վեց տասնյակ բառեր, որոնք կազմում են եղանակավորող բառերի կարգը:

Գիտենք, որ յուրաքանչյուր բառ, հետևաբար և յուրաքանչյուր եղանակավորող բառ, ունի միայն իրեն հատուկ և մյուսներից տարբեր իմաստը: Այսպիսի հարցադրմամբ կարծես թե ավելորդ է դառնում եղանակավորող բառերի իմաստային դասակարգման բուն գաղափարն իսկ: Բայց յուրաքանչյուր եղանակավորող բառ, ունենալով միայն իրեն հատուկ իմաստը, միաժամանակ այդ իմաստով միավորվում է կամ կարող է միավորվել մոտիկ իմաստ արտահայտող կամ իմաստային նույն երանգն ունեցող այլ եղանակավորող բառերի հետ: Հենց դա էլ հնարավորություն է տալիս կատարելու եղանակավորիչ բառերի իմաստային դասակարգում կամ խմբավորում:

Նախ նշենք, որ ժամանակակից հայերենի քերականություններում որպես եղանակավորիչներ ներկայացվող բառերը որոշակիորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) բառեր, որ վերաբերելով ամբողջ նախադասությանը կամ նրա առանձին անդամներին՝ արտահայտում են խոսողի անձնական վերաբերմունքը ասվածի նկատմամբ՝ խոսքին հաղորդելով կերպային այս կամ այն երանգը, օրինակ՝ Իհարկե, այդ աղջիկն իրավունք ունի իրեն արհամարհելու. Նա, անշուշտ, մեծ գիտնական է. Հարցը ե՛րևի դրականորեն լուծվի. Այսօր նրան անպայման կտեսնեմ, և բ) բառեր, որոնք դրվելով նախադասության տարբեր անդամների վրա՝ առանձնացնում, հատուկ շեշտում են դրանք կամ էլ արտահայտում են սահմանափակման նշանակություն, օրինակ՝ Հենց դու ասացիր. Խմեց վերջին կաթին անգամ. Միայն ընկերս օգնեց ինձ. Լոկ ոսկորներն են մնացել և այլն:

Հասկանալի է, որ բառերի այս երկու խմբերից բուն եղանակավորիչներ են առաջինները՝ խոսքին կերպայնություն այս կամ այն երանգ հաղորդող բառերը, իսկ երկրորդները եղանակավորող բառերի մեջ են տեղաբաշխվում, որովհետև մի ուրիշ ավելի «հարմար» խոսքի մաս չկա, որտեղ դրանք գտնեին իրենց իսկական տեղը: Ինչևիցե, այդ երկրորդ խմբի բառերը ևս, «առ ի շփոթ լավագույնի», այս աշխատության մեջ ներկայացվում են բուն եղանակավորող բառերի հետ:

Ըստ խոսողի ունեցած տարբեր վերաբերմունքի ու գնահատման՝ եղանակավորող բառերը լինում են հաստատական, երկբայական, զգացական, ժխտական, կամային, ցուցական, սահմանափակման, սաստկական, զիջական:

**ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.**— Հաստատական եղանակավորող բառերը արտահայտում են մտքի, ասվածի հաստատական, հավաստի, ստույգ, ճշգրիտ լինելը, ինչպես՝ անշուշտ, իհարկե, իսկապես, իրավ, իրոք, արդարև:

Օրինակներ. «Անշուշտ կեղտոտ արհեստը ապականել էր նրա բնավորությունը» (Դեմ.). «Անշուշտ ներքևի գյուղից խճուղի կբերեն գյուղ» (Խանզ.). «Կոնտր-կտակն, իհարկե, կկազմվի հետին թվականով» (Շիրվ.). «Նա իսկապես արժանի է պատվի և հարգանքի». «Իրավ արժե ժառանգել այս գանձը» (Մուր.). «Նա իրոք տեղյակ էր այդ մասին». «Դա, արդարև, մի լեռնային դրախտ էր» (Մուր.):

Հավաստիականության հետ միասին ասվածի անառարկելիությունն ու անտարակուսությունն են ցույց տալիս անպայման, անպատճառ, անկասկած, անտարակույս եղանակավորիչները, օրինակ՝ «Նա անպայման կհամաձայնի մեզ հետ». «Խաղաղության ուժերն անպայման կհաղթեն». «Անպատճառ վճիռը մեր օգտին է լինելու». «Անկասկած հաղթանակը մերը կլինի». «Անկասկած նա ինձ կասի ամեն ինչ». «Անտարակույս այս պատերազմում մենք միայնակ շենք լինի». «Անտարակույս մեր կողմն է արդարությունը» և այլն:

Ասվածի իրավացի ու արդարացի լինելն են արտահայտում իրավամբ, հիբավի եղանակավորիչները, օրինակ՝ «Իրավամբ նա կարող է ժառանգել հոր հարստությունը». «Վարդն իրավամբ է կոշված ծաղիկների թագուհի». «Հիրավի, լեզուն ազգի ամենավիրական ստեղծագործությունն է». «Հիրավի, նա մեր ազգային ամենամեծ բանաստեղծն է»:

Հարկավ եղանակավորիչով արտահայտվում է ասվածի անհրաժեշտությունը, օրինակ՝ «Տունը, հարկավ, սեփական էր» (Շիրվ.). «Հարկավ այս բոլորից հետո այլևս անհնար էր դավաճան կնոջ հետ մի հարկի տակ ապրելը» (Շիրվ.):

Հաստատական բառերի մեջ հատուկ տեղ ունի այն եղանակավորիչը, որը գործածվում է թե նախադասությունների կազմում՝ հավաստելով տվյալ նախադասությամբ արտահայտված միտքը, թե առանձին, որպես պատասխանական բառ՝ փոխարինելով մի ամբողջ նախադասության, որը պատասխան խոսքում կարող է նաև կրկնվել, օրինակ՝ «Թումանյանն, այո՛, մեր ազգային ամենամեծ բանաստեղծն է». «Այո՛, նրանք իրենց ժամանակի ամենամեծ գործիչներն էին». «— Արշակը հիվանդ է:— Այո՛» (Շիրվ.). «— Կարող եմ ասել, որ հայրս գալիս է:— Այո՛, գալիս է Սամվելը» (Րաֆֆի):

**ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.**— Երկբայական եղանակավորող բառերը արտահայտում են մտքի, ասվածի թվացողական կամ անիրական, հավանական կամ անհավանական լինելը:

Ըստ իրենց իմաստային առանձնահատկությունների՝ հայ քերականությունների մեջ դրանք բաժանվում են երեք խմբի՝ երկբայական-հավանական, երկբայական-անհավանական և երկբայական-հարցական<sup>11</sup>:

<sup>11</sup> Տե՛ս Ս. Արքաճյան և ուրիշ., Ժամանակակից հայոց լեզու, Բ. 2, Երևան, 1874, էջ 561:

Երկրայական-հավանական եղանակավորիչները, ինչպես՝ երևի, թե-  
ևս, գուցե, ըստ Երևույթին, միգուցե, կարծեմ, կարծես, կարծես թե, ա-  
սես, կարծյո՛ք և այլն, ցույց են տալիս մտքի, ասվածի հավանական  
կամ թվացողական ու նմանողական լինելը, օրինակ՝ «Երևի Միքայելը  
ձեզնից ոսկեղեն է վերցրել» (Շիրվ.)։ «Երևի սա է կարմրախալտի ձկն-  
կիթը» (Անան.)։ «Դուք երկուսդ թեևս վազը ճանապարհվեք Արտա-  
շատ» (Դեմ.)։ «Թեևս հանգստանում էր նա Բարեկի անկեղծ ու կոպիտ  
կշտամբանքներից» (Դեմ.)։ «Դուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ  
խառնվելով հասնում է այն ծովին» (Բակ.)։ «Դուցե մի բան իմանան  
կտակի մասին» (Շիրվ.)։ «Միգուցե մերոնցից մեկը հիվանդացել է»  
(Մուր.)։ Ըստ Երևույթին ինչ-որ գրոհ էր պատրաստվել վասակի դեմ»  
(Դեմ.)։ «Նոր ուղևորն ըստ Երևույթին ուզում էր շարունակել խոսակ-  
ցությունը» (Նար-Դոս)։ «Կարծեմ բարձրագույն կրթություն չունի»։ «Կար-  
ծեմ գյուղում է աշխատում»։ «Կարծես հավք էր թառել անտառի մթին  
խորքում» (Բակ.)։ «Կարծես մեր Բողարի հաշոցն էի լսում» (Անան.)։  
«Կարծես թե լսում էր պղնձյա զանգերի տխուր դողանջները» (Բակ.)։  
«Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի  
հետ» (Բակ.)։ «Ասես կամենում էր հյուրի մոտ ավելի ազդու երևալ»  
(Խանզ.)։ «Կարծյո՛ք դուք մի ժամանակ բարեկամներ եք եղել»։

Ասվածի դժվար իրականանալի լինելն են ցույց տալիս դժվար թե,  
հազիվ թե եղանակավորիչները, օրինակ՝ «Դժվար թե նրան տանը գրտ-  
նենք»։ «Դժվար թե այս տարի բնակարան ստանանք»։ «Հազիվ թե ըն-  
կերները կարողանան օգնել նրան»։ «Հազիվ թե այսօր տեսնեմ նրան»։

Երկրայական-անհավանական եղանակավորիչները՝ իբր, իբր թե,  
իբրև թե, արտահայտում են ասվածի անհավանական, անիրական լինե-  
լը, իրականությունը չհամապատասխանելը, օրինակ՝ «Սկսեց պատմել,  
թե իբր գերմանացիք պայթեցրել են մի ահեղի պարիսպ» (Բակ.)։ «Ես  
երեսս շրջեցի, իբր թե սարերին եմ նայում» (Թում.)։ «Զին էլ դունը  
ցցած ետևիցն է ընկնում, իբրև թե հալածում է» (Թում.)։

Երկրայական-հարցական եղանակավորիչներն են՝ արդյո՞ք, մի՞թե,  
չի՞հնի, չի՞նի թե։ Դրանք հարցական հնչերանոցով արտահայտում են տա-  
րակուսանք, երկմտություն, կամ զարմանք ու անհանգստություն որևէ  
անսպասելի, դժվար հավատալի բանի մասին, ինչպես՝ «Ասացեք, արդյո՞ք  
նա էլ թախծո՞ւմ էր, Արդյո՞ք տրտո՞ւմ էր նա էլ ինձ նման» (Տեր.)։  
«Մի՞թե նրա տառապանքները լուրջ պատճառ չեն ունեցել, մի՞թե անի-  
րավաբար է անիծել որդուն» (Շիրվ.)։ «Մի՞թե շները միշտ մի տեսակ  
չեն հաշում» (Թում.)։ «Զլիհի՞ թե ծերունին խնեթացավ ու ինձ զրկեց  
ժառանգությունից» (Շիրվ.)։ «Զլիհի՞ թե հաղթահարված, ճարը հատած  
թշնամին Դավ է դնում մութն ու մեռած Կես գիշերվա էս ժամին»  
(Թում.)։ «Զլիհի՞՞ հորդ անեծքին արժանանաս»։

ԶԳԱՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.— Բոլոր եղանակավորիչների նը-

ման լինելով դատողական բնույթի բառեր՝ զգացական եղանակավորիչ-  
ները իրենց մեջ պարունակում են ասվածի զգայական գնահատման  
զգալի տարր, ինչպես՝ երանի, երանի թե, երենկ, երնկ թե, դժբախ-  
տաբար, բարեբախտաբար, ախր||ախար, ցավո՛ք, ցավո՛ք սրտի և այլն։

Երանի, երենկ եղանակավորիչները համանիշներ են։ Դրանք 1. Ար-  
տահայտում են ուժեղ ցանկություն, բաղձանք գործողության կատար-  
ման վերաբերյալ, և սովորաբար գործածվում են ըղձական եղանակի  
բայաձևերի հետ՝ ուժգնացնելով այս բայաձևերի ըղձանքի նշանակու-  
թյունը, օրինակ՝ «Երանի||երենկ տեսնի նրան ու հետո թեկուզ գերեզ-  
ման իջնի»։ «Երանի||երենկ այսօր գային»։ «Երանի||երենկ բարեհաջող  
ազատվիր այս փորձանքից»։ Այս նշանակությամբ գործածվում են նաև  
երանի թե, երենկ թե ձևերով։ 2. Ցույց են տալիս խոսողի բարյացակամ  
զգացմունքը մեկի կամ մի բանի նկատմամբ, որին խոսողը համարում  
է երջանիկ, բախտավոր, երանելի, օրինակ՝ «Երենկ նրան, որ իր գոր-  
ծով Կապրի անլ՛բը, անդադար» (Թում.)։ «Երենկ ծտին, ճյուղքի միջին  
ծվլում է, թռթռում» (Թում.)։ «Երանի աղբատներին, երանի արդարնե-  
ծվում է, երանի հեղբրին»։ Ինչպես օրինակներն են ցույց տալիս, այս ի-  
մաստով կիրառվելիս երանի||երենկ բառերը տրական հոլով են պահան-  
ջում։

Բարեբախտաբար (բարեբախտորեն) եղանակավորիչը իր բաղա-  
դրիչների իմաստին համապատասխան՝ արտահայտում է գոհունակու-  
թյուն, ուրախություն ըստ հաջողության, պատահմունքի կամ դիպվածի  
որևէ երևույթի, գործողության անկախության կամ կատարման համար,  
օրինակ՝ «Բարեբախտաբար անձնագիրը մոտոս էր»։ «Բարեբախտաբար  
աշխարհում ազնիվ ու բարի մարդիկ դեռ կան»։ «Բարեբախտաբար կար-  
կուտը երկար շտեկեց»։

Դժբախտաբար եղանակավորիչը նախորդի հակառակն է և արտա-  
հայտում է խոսողի դժգոհությունը ըստ անհաջողության, պատահմուն-  
քի կամ դիպվածի որևէ երևույթի, գործողության, հատկանիշի անկա-  
խության, կատարման կամ դրսևորման համար, օրինակ՝ «Դժբախտա-  
բար նա լավ տրամադրության մեջ չէր»։ «Դժբախտաբար այսօր արդեն  
մեկնելու է»։ «Դժբախտաբար ինձ վատ աչքով է նայում»։

Ախր||ախար եղանակավորիչը իր մեջ ունենալով ցավակցական,  
ափսոսանքի, սրտնեղության երանգ՝ արտահայտում է ասվածի համո-  
զիչ լինելը, օրինակ՝ «Հերիք է, ախր մեղք են» (Անան.)։ «Ախր ես էլ եմ  
բեզարել» (Անան.)։ «Ախար վեց փոքրիկ երեխաներ ունի, նրանց պիտի  
կերցնի, հագցնի»։

Ցավո՛ք, ցավո՛ք սրտի եղանակավորիչները գրաբարից փոխառյալ  
ձևեր են։ Առաջինը նշանակում է «ցավով, ցավերով», իսկ երկրորդը՝  
«սրտի ցալով, ցավերով»։ Իրենց բուն բառային իմաստին համապա-  
տասխան՝ ցույց են տալիս, որ խոսողը կատարվածը կամ կատարվելիքը

համարում է ցավալի, վշտալի, օրինակ՝ «Յավո՛ք պետք է ասեմ, որ ձեր դիմումը մերժել են»։ «Յավո՛ք պետք է նշեմ, որ նրան աշխատանքից ազատել են»։ «Յավո՛ք սրտի օգնել չեմ կարող»։

**ԺԱՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.**— Ժխտական եղանակավորիչներն են ոչ, չէ բառերը։ Երկրորդը ժողովրդական-խոսակցական է։ Հականիշ են այո, հա բառերին։ Գործածվում են ժխտական նախադասություններում՝ ժխտումը մի անգամ ևս հաստատելու համար կամ տոանձին իբրև ժխտողական կամ մերժողական պատասխան տրված հարցին, օրինակ՝ «Ո՛չ, նա չի կարող ներել դավաճան ընկերոջը»։ «Ո՛չ, ես նրան խնդրել չեմ կարող»։ «— Հոգնա՞ծ ես։— Ո՛չ»։ «— Բնակարանդ լա՞վ է տաքացվում։— Ո՛չ»։ «Ձե, նրան չեմ սիրում»։ «— Ամառը քաղաքո՞ւմ ես մնալու։— Ձե»։

**ԿԱՄԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.**— Կամային եղանակավորող բառերը արտահայտում են խոսողի կամքը, հորդորը, կոչը՝ ուղղված խոսակցին կամ մի երրորդ անձի՝ նրան դրդելով այս կամ այն գործողության կատարմանը։ Կամային եղանակավորիչներն են՝ թող, ապա||հապա, մի և այլն։

**Թող** եղանակավորիչը թողնել բայի եղակի հրամայականի ձևն է, որ շատ կապակցությունների մեջ ղրկված լինելով նյութական իմաստից՝ ցույց է տալիս խոսողի կամքը, կոչը գործողության կատարման վերաբերյալ։ Սովորաբար գործածվում է ըղձական եղանակի երրորդ դեմքի բայաձևերի հետ, օրինակ՝ «Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան»։ «Թող արագ վերջացնի գործերը և վերադառնա»։ «Թող գա և վերջին անգամ տեսնի ինձ»։

Ապա||հապա եղանակավորիչը սովորաբար գործածվում է հրամայական եղանակի բայաձևերի հետ՝ արտահայտելով խոսողի հորդորը, կոչը գործողության կատարման վերաբերյալ, օրինակ՝ «Ապա, եկ տեսնեմ»։ «Ապա, քարը շուռ տուր»։ «Հապա, վազեցեք տեսնեմ»։ «Հապա, ձի՛գ տվեք»։

**Մի** եղանակավորիչը, որպես կանոն, գործածվում է ըղձական և հրամայական եղանակների բայաձևերի հետ՝ ավելի շեշտելով առաջին ձևերի ցանկության, իղձի, կոչի նշանակությունները և մեղմելով երկրորդների հրամայական նշանակությունը՝ նրանց հաղորդելով խեղդանքի, հորդորի երանգ, օրինակ՝ «Մի գնաս նրան ասես զա մեր տուն»։ «Մի վազես հացի»։ «Մի նրան տեսնեի, նոր գերեզման իջնեի»։ «Մի պատմիր տեսնեմ ի՞նչ է պատահել»։ «Մի լավ միտք արա, տես խելքդ ինչ է կտրում»։ Արգելական հրամայականի մի մասնիկից հնչեթանգով տարբերվում է նրանով, որ ունենում է մեղմ, շատ թույլ և ոչ թե սուր շեշտ։

**ՅՈՒՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.**— Ցուցական եղանակավորիչներն

են ահա, ահավասիկ բառերը։ Երկրորդը փոխառություն է գրաբարից, ունի գրբայնության երանգ և քիչ գործածական է։

**Դրանցից հատկապես** ահա եղանակավորիչը, ունենալով ցայտուն դրսևորված ցուցականության իմաստ, արտահայտում է ցուցում որևէ առարկայի, դրուժյան, գործողության, հատկանիշի վրա, որը առկա է, գտնվում կամ կատարվում է խոսողի մոտ կամ ներկայացվում է որպես այդպիսին, օրինակ՝ «Ահա Մասիսը վեհափառ»։ «Ահա գտավ Գիբորին» (Թում.)։ «Ահա Դաշույնը փայլատակեց» (Թում.)։ «Ահա ճիպոտը թափահարելով ըշում եմ աղունն ուտող հավերին» (Անան.)։ «Ահա և այն քարը, որի տակ պիտի թաքնվի» (Անան.)։

Բերենք նաև ահավասիկ եղանակավորիչի կիրառության մի երկու օրինակ. «Ահավասիկ մեր իմաստուն գուսանք ժամանեցին»։ «Ահավասիկ և սերը... նա, որին փնտրել եմ ես Երազներիս ոսկեբրդ ավազանում» (Զար.)։

Ժողովրդակա՛ն-խոսակցական են հրես, հրեղ, հրեն ցուցական եղանակավորիչները։ Դրանք մատնացույց են անում տվյալ երևույթը, գործողությունը, հատկանիշը ըստ առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի նկատմամբ ունեցած տարածական հարաբերության, օրինակ՝ «Հրես||հրեղ||հրեն գալիս են»։ «Հրես||հրեղ||հրեն գարունը մոտենում է»։ Կազմելով եռանդամ հակադրություն՝ այս բառերը շփման եզրեր են հանդես բերում ցուցական դերանունների հետ։

**ՍԱՀՄԱՆԱՔԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.**— Արդի հայերենի սահմանափակման եղանակավորիչներն են՝ միայն, միմիայն, զո՛ն, լոկ, զի՛ք, սոսկ և այլն։

Այս բառերը, զրվելով նախադասության զանազան անդամների վրա, դրանք տոանձնացնում և ներկայացնում են որպես միակը, եզակին, կամ էլ տվյալ երևույթը, գործողությունը, հատկանիշը և այլն ներկայացնում են որպես ամենափոքր, ժայրագույն աստիճան, օրինակ՝ «Միայն մի հույս կար» (Անան.)։ «Մեր ունեցածը միայն շոր ժայռեր են» (Խանգ.)։ «Միմիայն իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած տերևները» (Բակ.)։ «Գո՛նն երեխաների մասին մտածեր»։ «Գո՛նն տունը շվաճառեր»։ «Լոկ ոսկորներն են մնացել»։ «Վիշտ ու տառապանք լոկ վաստակեցի»։ «Վերջինը զե՛ք մնա ինձ հետ»։ «Համբուրիք ինձ զե՛ք մի անգամ»։ «Սոսկ տանջանքներ եմ տեսել»։ «Սոսկ նրա սերն էր ինձ մխիթարում»։

**ՍԱՍՏԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՉՆԵՐ.**— Սաստկական եղանակավորիչները՝ հենց, անգամ, իսկ և այլն, զրվելով նախադասության զանազան անդամների վրա՝ հատուկ շեշտում են դրանք՝ այդ բառերը փաստորեն դարձնելով նախադասության տրամաբանական կենտրոնը, օրինակ՝ «Նըրան ձերբակալեցին հենց դասախոսության ժամանակ» (Խոնգ.)։ «Հենց էդ բաց տեղերում պախրաները շարվում են ու արածում» (Թում.)։ «Պլա՛նդ տոնն անգամ չկարողացավ այդ հարցը լուծել»։ «Նմեց վերջին կաթին



անգամ»։ «Հոգով տկարանում էին ամենաուժեղներն անգամ»։ «Այդ շեր-  
մության մեջ հալվում են ամենահրակայուն մետաղներն իսկ» և այլն։

**ԶԻՋԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐԻՒՄՆԵՐԸ**։— Հայ քերականությունների մեջ  
գիշական եղանակավորիչներ են համարվում ի դեպ, ի միջի այլոց, ինչևէ,  
ինչևիցե, համենայն դեպս, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսու-  
հանդերձ, այնուհանդերձ և նման իմաստ արտահայտող այլ բառեր։

Դրանցից ի դեպ, ի միջի այլոց «եղանակավորիչները» ցույց են  
տալիս, որ միտքը, դատողությունը մեջ է բերվում գիպվածաբար, երկ-  
րորդաբար, ինչպես՝ «Ի դեպ, նա իմ հեռավոր բարեկամներից է»։ «Ի  
դեպ, քրոջս նշանեցինք»։ «Ի միջի այլոց, նրա հետ ծանոթացել էի Երե-  
վանում»։ «Ի միջի այլոց, նա ինձ շատ թե քիչ հովանավորում էր»։

Ինչևէ, ինչևիցե, «եղանակավորիչները» ցույց են տալիս, որ խոսողը  
առանց տվյալ հարցի մասին վերջնական եզրակացության գալու, իր  
միտքն անփոփելու, անցնում է նոր մտքերի, օրինակ՝ «Ինչևէ, անցնենք  
փաստերի վերլուծությանը»։ «Ինչևիցե, նա մեր լավագույն գիտնական-  
ներից է»։ «Ինչևէ, այս փորձանքից մի կերպ ազատվեցի»։

Այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ,  
համենայն դեպս «եղանակավորիչները» ցույց են տալիս, որ հակառակ  
հանգամանքները խոսողի կարծիքով շեն կարող խանգարիչ լինել տրվ-  
յալ գործողության, հատկանիշի, երևույթի դրսևորման համար, օրինակ՝  
«Այսուամենայնիվ նա ազնիվ մարդ է»։ «Այնուամենայնիվ ես պիտի  
տեսնեմ նրան»։ «Այսուհանդերձ նրանք պայքարում էին ճշմարտության  
համար»։ «Այնուհանդերձ նրանք չէին հրաժարվում իրենց գաղափար-  
ներից»։ «Համենայն դեպս, նա մեր բարեկամն է»։ «Համենայն դեպս,  
գործը լավ վախճան ունեցավ»։

Ինչպես այս բնութագրումներից և բերված օրինակներից կարելի է  
եզրակացնել, այսպես կոչված «գիշական» եղանակավորիչները իրենց  
արտահայտած իմաստներով մոտենում են շաղկապներին և ազատ կեր-  
պով շաղկապներ ևս կարող են համարվել։

## Զ Ա Յ Ն Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԶԳԱՅԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐՆԵՐ**  
**ԱՐՄԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐԻ ԽՈՒՄԲ**։— Դեռևս հայերենի 19-րդ դարի քերա-  
կանություններում ձայնարկությունը բնորոշվում է որպես այնպիսի խոս-  
քի մաս, որ ցույց է տալիս մարդու զգացմունքներն ու կրթերը։ Ա. Այ-  
տընյանը գրում է։ «Միջարկութիւն կամ ձայնարկութիւն կրսուի այն  
անփոփոխ մասն բանի, որ մարդուն այլևայլ կիրքն ու զգացմունքը կը  
հայտնէ, ինչպէս՝ ցաւ, զարմանք և այլն»<sup>1</sup>։ Ստ. Պալասանյանը ևս ձայ-  
նարկությունը համարյա նույն ձևով է բնորոշում։ «Այն հնչյուններն ու  
բառերը, որոնք մեր հոգու կրթերն են արտահայտում, այսինքն՝ զար-  
մանքը, երկյուղը, բարկությունը, ուրախությունը, ցանկությունը և այլն,  
և այլն, կոչվում են ձայնարկություններ»<sup>2</sup>։

Մ. Աբեղյանը տալիս է ձայնարկության ավելի խորը բնութագրումը։  
Նա բառերը բաժանում է երկու խմբի՝ գաղափար նշանակող բառեր,  
որոնցով մենք խոսում ենք, և զգացմունք ու կամք ցույց տվող բառեր,  
որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից դուրս են մնում։  
Դրանք կոչվում են միջարկություններ կամ ձայնարկություններ։ «Մի-  
ջարկությունները,— գրում է Մ. Աբեղյանը,— վայրկեանական տպավոր-  
ություն տակ առաջացած բացազանչություններ են, որոնք ակամա կեր-  
պով արտաբերվում են խոսքի գործարանների անդրադարձ շարժում-  
ներով ... Այսպիսով բացազանչություններն այն սահմանի վրա են, որ  
լեզուները միմյանցից շեն տարբերվում, և լեզուն դառնում է մի բնա-  
կան հնչյուն»<sup>3</sup>։ Սակայն ձայնարկությունները շեն մնում բնական հնչ-  
յունների մակարդակի վրա, «որովհետև ուրիշներից լսելով նրանց ա-  
կամա բացազանչությունները՝ մենք յուրացնում ենք այդ հնչյունները,  
ինչպես և մյուս բառերը, և ապա հեշտությամբ վերարտադրում ենք  
դիտավորյալ կերպով՝ մեր սեփական զգացմունքներն ուրիշներին հա-  
ղորդելու համար։ Այսպիսով լեզվի մեջ առաջանում են մի խումբ սո-  
վորական ձայնարկություններ»<sup>4</sup>։

<sup>1</sup> Ա. Այտընյան, ՔՂԱԿԱՆ քերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն  
լեզուի, Վիեննա, 1836, էջ 136։

<sup>2</sup> Ս. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1894, էջ 82։

<sup>3</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 127։

<sup>4</sup> Աճդ։

Սակայն ինչպես էլ որ մոտենանք խոսքի մասերի դասակարգման և ձայնարկությունների, որպես բառերի, գնահատման հարցին, մի բան պարզ է ու որոշակի. ձայնարկությունները իրենց իմաստալին առանձնահատկությամբ խիստ տարբերվում են բառերի մյուս բոլոր խմբերից: Այդ տարբերությունն արտահայտվում է նրանում, որ ձայնարկությունները ոչ թե գաղափարներ են արտահայտում, այլ ընդհանուր անորոշ ձևով գրանցում են խոսողի զգացմունքն ու կամքը: Մի լեզվաբան որոշ չափազանցություն կատարելով գրում է, որ ձայնարկությունները ոչ միայն բառեր չեն, այլ փաստորեն հենց բառերի ժխտումն են, որովհետև մենք բառերը գործածում ենք այն ժամանակ, երբ ուզում ենք խոսել, իսկ ձայնարկությունները գործածում ենք այն ժամանակ, երբ չենք ուզում խոսել:

Ինչից, մի բան ակնհայտ է, որ ձայնարկությունները Դարչու ոչ թե գատողական, այլ զգացմունքալին աշխարհի արտահայտիչներն են: Ընդհանուր ձևով սահմանելով՝ կարելի է ասել, որ ձայնարկությունները գրանցում են խոսողի զգացմունքները այս կամ այն երևույթի նկատմամբ: Արտահայտելով այս կամ այն ձայնարկությունները, որոնք դիտակցված են նաև նույն լեզվով խոսող հասարակության մյուս անդամների կողմից, խոսողը հենց գրանցում է, որ ինքն անտարբեր չէ տվյալ երևույթի նկատմամբ, անտարբերությամբ չի ընկալում տվյալ երևույթը, դրա նկատմամբ արտահայտում է իր այս կամ այն զգացմունքը՝ ուրախությունը, տրամուխությունը, զարմանքը, հիասթափությունը և այլն, որոնք սովորական գատողական բնույթի բառերով արտահայտվելու դեպքում այդքան ուժեղ արտահայտչականություն, հուզականություն ու զգացականություն ունենալ չեն կարող. հմտ. Վշտացա: որ ինձ չլսեցին՝ Ա՛խ, ինձ չլսեցին. Դժգոհ եմ, ձանձրացա, վերջ տուր՝ Օ՛հ, վերջ տուր. Սրանչացած եմ, զարմացած, հիացած՝ գրերի աշխարհը տիեզերք է անեզր՝ Օ՛, գրերի աշխարհը տիեզերք է անեզր: Ահա սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ձայնարկություններն անտարբեր գործածվում են կենդանի խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ՝ տեղ չունենալով, ասենք, դիտական և տեխնիկական գրականության մեջ:

Հարցին մոտենալով այս տեսակետից՝ կարելի է ասել, որ ձայնարկությունները նույնքան անհրաժեշտ են լեզվում, որքան բառերի մյուս խմբերը (մյուս խոսքի մասերը): Եվ պատահական չէ, որ մեզ ծանոթ բոլոր լեզուներն ունեն ձայնարկությունների բավականին հարուստ բանակ, թվում է. թե դժվար թե լինի լնզու, որ ձայնարկություններ ընդհանրապես չունենա:

Արտահայտելով մարդու զգացական գանազան վերաբերմունքները և այսպեսով էլ կազմելով բառերի շարահատուկ խումբ՝ ձայնարկություններն ունեն իրենց ձայնի առանձնահատկությունները և իրենց

հնչյունական շարահատուկ կերպարանքով ու հնչերանգով տարբերվում են մյուս բոլոր բառախմբերից:

Ձայնարկությունների ձայնի-հնչյունական առանձնահատկություններն են՝ սակավահնչյունությունը (օրինակ՝ ա՛, է՛, ի՛, ո՛ւ, օ՛, ա՛յ, է՛յ, վա՛յ, վա՛խ, օհո՛, էհե՛ և այլն), միաձևույթ լինելը (ձայնարկությունները ածանցավոր կամ բարդ լինել չեն կարող) և առոգանության առանձնահատուկ նշանակությունը նրանց, որպես բառերի, ձևավորման համար (օրինակ՝ հայերենի համարյա բոլոր ձայնավորները, հատուկ առոգանությամբ արտասանվելով, դառնում են ձայնարկություններ):

Ձայնարկություններն ունեն նաև իրենց կիրառական-շարահյուսական առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են այն բանում, որ նրանք նախադասության անդամ չեն դառնում, սովորաբար վերաբերում են ոչ թե նախադասության մի անդամին, այլ ամբողջ նախադասությանը՝ նրան հաղորդելով այս կամ այն զգացական երանգը և, այսպիսով, խոսքը հագեցնելով հուզականությամբ ու արտահայտչականությամբ: Նշենք նաև այն, որ ձայնարկությունները հաճախ կրկնվում են, ինչպես՝ վա՛յ-վա՛յ, վույ-վու՛յ, այ-այ-ա՛յ և այլն, այսպիսով արտահայտելով տվյալ կրքի, զգացման ուժգնությունը:

Դրավոր խոսքում ձայնարկությունները նախադասության մյուս անդամներից սովորաբար անջատվում են ստորակետով և իրենց վրա ունենում են բացականչական նշան կամ շեշտ՝ որպես նրանց առանձնահատուկ հնչերանգի արտահայտություն, օրինակ՝ «Ա՛խ, չէ, ամա՛ն, ասում են՝ դա Մի դիակ է լուռ, հոտած» (Թում.). «Վույ-վու՛յ, Անուշ վույ-վու՛յ բուրիկ, Վո՛ւլ բու սերին, բու յարին, Վո՛ւլ-վո՛ւլ, Սարս, Վույ-վու՛յ, իգիթ, վո՛ւլ բու սիրած սարերին» (Թում.). «— Վա՛յ, փախե՛ք, եկա՛վ ... հա՛յ, հարա՛յ, եկա՛վ» (Թում.). «Օ՛, մանկության մասին գրել են շատ-շատերը» (Զար.). «Պա՛հ, դրանք հո գելեր են,— անցավ մտքովս» (Անան.). «Է՛, Բողարը անխե՛լք է, որ նման առաջարկին դեմ լինի» (Անան.):

Երբ ձայնարկությունը վերաբերում է նախադասության մի կոնկրետ անդամի, այդ դեպքում նրանց միջև արտասանական դադար չի լինում, և, հետևաբար, գրավոր խոսքում ձայնարկությունը ստորակետով չի անջատվում, օրինակ՝ «Է՛յ հորեղբայր, իմ հերահոտ» (Թում.). «Ա՛յ սարսաղ, էդ ի՛նչ արիր» (Անան.). «Ո՛վ լուսեղեն, դաներդ բաց» (Թում.):

#### ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԲԱՅԱԿԱՆՉԱԿԱՆ ԵՎ ԿՈՉԱԿԱՆ ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայերենի բերականություններում ձայնարկությունները սովորաբար բաժանվում են

5 Տե՛ս Ս. Արրահայան, Չթեքող խոսքի մասեր..., էջ 542—544:

երկու խմբի՝ բացականշական ձայնարկություններ, որոնցով արտահայտում ենք մեր զգացմունքները՝ ուրախություն, վիշտ, ցավ, հիացմունք, զարմանք, զզվանք և այլն, օրինակ՝ ջա՛ն, ա՛խ, օ՛հ, վա՛յ, ա՛յ, օ՛ֆ և այլն, և կոչական ձայնարկություններ, որոնցով ուզում ենք ուրիշների ուշադրությունը հրավիրել, մղել մի բանի, խրախուսել կամ կենդանիներին կանչել, ջջել, վանել և այլն, օրինակ՝ հե՛յ, է՛յ, դե՛հ, փի՛շա, ջո՛ւ-ջո՛ւ և այլն: Ստորև տրվում են ձայնարկությունների այս երկու խմբերի բնութագրումները:

### Բացականշական ձայնարկություններ

ՓԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Այս բառերի քննությունը ամենից առաջ բերում է այն եզրակացությունը, որ բացականշական ձայնարկությունների մի պատկանելի մասը, եթե կարելի է այսպես արտահայտվել, բազմիմաստ է և գործածվելով շարահյուսական տարբեր շրջապատներում՝ արտահայտում է ամենատարբեր ու ամենաբազմազան զգացական վերբերմունքներ: Դրանում համոզվելու համար բավական է համեմատել այն բառի կիրառությունները հետևյալ նախադասություններում.

Ա՛խ, վերջ կունենա՞ն մեր տանջանքները: Ա՛խ, ինչ երանելի օրեր էին: Ա՛խ, մեկ էլ տեսնեի նրան: Ա՛խ, ինչպես է ցավում: Ա՛խ, լավ պատժվեց: Ա՛խ դու, ա՛խ դու, այդ ի՞նչ ես արել: Ա՛խ, վերջապես ընկար ձեռքս: Ա՛խ, սիրտս անհանգիստ է: Ա՛խ, ինչ գրավիչ է նրա ձայնը: Ա՛խ, հասա նպատակիս:

Բերված նախադասություններում այն բառը զգացական տարբեր վերաբերմունքներ է արտահայտում, որոնք դատողական բնույթի բառերով զժվար թե հնարավոր լինի ճշգրտորեն վերարտագրել: Հասկանալի է, որ այն ձայնարկության տարբեր իմաստները կամ իմաստային երանգները պայմանավորված են նշանակություններով տվյալ նախադասության մեջ մտնող այլ բառերի, որոնք թելադրում են ընկալել այն բառը այսինչ և ոչ թե այնինչ իմաստով: Դրանից կարելի է եզրակացնել, որ բացականշական ձայնարկությունների իմաստների դրսևորման մեջ շարահյուսական շրջապատը բացառիկ նշանակություն ունի:

Պետք է նշել, որ հատկապես աչքի է զարնվում մի քանի շատ գործածական ձայնարկությունների բազմիմաստությունը: Այսպես, Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում» վայ ձայնարկության համար 14 իմաստ է նշվում, օրինակ՝ ցավ և վիշտ («Վա՛յ, ես մեռնում եմ»), ափսոսանք («Վա՛յ, խեղճ տղա, իզուր կորար»), տառակուսանք, շվարձուրթյուն («— Ոչ մի կառք չկա:— Վա՛յ, հիմա ի՞նչ պիտի անենք»), զաւմանք մի անակնկալ բան լսելիս («— Մեր հարևանի որդին եկել է:— Վա՛յ, մենք նրան մեռած էինք համարում»), զաւմանք և զր-

վարձուրթյուն («Վա՛յ դու կրակ ուտես, տղա՛, որտեղի՞ց այդ բանը հնարեցիր»), ուրախություն, զվարթություն մի աչազուրթյան առթիվ («Վա՛յ, էդ ինչ լավ բան եղավ») և այլն:

Կարելի է բոլորովին չհասկածել, որ Մալխասյանցի բառարանում բերված նշվածներով շեն սպառվում վայ ձայնարկության իմաստային երանգները և շարահյուսական տարբեր կապակցությունների իմաստներով պայմանավորված՝ այս բառի մեջ նորանոր իմաստային երանգներ կարելի է սահմանել:

Վերցնենք այնքան գործածական օ ձայնարկությունը: Սա ցույց է տալիս ուժեղ կիրք, գրգռվածություն, հուզմունք, զգացմունք՝ դրական թե բացասական իմաստով— սեր, քնքշություն, զուժ, կարեկցություն, ատելություն, արհամարհանք, դժգոհություն, կշտամբանք և այլն: Այս իմաստներն ընդհանուր ձևով դրսևորվում են միայն շարահյուսական կապակցությունների մեջ, բայց հաճախ վերջիններս էլ որոշակի շեն բացահայտում, թե օ ձայնարկությունը ի՞նչ զգացմունք է արտահայտում՝ սե՛ր, թե՛ քնքշություն, ատելություն, թե՛ արհամարհանք և այլն: Հենց շարահյուսական կապակցության մեջ էլ շատ դեպքերում այդ ձայնարկության իմաստն ընդհանուր է ու անորոշ, և միայն կարելի է ասել, որ դրանով դրսևորվող խոսողի ուժեղ գրգռմունքը, զգացմունքը, վերաբերմունքը տվյալ երևույթի, առարկայի, անձի նկատմամբ դրական է կամ բացասական: Վերցնենք Չարենցի հետևյալ նախադասությունը. «Օ՛, գրքերի աշխարհը— տիեզերք է անեզր»: Ի՞նչ է արտահայտում օ ձայնարկությունն այստեղ— հիացմո՞ւնք, զարմա՞նք, սե՛ր, քնքշա՞նք, մըտախոհություն, թե՛ այս բոլորը միաժամանակ:

Իսկ ի՞նչ է արտահայտում նույն ձայնարկությունը Շիրվանզադեի հետևյալ նախադասության մեջ. «Օ՛, նա շատ է տեսել այդպիսի դատեր».— ատելություն, արհամարհանք, տխրություն, զզվա՞նք, ծա՛ղր, թե՛ այս բոլորը միաժամանակ:

Բերված մի քանի օրինակներն էլ բավական են համոզվելու, որ շատ հաճախ այնքան էլ հեշտ չէ այս կամ այն ձայնարկությունը որոշակիորեն մտցնել այս կամ այն իմաստային խմբի մեջ: Չայնարկությունների մի զգալի մասը, ըստ շարահյուսական տարբեր շրջապատներում ունեցած գործածության, հանդես է գալիս որպես ամենատարբեր, իսկ երբեմն էլ հակադիր ու իրար բացառող զգացմունքների արտահայտիչ: Իհարկե կան ձայնարկություններ, որոնք «մենիմաստ» են, օրինակ՝ օհո—զարմանք, քյո—զզվանք, բայց դրանք երևույթի ընդհատորեն էությունը շեն փոխում: Այն էլ ասենք, որ ձայնարկությունների արտահայտած զգացմունքները շատ հաճախ ուղղակի անհնար է սովորական դատողական բնույթի բառերով ճշգրտորեն արտահայտել:

Ինչևիցե, պայմանականորեն իմաստային որոշ խմբավորումներ կատարելով՝ ստորև համապատասխան օրինակներով ներկայացվում են

ժամանակակից հայերենի ձայնարկությունների արտահայտած ընդհանուր նշանակությունները:

Վիշա, ցավ, տառապանք — «Ա՛խ, չեմ ուզում ես այսքան հարստությունը»։ «Վա՛խ, տղաս, այդ ինչ օրն ես ընկել»։ «Վա՛խ, ի՛մ մայր, մեկ էլ կտեսնեմ քեզ»։ «Օ՛, հոգիս մաշել է»։ «Վա՛յ, տունս քանդվեց»։ «Վա՛յ, ցավում է»։ «Ա՛հ, ժամանակակից երիտասարդությունը փչացել է»։ «Վա՛ւյ, բոռանամ ես, ինչո՞ւ ես այդքան նիհարել»։ «Վա՛յ-վա՛յ, վա՛ւյ-վա՛ւյ, ինչի՞ համար եկա էս սար, Բուն շինեցի, Չագ հանեցի»։ «Օ՛ֆ, սիրտս մաշել է»։ «Ո՛ւֆ, գլուխս պայթում է»։ «Օ՛յ, ոտքս ցավում է»։ «Ամա՛ն, էլ չեմ կարող դիմանալ»:

Դժգոհություն, անբավականություն, բարկություն — «Օ՛հ, գլուխս տարել է»։ «Օ՛հ, երբ պիտի դրա ձեռքից ազատվեմ»։ «Օ՛ֆ, էլ հանգիստ բուն չունի մարդ էս անիրավ մոծակներից»։ «Է՛ն, դուք էլ մարդ-գտաք»։ «Գլուխս տարար է՛լի»։ «Ը՛ն, շմեռա էլ պրծնեմ»։ «Ո՛ւն, էլի եկավ»։ «Փիև՛, էդ լակոտը մեզ խայտառակ կանի»։ «Ամա՛ն, այդքան համբերություն չունեմ»:

Մաղր, հեգնանք, ֆմծիծաղ — «Է՛նե՛, թագավորի անուն ունես, մե՛ր տղա»։ «Համա մոզի ժամանակդ էր հա՛»։ «Հա՛, դու էիր մնացել»։ «Հա՛յ, ես քո մարդ ասողին»։ «Պահո՛, մի զարկով երկու գեղ է սպանել»։ «Հի՛-հի՛, ուսլալ ես հա՛»։ «Պա՛հ, պա՛հ, պա՛հ, մենակ դու էիր, որ կայիր»:

Ափսոսանք, կարեկցություն, ցավակցություն — «Է՛յ աշխարհ, բեզ-նից բան չհասկացանք»։ «Է՛յ ջահելություն, անցար և քեզ հետ տարար ամեն ինչ»։ «Վա՛յ, խեղճ տղա, իզուր կորար»։ «Ավա՛ղ այս անցավոր փառքին»։ «Ավա՛ղ, այն օրերն էլ ետ չեն դառնա»։ «Վո՛ւշ-վո՛ւշ, Անուշ, վո՛ւշ-վո՛ւշ բուրիկ, Վո՛ւշ բու սերին, բու յարին, Վո՛ւշ-վո՛ւշ, Սարս, վո՛ւշ-վո՛ւշ իգիթ, Վո՛ւշ բու սիրած սարերին»։ «Փնտրում է ծագկած ափերը հին-հին Ու գոռում գիծ-գիծ — վա՛շ-վի՛շշ, վա՛շ-վի՛շշ»։ «Է՛յ գիղի օրեր, որտե՞ղ եք կորել»։ «Հե՛յ գիղի իմ կորած մանկություն»։ «Հե՛յ գիղի գիծ ջահելություն»։ «Հե՛յ վախ, կյանքս ցավ ու վշտով անցավ»:

Զգվանք, խորշանք, տհաճություն, արհամարհանք — «Ինչ կեղտոտն է, թյո՛ւն»։ «Էլի հագում է խոզի ձուտը, թո՛ւ»։ «Թո՛ւն, դե՛ն նետիր»։ «Փո՛ւն, անտա՛շ վայրենիք»։ «Ճո՛ւ, այստեղ ամեն ինչ ապականվում է»։ «Կինը պետք է կին լինի իր բոլոր արտաքին հատկանիշներով, իսկ այդ բեղիկները ... ֆո՛ւ. իսկ այդ կոպիտ բարիտունը ... ֆո՛ւ»։ «Ճո՛ւն, ինչ կեղտոտն է»։ «Ի՛, գետինը մտնես դու»։ «Ի՛, շան երես ունի»,

Զարմանք, անսպասելիություն, անակնկալություն — «Մի՛ն էլ, բիր՛, աղվեսն եկավ»։ «Մեկ էլ տեսնեմ, բիր՛, արջի բունը առաջիս»։ «Օհո՛, դեղնած խոտերի վրա սառած արյուն կա»։ «Պա՛հ, դրանք հո գելեր են»։ «Պա՛հ, էդ ինչ ուժեղ է եղել այդ մարդը»։ «Ա՛հ, ուրեմն նա ազատվեց»։ «Ուտում է հա՛»։ «— Պատմությունից կարվեցի:— Իա՛»:

Ուրախություն, հրեմանք, բավականություն, բավարարվածություն — «Զա՛ն, հայրենի ծղրիղներ, Ո՛ւվ է արդյոք լսում ձեզ»։ «Հեյ ջա՛ն, հեյ ջա՛ն, լանջեր մարջան»։ «Է՛յ ջա՛ն, հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես»։ «Օ՛, այդ ինչ լավ եղավ»։ «Ուիա՛յ, ինչ լավ ջուր է»։ «Օիա՛յ, սիրտս հանգրստացավ»։ «Ա՛խ, լավ պատժվեց»։ «Ա՛, եկա՛ր, մե՛ր տղա»։ «Ո՛ւ, շատ լավ բան ես բերել»։ «Ո՛ւ, ո՛ւ, ինչ համեղ է»։ «— Ապի, սրանք ժամ ունե՛ն:— Ունեն, բա՛ս:— Հստեղ էլ պրիտավ կա՛ որ:— Կա, բա՛ս»:

Հիացմունք, զմայլանք, հուզմունք — «Ա՛յ ձի ... Մի աշխարհ արժի»։ «Օ՛, դրքերի աշխարհը տիեզերք է անեզր»։ «Օ՛, ինչ գեղեցիկ առավոտ է»։ «Օ՛յ, ինչ հրաշափեղ մարգագետին է»։ «Օ՛հ, ինչ վեհապանծ տեսարան էր բացվում մեր աշրերի առաջ»։ «Ո՛ւֆֆ, ինչ լավն է»:

Սպառնալիք, սաստում, սրանելություն — «Փայտը գլխիդ կտամ, ա՛յ»։ «Եկուք մնա, կծեժեմ հա՛»։ «Ա՛, ուրեմն ինձ չե՛ս լսում»։ «Ի՛նչ ես ուզում ինձնից, իա՛»։ «Դե բավական է է՛լի»։ «Է՛, բավական է, վերջացրո՛ւ»։ «Հոնցե՛ք, սիրտ չունեմ, ո՛ւֆ»:

Սարսափ, երկյուղ, վախ — «Ամա՛ն, նա գիծ է, մեզ կսպանի»։ «Վա՛յ, հաւա՛յ, փախե՛ք»։ «Հա՛յ, հաւա՛յ, փախե՛ք»։ «Օ՛, սարսափելի է դրան նայելն իսկ»:

Հանդիմանություն, կշտամբանք — «Ցուրտը տարա՛վ ... Վա՛հ տնաշեն, Չես թող անում մի շունչ քաշեմ»։ «Օհո՛, ձայնդ դողաց. չի՛նի՞ թե սիրահարված ես»։ «Օ՛յ, գլուխս մի տարեք»:

Անտարբերություն, համակերպում, հուսահատություն — «Է՛, մենք ի՛նչ կարող ենք անել»։ «Է՛ն, մի օր էլ մենք ենք աշխարհից գնալու»։ «Է՛ն, մահից ազատում չկա»:

Խորխտանք, պարծուք — «Հայ-հո՛ւյ, ես քո խոսքերից վախեցողը չեմ»։ «Հայ-հա՛յ, մոտիկ տեղից եկա, Տես որտեղից հիմա կգամ»:

Խրախուսանք — «Ա՛յ, մի ձեզ տեսնեմ»։ «Հա՛յ հող ու ջրի Աստված»։ Երկմտություն, ներքին հարցում — «Հը՞, էս քա՛րն է մեզ բախտ բերելու»։ «Հը՛մ ... բարեկամ. լա՛վ բարեկամ է»:

Հետաբերություն — «— Աղջկաս ամուսնացրի:— Է՛:— Երափեսայի հետ գնացին ճանապարհորդության:— Է՛»:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ձայնարկությունների մեր սահմանած այս նշանակությունները սպառիչ ու ճշգրիտ չեն կարող համարվել, որովհետև, ինչպես ասված է արդեն, ձայնարկությունների իմաստները հաճախ դժվար կամ ուղղակի անհնարին է սովորական բառերով արտահայտել, իսկ մյուս կողմից էլ դրանք շատ դեպքերում պայմանավորված են լինում շարահյուսական շրջապատով ընդհանրապես և նստադասությունից նստադասություն արբեր են լինում: Մնում է ավելացնել, որ բերվածներով չեն սպառվում հայերենի բոլոր ձայնարկությունները, որովհետև ձայնարկություններն այնպիսի բառեր են, որ ամեն բույն կարող են ստեղծվել ամեն մեկի կողմից:

ԿՈՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Այս ընդհանուր անունով են կոչվում այն ձայնարկությունները, որոնք գործածվում են ուրիշի ուշադրությունը գրավելու համար՝ նրան մի բան հաղորդելու, մի գործողության մղելու և այլ նպատակներով, ինչպես, հե՛յ, է՛յ, ա՛յ, տո՛, ֆա՛, դե՛, դե՛հ և այլն։ Սրանք սովորաբար գործածվում են կոչական բառերի կամ հրամայական բայաձևերի հետ։ Կոչական ձայնարկությունների մեջ են զետեղվում նաև կենդանիներին կանչելու կամ քշելու, վանելու ձայները, ինչպես՝ ջո՛ւ—ջո՛ւ, բիժո՛ւ—բիժո՛ւ, հո՛ւ—հո՛ւ, ֆր՛շ, ֆշա՛, փի՛շտ և այլն։

Ստորև բերվում են կոչական ձայնարկությունների գործածության օրինակներ գեղարվեստական գրականությունից։

«— Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր, Ելե՛ք, շուտով բացեք դռները» (Թում.)։ «— Աղանիկ հե՛յ ... Գելերն ինձ ուտում են ... Օգնեցե՛ք, հե՛յ...» (Թում.)։ «Հե՛յ, զարթնեցե՛ք, առյ՛ծ քաջեր, Պահապաններ Թաթուլի» (Թում.)։ «— է՛յ, որդի, ասավ, մեռնեմ իր լուսին» (Թում.)։ «— է՛յ, շան սարեր, Սասման սարեր» (Թում.)։ «— է՛յ, Զուրաբի տղա, մա՛րդ ես սպանում» (Զար.)։ «— Ա՛յ տղա, քեզ ի՞նչ է պատահել, հո հետևի՞ցդ շե՛ն ընկել» (Անան.)։ «Ա՛ տղա, նա էլ մեր կունենա ... Ա՛ տղա, հիմի նրա մերը ճամփա կպահի ... Ա՛ տղա, կասի, տղես ետ չեկավ» (Թում.)։ «— Ո՛վ լուսեղեն, դռներդ բաց» (Թում.)։ «— Ո՛վ բարեգուլ, քեզ եմ խնդրել» (Թում.)։ «— Ի՞նչ ես ներս խցկվում, առ՛ լածիրակ, գնա քու բանին» (Թում.)։ «Նա մնաց անտուն, մնաց բնավեր։— Տո՛ լաճ տնավեր։ Եղավ անդադար, եղավ բնավեր։— Տո՛ լաճ տնավեր» (Սևակ)։ «— Քա՛, խամ է, որդի՛, կսովորի» (Թում.)։ «— Քա՛, ես ի՞նչ իմանամ» (Զար.)։ «— Ի՞նչ ես կծկվել, աղա՛ ... քեզ տղամարդ պահիր» (Զար.)։ «— Աղա՛, էդ եզները խոտը թափում են, է՛յ...» (Զար.)։ «— Դե՛, վե՛ր կաց, օրն անց է կենում» (Թում.)։ «— Դե՛, գնա՛, քեզ մատաղ, աստված բարի ճամփա տա» (Թում.)։ «— Դե՛հ, տեսնենք, դու քո ուսումով, ես իմ փողերով ու խելքով» (Շիրվ.)։ «— Դե՛հ, ասա՛, բուլո՛րն ասա այս ըոպելիս, շան աղջիկ» (Շիրվ.)։

«— Փի՛շտ, փի՛շտ, — վեր թռանք մենք» (Թում.)։ «Հացատան նեղ դուռը ճոնչաց։— Զո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ...» (Խանզ.)։ «— Քի՛շ, ֆի՛շ, — շարացավ Աթագ ազին» (Խանզ.)։ «— Հո՛, եզ, համբերի ... — լսվում էր մեկի խանդավառ ձայնը» (Զար.)։

ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ.— Ինչպես նշված է արդեն, ձայնարկությունների մեջ են դրվում նաև բնաձայնությունները կամ նմանաձայնությունները, որոնցով լեզվի մեջ աշխատում ենք վերարտադրել կենդանիների, առարկաների, բնության երևույթների ձայները։ Ստորև բերվում են այսպիսի օրինակներ գեղարվեստական գրականությունից։

«Հանկարծ մի թփի հետևում լսվեց կաթավի ձայնը։— Կա՛խ—կղա, շա՛խ—կղա» (Բակ.)։ «Հա՛ֆ—հա՛ֆ, հա՛ֆ—հա՛ֆ, Ահա այսպես Հաշում եմ ես. Հա՛ֆ—հա՛ֆ, հա՛ֆ—հա՛ֆ, Ու տունն այսպես Պահում եմ ես» (Թում.)։ «— Ղա՛, զա՛, ղա՛, ղա՛ ... Պատասխանեց Ագոստին ու թռավ» (Թում.)։ «Միայն լսում եմ զգուշ օտնաձայնը, որ խաշամը կոխելով առաջ է գալի— խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ ... Բան չի երևում, բայց դարձալ խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ, մոտենում է ավելի ու ավելի» (Թում.)։ «Կոունկները մոտեցան ու «Կոլո՛ւ—կոլո՛ւ» կանչելով անցան նախարարների գրիխի վրայով» (Դեմ.)։ «Մոտակա ժայռի աշտարակից մի թռչուն «ճը—ճը—չի՛, ճը—ճը—չի՛» էր անում» (Դեմ.)։ «Նրանք շարունակում էին շր՛փ հա շր՛փ ծեծել թաց թաղիքները» (Անան.)։ «Ծա չիրիդ եմ խաղում գորգի վրա, մահակով հարվածներ տալիս, որ մաքրվեն՝ շր՛պ, շր՛պ, շր՛պ» (Անան.)։ «Ամեն տեղից կաթում էր այդ վրանը՝ շր՛պ, շր՛պ, շր՛պ» (Անան.)։ «Բակատեղի կողմից լսում եմ կացնի հեռավոր ձայնը՝ քը՛խկ—քը՛խկ—քը՛խկ...» (Անան.)։ «Չրը՛խկ հա քըրը՛խկ նորից շինեցին» (Թում.)։ «Շրըր՛խկ ... հանկարծ դուռը բացվեց, Թուրք կանացով տունը լցվեց» (Թում.)։ «Ծա ու Ակոփը զունեն գլեցիներ, էս Դավիթն էլ դհուլը—կը՛մբ հա դը՛մբ, կես գիշերի՞՞, էս վերանա դաշտումը ածում ենք» (Թում.)։

Բնաձայնական շատ բառերից կազմվում են բայեր, որոնցից էլ՝ գոյականներ, օրինակ՝ սվսվալ—սվսվոց, գվգվալ—գվգվոց, թխկալ—թխկոց, շխկալ—շխկոց, թխկթխկալ—թխկթխկոց, շխկշխկալ—շխկշխկոց, խշշալ—խշշոց, խշխշալ—խշխշոց, տզզալ—տզզոց, տզտզալ—տզտզոց և այլն։

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:  
**Մ. Աբեղյան**, Աշխարհարարի քերականություն. Վաղարշապատ, 1906:  
**Մ. Աբեղյան**, Աշխարհարարի հոլովները, Վաղարշապատ, 1908:  
**Մ. Աբեղյան**, Հայցական հոլովը մեր աշխարհարարում, Վաղարշապատ, 1909:  
**Ա. Աբրահամյան**, Հայերենի դերբայները և երանց ձևաբանական ճանաչությունը, Երևան, 1953:  
**Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, Ա, Երևան, 1962:  
**Ա. Աբրահամյան**, Ժամանակակից հայերենի շեքվող խոսքի մասերը, Երևան, 1959:  
**Ա. Աբրահամյան**, Չթեքվող խոսքի մասերը և երանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:  
**Ա. Աբրահամյան**, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:  
**Ա. Աբրահամյան**, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956:  
**Ա. Աբրահամյան**, **Ն. Պառնասյան**, **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, ձևաբանություն, Երևան, 1974:  
**Է. Աղայան**, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967:  
**Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:  
**Է. Աղայան**, **Հ. Բարսեղյան**, Հայոց լեզու, Երևան, 1971:  
**Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. 1—2, Երևան, 1940—1951:  
**Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1—5, Երևան, 1952—1967:  
**Հ. Աճառյան**, Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911.  
**Ա. Այտրենեան**, Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:  
**Ա. Այտրենեան**, Քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1883:  
**Վ. Առաքելյան**, Հայերենի շարահյուսություն, Ա, Բ, Երևան, 1958, 1964:  
**Վ. Առաքելյան**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների խնամադիմ առումները, Երևան, 1957:  
**Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Երևան, 1970, 1973, 1977:  
**Հ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:  
**Հ. Բարսեղյան**, Հատուկ անուն, Երևան, 1964:  
**Հ. Բարսեղյան**, Մ. Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Երևան, 1967:  
**Հ. Բարսեղյան**, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980:  
**Ս. Գալստյան**, Աճանցումը և անանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:  
**Գ. Գարեգինյան**, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:  
**Ս. Գյուրջուղայան**, Թվական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1964:  
**Ս. Գյուրջուղայան**, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978:

**Ա. Գրիգորյան**, Հայոց լեզու, Դասագիրք տեխնիկոմների և ուսումնարանների համար, Երևան, 1963:  
**Յ. Գաղբաշեան**, Արևելահայ աշխարհարարի քերականությունը, Թիֆլիս, 1913:  
**Թ. Էշխանյան**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971:  
**Հ. Հարությունյան**, Աճական անուն, դերանուն, Երևան, 1976:  
**Ս. Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954:  
**Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:  
**Ա. Ղարիբյան**, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954:  
**Ա. Ղարիբյան**, Հայոց լեզվի քերականության դասագիրք, Երևան, 1935 (այլև նույնի հաջորդ հրատարակությունները):  
**Ա. Ղարիբյան**, Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969:  
**Գ. Ղափանցյան**, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939:  
**Ստ. Մալխասևանց**, Հայցական հոլովը աշխարհարարի մեջ, Թիֆլիս, 1910.  
**Ա. Մարգարյան**, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:  
**Ա. Մարգարյան**, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955:  
**Ն. Մեկիթ-Փանգեան**, Աշխարհարարի քերականությունը, Շուշի, 1893:  
**Ա. Մուրվաչյան**, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955:  
**Պ. Շարափխանյան**, Գրաբարի շաղկապները, Երևան, 1960:  
**Ստ. Պալասանեան**, Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրավոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870:  
**Ստ. Պալասանեան**, Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1894, 1906:  
**Ն. Պառնասյան**, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:  
**Ն. Պառնասյան**, Քերականական համանունությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1979:  
**Հ. Պետրոսյան**, Գոյականի առումները հայերենում, Երևան, 1960:  
**Հ. Պետրոսյան**, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:  
**Պ. Պողոսյան**, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959:  
**Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967:  
**Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կոտուցվածքը, Երևան, 1969:  
**Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:  
**Գ. Ջահուկյան**, **Է. Աղայան** և ուրիշներ, Հայոց լեզու, Երևան, 1950:  
**Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939:  
**Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դարընթաց, Երևան, 1955:  
**Հ. Օհանյան**, Աճական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:  
**Н. Адонц**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.  
**Л. Блумфилд**, Язык, Москва, 1968  
**В. В. Виноградов**, Русский язык, М.-Л., 1947.  
**Е. М. Галкина-Федорук** и др., Современный русский язык, Москва, 1958.  
 Грамматика русского языка, т. I, Москва, 1950.  
**Г. Б. Джаукян**, Общее и армянское языкознание, Ереван, 1978.  
**Э. Туманян**, Артикли в современном армянском языке, М.-Е., 1963.  
**А. М. Финкел**, **Н. М. Баженов**, Курс современного русского литературного языка, Киев, 1965.  
**Н. М. Шанский**, **А. Н. Тихонов**, Современный русский язык, Москва, 1981.  
**J. Karst**, Historische Grammatik des Kilikiseh—Armenischen, Strassburg, 1901.  
**A. Meillet**, Altarmenisehes Elementarbuch, Heidelberg, 1914.  
**J. Schröder**, Thesaurus linguae armenicae, Amstelodami, 1711.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղ. — Ղազարոս Աղայան  
 Աճառ. — Հրաչյա Աճառյան  
 Անան. — Վախթանգ Անանյան  
 Բակ. (ԱԲ) — Ակսել Բակունց  
 ԳԱՏ — «Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր»  
 Դավթ. — Վահագն Դավթյան  
 Դեմ. — Դերենիկ Դեմիրճյան  
 ԵՊՀԳԱ — Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»  
 Զար. — Նաիրի Զարյան  
 Զոր. — Ստեփան Զորյան  
 Թում. — Հովհաննես Թումանյան  
 Իս. — Ավետիք Իսահակյան  
 ԼՈՀ — «Լեզվի և ոճի հարցեր»  
 Լր. — Լրագրեր  
 Խանգ. — Սերո Խանգաղյան

ՀԾ — Հովհաննես Ծիրազ  
 Մուր. — Մուրացան  
 Նալբ. — Միքայել Նալբանդյան  
 Ծիրվ. — Ծիրվանզադե  
 Զար. — Եղիշե Զարենց  
 ՊԲՀ — «Պատմա-բանասիրական հանդես»  
 Պատկ. — Ռաֆայել Պատկանյան  
 Պար. — Հակոբ Պարոնյան  
 Սմբ. — Սմբատ Գունդուտարի  
 Վարդ. — Վարդան Այգեկցի  
 Վերֆ. — Ֆրանց Վերֆել  
 Տեր. — Վահան Տերյան  
 Տոլ. — Լև Տոլստոյ  
 Րաֆ. — Րաֆֆի  
 Փափ. — Վրթանես Փափազյան  
 Օտ. — Երվանդ Օտյան  
 ВЯ — «Вопросы языкознания»

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . 3  
 ՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԵՐ . . . . . 27  
 ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ . . . . . 44  
 Գոյականի թվի քերականական կարգը . . . . . 53  
 Գոյականի հոլովի քերականական կարգը . . . . . 59  
 Հոլովների համակարգը արդի հայերենում . . . . . 59  
 Հոլովում . . . . . 70  
 Հոլովների կազմությունը . . . . . 70  
 Ընդհանրական, ձևային, իմաստային, ձևաիմաստային և պատմական հոլովումներ . . . . . 80  
 Զուգաձևությունները հոլովման համակարգում . . . . . 85  
 Առկայացման (որոշյալի ու անորոշի) քերականական կարգը . . . . . 89  
 Անձի և ոչ անձի քերականական կարգը . . . . . 102  
 Գոյականների կազմությունը . . . . . 111  
 Ածանցում . . . . . 111  
 Բարդություն . . . . . 121  
 Համադրական բարդություն . . . . . 121  
 Վերլուծական բարդություն . . . . . 128  
 Հապավում . . . . . 123  
 ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ . . . . . 125  
 Ածականի տեսակները . . . . . 128  
 Ածականի համեմատության աստիճանները . . . . . 133  
 Ածականների հոլովումը . . . . . 137  
 Ածականների կազմությունը . . . . . 138  
 Ածանցում . . . . . 145  
 Բարդություն . . . . . 145  
 Համադրական բարդություն . . . . . 147  
 Վերլուծական բարդություն . . . . . 149  
 ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ . . . . . 151  
 Թվականների տեսակները . . . . . 151  
 Զանազան թվականներ . . . . . 156  
 Կոտորակային թվականներ . . . . . 157  
 Դասական թվականներ . . . . . 160  
 Բաշխական թվականներ . . . . . 161  
 ԴԵՐԱՆՈՒՆ . . . . . 161  
 Դերանվան ուսումնասիրության ընդհանուր հարցերը . . . . . 167  
 Դերանվան տեսակները . . . . . 167  
 Անձնական դերանուններ . . . . . 170  
 Ցուցական դերանուններ . . . . . 177  
 Փոխադարձ դերանուններ . . . . . 178  
 Հարցական դերանուններ . . . . . 429

Հարաբերական դերանուններ . . . . .	182
Որոշյալ դերանուններ . . . . .	183
Ժխտական դերանուններ . . . . .	185
Անորոշ դերանուններ . . . . .	186
<b>ԲԱՅ</b> . . . . .	190
Բայերի կազմությունը . . . . .	196
Համադրական և հարադրական բայեր . . . . .	196
Պարզ, ստվածանցավոր, պատճառական, կրավորական և բազմապարկական բայեր . . . . .	196
Բայական լծորդություններ և խոնարհումներ . . . . .	199
Բայահիմքեր . . . . .	200
Բայի սեռի քերականական կարգը . . . . .	203
Ներդրումաբան սեռի բայեր . . . . .	204
Կրավորական սեռի բայեր . . . . .	211
Չեզոք սեռի բայեր . . . . .	216
Բայի արտահայտության ձևերը . . . . .	221
Ղերբայներ . . . . .	221
Անկախ ղերբայներ . . . . .	227
Անորոշ ղերբայ . . . . .	227
Անկատար երկրորդ . . . . .	233
Հարակատար ղերբայ . . . . .	234
Ենթակայական ղերբայ . . . . .	244
Ապառնի երկրորդ . . . . .	252
Կախյալ ղերբայներ . . . . .	258
Անկատար ղերբայ . . . . .	258
Վաղակատար ղերբայ . . . . .	259
Ապառնի ղերբայ . . . . .	261
Ժխտական ղերբայ . . . . .	266
Նդանակաչին ձևեր . . . . .	269
Բայի դեմքի ու թվի քերականական կարգերը . . . . .	274
Բայի ժամանակի քերականական կարգը . . . . .	280
Գործողության կերպի քերականական կարգը . . . . .	281
Երկրորդական վերլուծական ժամանակներ . . . . .	284
Բայի եղանակի քերականական կարգը . . . . .	286
Սահմանական եղանակ . . . . .	287
Ներկա ժամանակ . . . . .	290
Անցյալ անկատար ժամանակ . . . . .	291
Ապառնի ժամանակ . . . . .	292
Անցյալի ապառնի ժամանակ . . . . .	292
Վաղակատար ժամանակ . . . . .	294
Անցյալի վաղակատար ժամանակ . . . . .	294
Անցյալ կատարյալ ժամանակ . . . . .	297
Ըղծական եղանակ . . . . .	298
Ապառնի ժամանակ . . . . .	300
Անցյալի ապառնի ժամանակ . . . . .	302
Պայմանական կամ ենթադրական եղանակ . . . . .	305
Ապառնի ժամանակ . . . . .	307
Անցյալի ապառնի ժամանակ . . . . .	307
Հարկադրական եղանակ . . . . .	307

Ապառնի ժամանակ . . . . .	308
Անցյալի ապառնի ժամանակ . . . . .	309
Հրամայական եղանակ . . . . .	309
Բայի խոնարհման հարացույցի ընդհանուր գկարագիրը . . . . .	312
Ե կամ առաջին խոնարհում . . . . .	313
Ե խոնարհման պարզ բայեր . . . . .	313
Ե խոնարհման ստվածանցավոր բայեր . . . . .	315
Պատճառական բայեր . . . . .	316
Ա կամ երկրորդ խոնարհում . . . . .	317
Ա խոնարհման պարզ բայեր . . . . .	317
Ա խոնարհման ստվածանցավոր բայեր . . . . .	318
ՄԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐԻՄՈՒՄ . . . . .	320
Պակասավոր բայեր . . . . .	324
Ժխտական խոնարհում . . . . .	325
Հարադրական բայերի խոնարհումը . . . . .	330

<b>ՄԱԿԱՆՑ</b> . . . . .	332
Մակբայների կազմությունը . . . . .	340
Մակբայների իմաստային դասակարգումը . . . . .	344
Պարագայական մակբայներ . . . . .	345
Հացկանչային մակբայներ . . . . .	352
ԿԱՂ . . . . .	357
Կապերի կազմությունը . . . . .	362
Նախադրություններ և էտադրություններ . . . . .	367
Կապերի դասակարգումը ըստ կազմավորման աստիճանականության և իսկա- կան ու անիսկական կապեր . . . . .	369
Կապերի իմաստային դասակարգումը . . . . .	370
Կապերի հոլովատությունը . . . . .	375

<b>ԾԱՂԱՎԱՂ</b> . . . . .	380
Ծաղկապների հարաբերակցություններն այլ խոսքի մասերի հետ . . . . .	385
Ծաղկապների կազմությունը . . . . .	389
Մեհադիր, կրկնադիր և գուգալիր շաղկապներ . . . . .	392
Հանդուռական և ստորադասական շաղկապներ . . . . .	392
Ծաղկապների իմաստային դասակարգումը . . . . .	396

<b>ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ</b> . . . . .	401
Եղանակավորող բառերի իմաստային դասակարգումը . . . . .	409

<b>ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ</b> . . . . .	417
Ձայնարկությունների տեսակները . . . . .	419
Բացականչական ձայնարկություններ . . . . .	420
Կոչական ձայնարկություններ և բնածայնական բառեր . . . . .	424

<b>ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b> . . . . .	426
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . .	428



ԱՄԱՏՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԵԳՈՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է ներկայացրել  
համալսարանի հայոց լեզվի ամբիոնը

Երևանի համալսարանի հրատարակչություն,  
Երևան, Ալ. Մանուկյան թիվ 1

---

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52